Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

В. А. КОСЯН

# СЛОВОСОЧЕТАНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН
1980

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

4 Ap ինդեքս ԳՄԴ 81.2 Հ
Ք 845

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը և բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

Քոսյան, Վ. Ա.
Ք 845 Գրաբարի բառակապակցությունները /Պատ. խմբ. Ս. Մ. Անթոսյան.—Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980. 279 էջ։

Աշխատությունը նվիրված է գրաբարի բառակապակցությունների համաժամանակյա ուսումնասիրությանը։ V—XI դարերի ինքնուրույն և թարգմանական ընտիր բնագրերի օգտագործմամբ նկարագրվում են գրաբարի խոսքի մասերի (գոյական, ածական, բայ, մակբայ) բառակապակցությունները, բացահայտվում լրացում-լրացյալ կառույցների շարահյուսական-իմաստային հարաբերությունները։

Գիրքն օգտակար ձեռնարկ է հայոց լեզվի պատմությունը, մասնավորապես գրաբարն ուսումնասիրողների համար։

Ք $\frac{46020100000}{703\ (02)-80}$ 52—80

4 Ap
ԳՄԴ 81.2 Հ

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Առնվազն երկու լիիմաստ բառերի կապակցությամբ արտահայտվող շարահյուսական միավորի՝ բառակապակցության ուսումնասիրությունը երկար պատմություն չունի։ Մասնավորապես հայերենի բառակապակցությունների ուսումնասիրությունը սկիզբ է առել 1950-ական թվականներից։ Այս ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքներն ամփոփված են մեր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (Երևան, 1975) մենագրության մեջ, ուր շարադրված է ոչ միայն բառակապակցությունների տեսությունը, այլև հարցի պատմությունը, մասնավորապես կապակցությունների ուսմունքի սկզբնավորումն ու զարգացումը հայ քերականագիտության, ինչպես և եվրոպական և ռուս լեզվաբանության մեջ[1]։ Նկատի ունենալով, որ հիշյալ աշխատությունը նվիրված է ժամանակակից հայերենին, բառերի կապակցությունների վերաբերյալ գրաբարի քերականների հայացքները քննված են ընդհանուր առմամբ. տարբեր խոսքի մասերի բառակապակցությունների բաղադրիչների շարահյուսական-իմաստային հարաբերությունների մեկնաբանությունները առանձին-առանձին չեն ներկայացվել։ Սույն հետազոտության մեջ այս կարգի հարցերին անդրադառնում ենք նյութի քննության ընթացքում՝ յուրաքանչյուր երևույթի բացատրությունների հետ կապված, քանի որ առանձին գլուխ հատկացնելու դեպքում ստիպված կլինեինք կրկնել արդեն հրապարակված մի շարք դրույթներ։

---

[1] Նշված աշխատությունն ամփոփում է բառերի կապակցությունների ուսմունքը հայ քերականագիտության մեջ, իսկ եվրոպական և ռուս լեզվաբանության մեջ սույն հարցի պատմության քննությունը ավելի հանգամանորեն շարադրված է մենագրության այն հատվածներում, որ նույն խորագրով հրատարակված է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի հայոց լեզվի բաժնի «Գիտական աշխատությունների» ժողովածուի 1967 թ. № 2-ում։

Թեև գրաբարի քերականագիտությունը բառերի կապակցությունների շարահյուսական-իմաստային քննության ասպարեզում բարձր մակարդակի էր հասել XIX դարում, մասնավորապես Գ. Ավետիքյանի, Վ. Զալըխյանի, Ա. Այտընյանի, Ա. Բագրատունու, Ստ. Մալխասյանցի ուսումնասիրություններով, սակայն արդի լեզվաբանության տեսական ձևանումները հնարավորություն են տվել ի նորո քննության առնելու գրաբարի բառակապակցությունները՝ բաղադրիչների շարահյուսական-իմաստային հարաբերությունների բացահայտման ուղղությամբ, և, հրաժարվելով ավանդական քերականության որոշ սխալ դրույթներից, շատ հարցերում տալու արդի գիտության պահանջներից բխող մեկնաբանություններ: Այստեղ նկատի ունենք ոչ միայն գրաբարի նորագույն ձեռնարկներում և դասագրքերում[2] տրված, այլև արդի հայերենի համանման իրողությունների մեկնաբանությունները: Անժխտելի է, որ թեև շարահյուսական կառուցվածքի տեսակետից որոշակի տարբերություն կա գրաբարի և աշխարհաբարի միջև, սակայն դա նշանակություն չունի շարահյուսական իրողությունները մեկնաբանելիս: Նույնատիպ իրողությունների, տվյալ դեպքում բառակապակցությունների բաղադրիչների իմաստային հարաբերությունների մեկնաբանությունը նույն չափանիշները պետք է ունենա: Այլ բան է, որ շատ իրողություններ գրաբարի քերականները ավանդաբար մեկնաբանել են յուրովի: Անհրաժեշտության դեպքում աշխատել ենք ներկայացնել ավանդական հայեցակետը և տալ երևույթի արդի մեկնաբանությունը: Մեր նպատակն է բացահայտել գրաբարի բառակապակցությունների կառուցվածքային առանձնահատկությունները, բաղադրիչների շարահյուսական-իմաստային հարաբերությունները: Աշխատանքը կատարված է համաժամանակյա կտրվածքով: Այդ պատճառով էլ օրինակները քաղված են V—X դարերի թարգմանական և ինքնուրույն երկերից: Միայն խիստ անհրաժեշտ դեպքերում դիտողություններ ենք անում նշված ժամանա-

---

2 *Տե՛ս* Վ. Առաքելյան, *Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց)*, Երևան, 1945, Ս. Ղազարյան, *Գրաբարի դասագիրք*, Երևան, 1951 և հետագա հրատարակությունները, Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ*, Երևան, 1952 և հետագա հրատարակությունները, Պ. Շարաբխանյան, *Գրաբարի ուղեցույց*, Երևան, 1967, Հ. Ավետիսյան և Ռ. Ղազարյան, *Գրաբարի դասընթաց*, Երևան, 1976, Հ. Ավետիսյան, *Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում*, Երևան, 1972, Ռ. Հովհաննիսյան, *Հին հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքը*, Երևան, 1972:

կամիջոցում կատարված շարահյուսական կարևոր փոփոխությունների վերաբերյալ[3]:

Ինչպես արդի հայերենի բառակապակցությունների քննության դեպքում, այնպես էլ այստեղ մեր նպատակն է տալ պարզ բառակապակցությունների գիտական նկարագրությունը, ուստի չենք անդրադառնում բառակապակցությունների բաղադրյալ տեսակներին:

Ինչպես նշված է հայ քերականագիտության մեջ, գրաբարի սկզբնական շրջանի (ինչպես և հետագայի) շատ հեղինակների կողմից գործածված են այլ լեզուների ոչ միայն բառակազմական, քերականական, այլև բառակապակցական կաղապարներ, որոնք հետագայում կամ դուրս են եկել գործածությունից, կամ շարունակել են գործածվել: Մենք բավարարվում ենք դրանց մատնանշումով, իսկ այդ կարգի կաղապարների (մասնավորապես բառերի կապակցություններին վերաբերող) ծագումնաբանական համգամանալից քննությունը դուրս է մեր նպատակից:

Ինչպես ժամանակակից հայերենում է, գրաբարում ևս խոսքի մասերը բառակապակցական դերով համասար չեն: Այդ պատճառով էլ գիտական նկարագրությունը ստացվում է անհամաչափ գլուխներով (ծավալի տեսակետից):

Ի տարբերություն արդի հայերենի բառակապակցությունների քննության, գրաբարի նույնատիպ իրողություններում դերանունների լրացական պաշտոնը չի ձուլվում համարժեք խոսքի մասերի քննության մեջ, քանի որ դերանունները գրաբարում ունեն ձևի և իմաստի էական տարբերություններ:

Նկատի ունենալով սույն աշխատության ծավալի սահմանափակությունը՝ կապակցության մեջ լրացման բնութագրման, ինչպես և դրա հետ կապված տեսական վեճերի հարցերին չենք անդրադառնում: Դրանց համգամանալից քննությունը տրված է «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» աշխատության մեջ:

---

3 Բառակապակցական կաղապարների պատմական փոփոխությունները առանձին ուսումնասիրության նյութ կարող են դառնալ:

## ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրաբարում լրացյալ են դառնում գոյականը, ածականը, բայը, մակբայը (մասամբ դերանունը, սակավադեպ և թվականը): Համապատասխանաբար և տրվում է սրանց քննությունը, այն է՝ գոյականի կամ գոյականական, ածականի կամ ածականական, բայի կամ բայական, մակբայի կամ մակբայական: Դերանվան կամ դերանվանական, թվականի կամ թվականական բառակապակցությունները քննության չենք առնում երկու պատճառով: Առաջինն այն է, որ դրանք քիչ հանդիպող կառույցներ են: Մյուս կողմից էլ դրանք էապես չեն տարբերվում ժամանակակից հայերենի նույնատիպ կառույցներից: Սրանց քննությունն էլ տարվում է ըստ լրացման ձևի: Օրինակ՝ բայի լրացումները գոյականով, մակբայով, ածականով, դերանուններով և այլն:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարում գոյականը լրացումներ է ստանում գոյականով, ածականով, թվականով, դերանվամբ, դերբայներով, մակբայով։ Ըստ այսմ էլ գոյականի բառակապակցությունները բաժանվում են հետևյալ ենթատեսակների՝
ա) գոյականի լրացումները գոյականով, բ) գոյականի լրացումը ածականով, գ) գոյականի լրացումը թվականով, դ) գոյականի լրացումները դերանուններով, ե) գոյականի լրացումները դերբայներով, զ) գոյականի լրացումը մակբայով։

Լրացում ստանալու տեսակետից գոյականը չի տարբերվում գոյականաբար գործածված այլ խոսքի մասերից (ածական, թվական, դերբայներ և այլն) և գոյականին հարաբերակից դերանուններից։ Այս հանգամանքը նկատի ունենալով էլ օրինակների մեջ նշում ենք նաև այդ բառերով կազմված բառակապակցությունները։

## 1. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆՈՎ

Գոյականը մի այլ գոյականի լրացում կարող է դառնալ երկու ձևով։ Առաջին դեպքում լրացումը համաձայնվում է լրացյալին։ Ընդ որում համաձայնվող լրացումը կարող է դրվել ինչպես ուղղական, այնպես էլ թեք հոլովներով, և երկու դեպքում էլ լրացյալի նկատմամբ նրա իմաստային հարաբերությունը չի փոխվում նրա ձևին համապատասխան։ Այդ նշանակում է, որ և՛ ուղղական, և՛ թեք հոլովներով արտահայտվելիս այն մնում է որոշիչ։

Այս հանգամանքը նկատի ունենալով էլ համաձայնվող լրացման բոլոր դրսևորումները քննվում են միասին։

Երկրորդ դեպքում գոյականի լրացումները չեն համաձայնվում լրացյալին. դրանք դրվում են սեռական և թեք հոլովներով, ապա և նախդիրներով ու թեք հոլովաձևերով։

## Ա. ԳՈՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ ՈՒՂՂԱԿԱՆ ԵՎ ԹԵՔ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

Համաձայնվող լրացումները լինում են որոշիչ և բացահայտիչ։

Գրաբարի քերականները ավանդաբար բացահայտիչ տերմինը շատ լայն են ըմբռնում՝ իրական բացահայտիչի հետ միասին ներկայացնելով նաև գոյականով որոշիչը, որը կարող է հանդես գալ և՛ նախադաս, և՛ ետադաս՝ հիմնականում համաձայնվելով բացահայտյալի հետ։ Վ. Զաքրոխյանը, Ա. Այտընյանը, Ա. Բագրատունին և ուրիշներ ուշադրություն էին դարձնում այն երևույթի վրա, որ նախադաս բացահայտիչը կարող է չհամաձայնվել բացահայտյալին և մնալ ուղղականով։ Մասնավորապես դա վերաբերում է տեղանուններով արտահայտված բացահայտիչներին (**Արեգ** *քաղաքի*, **Ապար** *աշխարհին*, *ի* **Սիոն** *լեռնէ*, *յ***Այրարատ** *գաւառէ*), ընդ որում նախադաս բացահայտչին վերագրում են ածականական շեշտ, որ նշանակում է, թե այդպիսի բացահայտիչը նույնացնում են որոշչին։

Քանի որ բառակապակցությունների ուսմունքի մեջ չենք քննում բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը, ուստի այստեղ կանգ չենք առնի բացահայտչի դրսևորումների և տեսակների հարցի վրա[1]։

Գրաբարում հատուկ անունները կարող էին դառնալ հասարակ անվան որոշիչ, ընդ որում լրացումն ուներ հավասարապես և՛ ետադաս, և՛ նախադաս գործածություն։ Այսպես, ետադաս լրացումով բառակապակցություններից կարելի է նշել *գետ* **Կուր**, *ձեռակերտ* **Արշակաւան**, *քաղաք* **Երուսաղէմ**, *աւան* **Թորդան**, *գաւառ* **Շաւարշան** և այլն։ Այս դեպքում մեծ մասամբ լրացումը չի համաձայնվում լրացյալի հետ, որը հոդ է ստանում[2]։

Օրինակներ՝ *Գնաց Դաւիթ և եկն նստաւ ի քաղաքին* **Կարիբ** (Ա, Թագ., ԻԲ)։ *Եւ դուք նստարուք ի քաղաքին* **յԵրուսաղէմ** (Ղուկ. ԻԴ)։ *Ի նմին աւանի* **Կուաշ** *հրամայէ բանակել* (Մխ, 2, ԻԲ)։

Ետադաս հատուկ անվամբ արտահայտված որոշիչը համաձայնվում

---

[1] Բացահայտչի և որոշչի ըմբռնման հարցում գրաբարի քերականագիտության մեջ արտահայտված կարծիքների քննությունը տե՛ս Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, էջ 89—97։ Այս աշխատությունը ընդգրկում է գոյականով, ածականով, թվականով և այլ խոսքի մասերով արտահայտված որոշիչների և որոշիչ-որոշյալ կապակցությունների հանգամանալից քննությունը։

[2] Լրացում-լրացյալ հարաբերությունը ներկայացնելու և երկիմաստությունից խուսափելու համար այստեղ ընդգծում ենք միայն լրացումները (նաև լրացյալը ընդգծելու դեպքում հարաբերությունը շրջված կլինի)։

է որոշյալի հետ առավելապես անձնանունների դեպքում։

Շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենոյ (Մխ., 2, խ)։ Խնդրեաց զքէն ձեռակերտին իւրոյ Արշակաւանու (Ն.տ., 3, ԼԱ)։ Տեսեալ թագաւորին Պապայ սգացեալ զամենայն Հայս ի վերայ երանելւոյն Ներսիսի (Ն. տ., ԼԹ)։ Կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար հանդերձ զօրավարաւն Վաչէիւ (Բուզ., 3, է)։ Լուր լուաւ յերկրէն Հայաստանէ (Ն.տ., Ժ)։ Ջուէր գնայր հասանիլ... զկողմամբք մայրաքաղաքին Դվնայ (ՅԴՊՀ,120)։

Այս դեպքում հնարավոր է, որ նախդիր առանա՛ և որոշյալը, և՛ որոշիչը։ Օրինակ՝ Ու յղեսջիք դուք ի քաղաքն յԱրտաշատ (Ագ., 214)։

Նախադաս որոշչի դերով կարող են հանդես գալ և՛ տեղանունները, և՛ անձնանունները, ինչպես՝ Վաղարշապատ քաղաք, Տիզբոն քաղաք, Վասակ սպարապետ, Պապ թագաւոր, Ախուրեան գետ, Հռոմ քաղաք, Բակուր բդեշխ, Բագարատ ասպետ, Վահան նահապետ, Շիրակ երկիր, Վարդանակերտ աւան, Կոտայք գաւառ, Սիմ լեառն, Ճրէշ բլուր, Արտիմէդ քաղաք, Այրարատ գաւառ, Րահ գետ, Կողբ գիւղ և այլն։

Նախադաս տեղանունները մեծ մասամբ և երբեմն էլ անձնանունները չեն համաձայնվում լրացյալի հետ։

Օրինակներ՝ Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի (Ագ., 33)։ Խաղայր գնայր յԱյրարատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ (Նտ., 873)։ Որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ (Մխ, 3, ԽԸ)։

Ժողովեցան Բիրոն և Բիկենդ երիցունք ի Հռոմ քաղաքէ (Ն.տ., 2, ՁԹ)։ Անցանէ առ նոր Շիրակ երկրաւն (Սեբ., Ա)։ Եկեալ նստեալ զՃրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ,զՔասաղ գետով (Ն.տ., ԿԵ)։ Ճակատ տուեալ ընդ Բակուր բդեշխի՝ սատակէ զնա (Ն.տ., 3, է)։ Պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի (Եղ., 3)։ Յինքն գրաւէր զսեպհականութիւն տանն և զբնակիչս Սիմ լերինն (ՅԴՊՀ, 133)։

Գրաբարում Հայաստան, Ասպար, Պահ, երբեմն և այլ տեղանուններ սովորաբար առանձին չէին գործածվում, այլ երկիր, աշխարհ, զորք, ազգ և նման բառերի հետ։

Ելանէր նոցա պարգևական յամենաբարին յաստուծոյ... ի գիտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել (ԿՎՄ, Ջ)։ Զայն ամբոխ բազմութեան Տանկաստան զօրացն տեսին (ՅԴՊՀ, 290)։ Ասպատակ սփռէր զկողմամբք Հայաստան աշխարհին (Ագ., 35)։ Գայր... երևել ի Հայաստան երկրին (Ն.տ., 886)։ Յանդիման կինիջիք ինձ յԱսպար աշխարհին (Եղ., 1)։

Զամենայն ազգս հաւաքեա և անցո ընդ Պահ դուռն ի ներքս (Ն.տ.)։

Նախադաս անձնանունները, հազվադեպ նաև տեղանունները համաձայնվում են լրացյալի հետ։

Օրինակներ՝ Պատգամաւոր իրացս այսոցիկ էր տանուտէրն նահապետն Մամիկոնեան տոհմին երէց եղբայր Վասակայ սպարապետին (Բուզ., 4, ԺԶ)։ Զօր տուեալ էր Թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ (Ն.տ., 5, ԼԱ)։ Որոյ պատահեալ պատերազմաւ արևելեայ և արևմտեայ զօրուն Հայոց՝ հանդերձ զօրապետօքն Բագարատաւ ասպետիւ և Վահանաւ նահապետիւ Ամատունեաց (Մխ, 3, Թ)։ Ետուն հրաման աձել զերիցունս եկեղեցւոյն Տիպոնի քաղաքի (Բուզ., 4, ԺԶ)։ Անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն աւանաւ (Սեբ., ԴԶ)։

Նկատելի է, որ գրաբարում ևս (ինչպես արդի հայերենում է) որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կազմված մի շարք բառակապակցություններ (տիտղոս-անուն, անուն-ազգանուն, անուն-տոհմանուն և այլն) վերածվում են բաղադրյալ անվան, ինչպես՝ Տէր Աստուած, Յիսուս Քրիստոս,, Տէր Քրիստոս, Վահրամ Ամատունի, Հայր Մարդպետ և այլն։

Ակնածէին ի Մուրացենէն Արգամայ (Մխ, 2, ԽԶ)։ Յաջողեցան Վահանայ Ամատունւոյ... խորան սքանչելի կանգնել (ԿՎՄ, 41, 1913)։ Օրհնեսջիք զՏէր Աստուած ձեր (Ագ., 53)։ Արդարև որդի Սահակայ Պարթևի է (Ն.տ., 122)։ Խոստովանիմք... զբանն Աստուած (Ն.տ., 900)։ Դատապարտեցաւ ի Պիղատոսէ Պոնտացւոյ (Եղ., 2)։

Զբաղմունք, կոչում, տիտղոս, հարաբերություն ցույց տվող հասարակ անունները ևս դառնում են ինչպես հատուկ, այնպես էլ հասարակ անունների որոշիչ և՛ ետադաս, և՛ նախադաս գործածությամբ։ Ընդ որում ետադաս որոշիչները սովորաբար համաձայնվում են որոշյալի հետ։

Օրինակներ՝ Զկնոջէն Խանանացւոյ մեծ զհաւատոցն ասէ (ԿՎՄ, 6)։ Գրեա... զեւթն ճրագարանս ոսկիս (Յայտն., Ա)։

Գրաբարում անուն բառը իր նախադաս անձնանուն լրացմամբ հանդերձ էր դառնում ետադաս որոշիչ։

Օրինակներ՝ Այր մի Անատոլ անուն առաքեաց առ նա բազում գանձիւք (Եղ., 1)։ Երէց մի Զանգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւագ մի Սահակ անուն, սարկաւագ մի Մուշի անուն, զորս յղէր առ անմեղ մարդիկ... սուրբ աւետարանաւն երդնուին (Ն.տ., 4)։

Հասարակ անուններով արտահայտված նախադաս որոշիչները սովորաբար չեն համաձայնվում։

Օրինակներ՝ Երևեցաւ կառօք քրովբէիւք և սիւն ամպովք (Ագ., 160)։ Ի մէնջ որպէս ի ծառայ որերոյ գործ խնդրեցէք (ՂՓՊՀ, ՂԵ)։ զՀոռոմ

գրեանդ ոչ ետուն զկնի իմ (ՂՓԹ)։ Զկնի նորա եկին մարզպան պարսիկք (Սեբ., Ա)։ Որ գուն ի վերայ գործէր ոգւով չափ սակս նորոգման մայրաքաղաք եկեղեցւոյն (ՅԴՊՀ, 358)։

Սակայն պատահում են նաև համաձայնության դեպքեր։

Որ էր մերձաւոր Դանիելի ասորւոյ եպիսկոպոսի (ԿՎՄ, 12)։ Եւ հրաման յինքնակալէն Կոստանդիանոսէ (Մխ, 2, ՁԹ)։ Գայ հասանէ հրովարտակ ինքնակալին Կոստանդիանոսի առ մեր արքայն Տրդատ (Ն.տ.)։

Ուշ շրջանում հանդիպում ենք երկբառանի նախադաս լրացումով բառակապակցությունների, որոնք կառուցվածքային և իմաստային կաղապարներով աշխարհաբարն են հիշեցնում[3]։

Մեկնէ բերան ոսկի Յովհան, եթէ զաստուածութիւն կոչէ որդի մարդոյ (ՍՏՏՊ, 3, ԽԱ)։ Բերանն ոսկի Յովհան ասէ (Ն.տ.)։

## Բ. ԳՈՅԱԿԱՆԻ ՉՀԱՄԱՁԱՅՆՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

### ա. Գոյականի լրացումները սեռական հոլովով

Գրաբարում սեռական հոլովով լրացումներ ստանում են ոչ միայն բուն գոյականները, այլև գոյականաբար գործածված բոլոր բառերը, այն է՝ թվականները, ածականները, դերանունները, դերբայները։ Այս վերջինների հոլովառությունը համարյա ոչնչով չի տարբերվում գոյականներից, ուստի և քննում ենք միասին։

Քանի որ գոյականի լրացման դերում հանդես եկող սեռականի շարահյուսական պաշտոնի և իմաստի, այսինքն նախադասության անդամի և բառակապակցության բաղադրիչի փոխհարաբերության հարցը հանգամանորեն քննված է մեր վերոհիշյալ աշխատության մեջ[4], ուստի այստեղ, չանդրադառնալով այդ հարցին, կքննենք բառակապակցության բաղադրիչների իմաստային հարաբերությունները։

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ գրաբարում սեռականով կազմված կապակցության բաղադրիչների հարաբերությունները ևս կարող են երկիմաստ լինել։ Առավելապես դա վերաբերում է բանաստեղծական խոսքում հանդես եկող բառակապակցություններին։ Այսպես, գանձ ոսկւոյ,

---

[3] Հմմտ. գլուխը արծաթ լեռնագագաթ, հոգին կրակ մարդ, որոնցում բուն լրացումը ածականի արժեքով է հանդես գալիս (գլուխը մեծ մարդ և ծալը պակաս կին, բերանն արնոտ մարդակերը և այլն)։

[4] Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 52—57։

գանձ արծաթոյ տիպի բառակապակցություններում լրացումը կարելի է մեկնաբանել և՛ բաղկացության, և՛ պարունակության իմաստներով։ Գանձս ես ոսկւոյ և արծաթոյ նմա պարգևեալ յուղարկէ յիւրական աշխարհն (ՅԴՊՀ, 104)։ Աստղ երկնից տիպի բառակապակցության մեջ լրացումը կարելի է մեկնաբանել տեղի և մասնական իմաստներով։ Աստեղք երկնից թոթափեցան յերկիր (Յայտն., Զ)։ Լոյս ճշմարտութեան կապակցության մեջ լրացումն արտահայտում է վերաբերության կամ վերացականը թանձրացականի փոխարեն իմաստներ։ Կարծեցի շիջուցանել զլոյսն ճշմարտութեանն քարոզութեանն երկուց հաւատարմացն (Բուզ., 3, Ի)։ Աւազանին օծումն բառակապակցության մեջ լրացումն ունի տեղի կամ միջոցի իմաստ։ Աւազանին կենարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր (ԳՆՄՈ, ԺԴ)։ Ընդարձակութիւն նեղութեանց տիպի կապակցություններում սեռականը մեկնաբանվում է և՛ ենթակայական, և՛ խնդրային իմաստներով։ Եղիցի սա քեզ... ընդարձակութիւն նեղութենց (Ն.տ., ՂԲ)։ Իսկ խումբ հակառակորդին բառակապակցության լրացումն ունի եռակի մեկնաբանություն՝ ստացական, մասնական, բաղկացության։ Անխզելի հանգուցիւք պաշարին խումբք հակառակորդին (Ն.տ. ՂԱ)։ Պետք է նշել որ արդի հայերենում բավականաչափ տարածված որոշ տիպի բառակապակցություններ գրաբարում, մասնավորապես մեսրոպյան շրջանում, սակավ են հանդիպում, ինչպես՝ չափի, համապատասխանության, ներգործող խնդրի, ուղղության, հեղինակության։

## Հատկացուցիչ–հատկացյալ բառակապակցություններ

Ի տարբերություն աշխարհաբարի, գրաբարում հատկացուցիչը մեծ մասամբ ետադաս էր գործածվում։ Այսպես, ասվում էր բազմութիւն արանց, օր բարկութեան, ժամ դատաստանի, սպասք ոսկւոյ, յարութիւն մարմնոյ, դաս մանկտոյ, խոստում պարգևաց, վրէժխնդրութիւն հաւատոյ, լոյս Քրիստոսի, երկիր կամ աշխարհ Հայոց և այլն։ Քիչ չեն նաև սեռականով լրացումների նախադաս գործածության դեպքերը, ինչպես՝ ճաշոյ ժամ, Աստուծոյ վկայութիւն, գինւոյ արբեցութիւն, լաւութեանց արարիչ, քրիստոնէից ժողովուրդ, արքայից արքայ և այլն։

Ստացական սեռականով կապակցություններ.—Թեև սա սեռականի արդի ըմբռնմամբ հիմնական իմաստներից մեկն է, սակայն դասական գրաբարում համեմատաբար քիչ է գործածվում գոյականով։ Թերևս դրա պատճառն այն է, որ պատկանելության հարաբերությունն արտահայտվում էր հոդերով կամ դերանուններով։

Օրինակներ՝ *Ժառանգեսցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց (ԾՆն., ԻԲ)։ Առ ծառայն տասն ուղտ* յուղտուց տեառն *իւրոյ (Ն.տ., ԻԴ)։ Նա արածէր* զխաշինս հօր *իւրոյ (Ն.տ., ԻԹ)։ Մնայր* գազանացն Արտաշրի *(Եզ., 5)։ Եթէ գրաւեսցես* զբաճկոն ընկերի *քո (Ելք, ԻԲ)։ Եթէ պատահեսցես* եզին թշնամւոյ *քո... դարձուսցես (Ն.տ., ԻԳ)։ Ոմն մերկանայ* զհանդերձս ընկերին *(Եղն., 1, Դ)։* Սուրք սպանողաց *բթեցան (Եղ. 3)։ Մի վարատեսցէ թշնամին ուխտիս մերոյ* զոչխարս *առաքելական* եկեղեցւոյ *քո սրբոյ (Ագ., 145)։* Անուն կենդանւոյ *ունի (Յայտն., Գ)։*

*Երբեմն սեռականը կարող է արտահայտել ստացական և պարունակության իմաստները հավասարապես։ Օրինակ՝ Դիպեսցիս* բունոյ հաւուց *(Բ, օրէնք, ԻԲ)։*

**Ծագման սեռականով կապակցություններ.**— *Այս հարաբերությամբ կազմված բառակապակցություններից կարելի է նշել* լոյս արեգական, թոյնք իժից, ցօղ շնորհի *և այլն։*

*Խաւարեցաւ* լոյս տեսանելեաց *աչացս իմոց (Բուզ., 3, Ի)։ Յորս ամենևին չծագէ նշոյլ սուրբ* լուսոյն Քրիստոսի *(Եզ., 1)։ Կոյր զրկի ի* ճառագայթից արեգական *(Ն.տ., 2)։ Դու սպան* զջերմութիւն արեգական *(Ն.տ., 7)։* Թոյնք իժից *էին ի ներքոյ շրթանց (ՂՓԹ)։ Զի քո է փրկութիւն... և ցօղով շնորհի քոյ զուարթութիւն (ԳՆՄՈ, Թ)։*

**Պատճառի, ազդակի սեռականով կապակցություններ.**—*Այսպիսի լրացմամբ կապակցությունները բնորոշ են բանաստեղծական խոսքին և, բնականաբար, դասական գրաբարում քիչ են հանդիպում։*

Օրինակներ՝ *Եղիցի քև սա մեզ լուր ցնծութեան,* ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան *(ԳՆՄՈ, ՂԲ)։ Դառնաշխատ քրտնմամբք* յերկունս մահու *վտանգեալք՝ և իբրև զխռիւ ինչ ի հողմոյ տարաբերեալք դանդաչեն (ՅԴՊՀ, 276)։*

**Փոխհարաբերության սեռականով կապակցություններ.**—*Այս իմաստով կազմված բառակապակցությունները շատ հաճախադեպ գործածություն ունեն գրաբարում։*

Օրինակներ՝ *Որոյ արեամբ փրկեցան անդրանիկք* որդւոյն Իսրայելի *յԵգիպտոս (Եղն., 4, ԺԲ)։ Յետ նորա էր գլուխ աբեղայից, և* վարդապետ միանձանց, *և* առաջնորդ մենակեցաց, *և* վերակացու վանէրայից, *և* ուսուցիչ *ամենայն* անապատաւորաց, *և* տեսուչ ամենեցուն *(Բուզ., 6, ԺԶ)։* Ուստերք *և* դստերք ազատաց *և* շինականաց *կրթեսցին ի հրահանգս նոցուն մոգաց (Եղ., 2)։ Միայն երանելին Հմայեակ,* եղբայր սպարապետին *Հայոց Վարդանայ... կատարեցաւ նահատակութեամբ (Ն.տ., 4)։ Լուաւ* ծառայն Աբրահամու *զբանս նոցա (ԾՆն., ԻԴ)։*

**Հեղինակության սեռականով կապակցություններ.**— *Լրացումը ցույց է տալիս լրացյալով արտահայտված ստեղծագործության հեղինակը։* Օրինակ՝ Առակք Սողոմոնի *որդւոյն Դաւթի թագաւորի Իսրայելի (Առակ.)։*

**Ենթակայական սեռականով կապակցություններ.**— *Այս հարաբերությամբ կազմված բառակապակցությունները շատ են գործածական գրաբարում։ Նկատելի է, որ սրանցում լրացումը և՛ նախադաս, և՛ ետադաս է լինում։*

Օրինակներ՝ *Ապաքէն* Աստուծոյ վկայութիւնն *մեծ իցէ (Ա, Յովհ., Ե)։ Որպէս ի* Նինուէացւոցն ապաշխարութիւն *հայեցեալ, ոչ կործանեաց զքաղաքն (Եզն., 2, ԺԷ)։ Դարձցուք անդրէն ի պատմութիւն* Տրդատայ յարձակմանն *ի Պարսս (Մխ, 2, ՁԶ)։ Սոյնչափ թանձրացաւ* յաճախութիւն սովոյն *(ԹԱՊՏԱ, 3, ԻԶ)։* Հրամանաւ թագաւորին *տիպէին զամենեսեան (Եղ., 3)։ Եկեղեցիք ոչ են* պարգևք թագաւորաց... *և ոչ* գիւտք իմաստնոց... *և ոչ պատիր* խաբէութիւնք դիւաց *(Ն. տ., 2)։*

**Խնդրային սեռականով կապակցություններ.**— *Այս իմաստով կազմված բառակապակցությունները շատ են գործածվում գրաբարում։ Լրացումը սովորաբար ետադաս է լինում։*

Օրինակներ՝ *Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայցս լեալ* անսիրելութիւն իմաստութեան *և* երգարանաց *բանաւորաց (Մխ, 1, Գ)։ Յարոյց* հալածանս եկեղեցւոյ *(Ն. տ., 2, ՁԳ)։ Հաւատոյ աչօք* զքարկոծմանս մարգարէիցն *տեսանեն (Եղ., 5)։ Խնդութեամբ ընկալան* զյափշտակութիւն *ընչից բազմաց (Ն. տ., 4)։ Տուեալ է հրաման թագաւորին յաղագս* սպանման քահանային *(ՂՓՊՀ, ԾԱ)։ Ո՞ր են* եկեղեցւոյ թշնամանիչքն, առոտնահարուք օրինացն, *(Ն. տ., Ճ)։ Որ* փրկութիւնդ *ես* անձանց... *և* բժիշկ վիրաց *աներևութից,* պաշտպան յուսացելոց *(ԳՆՄՈ, Ի)։ Լուսաւորեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս կենդանաբաշխ* աջոյդ կարկառմամբ *(Ն. տ., ԼԵ)։ Որոյ հատեալ է* ակնկալութիւն փրկութեան կենաց *(Ն. տ., ՂԶ)։ Առատացոյց* զզոհս կրակի *(Եղ., 1)։*

**Արտացոլման, վերարտադրման սեռականով կապակցություններ.**— *Այս հարաբերությամբ կապակցվում են սահմանափակ թվով լրացյալ գոյականներ, ինչպես՝* պատկեր, պատճէն, նկար, արձան *և այլն։*

Օրինակներ՝ *Պատճէնք* հրովարտակացն *սփռեալ գրէին ընդ ամենայն գաւառսն (Նաթ., ԺԳ)։ Ըստ* պատկերի Աստուծոյ *արար զնա (ԾՆն., Ա)։ Որ ունի* զօրինակ Միածնիդ *քոյ... զանխափան* լուսոյ *(Ն. տ., 91)։ Երես թագաւորին զգեղապանծ վայելչութիւն պատկերակերպ* նկարագրին *Հռիփսիմեայ (Ագ., 140)։ Խելացնորեցուցեալ զնա առ ի տալ պագանել երկիր ուրուականաց մեռելոցաց, ոսկեղէն և արծաթեղէն, փայտեղէն և*

քարեղէն պղնձագործ պատկերաց դիցն սնոտեաց (Ն. տ., 142)։ Եւ էր պատճէն հրովարտակին օրինակ զայս (Ն.տ., 150)։ Ի մէջ նորա տեսիլ **արեգական** (Ն.տ., 550)։

**Մասնական սեռականով կապակցություններ.**— Մասնական հարաբերությունը ներկայանում է երեք տարատեսակով՝ բուն մասնական, տարածական-մասնական և ժամանակային-մասնական։

**Բուն մասնական սեռականով** կազմված բառակապակցությունները կազմվում են կա՛մ գոյական լրացյալներով, կա՛մ գոյականաբար գործածված թվական, դերանուն, ածական կամ այլ խոսքի մասով արտահայտված լրացյալներով։ Այսպես, հետևյալ օրինակներում լրացյալը առարկայի մաս կամ ամբողջական առարկա, իսկ լրացումը առարկա կամ առարկաների խումբ է ցույց տալիս։

Բերին **զտասանորդս ցորենոյ** և **գինւոյ**, և **ձիթոյ** և զանձանակ տան Տեառն (Գ, Եզր., ԺԳ)։ Ոչ կային **նշխարք արքոց** ի վանքս (ՄԿՊԱԱ, 2, Ծ)։ Բամբասէին զիս առաջի ժողովրդեան իմոյ վասն **ափոյ** միոյ **գարւոյ** և **կոտորոյ** միոյ **հացի** (Ա, Եզր, ԺԳ)։ Նուրբ է **տարր հրոյ** (Եզն, 1, ԻԳ)։

Երկրորդ դեպքում լրացյալ են դառնում գոյականաբար գործածված թվականները կամ ածականները։ Այսպիսի բառակապակցություններում լրացումը լինում է հոգնակի կամ ամբողջական առարկա ցույց տվող բառ։ Բառակապակցությունների այս տեսակը շատ է տարածված գրաբարում (արդի հայերենում քիչ գործածական է)։

**Օրինակներ՝** Տացուք քեզ այր իւրաքանչիւր **հազար եւ հարեւր արծաթոյ** (Դատ., ԺԶ)։ Իջին **երեք հազար արանց** Յուդայ (Ն. տ., ԺԵ)։ Տեսանե՞ս, եղբայր, քանի **բիւրք** են **հաւատացելոցն** Հրէից (Առակ., ԻԱ)։ Ապա **փախստականք զօրացն** վաղ հասանէին ի բանակ Հայոց (Բուզ., 3, Ը)։ Գիտեա, ասէ, ով **մեծդ դիւցազանց**, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ (Մխ, 1, ԺԱ)։ Ի **միում աւուրց** հաւանեցուցանէ զնահապետ ազգին Սլկունեաց ելանել արտաքս յամրոցէն (Ն.տ., 2, ԶԴ)։ Պատմեա **զմեծամեծս Աստուծոյ զօրութեանցն** (Ղև., Պատմ., Ի)։ **Զանդրանիկս որդւոց** քոց ինձ տացես (Ելք., ԻԲ)։ **Զկէս արեանն** եհեղ առաջի սեղանոյն (Ն.տ., ԻԴ)։ Ածցէ զառն տարեւոր ողջակէզ և **զոյգս աղաւնւոյ** կամ **տատրակի** (Ղևտ., ԺԲ)։ Զամենայն **դալար խոտոյ** այրեաց (Յայտն., Ը)։ **Գազանացն զկէսն** փախստականս եղեալս տեսանեմք (Եզն., 2, ԺԴ)։

**Տարածական-մասնական սեռականով** կապակցություններում լրացումն այն առարկան է ցույց տալիս, որին կից է լրացյալով արտահայտված առարկան, ինչպես՝ **գլուխ լերին, կողմն երկրի, սեամ դրանն** և այլն.

**Օրինակներ՝** Ոռոգանէր զամենայն **երեսս երկրի** (Ծնն., Բ)։ Կարեցին

տերև թզենւոյ (Ն.տ., Գ)։ Երևեցան գլուխք լերանց (Ն.տ., Ը)։ Եբաց Նոյ զպատուհան տապանին (Ն.տ.)։ Գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի (Եղ., 1)։ Մատուցէ զնա առ սեամս դրանն (Ելք., ԻԱ)։ Ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ (Մխ, 1, Ժ)։ Արմատք խոտոց ոչ պարարէին (Եզն., 1, ԺԶ)։ Սկիզբն չարեաց զնախանձ ասեմք (Ն.տ., ԺԲ)։

Ժամանակային-մասնական սեռականով կազմված բառակապակցություններում լրացումը ցույց է տալիս ընդհանուր ժամանակը, իսկ լրացյալը՝ նրա մի մասը։

Օրինակներ՝ Տրտմութեամբ կերիցես զնա զամենայն աւուրս կենաց քոց (Ծնն., Գ)։ Հասանէր վախճան կենաց Թագաւորին (Եղ., 3)։ Ի միւս և ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով Թագաւորն հայոց գունդ կազմել (Ագ., 19)։ Իջեալ զգնայր ի դրախտին ընդ երեկս աւուրն (Ն.տ., 281)։

Հատկություն կրողի սեռականով կապակցություններ.— Այսպիսի բառակապակցություններում լրացումն այն առարկան է ցույց տալիս. որի հատկանիշը արտահայտված է լրացյալով։

Օրինակներ՝ Բազում անգամ ի կանաց կերպս եղեալ, զարս խաբէ յերազի (Եզն., 2, Ի)։ Նոքա և ոյժ բազմաց, նոքա և կարողութիւն աշխարհի (Ագ., 4)։ Լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ ի տէրունական նշանին զօրութենէ (Ն.տ., 779)։ Ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն (Մխ, 2, ԽԲ)։

Փոխարինության սեռականով կապակցություններ.— Լրացյալը ցույց է տալիս այն առարկան, որի փոխարեն առկա է լրացյալով արտահայտված առարկան։ Այսպիսի բառակապակցությունները գործածական են գրաբարում։

Օրինակներ՝ Գինք արծաթոյ իւրոյ են (Ելք., ԻԱ)։ Խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց (Բուզ., 3, Ի)։ Մեծաւ պնդութեամբ առնէր վրէժխնդրութիւն հաւատոց և վարուց երանելին Տրդատ (Մխ, 3, Գ)։ Մեք եմք գինք արեան Որդւոյ քոյ (Ագ., 85)։ Առցուք զվարձս վաստակոց (Ն.տ., 171)։

### Որոշիչ-որոշյալ բառակապակցություններ

Որոշչային հարաբերությամբ լրացյալի հետ կապակցվում են նյութի, բաղկացության, պարունակության, վերաբերության, համեմատության և գերադրության, պարագայական (տեղի, ուղղության, ժամանակի, չափի, նպատակի, հատկացման, համապատասխանության), սահմանափակման, միջոցի, ներգործող խնդրի, որակական, անվանման սեռականները։

**Նյութի սեռականով կապակցություններ.**—*Այս իմաստով լրացումը սովորաբար ցույց է տալիս այն նյութը, որից պատրաստված է լրացյալով արտահայտված առարկան։*

**Օրինակներ՝** *Եհան ծառայս* **անօրս ոսկւոյ** *և* **անօրս արծաթոյ** *(Ծնն., ԻԴ)։ Եւ այլ* **կան ոսկւոյ** *քսան և երիս և* **կան պղնձոյ** *սուրբ և մաքուր ոսկեզօծ (Բ. Եզր., Ը)։ Եառուն Յուդիթայ... զամենայն* **զսպասն** *նորա* **զոսկւոյ** *և* **զարծաթոյ** *(Յուդիթ, ԺԷ)։*

*Նյութի իմաստը կարող է նաև փոխաբերաբար դրսևորվել։ Օրինակ՝ Տեսանէի...* **խաչն լուսոյ** *ի վերայ նորա (Ագ., 736)։*

**Բաղկացության սեռականով կապակցություններ.**—*Լրացումը ցույց է տալիս առարկաների ամբողջություն, որոնցից բաղկացած, կազմված է լրացյալով արտահայտված առարկան։ Մեծ մասամբ լրացումը հոգնակի է դրվում։*

**Օրինակներ՝** *Առեալ երանելոյն Մաշտոցի* **դաս** *մի* **մանկտոյ**... *խաղայր գնայր (ԿՎՄ, 13)։ Առնու* **զբազմութիւն զօրաց** *իւրոց (Մխ, 1, ԺԵ)։ Գային հասանէին յանկարծակի* **բազմութիւնք դահճացն** *(ՂՓՊՀ, ԾԲ)։ Պնդին ի մետաղս ահեղ հրամանիդ* **այսականացն զումարք** *(ԳՆՄՈ, ՂԱ)։ Որպէ՞ս զցամաքումն առցէ* **հեղեղք արտասուացս** *(Ն.տ., ԿԸ)։ Թափեցին ի նոցանէ* **երամակս ձիոց** *և* **ջորեաց** *և* **ուղտուց** *(Սեբ., Ա)։ Բազմացան ի նմա արօտականք* **անդեայք արջառոց** *և* **հօտք ոչխարաց** *(ՅԴՊՀ, 82)։*

**Պարունակության սեռականով կապակցություններ.**—*լրացմամբ արտահայտվում է այն առարկան (իրը), որը (որոնք) պարունակվում է (են) լրացյալով արտահայտված առարկայի մեջ։*

**Օրինակներ՝** *Սրբեսցէ զնա* **յաղբերէ արեան** *նորա (Ղևտ., ԺԲ)։ Ծակոտէր զբազմամթեր* **աման խոռհրդոյն** *(Եղ., 2)։ Աւազանին կենարար օծմամբն և* **բաժակաւն լուսոյ** *լցեր (ԳՆՄՈ, ԺԴ)։ Փլուզանէր անդէն ի փորին* **զծով** *կամաւոր* **մաղձոյն իւրոյ** *(Եղ., 2)։ Առցես* **զսրուակդ իւղոյ** *(Դ. Թագ., Թ)։ Զեղան* **շտեմարանք ցորենոյ** *ի ժամանակի լրութեան հնձոց, լցան* **վուրք գինւոյ** *ի կութս այգեստանեայց (ՅԴՊՀ, 199)։ Զեղցին* **հնձանք գինւոյ** *(Ագ., 537)։*

**Վերաբերության սեռականով կապակցություններ.**—*Այսպիսի լրացում ստանում են ասացական բայերից կազմված գոյականները, ինչպես՝* **զրոյց, խօսք, պատմութիւն, հրաման** *և այլն։*

**Օրինակներ՝** *Որովք այժմ* **գիւղից** *և* **գաւառաց**, *եւ և իւրաքանչիւր տանց* **առանձնականութեանց**, *և հանուրց* **հասարակութեանց** *և* **դաշանց** *այժմ առ մեզ գտանին անբաւ* **զրուցաց** *մատեանք (Մխ, 1, Գ)։ Դարձցուք անդրէն ի* **պատմութիւն** *Տրդատայ* **յարձակմանն** *ի Պարսս (Ն.տ., 2, ՁՁ)։*

Ոչ կապանաց ել հրաման ի թագաւորէն վասն նորա և ոչ մահու (ՂՓՊՀ, ԿԴ)։ Եղև նշանակ սովոյ և սրոյ և մեծի սաստանութեան (Ղև., Պատմ., Ե)։ Եհաս զրոյց պարտութեան գնդին ի քաղաքն Կարնոյ (Ն.տ., ԼԴ)։ Գան հասանեն յերկիրս այս մեր, բերելով զաւետիս արձակման գերելոցն (ԹԱՊՏԱ, 3, ԺԴ)։ Եղիցի քև սա մեզ լուր ցնծութեան (ԳՆՄՈ, ՂԲ)։ Թերևս ի համբաւէ մահուանն զարհուրեցաւ (Եղն., 4, Ե)։ Անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ (Յայտն., ԺԲ)։

Երբեմն լրացյալը կարող է լինել նաև այլ գոյական (ոչ ասացական բայից կազմված)։

Օրինակներ՝ Հարցանէ դարձեալ ի նոյն ճառի, որ է եօթներորդ ի խաչելութեան զրոցն (ՍՏՏՊ, 3, ԻԱ)։ Ոչ բերես վճիռ կորստեան, այլ կտակ ազատութեան (ԳՆՄՈ, ՁԲ)։

**Համեմատության և գերադրության սեռականով կապակցություններ.**— Սովորաբար լրացումն ու լրացյալը նույն բառով են արտահայտվում, ընդ որում լրացումը հոգնակի է դրվում։ Բառակապակցության բաղադրիչ կարող են լինել գոյականները կամ գոյականաբար գործածված ածականները։

Օրինակներ՝ Զի թագուհեաց թագուհի լիցի (Մխ, 1, ԻԸ)։ Սա է պարծանք պարծանաց (ՄԿՊԱԱ, 2, Լ)։ Եկին և յանդիման եղեն Յազկերտի արքայից արքային (Եղ., 7)։ Քաւեսցէ զսրբութիւն սրբութեանցն (Ղևտ., ԺԶ)։ Ես գրեմ և ցուցանեմ ի դուռն մովպետան մովպետի (Եղ., 3)։ Դատաւորն դատաւորաց յարեաւ դատել զերկիր (Բուզ., 5, Դ)։ Արար Սողոմոն... զդրունս տանն ներքնոյ, զսրբութեան սրբութեանցն (Գ., Թագ., Է)։

**Սահմանափակման սեռականով կապակցություններ.**— Լրացումը այն առարկան է ցույց տալիս, որի մեջ սահմանափակվում է լրացյալով արտահայտված առարկայացված հատկանիշը։ Այսպիսի բառակապակցություններում լրացյալի դերով կարող է հանդես գալ ինչպես գոյականը, այնպես էլ գոյականաբար գործածված ածականը։

Օրինակներ՝ Դու չար հիւանդութեամբ ու ախտիւ որովայնի հաշեսցես (Բ., Մնաց., ԻԱ)։ Հրաման տայ չորից բիւրուց և երկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ... ածել անխափան ի փափագեալ տեղին (Մխ., 1, ԺԶ)։ Գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ (ԿՎՄ, 15)։ Նա էր ի ցեղէն Նեփթաղիմայ, և հայր նորա այր Տիմացի, ճարտարապետ պղնձոյ և լի արուեստիւ և իմացութեամբ և գի-

տութեամբ՝ գործել զամենայն գործ պղնձոյ (Գ. Թագ., Է)։

**Միջոցի սեռականով կապակցություններ.—** Լրացումը ցույց է տալիս լրացյալով արտահայտված առարկայացած գործողության կատարման միջոցը։ Այսպիսի բառակապակցությունները սահմանափակ գործածություն ունեն։

Օրինակներ՝ Անկաւ Բաբելոն մեծն, ի գինւոյ արբեցութենէ (Յայտն., ԺԴ)։ Սիրեցեր զտեղծուածս ձեռաց քոց (Ագ., 75)։ Զյաւիտենից պատուհասն և զանշէջ գեհեննին սպառնալիսն գնել ընդ կարասւոյ՝ յոյժ անմտութիւն է (ՂՓՊՀ)։ Զի քո է փրկութիւն, և ի քէն է քաւութիւն… և օծմամբ իւղոյ քոյ սփոփութիւն (ԳՆՄՈ, Թ)։ Հարկանէին զզօրս նորա կոտորմամբ սրոյ (Ղև., Պատմ., Բ)։ Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն (Եզն., 1, ԺԴ)։ Քրիստոս ասէ՝ թէ աղքատն ի գոգն Աբրահամու չոգաւ, և մեծատունն ի տանջանս հրոյ (Ն.տ., 4, ԺԲ)։

Երբեմն բառակապակցության մեջ լրացումը կարող է մեկնաբանվել միջոցի կամ վերաբերության իմաստներով։ Օրինակ՝ Ոչ ի սպառնալեաց տանջանացն զանգիտէին (Եղ., 2)։

**Ներգործող խնդրի սեռականով կապակցություններ.—** Լրացումը այն առարկան է ցույց տալիս, որից ներգործվում է լրացյալով արտահայտված առարկան։ Համեմատաբար սակավաթիվ են այս հարաբերությամբ կազմվող բառակապակցությունները։

Օրինակներ՝ Այլ դու Աքիոր վարձկանն Ամոնայ՝ որ խօսեցար զբանս զայս յանիրաւութեան քում (Յուդիթ., Զ)։ Մի՛ սիրեր զյագուրդ կերակրոց կամ զըմպելեաց (Եզն., Խրատք)։

Երբեմն էլ կապակցությունը կարելի է մեկնաբանել ներգործող խնդրի և ստացական հարաբերությամբ։ Օրինակ՝ Տեսին առաքինիքն զգաղտածից նետս թշնամւոյն (Ագ., 141)։

**Որակական սեռականով կապակցություններ.—** Որակական հարաբերությունը դրսևորվում է մի քանի նրբիմաստով։ Առաջինը հատկանշային որակն է։ Այս դեպքում լրացումը այն առարկան է ցույց տալիս, որը լրացյալով արտահայտված առարկայի հատկանիշ է ծառայում։ Բնագրից դուրս այսպիսի բառակապակցությունները կարող են ուրիշ իմաստներով էլ մեկնաբանվել։ Այսպես, լար շինողաց բառակապակցության մեջ լրացումը կարող է մեկնաբանվել նաև ստացական իմաստով։ Սակայն բնագրում այն ունի հատկանշային որակի իմաստ։

Օրինակներ՝ Ի ձեռին իւրում ունէր լար շինողաց և ձող չափոյ (Վ. Քերթող, Յաղագս պատկերամարտից, «Էջմիածին», 1970, Զ—Է)։ Այլ

թագաւորն Վաղէս նեղէր զքրիստոնէից ժողովուրդն (Բուզ., 4, Թ)։ Յափտենից և անանց գեհենին եղեալ լուցկիք այրեսցի (ՂՓՊՀ, Հ)։ Խօսէին ընդ նմա բանիւք ողոքանաց (Ն.տ., ԺԳ)։ Զգեցաւ նա քուրձ նեղութեան և սգոյ (Եսթ., ԺԴ)։ Նստէր յաթոռս թագաւորութեան իւրոյ (Ն.տ., ԺԵ)։

Որակի սեռականի երկրորդ դրսևորումը սեռականի գործածությունն է ածականի փոխարեն (վերացականը թանձրացականի փոխարեն)։ Այսպիսի հարաբերությամբ կազմված բառակապակցությունները շատ գործածական են գրաբարում։ Նկատելի է, որ լրացում դարձող գոյականները կազմված են ածականից, ինչպես՝ մոլորութիւն, արդարութիւն, խաղաղութիւն, դառնութիւն, չարութիւն, փափկութիւն, արութիւն, ամբարշտութիւն, ծանրութիւն և այլն։

Օրինակներ՝ *Ոչ կայ հաց պիղծ ընդ ձեռամբ իմոյ*, այլ հաց սրբութեան (*Ա, Թագ., ԻԱ*)։ *Բնակեցոյց յանդիման* դրախտին փափկութեան (*Ծնն., Գ*)։ *Արբոյց մեզ* ջուր դառնութեան (*Երեմ., Ը*)։ *Գաւազանա՞ւ եկից առ ձեզ, եթէ սիրով* հոգւոյն հեզութեան և արդարութեան և խոնարհութեան (*Ա., Կորնթ., Դ*)։ *Առ նորա անքննութիւնն* ընծայութիւն անգիտութեան *մատուցանելի է* (*Եզն., Ա*)։ Կոծ մոլութեան զդիակամբն *ջայլէին* (*Բուզ., 4, ԺԵ*)։ *Բազում* գործք արութեան *գտանին գործեալ և ի մերում աշխարհիս* (*Մխ, 1, Գ*)։ *Երկնչէր վասն* գեղոյ մանկութեան *իւրոյ* (*Եսթ., ԺԵ*)։ *Ծածկեսցի* խորհուրդ ամբարշտութեանդ (*Եղ., 1*)։

Որական-արդյունքային սեռականով *արտահայտվում է այն առարկան, որի ստեղծմանը, առաջացմանն է ծառայում լրացյալով արտահայտված առարկան։*

Օրինակներ՝ *Տունկք* և խոտոց բոյսք... *աճելովն երևին՝ թէ գնայունք են* (*Եզն., 2, ԺԴ*)։ *Մի յափշտակեսցէ Թռչունն մահացան* զսերմանիսն բուսոյն *կենաց* (*Ագ. 145*)։ *Իբրև* զծառ արմատոյ *բազում ժամանակս կեցից* (*Յովբ., ԻԹ*)։

Անվանման սեռականով կապակցություններ.— *Այս դեպքում լրացումն ու լրացյալը բաղադրյալ անուն են կազմում։ Նկատելի է, որ լրացումն ավելի հաճախ հոգնակի է դրվում։ Բառակապակցությունը բնագրից դուրս կարող է մեկնաբանվել ստացական, պարունակության, բաղկացության և այլ իմաստներով, մինչդեռ բնագրում այն հատուկ անուն*
*է կազմում, ինչպես՝* Հայոց աշխարհ,—երկիր, Աղուանից աշխարհ, Այ-
րարատոյ գաւառ, Մասեաց լեառն *և այլն։*

*Ի թիկանց կուսէ* լերինն Մասեաց *շինեաց ձեռակերտ* (*Մխ, 3, ԻԷ*)։
*Ջուեցին...* յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց *ի* գաւառն Այրարատոյ
(*ՂՓՊՀ, ԼՋ*)։ *Յորժամ մտանիցէք* յերկիրն քանանացւոց (*Ղևտ., ԺԴ*)։ *Հա-*

նէ զձեզ յերկրէն Եգիպտացւոց (Ն.տ., ԻՁ)։ Աշխարհն Հոռոմոց առ յոյժ յիմարութեան ագիտաբար մոլորեալ են (Եղ., 2)։ Վերացաւ ի լեռնէն Ձիթենեաց յերկինս (Ն.տ.)։

**Պարագայական սեռականով կապակցություններ.**— Պարագայական իմաստները բազմազան են (տեղի, ժամանակի, չափի, նպատակի, համապատասխանության և այլն)։ Լրացյալը կարող է բայանուն լինել, և այս դեպքում լրացումը առարկայացած գործողության հանգամանքն է ցույց տալիս։ Այսպես, երբ ասում ենք **բնակիչ երկրի**, ապա բնակիչ բայանվան մոտ **երկրի** սեռականը տեղի պարագայական իմաստ ունի (հմմտ. **բնակել յերկրի**)։ Բայանուն կարող է լինել լրացումը, և այս դեպքում լրացման և լրացյալի պարագայական հարաբերությունը միջնորդավորված է որևէ ենթադրյալ բայով։ Այսպես, **պատարագ փրկութեան** բառակապակցության մեջ լրացյալը բայական ծագում չունի, սակայն ենթադրվում է որևէ բայ՝ **պատարագ (մատուցանել, տալ) ի փրկութիւն, վասն փրկութեան** և այլն։

Երրորդ դեպքում ոչ լրացյալը, ոչ էլ լրացումը բայանուն չեն, սակայն դրանց միջև առկա են պարագայական հարաբերություններ՝ ենթադրյալ բայի միջնորդությամբ, ինչպես՝ **աւազ, ծովու, սպարապետ արևելից, այժմու մարդիկ, բանք թղթոյ** և այլն։

**Ա. Տեղի սեռականով կապակցություններ.**— Առաջին դեպքում լրացյալը բայանուն է, ինչպես՝ **անկած պատերազմի, ճանգիստ ձմերոցի**։

**Օրինակներ**՝ Կադմեայ Թոռին իբրում բազում ինչս յանկածէ պատերազմին պարգևէ (Մխ, 1, ԺԲ)։ Յաւուրս սորա միաբանեալ **բնակիչք հիւսիսոյ Կաւկասու**... Հասանէին մեծաւ ամբոխիւ (Ն.տ., 3, Թ)։ Ի խորհուրդ կոչէր **զպաշտօնեայս ձախակողմանն** (Եղ., 1)։ Ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զօրսն դարմանել. այլ սփռէր տարածանէր ընդ գաւառս աշխարհին առ ի **հանգիստ ձմերոցին** (Ն.տ., 3)։ Յարևելից պատերազմէն կորակոր և ոչ բարձրագլուխ էր դարձեալ (Ն.տ.)։ Պատմեալ նոցա **զգործս կողմանց** այնոցիկ (ԿՎՄ, 27)։

Երկրորդ դեպքում լրացումն ու լրացյալը, բայանուն չլինելով, կապակցված են տեղի հարաբերությամբ։

**Օրինակներ**՝ **Աստեղք** երկնից Թօթափեցան յերկիր որպէս տերև Թզենւոյ (Յայտն., Զ)։ Եւ կայ ի վերայ **աւազոյ ծովու** (Ն.տ., ԺԲ)։ Որ էր նորա **սպարապետ արևելից** (Եղ., 1)։ Ընդ **գազանս անապատի** եղեր զբնակութիւն նորա (Ագ., 179)։ **Արք հիւսիսոյ** գան ի վերայ (ՅՄՊՏ, 273 Ա)։ Լսէր նա **զբանս թղթոյն** (ՄԿՊՏԱ, 2, ԻԱ)։

Երբեմն բառակապակցությունը կարելի է մեկնաբանել և՛ տեղի, և՛ մասնական իմաստներով։ Օրինակ՝ Ամենայն շինուածք քաղաքաց, գիւղից և ագարակաց տապալեալ՝ զբնակիչսն ի ներքոյ առնէին (ՍՏՏՊ, 3, Ը)։

Երբեմն էլ սեռականը կարելի է մեկնաբանել և՛ տեղի, և՛ ստացական իմաստով։

Օրինակներ՝ Յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն (Եղ., 2)։ Յո՞ տանիցիք զպաս տերութեան սեղանոյն (Ն.տ., 3)։ Արք քաղաքին երթային հանդէպ նոցա (Յեսու, Ը)։

Կարող են համընկնել տեղի և ծագման իմաստները։ Օրինակ՝ Ելանէր ծուխ քաղաքին մինչև յերկինս (Յեսու, Ը)։

Երբեմն տեղի սեռականը գործածվում է բացառականի փոխարեն։ Այսպես, Ոչ այնպէս մեծ Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն (ԿՎՄ, 16) նախադասության մեջ լերինն սեռականը գործածված է ի լեռնէ-ի փոխարեն։

**Բ. Ուղղության սեռականով կապակցություններ.**— Լրացումը ցույց է տալիս այն տեղը, ուր ուղղվում է լրացյալով արտահայտված առարկան։ Սակավաթիվ են այն գոյականները, որոնցով կազմվում են այսպիսի բառակապակցություններ։

Օրինակներ՝ Դարձաք չուեցաք յանապատն ընդ ճանապարհ Կարմիր ծովուն (Բ, Օրենք, Բ)։ Դարձարուք ընդ կողմն հիւսիսոյ (Ն.տ.)։ Գնաց ընդ ճանապարհն Արաբայ (Դ, Թագ., ԻԵ)։

**Գ. Ժամանակի սեռականով կապակցություններ.**— Առաջին դեպքում լրացյալը բայանուն է, ինչպես՝ պաշտօն երեկոյի, ճանգիստ գիշերոյ, աղօթք այգոյ և այլն։

Օրինակներ՝ Սրբոյն կատարեալ զկանոն երեկոյին պաշտամանն՝ վայելէին սուղ ինչ (ՂՓՊՀ, ԾԱ)։ Բազում անգամ զհեշտական ճանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ ...ի թօթափել ական վճարէր (ԿՎՄ, 10)։ Զգիշերոյն աղօթսն և զայգոյ, ի Զիթաստանեաց լերինն առանձինն մատուցանէր (Ն.տ., 35)։

Երկրորդ դեպքում բառակապակցության բաղադրիչները բայանուն չեն, թեև կապակցված են ժամանակի հարաբերությամբ, ինչպես՝ քարոզ երեկոյի, աստղ առաւօտու, լոյս տուընջեան:

Օրինակներ՝ Տաց նոցա զաստղն առաւօտուն (Յայտն., Բ)։ Զայդ եւ ընդ մտօք ածելով կորուսանելոց ես (Եղ., 4)։ Եթէ որ հազարապետն էր խորհրդոցն Աստուծոյ, աղօթից կարօտէր և աղաչէր՝ ո՞րչա՜փ ևս առաւել

այժմու մարդիկս (ՂՓԹ)։ Ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայելի (Դ, Թագ., ԺԳ)։

Դ. Չափի սեռականով կապակցություններ.— Լրացումը ցույց է տալիս լրացյալով արտահայտված ժամանակային, տարածական, ծավալային, արժեքային և այլ կարգի չափը։ Ընդ որում լրացումը սովորաբար ունենում է իրենից անբաժան լրացում՝ արտահայտված թվականով, դերանվամբ և այլն։

Օրինակներ՝ Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի (Եզն., 2, Ա)։ Գնաց յանապատ աւուր միոյ ճանապարհ (Գ, Թագ., ԺԹ)։ Երթիցուք երից աւուրց ճանապարհ (Ելք, Ե)։

Ե. Նպատակի սեռականով կապակցություններ.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը լրացյալով արտահայտված առարկայի նպատակն է։ Այստեղ բաղադրիչների միջև ենթադրվում է բայի և նրա նպատակի պարագա լրացման հարաբերություն։ Այսպես, երբ ասում ենք Աւետարան երդման, ապա երդման սեռականն արտահայտում է երդվելու իմաստ։

Օրինակներ՝ Յառաջ բերեալ և զԱւետարանն երդման՝ ունէին առաջի երանելւոյն Վարդանայ (ՂՓՊՀ, Լ)։ Մատուցին պատարագս փրկութեան և օրհնութեան (Ա, Մակ., Դ)։ Ընկեցեալ գայր այնուհետև ոսկի... անարգեալ պատուական հանդերձք առ ի զարդս մեծարանաց (Եղ., 3)։ Կարի շատ խափանումն լինէր գործոյն օգնականութեան (Ն.տ.)։ Երթեալ այրն ի տեղի ձմերոցին, պատմեաց զայս ամենայն (Ն.տ.)։ Առեալ զխաչն պատժանաց ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն (ԿՎՄ, 10)։ Սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան և արժանի եղեալ շիրիմք հանգստեան (Բուզ., 3, Բ)։ Կատարէր ... զտեառն զխաչական զփրկութեանն զպատարագն գոհութեան (Ն.տ., Գ)։ Խնդրէին ապաշխարութեան զդեղն (Ն.տ.)։

Որոշ կապակցություններում լրացումը կարող է մեկնաբանվել և՛ նպատակի, և՛ հատկացման իմաստով։

Օրինակներ՝ Այրէին կիզուին զտունս պաշտաման կրակի (Եղ., 3)։ Եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք (Բուզ., 3, Գ)։

Նպատակի իմաստը կարող է համատեղվել նաև վերաբերության իմաստի հետ։

Օրինակներ՝ Այլ միայն կոչոյ հրաման տուեալ յականէ յանուանէ զարս (Եղ., 2)։ Թողութեան հրովարտակս առաքէր (Ն.տ.)։ Ջնջեաց զգիր որդեգրութեան (Ն.տ., 4)։

Կարող են համատեղվել նաև նպատակի և պարունակության իմաստները։ Օրինակ՝ Եհան զքեզ յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառայութեան

(Բ, Օրէնք, ԺԳ)։

Զ. Հատկացման սեռականով կապակցություններ.— Այս դեպքում բառակապակցության բաղադրիչների միջև առկա է հատկացման հարաբերություն, որը մոտ է նպատակի իմաստին։ Այսպես, երբ ասում ենք ճաշոյ ժամ, ապա ճաշոյ սեռականը այն առարկան է ցույց տալիս, որին հատկացված է ժամը։ Այսպիսի հարաբերությամբ կազմված են նաև ժամանակ հնձոց, ժամ դատաստանի, օր յարութեան, գործիք տանջանաց և այլն։

Երթիցուք ի տուն, զի ճաշոյ ժամ է (Դատ., ԺԳ)։ Եկն ժամ դատաստանի նորա (Յայտն., Զ)։ Եկն ժամանակ հնձոց (Ն.տ., ԺԴ)։ Յարիցեն յաւուրն յարութեան (Եղն., 2, ԺԷ)։ Վերինք և ներքինք եղեն մեզ գործիք տանջանաց (Եղ., 5)։

Է.Համապատասխանության սեռականով կապակցություններ.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը համապատասխանում է լրացյալով արտահայտված առարկային։ Այս հարաբերությամբ կազմվող բառակապակցությունները քիչ գործածական են (ինչպես և արդի հայերենում է)։

Օրինակներ՝ Զմի ագան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի (Եղ., 3)։ Միով զօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արք և կանայք (Ն.տ.)։ Որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր (ԿՎՄ, 13)։ Զունէր զպատիւ քահանայութեան (Ագ., 782)։

Երբեմն լրացումը կարող է համատեղել համապատասխանության և վերաբերության իմաստները։

Օրինակներ՝ Պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրհնօք մօտութեանն (Եղ., 2)։ Բարձցին կարգք եկեղեցւոյն (Ն.տ.)։

Կարող են համատեղվել համապատասխանության, նպատակի և հատկացման իմաստները։ Օրինակ՝ Զփառաց լուսոյ զպատմուճանն արժանի լինիցիք զգենուլ (Ագ., 232)։

Դիտողություններ սեռականի գործածության վերաբերյալ

1. Գրաբարում ևս (ինչպես արդի հայերենում) քիչ չեն այն դեպքերը, երբ մեկից ավելի լրացումներ ունենում են նույն լրացյալը։ Այս դեպքում լրացումների և լրացման հարաբերությունը կարող է նույնական լինել։ Այսպես, բազմութիւն արանց և կանանց բառակապակցության մեջ արանց և կանանց լրացումները նույն (բաղկացության) հարաբերությամբ են կապակցված լրացյալի հետ։ Միասեռ են նաև հետևյալ նախադասությունների բառակապակցությունների բաղադրիչների հարաբերությունները։

Եղև յամս Պերոզի արքայի Պարսից բարձումն ամենայն իշխանութեանցն և կարգաց և օրինաց քրիստոնեութեան (Սեբ., Ա)։ Եղև նշանակ սովոյ և սրոյ և մեծի սասանութեանն (Ղև., Պատմ., Ե)։ Ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նհանգի իմն (Եղն., 1, ԻԷ)։ Անմեղութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն առաքելոցն և զմարգարէից (Եղ., 2)։ Ո՞վ իսկ բնաւ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից լերանց և դաշտաց և մայրեաց (Ն.տ., 2)։

Սակայն մեկից ավելի լրացումները նույն լրացյալի հետ կարող են կապակցվել նաև տարբեր իմաստներով։ Այսպես, նորա սպարապետ արևելից բառակապակցության մեջ նորա սեռականը փոխհարաբերության (կամ ստացական), իսկ արևելից տեղի հարաբերությամբ են կապակցված սպարապետ լրացյալի հետ։ Այսպես, տարասեռ են նաև հետևյալ նախադասության մեջ գործածված բառակապակցությունների լրացումները նույն լրացյալի հետ։ Յերեամ գայր արքայի նաւ ի Թարսսէ, ոսկւոյ և արծաթոյ և ժանեաց փղաց և կապկաց և սիրամարգաց (Գ, Թագ., Ժ)։

2. Նույն լրացումը մեկից ավելի լրացյալների հետ կապակցվելիս կարող է արտահայտել նույն իմաստը։ Այսպես, հայր և մայր նորա բառակապակցության մեջ առկա է փոխհարաբերության իմաստ, արծաթ և ոսկի ձեր, արջառ և ոչխար եղբօր բառակապակցությունների մեջ՝ ստացական իմաստ։ Կալցին զնա հայր և մայր նորա (Բ, օրենք, ԻԱ)։ Տեսեալ զարջառ և ոչխար եղբօր իւր մոլորեալ ի ճանապարհի (Ն.տ., ԻԲ)։ Եւ արծաթ ձեր և ոսկի ժանգահար (Յակովբ, Ե)։

Սակայն տարբեր լրացյալների հետ նույն լրացումը կարող է կապակցվել տարբեր իմաստներով։ Այսպես, Արդ այսոցիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուած տանջանաւորութիւն (ԳՆՄՈ, ԻԷ), Ոչ տեսին... զնշանս նորա և զարուեստս, որ արար ի մէջ Եգիպտոսի (Բ. Օրենք, ԺԱ) նախադասություններում մեղաւորիս կշտամբութիւնք բառակապակցության մեջ լրացումն ունի խնդրային իմաստ, մեղաւորիս տանջանաւորութիւն բառակապակցության մեջ՝ ենթակայական, նշան նորա բառակապակցության մեջ լրացումն ունի ներգործող խնդրի իմաստ, իսկ արուեստ նորա բառակապակցության մեջ՝ հատկություն կրողի։

3. Գրաբարում շատ հաճախ որևէ բառ, սեռական հոլովաձևով դրվելով հոմանիշ (նույնանիշ կամ հոմանիշ) բառի հետ, սաստկացնում էր նրա բառային իմաստը, և այս դեպքում սեռականի և հոմանիշի միջև լրացական հարաբերություն ըստ էության չկա. Հնարավոր չէ բնութագրել տվյալ կապակցությունը որևէ իմաստով։ Այսպես, երբ ասում ենք Կատա-

րեն զհրամանս պատուիրանի (Եղ. 2), ապա այստեղ չի կարելի պատուիրանի սեռականը համարել հրամանս-ի լրացում: Այսպես են նաև հետևյալ նախադասություններում ընդգծված սեռականները:

Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Աստուծոյ տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկութեան նորա (Յայտն., ԺԶ): Տային ընդ միմեանս մարտ պատերազմի (Բուզ., 3, Դ): Հատին զնա սրով սուսերի (Մխ, 3, Իէ): Յա-րութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեսցուք (Եղ., 5): Յոյժ էին զարմացեալ ընդ առողջութիւն անհիանդութեան նոցա (Ն.տ., 7): Զորացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա (Ն.տ.):

Սեռականով ավելադրությունը, ինչպես և ավելադրության մյուս տեսակները (դերբայական, դիմավոր բայերի, ածականական և այլն), որպես ոճավորման միջոց, գրաբարում շատ էր տարածված: Բանը հասնում էր նրան, որ ավելադրությունը արտահայտվում էր մեկից ավելի բառերով:

Օրինակներ՝ Յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի շնութեան կծծութեան բարոյից պոռնկութեան (Բուզ., 3, Գ): Եւ եղև իբրև զայս ամենայն լուաւ, բորբոքեալ ի բռնաւորութիւն դառնութեան ամբարշտութեան ցասման իւրոյ (Ն.տ., ԺԴ):

4. Ավելադրության դրսևորումներից մեկն էլ լրացման բառաձևի կրկնությունն է լրացյալի մեջ: Այսպես, գրաբարում սովորական էին հրամանակատար հրամանաց, աւարառու աւարաց, գանձարան գանձաց, զերեդարձ զերելոց տիպի բառակապակցությունները:

Օրինակներ՝ Արք պատուականք երկիւղածք հրամանակատարք վարդապետական հրամանաց (ԿՎՄ, 40): Զերկիր սեղմացեալ տեսանեմք, և բարձեալ բեռէ զհրաման հրամանատուին (Եղն., 1, ԺԱ): Որ անցանիցէ զհրամանաւ հրամանատուին (Ն.տ., ԺԲ): Թագաւորն Յունաց առնէր զերեդարձ զերութեան արքային Պարսից (Բուզ., 3, ԴԱ):

5. Ավելադրության դրսևորումներից մեկն էլ այն է, երբ նույն լրացյալն ունենում է սեռականով դրված նույնիմաստ երկու լրացում, որոնցից մեկն ավելի հաճախ արտահայտվում է որ հարաբերական դերանվամբ, իսկ մյուսը՝ գոյականով: Ընդ որում հարաբերական դերանունը համատեղում է կապակցող և լրացական դերերը (սա վերաբերում է ոչ միայն սեռականով լրացումներին, այլև այլ անդամներին):

Օրինակներ Խրատեն զիս ի միասին, զորոց պախարակէի զհարս նոցա (Յովբ., Լ): Յարեան ի վերայ իմ զողք, որոց տունք իւրեանց էին ծակվիմաց (Ն.տ.): Բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժին նորա քան զԱրշակայ (Բուզ., 6, Ա): Զորոց դու առեալ զնոցա պատիւն՝ ումպէտ կարգաւ

արարիչ (Ագ., 68)։ Ընտրեաց և էառ ընդ իւր՝ զորս գիտէր զթուլութիւն հաւատոյ նոցա (Եղ., 3)։

6. Գրաբարում սեռականը կարող է դառնալ բայական հարադրության անվանական բաղադրիչի լրացում։ Այսպես, հնարավոր է ասել սկիզբն առնուլ կենդանանալոյ,–լինելոյ, վրէժ խնդրել ճշմարտութեան, ի խնդիր լինել դատաւորին,–ճշմարտութեան:

Օրինակներ՝ Եւ ապա սկիզբն առնու կենդանանալոյ (Եզն., 1, Գ)։ Որ մշտնջենաւորն է և ոչ յումեքէ առեալ սկիզբն լինելոյ (Եզն., 1, ԻԵ)։ Ի խնդիր եղեն դատաւորի և ոչ գտին (Ն.տ., 2, Թ)։ Նա ի հեռուստ այնպիսի վրէժ խնդրէր Գալստեան Որդւոյ Աստուծոյ (Եղ., 5)։

Հնարավոր է, որ այսպիսի հարադրություններից ստացված կցական բարդությունները պահպանեն անվանական բաղադրիչի սեռականով լրացումը։ Օրինակ՝ Եւ առաւել պարտիմք վրէժխնդիր լինել մօտակայ ճշմարտութեանն (Եղ., 5)։

7. Գրաբարում սեռականով լրացումը մեծ մասամբ ետադաս է լինում։ Այսպիսին էին բերված օրինակներից շատերը։ Սակայն գրաբարի համար անսովոր չէ նաև սեռականով լրացումների նախադաս գործածությունը։

Օրինակներ՝ Ի բաց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունսդ (Ագ., 234)։ Յղացան ... զանօրէնութեան պաշտամունս (Ն.տ., 583)։ Մի օն անդր թողէք զչիմարութեան զբարբաջմունսդ (Եղ., 2)։ Հանապազ կացցեն աւուրքս այսոքիկ նաւակատեաց սեղանոյն ի ժամանակի իւրեանց ի տարւոջէ ի տարի (Ա, Մակ., Դ)։ Նա խաղաղութեան և շինութեան առիթ (ԹԱՊՏԱ, 4, ԺԱ)։ Այսպիսի գեղեցկութեան դիր՝ անճթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի (Մխ, 2, ԽԲ)։

8. Ետադաս կամ նախադաս լրացումը լրացյալից կարող է անջատվել այլ անդամներով։ Բառակապակցական այս կաղապարը հոմաբանություն է, որ դիտված է հայ քերականագիտության մեջ։ Այսպես են հետևյալ նախադասություններում գործածված բառակապակցությունները։

Սրբոյն Աստուծոյ հեղաւ արիւն ի տարապարտուց (Բուզ., 5,Լ)։ Գրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս (Մխ, 1, Գ)։ Անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այսինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ (Ն.տ., Ժ)։ Հասանեն ի միջոց ինչ դաշտաձև՝ լերանց բարձրագունից (Ն.տ., ԺԱ)։ Որ և Կիւրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն (Ն.տ., ԻԴ)։ Ձեռնամուխ

լինի ի բարեգործութիւնս, շինուածս բազումս առնելով յոլով քաղաքաց (Ն.տ., 2, ԻԵ)։ Բազում ձմերաց հալեցան սառնամանիք (Եղ., 7)։ Զկաթողիկոսութեանն Հայոց ունէր զաթոռ (ՂՓՊՀ, ԼԸ)։ Ջուրք և զվճիտ և զականակիտ աղբերացն պղտորեաց զջուրս (Սեբ., ԼԵ)։

## բ. Գոյականի լրացումը մյուս թեք հոլովներով

Մյուս թեք հոլովները համեմատաբար քիչ են դառնում գոյականի լրացում։ Հայտնի է, որ դրանք բայի և ածականի լրացումների դրսևորման միջոց են։ Այստեղից էլ այդ հոլովաձևերի գործածությունը առաջին հերթին բայանունների և ածականական ծագմամբ գոյականների լրացման դերում։ Այս հոլովաձևերի լրացական դերը միասեռ չէ։ Մի դեպքում լրացումները պայմանավորված են լրացյալների նշված ծագմամբ, ինչպես՝ վէրք ի նետաձգութենէ, նահատակ մահուամբ, նմանութիւն սրբոյն, մահ քաջութեամբ և այլն։ Երկրորդ դեպքում բառակապակցության բաղադրիչների միջև ենթադրվում է բայական որևէ անդամ, որի զեղչումով էլ թեք հոլովաձևով լրացումը անցել է նրա լրացյալին։ Այսպես, երբ ասում ենք մարգարտայեռ պատենիւք սուսեր, ապա այստեղ պատենիւք գործիականը ենթադրյալ օծեալ, յօրինեալ, կազմեալ և նման դերբայների լրացում է եղել և դրանց զեղչումով դարձել սուսեր բառի լրացում։ Այսպես են նաև կամար ի ճամակ ոսկւոյ, պսակ ի քարէ պատուականէ, թագ ոսկի յօրինմամբ և այլն։ Երրորդ դեպքում թեք հոլովով լրացման և լրացյալի միջև լրացական հարաբերությունը կախված չէ որևէ բայից, ինչպես՝ աշխարհաւ Պարթև, գաւառաւ Պահլաւ, ազգաւ յոյն, մասն ի գիշերոյն, ազգատոհմ ի տանէ Բագրատունեաց: Վերջին տեսակը համեմատաբար քիչ գործածական է։

Ինչպես ժամանակակից հայերենում է, գրաբարում ևս մյուս թեք հոլովներով լրացում պարունակող բառակապակցությունները ունեն երկու կարգի գործածություն. մի դեպքում դրանք հանդես են գալիս վերնագրային-անվանողական կառույցներում, ինչպես՝ Յաղագս Արայի, և մահուան նորա պատերազմաւ ի Շամիրամայ (Մխ, 1, ԺԵ), Որ ինչ յաւուրս սորա ի հիւսիսականաց ազգաց արշաւանք ի մեզ (Ն.տ., 3, Թ)։ Կապումն Լիկիանոսի և փոխումն արքունեացն ի Հռոմէ (Ն.տ., ՂԸ), Դարձ Արիստակեայ ի Նիկիոյ (Ն.տ., Ղ), Իրացն պատահումն յիշխանէն արևելից (Եղ., 2)։ Ապստամբութիւն Վահանայ ի Պերոզէ (Սեբ., Ա)։

Իսկ երկրորդ դեպքում դրանք դիմավոր նախադասության բաղադրիչ են։

Օրինակներ՝ Ընտրեցաք զմահ աստուածպաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ (Եղ., 3)։ Ի հանդերձելումն փոխանակ ի ձէնջ վտանգիցդ զվարձսն աճեցուսցէ (Ղև., Պատմ., ԺԴ)։ Եւ ըստ չարչարանաց եկից նոցա ի հովտէս տրտմութեան հաւասար չարչարելոց վկայիցն Քրիստոսի հաշտեսցի (ՅԴՊՀ, 166)։

Գոյականի լրացումները տրականով.—Այս դեպքում լրացյալը բացառապես բայանուն կամ ածականական ծագմամբ գոյական է, իսկ լրացումն արտահայտում է համապատասխան բայի լրացման իմաստ՝ խնդրային կամ պարագայական։ Նկատելի է, որ այսպիսի բառակապակցություններում լրացումը ետադաս է լինում (ինչպես առհասարակ մյուս թեք հոլովներով դրվող լրացումները)։

Օրինակներ՝ Աւր բնակեալ բայանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն (ԹԱՊՏԱ, 2, է)։ Պերոզի... անհաւանութիւն խորհրդոյն և անլսողութիւն ումեք... եթէ զքեզ միայն էր կորուսեալ յԱրեաց՝ թեթև ինչ էր վնասն (ՂՓՊՀ, ՂԵ)։ Յաստուածոց համարէր զպատահումն նմա խուժկին (Ն.տ., ԾԴ)։

Գոյականի լրացումները հայցականով.—Հայցականը գոյականի լրացում է դառնում բայանվան մոտ և այն էլ ոչ հաճախ։

Օրինակներ՝ Առաւել քան զարարչութիւնն յոչնչէ զաշխարհս մեծագոյն զվերջին փրկութիւն իմանայիր (Եղ., 2)։ Կարգել մի ըստ միոջէ զիրս և զգործս, զբազմայեղանակ դիպմունս Հայաստան աշխարհիս, բաժանմանց յերկուս թագաւորութիւնս (ՂՓՊՀ, Ա)։ Դրոշմեաց ... զհամբերութիւն տեառնութեանն այնչափ ամս ի վիրապին (Ն.տ., Բ)։ Զայդ գործ, զոր համարձակեցաւ Վահան գործել ... յանճանաչողութենէ Պերոզի զմարդկութիւնն (ՂՓՊՀ, ՁԸ)։

Գոյականի լրացումները բացառականով.—Բացառականով լրացումները տարբեր իմաստի են։ Առաջին հերթին պետք է նշել մասնական բացառականը։ Սա գոյականաբար գործածված թվականի, ածականի, դերանունների լրացումն է և ցույց է տալիս առարկաների այն ամբողջությունը, որի մի մասն արտահայտված է լրացյալով։ Այս հարաբերությամբ կազմված բառակապակցությունները շատ գործածական են գրաբարում։

Օրինակներ՝ Արաբացիքն ածէին նմա խոյս յոչխարաց՝ եւթն հազար և եւթն հարեւր (Բ, Մնաց., ԺԷ)։ Եկեալ երևեալ Տեառն առն միոջ ի ժողովրդենէն Եբրայեցւոց (Ագ., 306)։ Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հռէից (Յովհ., ԺԹ)։ Անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ (Մխ, 1, ԺԶ)։ Հրամայէ ... ի վե-

բայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել (Ն. տ.)։ Կոչէր զբազումս ի զինուորական քրիստոնէից (Եղ.,2)։ Մի ոք ի մարդկանէ խրոխտասցի յաղթել նմա (Ն. տ.)։ Գնացին զբովանդակ մնացեալ մասն ի գիշերոյն (ՂՓՊՀ, ԾԵ)։

Մասնական բացառականը գոյականի և գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի հետ գործածվելիս զուրկ է շարահյուսական ինքնուրույն պաշտոնից։ Այսպես, բերված օրինակներում ի տեղեաց, ի ճարտարացն, ի քրիստոնէից, ի գիշերոյն, ի մարդկանէ, ի թագաւորաց բացառականները շարահյուսական ինքնուրույն դեր չունեն և այդպիսին կատարում են լրացյալի հետ զուգակցված։

Երկրորդ տեսակը բայանուն լրացյալ-լրացում բառակապակցություններն են, որոնցում բացառականն ունի խնդրային և պարագայական իմաստներ։ Այսպես, հետևյալ նախադասություններում լրացումն ունի խնդրային իմաստ։

Վասն ծննդեան Տեառն մերոյ ի սուրբ Կուսէն՝ ոչ աւելաբանութիւն համարէիր (Եղ., 2)։ Ոչ ինչ պիտի քեզ վկայութիւն ի մարդկանէ (Ն.տ., 3)։ Ջղջանայր զառաջին քակումն ի նոցանէ (Ն.տ.)։ Որոց նախ և առաջին յառաջատեսութեանն սրբոցն, ի զառնութենէ ի գայլութիւն փոփոխման՝ այն այր ի տոհմէն Սիւնեաց եղև պատճառ կորստեան բազմաց (ՂՓՊՀ, Ի)։ Տեսանէր զփախուստ նոցա ի կայսերէն (Սեբ., Զ)։ Ի խաչին կամաւ և ոչ ակամայաբար որոշումն հոգւոյն ի մարմնոյն (ՍՏՏՊ, 3, ԻԱ)։ Կրկին մեզ շնորհեա պահպանութիւն ի դիմամարտից յաներևոյթ և յերևելի (ԳՆՄՈ, ՂԲ)։

Բացառականով լրացումն արտահայտում է նաև պարագայական իմաստներ։ Այսպես են հետևյալ նախադասություններում գործածված բառակապակցությունները։

Չէ բաւական ժամանակս՝ համարելոյ զանթիւ յիս ի նետաձգութենէ թշնամւոյն զվէրս (ՂՓԹ)։ Յետ կատարման սոցա յաշխարհէս՝ սկսան առաւել քան զառաւել շնչել հողմն հիւսիսային դառնաշունչ օդովք սառնամանիք (ԹԱՊՏԱ, 4, ԺԲ)։ Յիշիցէք զօրն ելից ձերոյ յերկրէն Եգիպտացւոց (Բ, Օրէնք, ԺԶ)։

Շատ բառակապակցություններում բացառականով լրացումը լրացյալի հետ կապակցվում է դերբայի զեղչման հետևանքով։ Այսպես, կամար ի համակ ոսկւոյ բառակապակցության մեջ ի ոսկւոյ լրացումը ենթադրյալ պատրաստեալ, կռեալ և նման դերբայի լրացումն է եղել և նրա զեղչումով անցել լրացյալին։

Օրինակներ՝ ի ձէնջ գիրն ծանոյց մեզ՝ յետ դուզնաքեայ զմէնջ գո-

հութեան (ՄԿՊԱԱ, 2, ԽԹ)։ Ստուգագէտ իմացուածիւ իմացեալ զի նանիր իժաթոյն շրթանց չար հայհոյչացն ստութիւն՝ հաստատեն դարձեալ յաթոռն սրբութեան զայրն Աստուծոյ (ՅԴՊՀ, 116)։ Ընծայէր... կամար ի համակ ոսկւոյ (Ն.տ., 198)։ Որ պսակեացն զձեզ հրաշալի փայլուն պսակաւ ի քարէ պատուականէ (Ն.տ., 284)։ Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն, որ ի զօրուն էին, իմացան զհուրն որ ի ծածուկ վառեալ բորբոքեր (Եղ., 2)։

Մի շարք բառակապակցություններում լրացումը համատեղում է մասնական իմաստը վերջին տեսակի որոշչային իմաստին։ Այսպես, երբ ասում ենք ազգատոհմ ի տանէ Բագրատունեաց, ապա ի տանէ լրացումը և՛ մասնական իմաստ ունի, և՛ որոշչային։

Օրինակներ՝ Առաքէ բազում համարձակութեամբ, հանդերձ Սանատրկաւ ումամբ յիւրմէ ազգէն Արշակունեաց (Մխ, 3, Գ)։ Նորա ըմբռնեալ զնա և զամենայն ազգատոհմն նորա ի տանէ Բագրատունեաց ... խաղացոյց ի Սամառայ (ԹԱՊՏԱ, 2, Ջ)։ Կային անդ և յիշխանութենէ յունաց և յԱսորւոց կողմանէ ոչ սակաւք (Սեբ., ԺԳ)։ Առաջնորդ ունէր ընդ իր զՎահան ի Մամիկոնեան տոհմէն, և զՄերուժանն յԱրծրունեաց տոհմէն (Բուզ., 4, ԾԸ)։

Գոյականի լրացումները գործիականով.— Գործիական հոլովով դրված լրացումով կազմված բառակապակցությունները երեք տեսակ են լինում։ Առաջին դեպքում լրացումը պայմանավորված է լրացյալի բայական ծագմամբ. սովորաբար վերջինս բայանուն է լինում, և գործիականն արտահայտում է բայի լրացումներին բնորոշ խնդրային կամ պարագայական իմաստներ։ Այսպես, հետևյալ նախադասություններում լրացումները խնդրային հարաբերությամբ են կապակցված լրացյալների հետ։

Բանիւ ծնունդ իմաստից զարարածս (Եղ., 2)։ Զի ոչ եթե որ յայտնի Հրեայն է, և ոչ որ յայտնի մարմնով թլփատութիւնն, Այլ որ ի ծածուկ Հրեայն է, և թլփատութիւն, սրտի, հոգւով և ոչ գրով (Հռովմ., Բ)։

Պարագայական իմաստներ են արտահայտում գործիականով լրացումները հետևյալ նախադասություններում։

Ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ (Եղ., 7)։ Շրջագայութեամբ չորիւք յեղանակօք կատարեալ գործեն զտարևոր սպասաւորութիւնն (Ն.տ., 2)։ Ընտրեցաք զմահ աստուածպաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ (Ն.տ., 3)։ Գերութիւն Հրէիցն նախ քան զմարմնով գալուստն Քրիստոսի եղև (Ղև., Պատմ., Ե)։

Երկրորդ դեպքում գործիականով լրացման և լրացյալի միջև են-

թագրվում է գեղչված դերբայ, որի անմիջական լրացում լինելով գործիականը անցել է տվյալ լրացյալին։ Այսպիսիք են բերվող նախադասությունների բառակապակցությունները։

Ետուն նմա ես **զանգապանս մարգարտով** ... ագուցին նմա արթնաթոյր **մուս** չորիւք **դրօշակօք** (ՄԿՊԱԱ, 2, ԺԸ)։ Շնորհէր... գիրոյ անձինն մարգարտայեռ **պատենիւք սուսերն** (Ն.տ., Ի)։ Ետ տանել **զդիւանն** մագաղաթեայ յունարէն **գրով** հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց (ԹԱՊՏԱ, 1, Ջ)։ Առեալ ունէր ընդ իւր և արս ուժեղս **ըմբշամարտիկս զինուք** ի ծածուկ (Ն.տ., 3, ԻԹ)։ Եւ եդեալ **թագ** ի գլուխ նորա զուտ ոսկի բազմարուեստ **յուրինմամբ** (Ն.տ., 4, Գ)։

Երրորդ դեպքում լրացումը սահմանափակման իմաստով կապակցվում է այնպիսի գոյականի հետ, որի կազմությունն ու ծագումը նշանակություն չունի բառակապակցության համար։

**Օրինակներ՝** Սա, որպէս ամենեցուն յայտնի է, **աշխարհաւ Պարթև, գաւառաւ Պահլաւ,** յազգէ թագաւորեցելոյ զատուցեալ Արշակունի, ի ցեղէ Սուրենական (Մխ, 2, ՂԱ)։ Որ էր **ազգաւ յոյն** (ՂՓՊՀ, ՋԳ)։ Դեմետր և Գիսիանէ իշխանք էին Հնդկաց և **եղբարք ցեղով** (ՅՄՊՏ, 272 բ)։ Վարբակէս **գաւառով Մեդացի**... ձև և շուք թագաւորութեան նմա դնէր (ՅԴՊՀ, 20)։ Զզուարթածաղիկ **տիօք** զերիտասարդն **Սմբատ**... կորուսանէր ի կենաց աստի (Ն.տ., 225)։

## Գ. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԴՐԱՎՈՐ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ

Նախդիրներն ու նախադրությունները սովորաբար կապակցում են լրացումները բայի հետ։ Պատահական չէ, որ սրանցով ձևավորվում են համարյա միայն բայանունների լրացումները։ Ընդ որում լրացման իմաստը բայանվան մոտ նույնական է համապատասխան բայի լրացման իմաստին։ Այսպես, երբ ասում ենք **տռտունջ զնմանէ**, ապա զ նախդիրով բացառականը վերաբերության իմաստ է արտահայտում այնպես, ինչպես **տռտնջել զնմանէ** բայական բառակապակցության մեջ։ Նկատելի է, որ գոյականի լրացումները ավելի հաճախ ձևավորվում են նախդիրներով, քան նախադրություններով։ Այս հանգամանքը թերևս բացատրվում է նրանով, որ նախադրություններն ավելի մոտ են մակբայներին։

Նախդրավոր և նախադրությամբ կառույցներով լրացումները գոյականի լրացման դերում հանդես են գալիս երկու կիրառությամբ։ Մի դեպքում դրանք գոյականի լրացումը կապակցում են վերնագրային-անվանողական կառույցներում։ Այստեղ, գործածության տեսակետից նախդիր-

ներն ու նախադրությունները համարյա տարբերություն չունեն։

Այսպիսի դեպքերում նախդրավոր և նախադրությամբ կառույցը կարող է անմիջապես բայանվան լրացում լինել։ Այսպես, հետևյալ վերնագրային-անվանողական կառույցներում լրացումն անմիջապես բայանվանն է վերաբերում։

Դիմումն ի մեզ Պոմպէի Հռոմեացւոց զօրավարի (Մխ, 2, ԺԵ)։ Գժտութիւն ընդ Հերովդի Արշամայ և ակամայ հնազանդութիւն (Ն.տ., ԻԵ)։ Առաքումն իշխանացն Աբգարու առ Մարինոս (Ն.տ., Լ)։ Առաջին արշաւանք խոսրովու յԱսորեստան (Ն.տ., ՁԱ)։ Դարձեալ յարձակումն խոսրովու ի վերայ Արտաշրի առանց Հռոմայեցւոց օգնականութեան (Ն.տ., ՀԳ)։ Նահատակութիւնք Տրդատայ ի թագաւորութեանն յառաջ քան զհաւատալն (Ն.տ., ՁԲ)։ Ողբք վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց յազգէն Արշակունեաց (Ն.տ., 3, ԿԸ)։

Որոշ կառույցներում էլ նախդրավոր և նախադրությամբ լրացումների և լրացյալ գոյականի միջև ենթադրվում է որևէ դերբայ, որի անմիջական լրացումն է եղել տվյալ լրացումը և նրա զեղչմամբ անցել լրացյալին։ Այսպես, թուղթ առ նա բառակապակցության մեջ առ նա վերաբերել է գրեալ, ուղղեալ (կամ այլ) դերբայներին (թուղթ գրեալ (ուղղեալ) առ նա) և դրանց զեղչմամբ անցել թուղթ գոյականին։ Այսպիսիք են հետևյալ վերնագրային-անվանողական կառույցներում գործածված նախդրավոր և նախադրությամբ լրացումները։

Թուղթ Վաղարշակայ արքայի Հայոց առ մեծն Արշակ արքայ Պարսից (Մխ, 1, Թ)։ Թուղթ Աբգարու առ Փրկիչն (Ն.տ., 2, ԼԱ)։Էին Սողոմոնի չորք բեւրք մատակ ձիք ի կառս (Բ, Մնաց., Թ)։

Հաճախ վերնագրային-անվանողական կառույցներում բուն լրացյալը զեղչված է լինում։

Օրինակներ՝ Յաղագս շինութեան կարգաց և յօրինուածոց աշխարհին Հայոց (Բուզ., 4, Բ)։ Յաղագս ապստամբութեանն Հայկայ (Մխ, 1, Ժ)։ Վասն Արայեանն Արայի (Ն.տ., Ի)։ Վասն Սանատրկոյ թագաւորութեանն և սպանման ծննդոցն Աբգարու, և վասն Հեղինեայ տիկնոջ (Ն.տ., 2, ԼԵ)։

Քիչ չեն այն դեպքերը, երբ վերնագրային-անվանողական կառույցներում զեղչվում է նաև նախադրության խնդիրը։

Օրինակներ՝ Յաղագս թե զիարդ եղև պատերազմ ընդ Շապուհ թագաւորն Պարսից և ընդ Արշակ թագաւորն Հայոց (Բուզ., 2, ԻԱ)։ Յաղագս և կամ որպէս արարին զԲարսիլոս եպիսկոպոսապետ Կեսարու (Ն.տ., 4, Թ)։ Յաղագս որ ինչ խորհեցան իշխանքն Հայոց (Ն.տ., 5. ԼԳ)։

Նախդրավոր և նախադրությամբ լրացումները հանդես են գալիս նաև

դիմավոր նախադասության կազմում։ Այս դեպքում դրանք դառնում են հիմնականում բայանվան լրացում։ Ընդ որում նախդիրների և նախադրությունների այս կամ այն հոլովի հետ գործածվելու օրինաչափությունները նույնն են, ինչ որ բայի լրացումների կապակցության դեպքում։ Այսպես, առ նախդիրը գոյականի հետ կապակցում է տրական, հայցական, գործիական հոլովներով դրված լրացումները այնպես, ինչպես կապակցում է բայի լրացումները։ Ընդ որում լրացումների իմաստները համընկնում են երկու դեպքում էլ։ Այսպես, տրականի հետ ցույց է տալիս տեղ և պատճառ։ Զմեծամեծ գործոց նորա յիշումն առ Արեւս աշխարհին... յիշեն (ՂՓՊՀ, 2, ԻԴ)։ Հայթայթանս իմն առ չարի և սուգ պատճառանաց... հաշուէին (Ն.տ.)։

Նույն իմաստներն արտահայտվում են բայի լրացումների դեպքում։

Օրինակներ՝ Նստաւ առ ջրհորի միում (Ելք, Բ)։ Առ աճին աղաղակեցին (Մատթ., ԺԴ)։

Լրացումները նախդիր և նախադրություն+սեռական կառույցներով.— Գոյականի լրացման դերում սեռականի հետ հանդես են գալիս ընդ նախդիրը, առանց, ընդդէմ, յաղագս, վասն նախադրությունները։ Որպես կանոն, լրացյալը բայանուն է լինում։

Օրինակներ՝ նոցա զթելադրութիւնս վարդապետին ի մտի եդեալ, և զպարգևս ընդ յաղթութեանն, գեր ի վերոյ լինիցին ախոյանին (Եզն., 1, ԺԴ)։ Ապա ուրեմն յայտ է՝ եթէ անուանք առանց անձանց են յուշկապարկաց և իշացլուց (Ն.տ., ԻԴ)։ Ճարակ լինել նոցա անշէջ հրոյն... յանսպառ յանսահման առանց թուոյ և առանց չափոյ ժամանակն տանջանաց գեհենին (Բուզ., 4, Ե)։ Թէ զիարդ կոչեաց կայսրն Վաղէս զսոփեստէսն ի յանդիմանութիւն ընդդեմ ճշմարտութեան (Ն.տ., Ժ)։ Ընդվայր աղաղակ ... ընդդէմ բարձելոյն հակառակութիւն (ԳՆՄՈ, ԽԸ)։ Թողում ասել զօրինադրին ձերոց զաղտեղի հրամանն յաղագս մերձենալոյ արանց ի կանայս (Ղև., Պատմ., ԺԴ)։ Կարծեմ ոչ ինչ զանխուլ է՝ տէր իմ, ի քոյոյ յաստուածասիրութենէդ յոյժ տրտմութիւն և անպակաս ցաւք սրտից մերոց յաղագս Հայոց և Վրաց և Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հօտից (ՅԴՊՀ, 266)։ Նոքա այժմ առաւել ևս քան զմեզ խնդրեն յԱստուծոյ զմեր վասն Աստուծոյ զվախճանն (ՂՓՊՀ, ԾԵ)։ Լաւ համարէին ըստ բանի Գրոյն զնախատինս վասն Քրիստոսի (Ն.տ., ԿԳ)։ Գիր ամբաստանութեան Մօրկայ առ Խոսրով վասն իշխանացն և զօրացն Հայաստանի (Սեբ., Զ)։

Լրացումները նախդիր+տրական կառույցով.— Բայանվան լրացման դերում տրականի հետ հանդես են գալիս առ, ընդ, ըստ, ի նախդիրները։

Օրինակներ՝ Գժտութիւն ընդ Հերովդի Արշամայ և Ականմայ հնազան-

գութիւն (Մխ, 1, ԻԵ)։ Պատերազմ Շապհոյ ընդ Կոստանդեայ (Մխ, 2, ԺԲ)։ Նա և օձն, որ է սատանայ, յիրաւի պատժեցաւ՝ վասն ընդ անագորոն թշնամութեան ընդ մարդոյն ունելոյ (Եզն., 1, ԺԲ)։ Ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան (Ն.տ., 2, ԻԲ)։ Հաղորդութեամբ ընդ նիւղեայն արար զամենայն (Ն.տ., 4, Ա)։ Ինքնամարտ կռիւ, ընդ ոգւոյ իւրում դատ (ԳՆՄՈ, 1, ԺԲ)։ Որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան զդատակնիք մահուն Հաբելի զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի կեանս կրկինս և անմահական շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, առ քեզ ընտանութեան, ընդ Հոգւոյդ սրբոյ միութեան... խսկապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան (ԳՆՄՈ, ԾԲ)։ Դրոշմեաց... զհամբերութիւն տևողութեանն այնչափ ամս ի վիրապին, ըստ կանխագէտ տնտեսութեանն վերնոյն (ՂՓՊՀ, Բ)։ Անաշխատ պահեցէք յառնելոյ զըստ հարցման քո զպատասխանիսն (Ն.տ., ՂԲ)։ Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց (Եղ., 1)։ Զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտեացն պաշտաման ի ժամանակի (Ագ., 836)։

**Լրացումները նախդիր և նախադրություն+հայցական կառույցներով.**— Բայանվան լրացում դարձող հայցականը գործածվում է առ, առ ի, ընդ, ի նախդիրների, մերձ, քան նախադրությունների հետ։ Ընդ որում նախդիրները շատ հաճախ են այս գործածությամբ հանդես գալիս, իսկ նախադրությունները՝ հազվադեպ։

Օրինակներ՝ Ոչ ոք իմանայ զգալուստ իմ առ քեզ (Յայտն., Գ)։ Ակամայ երթ Արշակայ առ Շապուհ (Մխ, 3, ԼԴ)։ Պատմեցին... փութանակի երթնեկս առ նա դեսպանացն Իսմայելի (Սեբ., Ա)։ Զառ քեզ դարձն յեղանակեն արգահատելով (ԳՆՄՈ, ՀԳ)։ Ընդէ՞ր եմոյծ զնոսա ի կռիւս ընդ միմեանս (Եզն., 1, ԺԴ)։ Այլ պատերազմ Հայոց ընդ զօրս Հռովմայեցւոց (Մխ., 2, Դ)։ Խնդրէին ստիպով ի նմանէ և զնորա միաբանութիւնն ընդ ինքեանս (ՂՓՊՀ, ԺԳ)։ Առաքեցաք թուղթ... խրատելով առ ի լսել խրատուդ ձերոյ և մոռանալ զընդ միմեանս հարումնն (ՅԴՊՀ, 267)։ Եւ արդ՝ որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս, Մատչիմ աղերսել. Արքայութեա՞նն, յորմէ վրիպեցայ... Թէ ընդ նրեշտակսն պարակցութեան, յորմէ տրոհեցայ, Թէ ընդ արդարսն մասնակցութեան, յորոց ճեղքեցայ (ԳՆՄՈ, ԻԴ)։ Ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Յիսուս Քրիստոս (Գաղատ., Գ)։ Դարձցուք անդրէն ի պատմութիւն Տրդատայ յարձակմանն ի Պարսս (Մխ, 2, Զ)։ Ի վերայ նորա շինեաց եկեղեցի զհամբարձմանն ի յերկինս (ԹԱՊՏԱ, 3, ԻԹ)։ Զբազումս յղէր զհետ թագաւորին Հայոց,հանդերձ երդմամբ ի սէր միաբանութեան և յանդիմա-

նութեան (Բուզ., 4, Ի)։ Նա էր ճշմարիտ այր՝ և երկիւղած յԱստուծոյ քան զբազումս (Եզր., Գ, Է)։ Վաճառ մեծ ի յառ, տաղաւար քակտելի (ԳՆՄՈ, ԽԸ)։

Այսպիսի լրացումներ կարող են ունենալ նաև ոչ բայանունները։ Այս դեպքում լրացյալի և լրացման միջև ենթադրվում է զեղչված որևէ դերբայ։

Օրինակներ՝ Ցուցանէին զթուղթսն՝ զոր տուեալ էր Վասակայ... թուղթ մի ի Վրաց աշխարհ, և թուղթ մի յԱղուանից աշխարհն. սոյնպէս և թուղթ մի յԱղձնիս, և հրովարտակ մի առ թագաւորն Յունաց (Եղ., 6)։ Եցոյց մեզ զառ Աստուած բարեպաշտութեան քո զսէր (ՄԿՊԱԱ, 2, ԻԱ)։ Գիր ամբաստանութեան Մօրկայ առ Խոսրով (Սեբ., Ջ)։

**Լրացումները նախդիր+բացառական կառույցով.**—Բայանվան լրացում դարձող բացառականը հանդես է գալիս զ նախդրով, հազվադեպ նաև ըստ նախդրով։ Ընդ որում զ նախդիրը բացառականի հետ վերաբերության իմաստով լրացում է դառնում ասացական, իմացական բայերին արմատակից գոյականների մոտ։

Օրինակներ՝ Ոչ զմէնջ տրտունջդ ձեր, այլ զԱստուծոյ (Ելք. ԺԶ)։ Ձերիցուէ չարախօսութիւն մի ընդունիցիս (Ա, Տիմոթ., Ե)։ Գրէ ապա թուղթ առ նա, նախ ներբողումն զնմանէ, և ապա ամբաստանութիւն յոյժ բծամիտ իմն զկաթողիկոսէն (ՅԴՊՀ, 148)։ Կարծիս իմն երկիւղի զարքայէ ի մտի եդեալ՝ խնդրէր առ ի նմանէ յետկար երդման (Ն.տ., 305)։ Ունէր ևս ընդ ինքեան թուղթս լի ամբաստանութեամբ զնախարարացն (ԹԱՊՏԱ, 2, Ջ)։ Ընդ սակաւ օր ըստ օրէ արտասուաց՝ զյաւիտենից բարութիւնսն ժառանգիցէ (ՂՓՊՀ, Ճ)։

**Լրացումները նախդիր և նախադրություն+գործիական կառույցներով.**—Նախդիրները և նախադրությունները այլ հոլովի հետ քիչ են գործածված գոյականի լրացման դերում։ Հանդիպում են սակավ առ, ընդ, նախդիրների և շուրջ նախադրության ու զ նախդիրի գործածության դեպքեր։

Պարտումն Շապհոյ և ակամայ հնազանդութիւն ընդ ձեռամբ մեծին Կոստանդիանոսի (Մխ, 2, ՁԷ)։ Պատերազմ առ Տիգրանակերտիւ (Սեբ., ԻՋ)։ Եւ զևս բազմագոյնս... արկին ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ (Եղ., 3)։ Ճակատեցան ընդ նոսա այր Իսրայելի ի պատերազմ առ Գաբաաւ (Դատ., Ի)։ Քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրսն Արեաց (Եղ., 5)։

## 2. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԱԾԱԿԱՆՈՎ

*Գրաբարում ածականը գոյականի հետ կապակցվում էր որոշչային հարաբերությամբ։ Ածական լրացումը կարող էր գործածվել և՛ հետադաս, և՛ նախադաս։ Նկատելի է, որ Աստվածաշնչում ածականներն ավելի շատ հետադաս էին գործածվում որոշչի պաշտոնով, իսկ մյուս երկերում (ինքնուրույն կամ թարգմանական) նախադաս ածականներն ավելի հաճախ էին հանդիպում։ Ընդ որում հետադաս ածականները հիմնականում համաձայնվում էին լրացյալների հետ հոլովով և թվով։*

**Օրինակներ՝** *Առ դու քեզ* **խունկս անուշունս** *(Ելք, Լ)։ Զոհեցին անդ* **զոհս խաղաղականս** *առաջի Տեառն (Ա, Թագ., ԺԱ)։ Ապրեցուցանէ զիս ի ձեռաց* **այլազգւոյն անթլփատին** *այնորիկ (Ն.տ., ԺԷ)։ Ի ձեռս նորա էին* **անօթք ոսկեղէնք** *և* **արծաթեղէնք** *և* **անօթք պղնձիք** *(Բ, Թագ., Ը)։ Բերին* **վէմս մեծամեծս, քարինս պատուականս** *ի հիմն տանն, և* **քարինս անտաշս** *(Գ, Թագ., Ե)։ Տեսանե՞ս, զի* **զձկունս մեծամեծս ծովածինս՝** *վիշապս կոչեն գիրք (Եզն., 1, ԻԵ)։ Պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միոջ* **բլրով քառագագաթնի** *(Մխ, 2, Դ)։ Մի հոգասցեն* **ի բանս տառապարտս** *(Ելք, Ե)։*

*Հետադաս ածականները կարող էին գործածվել նաև լրացյալների հետ չհամաձայնվելով։*

**Օրինակներ՝** *Ինքն գնաց զմիւս* **լեռամբն արևելեայ** *հիւսիսոյ (Մխ, Գ, ԺԲ)։ Զտիրան և* **զզօրսն արևմտեան** *առաջի արկեալ՝ ածեն տագնապաւ (Ն.տ., 2, ԾԴ)։* **Զզօրսն արքունի** *չարաչար հարաք (Եղ., 5)։ Կոտորեաց ի վերայ նորա ըստ* **խրատուն արքունի** *(Ն.տ., 7)։ Ոչ ինչ տամ վնաս առնել* **զօրաց արքունի** *(Ն.տ., 3)։ Այլ ընդ դասակս* **այծեաց ձախակողմեան** *հաղորդեալք գնային անդարձութեամբ ի խաւարն արտաքին (ՂՓՊՀ, Հ)։ Հայրական չափուն ծնեալ* **ծնունդս նորոգ** *և* **սքանչելի** *սուրբ աջովն իւրով (ԿՎՄ, 14)։ Կոչեաց Ադամ անուանս... ամենայն* **գազանաց վայրի** *(Ծնն., Բ)։*

*Երբեմն նույն նախադասության մեջ պատահում են և՛ չհամաձայնվող, և՛ համաձայնվող ածականներ։* **Օրինակ՝** *Գրեա, այս* **բանք ճշմարիտ** *և* **հաւատարիմք** *(Յայտն., ԻԱ)։*

*Նախադաս որոշիչներից կարող են համաձայնվել միավանկ, երբեմն էլ որոշ երկվանկ ածականներ։*

**Օրինակներ՝** *Զվարս թագաւորութեանն իւր յօրինէր ամենաբարի կրօնիւք, որպէս և տեսեալ էր իւր առ* **հնօքն թագաւորօքն** *(Բուզ., 5, Ա)։ Երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և* **մեծաւ բարկութեամբ** *զայրա-*

նային (Եղ., 5)։ Սոսկոյ մարդոյ ելք ոչ է հնար լինել ի սկզբանէ աշխարհի (Ղև., Պատմ., ԺԴ)։ Ունիցիս հաւատս սրբովք մտօք (Ա, Տիմոթ., Ա)։ Սրբով Աւետարանաւն եղին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն (Ագ., 805)։ Մեծի ծաղու արժանի է (Եզն., 2, Ե)։ Այն ի բարւոյ արարչէ կարծիցի ումանց (Ն.տ., 1, Բ)։ Գնացին ի Բիւզանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց (Մխ, 3, Կ)[5]։ Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր Յիսուս (Ա., Յովհ., Է)։ Որոյ աղի են ջուրքն, մանուանս ունելով յինքեան ձկունս (Մխ, 1, ԺԱ)[5]։

Միավանկ որոշ ածականներ երբեմն համաձայնվում են միայն հոլովով՝ գերազանցապես գործիականում։

Օրինակներ՝ Մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան (Եղ., 1)։ Եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զլոյսն խնդալից (Ն. տ., 6)։

Հազվադեպ հնարավոր է նաև կրկնավոր ածականի համաձայնություն։ Օրինակ՝ Կային զառաջեաւ արքային ամենայն մեծամեծօք նախարարօք իւր (Սեբ., Գ)։

Սակայն պատահում են նաև միավանկ նախադաս ածականների անհամաձայնության դեպքեր, որոնք երեք տեսակ են։ Մի դեպքում միավանկ ածականը բաղհյուսական հարաբերությամբ կապակցված լինելով բազմավանկ ածականին՝ չի համաձայնվում լրացյալի հետ, այսինքն «ենթարկվում է» բազմավանկի օրինաչափությանը։

Օրինակներ՝ Աղաղակեաց ամենայն ժողովուրդն առհասարակ մեծ և ուժգին աղաղակաւ (Յեսու, Զ)։ Յորդ և առատ արտասուս հեղուին ի վերայ անձանց իւրեանց (Եղ., 7)։ Խռովեալ պատմէր անմխիթար վասն չպատահելոյ ցանկալի և մեծ խնդրոյն (ՂՓՊՀ, ԿԴ)։

Երկրորդ դեպքում գործ ունենք այնպիսի ածականների հետ, որոնք սովորաբար չեն համաձայնվում գոյականների հետ, ինչպես՝ բուն, բուռն, կոյր, թաւ, սերտ, նեղ, նոխ, թիւր և այլն։

Օրինակներ՝ Ի բուն մատեանս ... ոչ յիշատակեցան (Մխ., 1, ԺԴ)։ Զչորս զինուորսն ի բուն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն (Եղ., 1)։ Անտի սմա ձեռն տուեալ ի կողմանց Քուշանաց... յիւրեանց ի բուն աշխարհէն (Ագ., 20)։ Բուռն գնդաւ... նա իշխէ (ՂՓՊՀ, ԶԴ)։ Ի թիկունս հասանէին... բուռն կազմութեամբ Աղուանք (Ագ., 19)։ Եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ (Բ, Թագ., ԺԸ)։ Դառնալ պարտ է ի թիւր ... ճանապարհէ (Առակ., ԻԲ)։ Երթալ կալ ի նեղ տեղւոջ (Թիւք, ԻԲ)։

---

5 Նախադաս որոշչի անհամաձայնությունը որոշյալից հունաբանություն է, որ շատ է հանդիպում Մ. Խորենացու մոտ։

*Երրորդ դեպքը վերաբերում է այն միավանկ ածականներին, որոնք այլ դեպքում համաձայնվելով՝ երբեմն մնում են անհամաձայն։*

Օրինակներ՝ *Սաղմոսք էին նոցա մրմնջումնք, երգոց, և ընթերցուածք* սուրբ գրոց *կատարեալ ուրախութիւնք (Եղ., 6)։ Պատեաց* սուրբ կտակք *(Մատթ., ԻԷ)։ Ոչ հարան* ի խիստ ճանապարհաց *(Դատ., Բ)։ Ոչ ոք ար-կանէ ի* նոր հանդերձ *ի վերայ հնացեալ ձորձոյ (Ղուկ., Ե)։ Բազում* սուտ մարգարէք *յարիցեն (Մատթ., ԻԴ)։* Ի պիղծ բանից *և յառասպելաց պառաւանց հրաժարեսջիր (Ա., Տիմոթ., Դ)։ Գիտասցես եթէ* ի սին բանից *քոց… վաղվաղակի եղեն քեզ արդիւնք (Ագ., 68)։ Որոյ արկեալ* ի շատ ամաց *գխորհուրդս անօրէնութեան (ՂՓՊՀ, Ի)։ Եւ* շատ լաւ որեար *կո-տորեցին (Ն. տ., ՋԸ)։* Զհին կտակարանս *ամենևին ուրանալ (Եղն., 4, Գ)։ Եւ* զնոր կտակարանս *օտարոտի համարի ի հնոյն (Ն.տ., 4, ԺՁ)։*

*Բազմավանկ ածականները նախադաս գործածությամբ սովորաբար չեն համաձայնվում լրացյալի հետ։ Սա վերաբերում է առաջին հերթին կրկնավոր, բարդ,* -պես,-օրէն,-երէն,-ածոյ,-ական,-եայ,-ի *ածանցնե-րով կազմված ածականներին։*

Օրինակներ՝ *Տայր հրաման Շապուհ արքայն Պարսից* զամուր ա-մուր տեղիսն *Հայոց բերդս շինել (Բուզ., 4, ԾԸ)։ Երկինք իբրև զմագա-*ղաթեայ *գիրս գալարին (Յայտն., Զ)։ Մեղք Յուդայ գրեալ են գրչաւ եր-կաթեաւ,* ադամանդեայ եղեգամբ *(Երեմ., ԺԷ)։* Ազգի ազգի պատիւս և պարգևս *… շնորհել խոստանայր (Ագ., 24)։ Կամ* բանդակալ *կապանաց քոց նա՞ իցէ արձակիչ (Ն.տ., 61)։ Լուծին զնա ի* չարաչար և դառն կա-պանացն *(Ն.տ., 69)։ Եւ ի* մովսիսական պատմութեան *յայտնի է երա-նելեաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաս-տատութիւն,* աստուածամերձ աստուածամուխ կենացն *վայելչութիւն,* սքանչելական կենացն *պայծառութիւն (ԿՎՄ, 2)։ Գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց և ի* սատանայական դիւապաշտ սպասաւորու-թենէն՝ *ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր (Ն.տ., 11)։ Գելոյր գլորէր, տապալէր* երկդիմի սրօք *(Եղ., 2)։ Փոխանակ* կերպասեայ ոս-կեհուռ զգեստուցն *խոշոր բրդեայս զգենուին, և փոխանակ* բազմադիմի անկողնոցն *փրփրայիւք ի վերայ երկրի գետնատարածք լինէին (ՂՓՊՀ, ԿԱ)։ Ելանէր զկնի* ամենակեցոյց խաչելոյն *(ԿՎՄ, 10)։ Զաւետարանն սուրբ … կապէր պատէր* երկաթի սարեօք *(Բուզ., 4, ԺՁ)։ Որոյ պատա-հեալ պատերազմաւ* արևելեայ և արևմտեայ զօրուն *Հայոց (Մխ, 3, Թ)։*

*Կան որոշ ածականներ էլ, որոնք մակբայական ծագում ունենալով՝ առհասարակ չեն համաձայնվում լրացյալի հետ, ինչպես՝* բարիոք, բարւոք:

Ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել, և հովիւք առանց բարիօք վերակացուի (Մխ, 3, ԽԲ)։ Ի բարւօք իրս պաշտեցաւ (Եղն., 1, Ժ)։ Ապականէ զբարիօք արարածս նորա (Ն.տ., ԺԷ)։

Բազմավանկ ածականները, սակայն, համաձայնվում են Աստուած, Քրիստոս, ինչպես և մեծ մասամբ անձնանուն լրացյալների հետ։

Օրինակներ՝ այլ թերևս դատարկս աստուածս եհան յիւրմէ և դատարկք աստուածքն ու՞մ պիտոյ իցեն (Եղն., 3, ԺԳ)։ Զաշխարհակալ կենցաղոյս զհանգամանս ցուցանէին, հանդերձ ամէնիշխանին աստուծոյ ծանօթս առնելով (ԿՎՄ, 4)։ Զծածուկ սրտիցն լուսաւորութիւնս, առաջի հրեշտակաց և մարդկան բերէ։ Որպէս զհիւրամեծարին Աբրահամու, հրեշտակօքն հասելովք զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ (Ն.տ., 5)։ Զարիմացին Վարազվաղանայ գիտացեալ զանհնարին ոխութիւնն Վասակայ… փախուցեալ յերկիրն Պարսից… անկանէր (ՂՓՊՀ, Ի)։ Եղև դեղագործ մահու և մատռուակ կորստեան ոգւոց, անօրինաւն Միհրներսեհի, ամենայն տկարամիտ անձանց (Ն.տ., Ի)։ Բանան զդրունս գթոյ մարդասիրին Քրիստոսի (Ագ., 9)։ Բարերարին աստուծոյ նայեցեալ ի գայթակղութիւն նոցա՝ առաքեաց յերկնից սիւն ամպոյ (Մխ, 2, ԶԶ)։ Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ (ԿՎՄ, 14)։

Բազմավանկ նախադաս ածականները երբեմն համաձայնվում են նաև այլ գոյականների հետ։

Օրինակներ՝ Ապրեսցուք յանօրինաց և յանզգամաց մարդոց (Բ, Թես., Գ)։ Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին (Եղն., 1, Գ)։ Որոց առեալ զպաշտօն ճշմարտին՝ անշնչոց և անմռնչից արարածոցն մատուցանեն (Ն.տ., ԻԷ)։ Մի մերձեսցիս առ նա երկմտիւ սրտիւ (Էկղէսաստիկոս, Ա)։ Դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք և երկնադիզօք հասակօք սկայիւք մրցողօք (Մխ, 1, ԺԱ)։ Կատարէ զհրաշալին ամրագունիւք պարսպօք (Ն.տ., ԺԶ)։ Կարգէ ի նոյնանուանս աւանս (Ն.տ., Ը)։ Զի բոլորումն տիրեսցէ բազմաւորութեան (Ն.տ., ԼԵ)[6]։ Ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց (Ն.տ., 2, Ծ)։ Որոյ երթեալ լինէր օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեամբ (Նտ., 3, Գ)[5]։ Հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց (Եղ., 2)։ Բազմօք իմն և նազելի և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ հայրապետն (ՅԴՊՀ, 39)։ Ակամայիցն բռնադատելոց ոչ է կատարեալ սէր (ԳՆՄՈ, ԻԷ)։ Երդուան Տեառն մեծաձայն և եղջերեաւ փողովքն (Բ, Մնաց., ԺԵ)։ Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ գիտականս ինչ առ իւր ունել զօրութիւնս (Մխ, 2, ԽԲ)[6]։ Ներբողականաց

ի մէնջ արժանի եղեն ասից (Ն.տ., 1, Գ)[6]։ Քաղաքականս ուսանել կարգս (Ն.տ.)[6]։ Զլուսնականսն հաշուեն ծագմունս (Ն.տ)[6]։

Կան բազմավանկ ածականներ էլ, որոնք մերթ համաձայնվում են, մերթ՝ ոչ։

Օրինակներ՝ Որ է առ կրկնով այրիւն (Ծնն., ԻԳ)։ Թաղեաց ... ի կրկնում այրի ագարակին (Ն.տ.)։ Զգեցեալ են կրկին պատմուճանս (Առակ., ԼԱ)։ Էր Պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք (Գործ., ԺԲ)։

## 3. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԹՎԱԿԱՆՈՎ

Գրաբարում գոյականի լրացում դառնում են թվականների երեք տեսակներն էլ՝ քանակական (բացարձակ), դասական, անձներական՝ որոշչային հարաբերությամբ։ Քանի որ դրանք ունեն շարադասական և համաձայնության տարբերություններ, այդ պատճառով էլ կքննենք առանձին-առանձին։

**Քանակական թվականները գոյականի լրացում.**—Գրաբարում քանակական թվականները գոյականի լրացում դառնում էին և՛ ետադաս, և՛ նախադաս գործածությամբ։ Ընդ որում դրանք չունեն լրացյալի հետ համաձայնվելու որոշակի օրինաչափություն։ Բանն այն է, որ աշխարհաբարում օրինաչափության ձգտող այն երևույթը, որ չափի միավոր գոյականները թվականի հետ եզակի են գործածվում, ըստ էության սկիզբ է առել գրաբարում. այստեղ հինգից սկսած քանակական թվականների հետ գոյականները դրվում էին և՛ եզակի, և՛ հոգնակի։ Որոշ չափով օրինաչափական է մի, երկու, երեք, չորք քանակականների գործածությունը և գոյականի համաձայնությունը։ Այսպես, մի թվականը լրացյալ եզակի գոյականի հետ համաձայնվում էր թե՛ նախադաս, թե՛ ետադաս գործածությամբ։

Օրինակներ՝ Միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս (Եբր., Ժ) Յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարանայր (Ագ., 181)։ Սափորով միով ջուր բերէք (Բուզ., 6, Ը)։

Պատահում են, սակայն, մի քանակականի անհամաձայնության դեպքեր։ Օրինակ՝ Եւ սատակել զապստամբսն պաշարմամբ ի քաղաքի մի փոքր (Մխ, 2, Կ)։

Հասկանալի պատճառով մի թվականը անհամաձայն է մնում անեզական գոյականների հետ։

---

6 Լրացման անջատումը լրացյալից հունաբանություն է (տե՛ս նաև էջ 53)։

Օրինակներ՝ Եւ էին կուռք մի բաբելացւոց անուն Բէլ (Դան., ԺԴ). Եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս (Եղ., 1)։

Երկու, երեք, չորք թվականները գործածվում են միայն հոգնակի գոյականի հետ՝ համաձայնվելով և՛ նախադաս, և՛ ետադաս լինելիս։

Օրինակներ՝ էին արք չորք բոլորք առ դրան քաղաքին (Դ, Թագ., Է)։ Յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ (Գաղ., Ա)։ Առաքինի եղբարք երիւք կատարեաց զկեանս իւր (Եղ., 7)։

Պատահում են նաև այս թվականների անհամաձայնության դեպքեր, հատկապես նախադաս գործածվելիս։

Օրինակներ՝ Երկու մեծամեծ բերդացն պարիսպքն առանց մերձենալոյ անկեալ կործանեցան (Եղ., 70)։ Դարձեալ փոխեցին անափ զսուրբսն յայլ տեղի բացագոյն իբրև երկու հրասախօք (Ն.տ., 7)։ Երեք մանկամբքն ի հնոցի անդ ընծայեցուցանէ (Եզն., 2, ԻԷ)։ Կարդէ զԱրամանեակն երկու եղբարբք ընդ աջմէ (Մխ., 1, ԺԱ)։

Հինգ և բարձր քանակական թվականները որոշիչ են դառնում և՛ ետադաս, և՛ նախադաս։ Ետադաս գործածվելիս դրանք համաձայնվում են սովորաբար հոգնակի գործածվող լրացյալին սեռական հոլովում, իսկ ուղղականում և հայցականում մնում են անհամաձայն։

Օրինակներ՝ Ապա յետ լինել աւուրցն հնգետասանիցն անցելոցն, սատակեցաւ մանուկն որդի կայսերն (Բուզ., 4, Ե)։ Յետ ամաց վեցից անցելոց վախճանի երանելւոյն Սահակայ... հասանէր սրբոյն քրիստոսական կոչ կատարումն (ԿՎՄ, 92)։ Ունէր յաջոյ ձեռինն իւրում աստեղս եւթն (Յայտն., Ա)։ Տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառասուն և երկու (Ն.տ., ԺԳ)։ Կշռեալ ետու զնոսա արծաթ տաղանդս վեցհարիւր և յիսուն (Բ, Եզր., Ը)։ Պահեալ լինէին պահս աւուրս վաթսուն և վեց (Ագ., 722)։ Ուր եղեն ժողովեալ հարք երեք հարիւր և ութևտասն ի քաղաքումն արիանոսաց (Մխ, 2, ՋԹ)։ Արք եւթանասուն զաստուծոյ պաշտօնեայսն կոտորէր (Բուզ., 4, ԺՋ)։ Որ լինին ամք երեսուն և վեց հազար (Մխ, 1, Դ)։

Երբեմն ուղղականում և հայցականում թվականը համաձայնվում է։

Օրինակներ՝ Եւ յայնմ աւուրս եօթանս որ մկրտեցան յարքունական քանակէ անտի՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան զչորեքհարիւր բիւր (Ագ., 835)։ Տուփք ոսկիք երկոտասանք լի խնկով (Թիւք, Է)։

Նույն թվականները նախադաս գործածվելիս ավելի շատ մնում են անհամաձայն, ընդ որում լրացյալը դրվում է և՛ եզակի, և՛ հոգնակի։

Օրինակներ՝ հինգ աղջիկ գնացին զհետ նորա (Ա, Թագ., ԻԵ)։ Եւթն աստեղքն հրեշտակք եւթն եկեղեցեացն են (Յայտն., Ա)։ Հարիւր եւթանասուն և հինգ հազար զօրս եհար հրեշտակ Աստուծոյ (Եզն., 2, ԺԲ)։

Ճամբարն Երուանդայ էր բացագոյն ի քաղաքէ նորին աւելի քան երեք հարիւր ասպարիսաւ ի հիւսիսոյ (Մխ, 2, խԶ)։ Յերեքտասանն մեհեկանի և երանելին Մեսրոպ յաշխարհէ փոխեցաւ (Ն.տ., 3, ԿԷ)։ Յարեմուտս շարժեալ ի վերայ առաջնոյն ... երկու հազար հեծելովք՝ հասանէ ի կողմանս Կապադովկացւոց (Ն.տ., 1, ԺԴ)։ Տուք փոխանակ այնոցիկ հինգ հարիւր քանքար արծաթոյ... այլևս հինգ հազար քանքար (Ա, Մակ., ԺԵ)։

Առանձնակի է մի երևույթ. դա թվականի մոտ սեռական հոլովով գոյականի գործածությունն է՝ առաջինի գոյականական առումով։

Օրինակներ՝ Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ (Սաղ., ՃԺԸ)։ Երկու հազարք կամ երեք հազարք առանց ելցեն (Յեսու, Է)։ Որ էր երկոտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի (Մխ. 1, Ի)։

Պատահում են նաև համաձայնության օրինակներ նախադաս գործածության դեպքում։

Ի վերայ աթոռոցն նստէին քսան և չորք երիցունք (Յայտն., Դ)։ Շնորհեա ինձ ... հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութիւն (ԳՆՄՈ, ԺԷ)։ Ընտրեաց իւր Սաւուղ երիս հազարս արս յարանցն Իսրայելի (Ա, Թագ., ԺԳ)։ Զանեղսն ի նմա դիւրածել գետոյն բերիւք՝ հանգիտակ կղզւոյ առատագիւտս առնէ ... տրոհմամբ երկոտասանից վտակաց (Մխ, 3, ԿԲ)։ Հրաման տայ չորից բիւրոց և երկուց հազարաց առանց (Ն.տ., 1, ԺԶ)։ Երից հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար (ԳՆՄՈ, խԶ)։

Նախադաս թվականների մոտ գոյականի եզակի և հոգնակի դրվելը օրինաչափություն չունի (ինչպես և աշխարհաբարում)։ Սակայն նկատելի է, որ գոյականը եզակի է դրվում ավելի շատ այն դեպքում, երբ չափի միավորի դեր է կատարում, ինչպես՝ օր, ամ, ամիս, քանքար, տաղանդ, լիտր, ասպարէս և այլն։

Օրինակներ՝ Արար զբարձրութիւն պարսպին եօթանասուն կանգուն, և զլայնութիւն յիսուն կանգուն (Յուդիթ, Ա)։ Եւ մինչև ի վաթսուն և ի վեց օրն զաւուրս վարդապետութեանն ի նոյն կայր կերպարանս (Ագ., 729)։ Հնգետասան օր յետ բանիցն եղելոց երկարեաց Քրիստոս (Բուզ., 4, Ե)։ Փրկանս խոստացաւ հարիւր քանքար (Մխ, 2, ԻԴ)։ Տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի (Եզն., 2, Ա)։ Ի կողմանէ ուրացելոցն անկանէր այնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր (Եղ., 5)։ Գետնախշտիք լինէին զինն ամ և զվեց ամիս (Ն.տ., 1)։

Այս դեպքում չափի միավոր լրացյալի հետ միասին է թվականը շարահյուսական դեր կատարում։ Այսպես, վեց օր, եւթն անգամ և այլ

բառակապակցություններ կատարում են նախադասության մեկ անդամի պաշտոն։

Քանակական թվականները կրկնությամբ բաշխական իմաստ են արտահայտում։ Նրանց մոտ լրացյալը կարող է դրվել և՛ եզակի, և՛ հոգնակի։

**Օրինակներ`** Գրեաց **չորս չորս ճողս** երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն **եօթն եօթն ճողս** երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն (Ագ., 837)։ **Ի** **գունդս գունդս** զգազանսն բաժանէր, և առ **մի մի փիղ** երեք հազար սպառազէնք (Եղ., 5)։ Պրկեցին զսոսա մի մի ի **չորս չորս ցիցս** (Ագ., 208)։

**Դասական թվականները գոյականի լրացում.**—Դասական թվականները գոյականի լրացում են դառնում և՛ ետադաս, և՛ նախադաս։ Ընդ որում գոյականը սովորաբար եզակի է դրվում։

Ետադաս գործածվելիս դասական թվականները համաձայնվում են լրացյալին։

**Օրինակներ`** Եւ այլ **ճռեշտակ Երրորդ** զայր զհետ նոցա (Յայտն., ԺԴ)։ **Զգունդն երկրորդ** տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունւոյ (Եղ., 5)։ Յարեաւ **յաւուր Երրորդի** (Ն.տ., 2)։ **Յաւուրն չորրորդի** հրաման ետ թագաւորն (Ագ., 116)։ Մտեալ... յունկն **կնոջն առաջնոյ** (Ն.տ., 141)։

Նախադաս գործածվելիս դասական թվականները սովորաբար չեն համաձայնվում լրացյալին։

**Օրինակներ`** Յափշտակեցաւ **յԵրրորդ Երկինս** (Եզն., 4, Գ)։ Գտցես **յառաջին ճագՆերգութեանն յԵրեքտասաներորդ թուին** (Մխ, 2, Ժ)։ Լսես... զխոստումն **Երկրորդ գալստեանն** (Եղ., 1)։ **Ի վեցերորդ ժամէ** անտի ... խաւար կալաւ զերկիր (Ագ., 474)։ Ետ Ողիմպիադայ **առաջին կնոջն** Արշակայ (Մխ, 3, ԻԴ)։ Որք ոչ էին քակեալ **յառաջին միաբանութենէն** (Եղ., 3)։ Ոչ **առաջին** և **Երկրորդ** և վերջին **խորճրդով** ... զգործն արդեանցն կատարէ (Եզն., 3, ԺՁ)։

Սակայն շատ են պատահում դասականների նախադաս համաձայնության դեպքեր։

**Օրինակներ`** Որպէս **ի տասներորդում սաղմոսին** նուագէ տեսանողն (Ագ., 560)։ Երանի **առաջնոյ** և **երկրորդի փոփոխմանն** (Մխ, 3, ԿԸ)։ Որպէս **յառաջնում** մերում մատենին գրեցաք (Ն.տ., 2, Գ)։ Թագաւորէ Վաղարշ որդի նորին **յԵրեսներորդի** և երկրորդի ամի հոմանուանն իւրոյ Վաղարշայ Պարսից արքայի (Ն.տ., ԿԵ)։ Վախճանեցաւ... **յԵրեքտասանԵրորդի աւուր** ամսոյն մեհեկանի (ՂՓՊՀ, 1, ԺԸ)։

Դասական թվականների հետ գոյականը հազվադեպ դրվում է նաև հոգնակի կամ լինում է անեզական։

**Օրինակներ**՝ Գտցին անդ գիրք ասացեալ նոցին սրբոց **հարցն առաջնոց** (Մխ, 3, Կ)։ Կամիմ զանիմաստասէր բարս **առաջնոցն** մերոց **նախնեացն** ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ (Ն.տ., 1, Գ)։ Վասն **առաջին իւրոց խանդաղատանացն** որ առ Արայն Գեղեցիկ՝ կոչէ զանուն նորա Արայ (Ն.տ., Ի)։ **Երկրորդ գրոց** սկիզբն արարեալ պատմելոյ ի կարգէ **առաջին գրոցն** (ՂՓՊՀ, Ա)։ **Առաջին բնութեանցն** օրինակի ... բաւական էին հաւանեցուցանել զմտավարժս (Եզն., 2, ԻԸ)։ Յափշտակեցաւ **յերրորդ երկինս** (Ն.տ., 4, Գ)։

Բաղադրյալ դասական թվականները գոյականի հետ գործածվելիս հոլովվում են կա՛մ բոլոր բաղադրիչները, կա՛մ միայն վերջինը։

**Օրինակներ**՝ ի լնուլ **վաթսներորդի վեցերորդի աւուրն**, ընդ այգուն առաւօտանալն, մատուցեալ իշխանքն թագաւորաւն և նախարարօքն ... անկանէին առաջի սրբոյն Գրիգորի (Ագ., 726)։ **Յեօթն և ի տասներորդի ամի** թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զհայրն մեր Գրիգորիոս (Մխ, 2, ՂԱ)։

**Անձներական թվականները գոյականի լրացում**.—Սրանք սովորաբար նախադաս են լինում՝ թվով ու հոլովով համաձայնվելով հոգնակի գոյականի հետ։ Նկատելի է, որ ավելի հաճախ միավորներից կազմված անձներական թվականներն են գործածական։

**Օրինակներ**՝ լռեցին և **երեքին բարեկամք** նորա (Յովբ., ԼԲ)։ **Յերեսին վկայարանսն** մէն մի կանգնեաց զսուրբ նշան տէրունական խաչին (Ագ., 769)։ Հասեալ **երկոցունց կողմանց** սկայիցն ի միմեանս (Մխ, 1, ԺԱ)։ **Երկոքեան կողմանքն** լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային (Եղ., 5)։ Մեռաւ Պերոզ արքայ ի պատերազմին հանդերձ **եւթանեքումբք որդւովքն** (Սեբ., Ա)։ Կենդանութիւնն ի նոյն **չորեսին ճիւթսն** լուծանի (Եզն., 3, Զ)։

Այս թվականները կարող են գործածվել նաև ետադաս՝ համաձայնվելով հոգնակի գոյականի հետ։

**Օրինակներ**՝ Զծովն իջոյց ի **ցլուցն** պղնձեաց **երկոտասանեցունց** (Դ, Թագ., ԺԶ)։ Առանց արեան և կոտորածոյ լիցի շինութիւն **կողմանցս երկոցունց** (Ագ., 39)։ Ծագեաց զլոյսն ի մէջ **սեանցն չորեցունց** (Ն.տ., 751)։ Արարեալ շինեալ կազմեալ զսուրբ **վկայարանսն երեսին**՝ հանդերձեցին զարդարեցին և օրհնօք յարդարեցին (Ն.տ., 768)։ Առ Արամանեակ զորդիս իւր ... **զքորս եւթանեսին** (Սեբ., Ա)։ Իջին հեռագոյն **նախարարքն երեքեան** (Եղ., 7)։

*Հավաքական* իմաստ ունեցող գոյականները երբեմն կարող են անձնական թվականների մոտ դրվել եզակի:

Օրինակներ՝ *Արձակեաց թագաւորն ի վերայ նոցա զՎաչէ... սատակել կորուսանել* զազգն երկոսեան *(Բուզ., 3, Դ)*: *Ընդ միմեանս* փունդս երկոքեան *բախէին (Ն.ա., 4, ԽԷ)*:

## 4. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՎ

*Գրաբարում գոյականի լրացման դերով հանդես են գալիս բոլոր տեսակի դերանունները: Սակայն ինչպես լրացական հարաբերության, այնպես էլ շարադասության ու համաձայնության մեջ դրանք միատեսակ չեն: Գոյականին հարաբերակից դերանունները լրացական տեսակետից նման են գոյականին: Սա վերաբերում է անձնական, փոխադարձ, ցուցական* (սա, դա, նա), *ստացական, հարցական-հարաբերական, անորոշ, որոշյալ դերանունների սեռական հոլովաձևերին, որոնք շարահյուսական-իմաստային դերով չեն տարբերվում գոյականի նույն հոլովաձևից: Մինչդեռածականին և թվականին հարաբերակից դերանունները, գոյականի լրացում դառնալիս, արտահայտելով առաջիններին բնորոշ իմաստներ, ունեն գործածության յուրահատկություններ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ դերանունների գործածությունը գոյականի լրացումների դերում նպատակահարմար է քննել երկու բաժնով. ա) դերանունները իբրև գոյականի լրացում՝ սեռական հոլովով, բ) դերանունները իբրև գոյականի լրացում՝ ածականի և թվականի հարաբերակցությամբ:*

**Անձնական դերանունները գոյականի լրացում.**—*Անձնական դերանունները գոյականի լրացում կարող են դառնալ բոլոր հոլովներով: Բացի սեռականից, մյուս բոլոր հոլովներով դրված դերանունները կատարում են բացահայտչի պաշտոն: Քանի որ բացահայտչի քննությունը դուրս է բառակապակցությունների սահմանից, ուստի այստեղ կներկայացնենք միայն այդ դերանվան սեռական հոլովը, որը գոյականի նման հանդես է գալիս հատկացուցչի և որոշչի պաշտոններով: Սրանով արտահայտված հատկացուցիչն ու որոշիչը իմաստային տարբերություններ չունեն նույն դեր կատարող գոյականից, ուստի դրանցով կազմված բառակապակցությունների շարահյուսական-իմաստային հարաբերությունների քննությունը ավելորդ կրկնություն կլինի: Նշենք միայն, որ դերանվան սեռական հոլովով լրացումները ավելի շատ են հետադաս գործածվում:*

Օրինակներ՝ Աստուած մեր *էք դուք (Եսայի, ԽԲ): Գովեմ զքեզ* նահատակն իմ *և զնիզակաւորն (Մխ, 1, ԻԹ):* Զազգս մեր *բարձրացոյց*

(Ն.տ., ԻԴ)։ Եկն եմուտ յաշխարս մեր (Եղ., 3)։ Խնայեցէք յանձինս ձեր (Ն.տ., 7)։ Հաւատովք իւրեանց խնդացուցանեն (Ագ., 9)։ Կերակրէին ընչիւք իւրեանց (Ն.տ., 150)։ Լուաւ աղօթից նորա (Ն.տ., 180)։ Ամենայն արարածք հրամանաւ նորա շարժին (Ն.տ., 377)։ Սրբեսցին անձինք ձեր (Ն.տ., 541)։ Փառաւորեմք զկարգիչն նոցա (Եզն., 1, Գ)։ Ի ծագաց երկնից են ելք նորա և հանգիստք նորա մինչև ի ծագս նորուն (Ն.տ., 2, ԻԵ)։

Անձնական դերանվան սեռական հոլովաձևի նախադաս գործածությունը բավական քիչ է։ Ընդ որում այն պայմանավորված է նախադասության տրամաբանական շեշտով կամ այլ հանգամանքներով։ Այսպես, Զի քո իսկ արեամբ են փրկեալք (Ագ., 97), Զի քո իսկ են ծառայք (Ն.տ.) նախադասություններում քո-ն առաջ է դրվել՝ տրամաբանական շեշտ կրելու պատճառով։

Անձնական դերանունը նախադաս է նաև հետևյալ նախադասություններում։

Ասեմ ոչ զիմ բանս, այլ զՀոգւոյն սրբոյ (Մխ, 2, ՂԲ)։ Յիմն ասեմ վարդապետէ (Ն.տ., 3, ԿԲ)։ Աժդահակդ՝ ի մեր լեզու է վիշապ (Ն.տ., 1, Լ)։ Ամենեքեան իմ ծառայք են (Եղ., 6)։ Բաժանեսցին ի մեր հաստատուն օրինացն (Ն.տ., 7)։ Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն (Մխ, 1, Գ)։ Աշխատեցան յիւրեանց ժամանակին (Ագ., 670)։ Յօրինէին իւրեանց ձեռօքն (Ն.տ., 766)։ Այլ նոցա որպէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ (Եզն., 1, ԺԵ)։

Երբեմն նույն նախադասության մեջ լինում է և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն։

Օրինակներ՝ Ոչ կամիցին բանալ զսիրտս իւրեանց նորա ճառագայթից (Ագ., 567)։ Թշնամի են նորա Շապուհ և Վաղէս և իւր նախարարքն (Մ., 3, ԻԹ)։

Փոխադարձ դերանունները գոյականի լրացում.— Իրերաց, միմեանց փոխադարձ դերանունները նույնպես գոյականի լրացում են լինում սեռական հոլովով։ Սրանք ևս շարահյուսական-իմաստային նույն հարաբերություններն են արտահայտում, ինչ որ գոյականները։ Նկատելի է, սակայն, որ այս դերանուններն ավելի շատ նախադաս են գործածվում։

Օրինակներ՝ Որք իրերաց գործակցութեամբ զարեգակն ստեղծեալ՝ դատաւոր կացուցանէին (Եզն., 2, Թ)։ Միմեանց մահու և արեամբ ծարաւի են (Ն.տ., 1, Դ)։ Այլ իջեալ միմեանց թշնամիքն հաշտութեամբ խաղաղիկ ի միում արգանդի գառէին (Ն.տ., 2, Ձ)։ Ոչ ևս զգային միմեանց յղութեանն (Ագ., 621)։

Պատահում են նաև ետադաս գործածության դեպքեր։

Երկու հակառակք իւրեանց՝ միմեանց ծախիչք են (Եզն., 1, ԺԵ)։ Զապականիչսն միմեանց խառնուածովք արար օգտակարս իւրեանց (Ն.տ., 1,Բ)։

Ցուցական դերանունները գոյականի լրացում.— Սա, դա, նա ցուցական դերանունների գործածությունը գոյականի լրացման դերում չի տարբերվում անձնական դերանուններից։ Վերջինների նման ցուցականները, դրվելով սեռական հոլովով, դառնում են հատկացուցիչ։ Սրանք ևս մեծ մասամբ՝ ետադաս գործածություն ունեն։

Օրինակներ՝ Ազգի դորա տացես զգահն հինգերորդ (Մխ, 3, ԾԱ)։ Յիշեցի զերախտիս նախնեաց հարցն դորա (Ն.տ.)։ Զմեծ վաստակ դոցա ցուցից թագաւորին (Եղ., 4)։ Գիտասցես զելս կատարածի դորա (Ն.տ., 1)։ Զգործ տգիտութեան սոցա անմեղութիւն համարեցից (Ագ., 94)։ Հաւատացէք զհաւատս սոցա (Ն.տ., 544)։

Ցուցական դերանունները գործածվում են նաև նախադաս։

Օրինակներ՝ Ոչ ինչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն (Եզն., 1, ԺԹ)։ Ոչ ըստ դորա կարծեաց և խօսիցն այդպէս են իրքն (ՂՓՊՀ, ԿԴ)։ Թող գիտասցուք և զդոցա խօսս և զկամս (Ն.տ., ԾԵ)։ Ոչ եթէ առանց սոցա վկայութեան չինէր արդեօք հաւատարիմ (Ագ., 239)։

Այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի դերանունների գործածությունը գոյականի հետ երկու տեսակ է։ Մի դեպքում սրանք սեռական հոլովով դառնում են հատկացուցիչ՝ չտարբերվելով սա, դա, նա ցուցականներից՝ նույն պաշտոնում։

Օրինակներ՝ Մի վարեսցուք հրամանաւ այնորիկ որ գայթակղութիւն արկանէ յերկրպագութիւնն Քրիստոսի (Մխ, 3, ԺԵ)։ Կին և որդիք այնպիսւոյն անաշխարհիկ եղեալ՝ յարքունիս երթիցեն (Եղ., 3)։ Այնպիսւոյն եթէ կին շնայցէ, չպարտի մեղադիր լինել (Եղ., 1, ԺԵ)։ Այնպիսւոյն միաբանութիւնն դատապարտութիւն է (Ն.տ., Խրատք)։ Յորժամ զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք (Ն.տ., 1, Ա)։ Կարգեալ հասանէր յեգիպտացիս ... փորձ դրօշագործութեան և խորհուրդք նորին (Ն.տ., 3, Ե)։ Դորին խրատ անշնորհ առնել զդիսն իշխեաց (Ագ., 205)։ Գիտասջիք զդորին հասկն հանել (Ն.տ., 527)։ Զպատկեր նորին փշրէին (Ն.տ., 784)։

Այլ դեպքերում ցուցական դերանունները գոյականի լրացում դառնում են որոշչային հարաբերությամբ։ Սակայն դրանք ունեն տարբերություններ գործածության մեջ, ուստի ներկայացնում ենք առանձին-առանձին։

Այս, այդ, այն ցուցականները գոյականի որոշիչ են դառնում և՛ նախադաս, և՛ ետադաս գործածությամբ՝ համաձայնվելով նրա հետ։ Ընդ որում նախադաս լինելիս սրանք գործածվում են կարճ ձևերով, համաձայնվում են որոշյալի հետ, բացի հոգնակի ուղղական, հայցական և երբեմն էլ գործիական հոլովներից, որտեղ դերանունները եզակի են լինում։ Նախդիրները դրվում են դերանունների վրա։

Օրինակներ՝ Յայնմ նիւթոյ պարտ է կարծել զչարիս (Եղն., 1, Ա)։ Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն (Բուզ., 4, ԺԵ)։ Զառնեն զայն պատիւ կենդանեաց (ՂՓՊՀ, ԿԴ)։ Եւ են այս երկու տունքս ի զաւակէ Սենեքերիմայ (Մխ, 2, Է)։ Այն զօրութիւնք ոչ մարդոյ են (Ն.տ., Լ)։ Զայսու աւուրք ոմանք... ապստամբեցին ի Խոսրովայ (Ն.տ., 4, ԽԴ)։ Ընդ այն ժամանակս առաքեաց զօր ծանր (Ն.տ., 2, Կ)։ Որք յայսց հաւատոց վրիպեցան (Ագ., 369)։

Հազվադեպ հոգնակի ուղղականի հետ ցուցականները կարող են համաձայնվել։

Օրինակներ՝ Յորժամ անցանիցեն այսք աւուրք (Յուդիթ, Է)։ Բազումք են այնք ժամանակք, որք անցին ի վերայ հին հաւանութեանցն (Ա, Մակ., ԺԲ)։

Պատահում են դեպքեր, երբ մյուս հոլովների հետ ևս այս, այդ, այն ցուցականները մնում են եզակի կամ նույնիսկ անփոփոխ։

Օրինակներ՝ Այս սեանց խաչքն հաւասարք էին այնր լուսեղէն սեանն Թակաղաղի (Ագ., 737)։ Ապրեսջիք յայն ահագին ի հրոյն հեղեղէ Ն.տ., 531)։ Զոր էր կորուսեալ այս կախարդացն (Ն.տ., 203)։ Որք յետ այսր անցեալ ժամանակաց գալոցն իցեն (Ն.տ., 15)։

Երբեմն էլ այս դերանունները գոյականից տարբեր հոլովով են դրվում։

Օրինակներ՝ Ի մանկութենէ յայդմ օրէնս սնեալ էիր (Եղ., 3)։ Ոչ միում մարդոյ, որ յայդմ օրէնս քրիստոնէութեան է, ոչ տամ ապրել (Բուզ., 4, ԺՁ)։

Խիստ հազվադեպ այս դերանունները նախադաս լինելիս գործածվում են երկար ձևով։

Օրինակներ՝ Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի (ԿՎՄ, 15)։ Որովք ստեղծ զնշանագիրս կոկորդախօս աղխազուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացւոց լեզուին (Մխ, 3, ԾԴ)։ Ընդ այնոսիկ ապա ժամանակս յարեաւ խռովութիւն (Ն.տ., ԺԹ)։ Հաւատարմութեան արժանի համարիմ զայսոսիկ պատմութիւնս (Ն.տ., 2, ԺԳ)։

Ետադաս կիրառությամբ այս, այդ, այն ցուցականները հանդես են

գալիս երկար ձևով, ընդ որում գոյականները ստանում են դերանվան հոդը, իսկ նախդիրները կրկնվում են։

Օրինակներ՝ Քարինքս այսոքիկ հաց լինիցին (Մատթ., Դ)։ Վասն աւուրն այնորիկ և ժամու ոչ ոք գիտէ (Ն.տ., ԻԴ)։ Զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ (Յովհ., ԺԸ)։ Պատգամս յղէր օրինակաւս այսուիկ (Ագ., 39)։ Ուր և իցեն զկողմամբքդ զայդոքիւք՝ զհետս նոցա գտանել մարթասցես (Ն.տ., 156)։ Յաւուրսն յայնոսիկ բուռն հարկանիցեն (Ն.տ., 260)։ Համբարձաւ թագաւորն ի կողմանցն յայնցանէ (Ն.տ., 31)։

Սակայն այս կիրառությամբ հանդիպում են թվի, հոլովի կամ հոդի անհամաձայնության դեպքեր։

Օրինակներ՝ Թողցին մեղքս այս մեր բազումք (Ագ., 234)։ Կենդանի լինիցին ոսկերքդ այդ (Ն.տ., 503)։ Տո՛ւր ինձ զվարձակս զայս (Մխ, 2, ԿԳ)։ Որ էր ի ժամանակին յայն (Բուզ., 4, ԺԵ)։

Երբեմն այս դերանունները ետադաս կիրառությամբ հանդես են գալիս կարճ ձևերով։

Օրինակներ՝ Խնդիր փութապէս զիւտիս այսմ հոգացեալ՝ ճեպով գիր մայրն ... յԵրուսաղէմ առաքէր (ՂՓՊՀ, Գ)։ Որ ի ժամանակին յայնմ գործեցան յաշխարհիս Հայոց (ՂՓՊՀ, 2, ԾԷ)։

Սոյն, դոյն, նոյն ցուցական դերանունները գոյականի որոշիչ են դառնում նախադաս կիրառությամբ՝ համաձայնվելով գոյականի հետ հոլովով ու թվով, բացի հոգնակի ուղղականից, հայցականից և գործիականից, որտեղ մնում են եզակի։

Օրինակներ՝ Նորին վարդապետութեանն զունկնդրութիւն մատուցեն (Ագ., 409)։ Կեցուցանէ զնոյն ոգիս նովին մարմնով (Ն.տ., 117)։ Ի նմին տեղւոջ պաշտէին (Ն.տ., 836)։ Ըստ նմին օրինակի առնէին սոքա նշանս մեծամեծս (Բուզ., 6, ԺԶ)։ Նովին նշանագրովք տանէր (ԿՎՄ, 13)։ Գուցէ մեռանիցիմ սովին մեղօք (ՂՓՊՀ, ՀԵ)։ Ի դոյն միտս յամառութեան կայք (Եղ., 7)։ Ո՞չ նոյն պատերազմունք են (Եզն., 1, ԻԵ)։ Զնոյն օդս ծծիցեն և նովին կերակրովք... բուծանիցին (Ն.տ., 2, ԺԱ)։

Երբեմն հոգնակի լրացյալի հետ գործածվում են այս դերանունների հոգնակի երկրորդ ձևերը (սոքին, դոքին, նոքին)։ Օրինակ՝ Նոքին իսկ առաքեալքն... զնոցին օրինակն յանձինս իւրեանց առեալ բարձեալ բերէին (Ագ., 684)։

Պատահում են դրանց միայն հոլովով համաձայնվելու դեպքեր։

Օրինակներ՝ Վասն դորին իսկ իրաց չարաչար... տանջանօք տանջեցի (Ագ., 136)։ Արդարև ի վերայ դորին բանից պնդեալ կաս (ՂՓՊՀ,

ԿԴ)։ Զկնի սորին իրացս այսօրիկ եկին բազմութիւնք սրբոց վկայիցն աստուծոյ (Բուզ., 3, ԺԴ)։

Քիչ չեն այն դեպքերը, երբ այս դերանունները մնում են անհամաձայն։

Օրինակներ՝ Նոյն մարմինք նոյն հոգւով բերեալ զգործս վաստակոցն արդարութեան... յարքայութիւն վերանայցեն (Ագ., 529)։ Աղբիւրքն իմաստութեան ի նոյն լուսոյ անկանէին առ նոսին բղխեալ (Ն.տ., 555)։ Որպէս ասէն գիտողն ի նոյն սաղմոսարանին (Ն.տ., 584)։ Այժմ դեռ ի նմին գործ կամ (Բուզ., 6, Ը)։

Ցուցական դերանունները հազվադեպ գործածվում են ետադաս։

Օրինակներ՝ Որպէս նոքա աստուածս բազումս ասեն, նմանապէս և նոքա աստուածս զնոյնսն քարոզեն (Եզն., 4, Բ)։ Զօրէնս և պաշտօն զնոյն ունի (ՂՓՊՀ, ԻԱ)։

Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի ցուցական դերանունները գործածվում են հիմնականում նախադաս և սովորաբար չեն համաձայնվում։

Օրինակներ՝ Յորում ոչ ոք այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր (Մխ, 1, ԺԴ)։ Այդպիսի ջախմամբ վախճանեցաւ (Ն.տ., 2, ԽԶ)։ Փրկին մարդիկ այնպիսի տանջանաց (Եզն., 1, ԻԱ)։ Առ այսպիսի ճշմարիտ աստուածս անպատշաճ հարցուածս մատուցանեն (Ն.տ., Դ)։ Յաճախեսցես դու ի նոյնպիսի թշնամանս աստուածոցն (Ագ., 70)։ Զանձինս ձեր յայդպիսի խոլ խրատուէ ի բաց կալայք (ՂՓՊՀ, ԾԶ)։

Սակայն բավական հաճախ սրանք համաձայնվում են որոշյալի հետ։

Օրինակներ՝ Զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին (Մխ, 1, ԺԶ)։ Առնէր հարցումն վասն այսպիսւոյ պատճառի (Ն.տ., ԻԵ)։ Հնարի այսպիսում ուսման դառնութեան հնարս (Ն.տ., Յաւ., Բ)։ Ուր յայնպիսեաց կարծեաց ... վրիպեալ լիցին (ՂՓՊՀ, Ծ)։ Ի կենդանութեանն այնպիսւոյ առն... գնդաւ յաղթեալ գտաւ նա (Ն.տ., ՁԴ)։ Այնպիսւոյ բարւոյ աստուծոյ որդի՝ ի չարէն որդւոյն սատակեցաւ (Եզն., 2, Ժ)։ Քանզի էր արդարև սաստիկ հզօր այսպիսեաց զրուցաց արժանի (Մխ, 2, Ը)։ Այսպիսեօք և այսքանօք ժողովրդովք բազմացեալ (Ն.տ., ՂԱ)։ Յորժամ զայսպիսիս ընթերցասիրեսցեմք իմաստութեան ճառս (Ն.տ., 1, Գ)։

Այս դերանունները քիչ դեպքերում գործածվում են նաև իբրև ետադաս համաձայնվող որոշիչ։

Օրինակներ՝ Որ ունին զրոյցս այսպիսիս (Մխ, 2, ԶԱ)։ Դարձան հանդերձ թղթով այսպիսեաւ (Ն.տ., 3, ԾԷ)։ Ոչ ուրուք մեծի թագաւորի

կայր ի նմա **ձեռնարկութիւնք այնպիսիք** (Ն.տ., 2, ՁԸ)։ **Զօրութիւնք այսպիսիք** ի ձեռաց սորա լինիցին (Ա., Մարկ., Զ)։

Դրանք ետադաս կիրառությամբ երբեմն մնում են անհամաձայն։

**Օրինակներ՝** Յորում է սկիզբն **բանիցն այսպիսի** (Մխ, 1, Թ)։ Ի տեառնէ եղև կոչումն նմա գալ **յիրս այսպիսի** (Բուզ., 4, Գ)։

**Այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ** ցուցական դերանունները սովորաբար գործածվում են որպես նախադաս չհամաձայնվող որոշիչ։

**Օրինակներ՝** Կորեան **այնչափ ազգք** (Եղն., 3, ԺԶ)։ Յետ **այսչափ հարցից**... յանձն իւր տարեալ (Ագ., 122)։ Ի վերայ **այնչափ սիրոյ** և **վաստակոց**, փոխանակ կեանս առնելոյ՝ զարև հատէք, ասէր (Եղ., 7)։ **Յայնչափ ժամանակաց** ընդերկարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ (Ն.տ.,)։ Յարձակեալք ի վերայ Միհրանայ **այնքան արամբք** (ՂՓՊՀ, ՁԸ)։

**Այսքան, այդքան, այնքան** դերանունները երբեմն համաձայնվում են որոշյալի հետ։

**Օրինակներ՝** Եւ այսպիսեօք **այսքանեօք ժողովրդովք** բազմացեալ, ի ծերութիւն պարարտութեան հոգևորի զմեզ ժողովեաց (Մխ, 2, ՂԱ)։ **Այսքանեօք հնարաւորութեամբ** ընդ փրկութեան խմում հոգացար (ՄԿՊԱԱ, 1, ՂԲ)։ **Այսքանեաց** և այսպիսեաց **ազգաց** և **ազանց** ստուգապէս առաջնորդք՝ աստուածային արդարև արմաւենիք ի տան Տեառն տնկեալք (ՅԴՊՀ, 272)։ Զիարդ բժշկեսցիս... **ի յայսքանեաց տիգաց** խոցոտեալ (ԳՆՄՈ, ԽԵ)։

**Անորոշ դերանունները գոյականի լրացում.**—Գրաբարի անորոշ դերանունները գոյականի լրացում դառնում են երկու դեպքում։ Դրանց սեռական հոլովը կատարում է հատկացուցչի պաշտոն։

**Օրինակներ՝** Ոչ **ուրուք բռնադատութեամբ**, բայց իւրովք... կամօք կրեաց զայն (Ագ. 379)։ Եւ զայլոցն անուանս... ոչ կարասցէ շարել (Ն.տ., 845)։ Որոց բղխմունքն **զայլոց կարօտութիւնս** լնուն (Եղն., 1, Ա)։ **Զայլոց ամուսնութիւնն** թշնամանիցէ (Ն.տ., Ժ)։ **Այլոց հաւատովք** հաստատեաց զանդամալոյծն (Ն.տ., ԻԱ)։ Քանզի և ոչ **արարիչ իրիք** էր (Ն.տ., 2, Գ)։ **Ստուեր իրիք** ոչ երբեք հեռանայ յիմեքէն (Ն.տ., 3, ԺԲ)։

Բոլոր անորոշ դերանունները դառնում են գոյականի որոշիչ։ Ընդ որում **ոմն, ոք** դերանունները սովորաբար դառնում են անձի, երբեմն նաև իրի անունների ետադաս որոշիչ։

**Օրինակներ՝** Որ էր **նախարար ոմն** ի Ստահր գաւառէ (Ագ., 18)։ Ինքեանք զհետ **Հրէի ուրումն** խաչելոյ մոլորեալ են (Ն.տ., 153)։ Ի տեղի

նորա ի վերայ բագնացն կացուցանէ զընտանի Արտաշիսի, աշակերտ **մոգի ուրումն** երազահանի (Մխ, 2, խԸ)։ Առաքէ... հանդերձ **Սանատրկաւ ումամբ** յիւրմէ ազգէն Արշակունեաց (Ն.տ., 3, Գ)։

Սակավադեպ ետադաս դերանունը մնում է եզակի։

**Օրինակներ**՝ Լեալ իցեն արդեօք **մարդիկ ոք** յայնժամ երբեմն ժամանակի (Ագ., 59)։ Ապրեցուցանէր ի ձեռն **դայեկաց ուրումն** (Ն.տ., 34)։

Այս դերանունները երբեմն կարող են գործածվել նաև նախադաս՝ համաձայնվելով որոշյալի հետ։

**Օրինակներ**՝ Ոչ **ուրուք** մեծ **թագաւորի** կայր ի նմա ձեռնարկութիւնք այնպիսիք (Մխ, 2, ՁԸ)։ Գտանել **զումեմն զաշակերտս** (Գործ., ԺԹ)։

**Իմն**, **ինչ** դերանունները սովորաբար դրվում են իր ցույց տվող գոյականներից հետո՝ համաձայնվելով դրանց հետ (հոգնակի գոյականի մոտ դերանունը մնում է եզակի՝ հոգնակի ձև չունենալով)։

**Օրինակներ**՝ Յանվայր յոչնչէ **իմեքէ** հրամայեաց հաստատել երկրի (Ագ., 226)։ Այլ նա աւասիկ իբրև **զկառս իմն** լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք... **զօրութիւն իմն** ծածուկ կառավար (Եզն., 1, Գ)։ Զմարթի **բնութեան իմիք**՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար (Ն.տ., ԺԳ)։ Արուեստագէտ միայն **նիւթոյ իմիք** զնա համարիցին (Ն.տ., 3, ԺԷ)։ Եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ **զօրութեամբ իմիք** (Ն.տ., 1, ԻԵ)։

Շատ դեպքերում ետադաս դերանունը չի համաձայնվում։

**Օրինակներ**՝ **Վարուք** ինչ զեղծիցին (Եզն., 1, ԻԷ)։ **Օրէնս իմն** հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ (Մխ, 2, Ը)։ **Ոճով իմն** պատմեն (Ն.տ., ԺԳ)։ **Աղմուկ շփոթից իմն** լեալ յարևմուտս (Ն.տ., ԾԴ)։ Ի ծնանելն զսա դիպեալ **պատահարաց իմն** (Ն.տ., ԿԱ)։ Մարդիկ, ասեն, **յանձա՞նց ինչ** ունիցին զայնպիսի շարժմունս (Եզն., 1, ԺԱ)։ Ոչ եթէ յարդար **գործոց ինչ** պատահեաց (Եղ., 5)։

Այս դերանունները երբեմն դառնում են նախադաս որոշիչ։

**Օրինակներ**՝ Ասին **ինչ անուանք** ի գրոց յուշկապարկաց (Եզն., 1, ԻԴ)։ Ապա ուրեմն է **ինչ զօրութիւն** ծածուկ (Ն.տ., Բ)։ Եւ չեն **ինչ զարմանք** (Ն.տ., ԻԳ)։

Այս դեպքում դերանունը հոլովով հազվադեպ համաձայնվում է գոյականի հետ։

**Օրինակներ**՝ Ոչ այլով **իւիք կերպարանօք**՝ այլ միայն մարդոյ կերպարանօք... յայտնէր (Եզն., Գ)։ Խաչեցին զՔրիստոս առանց **իրիք յանցանաց** (Մխ., 2, ԼԳ)։

**Այլ** և **միւս** ցուցականները ևս որոշիչ կիրառություն ունեն, ընդ

որում այլ-ը դրվում է և՛ եզակի, և՛ հոգնակի գոյականի, իսկ միւս՝ միայն եզակի գոյականի հետ։ Սովորաբար սրանք գործածվում են նախադաս՝ համաձայնվելով լրացյալին։

**Օրինակներ՝** Եւ **այլք բազումք**... խոստանան (Եղն., 2, ԺԷ)։ **Զայլս բազումս** ընտրեաց ի նոցանէն (Ն.տ., 4, Թ)։ **Միւսով մարգարէիւ** յայտ **արարեալ** (Ն. տ., 1, ԻԴ)։ Եւ յՈրմզդէ և **ի միւսմէ որդւոյն** նորա... չէր օրէն թերահաւատ լինել (Ն.տ., 2, Ժ)։ Զոր ոչ ոք իշխեաց **յայլոց աղանդոցն** առնել (Ն.տ., 4, ԺԶ)։ **Յայլմէ արարչէ** էին (Ն.տ., 2, ԻԷ)։ Չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ... հանդերձ որդւովք իւրովք... և **այլովք ընդոծնօք** (Մխ., 1, Ժ)։ **Միւսով մասամբն** գնաց ինքն ի վերայ զօրուն (Սեբ., ԻԱ)։ **Ի միւսում թղթին** ասէ (Եղն., 4, ԺԵ)։ Զնոյն բաջաղանս **այլովք պատմութեամբք** կարկատեցին (Ն.տ., 1, ԻԸ)։ Թէպէտ և եմք ածու փոքր ... և ընդ **այլով** յոլով անգամ նուաճեալ **թագաւորութեամբ** (Մխ, 1, Գ)։

Այլ դերանունը հաճախ և միւս՝ հազվադեպ չեն համաձայնվում որոշյալի հետ։

**Օրինակներ՝** Գազանք անհագինք են, և վիշապք և օձք և **այլ ճճիք** վնասակարք (Եղն., 1, ԺԵ)։ Խառնեալ ընդ **այլ բանջարս**՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի (Ն. տ.)։ Դարձեալ **ի միւս** ևս **միտս** իմանալի է (Ն.տ., 4, ԺԵ)։ Հանդերձ և **այլ ընկերօքն** իւրեանց ... ողբային (Ագ., 143)։

Այլ դերանունը գործածվում է նաև ետադաս՝ համաձայնվելով կամ ոչ։

**Օրինակներ՝** Վաղվաղակի տայր տանել ցԿամսարականն ... հինգ ևս **այր այլ** (ՂՓՊՀ, ՂԱ)։ Թագաւորութիւն նորա **ազգի այլում** ոչ մնասցէ (Դան., Բ)։ Ծանիցէ **ազգ այլ** (Ագ., 899)։ Զթագաւորութիւն իւր **ազգի այլում** ոչ փոխեալ (Ն.տ., 398)։

Այս դերանունը հաճախ գործածվում է **ոմն, ոք, իմն, ինչ** դերանունների հետ հարադրված, ընդ որում մերթ համաձայնվելով, մերթ ոչ։

**Օրինակներ՝** Ոչ **այլ ինչ** գոյ բժշկութիւն (Ագ., 214)։ Զի **այլ զի՞նչ ինչ** արդեօք կարիցեմք առնել դարձուածս (Ն.տ., 96)։ Զիք **այլ ինչ** յոյս ի միտս նորա քան որ երևինս (Եղ., 7)։ Շրջեալ զայս բան՝ **այլ իմն** պատճառ լինելոյ արեգական մուծանեն (Եղն., 2, Թ)։ Երևել սրբոց իւրոց կամէր, ոչ **այլով իւիք** կերպարանօք՝ այլ միայն մարդոյ կերպարանօք (Ն.տ,. 1, ԻԴ)։ Եւ ոչ **այլ ոք** արարիչ էր չարեաց (Ն.տ., 3, ԺԷ)։ Պարսից թագաւորութեանն ... **այլ ոմանս** յարուցեալ գունդս (Մխ, 2, Է)։

**Որոշյալ դերանունները գոյականի լրացում.**— Այս դերանունները

ևս գոյականի լրացում դառնում են երկու ձևով։ Մի դեպքում դրանց սեռական հոլովաձևը դառնում է հատկացուցիչ։

Օրինակներ՝ Անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին (Եղ., 1)։ Միաբան ամենեցուն իւրատու զզօրագլուխսն կարգէր (Ն.տ., 5)։ Ամենեցուն մարմինք եղեն գէշ թռչնոց և կերակուր գազանաց (Ն.տ., 6)։ Ցնորեալ մոլորիք զկնի նորին խրատուի... յարարչէն բոլորեցունց ի բաց լինելով (Ն.տ., 2)։ Կոտորեսցեն զսպաս վիճակին իւրեանց, ի փառս Հօրն բոլորեցուն (Ն.տ., 1)։ Այլ և դրօշից իւրաքանչիւրոց տեղեկանայր ի նմանէ (Ն.տ., 4)։ Հայր Յիսուսի է Տէրն ամենայնի (Եղն., 4, Թ)։ Որպէս պատճառ ամենայնի ի միոջէ միութենէ տայ (Ն.տ., 3, ԺԱ)։ Ոչ եթէ ամենեցուն սերմանքն կուսիցին (Ն.տ., 2, Զ)։ Իւրաքանչիւրոց պատիւն և պատուհասն առ հանդերձեալ օրն պահի (ՅԴՊՀ, 165)։ Փողոտէին, հատեալ ևս զիւրաքանչիւրոց նոցա զգլուխս (Ն.տ., 347)։

Երկրորդ դեպքում որոշյալ դերանունները գոյականի հետ գործածվում են որոշչային հարաբերությամբ։ Ամենեքին (ամենեքեան) գործածվում է անձ ցույց տվող հոգնակի գոյականի հետ սովորաբար նախադաս՝ համաձայնվելով հոլովով։

Օրինակներ՝ Ձերծո զիս յամենեցունց ընդդիմացողաց (ԳՆՄՈ, ՂԲ)։ Սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն (Մխ. 1, ԻԴ)։ Մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս (Ն.տ., 2, ԿԵ)։ Տայ առատապէս պարգևս ամենեցուն նախարարացն (Ն.տ., 3, ԻԲ)։ Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց (Եղ., 3)։

Երբեմն ամենեքեան գործածվում է եզակի գոյականի հետ։

Օրինակներ՝ Անկեալ սատակեցան ... ամենեքեան առ հասարակ ազգն անօրէն դառնացողաց (Ագ., 314)։ Ցրուեաց զամենեսեան մրրիկն (Մխ, 2, ԼԶ)։

Այս դերանունը կարող է գործածվել նաև ետադաս՝ համաձայնվելով հոլովով։

Օրինակներ՝ Զօրացն ամենեցուն պարգևէր առատապէս (Մխ, 2,

---

7 Ամենեքին (ամենեքեան) դերանունը հաճախ հարադրվում է այլ դերանունների։ Օրինակներ՝ Սոքա ամենեքեան իւրաքանչիւր նմանութեանն բուսանին (Ագ., 649)։ Զամենեսեան զձեզ արարից ազատս (Մխ., 3, ԻԸ)։ Ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն տխմարութիւն (Ն. տ., 1, Գ)։ Գիտասցեն ամենեքեան այնոքիկ, որ ոչն հնազանդին (Եղ., 3)։

խԴ)։ Մարգարէիւքն ամենեքումբք ծանօթս տայ (Ագ., 370)։ Թողին զնա աշակերտքն ամենեքին (Մարկ., ԺԴ)[7]։

Ամենայն դերանունը նախադաս կիրառությամբ սովորաբար չի հոլովվում։

Օրինակներ՝ Պարգևէ գիտութիւն ամենայն անգիտաց (Եզն., 1, Ա)։ Որ գազանագոյն է քան զամենայն գազանս (Ն.տ., ԺԵ)։ Հանդերձ ամենայն սպասաւորօք... քարոզէր զԱւետարանն (Աg., 818)։ Տիրեաց խոսրով ամենայն նախարարացն Հայոց (Մխ, 3, ԽԹ)։

Հազվադեպ ամենայն-ը նախադաս կիրառությամբ հոլովով համաձայնվում է։

Օրինակներ՝ Յետ այսր ամենայնի հաւանութեանց՝ յամառեալ զնոյն ի մէջ բերեն (Եզն., 1, ԺԵ)։ Ինքն եղև օրինակ մերոյ կենդանութեանս, անդրանիկ ամենայնի մեռելոցն՝ մեռանելովն (Բուզ., 4, Ե)։

Ետադաս կիրառությամբ երբեմն հոլովով համաձայնվում է հոգնակի թեք հոլովով դրված գոյականին, իսկ մյուս դեպքերում մնում է անփոփոխ։

Օրինակներ՝ Զօրացն ամենայնի տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բազկէ լեալ՝ ի փախուստ դառնային (Մխ, 2, ՁԵ)։ Միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ (Ն.տ., 2, Ծ)։ Անփոփոխ են բարիքն ամենայն (Աg., 174)։ Զաշխարհս ամենայն փոխեցին ի պաշտամանէ դիցն (Ն.տ., 154)։ Յորմէ զարարածս ամենայն դնէ (Եզն., 4, Բ)։

Իւրաքանչիւր (անձնիւր, անցնիւր) դերանունը գործածվում է և՛ անձ, և՛ իր ցույց տվող գոյականների հետ սովորաբար նախադաս՝ առանց համաձայնվելու թվով և հոլովով։

Օրինակներ՝ Որոյ ըստ իւրաքանչիւր կարգաց տուեալ է սկիզբն լինելոյ (Եզն., 1, Ա)։ Այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն (Ն.տ., ԺԵ)։ Ըստ իւրաքանչիւր կարգի զայն պատմեսցուք (Աg., 286)։ Կարող է զիւրաքանչիւր բարս փոփոխել (Ն.տ., 248)։ Արշաւանս դնեն յիւրաքանչիւր գաւառս (Ն.տ., 1)։ Պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն (Եղ., 7)։

Խիստ հազվադեպ այս դերանունը համաձայնվում է լրացյալի հետ։

Օրինակներ՝ Հրամայէ ... ի վերայ իւրաքանչիւրոց դասուց զընտիրս ի ճարտարացն վարպետս կարգել (Մխ, 1, ԺԶ)։ Արածէին անվեհեր փութով զհաւատացեալ հօտն յիւրաքանչիւրումն ժամանակի (ՅԴՊՀ, 282)։ Ոչ սակաւ ինչ ծախս առնկաց ըստ իւրաքանչիւրումն սակի կարգէր մեզ (Ն.տ., 217)։

Իւրաքանչիւր կարող է գործածվել նաև ետադաս՝ երբեմն համաձայնվելով։

Օրինակներ՝ Եւ զինչս իւրաքանչիւր ետուն ի ձեռս մարզպանին (Եզ., 6)։ Զանուանս իւրաքանչիւր ունել և ի վերայ տապանացն նշանակեալ էր (Ն.տ.)։ Զառն առն իւրաքանչիւր զբարս աղնուականութեանն ցուցանէր նոցա (Ն.տ.)։ Այլ և դրօշից իւրաքանչիւրոց տեղեկանայր ի նմանէ (Ն.տ., 4)։ Որք զիւրեանց մարմինս իւրաքանչիւր զգենլոց են (Ագ., 658)։ Եպիսկոպոսունս ապա ըստ որոշեալ վիճակացն իւրաքանչիւրոց հաստատէին (ՅԴՊՀ, 48)։

Բոլոր որոշյալ դերանունը գործածվում է նախադաս՝ հիմնականում մնալով անհամաձայն։

Օրինակներ՝ Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն (Եղ., 2)։ Զբոլոր արարածս տուեալ է ի ծառայութիւն (Ն.տ., 2)։ Որ սիւն եղեալ է և զբոլոր շինուածն յինքն հաստատեալ (Եզն., Խրատք)։ Գոհացայց զքէն, Տէր, բոլորով սրտիւ իմով (Սաղմ., Թ)։

**Հարցական-հարաբերական դերանունները գոյականի լրացում.—** Սրանք ևս գոյականի լրացում դառնում են երկու ձևով։ Մի դեպքում հոլովվող դերանունների սեռականը դառնում է հատկացուցիչ։

Օրինակներ՝ Վասն ո՞յ գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս (Յովհ., Ժ)։ Որոյ ձայնն զերկիր շարժեաց (Ագ., 575)։ Զորոց զոգիսն գտանէ ... յաստուածպաշտութեան կեցեալ՝ նորոգէ (Ն.տ., 117)։ Որոց ծնունդքն ի միում ժամու չէին (Եզն., 2, ԺԳ)։ Զրուանն ... ո՞վ էր արդեւք ոյր բախտն էր (Ն.տ., Զ)։

Երկրորդ դեպքում հարցական—հարաբերական դերանունները դառնում են գոյականի որոշիչ։ Զի՞նչ, քանի՞, որպիսի, ինչպիսի դերանունները գործածվում են նախադաս՝ չհամաձայնվելով գոյականի հետ։

Օրինակներ՝ Զի՞նչ զարմանք են ընդ նոցա (Եզն., 3, Բ)։ Նա զորպիսի՞ զերանական զփառսն ժառանգէ (Ն.տ., Խրատք)։ Վասն մահուանն քաջին խոսրովու, թէ ուստի .. և կամ զինչ անցք անցին (Ագ., 13)։ Զիա՛րդ ընկալան, և որպիսի արամբ (Ն.տ., 16)։ Զի՞նչ օրինակաւ կարասցեն ապրեցուցանել զմոգպետն (Եղ., 7)։ Ո՞րպիսի հնարիւք լուծանել կարասցուք, ասէ, զկապ սիրոյ (Մխ, 1, ԻԵ)։ Այլ ոչ գիտեմ ասել յորպիսի ազգմանէ, ահագին իմն աղմուկ լեալ շփոթից (Մխ, 2, ԺԲ)։ Ո՞րպիսի լինիցին պատժոց պատուհասից արժանի (Ագ., 571)։

Շատ հազվադեպ որպիսի դերանունը համաձայնվում է որոշյալին։

Օրինակներ՝ Ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն

հրաշակերտեաց (Մխ, 1, ԺԶ)։ Որպիսում մեծվայելչութեան առ ժամայն հասին (Ագ., 706)։

Որ դերանունը գործածվում է նախադաս՝ համաձայնվելով լրացյալին։

Օրինակներ՝ Յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւնն (Եզ., 5)։ Վասն որո՞ց պատճառանաց նախ սա յուսացեալ կոչելոյն զԱստուած (Մխ, 1, Դ)։

Երբեմն որ դերանունը համաձայնվում է որոշյալի հետ միայն հոլովով։

Օրինակներ՝ Յո՞րմէ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ... վասն որոյ արդար վաստակոց (Եզ., 6)։ Որով կամօք և մեք արբեցաք (Եբր., Ժ)։

Ստացական դերանունները գոյականի լրացում.—Գրաբարի ստացական դերանունները՝ իմ, քո (քոյ), մեր, ձեր, իւր, հիմնականում դառնում են գոյականի լրացում (նրանց ինքնուրույն գործածությունը հենվում է փոխանունության վրա)։ Հայ քերականագիտության մեջ արտահայտված է երկու կարծիք. առաջինի համաձայն գոյականի լրացում դարձող այդ դերանունները հատկացուցիչ են, իսկ երկրորդի համաձայն՝ որոշիչ[8]։ Վերջին կարծիքը ելնում է այն իրողությունից, որ բացի հոգնակի ուղղականից և հայցականից, բոլոր հոլովներում ստացական դերանունները համաձայնվում են լրացյալին։ Այնուամենայնիվ, ստացական դերանունները հատկացուցիչ են, թեև մեծ մասամբ համաձայնվող։ Այս դերանունները գործածվում են և՛ նախադաս, և՛ ետադաս։ Նկատելի է, որ դասական շրջանում ավելի շատ են ետադաս կիրառության դեպքերը։

Օրինակներ՝ Ահա տեսցես աչօք քովք (Դ, Թագ., Է)։ Արտասուօք իմովք զանկողինս իմ թացի (Սաղմ., Զ)։ Զեղբօրէ քումմէ չարախօսէիր (Սաղմ., ԽԹ)։ Հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց (ԿՎՄ, 15)։ Զայր զմեր և զանձանց մերոց ի նա հեղումք (Եզն., 1, Դ)։ Ասացի... վասն մոլորութեանդ ձերոյ (Ագ., 235)։ Ի միջի ձերում պատմին (Ն.տ., 237)։ Աղօթիւք ձերովք առցուք ողջոյն (Ն.տ., 800)։ Առաջնորդեաց մեզ ի մանկութենէ մերմէ (Ն.տ, 167)։

Ստացական դերանունները նախադաս գործածվում են շատ հաճախ։ Քո ստացական դերանունն այս դեպքում հանդես է գալիս երկար ձևով։

Օրինակներ՝ Ձերովք աչօք տեսիք (Բ, Մակ., ԺԲ)։ Քոյով հրամանաւ վարին ամենայն զօրութիւնք (Ագ., 169)։ Անցին զքոյով պատուիրանօքդ

---

8 Տե՛ս Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, էջ 72։

(Բուզ., 5, ԻԸ)։ Գրգռի պատերազմն ի մերմէ կողմանէս դիմեալ (Մխ, 2, Ե)։ Իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն (Ն.տ., ՁԲ)։ Որ և սիրելի իսկ իմոց ախորժակացս է (Ն.տ., 1, Ա)։ Ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյովն անցի զխրատու (Ն.տ., Թ)։

Գոյականաբար գործածված դերբայների մոտ կամ այլ դեպքերում երբեմն դերանվան և լրացյալի համաձայնությունը խախտվում է. դերանունը դրվում է տրականով, լրացյալը՝ հայցականով։

Օրինակներ՝ Ի լռել իմում անսասցեն ինձ (Իմաս., Ը)։ Ի խօսիլն իմում առաւել ափիբերան լինիցին (Ն.տ., 1), մեռում գեւղ ծովացուլ զկով գործեաց (Եզն., 1, ԻԵ)։

Հազվադեպ դերանունը համաձայնվում է միայն հոլովով։

Օրինակներ՝ Զնշանս ... ցուցին ձեզ ձեռով պատուհասիւք (Ագ., 570)։ Իւրով հաճոյական կամօքն խրատէ զամենեսին (Ն.տ., 822)։ Իւրով աւետարանական... գնացիւք զամենափրկչին անունն Յիսուսի կրեաց (Ն.տ., 843)։

## 5. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ

Գրաբարի դերբայներից գոյականի լրացման դեր կատարում են անորոշը, անցյալը և ենթակայականը։ Դրանք կարող են լինել հատկացուցիչ և որոշիչ։ Հատկացուցչի պաշտոն կատարում են անորոշը իր բուն կիրառությամբ և անցյալն ու ենթակայականը փոխանվանաբար։ Ընդորում երկու պաշտոններում էլ դերբայները կարող են հանդես գալ ինչպես միայնակ, այնպես էլ դերբայական դարձվածի կազմում։

Գոյականի լրացումը անորոշ դերբայով.—Առաջին հերթին պետք է նշել անորոշ դերբայի հատկացուցիչ գործածությունը։ Այս դեպքում այն հանդես է գալիս ավելի շատ եռադաս։

Օրինակներ՝ Համբարձին զձայնս լալոյ իւրեանց (Ա, Եզր., Ժ)։ Էր ժամանակն զայգիսն յատելոյ (Բուզ., 6, Թ)։ Զև էր ժամանակ պտղոյն բերելոյ (Ագ., 653)։ Զէր օր ... օր դատելոյն (Ն.տ., 676)։ Անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց (Ն.տ., 814)։ Պատմեալ զճանգամանս վերանալոյն (Ն.տ., 498)։ Զաստղ պատճառ պատաճելոյն դնիցեն (Եզն., 3, Ը)։

Երբեմն անորոշ դերբայը դառնում է նաև նախադաս հատկացուցիչ։

Օրինակներ՝ Ճանապարհի գնալոյ նշանակ է (Եզն., 2, ԺԹ)։ Խաւարելոյ արեգականն եթէ լուսինն պատահել պատճառ իցէ, յորժամ լուսինն մթանայցէ՝ նմա զի՞նչ պատահիցէ (Ն.տ., 3, Ը)։ Յորժամ ի քարանց ոք շինուածս առնիցէ՝ պատշաճելոյն և յօրինելոյն միայն արարիչ է, և ոչ բնութեան (Ն.տ., 1, Է)։ Ապրելոյ ճար լինի Տիգրանուհեայ (Մխ, 1, ԻԹ)։

Այս դերբայը գոյականի հետ կապակցվում է նաև որոշչային հարաբերությամբ։ Ընդ որում այն որոշիչ կարող է լինել և՛ սեռական հոլովով, և՛ անփոփոխ ձևով՝ առաջին դեպքում շարադասական նույն կանոններով, ինչ որ հատկացուցիչ կիրառությունն էր, իսկ երկրորդ դեպքում միայն ետադաս։ Այսպես, հետևյալ նախադասություններում անորոշ դերբայի սեռական հոլովը կատարում է որոշչի պաշտոն։

Համարձակութիւն առին հարցանելոյ զՏէրն (Ագ., 469)։ Բաժանեալ, դիզեալ կային անբաւութիւնք անկշռելութեան ական տեսանելոյ (Ն.տ., 734)։ Բանն Աստուած սպան զստտանայ, այնու զի կոխելոյն զնա ետ իշխանութիւն (Եզն., 1, ԺԳ)։ Ջերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ (ՍՏՏՊ, 3, ԻԱ)։

Անորոշ դերբայը որոշիչ դառնում է նաև անփոփոխ ձևով։

Օրինակներ՝ Ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանս (Եղ.,2)։ Եւ էին Մովաբացիքն ծառայք Դաւթի բերել ընծայս (Ա, Մնաց., ԺԸ)։

Երբեմն էլ դժվար է որոշել, թե անորոշ դերբայի անփոփոխ ձևը կամ սեռականը հատկացուցիչ թե որոշիչ պաշտոն ունի։

Օրինակներ՝ Ետ նմա իշխանութիւն ժողովել զզօրս՝ և պատրաստել զզէն (Ա, Մակ., Թ)։ Այս եղև սկիզբն Հայոց մասնաւոր մտանել ընդ հարկաւ Հռոմայեցւոց (Մխ., 2, ԻԴ)։ Հրամանք են աշխարհին ի հինէ կոտորել (Եզն., 2, ԺԵ)։ Ետ իշխանութիւն հանելոյ զդևն (Ն.տ., 1, ԻԱ)։ Բաւանդակ յինքեան ունի զամենայն կարողութիւն առնելոյ և հաստատելոյ զամենայն (Ն.տ., 2, ԺՁ)։ Արարածոց պաշտօն մատուցանելոյ վարդապետ այլ ոք չէ, բայց միայն սատանայ (Ն. տ., 1, ԻԷ)։ Մտանելոյ ի մարդ չունի իշխանութիւն (Ն.տ., ԻԲ)։ Սատանայ ունէր իշխանութիւն շարժելոյ և փոփոխելոյ զօդս (Ն.տ., 3, Է)։

Որոշ դեպքերում դժվար է որոշել անորոշ դերբայի անփոփոխ ձևի լրացական հարաբերությունը գոյականի և բայի միջև, քանի որ բայը ևս կարող է ունենալ անորոշ դերբայի թեք կամ անփոփոխ ձևով արտահայտված լրացում, ուստի նույն նախադասության մեջ եղած տվյալ ձևը երբեմն կարող է երկու մեկնաբանություն ունենալ։ Այսպիսին են հետևյալ նախադասություններում գործածված անորոշ դերբայի ձևերը։

Տացէ ձեզ Տէր միս ուտելոյ (Թ, ԺԱ)։ Տացես ծառայի քում սիրտ լսելոյ և դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել ի մէջ բարւոյ և չարի (Գ, Թագ, Գ)։ Տայր պարապ ժամ գնալոյ Արշակայ (Մխ, 3, ԽՁ)։

Գոյականի լրացումը անցյալ դերբայով.—Այս դերբայը գոյականի լրացում դառնում է երկու ձևով։ Մի դեպքում այն, փոխանվանաբար հան-

դես գալով սեռական հոլովով, կարող է դառնալ հատկացուցիչ՝ հիմնականում գործածվելով ետադաս։

Օրինակներ՝ Անդ էր... տեսիլ հայեցելոցն (Ագ., 775)։ Ջաւետիս հանդերձելոցն ընկալաւ (Ն.տ., 302)։ Առնոյր ընդ իւր բազմութիւն հանձնելոցն (Ն.տ., 808)։ Երիվարf հեծելոց... սատակէին (Ն.տ., 176)։ Նա ինքնին լինի բժիշկ վիրաւորելոց (Ն.տ., 573)։ Հանցուք զնա յաշաց խիրոցն խաբեցելոց (Եզն., 3, ԺԷ)։ Տեսանէր զբազմութիւն անկելոց խիրոյ կողմանն (Եղ., 5)։ Իսկ կանայf երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին ... համարել ես ոչ կարեմ (Ն.տ., 7)։

Սակավ դեպքերում անցյալ դերբայի սեռականը կարող է դառնալ նախադաս հատկացուցիչ։

Օրինակներ՝ Լսէին ... զհասելոց դարձ փրկութեան (Ագ., 803)։ Կամէր ... զանարժան զոռոզացելոցն բեկանել զփռտս (ՂՓՊՀ, ԿԳ)։ Երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ (ԿՎՄ, 36)։ Ամենայն եկեղեցեօք հնչեցուցանէ զընտրելոցն զազնուականութիւն (Ն.տ., 7)։

Երկրորդ դեպքում անցյալ դերբայը գոյականի լրացում է դառնում ածականաբար՝ դրսևորելով այդ խոսքի մասի հատկանիշներ՝ այն է՝ ետադաս լինելիս համաձայնվում է, իսկ նախադաս գործածվելիս մեծ մասամբ մնում է անհամաձայն։ Հետևյալ նախադասություններում ետադաս գործածված անցյալ դերբայը համաձայնվել է լրացյալին։

Հողագործին աշխատելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել (Բ, Տիմոթ., Բ)։ Ի հրեշտակսն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց (Բ, Պետ., Բ)։ Եւ եւթն ղամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն (Յայտն., Դ)։ Եկին հասին փղովf պատրաստելովf և զօրօfն վառելովf ի դուռն քաղաքին (Գ, Մակ., Ե)։ Արքն այնոքիկ ծառայք են Աստուծոյ բարձրելոյ (Եզն., 2, ԻԳ)։ Զարդարեցին ոսկի և արծաթի կանթեղօf լուցելովf, և լապտերօf վառելովf, և աշտանակօf բորբոքելովf (Ագ., 759)։ Յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին (Մխ., 1, Ժ)։ Անհնար է զյանցանս իմանալ իբր զճանապարհս օձի ի վիմի գնացելոյ (ՅԴՊՀ, 150)։

Ետադաս որոշիչը հազվադեպ կարող է մնալ նաև անհամաձայն։ Օրինակ՝ Ընդունէր զպատարագսն բերեալ ի կայսերէ (Սեբ., ԻՁ)։

Նախադաս որոշիչը սովորաբար մնում է անհամաձայն։

Օրինակներ՝ Որ հաւատացեալ տեարս ունիցին (Ա, Տիմոթ., 2)։ Զամենայն մբերեալ բոյնսն թափեաց ի բաց (Եղ., 1)։ Ազգ եղև ուրացեալն Վասակայ և իշխանացն... քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ (Ն.տ., 3)։ Դնէ յԱնուշն կոչեցեալ բերդի (ՅԴՊՀ, 50)։ Իսկ գետն

բերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս (Մխ, 2, ԽԲ)։ Տեսեալ իսկ եղև մեզ յերեսաց հարաւոյ բորբոքեալ շարիք (ՅԴՊՀ, 223)։ Խոյանայր զկնի գիշատեալ այլազգեացն (Ն.տ., 243)։ Ազդ ապա յումանց արքայի լինէր վասն գործեցեալ դաւաճանութեանն (Ն.տ., 207)։

Սակայն քիչ չեն նաև նախադաս որոշչի համաձայնության դեպքերը։

Օրինակներ՝ Ոչ շարժի ի սահմանելոյ նմա տեղւոյն (Եզն., 1, Ա)։ Ընդ անհնարին պատերազմ մարտնչին ի մէջ բարձրացելոց ջրեղէն լերանց և ի մէջ խոնարհելոց ծովային ձորոցն (Ագ., 3)։ Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին (Մխ, 1, ԺԱ)։ Դո՞ւ իցես արդարև աշակերտ օրհնելոյն Յիսուսի (Ն.տ., 2, ԼԳ)։ Քինախնդիր անցելոցն մարտից կամեցաւ լինել Շապուհ (Ն.տ., 3, ԻԵ)։

Գոյականի լրացումը ենթակայական դերբայով.—Այս դերբայը ևս գոյականի լրացում է դառնում երկու ձևով։ Առաջին դեպքում այն, գոյականաբար գործածվելով, կարող է կատարել հատկացուցչի պաշտոն՝ ավելի շատ ետադաս կիրառությամբ։

Օրինակներ՝ Զլար ճարտարութեան չինողացն ի ձեռն առեալ... զհիմունսն յօրինէր (Ագ., 758)։ Որք անդէն զիմաստութիւն տուողին ի մէջ անցուցեալ (Ն.տ., 289)։ Միտք գործողին գործեն զչարն (Եզն., 1, Ժ)։ Գտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից (Մխ, 2, ԿԲ)։ Ջհատացեալ բանի ասողացն՝ լռեցին (ՂՓՊՀ, ՀԳ)։ Մատնեալք ի ձեռս դժողացն... ոտգանէին արեամբ զերեսս երկրի (ՅԴՊՀ, 247)։

Սակավ դեպքերում հատկացուցիչը լինում է նախադաս։

Օրինակներ՝ Հանապազաբուղխ հոսէին վտակք յասողացն մեկնութեանց (ՂՓՊՀ, ԺԱ)։ Անէծս ցաւագին ուղղափառ դաւանողաց մերոց նախանձիս ի վերայ եդին (ՅԴՊՀ, 72)։

Ենթակայական դերբայը գոյականի հետ կապակցվում է նաև ածականաբար, այսինքն՝ որոշչային հարաբերությամբ։ Այն կարող է դառնալ և՛ ետադաս, և՛ նախադաս լրացում՝ երկու դեպքում էլ համաձայնվելով լրացյալի հետ։ Անշուշտ, հիմնականում այն ետադաս կիրառություն ունի։

Օրինակներ՝ Ահս պակուցանողս տարագուք յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին (Մխ, 1, ԺԱ)։ Խնդրէր ժամ դիպող (ՅԴՊՀ, 117)։ Պահեսցին յիշատակք ազգաց ապստամբողաց (Ն.տ., 3, ԽԸ)։

Այս դերբայը գործածվում է նաև իբրև նախադաս համաձայնվող որոշիչ։

Օրինակներ՝ *Շփոթ աղմկի գնովաւ շուրջ պատեալ յապստամբողաց արանց՝ և նա ևս ոչ կարաց ժամանել յօգնականութիւն (ՅԴՊՀ, 233)։ Զնոյն ցօղ յամենապարգևողէն Քրիստոսէ խնդրէին (ԹԱՊՏԱ, 3, Զ)։ Որում պարգևեր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ (ԿՎՄ, 14)։*

*Երբեմն ենթակայական դերբայը գործածվում է որպես չհամաձայնվող որոշիչ։*

Օրինակներ՝ *Առաքեցան յապստամբող յոստիկանէն (ՅԴՊՀ, 231)։ Դաւաճանեալ ի դրժող դիւէ անտի՝ ոչ թողոյր զԱտրներսեհ (Ն.տ., 145)։*

## 6. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ՄԱԿԲԱՅՈՎ

*Գրաբարում մակբայի շարահյուսական դերը հիմնականում սահմանափակված է բայի և ածականի լրացում լինելով, ընդ որում վերջին պաշտոնը բնորոշ է առաջին հերթին չափի ու աստիճանի մակբայներին։ Այս հանգամանքն էլ պայմանավորում է մակբայների գործածությունը բայանունների և ածականական ծագմամբ գոյականների լրացման դերում։ Վերապահության է արժանի միայն մակբայների գործածությունը վերնագրային անվանողական կառույցներում, որոնք արդի հայերենում նույնպես բնորոշ են մակբային անսահմանափակ կիրառությամբ։ Մակբայի գործածությունը իբրև գոյականի լրացում կապված է նաև այն երևույթի հետ, որ գրաբարում մի շարք բառեր հավասարապես դրսևորում են մակբայի և ածականի հատկանիշներ։ Այսպես,* բնաւ, բարւոք, զուր, կրկին, անշուշտ, վաղ, անագան, խիստ, ծածուկ, ստէպ, երագ (արագ), շատ, համօրէն, միշտ, սաստիկ *և այլ բառեր հանդես են գալիս և՛ ածականի, և՛ մակբայի իմաստներով՝ համապատասխանաբար կատարելով այդ երկու խոսքի մասերի պաշտոնները։ Այսպես, հետևյալ նախադասություններում դրանք գործածված են որպես ածական։*

*Արար գիր սքանչելիս և մեզ* սաստիկ *պատիժս պատուհասից (Ագ., 798)։ Դու ետուր խոտաճարակ լինել* խիստ *և անօրէն* թագաւորին *(Ն.տ., 179)։ Բնութիւն նոցա ի վեր քան զհողմ և քան զհուր, նուրբ և* արագ *քան զմիտս (Եզն., 1, ԻԳ)։* Զուր *է ասելն՝ թե արարած եղծանելի է աշխարհս (Ն.տ., 3, ԺԲ)։ Անարգեն* շատք *(Ն.տ., 1, Գ)։Որմովք ամրացուցանէ, արգելով ի ներքս* այծեմունս երագունս *(Մխ, 2, ԽԱ)։* Շատ *ևս* մեկնութիւն *գրոց թարգմանէին (ԿՎՄ, 31)։ Այնուհետև* զբնաւ բարեզարդութիւնս *եկեղեցւոյ Քրիստոսի և զաւետարանական և զմարգարէական և զառաքելական կտակարանս սուրբս... յաւարի առեալ (ՅԴՊՀ, 339)։ Զմահ ընդ կեանս խառնեալք* զբարւոք պատերազմին *զընթացսն ըղձային լնուլ (Ն.տ., 342)։ Եւ* մարդկօրէն տեսլեամբ *որպէս թեւաւորք երևեալ գնացին*

յԱշտիշատի կուռսն (ՅՄՊՏ, 269ա)։ Իսկ նորա եղբայրաբար սիրով և բարեկամությամբ ընկալեալ՝ զբոլոր զինքն առաջի առնէր նմա (ՄԿՊԱԱ, 1. ԺԱ)։ Սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն (Եղ., 2)։ Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր (Ն.տ., 5)։

Նույն բառերը գործածվում են նաև իբրև մակբայ։

Օրինակներ՝ Ոռոգանէր զերկիրն սաստիկ յոյժ (Ագ., 103)։ Թագաւորն շատ աղաչեաց զԳրիգոր (Ն.տ., 858)։ Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր (Բուզ., 4, ԾԴ)։ Ոչ լիցի հնար քեզ երագ մեռանել (Ագ., 101)։ Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր (Մխ, 2, Ծ)։ Ջուր և տարապարտուց նեղեաց զնոսա (Եղ., 3)։ Ընդէ՞ր բնաւ եղանեմք խառնամիխ ի պատերազմ (Ագ., 39)։ Դու բարւոք արարեր, զի արգահատեցեր մեծի նեղութեանս մարմնոյ (Եղ., 7)։ Առ ... Ղովտայ մարդկօրէն իսկ դարմանեալ (Ագ., 323)։ Զոր ըմբռնեալ զրոցն թշնամաբար և ոչ եղբայրաբար՝ ծախեցին (ՂՓՊՀ, ԼԲ)։ Գունդ մի որ ընդ իւրով ձեռամբ էր, ծածուկ վառէր (Գ, Մակ., Ա)։

Բանն այն է, սակայն, որ այս երկդիմի խոսքի մասերը իբրև մակբայ գործածվելիս էլ կարող են դառնալ գոյականի լրացում։ Այս դեպքում դրանք չեն տարբերվում զուտ մակբայներից։ Այսպես, հետևյալ նախադասություններում հիշյալ կարգի մակբայները գոյականի լրացում են։

Այն կամ ի շատ ուտելոյ, յըմպելոյ լինի, կամ ի սաստիկ պահոց (Եզն., 1, Ի)։ Յաղագս զուր ի նոցանէ մահուանն Տրդատայ ... տայ նմա զպատիւ հիւպատոսութեան (Մխ, 3, ԻԱ)։ Եկդ Վահանայ այդպէս երագ՝ շատ ընդդէմ է բանիցն Վրուայ (ՂՓՊՀ, ԿԵ)։ Ամենայն շնորհէր զյանցանս նոցա ձրի թողութեամբ (Ղև., պատմ., ԺԵ)։

Վերջին օրինակներից երևում է, որ մակբայով լրացում ստանում են հիմնականում բայանունները և ածականական ծագմամբ գոյականները, որոնց նկատմամբ մակբայն արտահայտում է որոշչային հարաբերություն։

Որպես կանոն, լրացումը նախադաս է լինում։ Գոյականի լրացման դերում ամենից շատ հանդես են գալիս ձևի մակբայները։

Օրինակներ՝ Սրբոցն և յառնեն իսկ ճշգրտեալ գիրեանց հաստատապէս աւետիսն՝ զօրացեալք զուարճանային (ՂՓՊՀ, ԾԱ)։ Առ սաստկապէս բեկումն թշնամեացն և բարձրանալ սրբոյ եկեղեցւոյ՝ ասէին սաղմոսելով (Ն.տ., ՀԲ)։ Տեսեալ զանէրկիւղապէս և զքաջաբար ելս Կամսարականին Հրահատայ ... հրաման տային ածել զերանելի սեպուհն Սիւնեաց զՅաղգ (Ն.տ., ՀԶ)։ Տկարացեալքն ի նապենպ փախստենէն մատնեալք

ի ձեռս դրժողացն... ոռոգանէին արեամբ զերեսս երկրի (ՅԴՊՀ, 247)։ Թողեալ **զճակառակաբար մարտն՝** խօսին ի խաղաղութիւն (ԹԱՊՏԱ, 3, ԺԴ)։ Լաւ համարէին **զգազանաբար բնակութիւնն** աստուածպաշտութեամբ ի քարանձաւս կեալ (Եղ, 6)։ Քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, և **անասնաբար սանձեցմամբ** ըստ հողոյն զիջման ընդ երկիր մածաք (ԳՆՄՈ, ՋԶ)։ Լռեցոյց **զմոլեգնօտաբար գոչումն** (Եղ., 3)։ Եռացոյց ի վեր զալիս իւր **ուժգին շարժմամբ** (Ղև., Պատմ., ԺԵ)։ Արթնականն մեր զուարթութիւն քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ ի խոր թմբրութիւն լռելն՝ վասն ուղիղ հաւատոյն ի քեզ՝ **անթարթափ բացութիւն** աչաց (ԳՆՄՈ, ՋԵ)։ Որ բանաս և մատուցանես **պատրաստաբար բաշխմամբ** ի մասունս բազմապիսիս (Ն.տ., ՂԲ)։ Լաւ է յայտնութիւն յամենայն ի օրհնեալդ, **ամենևին փրկութիւնդ** (ԳՆՄՈ, ԼԴ)։ Որոց կապեալ

Չափի և ատրիճանի մակբայները ևս կարող են դառնալ գոյականների, մասնավորապես ածականական ծագում ունեցողների լրացում։

**Օրինակներ՝** Որք էին **յոյժ տղայք** (ՂՓՊՀ, ԾԹ)։ **Յոյժ մեծարանօք** զգիր երանելւոյն կազմեալ՝ տօն յիշատակի առնէն (Ն.տ., ԺԹ)։ Ընձեռեա **առաւել բարերարութիւն** ի սպառ վրիպելոյս (ԳՆՄՈ, ՂԳ)։ Պատմեաց նոցա **զերկիցս երևումն** սքանչելեացն (Եղ., 7)։ Զորս ի ձեռանէ նոցա բերաւ աւերումն և սասանումն աշխարհին՝ **կրկին տուժիւք** զնա նորոգեալ (ՅԴՊՀ, 309)։ Շքեղացուցանեն զԹագաւորն Գագիկ **կրկին փառաւորութեամբ** (ԹԱՊՏԱ, 4, Գ)։ Դու ոչ ունիս չարանալ իսկութեամբ բարիդ, յամենայնի օրհնեալդ, **ամենևին փրկութիւնդ** (ԳՆՄՈ, ԼԴ)։ Որոց կապեալ զԳուրգէն **երեքկին կապանօք** և դարձեալ ի պարանոցն եդեալ շղթայս՝ յղեն ընդ Ատրպատական Պարսից (ԹԱՊՏԱ, 3, ԺԴ)։ **Յոյժ պակասումն** և **լռումն** լինէր ամենայն պատերազմող ձեռին (ՅԴՊՀ, 358)։ Ակամայից բռնադատելոց ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ **բովանդակապէս փրկութիւն** (ԳՆՄՈ, Իէ)։ Ոչ ինչ զանգիտեցին առ ի **յոյժ բազմութենէն** (Եղ., 3)։ Լուսաւորեա ինձ ողորմութեանդ քո ճառագայթ. **Ամենևին բարերարութիւն** (ԳՆՄՈ, Ծ)։ Առ **յոյժ ամբարտաւանութեանն** և **սաստիկ բարկութեանն**... հրամայեաց դահճացն տալ ի վերայ նոցա վճիռ մահու (ԹԱՊՏԱ, 3, Ը)։

Բայանունների լրացում դառնում են նաև ժամանակի մակբայները, ինչպես՝ **վաղ, անագան, հանապազ (հանապազորդ), միանգամ, վերստին, կանխաւ, միշտ, յաւիտենից** և այլն։

**Օրինակներ՝** Որոց գիտացեալ... **զվաղ** և **զանագան** կենցաղոյս **զվախճանն՝** ընտրեցին ըմբռնել զյաւիտենից կեանսն (ՂՓՊՀ, ԼԸ)։ Անդադար սաղմոսիւք կային ի **հանապազորդ պաշտամանն** (Եղ., 7)։ Ի

միասանգամ զայստեանն հատուսցէ քեզ (Սեբ., ԻԵ)։ Արժանի առնէր զնոսա վերստին ծննդեանն ի ձեռն սրբոյ աւազանին (ՄԿՊԱՍ, 2, ԽԱ)։ Զորս կամաւորաբար կրեալ համբերեաց զնոցին կանխաւ մարգարէիցն գուշակումն (Ղև., Պատմ., ԺԴ)։ Զոգայ առ թագաւորն Հայոց Գագիկ, ըստ միշտ ճրաւիրման ի կոչման նորա (ՅԴՊՀ, 357)։ Իսրայէլ փրկեցաւ զփրկութիւն յաւիտենից (Եսայի, ԽԵ)։ Արկին և նոքա վիճակս ճանապազորդ պաշտաման (Ա, Մնաց., ԻԵ)։

Տեղի մակբայներից մի քանիսը ևս կարող են հանդես գալ որպես գոյականի լրացում, ինչպես՝ յետուստ, ի վերուստ, ի ներքուստ և այլն։ Սրանք ունեն և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն։

Օրինակներ՝ Յանկարծակի յետուստ կողմանէ հարկանէր զիշխանն արի սաստիկ վիրաւորեալ (ՄԿՊԱԱ, 2, ԼԴ)։ Զի լինիցին ի դիպահուշ ի բանտի և ի կապանս, մինչև ի դարձ իւր այսրէն (ՅԴՊՀ, 354)։ Կանխավազ ցրմամբն ի վերուստ՝ զմիաբարբառ լեզու մարդկութեան շփոթեաց յայլաբան խլրտինս (ԹԱՊՏԱ, 1, Բ)։ Իսկ ի ներքուստ կողմանէ զսրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապաճոյճ դեղովք (Ն.տ., 4, Ը)։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԱԾԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարում ածականները լրացումներ են ստանում գոյականով (և նրան հարաբերակից դերանուններով), մակբայով (և նրան հարաբերակից դերանուններով)։ Գրաբարի ածականների լրացումներ ստանալու հատկությունը նույնպես պայմանավորված է նրանց շարահյուսական դերով. ստորոգելիական վերադրի դերում հանդես եկող ածականների խնդրառությունն անհամեմատ լայն է որոշչի և պարագայի պաշտոն կատարող ածականներից[1]։

Գրաբարում խնդրառական հատկությամբ օժտված են որակական ածականները. հարաբերականներն այդպիսի հատկություն կարող են ստանալ՝ վերածվելով որակականի։

Գրաբարում ածականը ստանում էր բազմապիսի լրացումներ, որոնց մի մասը իմաստով համարժեք է բայի լրացումներին։ Ինչպես ասվել է, ժամանակակից հայերենի ածականական բառակապակցությունների առնչությամբ, այդ երևույթը բացատրվում է ածականի և բայի հարաբերակցությամբ. մի շարք ածականներ բայական ծագում ունեն, և, ընդհակառակն, որոշ բայեր ածականական ծագման են։ Նույն երևույթն առկա է նաև գրաբարի ածականական բառակապակցությունների մեջ, որտեղ այդ երկու խոսքի մասերի առնչակցությամբ պայմանավորված խնդրառական ընդհանրությունն առավել ցցուն է երևան գալիս։ Այսպես, ազատ, զերծ, անհաս, տեղեակ, թափուր և այլ ածականների խնդրառությունը չի տարբերվում ազատել, զերծուլ, հասանել, տեղեկանալ,

---

[1] Գրքի ծավալի սղությունը հնարավորություն չի տալիս ածականների խնդրառությունը քննելու ըստ լրացյալի շարահյուսական դերի։ Պետք է նշել, սակայն, որ այդ դեպքում լրացումը կարող է մեկնաբանվել նաև իբրև բաղադրյալ ստորոգյալին վերաբերող։

թափրանալ բայերից, քանի որ այդ ածականներն առաջացել են նշված բայերից։ Նույն ձևով արժանանալ, մերկանալ, ամայանալ, կարօտել, համեմատել բայերն ունեն արժանի, մերկ, կարօտ, համեմատ, ամայի ածականներին բնորոշ լրացումներ։

Հետևյալ նախադասություններում առկա են այդ երկու խմբի ածականների բառակապակցությունները։

Մի էութիւնն անքնին է և անհաս բնութեամբ (Եզն., 1, Ա)։ Ոչ ինչ է նա կարօտ փառաց (Ագ., 405)։ Ձերձ յայլոց ձեռաց լինիցի դոցա (ՅԴՊՀ, 314)։ Մնային թափուր յօգնականութենէ նոցա (Ղև., Պատմ., ԼԴ)։ Մերկ էր ի զրահից (ՄԿՊԱՍ, 2, ԼԴ)։ Արժանի է մշակն կերակրոյ իւրում (Մատթ., Ժ)։ Որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յոնից դարաւանդաց համեմատ (Մխ, 2, ԽԲ)։ Քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք սուրբ կտակարանացն (Եղ., 5)։ Եւ էր նա մանուկ յաւուրց, լի առութեամբ, կորովի ձեռօք (Բուզ., 5, ԼԴ)։ Ի մեղացն ազատ՝ սպան զզօրացեալ մահ (Ագ., 481)։ Եթէ ամայի ի զգուշութենէ պահողացն ոք դեգերեսցի, սպասեսցէ սովիմբ առ ի նոյն դարձ նորոգողին (ԳՆՄՈ, Գ)։ Ծարաւի լերուք ապաշխարութեան (Ագ., 513)։

Նույնպիսի խնդրառություն ունեն համապատասխան երկու խմբի բայերը հետևյալ նախադասություններում։

Ազատեաց ի ծառայութենէ (Ագ., 85)։ Որ մեզօք են աղքատացեալ (Ագ., 9)։ Յանչէջ հրոյն զերծանիցիմք (Եղ., 2)։ Ողորմութեանց նոցա կարօտին (Ն.տ., 365)։ Որ... կարօտէր Աստուծոյ արուեստգիտութեանն (Եզն., 1, Դ)։ Ջինքն զրկէ ի կենաց աստի (ՅԴՊՀ, 50)։ Թափրացաք և ունայնացաք ի ստացուածոց (ՅԴՊՀ, 261)։ Երանութեանցն արժանացեալքն՝ փառաց պարծանօք պսակեցան ի Քրիստոսէ (Ն.տ., 286)։ Նոքա... յաստուածակերպ փառացն մերկացան (Ագ., 280)։

Բային հարաբերակից որոշ ածականներ նույնիսկ ստանում են պարագայական լրացումներ։

Օրինակներ՝ Նոցա եկեալ... և յետկոյս մնացական գաղթն յաւարի առեալ՝ դառնային (ՅԴՊՀ, 305)։ Ջի են եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի (ՍՏՏՊ, 3, ԺԷ)։ Բազմահատուած էութիւն բնութեանս ներհակ միմեանց ի պատերազմի, երկչոտութեամբ կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ ի վտանգի (ԳՆՄՈ, ԻՋ)։

Միաժամանակ նկատելի է մի երևույթ. մի շարք ածականներ գրաբարում ստանում են այնպիսի լրացումներ, որոնք բնորոշ չեն նույն ածականներին ժամանակակից հայերենում, այլ կերպ ասած՝ փոխվել է այդ

բառերի խնդրառությունը։ Այսպես, վստահ ածականը կարող էր առանալ և՛ գործիական, և՛ ի նախդրով հայցական։

Վստահ ես յանձն քո (Հռոմ., Բ)։ Որ վստահ են կապանօք (Փիլիպ., Ա)։ Զորս գիտէր արժանիս պատւոյ, և վստահ էր հեծելութեամբ (Սեբ., Գ)։

Արդի հայերենում վստահ ածականը ստանում է տրական (ուժերին վստահ) և կապային լրացումներ (ուժերի վրա վստահ, մի բանի մեջ վստահ)։

Որոշ ածականներ էլ գրաբարում ունեին ավելի լայն խնդրառություն, քան ժամանակակից հայերենում։ Այսպես, կարօտ, վարժ ածականները գրաբարում կարող էին ստանալ խնդիր և՛ տրականով, և՛ բացառականով, և՛ գործիականով, և՛ նախդիրներով, մինչդեռ արդի հայերենում առաջինն ստանում է միայն տրականով խնդիր, իսկ երկրորդը՝ սահմանափակման խնդիր։

Օրինակներ՝ Միթե կարօ՞տ ինչ իցեմ ես այսահարօք (Ա, Թագ., ԻԱ)։ Եւ գտեալ զոմն ասորի Մար Աբաս Կատինայ, այր ուշիմ և վարժ քաղդէացի և յոյն գրով (Մխ., 1, Թ)։ Քանզի ոչ եթէ կարօտ ինչ ուք իւիք էր... և ոչ կարօտ յիմաստութենէ (Եզն., 1, Ա)։ Որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր և վարժ ի բոլոր հրահանգս (ՅԴՊՀ, 74)։ Որ ուշիմ և վարժ էր մտօք (Ն.տ., 74)։ Առնոյր այնուհետև զԱրշակունեաց տոհմի որեարն ի վարժս վարդապետութեան պարապեցուցեալ (Ագ., 783)։ (Հմմտ., արդի հայերենի հացի կարօտ, գործի մեջ վարժ)։ Զի էր այր սրամիտ և վարժ ի պատերազմի (ՍՏՏՊ, 3, Լ)։

Տգէտ, օտար ածականները գրաբարում կարող էին ստանալ և՛ տրականով, և՛ բացառականով խնդիր, մինչդեռ ժամանակակից հայերենում դրանց խնդրառությունը նեղ է։

Օրինակներ՝ Ի հաւատոյ և յուսմանէ տգէտք եւեթ (ՂՓԹ)։ Որ տգէտն է գրոց... որ մովսիսական օրինացն օտա՛ր է և քրիստոսատուր շնորհին անտեղեակ (ՂՓՊՀ, Ճ)։ Յանձն առէք լինել օտար ի վայրուց և ի ծանօթից (ՅՄՊՏ, 247 ա)։ (Հմմտ.՝ մի բանից տգետ, սովորություններին օտար)։

## ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆՈՎ (ԵՎ ԴԵՐԱՆՎԱՄԲ)

Գրաբարի ածականները լրացումներ ստանում են հոլովվող բառերի սեռական, տրական, բացառական, գործիական հոլովներով, ինչպես և նախդրավոր կառույցներով, նախադրություններով ու թեք հոլովաձևերով։

Ածականի լրացումները սեռական հոլովով—Սեռականով լրացումն արտահայտում է սահմանափակման իմաստ. Այսպիսի լրացում կարող են ստանալ բոլոր որակական ածականները՝ ավելի շատ համեմատական աստիճանի դեպքում։ Այս լրացումը բնորոշ է մեծ մասամբ լրացյալի գոյականական կիրառությանը, ինչպես լինում է բացառականով լրացման դեպքում։

Օրինակներ՝ Ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանութեան, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ (ԳՆՄՈ, ԼԴ)։ Ինձ՝ որ տրուպս եմ ամենայն սրբոց, տուան շնորհքս այս (Եփես., Գ)։ Սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն (Մխ., 1, ԻԴ)։ Երկոքեան անարգք և վատթար արանց (Եղ., 3)։ Եւ եղև յետ երից աւուրց կոչել նմա զհրէիցն գլխաւորս (Գործ., ԻԸ)։ Զաւելորդս ժողովրդեանն... խաղացոյց (Դ, Թագ., ԻԵ)։ Արք զօրաւորք պատերազմի (Յուդիթ., ԺԴ)։

Հազվադեպ սեռականով լրացումը կարող է ուղիղ խնդրային իմաստ արտահայտել՝ բայական ծագմամբ ածականի մոտ։ Օրինակ՝ Ընդ գիտունս օրինացն խօսիմ (Հռոմ., Է)։

Երբեմն էլ սեռականով լրացումը դրվում է տրականի փոխարեն՝ մասնավորապես անձնական դերանունների դեպքում։

Օրինակներ՝ Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է (Մատթ., ԺԲ)։ Ո՞չ լսես որչափ դոքա հակառակ քո վկայեն (Ն.տ., ԻԷ)։ Իսկ դու մարդ հաւասար իմ (Սաղ., ԾԴ)։

Հակառակ ածականը սովորաբար տրականով է լրացում ստանում։

Օրինակ՝ Շրթունք քո հակառակ քեզ վկայեսցեն (Յովբ., ԺԵ)։

Ածականի լրացումները տրական հոլովով.—Տրական հոլովով լրացում ստանում են շատ մեծ թվով ածականներ, ինչպես՝ ախորժելի, անարկու, ատելի, անքննելի, արժանի արժանաւոր, անարժան, անհաս, անմասն, անկապուտ, անպատկառ, հաւասար, հաւատարիմ, անհաւատալի, հաճոյ, հմուտ, կարօտ, նման, գիտակ, յայտնի, ընդդիմակաց, սիրելի, բաղձալի, ցանկալի, ծանօթ, անծանօթ, ընդունակ, ընդունական, պատշաճ, պարտական, պատրաստ, տեղեակ, անտեղեակ, վայել, համաքան, մերձաւոր և այլն։

Սրանց մի մասը, հարաբերակից լինելով բայերին, ունի վերջիններիս հատուկ խնդրառություն, որի մասին նշվեց վերևում։ Մյուսների խնդրառական հատկությունը պայմանավորված չէ բայի հետ ունեցած

հարաբերությամբ։ Նկատելի է, սակայն, որ սրանց մեծ մասը տրականով խնդիր ստանալու հատկությունը պահպանել է նաև արդի հայերենում։

Այս ածականների լրացումներն արտահայտում են զանազան հարաբերություններ, որոնց մանրամասն քննությունը տրված է ժամանակակից հայերենի նույնատիպ բառակապակցություններին նվիրված մասում[2]։ Այստեղ ընդհանուր գծերով կնշենք լրացումների իմաստները։ Դերբայական ծագում ունեցող ածականների (ախորժելի, ատելի, սիրելի, ընդունելի, բաղձալի, ցանկալի, անհաւատալի և այլն) լրացումներն արտահայտում են ենթակայական հարաբերություն։

Օրինակներ՝ Ախորժելի է ինձ՝ գձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ (Մխ, 2, ԼԳ)։ Խօսք, որ ինձ ատելի թուին (ՂՓՊՀ, 97)։ Ատելի են Աստուծոյ՝ ամբարշտեալն (Իմաս., ԺԴ)։ Անձանց ատելի էք և այլոց՝ թշնամիք (Եղ., 7)։ Զոր ձեզ ամօթ է ասել, և մեզ կարի անհաւատալի բանք (Ն.տ. 2)։ Եւ այսպես տեսեալ... զերկնաւոր զհրեշտակն յիւրում սպասաւորութեան երանելին և ցանկալին ամենայն թագաւորաց Կոստանդիանոս (Ադ., 871)։ Սիրելի էր նա Աստուծոյ (Նեեմի, ԺԳ)։ Պարգևեաց Աշուշայի, որպէս կարի առն սիրելւոյ և վաստակաւորի՝ զանհաւատալի ամենեցուն զմեծ նորա խնդիրն (ՂՓՊՀ, ԾԹ)։ Նա ամենայն տեսողաց բաղձալի և անտեսից ցանկալի (ԹԱՊՏԱ, 4, ԺԲ)։ Ահա արդարև օրհնեալ է հատուած բանի յուսադրական սրտի այսր մեղայի, սոյն սա պատուելի աւանդ... կենդանութեան կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց (ԳՆՄՈ, ԻԷ)։ Ընդունելի է թագաւորի սպասաւոր իմաստուն (Առակ., ԺԴ)։ Ատելի է արդարոյ ամենայն ամբարիշտ (Մխ, 2, ՁԸ)։ Ունի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անզննելի աչաց (ԹԱՊՏԱ, 4, Է)։

Մեծաւոր, մեծակայ, յայտնի, արժանի, արժանաւոր, անարժան, վայել, հաւատարիմ, անհամբոյր, անհաս, ընդդիմակաց, հմուտ ածականների լրացումներն արտահայտում են հանգման հարաբերություն։

Օրինակներ՝ Որ ոչ վայել էր քրիստոնէից (ՂԼ., Պատմ., ԼԲ)։ Որ հաւատարիմ է արարչին իւրոյ (Եբր., Գ)։ Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, և ընդդիմակաց ամենեցուն որք ամբառնային զձեռն (Մխ, 1, Ժ)։ Շինէ և զչքնաղս ոմանս և զզարմանալոյ արժանաւորս (Ն.տ., ԺՁ)։ Քանզի էր արդարև սաստիկ հզօր և այսպիսեաց զրուցաց արժանի (Ն.տ., 2, Ը)։ Որպէս անհամբոյր բարւոյ և ճշմարտութեան անհարազատ ... ընդ-

2 Տե՛ս մեր «ժամանակակից հայերենի բառակապակցությունները», էջ 169—176։

դիմանան կամաց թագաւորին (Ն.տ., ՂԲ)։ Հոգի կենդանի է... **անհաս** մտաց և խորհրդոց (Աq., 355)։ **Մեծատր արեանն** սպանցէ զսպանօղն (Թիւք ԼԵ)։ Շինեաց վասն և եկեղեցի **մեծակայ** արքունական **կայենիցն** (Սեբ., Դ)։ Առաքեաց եպիսկոպոսն զՄովսէս՝ վայր **հմուտ** արուեստական **շնորհի** (ՄԿՊԱԱ, ԽԱ)։ Քանզի էին մերկք և առանց զինուց և **անհմուտք պատերազմի** (Ղև., Պատմ., ԼԴ)։ Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, **յայտնի** իսկ **բնակչաց** գաւառին՝ նշանք մեծամեծք երևին (ԿՎՄ, 11)։

**Ծանօթ, անծանօթ, հակառակ, ժառանգակից** ածականների լրացումներն արտահայտում են փոխադարձ կապի հարաբերություն։

**Օրինակներ**՝ Որ չար իմն էութիւն **հակառակ բարւոյ** դնեն (Եզն., 1, Բ)։ Լինել **հեթանոսաց ժառանգակիցս** և **մարմնակիցս**, և **հաղորդս աւետեացն** ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն (Եփես., Գ)։ Եւ **ժառանգակից** Քրիստոսի եթէ **չարչարանացն կցորդ** լինիմք, և **փառացն հաղորդ** լինելոց եմք (Հռովմ., Ը)։ Մարմին ցանկայ **հակառակ ոգւոյ**, և հոգի՝ **հակառակ մարմնոյ** (Գաղ., Ե)։ Եզրի և իւրայոցն տգիտաբար իմն **անծանօթ Գրոց** Աստուածայնոց... խաբեցան ընդ նոսա (ՅԴՊՀ, 77)։ Բազմահատուած էութիւն բնութեանս **ներհակք միմեանց** ի պատերազմի, երկշոտութեամբ կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ ի վտանգի (ԳՆՄՈ, ԻՋ)։ Քանզի մնաս յայսմիկ անբաւ և անհետազոտելի, ամենևին բարի **անմասն բարկութեան** խաւարի (Ն.տ., ԻԹ)։ **Ճշմարտութեան անհարազատ**, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին (Մխ, 2, ՂԲ)։ Ոչ իսկ համարիմ զանձն արժանի **արդարոցն** լինել **չարչարակից** (ՅԴՊՀ, 279)։ **Ծանօթք** եղիջիք պատրաստական **վայելչութեանն** (Ն.տ., 336)։ Իշխանք ձեր... **գողակիցք** են գողոց (Եսայի, Ա)։ Որդի խորագէտ **հնազանդ հօր** (Առակ., ԺԳ)։

**Կարօտ, անկարօտ, ծարաւի** ածականների լրացումներն արտահայտում են ուղղության, ձգտման հարաբերություն։

**Օրինակներ**՝ **Ծարաւի է արիւնարբութեան** (ԹԱՊՏԱ, 2, Գ)։ **Անկարօտ ոռոգման** արբուցանելով զդաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստամն (ՂՓՊՀ, Է)։ **Կարօտ է կամելոյն** առ անձինն անդորրութիւն (ԳՆՄՈ, ԾԱ)։ Ոչ ինչ **կարօտ** են նոքա մարմնաւոր **մեծութեան** (Եզ., 1)։ Կին անզգամ... **կարօտ** լիցի **հացի** (Առակ., Թ)։ Սիրտ անմտի **կարօտ է հանճարոյ** (Ն.տ., ԺԵ)։

**Գիտակ, անգէտ, տգէտ, տեղեակ, անտեղեակ, բանիբուն** ածականներն արտահայտում են վերաբերության հարաբերություն։

**Օրինակներ**՝ Որ **գիտակ** լեալ էին ամենայն մեծամեծ **գործոցն** (Դատ.,

Բ)։ Իշխեցեր լրբաբար առ մեզ, իբրև անգէտս քո նենգաւոր գործոյդ, գալ (ՂՓՊՀ, ԻԶ)։ Աստուածային Գրոց գիտութեան բանիբուն ճանաչէր (ՅԴՊՀ, 77)։ Որ հմուտ և տեղեակ գոլով բոլոր քերթողական շարագծաց, մասանց բանի և մասնականաց, այլ և վարժից սեռից և որք ընդ գոյացութեամբ են սեռական տեսակարարութիւնք մինչ ցանհատ վայր, և տարբերութեանցն ևս հանգամանաց և պատահմանց անչափից և ան-անչափից ոչ անտեղեակ (Ն.տ., 100)։ Ջեմք ինչ անտեղեակ խորհրդոցն (Բ, Կորն., Բ)։

Պատրաստ, անպատրաստ, պիտանի, պիտանացու, անպիտան ածականների լրացումներն արտահայտում են նպատակի հարաբերություն։

Օրինակներ՝ Էին կուռք պատրաստ հնձելոյ (Ա, Թագ., ԺԳ)։ Ուրախ եմ և պատրաստ հալածանաց, աղքատութեան, վշտի և մահուան (ՂՓՊՀ, ՀԵ)։ Որ երբեմն անպիտան էր քեզ (Փիլիմոն, Ա)։ Որ այսպէս անօգուտ են... և ոչ ումեք պիտանացու՝ հատէք, խզեցէք (Ագ., 526)։

Պատշաճ, նման, վայել, հաւասար ածականների լրացումներն արտահայտում են համապատասխանության հարաբերություն։

Օրինակներ՝ Նա և զաղքատս... հաւասար իշխանաց կացուցանէ (Ագ., 8)։ Քեզ իսկ վայել է երկրպագութիւն (Ն.տ., 95)։ Գործն հավասար հրամանին առնոյր զկատարումն (Մխ, 1, ԺԶ)։ Նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր (Ն.տ., 2, Խ)։ Ի ճահ առեալ զայն ժամ դիպող և պատշաճ գոլ իւրոյ կամացն կատարման... դիմեալ մոմռեալ յարուցեալ գայր իբրև զհեղեղատ սաստիկ (ՅԴՊՀ, 178)։ Ջի՞րդ դասակցութեան դժնէից մարդոց համաբան այրս մահու և որդիս սատակման բարբառիմ զբարեշնորհին (ԳՆՄՈ, ԿԱ)։ Որ նման գայլոց յարձակեցան յարարս իմ (ՂՓԹ)։

Ընդունակ, ընդունական ածականների լրացումներն արտահայտում են սահմանափակման հարաբերություն։

Օրինակներ՝ Բայ է բառ անհոլով, ընդունական ամանակաց, դիմաց և թուոց (Դ., Թր., Արուեստ քերակ-ն, ԺԴ)։ Նաև ոչ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել, Թող թէ հոգեկան կամ մտաց ընդունական (ԳՆՄՈ, ԻԱ)։

Անարկու, անօգուտ, ծածուկ, հաճոյ, անհաճոյ, բարեշնորհ և այլ ածականների լրացումներն արտահայտում են շահի հարաբերություն։

Օրինակներ՝ Հաճոյ էր Աստուծոյ և մարդկան (Ա, Թագ., Բ)։ Ջայսու ժամանակաւ էր յաթոռ հայրապետութեան Տէր Անանիա՝ ամեներջանիկ սրբութեամբ գերապատուեալ, բարեշնորհ իւրոց վիճակելոցն (ՍՏՏՊ, 3, Է)։ Իմաստնանայր հանճարով, հաճոյ Աստուծոյ և մարդկան (Ն.տ., Լ)։ Յորում գործէին գործ անհաճոյ Աստուծոյ (Ղև., Պատմ., ԼԲ)։ Թագա-

ուրեաց կայսր Թէոդոս փոխանակ Պապայ զՎարազդատ ումն յԱրշակունի տոհմէ, այր քաջ և պատերազմող, անարկու մեծամեծաց և փոքունց (ԹԱՊՏԱ, 1, ԺԱ)։ Զբազմօք զանց արարաք զբացատրութեամբք, մանաւանդ որ անհուն շատաբանութեամբք իցեն լի, անօգուտ մեզ առ ի պատմել, և անշահ լսողաց առ ի լսել (Ն.տ. 4, Է)։ Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում (Բ, Օրէնք, ԻԹ)։ Որ էր նմա պատուական (Ղուկ., Է)։

Պատուական, պատուաւոր ածականների լրացումներն արտահայտում են մատուցման հարաբերություն։

Օրինակներ՝ Մեղայ պատուականս անկենդան մահուն՝ ճաղելիս մեղայ (ԳՆՄՈ, ԻԷ)։ Ընդէ՞ր կամիցի զանձն դնել անպատուականն մահու (Աք., 461)։ Ամենայնի այնմ դուք էք պատուաւորք (ՂՓՊՀ, ԾԵ)։ Արդ այսոքիկ են ամբարեալքն քո անօրէնութեան տաժանեաց թշուառաքիրտն թօշակք, անձն իմ պատուական կրկին սատակման (ԳՆՄՈ, ԽԵ)։

Պետք է նշել, որ տրականով լրացումները կարող են պահպանվել նաև ածականից կազմված գոյականների մոտ։

Օրինակ՝ Ուր բնակեալ բայյանայր զօրավարն Տաճկաց, զօրհասական արջոյն բերելով նմանութիւն (ԹԱՊՏԱ, 2, Զ)։

**Ածականի լրացումները բացառական հոլովով.**— Բացառականով լրացումներն արտահայտում են տարբեր իմաստներ։ Առաջին հերթին պետք է նշել համեմատության և սահմանափակման իմաստները, որոնք բնորոշ են բոլոր որակական ածականներին։ Դրանցից են՝ տկար, տգէտ, անպտուղ, անպիտան, աջողակ, կաղ, կոյր, կարօտ, որբ, նիազ, անհնարին, բարձր, մեծ, պակաս և այլն։

Օրինակներ՝ Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր (Մատթ., ԻԳ)։ Ինքն էր կաղ յերկոցունց ոտից (Բ, Թագ., Թ)։ Եւ ոչ նիազ ի գիտութենէ ... և ոչ կարօտ յիմաստութենէ (Եզն., 1, Ա)։ Եւ բեմբն չորեքկուսի կանգնեալ... բարձր յերկրէ մինչև յերկինս՝ հաւատն ճշմարտութեան է (ՂՓՊՀ, ԺԷ)։ Այր մի Լիւստրացի տկար յոտից նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ (Գործ., ԺԴ)։ Ի հաւատոյ և յուսմանէ տգէտք երևին (ՂՓԹ)։ Անպիտանս առնէին ի ձեռաց և յոտից և ի բոլոր անդամոց (ՅԴՊՀ, 251)։ Յորժամ անպտուղ բազմերգութենէն լինիցիմ (ԳՆՄՈ, Կ)։ Ի նմանէ մնացեալ եմք որբք (ՍԿՊԱԱ, 1, ԻԸ)։ Եգիտ բազմագոյն քան զամենեսեան զկապարճաւորս և զկորովիս աղեղնաւորացն Ելեմացւոց և Արաբացւոց, աջողակք յերկոցունց ձեռաց (ԹԱՊՏԱ, 3, Ա)։ Ոչ ինչ է պակաս պատուհաս թագաւորի ի ցասմանէ առիւծու (Առակ., Ի)։ Թեթևագոյն արուեստից պակասագոյն ի գիտութենէ են ազգք երկրածնաց (Աք., 851)։ Եւ ի Բենիամինէ զօրաւոր ուժով Եղիադա (Բ, Մնաց., ԺԷ)։ Արդարն ի հաւատոց կեցցէ (Հռոմ., Ա)։

Այս իցէ ձեզ պիղծ յամենայն սողնոց (Ղևտ., ԺԱ)։ Ահա յերեսաց քոց ոչ կարօտ եղէ (Ծնն., ԽԸ)։ Հեռաւորք ի նոցանէ եկեսցեն (Զաք., Զ)։ Սուրբ եմ յարենէ ամենեցուն (Գործ., Ի)։

Սրանցից մի քանիսը խնդիր են ստանում նաև տրականով (կարօտ, տգէտ, անպիտան և այլն)։

Երկրորդ խմբին պատկանում են մասնական իմաստով լրացումնե-րը, որոնց լրացյալ կարող են դառնալ շատ որակական ածականներ, ինչպես՝ բազում, յոլով, աւագ, աւելորդ և այլն։ Իրականում մասնական բացառականն այստեղ ոչ այնքան ածականի, որքան գոյականի լրացում է, քանի որ լրացյալը հիմնականում գոյականաբար է գործածվում։

Օրինակներ՝ Յոլովք ի նոցանէ էին վերակացուք (Ա, Մնաց., ԺԲ)։ Հաստացանէին ի դուռն .. և զաւագս ի տանուտերացն Հայոց (ՂՓՊՀ, ԽԳ)։ Բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ (Եղ., 5)։

Բացառականով լրացումների երկրորդ տեսակը բայական ծագում ունեցող ածականների հետ է կապակցվում։ Սրանք կարող են արտա-հայտել անջատման, պակասության, ներգործող խնդրի, պասիվ ներ-գործության, պատճառի և այլ իմաստներ, որոնք բնորոշ են հարաբերա-կից բայերի համապատասխան լրացումներին։

Օրինակներ՝ Եւ էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Արիստակէս, այր սուրբ և բարեպաշտօն, երկիւղած յաստուծոյ և ի մարդկանէ (Բուզ., Գ, ԺԵ)։ Տեսեալ զքաղաքն ունայն ի զօրաց և զազգողականացն գործի ա-պաձայն, զքեզ տէր ունիմ մշտնջենաւոր և աններհելի պահապան (ԳՆՄՈ, ԿԶ)։ Տարակուսիմ ունայն ի բարեաց (Ն.տ., ԿԸ)։ Սա էր այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ (ՅԴՊՀ, 90)։ Անառիկ իսկ էր նա ի մարդկանէ (Ն.տ., 234)։ Ի պատճառս որսոյ ելեալ շրջէր իշխանն թափուր յիւրոցն զօրաց, միանգամայն և մերկ ի զինուց (ԹԱՊՏԱ, 3, ԻԹ)։ Գտանէր զնա իբրև զլեառն մի բարձր անշարժ ի հողմոյ պատերազմացն հնչմանց (Ն.տ., 4, Գ)։ Զուտ և մաքուր մնալով յայսպիսի մեծավէր ախտէ՝ խնամ ածէ ոչ միայն անձինն զբօսանաց (Ն.տ, 4, Զ)։ Եթէ ամայի ի զգուշութենէ, պահողացն ոք դեգերեսցի (ԳՆՄՈ, Գ)։ Գտցէ զքեզ ունայն ի բարեաց և զարշելի ի գեղեցկութեանց (Ն.տ., Թ)։ Անճանաչ ի ծագմանէ աւետա-րանական լուսոյն մնացաք հարուստ ամս և ժամանակս (ՍՏՏՊ, 3, ԻԱ)։ Որ էրն իսկ ի բնէ անբուժ ի ներքնոցս (ԳՆՄՈ, ԼԴ)։ Այս յարկ չքնաղ և աստուածընկալ ազատ է միանգամայն ի յամենուստ ծառայութենէ (Ն.տ., ՀԵ)։ Էր սա զատակաց յայլոց բանակացն (ՅՄՊՏ, 318 Բ)։ Զոս-տերս և զգստերս իմ աներկիւղ արասցես ի չարէ (ՄԿՊԱԱ, 2, ԻԵ)։ Յորժամ վաճառեն զգեղս իւրեանց սեպհականս, այսպէս գրեն զկտակն,

թէ ուրոյն յեկեղեցւոյն և յեկեղեցւոյ հողոյն (Ն.տ., 3, ԺԱ)։ Սուրբք և անարատք և յամենայն մեղաց ազատ ուսուցիչքդ Հայոց (ՂՓԹ)։ Ի միասին թշնամանէին ... և անձանօթք յազգէ տոհմկաց (Ն.տ.)։ Անպարտ եմ ես յարենէ դորա (Դան., ԺԳ)։ Ի դստերացն թափուր արարին զմնացեալսն (Բարուք., Դ)։ Եւ արարին ընդ տախտակաւն վերջս փողփողեալս ի վերայ երկուց օղոցն, գործ հիւսկէն յոսկւոյ սրբոյ (Ելք., ԼԹ)։

Ածականի լրացումները գործիական հոլովով.— Գործիականով լրացումները իմաստով նույնպես միատեսակ չեն։ Բոլոր որակական ածականները կարող են ստանալ սահմանափակման խնդիր։

Օրինակներ՝ խօսեսցիս ընդ ամենայն իմաստունս մտօք (Ելք., ԻԸ)։ Կին նորա առատ իմաստութեամբ (Ա, Թագ., ԻԵ)։ Էր Յովսէփ ազնիւ երեսօք (Ծնն., ԼԹ)։ Ազգ ժպիրհ երեսօք (Բ, Օրէնք, ԻԸ)։ Խիստ սրտիւ անկցի ի չարիս (Առակ., ԻԸ)։ Զխոնարհս հոգւով կեցուցանէ (Սաղ., ԼԳ)։ Հանճարեղն ոգւով՝ իմաստութեամբ տացէ պատասխանի (Յովբ., ԺԵ)։ Յովնաթանու... էր որդի մի հաշմ ոտիւք (Բ, Թագ., Դ). Որ եղև այր մարգարէ հզօր արդեամբք և բանիւք (Ղուկ., ԻԴ)։ Զգել ընդ խաւար այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք (Սաղ., Ժ)։ Պարծեցարուք ամենեքեան ոյք ուղիղ են սրտիւք (Ն. տ., ԼԱ)։ Երևեցայ ... առնուլ նոցա զթողութիւն մեղաց, և վիճակ ընդ սուրբս հաւատովքն (Գործ., ԻԶ)։ Որպէս թէ ի գետոյ անտի ելանէին եւթն երինջք գեղեցիկ տեսանելով և ընտիրք մարմնով ... ահա այլ ևս եւթն երինջք ելանէին յետ նոցա ի գետոյ անտի, զազիրք տեսլեամբ և վտիտ մարմնովք (Ծնն., ԽԱ)։ Ցոփն շրթամբք գայթակղելով կործանեսցի (Առակ., Ժ)։ Այր սրտեայ էր և անդամովք երկար (Մխ, 2, Ե)։ Կարի չքնաղ էր գեղով (Ն. տ., ԾԱ)։ Առ այսոքիւք և հաշմք անդամովք ոչ խնամեալ լինէին (Ն. տ., 3, Ի)։ Ձեղխ է վարուք (Ն. տ., ԿԳ)։ Գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ (Ն.տ., ԿԷ)։ Արար զմեզ անսպիս և անարատս հոգւով և մարմնով (Եղ., 7)։ Աշոտ եղբայր Վաչէի քանզի էր մանկագոյն տիովք՝ առեալ դահեկին իւրոյ մատուցանէ առաջի Երուանդայ (ԹԱՊՏԱ, 1, Է)։ Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով (Մխ, 2, ԽԲ)։

Սակավաթիվ ածականներ ստանում են միջոցի, նյութի գործիականով լրացում, ինչպես՝ լի, յղի, բոկ և այլն։

Օրինակներ՝ Ընդ առաջ ելեալ այրն անօրէն, սիրելին ննջաւոր,

կեղծաւոր բարեկամն, յղին **անօրէնութեամբ** (ԹԱՊՏԱ, 3, ԻԹ)։ Ճար-տարապետ արուեստին էր Մանուէլն... այր լի **իմաստութեամբ** և զօրաւոր ի գործս (Ն. տ., 4, Ը)։ Ցուլն գնայր ի նմանէ փախստական մրով **ոտամբքն բոկ** (Սեբ., Ժ)։ Որ էր **խոռամանկ** աստեղագիտական աղանդովն (Ղև., Պատմ., ԻԷ)։ Հանճարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց ... **շրթամբքս պատուամատոյց** (ԳՆՄՈ, ԻԷ)։

Մի շարք ածականներ էլ, որոնք սովորաբար ստանում են խնդիր տրականով, բացառականով կամ նախդրավոր կառույցներով, կարող են ստանալ նաև գործիականով լրացում, ինչպես՝ **կարօտ**, **ծառայ**, **պակաս**, **անպակաս**, **վստահ** և այլն։

Օրինակներ՝ Միմեանց **մահու և արեամբ ծառայք են** (Եղն., 1, Դ)։ Թագաւոր **կարօտ մտօք**՝ մեծ զրպարտող (Առակ., ԻԸ)։ Ոչ ինչ **իւիք պակաս** իցեմ քան զլաւ Առաքեալսն (Բ, Կորն., ԺԱ)։ Որ **վստահ** են **կապանօքս** (Փիլիպ., Ա)։ **Վստահ** եմք ի ձեզ **Տէրամբ** (Բ, Թեսաղ., Գ)։ Եւ այս եղև երկու **ամօք պակաս** յերից տասներեկաց (ՄԿՊԱԱ, 2, ԻՁ)։

## ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԴՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ

Գրաբարում բազմաթիվ ածականներ լրացումներ են ստանում նաև նախդրավոր կառույցներով։ Ընդ որում այդպիսի լրացումները հանդես են գալիս ավելի շատ ածականի ստորոգելիական վերադիր կիրառության դեպքում։ Լրացական կառույցը կազմվում է համարյա բոլոր նախդիրներով, սակայն դրանց մեջ առավել շատ գործածվում են **ի**, **առ**, **ընդ**, **ըստ**: **Ի** նախդիրը հանդես է գալիս հայցականի և տրականի, **առ** նախդիրը՝ հայցականի, **ընդ**-ը ավելի շատ հայցականի, նաև տրականի, **ըստ**-ը՝ տրականի հետ։ Նախդիրները համապատասխան հոլովների հետ արտահայտում են իմաստային նույն հարաբերությունները, ինչ որ բայի լրացումների դեպքում է։ Այսպես, **ի** նախդիրը հայցականի հետ արտահայտում է սահմանափակման իմաստ։

Օրինակներ՝ **Մեծ ի ծնունդս** կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է (Ղուկ., Է)։ **Փոքր** է **ի թռչունս** մեղու (Սիրաք, ԺԱ)։ Ոչ ծանիցես զանձն քո, **գեղեցիկդ ի կանայս** (Երգ., Ա.)։ Ամենեքեան **ընտիրք ի դրունս** (Ա, Մնաց., Թ)։ Նա էր լի յամենայն **յատկսն** իւրում (Ն.տ., ԺԲ)։ **Տկար** է **ի կանայս** (Մխ, 3, ԿԴ)։ Որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր և **վարժ ի բոլոր հրահանգս** (ՅԴՊՀ, 88)։ Որ էր այր... **աջողակ ի պատերազմունս** (Ն.տ., 135)։ Եւ էր նա այր սէգ և գգաստ և **սոս ի գնացս** ոտից (Ն. տ.)։ Սա էր ... ժրագլուխ և **փոյթ ի զարդ** և **ի շինութիւն** եկեղեցեաց (ԹԱՊՏԱ, 4, Գ)։ Այր զօրաւոր էր մտօք արքայն Պար-

սից Յուսփ և տեառն յամենայն որդիս մարդկան (Ն. տ.,)։ Որ էր կին իմաստուն ի բանս և յիրս (Ն. տ., 2, Ջ)։ Անպիտանս ի թիւս անօրոց, Անարգանս ի քարինս որմոց, Արհամարհեալս ի կարգս կոչեցելոց, Վատթարս ի յազգս հրավիրելոց (ԳՆՄՈ, ԻԱ)։ Զի էր այր սրամիտ և վարժ ի պատերազմի և առատաձեռն ի բաղխելն (ՍՏՏՊ, 3, Լ)։

Ի նախդիրը հայցականի հետ կարող է արտահայտել նաև նպատակի կամ հանգման իմաստ։

Օրինակներ՝ Պատրաստ եմք ի մեռանել (Բ, Մակ., Է)։ Համարեցան ինձ որպէս առեւծ զի պատրաստ է յորս (Սաղ., ԺԶ)։ Եղև նա անօթ կազմեալ պիտանացու ի գործ Տեառն (Եղն., 2, ԺԷ)։ Ի ստապատիր կռոցն բազմաստուածութենէ առաւել յաճախագունիւք որսացար զանձն իմ պարտաւոր ի քո երկրպագութիւն (ԳՆՄՈ, ՂԲ)։ Արդ մեծութիւն քեզ, ամենակալ առատաձեռն աննուազելի, ամենափոյթ առ ի գթութիւն, մշտայօժար ի բժշկութիւն (Ն. տ., ՂԳ)։ Զոչ պիտանացուան ի գործ վաճառաց և կամ Սոդոմայական արբանեկութեանց ի մետաղս և ի բանտըս՝ և ի շղթայս տարեալ մղէին (ՅԴՊՀ, 247)։ Խառն էր նա ի մահ մոգուցն ի Զարեհաւանի (Եղ., 6)։

Ի նախդիրը հայցականի հետ սակավ դեպքերում կարող է արտահայտել նաև միջոցի իմաստ։

Օրինակներ՝ Որ ընտիրն է ի Տէր (Հռոմ., ԺԶ)։ Քանզի էր խաղաղասէր ի Քրիստոս (Եղ., 1)։ Դուք իմաստունք ի Քրիստոս (Ա, Կորն., Դ)։

Ի նախդիրը հայցականի հետ կարող է արտահայտել նաև տրականի իմաստ։

Օրինակներ՝ Հաւատարիմ պաշտօնեայ և ծառայակից ի Տէր (Կողոս., Դ)։ Յայդ ինչ մի՛ վստահ լինիցիս (Յուդիթ., Զ)։ Վստահ եմք ի ձեզ Տերամբ (Բ, Թեսաղ., Գ)։

Ի նախդիրը տրականի հետ ևս արտահայտում է սահմանափակման իմաստ։

Օրինակներ՝ Եղեն զօրաւորք ի պատերազմի (Եբր., ԺԱ)։ Ակն չար նախանձկոտ ի հացի (Սիրաք., ԺԴ)։ Զի արասցես զմեզ վասն քո ընդ քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած (ԳՆՄՈ, ԺԹ)։ Հանճարեղքն վերարկեսցեն զամօթս իւրեանց, օտարացեալս ի կրօնից, հեռացեալս ի կարգաց, ի սրբութեան անսուրբ, ի կուսութեան անմաքուր, յարդարութեան ամբարիշտ, ի բարեպաշտութեան վնասապարտ (Ն. տ., ԻԷ)։ Յաջորդէ զիշխանութիւնն Աշոտ Պատրիկ, այր ... ճոխ և պերճ յիշխանութեանն (Ղև., Պատմ., Ե)։ Զի դու ես ... յամենայնում բովանդակ (ԳՆՄՈ, ՁԴ)։ Փերմելիանոս ... էր այր սքանչելի յուսումնասիրութեան (Մխ, 2, ՀԵ)։

*Առ նախդիրը գործածվում է հայցականի հետ սահմանափակման իմաստով (նշանակելով՝ վերաբերմամբ, նկատմամբ)։*

Օրինակներ՝ *Աշակերտք* հեղգ առ ուսումն *(Մխ, 3, ԿԸ)։ Վիճակե-ցին մահու* ... զերախտաւորն առ ամենեսեան (ՂՓԹ)։ *Բայց էր Համամ մէգ և ամբարհաւաճ, յոյլ և* թոյլ առ *պատերազմի* գործ *(ԹԱՊՏԱ, Ը)։ Աւշին էր այր խռովասէր, ատեցող զխաղաղութիւն,* անյագ առ արբումն *արեան մարդկան (Ն. տ., 3, ԻԵ)։ Յորոց տեղի մատուցին զՅոհան ումն, այր հեզ և բարեպաշտօն, լցեալ երկիւղիւ Տեառն,* պատշաճ առ վերակացութիւն *եկեղեցւոյ Քրիստոսի (Ն. տ., 3, ԺԵ)։* Առ կեանսն փոյթ, առ ողորմութիւնն սթափ, առ ձեռնարկութիւնն պատրաստ, առ փրկութիւնն կազմ, առ առատութիւնն յորդ, առ յաճախութիւնն զեղուն, առ անբաւութիւնն լի, առ աննուազութիւնն փարթամ, առ երկայնմտութիւնն ճոխ *(ԳՆՄՈ, ԽԴ)։ Զի դու ես Աստուած անքնին,* առ ամենեսին բաւական *(Ն. տ., ՁԳ)։ Քաջահասակ էր նա...* առ կերակուրս *խրախ-ճանաց* պարկեշտ *(ՅԴՊՀ, 137)։* Առ այս *ո՞* բաւական *իցէ (Բ, Կորն., Բ)։*

Առ *նախդիրը գործածվում է նաև* ի *նախդիրի հետ միասին՝ սահ-մանափակման իմաստին* զուգակցելով *նպատակի իմաստը։*

Օրինակներ՝ *Աշակերտք* ... փոյթք առ ի վարդապետել (Մխ, 3, *ԿԸ)։ Տեսի և անդ փոքր ինչ փորուած այրի ի ծործորս քարանձաւի միոյ դժուարամուտ դրամբք և* անհամբոյր առ ի բնակել *(ՅԴՊՀ, 286)։ Անհուն շատաբանութեամբք իցեն լի,* անօգուտ *մեզ* առ ի պատմել, *և* անշահ *ի լսողաց* առ ի լսել (ԹԱՊՏԱ, 4, Է)։ *Արդ մեծութիւն քեզ, ամե-նակալ առատաձեռն աննուազելի,* ամենափոյթ առ ի գթութիւն *(ԳՆՄՈ, ՂԳ)*

*Երբեմն* առ *նախդիրը հայցականի հետ արտահայտում է տրակա-նի իմաստ։*

Օրինակներ՝ Ծարաւ *է անձն իմ* առ քեզ *(Սաղ., ԽԱ)։ Զի՞նչ* պա-կաս *է քեզ* առ իս *(Գ, Թագ., ԺԱ)։*

Ընդ *նախդիրը հայցականի հետ արտահայտում է տրական հոլովի նշանակությունը։ Պատահական չէ, որ այս նախդիրի կառույցով լրա-ցում ստացող ածականներից շատերն այլ դեպքերում տրականով խնդրառություն ունեն (հմմտ. հակառակ* ընդ մեզ *և հակառակ* մեզ, *խառն* ընդ ջուրս *և* ջրոյ)։

Օրինակներ՝ *Եբեր զմուռս* խառն ընդ հալուէս *(Յովհ., ԺԹ)։ Օդ* ընդ ջուրս *և* ընդ երկիր խառն *է (Եզն., 3, Ժ)։ Ասպատակն* խառն ընդ մի-մեանս *հարան (ՅԴՊՀ, 219)։ Որ ոչն է* ընդ մեզ հակառակ *(Մարկ., Թ)։* Հաղորդ *էին* ընդ թշնամիս *Յուդայ (Ա, Եզր., Ե)։ Ընդէ՞ր վարդապետն*

ձեր խառն ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս ուտէ և ըմպէ (ՂՓԹ)։ Քանզի այր սրտեայ էր և անդամովք երկար և ընդ իրեարս պատշաճ (Մխ, 2, Ե)։

Ընդ նախդիրը նույն իմաստը հազվադեպ կարող է արտահայտել նաև տրականի հետ։

Օրինակներ՝ Յուսացեալ սպասեաք ոչ ես ընդ փորձութեանն խառն վրիպիլ սոցա (ՅԴՊՀ, 258)։ Զի՞նչ հաղորդ իցէ գայլ ընդ գառին (Սիրաք, ԺԳ)։ Պատերազմեսցի խառն ընդ նմա (Իմաս., Ե.)։

Ածականի լրացումները հազվադեպ արտահայտվում են նաև ըստ նախդիրով և տրականով, **ընդ որում լրացումը** համապատասխանության կամ սահմանափակման իմաստ ունի։

Օրինակներ՝ Տէր իմ իմաստուն է ըստ իմաստութեան հրեշտակի (Բ Թագ., ԺԴ)։ Արք անուանիք ըստ տանց տոհմիցն իւրեանց (Ա, Մնաց., ԺԲ)։ Արժանի ըստ նորա իմաստիցն և քաջութեանն թէպէտ և ածէր զմտաւ պատուել զնա (ՂՓՊՀ, ԿԳ)։ Եւ արդ, զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բամբասանս շարագրեցից (ԳՆՄՈ, Թ)։ Յորոց, ըստ անգիտութեանն որ է ի նոսա, և անկարգ ըստ վարուց՝ այդպիսի իսկ արդարև աղանդոց վայել էր բուսանել (ՂՓԹ)։

## ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

Գրաբարում ածականները լրացումներ էին ստանում իբրև, որպէս, քան, ի մէջ, առաջի, մասամբ և ի վերայ, համեմատ նախադրություններով և դրանց խնդիրներով։ Նախադրությամբ լրացումները երկու տեսակ են։ Առաջին դեպքում այդ լրացումները կազմում են որակական ածականի համեմատության որևէ աստիճան։ Իբրև, որպէս, երբեմն և համեմատ նախադրությունները հայցական խնդրով ծառայում են հավասարական բաղդատական աստիճան կազմելուն։

Օրինակներ՝ Մինչև եղև մանր իբրև զփոշի (Բ, Օրէնք, Թ)։ Ո՞վ էր իբրև զնա իմաստուն (Նեեմի, ԺԳ)։ Եւ էր թիւ որդւոցն Իսրայելի իբրև զաւազ ծովու անչափ և անթիւ (Ովսէ, Ա)։ Ոչ գտանի կին գեղեցիկ համեմատ սմա (Յուդիթ, ԺԱ)։ Ոգիք երեք անսուրբք իբրև զգորտս (Յայտն., ԺԶ)։ Ո՞վ է սա որ երևեալս է իբրև զառաւօտ, գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն (Երգ., Զ)։ Զոր իբրև զխարիսխ հաստատուն ունիցիմք անձանց մերոց (Եբր., Զ)։ Հզօր էր իբրև զկաղնի (Ամովս., Բ)։ Կին քո որպէս զայգի վայելուչ (Սաղմ., ՃԻԷ)։ Ընչատեացք

են իբրև զանկարօտս, սրբասէրք են իբրև զանմարմինս, անաչառք են իբրև զարդարադատս, աներկիւղք են իբրև զանմահս (Եղ., 7)։ Յորմէ և նա թափուր իբրև զնա դարձեալ եկեալ (ՅԴՊՀ, 172)։ էր ... քաղցրախօս և անուշաբարբառ իբրև զտատրակ (ԹԱՊՏԱ, 4, ԺԲ)։ Ասէի զանձն իմ իբրև զնա արդար և անարատ (ԳՆՄՈ, ԾԹ)։ Աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին ... անխառն իբրև զօդ, մաքուր որպէս լոյս (Ն. տ., 2)։ Զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ (Մխ, 2, ԽԲ)։

Պատահում է, որ որպէս, իբրև նախադրությունների խնդիրը հայցականի փոխարեն ուղղականով է դրվում։

Օրինակներ՝ Ամենեքին ... իբրև շունք լիրբք եղեն յանձինս իւրեանց (Եսայի, ԾԶ)։ Զի իբրև նոքա խոռամանզ (Գ, Մակ., Գ)։

Քան նախադրությունը հայցական խնդրով արտահայտում է որակական ածականի առավելական համեմատական աստիճանը։

Օրինակներ՝ Զի մեծ քան զտաճարն է աստ (Մատթ., ԺԲ)։ Թեթևագոյնք են քան զխօսս (Յովբ., Է)։ Գտար իմաստուն քան զամենեսեան (Ա, Եզր., Դ)։ Բարի են ստինք քո քան զգինի (Երգ., Ա)։ Մեծամեծս ևս քան զայս տեսցես (Յովհ., Ա)։ Հաստագոյն քան զնա էր չարն (Եզն., 1, Ա)։

Այս դեպքում երբեմն քան նախադրության խնդիրն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։

Օրինակներ՝ Համարէին չար ևս քան զօր տեսաւ (Իմաս., ԺԷ)։ Զարաշար տանջանս քան որ առ հարբն (Բ, Մակ., ԺԳ)։

Երբեմն քան նախադրության խնդիրը զեղչվում է։ Օրինակ՝ Ունիմ վկայութիւն մեծ ևս քան զՅովհաննու (Յովհ., Ե)։

Առավելական համեմատականը կարող է արտահայտվել նաև չափ հատադրությամբ ու գործիականով։ Օրինակ՝ Ուսովք չափ ի վեր բարձր էր քան զամենայն ժողովուրդն (Ա, Թագ., Թ)։

Ի վերայ նախադրությունը և սեռականը նույնպես կարող են արտահայտել առավելական համեմատական իմաստ՝ սահմանափակման երանգով։ Օրինակ՝ Բարձր է ի վերայ ամենայն ազգաց (Սաղ., ՃԳ)։

Ի մէջ նախադրությունն ու սեռականը արտահայտում են սահմանափակման իմաստ։

Օրինակներ՝ Սոքա ... ի հարիւրսն փոքր, և մեծ ի մէջ հազարացն (Ա, Մնաց., ԺԲ)։ Շնորհեաց նմա պատկեր լուսազարդ և հասակ փառաց անհամեմատ ի մէջ ամենայն մսեղեաց բանական ազգի (ԹԱՊՏԱ, 4,

ԺԱ)։ Յաջորդէ զիշխանութիւնն Աշոտ Պատրիկ, այր երևելի և նախամե-**ծար ի մէջ նախարարացն** Հայոց (Ղև., Պատմ., Ե)։

Ածականի լրացումը կարող է արտահայտվել նաև **առաջի** նախադրությամբ և սեռականով՝ սահմանափակման իմաստով։

**Օրինակներ՝ Փառաւոր առաջի արքային** (Եսթ., ԺԲ)։ **Ընդունելի** են **առաջի Տեառն** ճանապարհք մարդոց արդարոց (Առակ., ԺԵ)։

## ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ

Դերբայներից ածականի լրացում դառնում է անորոշը, ընդ որում այն կարող է հանդես գալ նաև հոլովված ձևերով՝ կատարելով գոյականի դեր։ Այսպես, **արժանի, արժանաւոր, բաւական, կարօտ** ածականները կարող են լրացում ստանալ անորոշ դերբայի տրական հոլովով այնպես, ինչպես նույնաձև գոյականով։

**Օրինակներ՝** Շինէ և զչքնաղ ոմանս և **զզարմանալոյ արժանաւորս** (Մխ, 1, ԺԶ)։ Այլ և զմեծամեծս և **զզարմանալոյ արժանաւորս** յարուեստից (Ն. տ., Բ)։ **Արժանի** իսկ էին նոքա՝ **վրիպելոյ** ի լուսոյ (Իմաս., ԺԸ)։ **Կարօտ** է **կամելոյն** առ անձինն անդորրութիւն (ԳՆՄՈ, ԾԱ)։ Դու միայն ես սուրբ, և **արժանի երկրպագելոյ** (Յայտն., ԺԵ)։ **Թաղելոյ** անգամ չէին **բաւական** (Իմաս., ԺԸ)։ Եւ է որ արդարև **արժանի զարմանալոյ** ի վեր քան զմիտս (ԹԱՊՏԱ, 4, Է)։ Եւ էր լուրն այն **արժանի լալոյ** և **ողբալոյ** (ՂՓՊՀ, ԿԳ)։

Որոշ ածականներ կարող են ստանալ անորոշ դերբայի գործիականով խնդիր։

**Օրինակներ՝** Ինքն էր **գեղեցիկ տեսանելով** (Բ, Թագ., Գ)։ Գոյր տեսլեամբ հրեշտակական ... սիրով անկեղծաւոր, **ուսուցանելով անձանձրոյթ** (Մխ, 3 ԿԷ)։

Սակայն ինչպես այս, այնպես էլ շատ ածականներ կարող են ստանալ անորոշ դերբայի անփոփոխ ձևով արտահայտված լրացում։ Այս դեպքում, ինչպես անցյալի քերականներն էին ասում, տեղի է ունենում խնդրառության արգելում։

**Օրինակներ՝ Սովոր** է այս բաժակ **այրել** զանտեղիսն (Ագ., 541)։ **Պատրաստ** է սուրն **տալ** ի ձեռս կոտորչի (Եզեկ., ԻԱ)։ Ո՞ է **արժանի բանալ** զգիրս և **լուծանել** զկնիք նորա (Յայտն., Ե)։ Ոչ եմ **բաւական պատմել** զանցս անցիցն կորստականութեանն նոցա մոլորութեանն (ԹԱՊՏԱ, 3, Զ)։ Մինչև լիշիք դուք **արժանի պատել** զմարմինս նոցա (Ագ., 224)։

Ոչ իսկ համարիմ զանձն **արժանի** արդարոցն **լինել** շարչարակից (ՅԴՊՀ, 279)։ Չեմ **արժանի** **յիշել** զանուն քո օրհնեալ (ԳՆՄՈ, Ծ)։ Չեմ **բաւական** **բառնալ** զկօշիկս նորա (Մատթ., Գ)։

## ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱԿԲԱՅՈՎ

Ածականի լրացում դառնում են հիմնականում աստիճանի և չափի մակբայները՝ կազմելով համեմատության աստիճան։ Այսպես, **կարի**, **յոյժ**, **շատ**, **սաստիկ**, **բիւրապատիկ**, **ամենևին** և այլ մակբայներ, կապակցվելով որակական ածականների հետ, արտահայտում են գերադրական աստիճանի իմաստ։ Ընդ որում ածականը հանդես է գալիս դրական աստիճանի ձևով։

**Օրինակներ՝** Զի այր **մեծ** էր յոյժ (Բ, Թագ., ԺԹ)։ Մի **կարի** **արդար** լինիր (Ժողով., Է)։ Որ **կարի** **չար** առնէ (Առակ., ԺԹ)։**Յոյժ** **խոր** են խորհուրդք քո (Սաղ., ՂԱ)։ **Շատ** **ճակառակ** եկաց բանից մերոց (Բ, Տիմոթ., Դ)։ Եղեն փայլուն **սպիտակ** **յոյժ** (Մարկ., Թ)։ Շուշան էր **փափուկ** **յոյժ** (Դան., ԺԳ)։ Հալաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս թուով **յոյժ** **նուազունս** (Մխ, 1, ԺԱ)։ **Կարի** **ցած** և մթին էր շինուածն (Սեբ., ԻԵ)։ **Բիւրապատիկ** քան զարեգակն **լուսաւոր** է (Սիրաք., ԻԳ)։ Քանզի էր արդարև **սաստիկ** **հզօր** (Մխ, 2, Ը)։ Քանզի մնաս յայտսիկ անբաւ և անհետազօտելի, **ամենևին** **բարի** (ԳՆՄՈ, ԻԷ)։

Այս մակբայները կարող են դրվել նաև բաղդատական աստիճանի վրա։

**Օրինակներ՝** Այլ առաւել ևս որ **կարի** **դժնդակագոյն** է և աշխարհի կորստեան պատճառ (ՂՓՊՀ, ՀԵ)։ Որ էր կին իմաստուն ... և **յոյժ** **խոհեմագոյն** միանգամայն (ԹԱՊՏԱ, 2, Զ)։ Անջրպետեաց ի մէջ նոցա առու մի սահանակարկաջ յորդահոս և **յոյժ** **խոռագոյն** (Ն. տ., 3, ԻԹ)։ **Յոյժ** **ջերմագոյն** պահէին (ՄԿՊԱԱ, 1, ԻԱ)։ Հայեցեալ տեսին լոյս սաստիկ յեկեղեցւոջ և **աճաւոռագոյն** **յոյժ** (ՄԿՊԱԱ, 1, ԺԸ)։

Ըստ էության առավելական կամ նույնիսկ գերադրական աստիճանների արժեք ունեցող որոշ բարդ ածականներ, ինչպես՝ **մեծամեծ**, **չարաչար**, **ֆաջայայտ** և այլն, նույնպես կարող են ստանալ աստիճանի և չափի մակբայով արտահայտված լրացում։

**Օրինակներ՝** Պատահեցին նմա դիւահարք երկու, ելեալք ի գերեզմանացն, **չարաչարք** **յոյժ** (Մատթ., Ը)։ Եհար Տէր զժողովուրդն հարուածս **մեծամեծս** **յոյժ** (Թիւք, ԺԱ)։ Թէ զինչ անուն է մեր՝ **կարի** **ֆաջահայտ** է քեզ (ԹԱՊՏԱ, 3, Զ)։

Երբեմն աստիճանի մակբայները գործածվում են կրկնավոր ձևով կամ երկուսի հարադրմամբ։

Օրինակներ՝ Եղեր գեղեցիկ յոյժ յոյժ (Եզեկ., ԺԶ)։ Կարի յոյժ ի հեռաւոր տեղեաց դիմեալք յօր կարգադրութեան նորա կատարեն (ՂՓՊՀ, ԺԸ)։ Ընդ այն ... կարի յոյժ դժկամակ այրն Աստուծոյ լինէր (ՄԿՊԱԱ, 2, ԻԹ)։ Ոչ կարի յոյժ փոքրագոյն է իրս (Ղև., Պատմ., ԺԴ)։ Հարեալ սաստկէին ի նոցունց հարուածս սաստիկս յոյժ յոյժ (Ն. տ., ԻԷ)։

Առաւել մակբայով կազմվում են որակական ածականների առավելական, իսկ սակաւ, դոյզն մակբայներով՝ նվազական բաղդատական աստիճանները։ Ընդ որում ածականը կարող է դրվել ինչպես դրական, այնպես էլ բաղդատական աստիճանով։

Օրինակներ՝ Թուզ քաղցր և առաւել քաղցր. և թուզ ժանտ և առաւել ժանտ (Երեմ., ԻԴ)։ Քան զամենայն առաւել պատուական է երկիրն (Իմաս., ԺԲ)։ Առաւել օգտակար իսկ է յամենայն աշխարհակիր զբօսանաց առանձինն սահմանել (Ագ., 853)։ Նա առաւել բարձրագոյն և մեծ էր (Գ, Թագ., Գ)։ Որ այժմ փոխեալ տեղւոյ քաղաքին սակաւ բացագոյն Բաղդատ անուանի (ՍՏՏՊ, 3, ԼԷ)։ Նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս ... և չորեքկուսիս ի վերայ յարուցանել յամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ (Մխ, 2, ԾԶ)։ Ահա որ ինչ առ մերով ժամանակաւս եղեալ կամ դոյզն ինչ հեռի՝ գրուցեցից քեզ անսխալ (Ն. տ. 3, Ա)։ Ընկղմեցաւ ... Հանուրց չարութիւն, իբր դոյզն մռայլ (ԳՆՄՈ, ԻԹ)։

Պետք է նշել, որ որակական ածականների բաղդատական աստիճանի կազմությանը կարող են մասնակցել նաև որոշ ցուցական և հարաբերական դերանուններ, ինչպես՝ այդչափ, այնչափ, որչափ:

Օրինակներ՝ Տեսանե՞ս որչափ մերձաւոր և ծանօթ էին Աստուծոյ (Ագ., 282)։ Այդչափ անմի՞տ էք (Գաղ., Գ)։ Այնքան կոյր չեմ, թէ զԱրեաց ոյժ և տեսանել անգամ չգիտեմ (ՂՓՊՀ, ԿԵ)։ Դուք այդչափ բազում քահանայք առեալ տարադէմ և հեռի ուղեգնացութեան ետուք ձեզ (ՅՄՊՏ, 247 բ)։ Այնչափ էր հզօր, որ մարդոյ քան զմինն այլ ոչ կրկնէր (Ն. տ., 327ա)։

Ածականի լրացում կարող են դառնալ նաև ժամանակի որոշ մակբայներ, ինչպես՝ յաւէտ, յաւիտենից, յաւիտեան, միշտ:

Օրինակներ՝ Արար զնա բլուր հողոյ՝ անշէն յաւիտեան մինչև ցայսօր (Յեսու, Ը)։ Արքայ Սողոմոն օրհնեալ է, և աթոռ Դաւթի պատրաստ առաջի Տեառն յաւիտեան (Գ, Թագ., Բ)։ Վիհ խաւարին յաւիտենից

պահեալ է (Յուդա., 13)։ Որ **յաւիտենից**... **գեղեցիկ** արարածք (Գ, Մակ., Ե)։ Առ սակ նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ ի ներհակ վերջնոյս **յաւէտ ծանրակիր** (ԳՆՄՈ, ԺԶ)։ Զկնի Մահմէտի այլ ոստիկան ի Հայս առաքեցաւ՝ Աբդլլահ անուն, այր ժանտ ժպիրհ և ապարասան և **յաւէտ չարաբարոյ** (ՅԴՊՀ, 94)։ Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեան, աստուածութիւն անճառ, **միշտ բարի** (ԳՆՄՈ, ԼԴ)։ Լուր ... սուրբ սուրբ և միայն **միշտ սուրբ** (Ն. տ., ՂԳ)։ Արդ վրիպեալս ես **յաւէտ ամենապատիժ, միշտ դժնեայ** (Ն. տ. ԽԶ)։

Պետք է նշել, որ մակբայ լրացումը կարող է պահպանվել նաև ածականների փոխանվանական գործածության դեպքում։

**Օրինակներ՝** Արասցես ընդ ամենայն քաղաքս ընդ **յոյժ հեռաւորս** (Բ, Օրէնք, Ի)։ Յորս անկեալ դնէր բազմութիւն **յոյժ հիւանդաց** (Յովհ., Ե)։ Մի՛ ընդհարկանիր... բնութեամբ բարիդ ընդ ի բնէ չարիս... փառաւորեալդ անփոփոխ ընդ **ամենեին անարգիս** (ԳՆՄՈ, ԺԷ)։

## ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄԸ ԱԾԱԿԱՆՈՎ

Սակավ դեպքերում որակական ածականի համեմատության աստիճանը կարող է կազմվել նաև ածականների միջոցով, որոնք գործածված են մակբայաբար։

**Օրինակներ՝** Եւ են որ ոչ են **ստոյգ արդար** (ՂՓՊՀ, ԿԴ)։ Որով և միշտ հաստատեալ պահի ի մեզ բանն տէրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան և կնիք հաստատութեան առ հաշտարարն միջնորդ՝ **երկնային** անմահ կենդանի և **մշտնջենաւոր բարեխօս** (ԳՆՄՈ, ԺԱ)։ Պահեա ինձ շնորհ ամենապայծառ գանձուցդ մնացականաց, որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ ի քէն, **անսահման բարի** (Ն. տ., ՀԸ)։

Հնարավոր է, սակայն, ածականի մոտ դրված ածականը մեկնաբանել և՛ իբրև նրա լրացում, և՛ համադաս անդամ։ Օրինակ՝ **Տրտում** եմ **անմխիթար** մինչև ի մահ (ՂՓԹ)։

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Գրաբարում բայը լրացումներ էր ստանում գոյականով, մակբայով, դերբայներով, ածականով, դերանուններով։ Այս լրացումները իմաստով տարբեր են, առավել ևս տարբեր են իրենց ձևով։ Ամենից բազմազանը գոյականով արտահայտվող լրացումներն են, որոնց քննությունը պահանջում է առավել շատ ժամանակ։ Մյուս լրացումները համեմատաբար քիչ են և իմաստով էլ ոչ բազմազան։ Յուրահատուկ են դերանունները, որոնց գործածությունը բայի լրացման դերում նման է համապատասխան խոսքի մասերին (գոյական, ածական, մակբայ)։ Այս պատճառով էլ դերանուններով արտահայտված լրացումների քննությունը չենք անջատում համապատասխան խոսքի մասերի լրացական դերի քննությունից։*

## I. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆՈՎ

### 1. ԲԱՅԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

*Բայի լրացման դերում գոյականը և նրան հարաբերակից դերանունները հանդես են գալիս տարբեր ձևերով. մի դեպքում թեք հոլովաձևերով (տրական, հայցական, բացառական, գործիական), երկրորդ դեպքում նախդրավոր և նախադրությամբ կառույցներով։ Այս վերջինն էլ բաժանվում է երկու ենթախմբի՝ նախդրավոր կառույցներով լրացումներ և նախադրությունների ու դրանց խնդիրների միջոցով արտահայտվող լրացումներ։*

**Սեռականով լրացումը ներկա (ենթակայական) դերբայի մոտ.—** *Այս դերբայը ամենից շատ է համատեղում գոյականի և բայի հատկա-*

նիշներ, ուստի և նրա մոտ սեռականով լրացումը որքան խնդրի, նույնքան և հատկացուցչի իմաստ ունի։ Գրաբարում ներկա դերբայի մոտ սեռականի գործածությունը բավական նկատելի է[1]։ Լրացյալի դերում հանդես են գալիս **տալ, խոստովանել, գտանել, տեսանել, սիրել, բերել, յօրինել** և այլ բայեր։

**Օրինակներ**՝ Ինքն է **տեսօղ գործոց** մարդկան (Յովբ., ԼԴ)։ Եւ ուրախութիւն առ **իւրեանց սիրողս** (Ագ., 2)։ Ո՞ այն որ իցէ **հատուցանող վաստակոցն** քոց (Ն. տ., 61)։ Ընդ Պարսից **քէշին գտողս**, ապաւինեալ ի շնորհսն Աստուծոյ, մատիցուք ի պայքար (Եղն., 1, ԻԸ)։ Վիճակաւորք հպարտք, դատարկակացք, զրաբանք, ծոյլք, **ատեցողք արուեստից** և վարդապետական **բանից, սիրողք վաճառաց** և **կատակերգութեանց** (Մխ, 3, ԿԸ)։ Վկայեալ են ընտրութիւնք քո՝ **տեսողք ծածկութից** (ԳՆՄՈ, Ի)։ Օծումն կենաց պարգևատրեսցես **քո աղաչողիս** (Ն. տ., ԿԲ)։ Որ ամենայն **բարութեանց տուողն է** (ՄԿՊԱԱ, 2, ԻԱ)։ Զրպարտիմ ի ձէնջ իբրև զերից **աստուածոց խոստովանօղ** (Ղև., Պատմ., ԺԴ)։ Որք **տեսօղք** լեալ էին **գործոցն** (ԹԱՊՏԱ, 3, ԻԹ)։ Սա էր լի գործովք բարեաց ... **ընդունող որբոց և այրեաց** (Ն.տ., 4, Գ)։

**Սեռականով լրացումը անորոշ դերբայի մոտ.**— Գրաբարում անորոշ դերբայը ևս ինչ-որ չափով համատեղում էր գոյականի իմաստ, և այդ պատճառով էլ երբեմն նրա մոտ կարող էր դրվել սեռականով լրացում, որը ուղիղ խնդրի և հատկացուցչի արժեք ունի։ Այսպիսի լրացում կարող են ստանալ **լսել, շինել, աւրել, սպանանել, սերել, ունել** և այլ բայեր։

Սեռականով լրացումները անորոշ դերբայի մոտ դրվում են երկու դեպքում։ Առաջինն այն է, երբ դերբայի նախադաս լրացումը նմանվում է սեռականով դրված լրացյալին։ Այստեղ փաստորեն առկա է հոլովների ձգողության երևույթը։ Այսպես, Յաղագս **ատրուշանացն աւերելոյ** որ աւէքդ և կամ **կրակին սպանանելոյ** (ՂՓՊՀ, ԽԴ) նախադասության մեջ **ատրուշանացն** և **կրակին** սեռականները նմանվել են **աւերելոյ** և **սպանանելոյ** լրացյալներին, որոնք դրված են սեռականով՝ յաղագս նախադրության մոտ։ Այլապես դրանք պիտի լինեին **զատրուշանս** և **զկրակն**: Այսպես է նաև հետևյալ նախադասություններում։

Եթէ յիւր կին ոչ օրինօք ամուսնացեալ մերձենայցէ վասն որդեծնութեան և **զաւակի սերելոյ**, բարիոք է մերձաւորութիւնն (Եղն., 2, Ա)։

---

[1] Այս երևույթն առկա է նաև ժամանակակից հայերենում. տե՛ս մեր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», էջ 200—201։

Նա և օձն, որ է սատանայ, յիրաւի պաշտեցաւ՝ վասն ընդ անագորոյն բշնամութեան ընդ մարդոյն ունելոյ (Ն. տ.)։ Լուր ողորմութեամբ, տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս (ԳՆՄՈ, ՂԳ)։

Երկրորդ դեպքում լրացման գործածությունը չի պայմանավորված լրացյալի ազդեցությամբ։

Օրինակներ՝ Դնէին ունկն ամենայն ժողովուրդն ի լսել ամենայն գրելոց օրինացն (Գ, Եզր., Ը)։ Կապումն Լիկիանոսի, և փոխումն արքունեացն ի Հռոմէ, և շինել Կոստանդնուպոլսի (Մխ, 2, ՁԸ)։ Նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց (Ագ., 814)։

**Սեռականով լրացումը անցյալ դերբայի մոտ.**— Անցյալ դերբայը երբեմն այլ հոլովաձևերի կամ կառույցների փոխարեն ստանում է սեռականով լրացում։ Այսպես, հեծանել բայը լրացում ստանում է ի նախդիրով և հայցականով (հեծանել ի ձի, — յուղտ և այլն)։ Սակայն հեծեալ անցյալ դերբայն ստացել է սեռականով լրացումներ հետևյալ նախադասություններում. Ոչ մոռացայ և զոր ասացեր ի մարգարէէն Եսայեայ զասացեալն զհեծելոյն իշոյն և ուղտուն (Ղև., Պատմ., ԺԴ)։ Արձակեաց երկրորդ հեծեալ մի ձիոյ (Դ, Թագ., Թ)։ Այսպես, նաև հաւատալ բայի հաւատացեալ, տանել բայի տարեալ դերբայներն ունեն սեռականով լրացում. Ոչ անտես առնէր զհաւատացեալս անուան իւրոյ (Ն. տ., Գ)։ Եւ այսպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ (Ագ., 859)։

Ինչպես նշվեց վերևում, բայի լրացումներն արտահայտվում են գոյականի (և հոլովվող այլ բառերի) տրական, հայցական, բացառական և գործիական հոլովներով։

Այս կամ այն հոլովով լրացում ստանալը պայմանավորված է լրացյալ բայի խնդրառական հատկությամբ։

Գրաբարում, անշուշտ, կան բայերի խնդրառության որոշակի կանոններ, որոնցով այս կամ այն իմաստային խմբի բայերն ստանում են համապատասխան հոլովով դրված խնդիրներ։ Խնդրառական որոշակի կանոններ ունեցող բայերի թիվը շատ մեծ է։ (Դա կտեսնենք ստորև՝ ըստ իմաստների խնդիրները քննելիս)։

Սակայն նկատելի է նաև, որ խնդրառության տեսակետից գրաբարյան բայերը դրսևորում են որոշ անհետևողականություն։ Բազմաթիվ բայերի խնդրառությունը տատանվում է։ Մի շարք դեպքերում նույն բայերը ստանում են տարաբնույթ լրացումներ, որոնք իմաստային տարբերություններ չունեն։ Այսպես, հարկանել բայի մոտ հանգման իմաստով լրացումը կարող է դրվել ի, ընդ նախդիրներով և տրականով,

զ նախդրով և տրականով, զ նախդրով և բացառականով, զ նախդրով և գործիականով, ընդ, ի նախդիրներով և հայցականով։

Օրինակներ՝ *Դև ուրեմն հարաւ* ի քեզ *(Բուզ., 5, Ը)*։ Յարում *սատակալքս հարեալ սատակեցան զորքն Հերովդի (Մխ., 2, ԻԹ)*։ *Մի ձեռն յանձինս հարկանիցէք (Ագ., 652)*։ *Մի երբէք* հարցես զքարի *զոտն քո (Ղուկ., Դ)*։ *Մի* հարից *զքեզ* ընդ գետին *(Բ, Թագ., Բ)*։ *Անօրէնք հուր* հարին զքաղաքէ *(Առակ., ԻԹ)*։ *Յանկարծակի հուր* հարեալ զնովաւ *(Ն.տ.)*։ *Համբառնայր հարկանել* ընդ վիմին *հաստատնոյ (Ագ., 142)*։

Հայել *բայը ուղղության իմաստով լրացում ստանում է տրականով,* ի, ընդ, առ *նախդիրներով և հայցականով,* զ *նախդրով և գործիականով,* ի վերայ, յանդիման, ընդդէմ, զկնի *նախադրություններով և սեռականով և այլն։*

Օրինակներ՝ *Որ հայէր* ընդ արևելս *(Եզեկ., ԽԳ)*։ *Հայեցեալ Յիսուսի* զնոքօք *լի ցասմամբ ... ասէ (Մարկ., Բ)*։ *Զիմոց* բարուցս զկնի *հայեցեալ (Բ, Մակ., Թ)*։ *Հայեաց* ի վերայ *Աբրահամեան* զաւակի *(Գ, Մակ., Զ)*։ *Հայեցաւ շուրջ* զամենեքումբք *(Մարկ., ԺԱ)*։ *Հայեցան* ընդդէմ Յովնաթանու *(Ա, Թագ., ԺԴ)*։ *Հայեսցիս* ի նմա մտօք *(Յովբ., Է)*։ *Հայեցաւ Աստուած* յԱբէլ *(Ծնն., Դ)*։ *Հայեսցին* առ իս *(Զաքար, ԺԲ)*։ *Հայէր նա ուղիղ* ննջեցելոցն *(Բ, Մակ., ԺԲ)*։ *Երկնչէր հայել* առաջի Աստուծոյ *(Ելք, Գ)*։

Խօսել *բայը հանդման, միասնության իմաստներով լրացում է ստանում* ընդ, առ *նախդիրներով և տրականով,* ի, ընդ, առ *նախդիրներով և հայցականով։*

Օրինակներ՝ *Խօսեցաւ զամենայն բանս զայսոսիկ* յականջս *նոցա (Ծնն., Ի)*։ *Խօսեցան* ընդ արս *քաղաքին (Ն. տ., ԼԴ)*։ *Խօսեցաւ* ընդ նմա *(Ն. տ., ԼԵ)*։ *Եկի խօսել* առ արքայի *տեառն իմոյ (Բ, Թագ., ԺԴ)*։ *Խօսեցաւ* յԱստուածն *Երուսաղեմի (Բ, Մնաց., ԼԲ)*։ *Բանս* առ բարձրեալն *խօսիցի (Դան., Է)*։ *Խօսեսցիս* առ նոսա *զպատգամս իմ (Եզեկ., Գ)*։

*Նույն բայը վերաբերության իմաստով լրացում է ստանում* զ *նախդրով և բացառականով (պատմական բացառական),* ի վերայ, վասն, յաղագս *նախադրություններով և սեռականով։*

Օրինակներ՝ *Խօսեցաւ* զմէնջ *ի մահ (Եսթեր, ԺԵ)*։ *Խօսեցար* յաղագս տան *ծառայի քո (Ա, Մնաց., ԺԷ)*։ *Խօսեցաւ* վասն քո *չարիս (Բ, Մնաց., ԺԸ)*։ *Զոր խօսեցայ* ի վերայ տան *նորա (Ա, Թագ., Թ)*։

Հասանել *բայը հանգման իմաստով լրացում է ստանում տրականով,* ի *նախդրով և տրականով,* ի, առ *նախդիրներով և հայցականով,*

ի վերայ, ճանդէպ նախադրություններով և սեռականով, մինչև, մոտ նախադրություններով, ի նախդրով և հայցականով։

Օրինակներ՝ Եհաս անտեաց (Եբր., ԴԵ)։ Գուցէ հասանիցեն ինձ չարիքն (Ծնն., ԺԹ)։ Որոյ գլուխ իւր հասանէր յերկինս (Ն. տ., ԻԸ)։ Հասանէին առ նա ամենայն որդիքն Ղևեայ (Ելք., ԼԲ)։ Հասցեն ցԳաբաաէլ (Յեսու, ԺԸ)։ Լուր եհաս մինչև առ Յովաբ (Գ, Թագ., Բ)։ Հասաք ճանդէպ Քիայ (Գործ., Ի)։ Յատենի կայսեր հասեալ կամ (Ն. տ., ԻԵ)։ Հասաք առ Կնիդեաւ (Ն. տ., ԻԷ)։ Հասին մինչև ի ձորն Ողկուզի (Բ, Օրէնք, Ա)։ Մօտ հասանիցէք յորդիսն Ամոնայ (Ն. տ., Բ)։ Հասցես զՓաղաՓաւ (Դատ., Թ)։ Ահ խաւարին հասանէր ի վերայ նորա (Ծնն., ԺԵ)։ Մինչև առ ձեզ հասաք (Բ, Կորն., Ժ)։

Մատուցանել բայը մատուցման իմաստով լրացում է ստանում տրականով, ի, առ նախդիրներով և տրականով, առ, ի նախդիրներով և հայցականով, առաջի նախադրությամբ և սեռականով։

Օրինակներ՝ Մատոյց պատարագ Աստուծոյ Հօր իւրոյ Իսահակայ (Ծնն., ԽԶ)։ Մատո առ իս զդոսա (Ն. տ., ԽԸ)։ Նուիրեաց ի նմա նուէրս (Ն. տ., ԼԵ)։ Մատուցէ առաջի Տեառն (Ղևտ., Գ)։ Մատուցիր ի նմա զողջակէզս (Ելք., Ի)։ Մատուցես զզուարակն առ դրան խորանին վկայութեան (Ն. տ., ԻԹ)։

Առնել բայի մոտ միասնության խնդիրը դրվում է և ընդ+հայցական, և՛ առ+հայցական կառույցներով։

Օրինակներ՝ Զձեզ ինքն Տէր բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսին (Ա, Թեսաղ., Գ)։ Ընթրիս արարից առ նա, և նա ընդ իս (Յայտն., Գ)։

Այսպես նաև ամուսնանալ բայի մոտ լրացումը կարող է դրվել մերթ ընդ + տրական, մերթ ընդ + հայցական կառույցներով։

Օրինակներ՝ Ամուսնասցիս ընդ նմա (Ծնն., ԼԸ)։ Ամուսնացան ընդ դստերս (Ա, Եզր., Ը)։

Անցանել բայի խնդիրը կարող է արտահայտվել առ + գործիական, առ + հայցական կառույցներով, բացառականով։

Օրինակներ՝ Առ լերամբք անցցուք (Թիւք, Ի)։ Արք մեծամեծք առ Քեզ անցցեն (Եսայի, ԽԵ)։ Որ անց յինէն (Գ, Թագ., ԻԲ)։

Բաժանել բայի մոտ վերաբերման խնդիրը կարող է արտահայտվել և՛ հայցականով, և՛ ի կամ ընդ + հայցական կառույցով։

Օրինակներ՝ Բաժանեցէք զերկիրն եօթն բաժին (Յեսու, ԺԸ)։ Բաժանէ զաւար ընդ բշնամանօղս (Առակ., ԺԶ)։ Բաշխեցին ի գունդս գունդս (Ա, Մակ., Զ)։

խառնել բայի մոտ հանգման խնդիրը կարող է արտահայտվել և՛ տրականով, և՛ ի + հայցական, ի + տրական, ընդ + տրական, ընդ + հայցական կառույցներով։

Օրինակներ՝ Ոչ խառնիմք ի կրօնն Քաղկեդոնի և ընդ վարդապետութեանն Բակուրայ (ՄԿՊԱԱ, 3, Թ)։ Խառնեսցես զփեղկսն ընդ միմեանս (Ելք, ԻԶ)։ Խառնեաց ի նմա ընդ գործուածոյ (Ղևտ., Ը)։ Տէր խառնեաց նոցա ոգի մոլորութեան (Եսայի, ԺԹ)։

Անկանել բայի լրացումը կարող է դրվել ի + տրական, ի + հայցական, առ + գործիական կառույցներով։

Օրինակներ՝ Անկաւ յերկիր (Մատթ. ԺԳ)։ Անկաւ յապառաժի (Ն. տ.)։ Անկաւ առ ճանապարհաւ (Ն. տ.)։

Անշուշտ, այս կամ այն իմաստի արտահայտման ձևերից մեկը կամ երկուսը ավելի շատ են գործածվում։ Այսպես, հայել բայի մոտ ուղղության իմաստով լրացումն ավելի շատ ընդ, ի նախդիրներով և հայցականով է դրվում, հասանել բայի մոտ հանգման իմաստով լրացումը ավելի շատ ի, առ նախդիրներով և հայցականով է արտահայտվում։

Նկատելի է նաև, որ գրաբարում նույն իմաստով լրացումը երբեմն տարբեր արտահայտություն ունի՝ կախված լրացման դրսևորումից։ Այսպես, առաքել բայի մոտ ուղևորության իմաստով լրացումը անձ ցույց տվող բառերով արտահայտվելիս դրվում է առ նախդիրով և հայցականով, իսկ տեղ ցույց տվող գոյականներով արտահայտվելիս՝ ի կամ ընդ նախդիրներով և հայցականով։

Օրինակներ՝ Առաքեաց առ սպասաւորսն իւր (Ծնն., ԼԸ)։ Առաքեաց ընդ ամենայն թագաւորութիւնն իւր ի գաւառսն ամենայն (Եսթ., Ա)։

Պատահում է նաև, որ նույնիմաստ լրացման տարբեր դրսևորումները որևէ բանով չեն պայմանավորված։ Այսպես, հաւատալ բայի հանգման խնդիրը հավասարապես կարող է արտահայտվել և՛ տրականով, և՛ ի նախդրով ու հայցականով, ինչպես և որոշյալ հայցականով։

Օրինակներ՝ Հաւատաց Աբրահամ Աստուծոյ (Ծնն., ԺԵ)։ Հաւատացին յԱստուած և ի Մովսէս (Ելք, ԺԴ)։ Զճշմարիտն ձեր ո՞ հաւատասցէ (Ղուկ., ԺԶ)։ Ինքն Քրիստոս ոչ հաւատայր զանձն նոցա (Յովհ., Բ)։

Անշուշտ, գրաբարում բայի ներգործականության դրսևորման հիմնական միջոցը հայցականով ուղիղ խնդիրն է։ Սակայն երբեմն նկատվում է ուղիղ և անուղղակի խնդիրների սահմանի խախտում. մի շարք բայերի մոտ նույնիմաստ լրացումը մերթ հայցականով, մերթ տրականով կամ այլ ձևով է դրվում։

Օրինակներ՝ Համբուրեաց զորդիս իւր և զդստերս (Ծնն., ԼԱ)։ Ընդ որում ես համբուրեցից (Մատ., ԻԶ)։ Պատմեսցէ զնմանէ (Բ, Օրէնք, ԺԳ)։ Զազզատոհմ նորա ո՞ պատմեսցէ (Գործ., Ը)։ Որք ուսուցանէին զբազմութիւնն (Ա, Եզր, Թ)։ Որք ուսուցանէին ժողովրդեանն (Ն. տ.)։ Լուայ զձայն քո ի դրախտի աստ (Ծնն., Գ)։ Լուարուք ձայնի իմում (Ն. տ., Դ)։ Լուաւ զորտունջ ձեր (Ելք, ԺԶ)։ Լսելով լուայց աղաղակի նոցա (Ն. տ., ԻԲ)։

Բայական խնդրառության մասին խոսելիս չի կարելի անտեսել մի հանգամանք։ Այդ այն է, որ նույն ձևը կարող է ծառայել տարբեր իմաստների դրսևորմանը։ Սա վերաբերում է ոչ միայն թեք հոլովաձևերին, այլև նախդրավոր և նախադրությամբ կառույցներին։ Ընդ որում սա վերաբերում է թե՛ տարբեր բայերի, թե՛ նույն բայի մոտ հանդես գալուն։ Այսպես, ի + հայցական կառույցը առաքել բայի մոտ մի դեպքում ուղղորության, մյուս դեպքում նպատակի իմաստներին է ծառայում։

Օրինակներ՝ Առաքեցին յԵրուսաղեմ (Յուդիթ, ԺԱ)։ Առաքեցեր ի վկայութիւն զմարգարէ (Նէեմի, Թ)։

Նույն կառույցը օրհնել բայի մոտ ծառայում է սահմանափակման, տեղի և միջոցի իմաստներին։

Օրինակներ՝ Օրհնեցաք զձեզ յանուանէ Տեառն (Սաղ., ՃԻԸ)։ Օրհնեսցէ զմեզ Տէր ի Սիովնէ (Ն. տ., ՃԼԳ)։ Օրհնեցէք մեզ յօրհնութենէն Սիոնի (Ն. տ. ՃԼԶ)։

Ի վերայ+սեռական կառույցը խօսել բայի մոտ մի դեպքում ցույց է տալիս տեղ, այդ դեպքում՝ վերաբերություն։

Օրինակներ՝ Զոր խօսեցաւ բանիւ Տեառն ի վերայ սեղանոյն (Գ, Թագ., ԺԳ)։ Տէր խօսեցաւ ի վերայ քո չարիս (Ն. տ. ԻԲ)։

Ընդ+հայցական կառույցը նույն բայի մոտ ծառայում է միասնության-հանգման և ժամանակի իմաստներին։

Օրինակներ՝ Խօսեցայ ընդ ձեզ ընդ առաւօտս (Երեմ., Է)։ Խօսեցայց ընդ նոսա (Ն. տ., Ե)։

Բացառականը լսել բայի մոտ կարող է արտահայտել և՛ ժամանակի, և՛ տեղի իմաստներ։

Օրինակներ՝ Ես լսէի ի ծննդենէ իմմէ (Եսթ., ԺԴ)։ Լուաւ ինձ ի տաճարէ սրբոյ իւրմէ (Սաղ., ԺԷ)։ Լուաւ ինձ յերկնից (Ն. տ., ԺԹ)։

Ավելի հաճախ են հանդիպում նույնիմաստ լրացման տարբեր ձևերով դրսևորումները տարբեր բայերի մոտ։ Այսպես, միջոցի իմաստը շատ բայերի մոտ գործիականով է արտահայտվում։

Օրինակներ՝ Ուսուցանէ նշանացի մատամբք (Առակ., Զ)։ Արկցէ գան սաստիկ բրօք դալարովք (Ագ., 74)։ Տեսէք իսկ աչօք ձերովք (Ն. տ., 249)։ Այլովքն խոնարհագունիւք նմա պաշտօն մատուցանեմք, և որովք նմա զպաշտօնն մատուցանեմք, հարկ է և զնոսա ողոքել զոհիւք և նուիրօք (Եղն., 1, Ա)։

Այլ բայեր, սակայն, միջոցի իմաստով լրացում են ստանում նաև ի+հայցական, ի ձեռն+սեռական կառույցներով։

Օրինակներ՝ Երդուիր ինձ ի Տէր (Ա, Թագ., ԻԴ)։ Անկան ամենեքին ի սուր սուսերի (Յեսու, Ը)։ Անկանիցիք ի սուր (Եզեկ., ԺԱ)։ Ի հրամանս կենաց գնացէ (Ն. տ., ԼԳ)։ Առաքեսջիք ի ձեռն նոցա առ իս (Բ, Թագ., ԺԵ)։

Ընդհանրապես գրաբարում շատ մեծ թիվ են կազմում տարաձև խնդրառություն ունեցող բայերը։ Վերը նշվածներին կարելի է ավելացնել նաև ազդ առնել, ածել, աղաղակել, աղաչել, ամաչել, անցանել, աջողել, առաջնորդել, առաքել, առնուլ, ասել, արհամարհել, գթալ, դատել, երկիր պագանել (երկրպագել), զգուշանալ, հաղորդել, հաւատալ, հեծանել, հոգալ, մերձենալ, մտանել, յարձակել, յուսալ, ուխտել, ուրանալ, պատասխանել, սկսանել, վայելել, վաստակել, փոխել և այլն։ Այսպես, անցանել-ը լրացում ստանում է ընդ, ըստ, ի+հայցական, զ+գործիական, ի վերայ+սեռական կառույցներով, առաջնորդել-ը տրական, գործիական հոլովներով, ի, ընդ+հայցական, ի+տրական կառույցներով, երկիր պագանել-ը՝ տրականով, ի+տրական, ի+հայցական, առաջի, ի վերայ+սեռական կառույցներով, յարձակել-ը տրականով, ի+տրական, ի+հայցական, ի վերայ+սեռական, զհետ+սեռական կառույցներով։

Տարաձև խնդրառության մասին խոսելիս չի կարելի չնշել այն երևույթը, որ նշված բայերը, բացի խնդիրներից, կարող են ստանալ նաև պարագայական բնույթի այլևայլ լրացումներ, որոնք կապ չունեն խնդրառության հետ։ Այսպես, առաքել բայը կարող է պարագայական մի շարք լրացումներ ստանալ բացառականով, նախադրություններով և սեռականով, զ+բացառական կառույցով և այլն։

Օրինակներ՝ Առաքեսցէ զհրեշտակ իւր առաջի քո (Ծնն., ԻԴ)։ Առաքեաց զնա ի ծործորոյն Քեբրոնի (Ն. տ., ԼԷ)։ Առաքեցից ի վերայ ձեր զգազանս չարս (Ղևտ., ԻԶ)։ Առաքեաց Նէեմի զհրոյն (Բ, Մակ., Ա)։ Առաքեաց արքայ զհետ արքային (Դ, Թագ., Է)։

Մտանել բայը պարագայական լրացումներ կարող է ստանալ նախ-

դրավոր և նախադրությամբ կառույցներով։

Օրինակներ՝ Մտից ի մէջ Եգիպտոսի (Ել., ԺԱ)։ Մտեալ էին զնանոցա ի ծով (Ն. տ., ԺԴ)։ Մի՛ մտանիցէ արեգակն ի վերայ այնորիկ (Բ, Օրէնք, ԻԴ)։ յԵրկիրն Իսրայէլի մի մտցեն (Եզեկ., ԺԳ)։ Մտեալ ընդ առաւօտն ի տաճարն (Գործ., Ե)։ Յանհնարս մտի վասն այնպիսի իրաց (Ն.տ., ԻԵ)։ Ցիսուս եմուտ վասն մեր (Եբր., Զ)։

Լսել բայը նույնպես կարող է ունենալ պարագայական լրացումներ՝ արտահայտված տարբեր ձևերով։

Օրինակներ՝ Լուայ զձայն քո ի դրախտի աստ (Ծնն., Գ)։ Լուիցեն յԵրկնից նոցա (Գ, Թագ., Ը)։ Ես լսէի ի ծննդենէ իմմէ (Եսթ., ԺԴ)։ Լուաւ յաւուր յայնմիկ Յուդիթ (Յուդիթ, Ը)։ Վասն այսորիկ լուաւ զայս Տէր (Սաղ., ՀԷ)։ Լուայ ի սեղանոյ անտի (Յայտ., ԺԶ)։

Համադասական հարաբերությամբ կապակցված բայերը կարող են ունենալ և՛ տարբեր, և՛ միատեսակ խնդրառություն։ Տարբեր խնդիրները նման դեպքերում ստանում են իրենց բնորոշ արտահայտությունը։ Այսպես, ողորմել և օրհնել, խոստովան լինել և տալ, պատասխանի տալ և ասել, կեցուցանել և լսել բայերը ստացել են տարբեր լրացումներ հետևյալ նախադասություններում։

Կեցո աջով քո և լուր մեզ (Սաղ., ԾԷ)։ Ողորմեա մեզ և օրհնեա զմեզ Ն.տ., ԿԶ)։ Պատասխանի ետ Դաւիթ քահանայի և ասէ ցնա (Ա, Թագ., ԻԱ)։ Պատասխանի ետ նմա Տէր և ասէ ցնա (Ն.տ., ԻԳ)։ Խոստովան եղերուք դուք նմա և տուք նմա զփառս (Տօբիթ., Ժ)։

Նույն հարաբերությամբ կապակցված բայերը կարող են ունենալ նաև միատեսակ խնդրառություն, և այս դեպքում դրվում է ընդհանուր խնդիր։

Օրինակներ՝ Հաճեսցի և ողորմեսցի ձեզ (Յովբ, ԺԳ)։ Օրհնեաց զնա և արձակեաց (Ն.տ., Ը)։ Ոչ դադարէին ուսուցանել և աւետարանել զՅիսուս Քրիստոս (Գործ, Ե)։ Խօսէր և վիճէր ընդ Յոյնսն (Ն.տ., Թ)։ Ունկն դիք և լուարուք բարբառոյ իմոյ (Եսայի, ԻԸ)։ Լուիցեն և ասասցեն զճշմարիտն (Ն.տ., ԽԳ)։ Հարկանէր, սատակէր, վանէր զբանակս (Ա, Մակ., ԺԲ)։ Փորձեցին զիս և արհամարհեցին (Սաղ., ԼԴ)։

Հնարավոր է նաև, որ համադասական հարաբերությամբ կապակցված բայերից մեկը տվյալ խնդիրը չունենա, և այն վերաբերի միայն մյուսին։

Օրինակներ՝ Ժողովէին և օրհնէին զԱստուած (Մակ., Դ)։ Խոստովան եղերուք և գոհացարուք զՏեառնէ (Եզր., Գ)։ Դու առաջնորդեցեր ինձ ընդ սաղմոսողին և ապրեցուցեր (ԳՆՄՈ, ԶԵ)։

Բայի խնդրառության առնչությամբ անհրաժեշտ է կանգ առնել նաև կրկնասեռության երևույթի վրա[2]։ Բանն այն է, որ գրաբարում մի շարք բայեր դրսևորում են չեզոք և ներգործական սեռերի հատկանիշներ։ Խոսքը չի վերաբերում հասարակ (ընդհանուր) սեռի բայերին, որոնք նույն ձևով հանդես են գալիս և՛ ներգործական և՛ կրավորական սեռերի արժեքով, ինչպես՝ դատիմ, խորհիմ, ծնանիմ, սկսանիմ, համարիմ, ուսանիմ, վարկանիմ, զգենում, ընթեռնում, ագանիմ, ընդունիմ, խոսիմ, կամիմ, հնարիմ, ունիմ, տանիմ և այլն։

Հասարակ սեռի բայերը մի դեպքում ունեն ներգործական սեռի բայերին հատուկ խնդրառություն։

Օրինակներ՝ Ագանէր կօշիկս ոսկեզօծս (Յուդիթ, Ժ)։ Մի՞թէ օրէնքն մեր դատին զմարդ (Յովհ., Է)։ Զգեցցի զպատմուճանն իւր (Ղևտ., ԺԶ)։ Ընդունէին զնուէրն ի նուիրաբերացն (Ելք, ԼԶ)։ Ընթեռնուցուք զօրէնս զայս (Բ, Օրէնք, ԼԱ)։ Ուսաներս և դատերս ծնցիս (Թիւք, ԻԸ)։ Խօսեցաւ Մովսէս զպատգամս (Ն.տ., ԺԴ)։ Զանօրէնութիւն խորհեցաւ (Սաղմ., ԼԵ)։ Որ կամի զկեանս (Ն.տ., ԼԳ)։ Ուսան զգործս նոցա (Ն.տ., ՃԵ)։ Ոչինչ համարիս զիշխանս քո (Բ, Թագ., ԺԹ)։ Հնարեցարուք նմա հնարս (Երեմ., Ի)։ Սկսաւն ի ձեզ զգործս բարեաց (Փիլիպ., Ա)։

Այս բայերը այլ դեպքում հանդես են գալիս կրավորական սեռային արժեքով՝ համապատասխան խնդրառությամբ։

Օրինակներ՝ Եթէ ի ձէնջ դատեցայց (Ա, Կորն., Դ)։ Ոչ զգեցցին ի գործոց ձեռաց իւրեանց (Եսայի, ԾԹ)։ Յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ ... զի և դուք ընթեռնուցուք (Կողոս., Դ)։ Սոքա ծնան նմա ի դստերէն (Ա, Մնաց., Բ)։ Որպէս և յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսորիկ (Բ, Պետ., Գ)։ Թշնամիք... համարեցան ինձ որպէս առեւծ (Սաղ., ԺԶ)։ Նա հնարեցաւ ազգին մերում (Գործ., Է)։ Ի կարծոյ հնարեցաւ վախճան նոցա (Իմաս., ԺԴ)։ Սկսաւ սատակումն ի ժողովրդեանն (Բ, Թագ., ԻԴ)։ Եղիցին ամենեքեան ուսեալք Յաստուծոյ (Յովհ., Զ)։

Անշուշտ այս բայերի որոշ խնդիրներ պայմանավորված չեն սեռով, այլ լրացյալի բառային իմաստով։ Այսպես, դատիմ, ընդունիմ, ընթեռնում, խորհիմ, խօսիմ, համարիմ բայերի լրացումները բխում են դրանց բառային իմաստից։

Օրինակներ՝ Որով դատաստանաւ դատիք (Մատթ, Է)։ Դու՞ք այժմ դատիցիք վասն Բահաղու (Դատ., Զ)։ Ըստ ձերոյ օրինացն դատեցարուք

---

[2] Հարցի սպառիչ քննությունը տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 702—722։

(Յովհ., ԺԸ)։ Ընդ միմեանս դատեսցուք (Եսայի, ԽԳ)։ Ընկալաւ ի ձեռաց նոցա (Ելք, ԼԲ)։ Ընկալցի՞ Տէր ընդ հազարաւոր (Միք., Զ)։ Ընթերցաւ յականջս նոցա (Յեսու, ԻԳ)։ Ընթերցան առաջի ժողովրդեան (Ա, Մակ., ԺԴ)։ Խորհեցաւ ընդ ծառայս իւր (Դ, Թագ., Զ)։ Զինէն խորհեցան խորհուրդ չար (Երեմ., ԺԱ)։ Խօսեցան ընդ արս քաղաքին (Ծնն., ԼԴ)։ Համարեցաւ զխս իբրև զհակառակորդ (Յովբ., ԼԳ)։

Կրկնասեռությունն այն երևույթն է, երբ բայը մի դեպքում հանդես է գալիս իբրև չեզոք սեռի՝ ձևական յուրահատկությամբ կամ առանց դրան, իսկ այլ դեպքում՝ իբրև ներգործական սեռի։ Այսպես, գրաբարի կրկնասեռ բայերից կարելի է նշել աղաղակեմ, ամբառնամ, ամբաստանեմ, ապաշխարեմ, առաւելում, կանգնեմ, կարդամ, հոսեմ, յանախեմ, յապաղեմ, ողբամ, վառեմ, վարեմ (իմ), վաստակեմ և այլն։

Սրանք չեզոք իմաստով են գործածված հետևյալ նախադասություններում։

Աղաղակեաց ժողովուրդն առ Մովսէս (Թիւք ԺԱ)։ Ամբարձաւ մինչև ցաստեղս (Երեմ., ԾԱ)։ Վասն որոյ ամբաստանէին զդմանէ (Գործ., ԻԳ)։ Ոչ ապաշխարեցին ի գործոց իւրեանց (Յայտն., ԺԶ)։ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ... առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռովմ., ԺԵ)։ Կանգնեաց ի մեռելոց (Եփես., Ե)։ Ո՞վ իցէ ազգ մեծ որոյ իցէ Աստուած մօտ ի նոսա, որպէս Տէր Աստուած մեր յամենայնի որովք կարդասցուք առ նա (Բ, Օրէնք, Դ)։ Հոսէին ի նմանէ քրտունք (Ղուկ., ԻԲ)։ Մի յանախէր առ օտարս (Առակ., Ե)։ Ոչինչ յապաղեցի, այլ ... հրամայեցի ածել զայրն (Գործ., ԻԵ)։ Ամենեքեան ողբացէք լալով (Եսայի, ԺԵ)։ Մեք վառեսցուք առաջի Տեառն, առաջապահք երթիցուք որդւոցն Իսրայելի (Թիւք ԼԲ)։ Որպէս և միտք իւր վարէին (Ելք, ԼԵ)։ Ետ հրաման Թագաւորն Հայոց խօսրով, տալ պարգևս արանցն քաջացն՝ որ վաստակեցին նմա (Բուզ., 3, Ը)։

Նույն բայերը գործածվում են ներգործական նշանակությամբ հետևյալ նախադասություններում։

Զոր աղաղակեցին (Եսայի, Զ, 4)։ Ամբարձցէ Տէր զերեսս իւր (Թիւք, Զ)։ Զի՞նչ դոքա ամբաստանեն զքէն (Մատթ, ԻԶ)։ Ապաշխարել զպոռնկութիւնն իւրեանց (Յայտն., Բ)։ Կարող է Աստուած զամենայն շնորհս առաւելուլ ի ձեզ (Բ, Կորն., Թ)։ Կանգնեաց Մովսէս զխորանն (Ելք, Խ)։ Զանուն տեառն կարդացի (Բ, Օրենք, ԼԲ)։ Ամպք հոսեցին զանձրև (Առակ., Գ)։ Ապախտ արարեր զվաստակսն զոր ինձն վաստակեցեր (Ագ., 53)։ Յանախեցից զնշանս իմ (Ելք, Է)։ Յապաղեն զխորհուրդս (Առակ.,

ժե)։ Ողբասցեն զնա (Եզեկ., ԼԲ)։ Վառեցէք ի ձէնջ առս (Թուք, ԼԱ)։ Վարէր զնոսա բռնութեամբ (Ելք., ԺԴ)։

Գրաբարում (երբեմն նաև արդի հայերենում, մասնավորապես խոսակցական լեզվում) հանդիպում է լրացման կրկնակի գործածություն կամ կրկնակի խնդրառություն։ Գրողը (խոսողը) մոռանալով, որ բայն ունի խնդիր, կրկին խնդիր է գործածում։ Այս դեպքում խնդիրը կարող է արտահայտվել տարբեր ձևերով։

Օրինակներ՝ Տեսէք որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ (Գաղ., Զ)։ Զգոյշ լերուք ողորմութեան ձերում մի՛ առնել առաջի մարդկան (Մատթ., Զ)։ Խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի սպանանել զնա (Ն.տ., ԻԷ)։ Անժառանգել զանձն իմ խորհեցան յորդւոց ի մարդկանէ (Սաղ., ԼԴ)։ Ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յամպն և ի ծովն (Ա, Կորնթ., Ժ)։ Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս (Ագ., 45)։ Քանզի չև էր տեսեալ զնա՝ խորհեցաւ կին առնել զնա, վասն այնորիկ որ պատմեցին զնմանէ վասն վայելչութեան գեղոյ նորա (Ն.տ., 166)։ Ընթացեալ յեղեգնաբնակ երամէ գազանացն ի միջոյ՝ հասանէր յայն տեղի (Ն.տ., 728)։ Ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս (Բուզ., 6, ԺԶ)։ Ի մանկութենէ իմմէ սննդակից եղեալ եմ թագաւորաց ի նախնեաց իմոց և հաւուց (Սեբ., Գ)։ Զորս հատին տապարօք կատաղութեամբն իւրեանց ի ձեռն անմիտ փայտահարաց (Ն.տ., ԻԵ)։ Փրկեա զանձն իմ յամպարշտաց ի սրոյ և ի ձեռանէ թշնամւոյն (Ն.տ., ԺԶ)։ Ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին (Բուզ., 4, ԺԶ)։

Կրկնակի լրացման գործածությունը մեծ չափով հետևանք է հոլովների ձգողության օրենքի ազդեցության։ Այսպես, Երթայր ընդ առաջ զօրացն Պարսից բազմութեամբ զօրօքն Հայոց (Բուզ., 3, Ը) նախադասության մեջ զօրօքն գործիականը դրվել է բազմութեամբ գործիականի ազդեցությամբ։ Ճիշտ կլիներ՝ բազմութեամբ զօրացն Հայոց։ Այս երևույթը բավական տարածված է գրաբարում։

Օրինակներ՝ Ընկալցուք խնդութեամբ սրտիւ (Եզ., 5)։ Որ պանդխտութեամբ կենօք գնասցեն ի կեանս յայյտսիկ (ՅՄՊՏ, 295 բ)։ Բոլորեցունց կնքեալ զինքեանս նշանաւ խաչիւն՝ ի ներքս յեկեղեցին մտանէին (ՄԿՊԱԱ, 1, ԺԸ)։ Ոչ ամենայն թուլանալ և ցնորել մարդկան ի դիւէ է, այլ է՝ որ ի մաղձոյ է, և է, որ ի մաղասէ, և է՝ որ յուղղոյն անանելոյ և է որ ի սամօքսէ խանգարելոյ, և է՝ որ յորովայնէ խստանալոյ (Եզն., 2, Ի)։ Դատել

ճշմարտութեամբ զամենայն տիեզերս հրով բարկութեամբ իւրով (Ագ., 93)։

Կրկնակի խնդրառության դրսևորումներից մեկն էլ այն է, երբ տվյալ բայի մոտ առկա խնդրի հետ միասին նույնիմաստ երկրորդական նախադասություն է դրվում։

Օրինակներ՝ Եւ ո՞չ զայդ իսկ ասացի ձեզ վաղագոյն վասն մոլորութեանդ ձերոյ, թէ մառախուղ ստուերացն խաւարին թանձրութեան նստեալ է ի վերայ ձերոյ աչաց սրտին (Ագ., 235)։ Եւ որք առաքեցանն յարքայէ զնոցանէն, զի ածեն զնոսա՝ այսորքիկ են (Ն.տ., 860)։ Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ (Բուզ., 5)։ Զո՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ (Գործ., ԺԳ)։ Գիտասցես զնոսա՝ թէ բարի են (Առկա., ԻԲ)։

Այս վերջին երևույթը պայմանավորված է գլխավոր նախադասության մեջ եղած բայի խնդրառական ձգողությամբ։ Ներգործական սեռի բայը իրեն է ձգում երկրորդական նախադասության որևէ անդամի, որը, դառնալով խնդիր, ըստ էության կլանում է ամբողջ երկրորդականի ֆունկցիան։

Գրաբարի քերականները վաղուց են դիտել այսպես կոչված խնդրառության արգելման երևույթը[3], որը իրականում այլ բան չէ, քան խնդրի արտահայտությունը երկրորդական նախադասությամբ կամ անորոշ դերբայով։ Մի շարք խնդիրներ կարող են դրսևորվել և՛ որևէ հոլովաձևով (կամ նախդրավոր ու նախադրությամբ կառույցներով), և՛ երկրորդական նախադասությամբ։ Այսպես, գիտեմ, թողում, ժողովեմ, իմանամ, յիշեմ, տեսանեմ, կարծեմ, համարիմ բայերի խնդիրներն արտահայտված են երկրորդական նախադասությամբ։

Գիտացին զի մերկ էին (Ծնն., Գ)։ Երթ տես եթէ ո՞ղջ իցեն եղբարքն քո (Ն.տ., Լէ)։ Ժողովեցին զամենայն զօր և զտին (Մատ., ԻԲ)։ Իմացարուք զինչ են կամք Տեառն (Եփես., Ե)։ Մի՛ երկնչիր, վասն որոյ կամիս չարչարել (Յայտն., Բ)։ Յիշեցեք՝ զոր ինչ արար տէր Աստուած (Բ. Օրենք, ԻԴ)։ Կարծէր թէ ի քուն իցէ (Յուդիթ., ԺԴ)։ Համարէին թէ գուցէ կլանիցէ (Թիւք, ԺՁ)։ Ուսուցից քեզ զոր դու ոչ գիտես (Յովբ., ԼՁ)։

Կան մի շարք բայեր էլ, որոնք լրացում են ստանում անորոշ դերբայի անփոփոխ ձևով։ Դիմավոր բայի մոտ անորոշ դերբայի անփոփոխ ձևը տարբեր իմաստներ է արտահայտում։ Ըստ այդմ տարբերում ենք երեք կարգի կապակցություններ՝ բայական բաղադրյալ ստորոգյալի կա-

---

3 Տե՛ս Յ. Կոստանդնուպոլսեցի (Հոլով), Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1675։

ռույց, բայ+խնդիր կառույց, բայ+պարագա կառույց։

Բայական բաղադրյալ ստորոգյալը սովորաբար կազմվում է երանգավորիչ բայի դիմավոր ձևով և անորոշ դերբայով։ Ընդ որում երանգավորիչ իմաստ ունեցող բայերը սակավաթիվ են։ Դրանցից են՝ անգարիմ, իշխեմ, խրոխտամ, կամիմ, կարեմ, հաճիմ, հանդուրժեմ, մարթեմ, յօժարեմ, պարտիմ, ջանամ, սկսանիմ, սպառնամ, փութամ և այլն։ Այս բայերի մոտ անորոշ դերբայը չունի խնդրի (առավել ևս պարագայի) նշանակություն։ Թեև դրանց մի մասը, հասարակ սեռի լինելով (կամիմ, սկսանիմ), կարող է գործածվել ներգործական նշանակությամբ, սակայն անորոշ դերբայի հետ կապակցվելիս բոլորն էլ ստանում են երանգավորիչ արժեք, և դիմավոր բայն ու անորոշ դերբայը միասնաբար ստորոգյալ են դառնում։

Օրինակներ՝ Սկսաւ սատակել զժողովուրդն (Թիւք, ԺԶ)։ Ոչ կամեցաւ արձակել զնոսա (Ելք, Ժ)։ Փութացի Աստուած առնել զնա (Ծնն., ԽԱ)։ Մի՛ իշխեսցես անտես առնել զայն (Բ, Օրէնք, ԻԲ)։ Կարիցէ՞ բանիւք արդարանալ (Յովբ., ԺԱ)։ Ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն (Մխ, 2, ԼԵ)։ Խրատել և հրահանգել ըստ իւրեանց իմաստութեան և արուեստի ջանային (ՂՓՊՀ, ԿԳ)։ Որ ոք վաստակել մարթասցէ (Ն. տ., ՂԲ)։Պարտի զմիտս յստակել (Եզն., 1, Ա)։ Սպառնայ սպանանել զքեզ (Ծնն., ԻԷ)։

Ընդհանրապես խիստ սակավաթիվ են միայն անորոշ դերբայով լրացում ստացող բայերը (կարեմ, ջանամ, սկսանիմ)։ Մեծ մասամբ երանգավորիչ բայերը կարող են լրացումներ ստանալ նաև թեք հոլովաձևերով, նախդրավոր և նախադրությամբ կառույցներով։ Այսպես, բերված բայերից մի քանիսն ունեն այսպիսի խնդրառություն հետևյալ նախադասություններում։

Ստիպէին զնոսա գործավարք (Ելք, Ե)։ Մի յօժարեսցիս ընդ բազումս ի չարիս (Ն. տ., ԻԳ)։ Որք փութան ի դատաստանս նորա (Սիրաք., Ա)։ Վասն այնորիկ առ նա փութացայց (Յովբ., ԻԳ)։ Իշխեսցեն ձկանց ծովու (Ծնն., Ա)։ Ոչ կամի արքայ վարձանս (Ա, Թագ., ԺԸ)։ Հաճեսցին ընդ մեղս իւրեանց (Ղևտ., ԻԶ)։ Ոչ ժպրհեցաւ հայհոյութեանն դատաստանի հանդուրժել (Յուդա, 9)։ Փութասցին ի պարիսպս (Նաւում, Բ)։ Սպառնասցի անհաւատիցն (Եսայի, ԿԶ)։

Կան նաև մի շարք բայեր, որոնք երանգավորիչ իմաստով գործածվում են քիչ դեպքերում, կապակցվելով անորոշ դերբայի հետ։ Դրանցից են ակնկալեմ, դադարեմ, դանդաղեմ, երկնչիմ, խորհիմ, ձեռնարկեմ, յանձն առնում, յուսամ, խորամանկեմ, կարգեմ, հաւանիմ, ճեպեմ,

յաւելում, յապաղեմ, ցանկանամ և այլն։ Այսպես, հետևյալ նախադասություններում այս բայերը գործածված են և՛ իրենց բուն, և՛ երանգավորիչ նշանակություններով։

Ակն կալցուք ողորմութեան (Իմաս., ԺԲ)։ Մի ակնկալցի ողջանալոյ (Յովբ., ԻԴ)։ Ակնկալցուք գտանել ի նմանէ զողորմութիւն (Յուդիթ, Ը)։ Խորամանկեցին զգիտութիւն (Սաղ. ՁԲ)։ Բժժանօք ինչ յուռթից կախարդել խորամանկեսցէ (ՅՄՊՏ, ԿՁ)։ Կարգեցից զձեզ յորդիս (Երեմ., Գ)։ Կարգեաց Դաւիթ ի սկզբանէ օրհնել (Ա, Մնաց., ԺՁ)։ Խորհեցարուք զինէն ի չարութիւն (Ծնն., Ծ)։ Խորհեցաւ ընդ ծառայս իւր (Դ, Թագ., Զ)։ Խորհեցաւ նա դառնալ յերկիր իւր (Ա, Մակ., Թ)։ Դադարեաց յաղօթիցն իւրոց (Եսթ., ԺԵ)։ Ոչ դադարէր ի սգալոյ (Տոբ., Ժ)։ Դադարեաց երկիրն պատերազմել (Յեսու, ԺԱ)։ Ձայն մեք ոչ դանդաղեցաք (Բ, Մակ., Բ)։ Մի դանդաղեսցի գալ առ նոսա (Գործ., Թ)։ Երկնչիցին նորա յերեսաց նորա (Ժողով., Ը)։ Երկնչիցին հարցանել զնա (Ղուկ., Թ)։ Յիրեանց բարերարսն ձեռնարկել մենքենայեն (Եսթ., ԺՁ)։ Մի ոք ձեռնարկեսցէ խափանել (Բ, Եզր., Է)։ Զօրն մեծ ոչ առնում յանձն (Եսայի, Ա)։ Յանձն առին յօժարութեամբ մեռանել (Ա, Մակ., Ա)։ Յուսացար դու յարքայն (Ա, Մնաց., ԺՁ)։ Յուսացաւ կոչել զանուն տեառն Աստուծոյ (Ծնն., Դ)։ Պատկառեցեր յերեսաց Տեառն (Դ, Թագ., ԻԲ)։ Զի՞րդ զայսպիսի ահագին հայհոյութիւն միայն նորա բանիւ խօսել ոչ պատկառես (Ղև., Պատմ., Դ)։ Մի հաւանիցիս նմա (Բ, Օրէնք, ԺԳ)։ Հաւանեալ եմք ծառայել հօր քում (Ա, Մակ., Զ)։ Երկուսեք ճեպեցին զնա (Երեմ., ԽԹ)։ Զայս ստէպ ծանուցանել ամենեցունց ճեպէին (ՂՓԹ)։ Զհինգերորդ մասնն յաւելցէ (Ղևտ., Ե)։ Ոչ ևս յաւելցիս տեսանել զերեսս իմ (Յուդիթ., Զ)։ Յապաղեն զխորհուրդս (Առակ., ԺԵ)։ Մի՛ յապաղեր բարի առնել կարօտելոյ (Ն.տ., Գ)։ Մի ցանկանար տան ընկերի քոյ (Ելք, Ի)։ Ցանկացեալ եմ կորուսանել զժառանգութիւն քո (Ն.տ., ԺԳ)։

Հազվադեպ հանդիպում են երանգավորիչ բայերի կրկնակի գործածության դեպքեր, երբ դիմավոր բայի մոտ դրված անորոշ դերբայը իր հերթին երանգավորիչ իմաստով է գործածված՝ ունենալով անորոշ դերբայ։ Օրինակ՝ Եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել (ԳՆՄՈ, ԼԲ)։

Մի շարք բայերի մոտ էլ (անկախ սեռից) խնդիրը կարող է արտահայտվել անորոշ դերբայի անփոփոխ ձևով։ Ընդ որում այդ բայերն այլ դեպքերում լրացում են ստանում թեք հոլովաձևերով կամ նախդրավոր ու նախադրությամբ կառույցներով։ Դրանցից կարելի է նշել առնեմ, խնդրեմ, կարծեմ, համարիմ, հայցեմ, հանդարտիմ, հաւատամ, հրա-

մայեմ, ներեմ, ունիմ, ուսուցանեմ, պատկառեմ և այլն։ Ահա այս բայերի համապատասխան խնդիրների օրինակներ։

Զեղբարսն իմ խնդրեն (Ծն., ԼԷ)։ Տենչանօք խնդրէին տեսանել զտէրն (ՄԿՊԱԱ, Զ, ԼԷ)։ Խնդրէին ի նմանէ առաքել օգնականս ընդ նոսա զճգնութիւն սուրբ Նահատակին Գրիգորի (ՂՓՊՀ, ԿԸ)։ Սրով կտրել զգլուխ երանելւոյն հրամայեցին (Ն. տ., ՀԶ)։ Արար Աստուած զերկին և զերկիր (Ծնն., Ա)։ Արասցես զօրանալ կրկին յաճախութեամբ բուրման խոստովանութեան այսր մատենի ի բազումս ազգեալ (ԳՆՄՈ, ԼԳ)։ Զնոսա աստուածս կարծիցեն (Իմաս., ԺԳ)։ Կարծեսցես զօրանալ դորօք (Բ, Մնաց., ԻԵ)։ Ոչինչ համարիս զիշխանս քո (Բ, Թագ., ԺԹ)։ Համարեցաւ սատակել զմեզ (Ն. տ., ԻԱ)։ Զոր հայցեմք առ ի նմանէ (Ա, Յովհ., Ե)։ Հանդարտեաց ի տալոյ պատասխանի Յոբայ (Ն. տ., ԼԲ)։ Հայցէին յամենայաղթն Քրիստոսէ յաղթել մեծի պատերազմին (ԹԱՊՏԱ, 3, Զ)։ Ոչ հանդարտէին հրամանին (Երբ., ԺԲ)։ Ոչ կարէի հանդարտել հայել ի կռապաշտութիւնն Աքարու (Եղ., 5)։ Հաւատայր նմա զխորհուրդ թագաւորին (ՂՓՊՀ, ԾԴ)։ Ամենևին հաւատայ նմա յարդարել զիւր իշխանութիւն (Մխ, 1, ԺԷ)։ Զոր ոչ հրամայեաց նոցա տէր (Ղևտ., Ժ)։ Հրամայեաց կոչել զբարեկամս իւր (Ա, Մակ., Զ)։ Ոչ ներեցից նոցա (Եսայի, Բ)։ Ոչ ներէ ստեղծիչն լեզուին զուրացութիւն բարբառել (ԹԱՊՏԱ, 3, Զ)։ Ունիս շնորհս յինէն (Ելք, ԼԳ)։ Դու ոչ ունիս չարանալ իսկութեամբ բարիդ (ԳՆՄՈ, ԼԴ)։ Ուսուցի ձեզ զիրաւունս (Բ, Օրէնք, Դ)։ Զոր ուսուցից երկնչել յինէն (Ն. տ.)։

Ուղիղ խնդրի պաշտոն կատարելու դեպքում անորոշ դերբայը կարող է դրվել նաև որոշյալ հայցականով (ինչպես արդի հայերենում է)։

Օրինակներ՝ Այսպես հաւանիմ զտանջելն Աստուծոյ (ՅԴՊՀ, 164)։ Ամենեցուն զկեալն կամիս (ԳՆՄՈ, ԼԲ)։ Յանձն առնոյր զերթալն ի Հոնս քաջայօժար կամաւորութեամբ (ՄԿՊԱԱ, 2, ԽԵ)։ Պարսկաստանեօք մնացելովք զփախչելն փութային (ՍՏՏՊ, 2, ԽԱ)։

Անորոշ դերբայը դիմավոր բայի հետ կարող է կապակցվել նաև պարագայական իմաստներով։ Խոսքը չի վերաբերում այն երևույթին, երբ անորոշ դերբայի թեք հոլովաձևը կատարում է պարագայի պաշտոն։ Այս դեպքում անորոշ դերբայի անփոփոխ ձևը կատարում է ի+ հայցական կառույցի դեր։ Այսպես, անիծանել զթշնամիս կոչեցի զքեզ (Թիւք, ԻԴ) և Յանիծանել թշնամեաց կոչեցի զքեզ, և դու օրհնեցեր օրհնութիւն (Ն. տ., ԻԳ) նախադասություններում առկա է դրանց համարժեքությունը։

Նկատելի է, որ անորոշ դերբայի անփոփոխ ձևը հիմնականում

նպատակի իմաստ է արտահայտում[4]։ Լրացյալ դառնում են բազմազան իմաստ ունեցող բայեր։

Օրինակներ՝ Եկն **փորձել** զնա առակօք (Գ, Թագ., Ժ)։ Դարձաւ Դաւիթ **օրհնել** զիւր տունն (Ա, Մնաց., ԺԶ)։ Եդ զնա ի դրախտին փափկութեան **գործել** զնա և **պահել** (Ծնն. Բ)։ Եւ ելին **գնալ** յերկիրն քանանացւոց (Ն. տ., ԺԲ)։ Յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն զպաշտամունսն **կատարել** (Եբր., Թ)։ Առաքեաց զքեզ **առաջնորդել** (Յուդիթ, ԺԱ)։ Առաքեսցէ զնոսա **քարոզել** (Մարկ., Գ)։ Պատրաստեցեր զիս տառապելս **սնանել** և **ուսանել** ընդ ձեռօք քո սրբոյ (Բուզ., 4, Ծէ)։ Ժողովեաց զօրս **ընդդիմանալ** պատերազմաւ (Մխ, 2, ՁԸ)։ Պատրեալ սադրեաց զքեզ **ճենգել** սուրբ Աւետարանին ուխտի (ՂՓՊՀ, խԲ)։ Գրոհ տուեալ ընթանային ի հօտ ոչխարացն **ժամանել** (Ն. տ., Հ)։ Դարձեալ յարձակէին **ելանել** ի վերայ աշխարհիս Հայոց (Ղև., Պատմ., Բ)։ Հանդերձեցաւ նա **ելանել** զկողմամբք Վասպուրականի (ՅԴՊՀ, 291)։ Շրջէր ի մէջ զօրուն **ցուցանել** զինքն (Սեբ., ԻԸ)։ Արկ ի խոշտանգանս բանտից **ուրանալ** զՔրիստոս (ՄՏՏՊ, 2, Բ)։

Երբեմն անորոշ դերբայը բայի լրացման դերում կարելի է մեկնաբանել և՛ նպատակի, և՛ խնդրային իմաստներով։

Օրինակներ՝ Ի ժամանակս Յազկերտի ամբարշտի վառէր բորբոքէր սատանայ ի միտս նորա **բառնալ** զքրիստոնէութեան կրօնն (ՄԿՊԱԱ, 2, Բ)։ Պատուէր առնէր՝ զաւազակութիւն և զմարդադաւութիւն **թողուլ** և հարկաց արքունի **ճնազանդ կալ** (Ն.տ., 1, Դ)։

Որոշ կառուցվածքի նախադասություններում անորոշ դերբայը կարող է մեկնաբանվել և՛ իբրև բայի լրացում՝ նպատակի իմաստով, և՛ իբրև գոյականի լրացում։

Օրինակներ՝ Ես առաքեմ աւասիկ Թագաւորի ձերոյ հրովարտակ պատարագօք **խնդրել** ի նմանէ զհաշտութիւն և ընդ իս զխաղաղութիւն (Սեբ., ԻՁ)։ Եւ ոչ գոյր ջուր **ըմպել** ժողովրդեանն (Ելք, ԺԷ)։ Որոց առեալ էր իշխանութիւն **ապականել** զերկիր և զծով (Յայտն., Է)։ Ունէր աւետիս յաւիտենական **աւետարանել** ամենայն ազգաց և լեզուաց (Ն. տ., ԺԴ)։ Հրաման ետ **անցուցանել** զամենեսեան ընդ ծով (Սեբ., Ը)։

Սակավաթիվ դեպքերում անորոշ դերբայը կարող է արտահայտել պատճառի իմաստ։

Օրինակներ՝ Ուխտ եդեալ միանգամայն՝ վրէժ խնդրել մեծաւ քի-

---

[4] Նպատակի և պարագայական այլ իմաստների դրսևորումը նախդրավոր կառույցներով (այդ թվում նաև ճախդիր+անորոշ դերբայ կառույցով) քննված է «Բայի լրացումները նախդրավոր կառույցներով» հատվածում (տե՛ս էջ 182)։

նութեամբ **զանկանելն** իւրեանց ի տէրութենէն (Ագ., 19)։ Յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ **լսել** զմնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն (Եղ., 5)։

Գրաբարում սովորական էր անորոշ դերբայի գործածությունը նույնիմաստ դիմավոր բայի մոտ իմաստի սաստկացման նշանակությամբ։ Ընդ որում այն սովորաբար հանդես էր գալիս ինչպես գործիական հոլովով, այնպես էլ անփոփոխ ձևով։

Օրինակներ՝ **Գնալով** գնացին ծառք օծանել (Դատ., Թ)։ **Անիծանելով** անիծեցէք զբնակիչս (Ն. տ., Ե)։ **Անօրինելով** անօրինեցէք (Բ, օրէնք, ԼԱ)։ **Ապականելով** ապականեսցի երկիր (Եսայի, ԻԴ)։ **Արհամարհելով** արհամարհիցէ զպատուիրանս (Ղևտ., Զ)։ **Դնելով** դնիցես վկայութիւն (Ա, Թագ., Ը)։ **Ընդունելով** ընկալաւ զնա (Առակ., ԻԴ)։ **Ունել** ունէր պարծանս, այլ ոչ առ Աստուած (Հռոմ., Դ)։ Ծառայ, ասէ, որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ, և արժանի գանի ինչ գործէ, **ըմպել** ըմպէ գան, այլ սակաւագոյն (Եղ., 2)։

Անորոշ դերբայը տալ բայի դիմավոր ձևի մոտ կարող է գործածվել նաև կազմելով պատճառական կառույց։ Ինչպես հայտնի է, գրաբարում նույնպես (ինչպես արդի հայերենում է) ոչ ամեն մի բայից կարելի էր ածանցմամբ պատճառական բայ կազմել։ Այդ պակասը լրացվում էր տալ բայի **դիմավոր ձև+անորոշ դերբայ** կառույցով։

Օրինակներ՝ **Տացուք գիտել** զքեզ (Ա, Եզր., Զ)։ Արդ **տուաք** մեք քեզ **գիտել** (Բ, Եզր., Դ)։ **Ետ տանել** նաւս յայնկոյս գետոյն (Ղև., Պատմ., ԺԱ)։ Ոչ **տամ համբուրել** քրիստոնէից զկապանս նորա (ՂՓՊՀ, ԿԴ)։ Զելս գործոյ պատերազմին **գիտել տայր** (Ն. տ., Խ)։ Յանդիման Վահանայ **տայր ասել** Վրուայ զբանսն (Ն. տ., ԿԵ)։ Զայլս կապանօք **ետ տանել** առ Երակլիս (Սեբ., ԻԸ)։

Պատահում են նաև խնդրառու բայերի՝ առանց խնդրի գործածության դեպքեր։ Այսպես, ներգործական սեռի **առաքեմ, արկանեմ, բժշկեմ, զոհեմ, կազդուրեցուցանեմ, հրաշագործեմ, մերժեմ, մխիթարեմ, յղեմ, նորոգեմ, շնորհեմ, ուտեմ, տամ, քննեմ, քաւեմ** բայերը առանց խնդիրների են գործածված հետևյալ նախադասություններում։

Երթիցուք **զոհեսցուք** Աստուծոյ մերում (Ելք, Ե)։ **Առաքեցի** առ նա և ասեմ (Նեեմի, Զ)։ **Արկ ի** սիրտ իմ (Ն. տ., Է)։ Սա **ետ** ինձ ի ծառոյ անտի և **կերայ** (ԹԱՊՏԱ, 1, Ա)։ Ընդէ՞ր **մերժեցեր**, Աստուած, ի սպառ (Սաղ., ՀԳ)։ Ի ձեռն հրեշտակաց յղէ առ կայսրն ի Հռոմ (Մխ, 2, ԻԵ)։ Եթէ **քաւեցես**, կարող ես, եթէ **բժշկես**, զօրաւոր ես. եթէ **կենդանացուցանես**, բաւական ես. եթէ **շնորհես**, առատ ես. եթէ **ողջացուցանես**,

հնարաւոր ես. եթէ պարգևես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործես, ամենաթագաւոր ես (ԳՆՄՈ, ՀՁ)։ Նա կազդուրեցուցանէ, կարողացուցանէ (Ա, Պետ., Ե)։

Չեզոք սեռի ապաշխարեմ, երկիր պագանեմ, խոպանանամ, մոլախոտեմ, նախանձեմ, ողորմիմ, մարդասիրեմ բայերը առանց խնդրի են գործածված հետևյալ օրինակներում։

Խոնարհեցաւ ժողովուրդն և երկիր եպագ (Ելք, Դ)։ Եւ եթէ թողուս զնա՝ խոպանանայ և մոլախոտէ ամենևին և լքանի, և քարինք որմոց նորա յատակին (Առակ., ԻԴ)։ Նախանձեա այժմ և ապաշխարեա (Յայտն., Գ)։ Ողորմեա, կեցո և մարդասիրեա (ԳՆՄՈ, ԺԳ)։

Պատճառական բայերի խնդրառությունը.— Գրաբարի պատճառական բայերը կազմվում են սկզբնատիպ չեզոքից, ներգործականից, երբեմն էլ հասարակից։ Դրանց խնդրառությունը պայմանավորված է, մի կողմից, սեռով (բոլոր պատճառական բայերը ներգործական սեռի են), մյուս կողմից, դրանց բառիմաստով։ Բոլոր պատճառական բայերը կարող են ստանալ ուղիղ խնդիր։

Օրինակներ՝ Բազմացուցից զզաւակ ձեր (Ելք, ԼԲ)։ Զփեցուսցես նոցա պատմուճանս (Ն. տ., ԻԹ)։ Ծնուցանիցէք զկանայս (Ն. տ., Ա)։ Բարկացոյց նա զԱստուած (Թիւք, ԺԵ)։ Դիեցոյց մեղր ի վիմէ (Բ. Օրէնք, ԼԲ)։

Սկզբնատիպ չեզոքից կազմված պատճառականները սովորաբար հանդես են գալիս ներգործական արժեքով՝ ստանալով հայցականով ուղիղ խնդիր։

Օրինակներ՝ Ապստամբեցուցին զամենայն բնակիչս քաղաքին (Բ, Օրէնք, ԺԳ)։ Արդարացուցին զարդարն (Ն. տ., ԻԵ)։ Բարձրացուցանէ զտուն իւր (Առակ., ԺԷ)։ Բնակեցուցեր զնոսա յերկրի (Յովբ., ԻԲ)։ Դառնացուցանէին զհսահակ (Ծնն., ԻՁ)։ Թաքոյց զհրեշտակսն (Յեսու., Զ)։ Ծառայեցուսցեն զնա (Գործ., Է)։

Այս բայերը երբեմն կարող են ստանալ նաև տրականով միջնորդական խնդիր։

Օրինակներ՝ Զայն և իւրոց աշակերտացն ստէպ զգուշացուցանէր (ՂՓԹ)։ Արմատացո մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյդ ի քեզ մեծ պաշտպանութիւն ... զայս ծառ Սաբեկայ (ԳՆՄՈ, ՂԲ)։

Երբեմն տրականը կամ ի+տրական կամ այլ կառույցները այս բայերի մոտ պայմանավորված են դրանց բառային իմաստով և ոչ պատճառականությամբ։

Օրինակներ՝ Երևեցո զքեզ ինձ (Ագ., 310)։ Զձեզ յերկրի վայելեցուցէ (Ն. տ., 241)։ Մերձեցուցէ զմարդիկ առ քեզ (Ն. տ., 95)։ Խոստացաւ փեսայացուցանել զՄեհուժան ի քոյր իւր Որմզդուհի (ԹԱՊՏԱ, 1, Ժ)։ Զոր անցուցաք ընդ նա (Ծնն., Ծ)։ Ապրեցո զիս ի ձեռաց եղբոր իմոյ (Ն. տ., ԼԲ)։ Երդմնեցուցից զքեզ ի Տէր (Ն. տ., ԻԴ)։ Տէր անցոյց զքև զմեղս քո (Բ, Թագ., ԺԲ)։ Երևեցուցէ զերեսս իւր ի քեզ (Թիւք, Զ)։ Որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր (Բ, Կորն., Ե)։ Որ մերժեալ հեռացուցեր զնոսա ի քէն (Նէեմի, Թ)։ Ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ (Ղուկ., Է)։

Չեզոքից կազմված պատճառական որոշ բայեր երբեմն հայցականով ուղիղ խնդրին զուգահեռ ստանում են անորոշ դերբայով լրացում։

Օրինակներ՝ Հաւանեցուցանէր զնահապետ ազգին Սլկունեաց ելանել արտաքս յամրոցէն (Մխ, 2, ՁԴ)։ Փութացույց զծառայսն իւր գնալ արտաքս (Յուդիթ, ԺԳ)։

Երբեմն այս բայերի ուղիղ խնդիրը չի դրվում, և տրականը միայնակ ստանձնում է և՛ ուղիղ, և՛ անուղղակի խնդիրների պաշտոնը։

Օրինակներ՝ Ոչ զգուշացուցեր նմա (Եզեկ., Գ)։ Անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր (ԳՆՄՈ, Ե)։

Ներգործականից կազմված պատճառականները սովորաբար ներգործական սեռի պահանջով ստանում են հայցականով ուղիղ խնդիր, իսկ պատճառականության պահանջով՝ տրականով միջնորդական խնդիր։

Օրինակներ՝ Արբուցին հօրն իւրեանց գինի (Ծնն., ԺԹ)։ Մոռացոյց ինձ Աստուած զամենայն վիշտս իմ (Ն.տ., ԽԱ)։ Զգացուցի նոցա զԱւետարանն (Գաղ., Բ)։ Զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցանեն (Բ, Կորնթ, Ժ)։ Իմացուցանեմ դոցա զհրամանս Աստուծոյ (Ելք, ԺԸ)։ Մեզ անմտացս ուսուսցէ զիմաստութիւն (Ագ., 798)։ Նմա ծանո զհաշտութիւն քո ընդ ծառայս քո (ՂՓԹ)։ Ժառանգեցուցանիցեն ձեզ զերկիրն (Թիւք, ԼԴ)։ Ագոյց նմա զրահս (Ա, Թագ., ԺԷ)։ Ոչ ինչ կասէր միշտ Զհոգևոր կաթն դիեցուցանել մանկանց եկեղեցւոյ (ՅԴՊՀ, 57)։

Այս բայերի մոտ երբեմն միջնորդական խնդիրը զեղչված է լինում։

Օրինակներ՝ Թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես (ԳՆՄՈ, ՀԶ)։ Զդժոխս ժառանգեցոյց (ՂՓԹ)։ Որ ուսուցանէ զիմաստութիւն (Յովբ., ԻԲ)։

Ներգործականից կազմված բայերի մոտ հայցականը կարող է համատեղել ուղիղ և միջնորդական խնդիրների իմաստը։

Օրինակներ՝ Որք ուսուցանէին զբազմութիւնն (Ա, Եզր., Թ)։ Նոքա զմերկս զգեցուցանեն և զայնոսիկ ... լուսաւոր պատմուճանօք զգեցուցանեն (Ագ., 9)։ Արբուցանէ զոգւով ծարաւիս (ԹԱՊՏԱ, 4,Ը)։

Այս բայերի մոտ կարող է դրվել միայն միջնորդական խնդիր՝ ուղիղ խնդրի զեղչմամբ։

Օրինակներ՝ Մեք ուսուցաք ձեզ (Ա, Եզր., Թ)։ Ուսուցանէր բովանդակ ժողովրդոց (ՂՓՊՀ, ԿԲ)։ Թէ պասճելոյս արբուցանիցես, աղբիւր ես (ԳՆՄՈ, ՀՋ)։

Այս բայերի ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել անորոշ դերբայով։

Օրինակներ՝ Յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն (Բ, Տիմոթ., Ա)։ Ուսուսջիք որդւոց ձերոց խօսել զնոսա (Բ, Օրէնք, ԺԱ)։

Երբեմն պատճառական բայը սեռի և խնդրառության տեսակետից չի տարբերվում սկզբնատիպ ներգործականից։

Օրինակներ՝ Փառաւորեցոյց զորբութիւնսն (Ա, Մակ., ԺԴ)։ Փառաւորեցից զազգ քո (Ն. տ., ԺԱ)։ Խռովեցուցին զժողովսն (Գործ., Ծէ)։ Խռովեցին զքաղաքն (Ն. տ.)։ Թախանձեցոյց զնա (Դատ., ԺԶ)։ Թախանձեաց զնա (Ն. տ., ԺԴ)։ Պատսպարեսցէ զնոսա անդրէն (Երեմ., ԺԶ)։ Պատսպարեցոյց զնոսա անդրէն (Ն.տ., ԻԳ)։ Տապալէին զվէմն ի բերանոյ ջրհորոյն (Ծնն., ԻԹ)։ Տապալեցոյց զվէմն ի բերանոյ ջրհորոյն (Ն. տ.)։

Պատճառական բայերը կարող են ունենալ երկու ուղիղ խնդիր (կրկնակի հայցական)։

Օրինակներ՝ ԶԴաւիթ արքայ իւրեանց յարուցից նոցա (Երեմ., Լ)։ Նստուցանէ զնոսա իշխանս (Սաղ., ԾԺԲ)։ Կացուսցէ զնոսա իւր հազարապետս (Ա, Թագ., Ը)։

**Հարադրական բայերի խնդրառությունը.**— Գրաբարում նույնպես շատ են բայական հարադրությունները, որոնք կազմվում են առնեմ, առնում, լինիմ, ածեմ, ունիմ, դնեմ, արկանեմ, տանիմ, տամ, թողում, ելանեմ, կացուցանեմ, հարկանեմ, անկանիմ, գնամ և այլ բայական բաղադրիչներով։ Սրանց մոտ անվանական բաղադրիչը միատեսակ չէ. այն կարող է արտահայտվել տարբեր ձևերով, որոնց մեջ աչքի են ընկնում առնեմ, առնում, ածեմ, արկանեմ, դնեմ ներգործական բայերի լրացումները, որոնք ծագմամբ ուղիղ խնդիր են, ինչպես՝ շու առնել, ծաղր առնել, հրձիգ առնել, ձերբակալ առնել, գումարտակ առնել, սուգ առնուլ, աւար առնուլ, մարտ դնել, ունկն դնել, ակն ածել, աճ արկանել, ձեռն արկանել և այլն։ Առնուլ, արկանել, ածել, դնել, լինել բա-

յերի մոտ անվանական բաղադրիչը կարող է պարագայական իմաստ արտահայտել, ինչպես՝ ի միտ առնուլ, յաւարի առնուլ, յանձն առնուլ, առաջի դնել, զբռամբ ածել, ի միտ արկանել, ընդդէմ լինել և այլն։

Հարադրական բայերը լրացումներ ստանում են տարբեր ձևերով այն է՝ հայցականով, տրականով, բացառականով, նախդրավոր և նախադրությամբ կառույցներով։ Ինչո՞վ է պայմանավորված հարադրական բայերի խնդրառությունը։ Այստեղ դեր են կատարում տարբեր հանգամանքներ։ Մի դեպքում հայցականով ուղիղ խնդիրը պայմանավորված է բայական բաղադրիչի սեռով։ Այսպես. առնել, առնուլ, ածել, դնել, ունիմ բայերը ներգործական լինելով պահանջում են ուղիղ խնդիր, և եթե անվանական բաղադրիչը այդ արժեքը չունի, ապա հարադրությունը ստանում է հայցականով ուղիղ խնդիր, ինչպես՝ ի հաւան ածել, յայտ ածել, յանձն առնել, յամօթ առնել, յայտնի առնել, հիմն ի վեր առնել, յանձն առնուլ, յաւարի առնուլ, ի միտ առնուլ, առաջի դնել, զբռամբ ածել, յանձին ունիմ և այլն։

Օրինակներ՝ Առաջի առնեմ ... զպատգամս (Առակ., Ա)։ Արարից զքեզ յաւերակ (Եզեկ., ԼԵ)։ Ի բաց արարէք ի ձէնջ զաստուածս (Յեսու., ԻԴ)։ Յամօթ արարեր զհայր քո (Բ, Թագ., ԺԹ)։ Յանձն արար նմա զարս և զկանայս (Երեմ., Խ)։ Յայտնի առնէ զանտառս (Սաղ., ԻԸ)։ Զյաշտութիւն յանձն առնուին (Բ, Մակ., ԺԴ)։ Ած յայտ զարարածս (Եզն., 3, ԺԶ)։ Յաւարի առնոյր զկարասի և զստացուածս բազմաց (ՅԴՊՀ, 94)։ Առաջի եդեալ զօրսն՝ գետավէժս առնէին (ՅՄՊՏ, 329ա)։ Զբռամբ ածէին զերասանակս (ԹԱՊՏԱ, 3, ԻԹ)։ Զնոյն սէր յանձին ունիցիք (Փիլիպ., Գ)։ Վատ խորհուրդ ի միտ արկանէր (Ագ., 32)։ Զմնացեալսն փախստական արարեալ՝ հալածական տանէին (Սեբ., Ա)։

Երկրորդ դեպքում գործ ունենք առնել, մասամբ և առնուլ բայերի ուղիղ խնդրի հետ։ Սրանցով կազմված հարադրության անվանական բաղադրիչը ծագմամբ երկրորդ ուղիղ խնդիրն է, իսկ հարադրության լրացումը՝ առաջինը, ինչպես՝ ծաղր առնել, աւերակ առնել, խռամակարկատ առնել, հրձիգ առնել, ահաբեկ առնել, ձերբակալ առնել, գետավէժս առնել, գումարտակ առնել, աւար առնուլ, աշխատ ունիմ և այլն։

Օրինակներ՝ Արարին զերկիր նորա աւերակ (Երեմ., Բ)։ Ծաղր առնէին զմարգարէս նորա (Ա, Եզր., Ա)։ Զաւանս նորա հրձիգ արարին (Թիւք, ԼԱ)։ Ձռաքաղ արարէք զմնացորդս Իսրայելի (Երեմ., Զ)։ Ձերբակալ առնէին զԴեմետրոս (Սեբ., Ա)։ Գումարտակ զբոլոր զօրսն իւր առնէր (ՅԴՊՀ, 312)։ Աւար առեալ զգանձսն Երուսաղայ ... բերէ

Արտաշիսի (Մխ, 2, ԽԸ)։ Միշտ աշխատ ունիմք զտէրն Արեաց և զԱրիս (ՂՓՊՀ, ԽԵ)։

Հայցական անվանական բաղադրիչով կազմված հարադրական բայերը ստանում են տրականով լրացում, որը հիմնականում շահի իմաստ ունի, ինչպես՝ բարի առնել քեզ, դատ առնել որբոյն, առնել իրաւունս որբոյ, գեղ առնուլ վիրաց, խեղդ արկանել ձեզ, կուր արկանել գազանաց, նախանձ արկանել նոցա, ժամ դնել նմա, դարան գործել նմա և այլն։

Օրինակներ՝ Բարի արարից քեզ (Ծնն., ԼԲ)։ Գերեդարձ առնէին քաղաքին (Բ, Մակ., Ժ)։ Ճանապարհ արարէք այնմիկ (Սաղ., ԿԷ)։ Դատ արարէք որբոյն և այրւոյ (Ն. տ., ՁԱ)։ Առնէ իրաւունս եկին և որբոյ (Բ, Օրէնք, Ժ)։ Բռնադատիցէ առնել շուք թագաւորութեան (Դան., ԺԱ)։ Առնէր ուրախութիւն ամենայն ծառայից (Ծնն., ԼԱ)։ Արար քեզ Տէր վրէժխնդրութիւն (Դատ., ԺԱ)։ Առէք դեղ վիրաց դորա (Երեմ., ԾԱ)։ Ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ (Ա, Կորն., Է)։ Գրեսցի կուր արկանել գազանացն (Գ, Մակ., Ե)։ Ոտն հարին ինձ (Ողբ., Ա)։ Դարան գործիցէ նմա (Բ, Օրէնք, ԺԹ)։ Ընդ քո ունիցին ինձ սպաս (Փիլիմոն, 13)։ Դարման տար սմա (Սաղ., ՀԹ)։ Սպաս տարցին սրբոց (Սիրաք, Ղ)։ Եթէ ոք իւրոց և մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի (Ա, Տիմոթ., Ե)։

Շահի հարաբերություն արտահայտվում է նաև լինել բայով կազմված հարադրությունների տրականով լրացման մեջ, ինչպես՝ հովանի լինել, ձեռնտու լինել, պաշտպան լինել և այլն։

Օրինակներ՝ Հովանի լինէր ամենայն գնդին (Ա, Մակ., Գ)։ Ձեռնտու լինէր քեզ (Եսայի, ԾԱ)։ Կարացաք յօժարամիտ լինել քեզ (Ա, Մնաց., ԻԳ)։ Լուսատու լիցի քեզ Քրիստոս (Եփես., Ե)։ Օգտակար լինել նոցա (Բ, Մակ., ԺԲ)։ Պաշտպան լինիցիմ քեզ (Ովսէ., ԺԱ)։ Պատըսպարան լերուք ակարաց (Ա, Թեսաղ., Ե)

Այս դեպքում հարադրությունը կարող է ունենալ նաև այլ ձևերով լրացում։

Օրինակներ՝ Ընդէ՞ր եդիր զիս քեզ ոսոխ (Յովբ., Է)։ Թոյլ արա ինձ սակաւիկ մի հանգչել (Ն. տ., Ժ)։ Ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ (Եբր., Ե)։ Դատ արա ինձ յոսոխէ իմմէ (Ղուկ., ԺԸ)։ Լուսաւոր արարէք ձեզ զլոյս գիտութեան (Ովսէ, Ժ)։ Ի վերայ ծովու հիմունս արկ նմա (Սաղ., ԻԳ)։ Ոչ ետու թոյլ քեզ մերձենալ ի դա (Ծնն., Ի, 6)։

Ասացական բային հարաբերակից անվանական բաղադրիչով հարադրությունները ստանում են հաղորդման տրականով լրացում, ինչպես՝ պատասխանի առնել, ազդ առնել, աւետիս տալ, հրաման տալ, ողջոյն տալ, հրաման հանել և այլն։

Օրինակներ՝ Պատասխանի արարին նմա (Դատ., Ը)։ Ձեզ ազդ արարաք (Եսթ., ԺԳ)։ Որ ետ աւետիս հօր իմոյ (Երեմ., Ի)։ Զի՞նչ հրաման տացես ծառայի քում (Յեսու, Ե)։ Ողջոյն ետուն միմեանց (Ելք, ԺԸ)։ Հրաման հանէր ամենայն զօրաց (Գ, Մակ., Ա)։

Հաղորդման հարաբերություն արտահայտվում է նաև ասացական բային հարաբերակից անվանական բաղադրիչով և այլ բառերով կազմված հարադրությունների՝ տրական լրացմամբ, ինչպես՝ խոստովան լինել, յայտնի լինել և այլն։

Օրինակներ՝ խոստովան եղերուք Տեառն (Ա, Մնաց., ԺԶ)։ Քո առաջադիմութիւն ամենեցուն յայտնի լինիցի (Ա, Տիմոթ., Դ)։ Պատուէր ետ արանց վասն Աբրամու յուղարկել (Ծնն., ԺԲ)։

Լինել, կալ, ունել բաղադրիչներով և տրական պահանջող բայերի արմատակից անուններով կազմված հարադրությունները ստանում են հանգման տրականով լրացում, ինչպես՝ կցորդ լինել, հասու լինել, հնազանդ լինել, յանդիման լինել, պարտական լինել, օգնական լինել, ժոյժ ունել, զդէմ ունել, կալ հակառակ, հպատակ կալ և այլն։

Օրինակներ՝ Չարչարանացն կցորդ լինիմք (Հռոմ., Ը)։ Խաւար նմա ոչ եղև հասու (Յովհ., Ա)։ Ոչ կարեմ ժոյժ ունել նմա (Ա, Մակ., Է)։ Հնազանդ լիցին նմա (Ն. տ., ԺԲ)։ Յանդիման լիցին ինձ (Երեմ., ԻԷ)։ Որում փոքր մի եղերուք չարչարակիցք (Ա, Պետ., Ե)։ Ինքն եղիցի անձին իւրում պարտական (Յեսու, Բ)։ Պարտաւոր լիցի դատաստանի (Մատ., Ե)։ Տրտմակից լինիցի քեզ (Եսայի, ԾԱ)։ Ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն (Գործ., Զ)։ Ի դիմի հարաւ Նիկանովրայ (Բ, Մակ., ԺԴ)։ Եկաց հակառակ եղբօր իւրում (Բ, Օրէնք, ԺԹ)։ Հպատակ կացէք նոցա (Եբր., ԺԳ)։ Յանդիման կալ արքայի (Ա, Մնաց., ԻԴ)։ Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի (Գործ., Ա)։

Առնել, տանել, ունել, տալ, դնել բաղադրիչներով կազմված որոշ հարադրություններ ստանում են վերաբերության տրականով լրացում, ինչպես՝ փոյթ առնել, խնամ տանել, հոգ տանել և այլն։

Օրինակներ՝ Փոյթ արասցես այսմ իրաց (Ա, Եզր., Բ)։ Ընտանեաց խնամ ոչ տանիցի (Ա, Տիմոթ., Ե)։ Կերակրոց իւրոց փոյթ կալցի (Սիրաք, ԼԳ)։ Հոգ տար նոցա (Ն. տ., ԼԵ)։ Վկայութիւն տային երախտեացն (Բ, Մակ., ԺԲ)։ Վկայութիւն դիք տանդ Յակովբայ (Ամովս.,

Գ)։ Եդ նոցա վկայութիւնդ (Բ, Մնաց., ԻԴ)։ Այրն միտ դնէր նմա (Ծնն., ԻԴ)։

Լինել, տալ, հարկանել բաղադրիչներով կազմված որոշ հարադրություններ ստանում են մատուցման տրականով խնդիր, ինչպես՝ մատակարար լինել, փոխ տալ, օրհնութիւն տալ և այլն։

Օրինակներ՝ Մեզ մատակարարք լինէին (Ա, Պետ., Ա)։ Արծաթ փոխ տայցես եղբօր քում (Ելք, ԻԲ)։ Տուր ինձ օրհնութիւն (Դատ., Ա)։ Տամ զդա փոխ Տեառն (Ա, Թագ., Ա)։ Հարկս ումեք ոչ հարկանեն (Ա, Եզր., Բ)։

Սրանք կարող են ունենալ նաև այլ ձևով արտահայտված լրացումներ։

Օրինակներ՝ Զամենայն ինչ փոխ տայցես օտարին (Բ, Օրէնք, ԻԳ)։ Տաց զնոսա քեզ ի փործ և ոչ դաշնաւորս (Եզեկ., ԺԶ)։ Թուրքաստանի թագաւորն... ընծայաբեր նմա լինէր Երիվարս ընտիրս (ՄԿՊԱԱ, 2, ԻԲ)։

Լինել, կալ բաղադրիչներով կազմված որոշ հարադրություններ ստանում են սահմանափակման տրականով լրացում, ինչպես՝ զգոյշ լինել, զգոյշ կալ, խելամուտ լինել, հմուտ լինել և այլն։

Օրինակներ՝ Զգոյշ լեր անձին քում (Ծնն., ԼԱ)։ Խելամուտ լիցիս ամենայնի (Յեսու, Ա)։ Զգոյշ կացէք պահելոյ զշաբաթն իմ (Ելք, ԼԱ)։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց (ԿՎՄ, 9)։

Այս դեպքում տրականի հետ կարող է դրվել նաև բացառական։ Օրինակ՝ Զգոյշ կացէք անձանց յելանելոյ (Ելք., ԺԹ)։

Արժանի առնել, հաւասար առնել և նման հարադրական բայեր ստանում են համապատասխանության տրականով լրացում՝ պահպանելով հանդերձ իրենց այլ լրացումները։

Օրինակներ՝ Հաւասար առնէր զանձն Աստուծոյ (Յովհ., Է)։ Թղթոյ արժանի արար զնա (Մխ, 2, ԼԱ)։

Ակն ածել, զհետ գնալ, դէտ ակն ունել, այց առնել, ընդդէմ լինել և նման հարադրությունները ստանում են ուղղության տրականով լրացում։

Օրինակներ՝ Որք ոչ ակն ածէին ծերոյն (Բարուք, Դ)։ Այց արար Հայոց աշխարհին (Ագ., 13)։ Հանդերձեցին դէտ ակն ունել ճանապարհացն (Ն.տ., 796)։ Դէտ ակն ունէին բշուառութեան (Գ, Մակ., Ե)։ Զհետ երթայք սիրոյ (Ա, Կորն., ԺԴ)։ Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն (ԿՎՄ, 14)։ Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից (Ն. տ.,

29)։ Տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն (Բուզ., 4, ԺԵ)։ Բազում կերպարանօք այցելու եղեր արարածոց քոց (Ն. տ., 5, ԻԸ)։

Ունկն դնել, ունկնդիր լինել հարադրական բարդությունները ըստանում են ընկալման տրականով լրացում։

Օրինակներ՝ Ունկն դիք բանից իմոց (Ծնն., Դ)։ Ունկն դնէին նմա (Գործ., ԻԲ)։ Որ ունկնդիր լինիցի քեզ (Բ, Թագ., ԺԵ)։

Առնել, առնուլ, լինել, ունել, հարկանել, տալ, մատնել, պահանջել, խնդրել, գնալ, կալ բաղադրիչներով կազմված հարադրությունները ստանում են բացառականով խնդիր, որը կարող է արտահայտել տվյալ բայերին կամ անվանական բաղադրիչին արմատակից բայի հատուկ լրացումների իմաստներ (անջատման, խուսափման, պակասության, ներգործող խնդրի և այլն)։

Օրինակներ՝ Ի ձեռաց անպիտան առնէր (Բ, Մակ., Է)։ Ծռաքաղ արարին ի նմանէ (Դատ., Ի)։ Որ ապստամբ եղեն ի քէն (Սաղ., ՀԲ)։ Մի՛ յամօթ առնէր ի յուսոյ իմմէ (Ն. տ., ԾԺԸ)։ Հրաման առ ի հրեշտակէ սրբոյ (Գործ., Ժ)։ Առցէ Տէր զվրէժ իմ ի քէն (Ա, Թագ., ԻԴ)։ Որ կամի փոխ առնուլ ի քէն (Մատ., Ե)։ Ի բաց լիցի յանիրաւութենէ (Բ, Տիմոթ., Բ)։ Զգոյշ լինիջիք ի նզովիցն (Յեսու, Զ)։ Խելամուտ եղէ ի գրոց (Դան., Թ)։ Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց (Ղուկ., ԻԱ)։ Յամօթ լերուք ի պատժանաց ձերոց (Երեմ., ԺԲ)։ Նկուն լիջիք ի ժառանգութենէ (Ն. տ., ԺԷ)։ Ուխտազանց եղեն յԱստուծոյ հարցն իւրեանց (Ա, Մնաց., Ե)։ Օգնական ի թշնամեաց եղիցես նմա (Բ, Օրէնք, ԼԳ)։ Յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն (Եբր., Է)։ Զամօթի հարկանէի ի նմանէ (Տովբ., Բ)։ Ի բաց գնաց յինէն (Ղուկ., Ե)։ Ի բաց եկաց ի նմանէ (Ն.տ., Դ)։ Տամ տասանորդ յամենայն ստացուածոց (Ն.տ., ԺԸ)։ Խոյս ետ Իսրայէլ ի նմանէ (Թիւք, Ի)։ Ի փախուստ դարձցին նոքա յերեսաց ձերոց (Յուդիթ, ԺԴ)։ Խնդրեցից վրէժ ի նմանէ (Բ, Օրէնք, ԺԸ)։ Ի պարտութիւն մատնեցան ի նոցանէ (Ա, Մակ., Թ)։ Դարձեալ պարապ առեալ Շապհոյ ի պատերազմացն՝ առաքէ ի վերայ Արշակայ զԱլանաոզան ոմն պահլաւիկ (Մխ, 3, ԼԴ)։ Կապուտ կողոպուտ թողուն բ ստացուածոց (ԹԱՊՏԱ, 1, Ժ)։ Դու ո՞վ էիր՝ որ համարս պահանջէիր յԱստուծոյ (Եղն., Բ, ԺԷ)։ Ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց (Հռովմ., Ը)։

Անփոյթ առնել, այց առնել, զմտաւ ածել, չարախօս լինել, չարախօս կալ, հռչակ հարկանել հարադրությունները պահանջում են



8—498

զ+բացառական կառույցով լրացում, որը վերաբերության իմաստ է արտահայտում (պատմական բացառական)։

Օրինակներ՝ Անփոյթ արարից զՅուդայէ (Ովսէ, Ժ)։ Առնիցէ այց զինէն հայր քո (Ա, Թագ., Ի)։ Զմտաւ ածել զնմանէ (Իմաս., Ջ)։ Եղեն չարախօս զՀրէից (Դան., Գ)։ Չարախօս կային զանձնէ իմմէ (Սաղ., Հ)։ Յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս Յիսուս (Բ, Կորն., Բ)։ Որ փոյթ առնէր զնմանէ (Դատ., Գ)։ Մի անփոյթ առներ զշնորհացդ որ ի քեզ են (Ա, Տիմոթ., Դ)։

Պինդ ունել հարադրության մոտ զ+բացառական կառույցն արտահայտում է հանգման իմաստ։ Օրինակ՝ Զերկիւղէ Տեառն պինդ ունիցի (Սիրաք. ԻԷ)։

Փառաւոր առնել, քարկոծ առնել, զօրաժողով լինել, ամօթ լինել, ուրախ լինել, ծափս հարկանել, փող հարկանել և նման հարադրությունները ստանում են գործիականով լրացում՝ միջոցի իմաստով։

Օրինակներ՝ Փառաւոր առնէին ինև զԱստուած (Գաղ., Ա)։ Քարկոծ արասցեն զնա քարամբք (Ղեւ., Ի)։ Զօրաժողով լինէր զօրօք բազմօք (Ա, Մակ., Ա)։ Մի՛ իւիք յամօթ եղէց (Փիլիպ., Ա)։ Ես էի որով ուրախ լինէր Տէրն (Առակ., Ը)։ Ծափս հար ձեռամբ (Եզեկ., Զ)։ Փողս հարկանէին փողովք (Դ, Թագ., ԺԱ)։

Ծաղր առնել, գիրկս արկանել, գութ արկանել, ձեռն արկանել, պահ արկանել հարադրությունները ստանում են զ+գործիական կառույցով լրացում։

Օրինակներ՝ Ծաղր առնէ զերիվարաւ (Յովբ., ԼԹ)։ Գիրկս արկցէ զքև (Առակ., Դ)։ Արկից զձեօք գութ (Երեմ., ԽԲ)։ Արկցէ զձեռն իւր զինև հզօրն (Յովբ., ԺԳ)։ Զցայգ պահ արկցուք զմեօք (Նեեմի, Դ)։

Մարտ դնել, պահ դնել, բակ ունել հարադրությունները ստանում են շուրջ+զ+գործիական կառույցով լրացում։

Օրինակներ՝ Մարտ պատերազմի եդին շուրջ զնովաւ (Ա, Մակ., Զ)։ Լոյսն շուրջ զնովաւ բակ ունէր (Եզեկ., Ա)։ Զքև շուրջ պահ դիցէ (Ն. տ., ԻԶ)։

Հնազանդ լինել հարադրությունը պահանջում է ընդ+գործիական կառույցով լրացում։ Օրինակ՝ Հնազանդ լեր ընդ ձեռամբ նորա (Ծնն., ԺԶ)։

Հարադրական բայերը ստանում են նաև նախդրավոր ու նախադրությամբ կառույցներով լրացումներ՝ պայմանավորված և՛ բայական, և՛ անվանական բաղադրիչների խնդրառական հատկությամբ։ Այսպես, դատաստան առնել, խոնարհ առնել, վրէժխնդրութիւն առնել, ցանկալի

առնել, ձեռն արկանել, տապաստ արկանել, ասպատակ դնել, աշխատ լինել, ապաստան լինել, լու լինել, լսելի լինել, ոխտադիր լինել, ուրախ լինել, վստահ լինել, պարծանս ունել, աւար հարկանել, հաստատուն կալ, փառս տալ, խնամ տանել, չու առնել, քարաձիգ լինել *և նման բայեր ստանում են* ի+հայցական *կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով։*

Օրինակներ՝ *Արարից* ի քեզ *դատաստանս (Եզեկ., Ե)։ Արասցեն* ի քեզ *վրէժխնդրութիւն (Ն. տ., ԺԶ)։ Խոնարհ արար* յերկիր *զկեանս իմ (Սաղ., ՃԽԲ)։ Արարին զվիճակն իմ ցանկալի* յանապատ *(Երեմ., ԺԲ)։ Ձեռն մի՛ արկանէք* ի նա *(Ծնն., ԼԷ)։ Արկին տապաստ* յերկիր *(Դատ.,* Ի)։ *Ասպատակ դնէին* ի քաղաք *մի (Բ, Մակ., ԺԲ)։ Որ* ի նոսա *ապաստան եղեն (Ն. տ.)։* Յոր *ոչ եղեր ինչ աշխատ (Յովնան, Գ)։ Լու լիցի* յԵրուսաղէմ *(Երեմ., Դ)։ Լսելի լինի* ի տուն *Յուդայ (Երեմ., Ե)։* Ի քեզ *ոխտադիրս լինիցին (Եսայի, ԽԵ)։ Մի՛ ուրախ եղիցին* յիս *թշնամիք իմ (Սաղ., ԼԷ)։ Վստահ եղեն* ի նա *(Դատ., Թ)։ Փառաւոր լինէին* յաչս *ժողովրդեանն (Ա, Մակ., Ե)։ Ունիմք այսուհետև պարծանս* ի Քրիստոս Յիսուս *առ Աստուած (Հռոմ., ԺԵ)։* Ի տուն *նորա աւար հարկանել (Մարկ., Գ)։ Հաստատուն կացէք* ի սէր *իմ (Յովհ., ԺԵ)։ Տաց զփառս իմ* ի ձեզ *(Եզեկ., ԼԹ)։ Խնամ մի՛ տանիք* ի ցանկութիւնս *(Հռոմ., ԺԳ)։ Ժաման կացուցես* ի հանդիպումն *յուսոյն (ԳՆՄՈ, ՁԵ)։*

Զահ արկանել, անգէտ լինել, զուարթ կալ, ի փախուստ դառնալ, հաճոյ թուել *հարադրությունները ստանում են* ի+տրական *կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով։*

Օրինակներ՝ *Արկ զահ քո* յամենայնի *(Սիրաք, ԼԳ)։ Մի՛ անգէտ լինիր* ի փոքու (Ն. տ., Ե)։ *Դու զուարթ կաց* յամենայնի *(Բ, Տիմոթ., Դ)։ Ի փախուստ դարձան* ի դաշտակողմանն *(Յուդիթ., ԺԵ)։ Հաճոյ թուեցաւ* ի ժողովրդեանն *(Ա, Մնաց., ԺԴ)։*

Արդարութիւն առնել, դաշինս առնել, դատ առնել, խաղաղութիւն առնել, հաղորդութիւն առնել, հնազանդ առնել, սքանչելիս առնել, խեղդ արկանել, խեղդ լինել, դատ դնել, ուխտ դնել, վկայութիւն դնել, հաշտ լինել, ուրախ լինել, հաղորդութիւն ունել, փող հարկանել, հակառակ կալ, ցանգ կալ, յուխտ մտանել *և այլ հարադրություններ ըստանում են* ընդ+հայցական *կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով, որոնց մեջ գերակշռում է հանգման-միասնության իմաստը։*

Օրինակներ՝ *Դատ արասցէ Աստուած* ընդ իս *(Ծնն., ԺԶ)։ Զայս արդարութիւն արասցես* ընդ իս *(Ն. տ., Ի)։ Դաշինս արասցէ* ընդ նոսա

(Ա, Մակ., ԺԱ)։ Արար ընդ նոսա խաղաղութիւն (Բ, Մակ., ԺԲ)։ Խնամութիւն առնիցէք ընդ նոսա (Յեսու, ԻԳ)։ Հաղորդութիւն ինչ առնել ընդ աղքատս (Հռոմ., ԺԵ)։ Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ (Սաղ., ԻԶ)։ Որ արար ընդ ձեզ սքանչելիս (Յովէլ. Բ)։ Խեղդ ընդ անձն արկեալ՝ ձգեն զնոսա ի խորխորատ (Եզն., 2, Բ)։ Հանապազ խեղդ ընդ անձն հոգւոց մարդոյն դեւն լինիցի (Ն.տ., 1, ԻԲ)։ Եդի դատ ընդ հարս ձեր (Եզեկ., Ի)։ Եդից զուխտ իմ ընդ քեզ (Ծնն., Զ)։ Դնեմ վկայութիւն ընդ ձեզ այսօր (Բ, Օրէնք, ԼԲ)։ Հաշտ լինէր ընդ նոսա (Բ, Մակ., Ժ)։ Ուրախ լինիցին ընդ չարիս (Առակ., Բ)։ Հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս (Ա, Յովհ., Ա)։ Փող հարէք ընդ ազգս ամենայն (Երեմ., ԾԱ)։ Հակառակ կալ ընդ հակառակորդս նոցա (Բ, Մակ., Ժ)։ Կանգ կայիք ընդ իս (Ղուկ., ԻԲ)։ Յուխտ մտի ընդ քեզ (Եզեկ., ԺԶ)։

Դաշինս առնել, զգաստ առնել, խնամութիւն առնել, քաղցրութիւն առնել, ուխտ դնել, ուրախ լինել, հաղորդութիւն ունել, դաշինս կռել, պատերազմ տալ և այլ հարադրությունները պահանջում են ընդ+տրական կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով։

Օրինակներ՝ Առնել դաշինս ընդ նմա (Դան., ԺԱ)։ Զգաստ արա ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրիցս դանդաղութիւն (ԳՆՄՈ, ՋԴ)։ Խնամութիւն արար Սողոմոն ընդ փարաւոնի (Գ, Թագ., Գ)։ Քաղցրութիւն արա ընդ ծառայի քում (Սաղ., ՃԺԸ)։ Դիցէ ընդ նմա ուխտ (Եզեկ., ԺԷ)։ Ուրախ լինիցին ընդ նմա (Եսթ., Ե)։ Դաշինս կռեցին ընդ նմա (Իմաս., Ա)։ Կենաց հաղորդութիւն ունի ընդ Աստուծոյ (Ն. տ., Ը)։ Տայր պատերազմ ընդ Իսրայելի (Ելք, ԺԷ)։

Առաւօտ առնել, դարձ առնել, ազդ առնել, խնդրուածս առնել, նկուն առնել, առակ արկանել, վկայութիւն դնել, խոստովան լինել, պատասխանի տալ և այլ հարադրությունները պահանջում են առ+հայցական կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով։

Օրինակներ՝ Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք (Սաղ., ԿԶ)։ Առաւօտ առնէին առ Աստուած (Ն.տ., Հէ)։ Դարձ արա առ բարձրեալն (Սիրաք, ԺԷ)։ Ազդ արարեալ առ քեզ (Յովբ., Խ)։ Խնդրուածս առ Աստուած առնէին (Բ, Մակ., Ժ)։ Նկուն ինչ առնիցէ զիս Աստուած իմ առ ձեզ (Բ, Կորն., ԺԲ)։ Այլ առակ արկ առ նոսա (Մատ., ԺԳ)։ Դարձեալ եղիր վկայութիւն առ նոսա (Նեէմի, Թ)։ Զի՞նչ տաց առ այդ պատասխանի (Յովբ., ԼԹ)։

Այց առնել, գումարտակ առնել, խնայ առնել, կոծ առնել, ճանապարհ առնել, վրէժխնդրութիւն առնել, առակ առնուլ, ողբս առնուլ,

վազս առնուլ, ձեռն արկանել, վիճակս արկանել, ձեռն դնել, օրէնս դնէլ, զօրաժողով լինել, հովանի լինել, խորհուրդ ունել, հովանի ունել, ի վարձու ունել, մարտ տալ և նման հարադրական բայեր ստանում են ի վերայ+սեռական կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով։

Օրինակներ՝ Այց արարից ի վերայ նոցա (Երեմ., ԺԱ)։ Գումարտակ արար ի վերայ նոցա (Ա, Մակ., Գ)։ Արար վրէժխնդրութիւն ի վերայ արանցն (Ն. տ., Է)։ Ի վերայ գիտութեանց իմոց մի՛ արասցեն խնայ (Սիրաք, ԻԳ)։ Արարին կոծ մեծ ի վերայ նորա (Գործ., Ը)։ Ճանապարհ արար ի վերայ նորա (Յովբ., Լ)։ Առից ի վերայ ձեր առակ (Մք., Բ)։ Առցեն ողբս ի վերայ ձեր (Երեմ., Թ)։ Վազս առնու ի վերայ լերանց (Երգ., Բ)։ Արկից զձեռն իմ ի վերայ քո (Եսայի, Ա)։ Ի վերայ ժողովրդեան իմոյ վիճակս արկանէին (Յովէլ, Գ)։ Դիցես զձեռն քո ի վերայ նորա (Թիւք, ԻԷ)։ Օրէնս եդ ի վերայ Իսրայելի (Սաղ., ՀԷ)։ Զօրաժողով եղեն ի վերայ Երուսաղեմի (Եսայի, ԻԹ)։ Հովանի լինիցի ի վերայ նորա (Թիւք Թ)։ Յորս հովանի ունիցի ամպն ի վերայ խորանին (Ն. տ.)։ Ոչ ուրախ լինի հայր ի վերայ որդւոյ անխրատի (Առակ., ԺԷ)։ Խորհուրդ կալան ի վերայ սեղանոյ ողջակիզացն (Ա, Մակ., Դ)։ Ի վարձու կալաւ ի վերայ մեր (Դ, Թագ., Է)։ Ետ մարտ պատերազմի ի վերայ ազգին իւրեանց (Ա, Մակ., ԺԴ)։

Ուղիղ առնել, պատրաստ առնել, գութ արկանել, վկայութիւն դնել, փախստական լինել, աւետիս տալ, փախստական տանել, հանոյ թուել հարադրությունները ստանում են առաջի+սեռական կառույցով լրացում՝ տարբեր իմաստներով։

Օրինակներ՝ Ուղիղ արա առաջի իմ զճանապարհս քո (Սաղ., Ե)։ Պատրաստ արարեր առաջի իմ սեղան (Ն. տ., ԻԲ)։ Արկանէի գութս առաջի Տեառն (Դան., Թ)։ Վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ (Ա, Տիմոթ., Ե)։ Փախստական լինէր առաջի նորա (Ա, Մակ., Ա)։ Աւետիս տայցէ առաջի իմ (Բ, Թագ., Դ)։ Առաջի իւրեանց փախստական տանէին (Բ, Մակ., Ը)։ Հաճոյ թուեցաւ առաջի իմ (Բ, Օրէնք, Ա)։

Զմտաւ ածել, գիտութիւն առնել, թոյլ լինել, փոյթ լինել, հոգ տանել, սուգ առնուլ հարադրությունները ստանում են վասն+սեռական կառույցով լրացում՝ վերաբերության իմաստով։

Օրինակներ՝ Զմտաւ ածէր՝ վասն տեսլեանն (Գործ., Ժ)։ Գիտութիւն արարին կայսերն վասն նորա (Սեբ., Ե)։ Թոյլ լիցի ձեզ վասն ձերոց իրաց (Բ, Մակ., ԺԱ)։ Փոյթ լիցի նմա վասն սրբութեան (Ա, Մակ., ԺԳ)։ Հոգ տար վասն անուան (Սիրաք, Դ)։ Սուգ առ վասն նորա Եգիպտոս (Ծնն., Ծ)։

Դատ առնել, խարոյկ արկանել հարադրությունները ստանում են ի մէջ+սեռական կառույցով լրացում։

Օրինակներ՝ Դատ արասցէ Աստուած ի մէջ մեր (Յուդիթ, է)։ Խարոյկ ի մէջ քաղաքին արկանէին (Բ, Մակ., Ժ)։

Պատասխանի առնել հարադրությունը կարող է ստանալ ընդդէմ+տրական կառույցով լրացում։ Օրինակ՝ Արար ինձ ընդդէմ պատասխանի (Յովբ., ԺԶ)։

Վրէժ խնդրել հարադրական բայը ստանում է ի ձեռն+սեռական կառույցով լրացում։ Օրինակ՝ Մի՛ խնդրեսցէ վրէժ ի ձեռն քո (Ղևտ., ԺԹ)։

Մի շարք հարադրություններ պահանջում են անվանական բաղադրիչի լրացում՝ սեռական հոլովով, ինչպես՝ յափշտակութիւն առնել, կոխան առնել, զփորձ առնուլ, վրէժ խնդրել, վրէժխնդրութիւն խնդրել, զփորձ խնդրել և այլն։

Օրինակներ՝ Ոտից իւրոց կոխան արար զնա (Դան., Ը)։ Կէսք զտանջանաց և զգանից զփորձ առին (Եբր., ԺԱ)։ Խնդրէր զվրէժն օրինացն (Ա, Մակ., ԺԴ)։ Խնդրեցից զվրէժխնդրութիւն իմ (Դատ., ԺԶ)։ Զփորձ ի՞նչ խնդրէք զՔրիստոսի (Բ, Կորն., ԺԳ)։ Յափշտակութիւն առնէր ընչից և արարոց (Եղ., 1)։ Արկին հիմն տանն Տեառն (Ա, Եզր., Ե)։ Ո՞յր բանիւ արկէք զհիմունս դորա (Ն. տ., Զ)։ Արկ հիմունս տաճարիս այսորիկ (Ն. տ.)։ Մի թուլանար հաւասարորդ նորա լինել (Սիրաք, ԺԳ)։

## 2. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԻ ԹԵՔ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

Գրաբարում բայի լրացումներն արտահայտվում էին տրական, հայցական, բացառական, գործիական հոլովներով։ Ինչպես նշվեց, անորոշ, ներկա (ենթակայական), երբեմն և անցյալ դերբայների մոտ ուղիղ խնդիրը կարող է դրվել նաև սեռականով, որը տվյալ դեպքում համատեղում է հատկացուցչի իմաստը։

### Ա. Բայի լրացումները տրական հոլովով

Գրաբարում տրական հոլովը իմաստային տեսակետից ավելի սահմանափակ է։ Բանն այն է, որ արդի հայերենում տրական ստացող բայերի մի մասը գրաբարում տրական չէր ստանում, իսկ մի շարք բայեր էլ տրականով խնդրին զուգահեռ և ավելի հաճախ ունենում էին այլ ձևերով արտահայտված լրացում։ Այսպես, բարկանալ, զայրանալ, զգուշանալ, խորհել, խօսել և այլ բայեր լրացում էին ստանում տրականով և միաժամանակ այլ հոլովներով, ինչպես և նախդրավոր ու նախադրությամբ կառույցներով։

**Օրինակներ՝** *Մի բարկասցես ծառայի քում (Ծնն., ԽԴ)։ Տէր բարկացաւ* ինձ *վասն բանիցն (Բ, Օրէնք, Դ)։ Բարկասցի սրտմտութեամբ Տէր* ի ձեզ (Ն. տ., Է)։ *Բարկացաւ Տէր* ի վերայ ձեր *սատակել զձեզ (Ն. տ., Թ)։ Զայրանային* նմա *յոյժ (Մարկ., ԺԴ)։ Զայրացան իշխանքն* ի վերայ Երեմիայի *(Երեմ., ԼԷ)։ Զայրացար* ի մայրակերտս *հօր քոյ (Ն. տ., ԻԲ)։ Զգուշացարուք յոյժ* անձանց *(Բ, Օրէնք, Դ)։ Զգուշացայ* ի ճանապարհս *քո (Սաղ., ԾԺԸ)։ Խորհուրդք բարեաց զգուշասցին* զքեզ *(Առակ., Բ, 11)։ Զգուշացայց* յանօրէնութենէ *իմմէ (Բ, Թագ., ԻԲ)։ Ոյք խորհէին* ինձ *չար (Սաղ., Ա)։ Խորհեցարուք* զինէն *ի չարութիւն (Ծնն., Ծ)։ Խորհեցաւ* ընդ նա *(Յեսու, ԺԵ)։* Վասն այսր *խորհէսցուք (Նեեմի, Զ)։ Խորհեցաւ* ընդ նա *(Յեսու, ԺԵ)։* Վասն այսր *խորհեսցուք (Նեէմի, Զ)։ Խօսեցան նմա* զբանն *Տեառն (Գործ., ԺԶ)։ Խօսեցաւ* Տէր Աստուած ընդ նոյա *(Ծնն., Ը)։ Նա* ընդ նոսա *խօսէր (Ն.տ., ԻԹ)։ Որ խօսէր* ցիս *(Յայտն., Ա)։*

*Պարագայական մի շարք իմաստներ (ձևի, վիճակի, ժամանակի) գրաբարում հիմնականում նախդրավոր ու նախադրությամբ կառույցներով էին արտահայտվում*[5]*։ Դրանք խիստ սահմանափակ դեպքերում էին տրականով դրվում։ Նկատելի է, որ գրաբարում տրականը գերազանցապես խնդրային իմաստների դրսևորմանն է ծառայում։*

## Բայի լրացումները խնդրային տրականով

*Գրաբարում տրական հոլովով արտահայտվում էին հանգման, մատուցման, շահի (և վնասի), հաղորդման, ընկալման, ուղղության, վերաբերության, սահմանափակման, փոխարինության, համապատասխանության, փոխադարձ կապի, միջնորդական խնդրի, ներգործող խնդրի, ուղիղ խնդրի իմաստները։ Այս կամ այն իմաստով լրացում ստանալը պայմանավորված է ինչպես լրացյալ բայի խնդրառական հատկությամբ, այնպես էլ լրացումների բառային իմաստով։*

*Գրաբարում նույնպես որոշ լրացումներ համատեղում էին մեկից ավելի խնդրային իմաստներ։*

*Խնդրային իմաստների քննարկման ժամանակ աչքի է զարնում մի երևույթ։ Դա մեծ խումբ կազմող այն բայերի առկայությունն է, որոնք միայն գրաբարում էին տրականով խնդիր ստանում։ Այդպիսին են* աչառել, առնուլ, բարկանալ, դիւրել, երանել, զայրանալ, զգալ,

5 *Տե՛ս «Բայի լրացումները նախդրավոր և նախադրությամբ կառույցներով» հատվածը, էջ 165։*

զգուշանալ, թագաւորել, ժամանել, խելամտել, խորհել, խօսել, կալ, մնալ, կարել, կարկել, հաճել, հանդարտել, հարկել, հոգալ, մեղանչել, միտ դնել, յուսալ, ներել, ուշադրել, պաշտել, պաշտպանել, պարապել, սաստել, ստել, վկայել, վաստակել, տանել, տեւել, տեղեկանալ, տկարանալ, տուժել, ցանկանալ, ցասնուլ, ցաւել, քաղցրել և այլն։ Սրանց մի մասը հետագայում դուրս եկավ գործածությունից (աչառել, դիւրել, խելամտել, կարկել, հարկել, ցասնուլ, քաղցրել), իսկ մյուսներն էլ դադարեցին տրականով խնդիր ստանալ, մանավանդ որ, ինչպես նշվեց վերևում, սրանցից մի քանիսը զուգահեռաբար ստանում էին այլ ձևերով դրվող խնդիր[6]։

**Բայի լրացումը հանգման տրականով.—** Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը։ Գրաբարում այսպիսի լրացում ստանում էին երևել, ընդդիմանալ, ժուժալ, ժուժկալել, իշխել, կոփել, հաղորդել, համբերել, հասանել, հանդուրժել, հաւանել, հաւատալ, հնազանդել, հետեւել, հպատակել, մնալ, յուսալ, ոխտել, ուշադրել, պատահել, սկսանել, սպասել, տանել, տեւել, ցուցանել և այլ բայեր։ Լրացում դառնում են ինչպես թանձրացական, այնպես էլ վերացական գոյականներն ու դերանունները։

Օրինակներ՝ Հրէական իմացմանն հետեւել՝ հայհոյեաց զամենասուրբ կոյսն (Մխ, 3, ԿԱ)։ Ընդդիմանան կամաց թագաւորին (Ն.տ., 2, ՂԲ)։ Զի՞արդ արդեօք կարէ մարմին մարդոյ տևել ժուժկալել այսպիսի դժոխըմբերելի քրձի (Յ՛ԻՊՀ, 104)։ Ոչ ժուժէին յարձակման այլազգեաց (ԹԱՊՏԱ, 5, ԺԲ)։ Իշխեսցեն ձկանց ծովու և թռչնոց երկնից և անասնոց (Ծնն., Ա)։ Բազում կոփեալ միմեանց և ոչինչ եղև (ՅՄՊՏ, 282ա)։ Ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ (Փիլիպ., Դ)։ Համբերեն քեզ (Սաղ., ԻԴ)։ Թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ (Բուզ., 5, Դ)։ Որպէս երեւէր իմաստնոցն (Եղ., 1)։ Հասին երկնաւոր բարձրութեանն (Ն. տ., 7)։ Ոչ կարէր հանդուրժել սաստիկ բռնութեան անհրոյն (ՂՓՊՀ, Ի)։ Ոչ հաւատայցեն ինձ (Ելք, Դ)։ Ոչ հնազանդեցաւ հրամանի քում (Դատ., Զ)։ Յարեաւ խռովութիւն արքային Պարսից Շապհոյ ի հիւսիսականաց ազգաց (Մխ, 3, ԺԹ)։ Պատուական ընծայիւք հպատակէ նմա և մեծամեծացն (ՂՓՊՀ, ԿԴ)։ Մնայցեմ լուսոյ առաւօտու (Դ, Թագ., Է)։ Յուսաս աներևութից պարգևաց նորին (ԳՆՄՈ, Ժ)։ Զոր

---

6 Պատմագեղարվեստական գրականության մեջ, արդի հայերենում, երբեմն սրանք կարող են գործածվել հին խնդրառությամբ, ինչպես՝ ներել անհոգությանը, հաճել թագավորին, պարապել որսորդության և այլն։

ուխտեցից տանդ Իսրայէլի (Երեմ., ԼԱ)։ Փախստեայ փախստէի պատահեսցէ, և գումկան գումկանի դիպեսցի (Ն. տ., ԾԱ)։ Ճանապարհին ուշադրէին (ՂՓՊՀ, ԽԲ)։ Մինչ ծայրատութեան մատանցն սպասէ (ԳՆՄՈ, ՀԴ)։ Ո՞րպէս տարաւ անպատումն և անբաւ բազում չարչարանացն (ՂՓՊՀ, Բ)։ Ամենայնի տեէ, ամենայնի հաւատայ, ամենևին յուսայ, ամենայնի համբերէ (Ա, Կորն., ԺԳ)։ Յուցանէր նմա զվէրն, նշանացէր նմա բժշկել զինքն (Բուզ., 5, ԻՁ)։ Արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին (Մխ, 1, ԺԱ)։ Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տոփանացն (Բուզ., 4, ԺԴ)։

Բայի լրացումը մատուցման տրականով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան է տրվում, մատուցվում։ Այսպիսի լրացում ստանում են բաշխել, ընծայել, հարկել, մատնել, մատուցանել, յանձն առնել, շնորհել, պարգևել, պարգևատրել, պաշտել, տալ, տանել և այլ բայեր։

Լրացում կարող են դառնալ բազմաթիվ գոյականներ՝ առանց իմաստային սահմանափակման։

Օրինակներ՝ Պարգևք խորհրդոյն ձեզ բաշխիցին (Ագ., 826)։ Պարգևս այնոցիկ շնորհէր (Ն. տ., 869)։ Տէր ետ առաքելոցն (Ն. տ., 468)։ Զարին պարգևէ աշակերտացն (Ն. տ., 468)։ Զձեր օգուտն ձեզ մատուցանել (Ն. տ., 239)։ Անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո (ԳՆՄՈ, ԽԲ)։ Օծումն կենաց պարգևատրեսցես քո աղաչողիս (Ն. տ., ԿԲ)։ Մատնել զարքայն իւր հեթանոս արքայի ոչ առնոյր յանձն (ՅԴՊՀ, 56)։ Սատոյց պատարագ Աստուծոյ հօր իւրոյ Իսահակայ (Ծնն., ԽԶ)։ Մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնն Արամանեկայ որդւոյ իւրում (Մխ. 1, ԺԲ)։ Ամենայն նախարարացն տայր պարգևս և պատիւս (Ն. տ., 2, ԽԴ)։ Որք առակաւ և օրինակաւ պաշտէին երկնաւորացն (Եբր., Ը)։ Տարաւ նոր իւրում (Ծնն., Իէ)։ Ոչ հարկիցէք արքային (Երեմ., Իէ)։

Բայի լրացումը շահի (և վնասի) տրականով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի օգտին (կամ ի վնաս որի) կատարվում է գործողությունը։ Գրաբարում այս իմաստով լրացումը շատ գործածական է։ Լրացյալ դառնում են բազմաթիվ իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝ աղօթել, աշխատել, առաջնորդել, առատանալ, առնել, առնուլ, ասել, արբանեկել, բղխել, բուսանել, գտանել, դիտել, ախոյեան ելանել, երկրպագել, երկիր պագանել, զոհել, ընտրել, բագաւորել, թողուլ, խորհել, ծառայել, ծնանել, հովուել, մեղանչել, մնալ, ներել, նեղութիւն յանախել, ողորմել, ոսալ, պաշտպանել, պատրաս-

տել, սահմանել, սպասաւորել, սրել, վաստակել, վնասել, դարման տանել, տուժել, քաղցրանալ և այլն։ Լրացումը կարող է արտահայտվել և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականներով։

Օրինակներ՝ Առաջնորդեա ինձ ի ճշմարտութեան (Սաղ., ԻԴ)։ Թէ թշնամւոյն չաղօթես որպէս քեզ, ապա լաւ է չաղօթել (Եզն., ԻՏ)։ Կաւագործութեան վաստակասէր անօրէնութեանն աշխատէին (Ագ., 577)։ Այլ որ առատանայ ամենեցուն՝ տուր մեզ (Ն. տ., 96)։ Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ (Հռովմ., ԺԴ)։ Աբրամու բարիս առնէին վասն նորա (Ծնն., ԺԲ)։ Ջուղտերամակս նոցա առցեն իւրեանց (Երեմ., ԽԹ)։ Զդստերս հեթանոսաց ոչ առցուք որդւոց մերոց (Գ, Եզր., Ժ)։ Անուան քում Սաղմոս ասացից (Բ, Թագ., ԻԲ)։ Քո արարածք քեզ արարչիդ արբանեկեն (Իմաս., ԺԶ)։ Ընդէ՞ր փոխանակ լուսոյդ ինձ ոսկի ոչ բղխես (ԹԱՊՏԱ, 4,Զ)։ Ախոյեան ելանեմ քեզ ի մերոց զօրաց աստի (Ագ., 39)։ Բուսան քեզ ճարակք ի դաշտս և յառապարս (Ն. տ., 536)։ Գտջիք հանգիստ անձանց ձերոց (Ն. տ., 446)։ Եթէ կամիցիք դիւրել անձանց (Եսայի, ԼԶ)։Սթափեսցի ի սոյն յայս նշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ (ԳՆՄՈ, Գ)։ Դիւաց և ոչ Աստուծոյ զոհեն (Ա, Կորն., Ժ)։ Ընտրէր անձին իւրում կայս հանգստեան (Ագ., 855)։ Մի՛ թագաւորեսցէ մեզ Սաւուղ (Ա, Թագ., ԺԱ)։ Ոչ թողից քեզ զանարգանս դիցն (Ագ., 62)։ Ծառայեցի քեզ յամենայն զօրութենէ իմմէ (Ն. տ., 52)։ Զնոյն միմեանց խորհիջիք (Հռովմ., ԺԲ)։ Ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի (Բուզ., 4, ԺԵ)։ Ոչ ինչ մեղաք քեզ (Ծնն., ԻԶ)։ Ողորմեցաւ ինձ Աստուած (Ն.տ., ԼԳ)։ Ել ի դաշտ և որսա ինձ որս (Ն.տ., ԻԷ)։ Թագաւորութիւն նորա ազգի այլում ոչ մնասցէ (Դան., Բ)։ Ներեցէք ինձ (Յովբ., ԻԱ)։ Նեղութիւն յաճախեմ քեզ փոխանակ կենաց (Ագ., 55)։ Աստուածն նոցա պաշտպանէ նոցա (Յուդիթ., Զ)։ Մտցուք ի յարկսդ, զոր պատրաստեցեր սիրելեաց քոց (Ագ., 195)։ Կարգս կենցաղականս ... սահմանեաց աշխարհիս (Մխ, 2, Գ)։ Եւս առաւել սպասաւորեմք սուրբ ոսկերաց նոցա (Եղ., 7)։ Ստեսցէ ընկերի իւրում (Ղևտ., Զ)։ Վաստակեսցես ինձ զեօթն ամ (Ծնն., ԻԹ)։ Մի՛ վնասէք երկրի, մի՛ ծովու, մի՛ ծառոց (Յայտն., Է)։ Կրկին տուժեսցի ընկերի իւրում (Ելք, ԻԲ)։ Քաղցրացան նմա խիճք հեղեղատի (Յովբ., ԻԱ)։

**Բայի լրացումը հաղորդման տրականով.**— Լրացումը ցույց է տալիս այն առարկան (մեծ մասամբ անձ), որին մի բան է հաղորդվում։ Սա գերազանցապես ասացական բայերի լրացում է լինում, ինչպես՝ ազդել, աւետել, աւետիս տալ, աւետարանել, երանել, զգացուցանել,

խօսել, կրկնել, հրամայել, յայտնել, պատմել, սաստել և այլն։

Լրացում դառնում են հիմնականում անձ ցույց տվող գոյականները։

Օրինակներ՝ Իսկոյն ազդեցին Վաղերիանոսի կայսեր (Մխ, 2, ՀԶ)։ Զգացոյց աներոյն իւրոյ Արտաւազդայ ... զԳրիգոր Անակայ լինել որդի (Ն. տ., ԶԲ)։ Կենդանի ձայնիդ քո, գթած, ապառումս պատասխանեցի (ԳՆՄՈ, ԿԴ)։ Վճռեալ կոչկոճելոյս մի՛ բարկութիւն կրկնեսցես (Ն. տ., ԿԶ)։ Աւետարանել աշակերտացն զտեսեալ զսքանչելիսն (Ագ., 485)։ Պատմեցից զանուն քո եղբարց իմոց (Ն.տ., 589)։ Յայտնեաց իւրոց առաքելոցն (Ն. տ., 471)։ Տայր աւետիս աշակերտացն (Ն. տ., 714)։ Երանիցեն նմա (Սաղ., ՀԱ)։ Որ խօսեցան ձեզ (Եբր., ԺԳ)։ Նա հրամայեաց ինձ առնել (Բ, Եզր., Ա)։ Սաստեաց նմա հայրն իւր (Ծնն., ԼԷ)։ Հրամայեաց սպասաւորացն իւրոց պատրաստել ճաշ կրօնաւորացն (ՅՄՊՏ, 287 բ)։ Ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն Հրէից (Գործ., ԺԱ)։

Բայի լրացումը ընկալման տրականով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին ունկնդրում է ենթական։ Սա խիստ սահմանափակ թվով բայերի լրացում է լինում, ինչպես՝ անսալ, լսել, ունկն դնել, ուշադրել: Լրացում դառնում են և՛ անձ, և՛ իր ցույց տվող գոյականները։

Օրինակներ՝ Անսաց և Իսրայելական ազգին (Ագ. 404)։ Լուիցէ ձայնի իմում (Յայտն., Գ)։ Անսայցէ Աստուծոյ (Եզն., 1, Ա)։ Բայց միայն չարախօսացն ունկն մի՛ դնիցես (Բուզ., 5, Ե)։ Պարտիս ուշադրել Եսայեայ (Ղև., Պատմ., ԺԴ)։

Բայի լրացումը ուղղության տրականով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին ուղղված է գործողությունը։ Լրացյալ դառնում են սահմանափակ թվով բայեր։ Արդի հայերենում ուղղության տրականով խնդիր ստացող նայել, ձգտել, ուղղել և նման բայեր գրաբարում այդ իմաստի լրացում ստանում էին նախդրավոր կառույցներով։ Ուղղության տրական ստացող բայերից են՝ արձակել, բաղձալ, զգալ, ըղձալ, ժամանել, կարօտել, կարօտանալ, յարձակել, ցանկանալ և այլն։ Լրացում դառնում են և՛ անձ, և՛ իր ցույց տվող բառերը։

Օրինակներ՝ Շանս սպանելոյ մի՛ քարինս արձակեսցես (ԳՆՄՈ, ԿԶ)։ Փափագեալ բաղձայր հայրենի հոգևոր ժառանգութեանն (ՄԿՊԱԱ, 1, ԺԴ)։ Յորժամ զգան ջերմութեանն (ԹԱՊՏԱ, 3, Ը)։ Ըղձան նմա տեսլեամբ (Էկղ., Ա)։ Կարօտէր Աստուծոյ արուեստգիտութեանն (Եզն., 1, Ա)։ Յարձակին քեզ սպառազէնք ճերմակ երիվարօք (Սեբ., Գ)։

Յափշտակութեան մի՛ ցանկայք (Սաղ., ԿԱ)։ Եւ ոչ իմիք կարօտանայ, թէ առնլոյ ինչ յումեքէ կամ յիմեքէ ակն ունիցի (Եզն., 3, ԺԶ)։ Քեզ միայն, խնամակալ, պատճառ բարի բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տարաժամամբ բաղկացս (ԳՆՄՈ, ՂԳ)։

Բայի լրացումը վերաբերության տրականով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է խոսքը, որի մասին մի բան է հաղորդվում։ Լրացյալ դառնում են սահմանափակ թվով բայեր, ինչպես՝ անգիտանալ, անյուսանալ, բարկանալ, զայրանալ, ցասնուլ, խելամտել, խորհել, խնամ տանել, հոգ տանել, հոգանալ, վկայել, տեղեկանալ և այլն։ Լրացում դառնում են տարբեր իմաստ ունեցող բառեր։

Օրինակներ՝ Ո՞րչափ այնմ արուեստի ոք համարիցի անգիտանալ (Ագ., 851)։ Որք անյուսացեալ էին փրկութեան անձանց (ԹԱՊՏԱ, 4, Բ)։ Տէր բարկացաւ ինձ (Բ, Օրէնք, Դ)։ Զայրացեալք նմա ... ծաղր եդուք առնել անօրինացն (ՂՓՊՀ, ԺԴ)։ Խորհէր Կաւատ արքայ շինութեան աշխարհի (Սեբ., ԻԸ)։ Հողոյս անպատուելոյ մի՛ իբր անբարհաւաճի ուժգինս մռնչեսցես (ԳՆՄՈ, ԿԶ)։ Խնամ տարեալ հոգացայ ամենայնի (Մխ, 1, Թ)։ Պատուէր ընկալայ ի քէն՝ հաչութեան և ամենայն իմաստութեան հոգ տանել (Ն. տ.)։ Վկայեցին արքն ապստամբութեան (Գ, Թագ., ԻԱ)։ Թագաւորացն առաջնոց ... չհոգացան իրացս (ՂՓՊՀ, ԻԲ)։ Ոչ հրամայեն մեզ օրէնքն մեր ցասնուլ ումեք (Ն. տ., ԽԴ)։ Սուրբն և բնաւ իսկ յանձն ոչ առնոյր այսպիսի բանից տալ վկայութիւն իշխանացն Հայոց (Ն. տ., ԺԴ)։ Բերան անխրատից տեղեկանայ չարեաց (Առակ., ԺԵ)։ Նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն (ԿՎՄ, 12)։

Բայի լրացումը սահմանափակման տրականով.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի մեջ սահմանափակվում է որևէ գործողություն կամ հատկանիշ։ Այսպիսի լրացում ստանում են քիչ բայեր, որոնցից կարելի է նշել զգուշանալ, զօրել, հանդարտել, հաւանել, հմտանալ, միտ դնել, ձեռնպահ լինել, պարապել։ Սրանց մեջ հըմտանալ և տկարանալ ածականական ծագում ունեն, և լրացումը բացատրվում է իբրև ածականին բնորոշ։ Լրացում դառնում են տարբեր իմաստ ունեցող բառեր։

Օրինակներ՝ Զգոյշ լեր դու ամենայնի (Ելք, ԼԴ)։ Որ զգուշանայ ճանապարհաց Տեառն՝ պահէ զանձն իւր (Առակ., ԺԶ)։ Մի՛ ի վերագրելոցդ բաւականապէս զօրէ սատակման (ԳՆՄՈ, ԽԵ)։ Ոչ հանդարտէին հրամանին (Եբր., ԺԲ)։ Պատուիրելոցն Աստուծոյ ի գիրս ոչ հա-

*ւանիս (Ղև., Պատմ., ԺԴ)։ Ոչ կամաւ յօժարեցաք հմտանալ այսմ* գործոյ *(ՄԿՊԱԱ, 2, Լ)։ Միտ դիր* ընթերցուածոց *(Ա, Տիմոթ., Դ)։ Դադարեցին զօրք թագաւորին ... ձեռնպահ լինել* եկեղեցեաց *(Եղ., 6)։* Ոխտիցն *պարապիցէք (Ա, Կորն., Է)։ Առաւել* օգտակար *իսկ է ... միայն* աստուածպաշտութեան *պարապել (Ագ., 853)։ Կարացն* տեսլեանն՝ *որում ցանկայր (Բուզ., 4, ԺԵ)։*

**Բայի լրացումը համապատասխանության տրականով.—** *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին համապատասխանում է մի բան։ Սա հիմնականում ածականական ծագմամբ բայերի լրացում է լինում, ինչպես՝* արժանաւորել, հաւասարել, յարմարեցուցանել, նմանել, նմանեցուցանել, վայելել, պատշաճել *և այլն։ Լրացում դառնում են տարբեր իմաստի բառերը։*

Օրինակներ՝ *Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն, նոյնպիսում* շնորհի *արժանաւորեալ ի Նինոսէ (Մխ, 1, ԺԵ)։ Հաւասարեաց* անասնոց *անբանից և նմանեաց* նոցա *(Սաղմ., ԽԸ)։ Ի Տեառնէ պատշաճի կին առն (Առակ., ԺԹ)։ Մի՛ լինիցիս* նմանօղ նմա *(Ն. տ., ԻՁ)։ Բազմօրինակ են սովաւորութեամբ* տեսմունք *յարմարեցեալք նախ* նիւթոյն, *ապա* զօրութեանն *(ԳՆՄՈ, ՂԳ)։ Զի՞արդ արդեւք պչուք երջանկին* ինձ *դատապարտելոյս նմանեցուցից (Ն. տ., ԿԱ)։* Քեզ *վայելեն փառք յաւիտեան (Ագ., 92)։*

**Բայի լրացումը փոխարինության տրականով.—** *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի փոխարեն կատարվում է գործողությունը։ Այսպիսի լրացում պահանջում են սահմանափակ թվով բայեր, ինչպես՝* գնել, վաճառել, վրէժխնդիր լինել, ստանալ, տալ *և այլն։ Լրացում դառնում են հիմնականում իր ցույց տվող գոյականները։*

Օրինակներ՝ *Զջուր մեր* գնոյ *արբաք (Ողբ., Ե)։ Եւ չէք անձանց տէր։ Քանզի* գնոց *գնեցայք (Ա, Կորնթ., Զ)։ Ա՞յնչափ* գնոց *զգեօղն վաճառեցէք (Գործ., Ե)։ Զոր ստացաւ Աբրահամ* գնոց *արծաթոյ յորդւոցն Եմովրայ ի Սիւքեմ (Ն. տ., Է)։* Արծաթոյ *վաճառեցին զեղբարսն (Բ, Մակ., Ժ)։ Պարտիմք վրէժխնդիր լինել մօտակայ* նշմարտութեանն *(Եղ., 5)։ Ետուն զցանկալի ցանկալի ինչս իւրեանց՝* կերակրոց *(Ողբ., Ա)։ Այնպիսին* պատառոյ *հացի վաճառէ զմարդ (Առակ., ԻԸ)։*

**Բայի լրացումը փոխադարձ կապի տրականով.—** *Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որի հետ ենթական փոխադարձ կապի մեջ է։ Այսպիսի լրացում ստանում են փոխադարձ գործողություն ցույց տվող սահմանափակ թվով բայեր, ինչպես՝* ճաղորդել, միաբանել, ուղեկցել,

ցաւել, դաշնաւոր լինել, գործակից լինել և այլն։ Լրացում դառնում են և՛ անձ, և՛ իր ցույց տվող գոյականները։

Օրինակներ՝ Մի ոք օտար հաղորդեսցի քեզ (Առակ., Ե)։ Վշտաց սրբոցն հաղորդակից լինել (Իմաս., ԺԸ)։ Տէր, յընկերել ինձ փութա (Սաղ., ԿԹ)։ Դաշնաւոր լինի նոցա (Ա, Մակ., Ը)։ Գործակից լիցուք ճշմարտութեան (Գ, Յովհ)։ Նա խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու, Վրաց միաբանելով (Մխ, 3, ԻԷ)։ Ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց առելեացն քոց (ԳՆՄՈ, ԺԻ)։ Ուղեկցէ ապրեցելոցն ի տաժանաւոր աղխսարկութեանցն (Ն. տ., ՀԵ)։ Այսմ կանոնի միաբան լինին (Գաղ., Ձ)։

**Բայի լրացումը միջնորդական խնդրի տրականով.**— Սա ցույց է տալիս ենթակայի կողմից գործողության մեջ ներքաշված առարկա։ Այսպիսի լրացում ստանում են սկզբնատիպ ներգործականից կազմված բոլոր պատճառական բայերը, ինչպես՝ արբուցանել, զգեցուցանել, ծանուցանել, ուսուցանել և այլն։ Սովորաբար լրացում դառնում են անձ ցույց տվող բառերը։

Օրինակներ՝ Անճնազանդիցն արբուցին զկործանումն (Ագ., 507)։ Ուսուցանէ մարդոյ գգիտութիւն (Սաղ., ՂԳ)։ Ծանուցէք ժողովրդոց զգործս նորա (Ա, Մնաց., ԺԶ)։ Զգեցուսցես զայն Անարոնի եղբօր քում (Ելք, ԻԸ)։ Եթէ պասքելոյս արբուցանիցես, աղբիւր ես (ԳՆՄՈ, ՀԶ)։

Պատահում են դեպքեր, երբ պատճառականի նույնիմաստ լրացումը տրականի փոխարեն հայցականով է դրվում։

Օրինակներ՝ Որք ուսուցանէին զբազմութիւնն (Ա, Եզր., Թ)։ Ուսուցանիցէ զնեթանոսս (Յովհ., Ը)։ Զգեցոյց զնոսա (Ծնն., Գ)։ Զամենայն զմերկսն զգեցուցին (Բ, Մնաց., Ի)։ Արբոյց զխաշինս (Ելք, Բ)։

**Բայի լրացումը ներգործող խնդրի տրականով.**— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից գործողությունն անցնում է ենթակային։ Սա գրաբարում քիչ է հանդիպում։ Եղած սակավաթիվ օրինակներից կարելի է նշել հետևյալները։

Մեր կեանքս քեզ նուաճեսցին (Ագ., 39)։ Ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ... կեցից Քրիստոսի որդւոյ քոյ և տեառն (ԳՆՄՈ, 2)։ Արարիչն ամենեցուն աներևոյթ է ի մարմնաւոր աչաց, այլ մտաց իմանի զօրութիւն նորա (Եզ., 7)։ Սպարապետին Աշոտոյ անդուլ և անդադար մշտնջենաւոր միամտութիւն ծառայութեանն ոչ յիշեցան չար բռնադատին Յուսփայ (ՅԴՊՀ, 291)։ Ծանիցի Տէր Եգիպտացւոցն, և ծանիցեն Եգիպտացիքն զՏէր (Եսայի, ԺԹ)։

Բայի լրացումը ուղիղ խնդրի տրականով.— Գրաբարում յաղթել, տիրել բայերն ուղիղ խնդիր ստանում էին տրականով։

Օրինակներ՝ Յաղթեցաք ամենայն քաղաքացն նորա (Բ, Օրէնք, Բ)։ Տիրեսցէ նոցա ձեռն իմ (Ելք, ԺԵ)։ Որ տիրեն ծովու և ցամաքի (Ա, Եզր., Դ)։

Տիրել բայը ստանում է նաև ի վերայ+սեռական կառույցով լրացում, որն իմաստով նույնն է ուղիղ խնդրի հետ։

Օրինակներ՝ Որ տիրէ ամենայն երկրիս (Յուդիթ, ԺԱ)։ Տիրեսցէ ի վերայ ամենայն երկրի (Ա, Մակ., Ը)։

Փ. Բուզանդի մի օրինակում տրականը ուղիղ խնդիր է դարձել չարչարել բայի մոտ. զհետ նորա նորին նմանին չարչարեցին վասն նոյն նորին իրաց (Բուզ., 3, ԺԴ)։

## Բայի լրացումները պարագայական տրականով

Ինչպես նշվեց վերևում, գրաբարում տրականը քիչ է գործածվում պարագայական իմաստներով։ Վերջիններիս դրսևորման հիմնական միջոցները նախդրավոր և նախադրությամբ կառույցներն են։ Սակայն, այնուամենայնիվ, նպատակի, տեղի, երբեմն և ժամանակի, վիճակի իմաստները որոշ բայերի մոտ կարող են արտահայտվել տրականով՝ նախդրավոր և նախադրությամբ կառույցներին զուգահեռ, որոնք այդ իմաստների արտահայտման հիմնական միջոցն են։ Այսպես, նպատակի իմաստ կարող է արտահայտվել նաև առնել, կազմել, պատրաստել, տալ բայերի տրականով լրացմամբ։

Օրինակներ՝ Այլ, ասեն, փառաց առնէր զչաշտն (Եզն., 2, Գ)։ Կազմէր յարձակմանն (ՂՓՊՀ, ՁԳ)։ Ազատեալ ի հիւծմանց ախտից՝ առողջութեանն պատրաստեցայց (ԳՆՄՈ, ԽԸ)։ Եւ զՍեպփովրա դուստր իւր Մովսիսի կնութեան (Ելք, Բ)։ Կազմեալ պատրաստեալ կային գործոյ ճակատուն (Բուզ., 5, Դ)։

Ժամանել, վառնել, ցրուել, դնել, թափառել, շրջել և այլ բայերի տրականով լրացումը կարող է տեղի իմաստ արտահայտել։

Օրինակներ՝ Ժամանեցին ինձ աւուրք նեղութեան (Բ, Թագ., ԻԲ)։ Ջայլմն ի նոցանէ դաշտացն և անտառախիտ մայրեացն ցրուեալս վատնէին (ՂՓՊՀ, ԼԵ)։ Ձեռք երկրագործաց և արուեստականացն լքեալ յիւրաքանչիւր վաստակոցն՝ եդեալ ծնկաց և ծնօտից՝ լային դառնապէս (ԹԱՊՏԱ, 3, ԻԹ)։ Մօրից և եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց (Մխ, 2, ԻԲ)։ Մտեալ պառակէին մայրեացն (Բուզ., 4, ԺԴ)։

Որոշ բայերի մոտ տրականը կարող է մեկնաբանվել և՛ տեղի, և՛ հանգման իմաստներով։

Օրինակներ՝ Եկին միմեանց (ՅՄՊՏ, 327 ա)։ Եկին իրճրաց (Ն.տ., 281բ)։ Այց արար Հայոց աշխարհիս (Ագ., 13)։

Տրականը խիստ հազվադեպ կարող է մեկնաբանվել նաև ժամանակի կամ վիճակի իմաստներով։

Օրինակներ՝ Նոքա ցրտոյն ոչ կարէին ելանել և տալ պատերազմ ընդ նոսա (Սեբ., Լէ)։ Ես մահացայ կենացն և կենդանացայ կորստեանն (ԳՆՄՈ, ԾԵ)։

Այս դեպքում տրականը և մակբայը կարող են նմանվել, և դժվար է տվյալ ձևը մեկնաբանել իբրև գոյականի տրական հոլովաձև։

Օրինակներ՝ Ի տուէ կարդացի և գիշերի (Սաղ., Ձէ)։ Եկին առ կինն գիշերի (Ա, Թագ., ԻԸ)։

Գնալ բայի մոտ ճայլելոյ տրականը կարող է մեկնաբանվել ձևի իմաստով։ Օրինակ՝ Սա և կօշկօք ճայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց (Բուզ., 3, ԺԴ)։

Երբեմն էլ տրականը կարող է ունենալ վերաբերության կամ պատճառի իմաստ։ Օրինակ՝ Երկիր առ հասարակ լան և վայեն զրկութեանցն զլափշտակութեանցն (Բուզ., 4, ԺԳ)։

Շնորհակալ գտանել բայի մոտ տրականը կարող է մեկնաբանվել և՛ սահմանափակման, և՛ պատճառի իմաստներով։ Օրինակ՝ Միայն թէ շնորհակալ ոք մերոցս գտանիցի աշխատութեանցն (Մխ, 1, Գ)։

Տրական հոլովի իմաստի անորոշության մասին.— Գրաբարում որոշ բայերի լրացման դերում տրականը չունի իմաստային որոշակիություն։ Բանն այն է, որ հետագայում այդպիսի հոլովառությունը վերացել է, և լրացումը հնարավոր չէ մեկնաբանել։ Զգալ բայը վերածվել է ներգործական սեռի, և նրա մոտ գրաբարյան տրականով խնդիրը որևէ իմաստով չի մեկնաբանվում։

Այսպիսին է տրականը հետևյալ օրինակներում։

Նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն (Բուզ., 4, ԺԵ)։ Ոչ զգայի ժամոյն դաւոյն (ՂՓԹ)։ Գիտեմք, որ զնդի խաղայք (ՅՄՊՏ, 307ա)։ Իբրև անձին զգաց (Բ, Մակ., Գ)։ Մասնաւորեսցին ամենեքեան տեսակի սքանչելեացն Աստուծոյ (ՄԿՊԱԱ, ԻԹ)։ Որ ոչ աչառի երեսաց, և ոչ առնու կաշառ(Բ, Օրէնք, Ժ)։ Ակն առի երեսաց քոց (Ա, Թագ., ԻԵ)։ Ոչ ինչ տկարանայ ճեզ (Յովբ., Ժ)։

## Բ. Բայի լրացումները հայցական հոլովով

Հայցականը ևս բայի լրացում դառնում է գերազանցապես խնդրային նշանակությամբ։ Պարագայական իմաստները հայցականով քիչ էին արտահայտվում (ժամանակի, ձևի, չափի, նպատակի), սովորաբար այդ նշանակությունը դրսևորվում էր նախդրավոր և նախադրությամբ կառույցներով։

Գրաբարում հայցականը երբեմն համատեղում էր խնդրային և պարագայական իմաստներ։ Այսպես, երթալ զճանապարհ բառակապակցության մեջ զճանապարհ հայցականը և՛ ուղիղ խնդիր, և՛ պարագա է։ Զճանապարհս ճշմարտութեան գնացի (Տօբիթ, Ա)։ Գայր զճանապարհս իւր (Բուզ., 6, Ը)։ Այսպես նաև ապաշխարել բայի լրացումն ունի ուղիղ խնդրի և պարագայի իմաստ ... Եւ նոցա ժամանակ ապաշխարել զպոռնկութիւնն իւրեանց (Յայտն., Բ)։

Պարագայական իմաստն առավել որոշակի է այն բառակապակցություններում, որտեղ լրացումը լրացյալի բային արմատակից է, ինչպես՝ մկրտել մկրտութիւն, ուխտել ուխտ, անգիտանալ անգիտութիւն, դատել դատաստան, շաղկապել կապակցութիւն, ագահել ագահութիւն և այլն։

Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն (Գործ., ԺԹ)։ Անգիտացեալ զօրուն Յունաց անգիտութիւն մեծ՝ զատուցանէին զաղխս բանակին իւրեանց թագաւորն ի նոցանէն (Ղև., Պատմ. Ա)։ Դատեսցի զդատաստանս իմ (Ա, Թագ., ԻԴ)։ Քանզի էին երեքին սոքա անքակ անխզելի առ միմեանս, զմիաբանական կապակցութիւն շաղկապեալ (ԹԱՊՏԱ, 3, ԻԲ)։ Որ ագահէ զագահութիւն չար տան իւրոյ (Ամբակ., Բ)։ Զենէք զենումն անօրէնութեան (Մխ, 2, ՂԲ)։

Իսկ եթե բայը չեզոք սեռի է, ապա արմատակից գոյականը ուղիղ խնդրի իմաստին զուգահեռ նաև միջոցի անուղղակի խնդրի և պարագայի իմաստներ է արտահայտում։

Օրինակներ՝ Երկեան երկիւղ մեծ (Մարկ., Դ)։ Զբարութ պատերազմ պատերազմեցայ (Բ, Տիմոթ., Դ)։ Զարմացայ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ (Յայտն., ԺԷ)։ Կորնչին գյաւիտենական կորուստ (ՂՓՊՀ, Ի)։ Զանուանի և զլաւ մահ մեռանիմք քրիստոնէութեամբ (Ն. տ., ՀԵ)։ Ամաչեցէք զամօթ մեծ (Եսայի, ԽԲ)։ Յակնարկել արարչին մերոյ Աստուծոյ զփայլատակելն փայլատակեն (ՄԿՊԱԱ, 2, Խ)։ Մի՛ ծառայեսցի քեզ զծառայութիւն ստրկի (Ղևտ., ԻԵ)։ Ինքեանք առհա-

սարակ զմի զինուորութիւն զինուորեալ և վառեալ ի զէնս և ի զարդս ելանէին ի ստորոտ ամուր լերանց (ՅԴՊՀ, 290)։ Զթաղումն իշոյ թաղեսցի (Երեմ., ԻԲ)։ Ննջեցին զքունս իւրեանց (Սաղ., ՀԵ)։ Մեղաւ ժողովուրդն այն մեղս անհնարինս (Ելք, ԼԲ)։

Այս դեպքում հնարավոր է, որ լրացումն ու լրացյալը արմատակից չլինեն։

Օրինակներ՝ խնդացին յոյժ ուրախութիւն մեծ (Մատթ., Բ)։ Նորա գծագրալից երկիւղն ախտանային (Իմաստ., ԺԷ)։ Բազումք կորեան զանմահն մահ (ՄԿՊԱԱ, 3, ԻԱ)։

Հայցականը մի շարք բայերի մոտ լրացում լինելիս համատեղում է ուղիղ և անուղղակի խնդրային իմաստներ։ Բանն այն է, որ այդ բայերը այլ դեպքերում ստանում են անուղղակի խնդիր՝ ուրիշ ձևով արտահայտված, որը իմաստով չի տարբերվում հայցականից։ Այսպես, ուսուցանել բայը սովորաբար ստանում է տրականով միջնորդական խնդիր՝ ուսուցանել նմա, սակայն կարող է ստանալ նաև հայցականով ուղիղ խնդիր՝ ուսուցանել զգիտութիւն։ Երբ այդ բայերի մոտ միայն մեկ խնդիր է լինում, ապա այն հայցականով դրվելով արտահայտում է և՛ ուղիղ, և՛ անուղղակի խնդրային իմաստներ։ Այսպես նաև այլ բայերի մոտ հայցականը կարող է արտահայտել ուղիղ և այլ կարգի անուղղակի խնդրային իմաստ, ինչպես՝ ամուսնանալ, արտաասուել, արժել, երանել, թշնամանել, ծովուել յանդիմանել, ողջունել, ուսուցանել, պարգևել, պարծել, չարակնել, օժանդակել և այլն։

Օրինակներ՝ Եսթեր է գետն, զոր ամուսնացաւ թագաւորն (Եսթ., Ժ)։ Ոչ արժէ աշխարհս բնաւ զնոսա (Բուզ., 6, ԺԶ)։ Խրատ քո ուսուցէ զիս (Սաղ., ԺԷ)։ Ողջունէր զնուրբսն (Ն. տ., ԽԲ)։ Ուսուցանես վարդապետս (ԳՆՄՈ, ԼԳ)։ Պարծէի զբարտոքն և զիրաւացին (Ն. տ., ԾԹ)։ Օժանդակեաց թագաւորս (Ն. տ.)։ Զդէոսկորոս և զՊետրոս թշնամանս դնէք (ՍՏՏՊ, 3, ԻԱ)։ Թշնամանեցեր զդա (ՂՓՊՀ, ԽԴ)։ Չարակնեաց զուրախանալն արքայի (Մխ, 3, ԻԳ)։ Ակամայ առատապէս պարգևէր զնոսա (Եղ., 1)։ Որ ոչ երբէք լռէր յարտասուելոյ զմոխրասիրացն զմոլորութիւնս (ՂՓՊՀ, ԿԳ)։ Յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս (Յայտն., Բ)։ Հովուեաց զնոսա (Ն. տ.)։ Վասն պանդխտութեանդ երանեմք զձեզ (ՅՄՊՏ, 247ա)։

Սրանց հետ կապված է ասացական բայերի խնդրառությունը անձ ցույց տվող բառերով։ Սովորաբար այս բայերը ունենում են վերաբերության խնդիր՝ արտահայտված զ+բացառական կամ վասն, յաղագս+սեռական կառույցներով։ Սակայն հաղվադեպ սրանք կարող

են ստանալ նաև անձ ցույց տվող բառերի հայցականով լրացում, որը համատեղում է ուղիղ և անուղղակի խնդրային իմաստներ։

Օրինակներ՝ Զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ (Եսայի, ԾԳ)։ Նա է Քրիստոսն Յիսուս զոր ես պատմեմ ձեզ (Գործ., ԺԷ)։ Ոմանք առ հեստութեան զՔրիստոս պատմեն (Փիլիպ., Ա, 17)։ Ես երթայց հարցանել զԱստուած (Թիւք, ԻԳ)։ Հարցանիցեն զիս թէ զի՞նչ է անուն (Ելք, Գ)։ Եհարց զնոսա (Ծնն., ԽԳ)։ Հարցցուք զՏէր նովաւ (Գ, Թագ., ԻԲ)։ Կարդաց զԱստուած Իսրայելի (Ծնն., ԼԳ, 20)։ Կարդաց զՏէր (Գ, Թագ., ԺԷ)։ Մի՛ բամբասէք զմիմեանս (Յակոբ, Դ)։ Բամբասէր ժողովուրդն զՄովսէս (Ելք, ԺԷ)։

Ներգործական սեռի բայերը սովորաբար ստանում են մեկ ուղիղ խնդիր։ Սակայն գրաբարում կան բազմաթիվ ներգործական բայեր, որոնք ունեն կրկնակի խնդրառություն (նկատի չունենք համադաս բազմակի անդամները)։ Կրկնակի ուղիղ խնդիրներից յուրաքանչյուրը առանձին է հարաբերվում բային։ Սովորաբար դրանցից մեկը որոշյալ, մյուսը անորոշ առումով է դրվում, ինչպես՝ Համարիցիս զիս քեզ ոսոխ (Յովբ., ԺԳ)։ Կրկնակի խնդրառություն ունեցող բայերից են՝ ածել, անուանել, առնել, ասել, արկանել, արձակել, գիտել, գտանել, գրել, դնել, թողուլ, իմանալ, խոստովանել, կարգել, կարդալ, կարծել, կոչել, համարել, հրամայել, ձեռնադրել, ճանաչել, շինել, ունել, պահել, պատրաստել, ստեղծանել, վարկանել, տալ և այլն։

Օրինակներ՝ Արարի զհանդերձս իմ քուրձ (Սաղ., ԿԸ)։ Արկին զգիակունս ծառայից քոց գէշ թռչնոց երկնից (Ն. տ., ՀԸ)։ Գիտէր զնա այր արդար և սուրբ (Մարկ., Զ)։ Արար զմեզ թագաւորս և քահանայս (Յայտն., Ա)։ Որ ասէր զինքն մարգարէ (Յայտն., Բ)։ Երկրորդ ասցուած և արարիչ դնեն զմիտս և երրորդ զշունչ (Եզն., 3, Գ)։ Ես ճողոպրեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց, մարդ զքեզ վարկանելով (Մխ, 3, ԿԵ)։ Զմերոցի տեղիս զգժնեայ վայրսն հրամայէին նոցա (Եղ., 2)։ Սիրելիս և բարեկամս կարդայի զնոսա (Ն. տ.)։ Քարոզք էիք արարչական զօրութեանն, արդ զտարերս աստուա՞ծս խոստովանիք (Ն. տ.)։ Հայր մեր զսուրբ աւետարանն գիտեմք, և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ (Ն. տ., 3)։ Գրեա զայրդ զայդ այր տարաժիր (Երեմ., ԻԲ)։ Ընդէ՞ր եդիր զիս քեզ ոսոխ (Յովբ., Է)։ Զխէթս ի բաց ընկենլի մի՛ նիւթ գեհենին պահեսցես (ԳՆՄՈ, ԿԶ)։ Զեռնադրեցին հայր վանացն զնպիփան (ՅՄՊՏ, 323ա)։ Ինքն զայլ զօրսն բռազմն կարգեաց (Ն.տ., 327 ա)։ Զլուսաւորացն զգնացս՝ եդ անուանեն գիրք (Եզն., 2, ԻԵ)։ Պատրաստեաց զլեզուն իւր սուսեր սատակիչ (Մխ, 3,

ԿԴ)։ Զպատիւ քո և զփառս՝ անարգանս համարիմ (ՂՓՊՀ, ԿԴ)։ Երկբայելի մտօք խաբէութիւն զիրսն կարծեցաք (ՄԿՊԱՍ., 2, Լ)։

Կրկնակի հայցական են պահանջում նաև պատճառական մի շարք բայեր, ինչպես՝ երևեցուցանել, կացուցանել, կառուցանել, մատուցանել, նստուցանել և այլն։

Օրինակներ՝ Թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալսն ի Քրիստոս (Եղ., 1)։ Զվահրամ նստուցին թագաւոր իւրեանց (Ն. տ.)։

Երբեմն երկու ուղիղ խնդիրներն էլ կարող են որոշյալ առումով լինել։

Օրինակներ՝ Ապա եթէ զպատճառն ևս կամիցին խնդրել, զնախանձն որ առ մարդն եղև իմասցին զպատճառն (Եզն., 1, Ա)։ Զմարդ ճանաչէք զլաւն և զանպիտան (ՂՓՊՀ, ՀԵ)։

Ավելի շատ են երկու խնդրի անորոշ առումով գործածվելու դեպքերը։

Օրինակներ՝ Եւ զօր թողոյր ի վերայ պահապան նմա (Ա, Մակ., Դ)։ Բազում տունս մոխրանոցս շինեալ յաշխարհին Սինեաց ... դառն մահուամբ սատակեցաւ չարաչար (ՂՓՊՀ, ԽՁ)։ Գայիսոն նորոգ կառուցեր վկայ ահարկու կործանման սատանայի (ԳՆՄՌ, ՂԲ)։ Վկայս կացուցես ինձ արս հաւատարիմս (Եսայի, Ը)։ Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ (Սեբ., Ա)։

Երկրորդ ուղիղ խնդիրը, որ համատեղում է պարագայական իմաստ (վիճակի), կարող է լինել գոյականաբար գործածված ածական։

Օրինակներ՝ Ըստ բարձրութեան քում մեծ արասցես դու զորդիս մարդկան (Սաղ., ԺԱ)։ Սակաւաւորս արարից զնոսա (Եզեկ., ԻԹ)։ Մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն (Յակոբ., Գ)։ Գտէր զնոսա սուտս (Յայտն., Բ)։ Բայց մեզ մի՛ լիցի այնպիսի ինչ ասել, այլ զշարիսն ոչ անձնաւորս կարծել, այլ կամածինս (Եզ., 1, Ա)։ Պահէր զշունչս մարդկան կենդանիս (Ագ., 64)։ Զայլ աստուածսն կոչեցեր անշունչս և անմռունչս (Ն. տ., 68)։ Ոչ թողու զձեզ որբս (Եզ., 7)։ Տեսանեմք զքեզ կամաւոր բարւոյ և սիրիչ (ՂՓՊՀ, ՂԲ)։

Երբեմն գոյականաբար գործածված ածականով է արտահայտվում նաև առաջին ուղիղ խնդիրը։ Օրինակ՝ Զծերս նոցա՝ իմաստունս արասցէ (Սաղ., ՃԴ)։

Վիճակի պարագայական իմաստ պարունակող երկրորդ ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել նաև դերբայներով։

Օրինակներ՝ Դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն (Հռոմ., Ա)։ Երևեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պաճող և խորգահանդերձս (Բուզ., 6, Ը)։ Մի՛ կարծիցես զմեզ ամաչեցեալս (Ղև., Պատմ., ԺԴ)։

Մի շարք բայերի մոտ երկրորդ ուղիղ խնդիրը, որը նույնպես նպատակի պարագայական երանգ ունի, արտահայտվում է նախդրավոր հայցականով, ընդ որում գործածվում են առ, ի նախդիրները։ Այդ բայերից են առնել, համարել, ունել, օծանել և այլն։

Օրինակներ՝ Զորդի աղախնոյդ արարից յազգ մեծ (Ծնն., ԻԱ)։ Կալան զնոսա ի ծառայս և յաղախնեայս (Երեմ., ԼԴ)։ Զանձինս առ իմաստունս ունէին (Հռոմ., Ա)։ Առ ոչինչ համարեալ զբազմութիւն զօրաց նորա՝ միայն ակնածէին ի Մուրացենէն Արգամայ (Մխ, 2, ԽԶ)։ Օծցէ զնա անդ Սադովք քահանայ և Նաթան մարգարէ ի թագաւոր ի վերայ Իսրայելի (Գ, Թագ., Ա)։

### Բայի լրացումները խնդրային հայցականով

Գրաբարում հայցականը գերազանցապես խնդրային իմաստների դրսևորմանն է ծառայում։ Հայցականով արտահայտվում է ուղիղ խնդիրը, որը դառնում էր ներգործական սեռի բայերի լրացում։ Ընդհանրապես, այս կամ այն բայի ներգործականության ցուցիչը հայցական խնդրառությունն է։ Երբ այս կամ այն բայը ստանում է հայցականով խնդիր, ապա դառնում է ներգործական սեռի և, ընդհակառակն, կորցնելով հայցականով խնդիր ստանալու հատկությունը՝ վերածվում է չեզոքի։

Գրաբարի բայերի խնդրառության ուսումնասիրությունը երևան է հանում մի երևույթ։ Այդ այն է, որ մի շարք բայեր ներգործական էին միայն գրաբարում։ Ընդ որում այդ բայերը երկու խմբի են։ Մի քանիսը իրենց բառական արժեքը պահպանել են հետագայում՝ վերածվելով չեզոքի, իսկ մյուսները առհասարակ դուրս են եկել գործածությունից։ Այսպես, աղաչել, աղմկել, աշակերտել, ապաշխարել, բղխել, երթալ, զգուել, խոռամանկել, ծագել, կանգնել, կատակել, կոծել, հոսել, հովուել, հողել, մարգարէանալ, մարտնչել, յածախել, յանդիմանել, յուսալ, յօժարել, ննջել, պատերազմել, սատակել, վախճանել, տագնապել, տռնչել և այլ բայեր պահպանվել են աշխարհաբարում, սակայն կորցրել են ներգործականությունը։ Սրանք երկու տեսակ են։ Մի շարք բայեր առհասարակ կորցրել են խնդրառությունը, ինչպես՝ աղմկել, արտասուել, բղխել, երթալ, խոռամանկել, ծագել, կանգնել,

կոծել, ճոսել, ճորդել, մարգարէանալ, մարտնչել, յաճախել, յուսալ, ննջել, պատերազմել, սատակել, վախճանել, տագնապել և այլն։ Այս բայերի մեծ մասը գրաբարում խնդիր էր ստանում ոչ միայն հայցականով, այլև այլ ձևերով, մինչդեռ հետագայում դրանք վերածվել են չեզոքի՝ կորցնելով խնդրառությունը։ Բերենք դրանց խնդիրների օրինակներ։

Մի՛ լիցի ինձ... առաջի Ամենակալին աղմկել զիրաւունս (Յովբ. ԼԴ)։ Բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ (Ծնն., Ա)։ Բղխեսցեն քեզ ջուրք քո (Առակ., Ե)։ Զայն ուռան դղրդեսցէ զունկն (Սիրաք, ԼԸ)։ Երթիջիք զճանապարհ ձեր (Ծնն., ԺԸ)։ Ծագեա զողորմութիւնս քո (Սաղ., ԼԵ)։ Խորամանկեցին զգիտութիւն (Ն. տ., ՁԲ)։ Ծագեսցէ ձեզ երկիւղածաց (Մաղաք., Դ)։ Ծագեալ զինև լոյս (Գործ., ԻԶ)։ Կանգնեսցեն զխորանն (Թիւք, Ժ)։ Մի՛ կանգնիցէք ձեզ արձան (Ղևտ., ԻԶ)։ Զայրդ զայդ մի՛ կոծեսցեն (Երեմ., ԻԲ)։ Կոծեսցին յերեսս իւրեանց (Եզեկ., Զ)։ Կոծէր զանձն իւր քարամբք (Մարկ., Ե)։ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան (Մխ, 2, ԾԳ)։ Հոսեցից զճող նորա ի նմանէ (Եզեկ., ԻԶ)։ Հորդեցէք զշաւիղս (Եսայի, ԿԲ)։ Ոչ մարգարէանայ նա ինձ բարի (Գ, Թագ., ԻԲ)։ Որոց մարգարէացարն ստութիւն (Երեմ., Ի)։ Դու մարգարէասցիս ի վերայ նոցա զամենայն զպատգամս զայսոսիկ (Ն. տ., ԻԵ). Մարգարէացաւ զքաղաքէս (Ն. տ., ԻԶ)։ Մարտեալ այր մի ընդ նմա ((Ծնն., ԼԲ)։ Մարտիր զպատերազմ մեր (Ա, Մակ., ԺԳ)։ Յաճախեցից զնշանս իմ (Ելք, Է)։ Համբաւն ի դուրս յաճախէր (Բ, Մակ., Դ)։ Յաճախեցեր յանօրէնութիւնս (Եզեկ., ԻԲ)։ Յորս յուսացեալ էին ի նոսա (Բ, Օրէնք, ԼԲ)։ Յուսա առ Աստուած (Սաղ., ԽԱ)։ Ննջեցին զքունս իւրեանց (Ն. տ., ՀԵ)։ Ի տրտմութիւնս ննջեսջիք (Եսայի, Ծ)։ Ննջեսցուք ընդ նմա (Ծնն., ԺԹ)։ Մնացեր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառաւիղեցի (ԳՆՄՈ, Ե)։ Պատերազմեա զպատերազմունս Տեառն (Ա, Թագ., ԺԸ)։ Պատերազմեցան ընդ նոսա (Ն. տ., Դ)։ Սատակեցից զձեզ սրով (Ղևտ., ԻԶ)։ Սատակեցից ի քէն զանիրաւն (Եզեկ., ԻԱ)։ Վախճանեսցեն զճունձս (Հռութ, Բ)։ Տագնապէին զնոսա (Բ, Մակ., Զ)։

Երկրորդ տեսակին պատկանում են այն բայերը, որոնք, ներգործականից վերածվելով չեզոքի, այնուամենայնիվ ունեն խնդրառություն։ Այդ բայերից են՝ աղաչել, աշակերտել, ապաշխարել, զգուել, մերկանալ, յանդիմանել, յօժարել. և այլն։ Սրանք գրաբարում խնդիր էին ստանում և՛ հայցականով, և՛ այլ ձևերով, մինչդեռ արդի հայերենում կարող են խնդիր ստանալ միայն այլ ձևերով։

խնդրառության նեղացում կրած բայերի մեջ առանձնակի տեղ ունեն այն բայերը, որոնք գրաբարում հայցականով ուղիղ խնդիր էին ստանում՝ անկախ լրացման բառային իմաստի յուրահատկությունից։ Այսպես, ասացական բայերը գրաբարում ուղիղ խնդիր էին ստանում նաև անձ ցույց տվող բառերի հայցականով (տե՛ս վերևում), մինչդեռ աշխարհաբարում դրանք կորցրին այդ խնդրառությունը։

Մի շարք բայեր էլ, գրաբարում լինելով ներգործական սեռի, հետագայում դուրս են եկել գործածությունից, ինչպես՝ ազգաբանել, աշխարել, անգոսնել, անշնորհ առնել, անխայել, անժառանգել, ապախտ առնել, առակել, գօշել, դիել, դսրովել, երանել, ընդանել, ընկենուլ, զգենուլ, թիւրել, թշնամանել, խլխլել, խրամատել, ծննդաբանել, ծփել, կարկել, կոփել, համբառնալ, հարկանել, ճեպել, մերկել, յանձանձել, յաջողել, չարակնել, պատրել, պարտել, ջեռուցանել, ստգտանել, վատթարել, ստունգանել, տասանորդել և այլն։ Բերենք այս բայերի հայցականով խնդիրների օրինակներ։

Զորդի ի հօրէ ծննդաբանելով ազգաբանիցեմք զբովանդակն (Մխ, 1, Ա)։ Զթագաւորն աշխարէին (Ագ., 33)։ Ապախտ արարեր զվաստակսն (Ն. տ., 53)։ Անգոսնէին զնա իշխանքն (Ղուկ., ԻԳ)։ Առակեսցես զսիրտ քո ի հանճար (Առակ., Բ)։ Մի՛ գօշեր զմոռմոքեալս (ԳՆՄՈ, ԺԷ)։ Ընդէ՞ր դիեցի ես զստինս մօր իմոյ (Յովբ, Գ)։ Դսրովեսցեն զնա (Երեմ., ԾԱ)։ Երանեսցեն զիս կանայք (Ծնն., Լ)։ Զգեցաւ զհանդերձսն այրութեանն (Ն. տ., ԼԸ)։ Ընդանէր զմոգութիւնն (Եղ., 2)։ Ընկեցին զնա անդ սրով (Բ, Մնաց., ԼԲ)։ Թիւրեցին զմիտս ժողովրդեանն (Յեսու, ԺԴ)։ Զմեզ թշնամանես (Ղուկ., ԺԱ)։ Զմէ՞ խլխլեցէք զամպարըշտութիւն (Ովսէ, Ժ)։ Տէր խրամատեաց զթշնամիս իմ (Բ, Թագ., Ե)։ Որպէս ծփեաց զջուրս Կարմիր ծովուն (Բ, Օրէնք, ԺԱ)։ Կարկիցեն թագաւորք զբերանս իւրեանց (Եսայի, ԾԲ)։ Կոփէք զանաւագն (Ն.տ., ԾԸ)։ Յոր համբարձի զձեռն իմ (Թիւք, ԺԳ)։ Եհար զայլազգին (Ա, Թագ., ԺԹ)։ Դորին խրատդ անշնորհ առնել զդիսն իշխեաց (Ագ., 205)։ Անժառանգել զանձն իմ խորհեցան (Սաղ., ԼԴ)։ Ոչ անխայեաց ի մահուանէ զանձինս նոցա (Ն. տ., ՀԷ)։ Անդ ճեպէր զզօրսն (Ա, Մակ., Թ)։ Մերկեաց ի ձէնջ զզգեցեալ զխաւարն հեթանոսութեան (Ագ., 824)։ Ոչ յանձանձեցէք զնոսա (Երեմ., ԻԳ)։ Յաջորդեսցէ զճանապարհն քո (Ծնն., ԻԴ)։ Զինքն չարակնէ (Սիրաք, ԺԴ)։ Պատրեա զայր քո (Դատ., ԺԴ)։ Ընդէ՞ր արդեօք պարտեաց զմեզ Տէր (Ա, Թագ., Դ)։ Զայգիս ձեր տասանորդեսցէ (Ն.տ., Ը)։ Ջեռուցանէր զարքայ (Գ, Թագ., Ա)։ Սիրտք մեր զմեզ ոչ ստգտանիցեն (Ա, Յովհ., Գ)։ Յորում վատթարե-

ցին Քուշանչն զՇապուհ արքայն Պարսից (Բուզ., 5, Ե)։ Որ մին լսէ և զմիւսն ստունգանէ (Եզն., 4, ԺԵ)։ Գազանք եղկեսցեն զիս, և թռչունք խիթասցեն ընդ իս, հրեշտակք ապաշաւեսցեն զանձն իմ (ՅՄՊՏ, 286բ)։ Զքանս նոցա քամահէք (Ղև., Պատմ., ԺԴ)։

Հայցականով արտահայտված ուղիղ խնդիրը գրաբարում երեք տեսակ է՝ գործողության անմիջական առարկայի հայցական, ազդվող առարկայի հայցական, հետևանքի հայցական՝ ներքին ուղիղ խնդրի տարբերակով։

1. **Գործողության անմիջական առարկայի հայցական.**—Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը, լինելով գործողության օբյեկտ, չի ազդվում կամ ստեղծվում գործողության ընթացքում։ Այսպիսի խնդիր պահանջող բայերից են՝ **աղաչել, աշակերտել, ատել, դատել, դսրովել, ընդունել, թիւրել, թողուլ, խնդրել, խրատել, հանել, հայհոյել, հաւատալ, ճանաչել, մոռանալ, յաչառել, պայազատել, տագնապել, տարակուսել, տեսանել, օրհնել** և այլն։

Աղաչեաց Մանովէ **զՏէր** (Դատ., ԺԳ)։ Աշակերտեցէք զամենայն **հեթանոսս** (Ագ., 202)։ Որ ատիցեն **զհպարտութիւն** (Ելք, ԺԸ)։ Դատեսցեն **զժողովուրդն** դատաստան արդար (Բ, Օրէնք, ԺԶ)։ Դսրովեսցեն **զնա** (Երեմ., ԾԱ)։ Ընդունէին **զնուէրսն** ի նուիրաբերացն (Ելք, ԼԶ)։ **Զճանապարհս** խոնարհաց թիւրէին (Ամովս., Բ)։ Օրհնեաց **զնոսա** Աստուած (Ծնն., Ա)։ Թողցէ այր **զհայր** իւր (Ն. տ., Բ)։ **Զեղբարսն** իմ խնդրեմ (Ն. տ., ԼԷ)։ Լացցէ **զհայր** և **զմայր** իւր (Բ, Օրէնք, Ա)։ Որ խրատէ **զազինս** (Սաղ., ՂԴ)։ Հանեսցէ **զմիտս** նորա (Բ, Մակ., Դ)։ Հայհոյեաց **զամենասուրբ կոյսն** (Մխ, 3, ԿԱ)։ Եւ ի քեռայր իւր Միհրդատ հաւատայ **զՄաժակ** և **զհոգս Միջերկրեայց** (ՍՏՏՊ, 1, Ե)։ Որք յաչաղելով **զփրկութիւնն** զամենակատար՝ մի բնութիւն ասացին այսպէս ամբարշտաբար (Ն.տ., 3, ԻԱ)։ Ոչ ծանեայք **զխորս** Սատանայի (Յայտն., Բ)։ Մոռանաս **զաղքատութիւն** և **զնեղութիւնս** մեր (Սաղ., ԽԳ)։ Պայազատէր **զՀայաստանեայս** Վահան Մամիկոնեան (ՅԴՊՀ, 60)։ Տագնապէին **զնոսա** (Բ, Մակ., Ե)։ Յոյժ վտանգեալ տարակուսէ **զմեզ** (ՄԿՊԱԱ, 2, ԼԹ)։ Ետես թագաւորն **զայրն** (Ագ., 30)։

2. **Ազդվող առարկայի հայցական.**— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը ազդվում, փոփոխվում է գործողությունից։ Այսպիսի խնդիր պահանջում են ներազդող գործողություն ցույց տվող բազմաթիվ բայեր, ինչպես՝ **անուշել, այրել, բանալ, բաղխել, գելուլ, դղրդել, զարկանել, զոհել, լուսաւորել, ընկղմել, խոտորել, խզել, կակղել, կանգնել, կապտել, կոտորել, հանել, հարկանել, յաղթահարել,**

նահանջել, ներգործել, շրջել, պարտել, պատառել, սատակել, ստիպել, վախճանել, տուժել, փչել, օծանել և այլն։

Օրինակներ՝ Զամենայն ստացեալ ընդոտնես, զամենայն դաւինս անուշես (ԳՆՄՈ, ԻԸ)։ Այրեսցես զնշխարն հրով (Ելք, ԻԹ)։ Եբաց Նոյ զպատուհան տապանին (Ծնն., Ը)։ Բաղխեցին զմիմեանս պատերազմաւ (Սեբ., ԺԸ)։ Գելոյր զպարանոցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն (Ն.տ., Ժ)։ Համբաւն դղրդէր զքաղաքն ամենայն (ՍՏՏՊ, 3, ԻԹ)։ Զարկեալ բռամբ իւրով զճակատն, և անդրէն սատակէր զնա ի տեղւոջն (Սեբ., Ժ)։ Զոհեցին զուստերս (Սաղ., ԺԵ)։ Լուսաւորեսցեն զնա (Յայտն., ԻԱ)։ Հողմով սաստկութեան զՓարաւոն ընկղմեաց (ԳՆՄՈ, ՀԵ)։ Խոտորեա զոտն քո ի շաւղաց նոցա (Առակ., Ա)։ Խզեցի զկապանս լծոյն ձերոյն (Ղևտ., ԻԶ)։ Ո՞չ ապաքէն նախ կակղէ զերեսս (Եսայի, ԻԸ)։ Մի՛ կապտեր զփչումն ամենօրհնեալդ հոգւոյ, մի՛ լուծաներ զխնկեալ զկնիք արքունական պատկերիդ (ԳՆՄՈ, ՀԸ)։ Կոտորել զանասունս (Ագ., 523)։ Հանդերձաւորեաց քաւութիւնս (ԳՆՄՈ, ԼԴ)։ Զյառաջատեալն դարձեալ անդրէն ի յետս նահանջես ... զառաւել զարմանալիսն յայնժամ ներգործես (Ն. տ., ԾԳ)։ Եհան զիս Աստուած ի տանէ հօր (Ծնն., ԺԹ)։ Եհար զեգիպտացին (Ելք, Բ)։ Դու հաղթահարեսցես զնա (Յեսու, ԺԷ)։ Զնա անդէն ճմլեաց (Ա, Մակ., Զ)։ Որչափ ճնշէին զնոսա (Ելք, Ա)։ Շրջեաց զմիտս նորա (Բ, Մակ., Դ)։ Պատառեաց զհանդերձս իւր (Ծնն., ԼԷ)։ Պարտեաց զնոսա պատերազմ (Եսայի, ԽԲ)։ Սատակէ Տէր զքաղաքս (Ծնն., ԺԹ)։ Ստիպէին զնոսա գործավարք (Ելք, Ե)։ Օծցես զնոսա ոսկւով (Ն. տ., ԻԶ)։ Վախճանեցեր զնոսա (Երեմ., Ե)։ Տուժեսցի զգլուխն (Ղևտ., Զ)։ Փչեցից զայն արտաքս (Մաղաք., Ա)։ Տանջէր Տէր զմերձաւորս իւր (Յուդիթ, Ը)։ Տապալեսցէ զյատակս նորա (Եսայի, ԻԴ)։

Պատճառական բայերի լրացումը ևս ազդվող առարկայի հայցական է, ինչպես՝ զերծուցանել, զօրացուցանել, լցուցանել, կորուսանել, փլուզանել և այլն։

Օրինակներ՝ Զերծոյց զքեզ ի բերանոյ թշնամւոյ (Յովբ., ԼԶ)։ Զօրացոյց զԻսրայէլ (Ծնն., ԽԹ)։ Լցուցանես մարգարէս (ԳՆՄՈ, ԼԴ)։ Ոչ կորուսանիցէք զբնակիչս երկրին (Թիւք, ԼԳ)։ Փլոյզ զաշտարակն (Ագ., 586)։

3. Հետևանքի հայցական.— Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը ստեղծվում է գործողության հետևանքով։ Այսպիսի լրացում պահանջում են արդյունքային, հետևանքային գործողություն ցույց

տվող բայերը, ինչպես՝ առնել, բղխել, գործել, գրել, ծագել, ծնանել, կազմել, հաստատել, ճշմարտել, շինել, ստեղծանել, ուսանել և այլն։

Օրինակներ՝ Արար Աստուած զերկին և զերկիր (Ծնն., Ա)։ Բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ (Ն. տ.)։ Քաղելով գործեսցես զտապանն (Ն. տ., Դ)։ Առատաձեռնեա երանութիւն (ԳՆՄՈ, ՂԳ)։ Գրեցաք մեք զպատգամսն ձեր (Ա, Մակ., ԺԴ)։ Երկայնէր զխօսս իւր (ՄԿՊԱԱ, 1, ԺԴ)։ Ծագեա զողորմութիւնս քո (Սաղ., ԼԵ)։ Ծնաւ զԵնովս (Ծնն., Ե)։ Հաստատեցից զուխտ իմ ընդ ձեզ (Ն. տ., Թ)։ Կազմեաց Յովսեփ զկառս իւր (Ն. տ., ԽԶ)։ Կատարեաց զբանս զայս (Յուդիթ, Ժ)։ Տէր հաստեաց ի հողոյ մարդ (Սիրաք, ԺԷ)։ Զամենայն վախճան ինքն ճշմարտէ (Յովբ, ԻԸ)։ Յարոյց ինձ Աստուած զաւակ (Ծնն., Դ)։ Բլուրք յորդեսցեն զկաթն (Յովէլ., Գ)։ Ի վերայ ձեռաց իմոց նկարեցի զպարիսպ քո (Եսայի, ԽԹ)։ Ստեղծ տէր Աստուած զմարդն (Ծնն., Բ)։ Եկայք շինեսցուք մեզ քաղաք (Ն. տ., ԺԱ)։ Ուսան զգործս նոցա (Սաղ., ՃԵ)։ Տնկեսցես այգիս (Եզեկ., ԻԸ)։ Տողեցից զբանս ի կարգի պատմութեանս (Սեբ., ԼԷ)։

Ազդվող առարկայի խնդիր ստացող մի շարք բայեր (ազդել, կանգնել, հանել, հատանել, հարկանել, հեղուլ, հոսել և այլն) կարող են ունենալ նաև հետևանքի ուղիղ խնդիր։ Բերենք այդ բայերի զուգահեռ խնդիրների օրինակներ։

Զողբալին և զզուարճալին ազդեսցէ (ԳՆՄՈ, ԿԱ)։ Որով զփչումն կենդանութեան ի դէմս մեր լոյս բարերարութեամբդ քո ազդեցեր (Ն. տ., ՂԳ)։ Կանգնեաց զնոսա ի գետնոյ անտի (Ագ., 222)։ Կանգնեցից զխորանն Դաւթի (Ն. տ., 397)։ Ետ իշխանութիւն հանելոյ զդեն (Եզն., 1, Ա)։ Նա և հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց (Ագ., 22)։ Հատին զգլուխ նոցա (Ա, Թագ., ԼԱ)։ Անձանց նոցա զգինս հատանէր (Բ, Մակ., Ը)։ Հարկանէր զոմն եբրայեցի (Ելք, Բ)։ Եհար անդ զխորան իւր (Ծնն., ԼԱ)։ Ուր զմոխիրն հեղուցուն (Ղևտ., Դ)։ Հեղից ի վերայ նոցա զչարիս իւրեանց (Երեմ., ԺԴ)։ Հոսեցից զհող նորա ի նմանէ (Եզեկ., ԻԶ)։ Ամպք հոսեցին զանձրև (Առակ., Գ)։

Ասացական և իմացական բայերի հայցականով լրացումը ևս հետևանքի ուղիղ խնդիր է։ Այդ բայերից են՝ ասել, գոգել, խօսել, գուշակել, պատմել, երգել և այլն։

Օրինակներ՝ Ո՞չ զայդ իսկ ասացի ձեզ վաղագոյն (Ագ., 235)։ Ի կատարածն իսկ պատուիրանքն գոգջիք զձեզ ծառայս անպիտանս (ԳՆՄՈ, ՀԲ)։ Զնոյն յառաջագոյն գուշակէին (Իմաս., ԺԸ)։ Որք երգեն զաղմոսս (Ա, Մնաց., ԺԵ)։ Խօսեցաւ զամենայն բանս զայսոսիկ յա-

կանչս նոցա (Ծնն., Ի)։ Պատմեա ինձ զանուն քո (Ն.տ., ԼԲ)։

Հետևանքի իմաստ ունի նաև կրկնակի հայցական ստացող բայերի երկրորդ ուղիղ խնդիրը։

Օրինակներ՝ Յիշեա զի կաւ ստեղծեր զիս (Յովբ, Ժ)։ Արկից զդիակունս նոցա կերակուր թռչնոց երկնից (Երեմ., ԼԴ)։ Անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր (Մխ, 1, ԺԴ)։ Պատրաստեաց զլեզուն իւր սուսեր սատակիչ (Ն. տ., 3, ԿԴ)։ Օրէնսգէտ առնես զմեղաւորսն ի ճանապարհի (ԳՆՄՈ, ԼԵ)։ Մի՛ զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն (Ն. տ., ՀԸ)։

4. Ներքին ուղիղ խնդրի հայցական.— Սա հետևանքի հայցականի իմաստ ունի. ցույց է տալիս այն առարկան, որը ստեղծվում է գործողության ընթացքում։ Այս դեպքում լրացումն արմատակից է բային, ինչպես՝ պարգև պարգևել, մարտ մարտնչել, ուխտ ուխտել, կեանս կեալ, ողբս ողբալ, երգ երգել և այլն։

Օրինակներ՝ Մարտիր զպատերազմն մեր (Ա, Մակ., ԺԳ)։ Մարտիր զբարւոք մարտն հաւատոց (Ա, Տիմոթ., Զ)։ Արդ ուխտեսցուք ուխտս առաջի Տեառն Աստուծոյ (Բ, Եզր., Ժ)։ Կեայք պանդխտութեամբ կեանս (ԹԱՊՏԱ, 1, ԺԱ)։ Պարգևս բարեաց պարգևեցից ձեզ (Առակ, Դ)։ Ողբաց Դաւիթ զողբս (Բ, Թագ., Ա)։ Արդ խնդիր մի խնդրեմ ի քէն (Ն. տ., Բ)։ Ողբասցեն ողբս ձայնիւ Միք., Բ)։ Երգէին զերգս նորս (Յայտն., ԺԴ)։

## Բայի լրացումները պարագայական հայցականով

Ինչպես նշվել է, գրաբարում պարագայական իմաստները քիչ դեպքերում էին արտահայտվում աննախդիր հայցականով։ Երբեմն հայցականն արտահայտում է ձևի, ուղիղ խնդրի և միջոցի համատեղ իմաստ։ Սա առկա է առաջին հերթին բային արմատակից հայցականի դեպքում[7]։

Ջենէք զենումն անօրէնութեան (Մխ, 2, ՂԲ)։ Մեծարեաց նա զկիկիանէս մեծութիւն յոյժ (Ն. տ., ՉԸ)։ Կորնչին զյաւիտենական կորուստն (ՂՓՊՀ, Ի)։ Ամաչեաց զամօթն յաւիտենից (ՅՄՊՏ, 307ա)։ Նախանձեալ զնախանձն աստուծոյ (Ն. տ., 310բ)։ Բազումք կորեան զանմահն մահ (ՄԿՊԱԱ, 3, ԻԱ)։

Սրանից զատ հայցականը երբեմն կարող է պարագայական անխառն իմաստ ունենալ։ Այսպես, հետևյալ նախադասություններում

---

7 Տե՛ս էջ 129։

Հայցականն արտահայտում է ժամանակի իմաստ՝ ժամանակային չափի նրբերանգով կամ առանց դրան։

*Ոչ հանգչէին ոչ* **զտիւ** *և ոչ* **զգիշեր** *(Յայտն., Դ)։ Զարչարեսցին* **զտիւ** *և* **զգիշեր** *(Ն. տ., Ի)։ Այնու իսկ հարկանէր զզօրս նոցա զամենայն* **աւուրս** *կենաց իւրոց (Ա, Մակ., Գ)։ Ոչ դադարէի* **զցայգ** *և* **զցերեկ** *աղաչել վասն ձեր (Ագ., 235)։ Մեծարէր* **զամենայն աւուրս** *հաշտութեան և խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր (Բուզ., 4, ԺՁ)։ Տրտմութեամբ կերիցես զնա* **զամենայն աւուրս** *կենաց քոց (Ծնն., Գ)։* **Զտիւ** *և* **զգիշեր** *մի՛ դադարեսցեն (Ծնն., Ը)։ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ* **զգիշերն** *զայն (Եսթ., Զ)։* **Զցայգ** *պահ արկցուք զմեւք շուրջ, և* **զցերեկ** *գործեսցուք (Նեեմի, Դ)։*

Որոշ բառակապակցություններում էլ արտահայտվում է ժամանակային չափի իմաստ։

**Օրինակներ՝** *Վախճանի, թագաւորեալ* **ամս երեսուն** *և* **երիս** *(Մխ, 2, ԺԹ)։* **Երկուս ամս** *թագաւորեաց ի վերայ Իսրայելի (Ա, Թագ., ԺԳ)։ Եկեաց Ադամ* **ամս երկերիւր** *և* **երեսուն** *(Ծնն., Ե)։ Ես կացի ի լերին* **զքառասուն տիւ** *(Բ, Օրէնք, Ժ)։ Հանդարտեաց ... Յուդա* **ամս տասն** *(Բ, Մնաց., ԺԴ)։ Սնուցի զքեզ* **զերիս ամս** *ի գիրկս (Բ, Մակ., Է)։* **Ամս բազումս** *կեցցէ մարդ (Ժողով., ԺԱ)։ Արձակեաց զնա* **զերկուս ամիսս** *(Դատ., ԺԱ)։* **Զվեց ամիս** *նստաւ անդ Յովաբ (Գ, Թագ., ԺԱ)։*

Տարածական և այլ կարգի չափի իմաստը ևս կարող է արտահայտվել հայցականով։

**Օրինակներ՝** *Զև ևս հեռացեալ* **օթևանս ոչ բազումս** *յԱյրարատոյ երանելի սպարապետն Հայոց Վարդան՝ և իշխանն Սիւնեաց Վասակ վաղվաղակի գաղտ դեսպանս առնէր առ Միհրներսեհ հազարապետն Արեաց (ՂՓՊՀ, ԼԴ)։* **Հնգետասան կանգուն** *բարձրացաւ ջուրն (Ծնն., Է)։ Գտին* **գիրկս հնգետասան** *(Գործ., Իէ)։ Զափեաց զպարիսպն նորա* **հարեւր և քառասուն և չորս ասպարէզս** *(Յայտն., ԻԱ)։ Վարիցէ զքեզ* **մղոն մի** *(Մատ., Ե)։ Տուժեսցեն ի նմանէ* **հարիւր սիկղ** *(Բ, Օրէնք, ԻԲ)։* **Չորս սատերս** *կրկին ժողովէր (Բ, Մակ., ԺԲ)։*

Հայցականը որոշ բառակապակցություններում կարող է արտահայտել ձևի իմաստ։

**Օրինակներ՝** *Հրամայեաց հրովարտակ գրել* **օրինակ** *զայս (Ագ., 796)։ Նա* **զայս օրինակ** *փոխեցաւ յաշխարհէ (Բ, Մակ., ԺԴ)։* **Զմահ** *աղուեսու սպանից զքեզ (Բուզ., 4, ԾԴ)։*

Ձևի իմաստի մի դրսևորումը լրացյալ բային արմատակից բառի հայցականի գործածությունն է սաստկացման երանգով։

Օրինակներ՝ *Զարմացարուք զարմանս* (*Ամբակ., Ա*)։ *Անգին սպառնալիս սպառնայ յօրէնսն իւր* (*Եզեկ., 4, ԺԴ*)։ *Յիսուս ևս աւելի սպառնալիս քան զայն սպառնայցէ* (*Ն.տ.*)։

*Երբեմն էլ հայցականը նպատակի իմաստ է արտահայտում։ Սա բացահայտորեն* ի+հայցական *կառույցի փոխարեն է գործածվում, ընդ որում նաև* ի+անորոշ դերբայի հայցական *կառույցի*։

Օրինակներ՝ *Մատոյց զանձն իւր քեզ* պատարագ (*Ագ., 96*)։ *Առաքեցի զձեզ* հնձել (*Ն. տ., 697*)։ Աւետարանել *աղքատաց առաքեաց զիս* (*Ղուկ., Դ*)։ *Երթամ ձուկն* որսալ (*Յովհ., ԻԱ*)։ *Այլ ասեն, զնոսա բժշկութեանց* զինս *տարաւ* (*Եզն., 4, Թ*)։

## Գ. Բայի լրացումները բացառական հոլովով

*Բացառականը գրաբարում բայի լրացում դառնալիս գերազանցապես խնդրային իմաստներ էր արտահայտում։ Արդի հայերենի խնդրային բացառականի բազմաթիվ տեսակներ առկա են գրաբարում։ Իհարկե, ժամանակակից հայերենում բացառականը ծառայում է նաև գրաբարի զ նախդիր+բացառական կառույցի իմաստների դրսևորմանը, հետևաբար ավելի լայն է, քան գրաբարի բացառականը։ Այնուամենայնիվ, վերջինս աչքի է ընկնում իմաստային բազմազանությամբ։ Սակայն, ինչպես բայի լրացում դարձող մյուս թեք հոլովները, բացառականը ևս քիչ է ծառայում պարագայական իմաստների արտահայտմանը։ Դրանք ավելի շատ դրսևորվում էին նախդրավոր և նախադրությամբ կառույցներով։ Խնդրային իմաստներից են՝ անջատման (զատման), խուսափման, պակասության, պահանջման, անձի-ելակետային, ելման-սկզբնակետի, ելման, նյութի (սերման, ծագման), միջոցի, ընդօրինակման, մասնական, վերաբերության, հաղորդման, հանգման և ուղղության, ներգործող խնդրի, պասիվ ներգործության, սահմանափակման։ Այստեղ նույնպես առկա է իմաստների համատեղում։*

### Բայի լրացումները խնդրային բացառականով

1. Անջատման (զատման) բացառական.— *Համեմատաբար սակավաթիվ են այս բացառականով լրացում ստացող բայերը։ Դրանցից են՝* անջատել, առնուլ, ի բաց առնուլ, բառնալ, բեկանել, գերել, զատչել, զերծանել, ընծայել, թօթափել, ժողովել, իջանել, լուծանել, խախտել, խլել, խզել, խոտորել, խորտակել, կթել, կողոպտել, կորզել, կո-

րուսանել, հրաժարել, հանել, հատանել, որոշել, պատառել, տրոհել, քակել, քակտել, քաւել և այլն։ Լրացում դառնում են հիմնականում թանձրացական գոյականները։ Օրինակներ՝ Անջատեցաւ ի նմանէ (Եզեկ., ԺԹ)։ Առցեն ձէթ ի ձիթենեաց (Ելք, ԻԷ)։ Ի բաց արասցէ զգորտս յինէն (Ելք, Ը)։ Ոսկր մի՛ բեկանիցէք ի նմանէ (Ելք, ԺԲ)։ Զատո ի միմեանց զամենայն ոչխար (Ծնն., Լ)։ Լուծանէին լքանէին և զատչել յԵրուանդայ խորհէին (Մխ, 2, ԽԵ)։ Զերծ յինէն զքուրձ (Սաղ., ԻԹ)։ Զոր ընտրեաց Տէր յամենայն ցեղիցն (Բ, Օրէնք, ԺԸ)։ Դարձեալ ժողովեսցէ զքեզ յամէնայն ազգաց (Ն.տ., Լ)։ Մի թողացուսցէ զձեռն քո ի ծառայից քոց (Յեսու, Ժ)։ Թօթափեսջիք զփոշին յոտից (Մատթ., Ժ)։ Էջ Յուդա յեղբարց իւրոց (Ծնն., ԼԸ)։ Խլեսցին յարմատոյ անտի ատամունք խածանողին (ԳՆՄՈ, Ղ)։ Խզեաց զայն ի բազկաց իւրոց (Դատ., ԺԶ)։ Ոչ ի մորենւոյ կթեն խաղող (Ղուկ., Զ)։ Կողոպտեցէք զգինդս ոսկիս յականջաց (Ելք, ԼԲ)։ Կորզեաց զնա ի ձեռաց նոցա (Ծնն., ԼԷ)։ Կորուսից զնա ի ժողովրդենէ իւրմէ (Ղևտ., ԺԷ)։ Զհայր և զորդի քակէր ի միմեանց (Եղ., 2)։ Նախարարքն հրաժարեցին ի սրբոցն յորդառատ արտասուօք (Ն. տ., 7)։ Նենգութեամբ որոշեցի յերդմանէ սուրբ Աւետարանին (ՂՓՊՀ, ԻԷ)։ Եհան յինէն Աստուած զնախատինս իմ (Ծնն., Լ)։ Ոստս ի ծառոց հատանէին (Մարկ., ԺԱ)։ Պատառեցին զհանդերձս ... յանդամոց նոցա (Ագ., 208)։ Մի՛ տրոհեսցես ի բազմականացդ (ԳՆՄՈ, ԽԹ)։ Քակտեա ի յերկաթիցս (Ն. տ., ՁԳ)։ Լուծեալ քաւեսցեն ի մէնջ զբարկութիւն Տեառն (Ա, Եզր., Թ)։

Թափել, թիւրել, կորնչել, հալածել, հատանել, քակել և այլ բայերի լրացումները կարելի է մեկնաբանել անջատման-խուսափման խառն իմաստով։

Օրինակներ՝ Թափեսցէ զնա ի ձեռաց նոցա (Ծնն., ԼԷ)։ Թիւրէին զքեզ ի ճանապարհէ (Բ, Մակ., Ը)։ Ձայն Տեառն հատանէ զբոց ի հրոյ (Սաղ., ԻԸ)։ Կորեաւ յինէն փախուստ իմ (Ն. տ., ՃԽԱ)։ Զքեզ հալածեսցեն ի մարդկանէ (Դան., Դ)։ Հատեալ էր քուն յաչաց իմոց (Ծնն., ԼԱ)։ Քակեսցին ոմանք ի հաւատոցն (Ա, Տիմոթ., Դ)։ Թեթևացուսցէ զձեռն իւր ի ձէնջ (Ա, Թագ., Զ)։

Ազատել բայի լրացումը կարող է մեկնաբանվել անջատման-պակասության խառն իմաստով։ Օրինակ՝ Կայսրն ոչ միայն զԱրշամ չազատէ յիշխանութենէն Հերովդի (Մխ, 2, ԻԵ)։

Ելանել, կթել, կորզել բայերի լրացումները կարող են մեկնաբանվել և՛ անջատման, և՛ տեղի իմաստներով։

Օրինակներ՝ Ել Մովսէս ի Փարաւոնէ (Ելք, Ժ)։ Ելէք ի ժողովրդենէ իմմէ (Ն. տ., ԺԲ)։ Ջնջեա զիս ի դպրութենէ քումմէ (Ն. տ., ԼԲ)։ Կթեա զողկոյզ յայգւոյ երկրէ (Յայտն., ԺԴ)։ Ի միջոյ ժանեաց նոցա կորզէի (Յովբ., ԻԹ)։

Ուրանալ բայի լրացումը կարելի է մեկնաբանել անջատման-խուսափման-սահմանափակման խառն իմաստներով։ Օրինակ՝ Ի հաւատոցն ուրացեալ է (Ա, Տիմոթ., Ե)։

**Խուսափման բացառական.**— Այս իմաստով լրացում ստանում են ազատել, անցանել, ապստամբել, ապրել, գարշել, դառնալ, ի բաց դառնալ, ի բաց գնալ, թաքչել, ժուժկալել, խորշել, խոտորել, խոյս տալ, խուսել, խոնարհել, խռովել, ծածկել, կեցուցանել, հանգչել (հանգուցանել), հեռանալ, հրաժարել, մերժել, ճշկահել, պահել, վրիպել, փրկել, փրծանել և այլ բայեր։ Լրացում կարող են դառնալ և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականները։

Օրինակներ՝ Ազատեցաք յայնմանէ յանօգուտ կամացն լծոյ ծառայութեանն (Ագ., 574)։ Ոչ դարձուցեր զանձն քո յանարգանաց (Ն. տ., 97)։ Ապրեցոյց ... յանօրէն պղծութենէն (Ն. տ., 164)։ Ապստամբեալ իցէ յարքայէ (Ն. տ., 28)։ Յառնէ անիրաւէ փրկեցեր զիս (Սաղ., ԺԷ)։ Յարչոցն պատառողաց ապրեցայց (ԳՆՄՈ, ԿԸ)։ Արգելոյր ի տալոյ հարկս կայսեր (Ղուկ., ԻԳ)։ Հեռացան յինէն (Երեմ., Բ)։ Անցո զանօրէնութիւն ի ծառայէ (Բ, Թագ, ԻԹ)։ Յաւս հնձեսցեն ի նոցանէ (Յովբ., Դ)։ Հրաժարեաց յինէն Դաւիթ (Ա, Թագ., Ի)։ Ի մազէ ոչ վրիպէին (Դատ., Ի)։ Ի մեռելոց նոցա գարշիջիք (Ղևտ., ԺԱ)։ Մի՛ թաքուցաներ յինէն (Յեսու., Է)։ Ոչ ժուժկալեսցէ ի նոցանէ (Ն. տ., Ժ)։ Խոյս ետ Իսրայէլ ի նմանէ (Թիւք, Ի)։ Խոնարհեցաւ յոյժ յերեսաց Աստուծոյ (Բ, Մնաց., ԼԶ)։ Խորշի ի ճանապարհաց մերոց (Իմաս., Բ)։ Սա հանգուսցէ զմեզ ի գործոց (Ծնն., Ե)։ Խռովեցան յերեսաց նոցա (Ն. տ., ԽԵ)։ Կեցոյց զնոսա ի ձեռաց ատելեաց (Սաղ., ՃԼԷ)։ Մերժեսցեն զնա ի լուսոյ ի խաւար (Յովբ., ԺԸ)։ Ոմանք յեպիսկոպոսաց ճշկահեցին ի նմանէ (ՄԿՊԱԱ, 3, Գ)։ Ի բաց կացէք յինէն ամենեքեան (Սաղ., Զ)։ Ջանձինս ... պահեսցեն ... ի դիւական խառնից մարդկան (Ագ., 149)։ Խոտորեցաւ ի չարէ (Առակ., ԺԴ)։ Ի դարանակալաց նորա զգուշացաւ (Իմաս., Ժ)։

Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել և՛ խուսափման, և՛ ներգործող խնդրի իմաստներով։ Օրինակ՝ Ծածկեալ իցէ յառնէն նորա (Թիւք, Ե)։

Լրացումը կարող է մեկնաբանվել և՛ խուսափման, և՛ սահմանափակման իմաստներով։ Օրինակ՝ Նա ոչ երկմտեաց ի ճաւատոցն (Հռոմ. Դ)։

Լրացումը կարող է մեկնաբանվել և՛ խուսափման, և՛ վերաբերության իմաստներով։ Օրինակ՝ Դատ արա յոսոխէ իմմէ (Ղուկ., ԺԸ)։

Պակասության բացառական.— Այսպիսի լրացում ստանում են սահմանափակ թվով բայեր, ինչպես՝ ազատել, ապաշխարել, բժշկել, անմարդանալ, դատարկանալ, զրկել, թափրանալ, թեթևանալ, կապտել, կարճել, մերկանալ, ունայնանալ, տնանկանալ, փարատել և այլն։

Ոչ ապաշխարեցին ի գործոց իւրեանց (Յայտն., ԺԶ)։ ի դստերաց թափուր արարին զմնացեալս (Բարուք, Դ)։ Մերկանայ յընչից և յստացուածոց (Եզն., 2, ԺԵ)։ Մարմինք նորոգեալք յարութեամբն, ազատացեալ յամենայն կարեաց՝ յառնէն (Ն. տ., 4, ԺԵ)։ Թափրացաք և ունայնացաք ի ստացուածոց և ի բոլոր պարենի ռոճկաց (Ղև., Պատմ., 261)։ Աւերեալ և անմարդացեալ էր առհասարակ ի բնակչաց աշխարհն (ՅԴՊՀ, 354)։ Արկան ի կուսութենէ (Եզեկ., ԻԳ)։ Մի՛ զրկեր զնա յազատութենէ (Սիրաք, Է)։ Սրբեա ի պարտուց, օրհնեալ (ԳՆՄՈ, Բ)։ Ով ոք զրկեցաւ յերանութենէ և ոչ ելաց. ո՞վ ոք կապտեցաւ ի շնորհէ փառաց և ոչ ողբաց (Ն. տ., ԻԹ)։ Ո՛վ ոք յարքայական գանձիցն տնանկացաւ (Ն. տ.)։ Ես մաքրեցից զձեզ ի պարտեաց (Ն. տ., ԾԴ)։ Բժշկէր... ի ճետիցն (Դ. Թագ., Թ)։ Բժշկեցաւ ի տանջանացն (Մարկ., Ե)։ Դատարկացաք յօրինաց անտի (Հռոմ., Է)։ Թեթևացո ի... ծառայութենէ (Գ, Թագ., ԺԲ)։ Լուա ի չարեաց զսիրտ քո (Երեմ., Դ)։ Կարճէր ի կենաց անտի (Բ, Մակ., Թ)։ Ազատեաց զնոսա ի ճարկաց (Ա, Եզր., Դ)։ Կարասցեն սակաւ մի փարատել ... ի սնոտի ուսմանց անտի (Ագ., 312)։ Լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց (Եբր., Ժ)։

Անարգել բայի լրացումը կարելի է մեկնաբանել և՛ պակասության, և՛ մասնական խնդրային իմաստներով։ Օրինակ՝ Զոմանս ի նոցանէ հեռացուցին և քարշեցին յազնուական պատույն անարգեալ (Եղ., 2)։

Կորուսանել, կործանել բայերի լրացումներն արտահայտում են պակասության և ելման-սկզբնակետի համատեղ իմաստ։

Օրինակներ՝ Կորուսից զձեզ ի բնակութենէ (Սոփոն., Բ)։ Կործանէր ի ճարստութենէ իւրմէ (Բ, Մակ., Ե)։

Պաճանջման բացառական.— Այս իմաստով լրացում ստացող բայերի թիվը խիստ սահմանափակ է գրաբարում։ Եղածներից են

խնդրել, պաճանջել, ակն ունիմ, ժտել: Լրացումն արտահայտվում է գերազանցապես թանձրացական գոյականներով։

Օրինակներ՝ խնդրեն յԱստուծոյ զկերակուրս (Սաղ., ՃԳ)։ ժտեա ի Տեառնէ (Ն. տ., ԼՁ)։ Պահանջեսցեն ի նմանէ ժամանակս (Ա, Եզր., Թ)։ Ի մարգ իւրեանց պահանջէին հաց (Ողբ., Բ)։ Ակն ունել զնոյ ի Տեառնէ (Բ, Մակ., ԺԵ)։

Անձի-ելակետային բացառական.— Այսպիսի լրացում ստանում են առնուլ, գնել, գալ, գտանել, ընդունել, ժառանգել, հանել և այլ սակավաթիվ բայեր։ Լրացումն արտահայտվում է անձ ցույց տվող գոյականներով։

Օրինակներ՝ Առցեն ի նմանէ ոսկի (Ա, Մակ., ԺՁ)։ ի ցեղէն նորա ժառանգեսցէ (Թիւք, ԻԷ)։ Կերակուրս գնեսջիք ի նոցանէ (Բ, Օրէնք, Բ)։ Ոչ գտցէ յումեքէ ողորմութիւն (Առակ., ԻԱ)։ Ընկալաւ ի ձեռանէ Տեառն կրկին զհատուցումն մեղաց (Եսայի, Խ)։ Թագաւորք ազգաց յումմէ առնուն զհարկս (Մատթ., ԺԷ)։ Հրաման առ ի ճռեշտակէ սրբոյ (Գործ., Ժ)։ Ընկալ զընծայսն ի ձեռաց իմոց (Ծնն., ԼԳ)։ Եկն առ իս յեղբարցն իմոց (Նեեմի, Ա)։ Ստասցի յընկերէ իւրմէ (Ղևտ., ԻԵ)։ Ակնկալցուք գտանել ի նմանէ (Յուդիթ, Ը)։ Այլ այր հանիցէ զնա ի քէն (Բ, Օրէնք, ԻԸ)։ Ի ցեղէն նորա ժառանգեսցէ (Թիւք ԻԷ)։ Յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն (Եբր., Է)։

Ալման-սկզբնակետի բացառական:— Գործողության սկզբնակետի իմաստ ունեցող լրացում ստանում են բազմաթիվ բայեր, ինչպես՝ ամփոփել, այլայլել, արձակել, դադարել, դառնալ, զովանալ, ընկենուլ, իջանել, լռել, լսել, խափանել կասել, կորուսանել, ճանդարտել, մեղմանալ, մխիթարել, սփոփել և այլն։

Օրինակներ՝ Լռեցին և երեքին բարեկամք նորա այնուհետև ի խօսելոյ ընդդէմ Յոբայ (Յովբ., ԼԲ)։ Զտիւ և զգիշեր ոչ դադարէր ի խրատելոյ և ի բողոքելոյ (Բուզ., 4, Դ)։ Յայտմունք փայլատակմանցն ամփոփէին յերևելոյ (ՂՓՊՀ, ԾԷ)։ Ոչ է այլայլեալ յարմարութենէ (ԳՆՄՈ, Հ)։ Արձակեա ի կապանացս ... սփոփեա ի տխրութեանցս (Ն. տ., ՁԳ)։ Զարթեաւ ի քնոյ իւրմէ (Դատ., ԺՁ)։ Զովացուցանել զնա ի տառապանաց (Յովնան, Դ)։ Զօրացան ի տկարութենէ (Եբր., ԺԱ)։ Մի՛ հանդարտեսցուք զնոսա ի գործոյ (Ելք, Ե)։ Ընկէց ի ձեռաց իւրոց զտախտակսն (Ն. տ., ԼԲ)։ Թափեա ի քէն զգինիդ քո (Ա, Թագ., Ա)։ Լուաւ զբանսն յԹերբեկայ քեռէ իւրմէ (Ծնն., ԻԴ)։ էջ վաղվաղակի յուղտուէ անտի (Ն. տ.)։ Ոչ լուծցեն զգօտիս ի միջոց (Եսայի, Ե)։ Խափանէին զնոսա ի շինելոյ (Բ, Եզր., Դ)։ Զոր լուայ ի ճորէ իմմէ (Յովհ., ԺԵ)։

Ոչ կասէր ի հպարտութենէ (Բ, Մակ., Թ)։ Կորուսցես յառնէ մինչ ցկին (Ա, Թագ., ԺԵ)։ Մխիթարեցաւ Տէր ի հեծութենէ (Դատ., Բ)։ Դարձուցանէ ի հիւանդութենէ նորա (Սաղ., Խ)։ Ոչ մեղմացաւ անօրէնն ի հպարտութենէ (Բ, Մակ., ԺԵ)։

Որոշ բայերի մոտ լրացումը կարող է մեկնաբանվել և՛ ելման-սկզբնակետի, և՛ տեղի իմաստներով։

Օրինակներ՝ Խոնարհեցաւ Եզեկիաս ի բարձրութենէ (Բ, Մնաց., ԼԲ)։ Ծորեաց ի տեղւոջէ իւրմէ (Յովբ., ԼԷ)։ Ջուրք ելանեն ի հիւսիսոյ (Երեմ., ԽԷ)։

Ելման բացառական.— Լրացումը ցույց է տալիս այն առարկայացած տեղը, որից ելնում է մի բան։ Այսպիսի լրացում ստանում են բղխել, բորբոքել, ելանել, կաթել, հանել, հոսել և այլ բայեր։

Օրինակներ՝ Յարիցէ յարմատոյ նորա տունկ (Դանի, ԺԱ)։ Ի նոցանէ բղխէր արմատ չարի (Ա, Մակ., Ա)։ Ի բերանոյ նորա բղխե արդարութիւն (Առակ., Գ)։ Մեղր կաթէ ի շրթանց կնոջ (Ն. տ., Ե)։ Ջուր բղխեցուցեր ի վիմէ (Նեեմի, Թ)։ Բորբոքեցաւ հուր ի վիմէ (Դատ., Զ)։ Աղբիւր ելանէր յերկրէ (Ծնն., Բ)։ Ելանէին ի քէն (Ն. տ., ԺԵ)։ Որոյ ծորիցէ սերմն ի մարմնոյ (Ղևտ., ԺԵ)։ Հոսէին ի նմանէ քրտունք (Ղուկ., ԻԲ)։ Ի ջրոյ անտի հանի զդա (Ելք, Բ)։

Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել և՛ ելման, և՛ տեղի իմաստներով։

Օրինակներ՝ Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ (Սաղ., ՁԴ)։ Դիեցոյց մեղր ի վիմէ (Բ, Օրէնք, ԼԲ)։

Լրացումը կարող է մեկնաբանվել նաև ելման և պասսիվ ներգործության իմաստներով։ Օրինակ՝ ի հոտոյ ջրոյ ծաղկեսցի (Յովբ, ԺԴ)։

Նյութի (սերման, ծագման) բացառական.— Այսպիսի լրացում ստանում են ստեղծման գործողություն ցույց տվող բայեր (առնել, գործել, հաստել, ստեղծանել), ինչպես նաև կերակրել, լնուլ և այլն։ Լրացումն արտահայտվում է թանձրացական գոյականներով։

Օրինակներ՝ Սեղան ի քարանց առնիցես (Ելք, Ի)։ Ստասցես լծակս յանփուտ փայտից (Ն. տ., ԻԵ)։ Ստասցես աշտանակ յոսկւոյ սրբոյ (Ն. տ.)։ Զամենայն տեղի զարդու զգնծութեան իւրոյ՝ ելից ի գիսոյ հերաց իւրոց (Եսթ., ԺԴ)։ Զոր ինքն գործէր ի կաւոյն (Երեմ., ԺԸ)։ Շունք կերակրին ի փշրանաց (Մատթ., ԺԵ)։ Տէր հաստեաց ի հողոյ մարդ (Սիրաք, ԺԷ)։ Ի կիսոյն արար հաց (Եսայի, ԽԴ)։ Ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ (Ծնն., Բ)։ Արարից և ես որդիս ի նմանէ (Ն. տ., Լ)։ Զինուորացն արարեալ պսակ ի փշոց (Յովհ., ԺԹ)։

Երբեմն լրացումը կարող է համատեղել նյութի և տեղի իմաստներ։ Օրինակ՝ Ի լերանց նորա հատանիցես պղինձ (Բ, Օրէնք, Ը)։

Լրացումը կարող է մեկնաբանվել նյութի և միջոցի իմաստներով։

Օրինակներ՝ Զձորս լցից ի քէն (Եզեկ., ԼԲ)։ Յագեցուցից ի քէն զամենայն գազանս երկրի (Ն. տ.)։ Բոլորեալ պսակ ի փշոց (Մատթ., ԻԷ)։

**Միջոցի բացառական.**— Այս իմաստը գրաբարում շատ հաճախ էր արտահայտվում բացառականով։ Միջոցի բացառականով լրացում ստանում են բազմաթիվ բայեր, ինչպես՝ արբուցանել, արդարանալ, գործել, զուարթանալ, լնուլ, ճարկանել, շահել, պարտաւորել, սատակել, օծանել և այլն։

Օրինակներ՝ Եւ օծցես ի նմանէ զխորան վկայութեանն (Ելք, Լ)։ Զլերինս նոցա արբուցանեմք յարենէ նոցա (Յուդիթ, Զ)։ Զամենայն զտուն նորա լցուցէ ի տռնմականաց (Էկղ., Ա)։ Հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց (Բուզ., 4, ԾԴ)։ Սատակեցան զօրքն Հերովդի յօգնականութենէ քաջացն Հայոց (Մխ, 2, ԻԹ)։ Բազում օգնականութիւնս առողջութեան ըստ իւրաքանչիւր ախտից շահէին ի նշխարաց սրբոյն (ՂՓՊՀ, ԺԸ)։ Ի բազում փայտից զուարթանայ հուր (Առակ., ԻԶ)։ Ի պտղոյ ձեռաց ... գործէ զերկիր (Ն. տ., ԼԱ)։ Ի բանից քոց արդարասցիս, և ի բանից քոց պարտաւորեսցիս (Մատթ., ԺԲ)։ Հանդերձելով հանդերձեսցես զնա յոչխարաց քոց և ի ցորենոյ քումմէ և ի հնձանէ քումմէ (Բ, Օրէնք, ԺԵ)։ Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց (Առակ., Գ)։

Լրացումը կարող է համատեղել միջոցի և ներգործող խնդրի իմաստներ։

Օրինակներ՝ Որ անուանեալ կոչի ի պարթևարէն լեզուէն Դիցաւան (Ագ., 817)։ Ի սպանելոց անտի լցեալ եղեն հիմունք երկրի մերում (Ղև., Պատմ., 276)։ Երկիր լուսաւորեցաւ ի փառաց նորա (Յայտն., ԺԸ)։ Որպէս վառեսցի եղէգն ի կայծականց (Եսայի, Ե)։

Կարող են համատեղվել միջոցի և պասսիվ ներգործության իմաստները։

Օրինակներ՝ Ի պարարտութենէ լցցի անձն իմ (Սաղ., ԿԲ)։ Ոչ յագեսցի յարենէ (Սիրաք, ԺԲ)։

Միջոցի և մասնական խնդրային իմաստները ևս կարող են համատեղվել։ Օրինակ՝ Ելից հրեշտակն զխնկանոցն ի հրոյ սեղանոյն (Յայտն., Ը)։

Ընդօրինակման բացառական.— Սա խիստ սահմանափակ թվով բայերի լրացում է լինում, ինչպես՝ թարգմանել, ուսանել: Լրացում դարձող գոյականները սահմանափակում չունեն։

Օրինակներ՝ Զոր ի փոքուէ տարրէ անարգէ զմեծ է ուսանել (ԳՆՄՈ, ԿԹ)։ Սա թարգմանի յԱսորի գրոց (Յովբ, ԽԲ)։ Յինէն ուսիր զպատգամս (Առակ., ԻԷ)։ Ի թզենւոյ անտի ուսջիք զառակն (Մարկ., ԺԳ)։

Մասնական բացառական.— Սա ունի երկու դրսևորում՝ մասնական-ենթակայական, որը ըստ էության կիսով չափ է բայի լրացում, և մասնական-խնդրային, որ բայի լրացում է։

Մասնական-ենթակայականը կապակցվում է բայերի հետ՝ կատարելով և՛ ենթակայի, և՛ լրացման դեր։ Ընդ որում բացառականը կարող է լինել կա՛մ դերանվան լրացում և նրա հետ միասին դառնալ ենթակա, կա՛մ միայնակ հանդես գալ։

Օրինակներ՝ Պատասխանի ետուն ոմանք ի դպրացն և ի փարիսեցւոց (Մատթ., ԺԲ)։ Ոչ ծախեցաւ ի նոցանէ և ոչ մի (Թիւք, ԼԱ)։ Յայտեցաւ յարենէ նորա զօրմովքն և զձիովքն (Դ, Թագ., Թ)։ Կէսքն յանասնոցն ի պէտս արարան (Եզն., 1, Ա)։

Առավել շատ գործածվում է մասնական-խնդրային բացառականը՝ դառնալով ներգործական սեռի բայերի լրացում։

Օրինակներ՝ Առցէ ի պտղոյ այգւոյն (Մարկ., ԺԲ)։ Տաց նմա ուտել ի մանանայէն թաքուցելոյ (Յայտն., Բ)։ Առ ժամանակս վայելէն ի դարմանոյ ցորենոյն (Բուզ., 3, ԺԳ)։ Ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք (Ծնն., Գ)։ Սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերայ (Ն. տ.)։ Արբ ի գինւոյն (Ն. տ., Թ)։ Խորովեսցէ ի նոցանէ և կերիցէ (Բ, Օրէնք, ԻԸ)։ Ծարաւելոցն տամ յաղբերէ ջրոյ կենաց ձրի (Յայտն., ԻԱ)։ Ապրեցուցէ ի մեղաւորաց և կեցուցէ (Սաղ., ԼԶ)։ Ի նոցանէ սպանանիցեն (Ղուկ., ԺԱ)։ Ի հացէ քումմէ տացես քաղցելոց (Տովբ., Դ)։

Վերաբերության բացառական.— Այս իմաստը սովորաբար արտահայտվում է զ+բացառական կառույցով, խօսել, կասկածել բայերի մոտ՝ նաև բացառականով։

Օրինակներ՝ Կասկածէին յազգաց երկրին (Բ, Եզր, Գ)։ Որ երկնչի ի Տեառնէ, ոչ յումեքէ կասկածեսցէ (Սիրաք, ԼԱ)։ Խօսեցաւ ընդ նոսա ի գրոց (Գործ, ԺԷ)։

Ճշմարտել բայի լրացումը կարող է մեկնաբանվել և՛ վերաբերության, և՛ հաղորդման, և՛ միջոցի իմաստներով։ Օրինակ՝ Առաքեաց ճշմարտել ի Մուրքէէ (Եսթեր, Դ)։

**Հաղորդման բացառական.**— *Սա լրացում է լինում* հարցանել *բայի համար, որը սովորաբար այլ ձևերով է այս իմաստով լրացում ունենում:* Օրինակ՝ *Գնաց հարցանել* ի Տեառնէ *(Ծնն., ԻԵ):*

**Հանգման և ուղղության բացառական.**— *Այս իմաստով լրացում ստանում են* ծարաւել, կարօտել, կարօտանալ *և նման բայեր, որոնց մոտ աշխարհաբարում այս լրացումը տրականով է արտահայտվում (հազվադեպ և բացառականով):*

Օրինակներ՝ Ծարաւեաց *անդ ժողովուրդն* ի ջրոյ *(Ելք, ԺԷ): Եղիցին կարօտեալք* ի հացէ *և* ի ջրոյ *(Եզեկ., Դ):* Յիրէ *իմէքէ ամենևին ոչ կարօտանաս (ԳՆՄՈ, ՂԳ):*

Կախել *բայը սովորաբար* զ+բացառական *կառույցով խնդիր է ստանում, սակայն այն կարող է ունենալ նաև բացառականով հանգման խնդիր:*

Օրինակներ՝ Ի ցուցն *կախեցին (Ղուկ., Ե):* Ի *չորեցունց* տոնց *կախեալ յերկնից (Գործ., ԺԱ):*

**Ներգործող խնդրի բացառական.**— *Այս իմաստի դրսևորման հիմնական միջոցը բացառականն է, որը սովորաբար դրվում է կրավորական բայերի մոտ:*

Օրինակներ՝ ՅԱստուծոյ *ուղղեսցին գնացք նորա (Առակ., ԺԶ): Որ* ի հօրէ *նորին շինեալ էր ի Տարօն (Մխ, 3, Բ): Վատնիմ* ի պիծակացն *(ԳՆՄՈ, ԿԸ): Սատակեսցի անձն այն* ի ժողովրդենէ *իւրմէ (Ղև., Պատմ., ԺԴ): Օրհնեցաւ և դրուատեցաւ* ի հեռաւորաց *և* ի մերձաւորաց *(ԹԱՊՏԱ, 3, ԺԳ): Ոչ տիրիս* ի ցասմանէ *(ԳՆՄՈ, ՀԶ): Ոչ էր լեալ հնար* յումեքէ *բժշկիլ (Ղուկ., Ը): Վարէր* ի դիւէն *(Ն.տ.): Գրեալք են* յեսայեայ *(Բ, Մնաց., ԻԶ):* Ի բերանոյ *քումմէ դատեցայց (Ղուկ. ԺԹ): Զջուրսն պղտորեալ* ի կեղակաց *ձերոց ըմպէին (Եզեկ., ԼԴ): Երկիրն լքցի* ի նոցանէ *(Ղևտ., ԻԶ): Խաբեցաւ* ի մոգուց *(Մատթ., Բ): Խմորեալք եփեցին* յառաջնոց *(Ղևտ., ԻԳ): Վէմք խորտակեցան* ի նմանէ *(Նաւում, Ա):* Ի Տեառնէ *խրատիմք (Ա, Կորն., ԺԱ):* Ի նմանէ *կերակրէր ամենայն մարմին (Դան., Դ): Ես լքայ* յամենեցունց *(Յովբ, Զ):*

*Ներգործող խնդրի բացառականը կարող է դրվել նաև ոչ կրավորական բայերի մոտ:* Օրինակ՝ *Մեռանի և Արայ ի պատերազմին* ի մանկանցն *Շամիրամայ (Մխ, 1, ԺԵ):*

**Պասսիվ ներգործության բացառական.**— *Այսպիսի լրացում ստանում են զգացական և այլ իմաստի բազմաթիվ բայեր, ինչպես՝* ամաչել, դղրդել, դողալ, զանգիտել, զարհուրել, զգուշանալ, զզջալ, խաղալ,

խիթալ, խնդալ, կործել, ձանձրանալ, յագենալ, սարտնուլ և այլն։

Օրինակներ՝ *Ոչ զանգիտեցին* ի հրամանէ *թագաւորին (Եբր., ԺԱ)։ Յիւրեանց* բանիցն *խսկ ո՞չ ամաչիցեն (Եզն., 3, Զ)։ Հնչեաց երկիրն ամենայն* ի բարբառոյ *զօրացն բազմութեան (ՂՓՊՀ, ԼԲ)։ Յագիցիք* ի ստեանց *(Եսայի, ԿԶ)։* Ի ձայնէ *կործանման ... դղրդեցան (Եզեկ., ԼԱ)։* Ի ճմանէ *դողացին ... բնակիչք (Սաղ., ԼԲ)։ Դողան* ի բանից *իմոց* (Եսայի, ԿԶ)։ *Երկեաւ ժողովուրդն* ի Տեառնէ *(Ելք, ԺԴ)։ Ամաչեմք և զարհուրիմք* ի քէն *(Բ, Եզր., Թ)։ Զգուշացայց* յանօրէնութենէ *(Սաղ., ԺԷ)։* Ի սաստէ *քումմէ կորիցեն (Ն. տ., ՀԹ)։ Ոչ զզջանայ* ի չարեաց *(Երեմ., Ը)։ Գետք խաղասցին* յարենէ *նոցա (Յուդիթ, Բ)։ Երկիւղն* յորմէ *խիթային եկն ի վերայ իմ (Յովբ, Գ)։ Խնդասցէ սիրտ նոցա իբրև* ի գինւոյ *(Զաքար., Ժ)։ Սարտեաւ* ի ճմանէ *հարճն իւր (Դատ., ԺԹ)։* Ի չարէ *նա ոչ ձանձրացաւ (Սաղ., ԼԵ)։*

Սահմանափակման բացառական.— *Սա դրվում է հիմնականումածականական ծագմամբ բայերի մոտ, ինչպես՝* զլանալ, թուլանալ, ժուժկալել, ծուլանալ, կաղալ, կամակորել, ուխտաւորել, վատել *և այլն։*

Օրինակներ՝ *Զորդի իւր խրատիցէ ... չծուլալ* յուսմանէն *(Եզն., 1, Ա)։ Եդ կրօնս Պիւթագորաս՝ պշնչաւորաց միս չճաշակել, և* ի գինւոյ *ժուժկալել (Ն. տ., 4, Դ)։ Մեք անդստին խսկ յաւազանէն ուխտաւորիմք* ի մսակերութենէ *և* յամուսնութենէ *(Ն. տ., ԺԴ)։* Յողորմութենէ *աղքատի մի զլասցիս (Եկղ., Դ)։ Սուրբն Մարկեղաս վատեալ յաչացն (ՅՄՊՏ, 252բ)։ Կաղայր երթայր* ի զբսանէ *անտի (Ծնն., ԼԲ)։ Թուլանայր* յերկրէ *(Ն. տ., Ը)։ Որ կամակորէ* յուսմանէ *(Առակ., ԺԷ)։ Որ* յանձնէ *իւրմէ խօսի (Յովհ., Է)։*

*Որոշ բայերի մոտ բացառականը կարող է մեկնաբանվել և՛ սահմանափակման, և՛ տեղի իմաստներով։*

Օրինակներ՝ Յ*ամենայն* կողմանց *թշուառացեալ (Բ, Մակ., Ը)։ Կրտսեցին զերկիրն* յանապատէն *(Թիւք, ԺԳ)։ Ծածկեաց զնոսա Յակոբ* ի ներքոյ *(Ծնն., ԼԵ)։ Որ բացի ընդ ծով* ի հարաւոյ *(Յեսու, ԺԸ)։ Եհար զպատերազմ* ի ծագաց *(Սաղ., ԽԵ)։ Զոր գրեցեր* ի բերանոյ *իմոյ (Երեմ., ԼԶ)։*

*Երբեմն բացառականը կարող է մեկնաբանվել և՛ սահմանափակման, և՛ վերաբերության իմաստներով։* Օրինակ՝ *Ոչ ինչ հոգայ* ի տանէ կողմանէ *(Առակ., ԼԱ)։*

*Բացառականը կարող է մեկնաբանվել և՛ սահմանափակման, և՛*

*սաստկացման իմաստներով։ Օրինակ՝ նա* **ինքն զայս յինքենէ** *գոր-ծեաց (Եսթեր, ԺԶ)։*

## Բայի լրացումները պարագայական բացառականով

**Տեղի բացառական.**— *Առաջին հերթին այս բացառականը լրա-ցում է լինում շարժման բայերի մոտ՝ ցույց տալով գործողության սկզբնակետը։*

**Օրինակներ՝** *Մեկնեցաւ* **յաշխարհէ** *(Բ, Մակ., Է)։ Առաքեաց զնո-սա Մովսէս* **յանապատէն** *(Թիւք, ԺԳ)։* **Յեզերաց** *մահուս դարձո զիս ի կեանս (ԳՆՄՈ, ԽԲ)։ Եկն Յիսուս* **ի Նազարեթէ** *(Մարկ., Ա)։ Ել գնաց* **ի տաճարէ** *անտի (Յովհ., Ը)։ Դարձուցին զնա* **ի ջրհորոյ** *(Բ, Թագ., Գ)։ Դիմեցին* **ի լեռնէն** *Գաղաադու (Դատ., Է)։ Ելանէի* **յեգիպտոսէ** *(Ելք, ԺԲ)։ Ժողովեցան առ նա յամենայն* **սահմանացն** *(Բ, Մնաց., ԺԱ)։ Էջ Մովսէս* **ի լեռնէ** *անտի (Ելք, ԺԹ)։ Խաղացին գնացին* **ի քա-ղաքէ** *(Գ, Մակ., Է)։ Կորեան* **ի միջոյ** *ժողովրդեանն (Թիւք, ԺԶ)։ Հա-լածեցին զնոսա* **ի դրանէն** *(Յեսու, Է)։ Անցցեն* **ի թիկանց** *Բեթարաբայ ի հիւսիսոյ (Ն. տ., ԺԸ)։ Ծուխ ել* **ի հիւսիսոյ** *(Եսայի, ԺԴ)։ Գունդ գայ* **ի հիւսիսոյ** *(Երեմ., Ծ)։ Վազեաց ձուկն մի* **ի գետոյ** *անտի (Տովբ., Զ)։ Զոր եբեր Նուբուգոդոնոսոր* **ի տանէ** *(Բ, Եզր., Զ)։*

*Հաճախ գործողության սկզբնակետը և վախճանակետը արտա-հայտվում են* **բացառական+ի+հայցական** *կառույցով։ Այս դեպքում սովորաբար բացառականը լինում է առանց ի նախդրի։*

**Օրինակներ՝** *Զգեսցես զվարագոյրն* **սիւնէ ի սիւն** *(Ելք, ԻԶ)։ Դար-ձարուք* **դրանէ ի դուռն** *(Ն. տ., ԼԲ)։ Աղաչէին ինձ գնալ երթալ ի բաց ...յուշ արարեալ զտէրունական հրամանն, հալածիլ* **քաղաքէ ի քա-ղաք** *(ՅԴՊՀ, 334)։ Գնացին նոքա* **ազգէ յազգ** *և ի թագաւորութենէ ի ժողովուրդ յայլ (Ա, Մնաց., ԺԶ)։*

*Երբեմն, սակայն, նման դեպքերում բացառականը ի նախդրով է լինում։ Օրինակ՝ Հալածեալ* **ի քաղաքէ ի քաղաք**, *ահա հասեալ կամ առ դրունս հզօրագունիցդ և վեհագունից ինքնակալ թագաւորացդ (ՅԴՊՀ, 279)։*

*Այս դեպքում տեղի իմաստը խառն է լինում սահմանափակ-ման և չափի իմաստների հետ։ Օրինակ՝ Տիրեսցէ նա* **ի ծովէ մինչև ի ծով** *(Սաղ., ՀԱ)։*

*Բացառականը երկրորդ դեպքում ցույց է տալիս այն տեղը, որի վրայից անցնում է գործողությունը։ Օրինակ՝ Անցանեմք մեք* **ի Բեթ-ղեհեմէ** *(Դատ., ԺԹ)։*

Երրորդ դեպքում տեղի բացառականը դառնում է այնպիսի բայերի լրացում, որոնք սովորաբար կապակցվում են ելման բացառականի հետ։ Սակայն այստեղ բացառականը տեղի պարագայական իմաստ ունի։ Այսպիսի լրացում ստանում են **զերծնուլ (զերծուցանել), ընկենուլ, դնել, թաւալել, խախտել, հանել, հեղուլ, ձգել** և այլ բայեր։

Օրինակներ՝ Հան զիս **ի բանտէս** (ԳՆՄՌ, ՋԳ)։ Եդից զսահմանս քո **ի Կարմիր ծովէ** (Ելք, ԻԳ)։ Ել **ի տապանէ** այտի (Ծնն., Ը)։ Գողացան զիս **յերկրէն** (Ն. տ., Խ)։ Ջերծուցի զքեզ **ի հնոցէ** (Եսայի, ԽԸ)։ Ընկէց զմարմին նորա **ի գահոյից** (Յուդիթ, ԺԳ)։ Ընկեսցուք **ի մէնջ** զլուծ նորա (Սաղ., Բ)։ Թաւալեցուցից զքեզ **ի վիմացդ** (Երեմ., ԾԱ)։ Խախտեցար **ի տեղւոջէ** քումմէ (Բ, Թագ., ԺԵ)։ Հեղաւ պարարտութիւն **ի սեղանոյ** (Գ, Թագ., ԺԳ)։ Ջգեցան **ի fաղաfէ** անտի (Դատ., Ի)։ Առին **ի սեղանոյ** անտի զհուրն (Բ, Մակ., Ա)։

Տեղի բացառականը դրվում է նաև դադարման բայերի մոտ։ Այստեղ գործ ունենք տարբեր իմաստային երանգների հետ։ Մի դեպքում բացառականը կարող է դրվել բայի մոտ՝ ցույց տալով այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը (տեղի-սկզբնակետային բացառական)։ Այսպիսի լրացում ստանում են **գոչել, դիտել, երևիլ, ընկենուլ, կոչել, լսել, հայել, տեղալ** և այլ բայեր։

Օրինակներ՝ Եհար զնոսա առիւծ **յանտառէ** (Երեմ., Ե)։ **Ի գլխոյ** լերանց գոչեսցեն (Եսայի, ԽԲ)։ Դիտէր քոյրն նորա **ի հեռաստանէ** (Ելք, Բ)։ Տեղացից ձեզ հաց **յերկնից** (Ն.տ., ԺԶ)։ Գունդ մի երևեցաւ **ի լեռնէ** (Ա, Մակ., Դ)։ Քարինս **ի կողմանէ** ընկենոյր (Բ, Թագ., ԺԶ)։ Ես լուայց **յերկնից** (Բ, Մնաց., Է)։ Կոչեցէք զՍամփսոն **ի տանէ** բանտին (Դատ., ԺԶ)։ Հայեաց **ի սրբոյ բնակութենէ** քումմէ (Բ, Օրէնք, ԻԶ)։ Բողոքէ առ իս **յերկրէ** (Ծնն., Դ)։ **Ի մոտոյ** հեղից զբարկութիւն իմ (Եզեկ., Է)։

Երկրորդ դեպքում բացառականը ունի արդի ներգոյականի իմաստ։
Օրինակներ՝ **Ի ծագաց** ելից իւրոց ըմբռնեցան (Երեմ., ԾԱ)։ Տարեալ բնակեցուցանէ **ի թիկանց** Մասեաց (Մխ, 2, ԽԸ)։ Արար խաղաղութիւն յամենայն **կողմանց** (Սեբ., Ա)։ **Յամենայն կողմանց** խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա (Եղ., 1)։ Հատանեմք փայտ **ի Լիբանանէ** (Բ, Մնաց., Բ)։ Նուազեաց արծաթ **յերկրէն** (Ծնն., ԽԷ)։

Երբեմն բացառականը կարող է մեկնաբանվել և՛ տեղի, և՛ մասնական-խնդրային իմաստներով։ Օրինակ՝ Արբին **ի նմանէ** ամենեքեան (Մարկ., ԺԴ)։

Կարող են համատեղվել տեղի, անջատման և ներգործող խնդրի իմաստները։ Օրինակ՝ Բնաջինջ լինել այսօր **յԻսրայելէ** (Դատ., ԻԱ)։

Կարող են համատեղվել նաև տեղի ու ժամանակի իմաստները։

**Օրինակներ՝** խաբեցան **յարգանդէ** (Սաղ., ԾԷ)։ Ի քեզ հաստատեցայ ես **յարգանդէ** (Ն. տ., Հ)։

**Ժամանակի բացառական.—** Այսպիսի լրացում ստանում են բազմաթիվ բայեր։ Ընդ որում ժամանակի իմաստը սերտորեն մոտենում է չափի, անջատման, ելման-սկզբնակետի և այլ իմաստներին։

**Օրինակներ՝** Ի բազում **ամաց** լուեալ զգեղեցկութենէ նորա՝ ցանկայր հասանել (Մխ, 1, ԺԵ)։ Փրկեցաւ կինն **ի ժամէն** յայնմանէ (Մատթ., Թ)։ Բժշկեցաւ մանուկն **ի ժամէն** յայնմանէ (Ն. տ., ԺԷ)։ Խաւարեսցի յերկրի լոյս **ի տուէ** (Ամովս., Ը)։ Ամպ ծածկէր զնա **ի տուէ** (Թիւք, Թ)։ **Ի մանկութենէ** քումմէ խնդրես զխրատ (Սիրաք, Զ)։ **Ի սկզբանէ** հաստատեաց զխս (Ն.տ., ԻԴ)։ **Յառաջին աշտարակէն** ցրումն լեզուացն եղև (Ագ., 631)։ **Յերէ** յայնմանէ առակեսցես (Եզեկ., ԻԴ)։

Երբեմն ժամանակի սկզբնակետն ու ավարտը դրսևորվում են **բացառական+ի+տրական** կառույցով։

**Օրինակներ՝** խոկասցես ի դա **ի տուէ և ի գիշերի** (Յեսու, Ա)։ Յօրէնս Տեառն խորհեսցիս **ի տուէ և ի գիշերի** (Ագ., 890)։ **Յայգուէ և երեկոյն** այնպէս շատ փորձ փորձեաց զնա (Բուզ., 4, ԾԴ)։ Աղօթէին հանապազ ի **տուէ և ի գիշերի** (ՂՓՊՀ, ԼԷ)։

Ավելի հաճախ ժամանակի սկիզբն ու ավարտը արտահայտվում են **բացառական+մինչև+ի** կամ **ց+հայցական** կառույցով։

**Օրինակներ՝** Պահէին **յառաւօտէ մինչև յերեկոյ** (Ա, Մակ., Ժ)։ Եկն եկաց **յառաւօտէ մինչև ցայժմ** (Հռութ, Բ)։

Այս դեպքում **մինչև** նախադրությունը կարող է նաև չգործածվել։ Օրինակ՝ **Յառաւօտէ յառաւօտ** անցցէ (Եսայի, ԻԸ)։

**Պատճառի բացառական.—** Այսպիսի լրացում ստանում են բազմապիսի բայեր, ինչպես՝ **բանալ, բառնալ, բեկանել, գլորել, թափրանալ, խռովել, ծագել, ծամել, հեղձնուլ, մտանել, պաղանալ** և այլն։

**Օրինակներ՝** Ծամէին զլեզուս իւրեանց **յախտէ** ցաւոցն (Յայտն., ԺԶ)։ **Յանիծից** մտին ցաւք յաշխարհ (Եղն., 1, Ա)։ **Ի** դառնահոտ **փըշմանէ** հիւսիսոյ պաղացեալ ձուլեալ վտակն՝ ոչ ուստեք արբուցումն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ (Մխ, 2, ԼԹ)։ Այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ **յանուսումնութենէ** (Եղ., 2)։ Հեղձնուն **ի նախանձուէ** (ՂՓԹ)։ Բեկանի **ի տրտմութենէ** անձն (Առակ., ԻԷ)։ **Ի չուառութենէ** բողոք բարձից (Երեմ., Ի)։ Գլորեցաւ ... **յանէ**

թագաւորին (Եսթեր, ԺԵ)։ **Ի խնդալոյն** ոչ եբաց զդուռն (Գործ., ԺԲ)։ Խռովեցաւ **ի սրտմտութենէ** անձն (Սաղմ., Ձ)։ **Ի սադրելոյ** աղօթից նորա փրկութիւն մեծ ծագեաց աշխարհին մերում (Ղև., Պատմ., 97)։ Թափրացաք և ունայնացաք ի ստացուածոց և ի բոլոր պարենի ռոճկաց և ի **չգոյե** կերակրոց (ՀԴՊՀ, 261)։

Հայտնի է, որ պատճառը սերտորեն կապված է պասիվ ներգործության իմաստի հետ։ Ուստի և մի շարք դեպքերում լրացումը կարելի է մեկնաբանել այդ երկու իմաստներով էլ։

**Օրինակներ՝** Զահի հարան **յերեսաց** արքայի (Գ, Թագ., Գ)։ Խռովեցան լերինք **ի զօրութենէ** նորա (Սաղ., ԽԵ)։ Խորք խռովեցան **ի ձայնէ** ջուրց (Ն.տ., ՀԶ)։

**Հիմունքի բացառական.**— Սա քիչ հանդիպող իմաստ է։ Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբի բայեր։ Լրացում դառնում են մեծ մասամբ վերացական գոյականները։

**Օրինակներ՝ Ի հրամանէ** Աստուծոյ սատակեցան զօրք նորա (ԹԱՊՏԱ, 1, Դ)։ **Ի խորհրդէ** նորա ելեալ բազմութիւն հիւսիսային ազգացն յաշխարհս մեր (ՄՏՏՊ, 2, Ա)։ Գրեաց թագաւորն **յիշխանութենէ** (Եսթեր, Ժ)։ **Ի պտղոյ** անտի ծառն ճանաչի (Մատթ., ԺԲ)։ **Ի հրամանէ** Տեառն կորիցեն (Յովբ, Դ)։

Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել և՛ հիմունքի, և՛ ձևի իմաստներով։ Օրինակ՝ Որոյ ի ծերութեան վատեալ աչացն՝ **յընտրութենէ** ամենեցուն տայ զառաջնորդութիւն հօրն Բարսղի (ՄՏՏՊ, 3, Է)։

**Չափի բացառական.**— Գրաբարում հանդիպում են չափի տարբեր դրսևորումներ (տարածական, ծավալային, կշռային, ժամանակային և այլն)։ Լրացումը սովորաբար չափի միավոր է՝ թվական կամ այլ լրացումով հանդերձ։ Չափի բացառականով լրացում ստանում են տարբեր իմաստային խմբի պատկանող բայեր։

**Օրինակներ՝** Արասցես սեղան յանփուտ փայտից **յերկուց կանգնոց** զերկայնութիւն նորա (Ելք, ԻԵ)։ Յիշատակ նոցա մի՛ պակասեսցէ **ազգէ մինչև յազգ** (Եսթեր, Թ)։

Երբեմն լրացումը կարող է համատեղել չափի (ժամանակային) և ժամանակի իմաստները։

**Օրինակներ՝** Եւ **ի վեց ժամէ** աւուրն խաւար եղև ի վերայ ամենայն երկրի **մինչև ցինն ժամն** (Մատթ., ԻԷ)։ Զոր ոչ երբեք տեսին հարք ձեր և ոչ հարք նոցա, յորմէ **օրէ** եղեն յերկրի **մինչև ցայսօր** (Ելք, Ժ)։ **Յօրէ** յորմէ հանի զժողովուրդ իմ զԻսրայէլ յԵգիպտոսէ՝ ոչ ընտրեցի ի քաղաքի միում ուրեք գաւազանաց Իսրայէլի շինել տուն (Գ,

*Թագ., Ը)։ Երթայր ամ յամէ (Ա, Թագ., է)։ Ի կէս աւուրց իւրոց թողցէ (Երեմ., ԺԷ)։*

**Սաստկացման բացառական.**— *Այս իմաստը բնորոշ է միայն գրաբարին։ Բացառականն այս դեպքում գործածվում է ենթակային զուգահեռ՝ սաստկացնելով նրա իմաստը։*

**Օրինակներ՝** *Դուք ձեզէն տեսէք զամենայն (Յեսու., ԻԳ)։* **Յինէն** *անսամ ձեզ (Եղ., 7)։*

**Ձևի բացառական.**— *Այս իմաստը առաջանում է ժամանակի, տեղի, սահմանափակման իմաստների հիման վրա։ Սա սովորաբար քիչ է արտահայտվում սոսկ բացառականով։ Նման դեպքերում ձևի իմաստը դրսևորվում է* **բացառական+ի+հայցական** *կառույցով։*

**Օրինակներ՝** *Թագաւորութիւն* **ազգէ յազգ** *փոխի (Սիրաք, Ժ)։ Կարգեցին* **ամ յամէ** *զօրն տօն տարեկան (Ա, Մակ., է)։ Ծանիջիք յամենայն* **սրտէ** *ձերմէ (Յեսու, ԻԳ)։* **Ժամէ ի ժամ** *կերիջիք (Եզեկ., Դ)։*

*Երբեմն էլ բացառականը համատեղում է ձևի և միջոցի իմաստներ։*

**Օրինակներ՝** *Եկին նոքա գրեալք* **յանուանէ** *(Ա, Մնաց., Դ)։ Զորս կոչեցին* **յանուանէ** *(Ն. տ., Զ)։ Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչեցին ի դուռն արքունի (Եղ., 2)։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ (Ն. տ., 7)։*

## Դ. Բայի լրացումները գործիական հոլովով

*Գործիական հոլովով արտահայտվում են խնդրային և պարագայական բազմաթիվ իմաստներ։ Անշուշտ, ժամանակակից հայերենում գործիականն իմաստային ավելի լայն ընդգրկում ունի, քանի որ համապատասխանում է գրաբարի ոչ միայն գործիականին, այլև* **զ+գործիական** *կառույցին։*

*Նկատելի է, որ գործիականն ավելի շատ պարագայական իմաստներ է արտահայտում։ Ինչպես ժամանակակից հայերենում է, գրաբարում ևս շատ են այն դեպքերը, երբ գործիականը համատեղում է մեկից ավելի իմաստներ։*

**Բայի լրացումները խնդրային գործիականով**

*Գործիականի խնդրային իմաստներն են միջոցի, նյութի, ներգործող խնդրի, սահմանափակման և ընդհանուր խնդրի։*

**Միջոցի գործիական.**— *Սա գործիականի ամենից շատ տարածված իմաստն է։ Այսպիսի լրացում ստանում են բազմաթիվ բայեր։*

լրացումն արտահայտվում է թե՛ թանձրացական, թե՛ վերացական գոյականներով։

Օրինակներ՝ Աշխատեցաք **ձեռօք** մերովք (Ա, Կորն., Դ)։ **Ոտիւք** ևեթ անցից (Բ, Օրէնք, Բ)։ Խածանեն **ատամամբք** իւրեանց (Միքիա, Զ)։ Որ հպարտացեալ էին **արծաթով** (Սոփո., Ա)։ **Երդմամբք** հաստատեմք այսօր (Նէեմի, Ժ)։ **Տիգաւ** խոցեաց զկողս նորա (Յովհ., ԺԹ)։ **Վանդակաւ** կախեցայ (Բ, Կորն., ԺԱ)։ Կնքեցաւ **մատանեաւ** նորա (Եսթեր, Ը)։ Ո՛չ **հացիւ** միայն կեցցէ մարդ (Մատթ., Դ)։ Երգէին **տաւղօք** (Ա, Մնաց., ԻԵ)։ **Ոռոգայթիւ** ըմբռնեցին (Սիրաք, ԻԷ)։ Ընկեցին զնա անդ **սրով** (Բ, Մնաց., ԼԲ)։ **Մահուն** իւրով խափանիցէ զայն (Եբր., Բ)։ Կախեաց զնոսա **շուանաւ** (Յեսու, Բ)։ **Քև** զթշնամիս մեր հարցուք (Սաղ., ԽԳ)։ Զաշտարակս նորա հրկիզեցին **հրով** (Ա, Եզր., Ա)։

Միջոցի իմաստը շփման եզրեր ունի գործիականի բազմաթիվ այլ իմաստների հետ (ձևի, միասնության, համապատասխանության, ներգործող խնդրի, հիմունքի և այլն)։

Այսպես, միջոցի և ձևի իմաստներով կարելի է մեկնաբանել գործիականը հետևյալ նախադասություններում։

Կործանեցին զիս **հարուածովք** (Յովբ., ԺԶ)։ **Բարկութեամբ** ապականէ զերկիր (Ն. տ., ԼԹ)։ **Արտասուօք** և ահիւ նեղեալ եմ (Սաղ., Զ)։ Որ ընտրեալ են **արծաթով** (Ն. տ., ԿԷ)։ Եգիտ զնա **իմաստութեամբ** իւրով (Բարուք, Գ)։ Խօսեցաւ ընդ նմա **դատաստանօք** (Դ, Թագ., ԻԵ)։ **Իմաստութեամբ** շինի տուն և **հանճարով** կանգնի (Առակ., ԻԴ)։ Արդար **դատաստանաւ** արարեր (Դանի., Գ)։ Ամենեքին **արեամբ** դատին (Միքիա, Է)։ **Բերանով** խոստովանիք ի փրկութիւն (Հռոմ., Ժ)։ Խրատեաց զնա **գանիւք** (Գ, Թագ., ԺԲ)։ Ծախեցի զբանակս ձեր **հրով** (Ամովս., Դ)։ **Գրով** հաստատեմք (Նէեմի, Թ)։ Եհար սատակեաց զնոսա մեծաւ **պատերազմաւ** (Ա, Մակ., Ը)։ **Դիւրութեամբք** և **հմայիւք** և **քաղէութեամբ** վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմարտութենէ (Եզն., 2, ԻԳ)։ Այլ ազգ ոչ ելանէ **իւիք**՝ եթէ ոչ **պահօք** և **աղօթիւք** (Ն. տ., 1, ԻԱ)։

Միջոցի և ներգործող խնդրի իմաստներով է մեկնաբանվում լրացումը հետևյալ նախադասություններում։

Ո՞վ փորձեցաւ **նովաւ** (Սիրաք, ԼԴ)։ Քաջալերեցաւ ժողովուրդն **բանիւքն** (Բ, Մնաց., ԼԲ)։ **Նովաւ** գովեսցին (Սաղ., ԿԳ)։ Ոյք վարէին **արտասուօք** (Ն. տ., ՃԻԵ)։ **Զօրութեամբն** Աստուծոյ պահեալ էիք (Ա,

Պետ., Ա)։ Ըմբռնի **բանիւ** բերանոյ իւրոյ (Առակ., Զ)։ Զօրացարուք **տերամբ** (Եփես., Զ)։ **Նովաւ** լուսաւորեսցի (Բ, Եզր., Բ)։

Միջոցի և միասնության իմաստներով կարելի է մեկնաբանել գործիականը հետևյալ նախադասություններում։

Գոչեսջիք **աղօթիւք** առ Աստուած (Տովբ, Զ)։ **Հացիւ** մատուցէ զպատարագն (Ղևտ., Է)։ **Քև** ընթացայց մենազինեալ, և **Աստուծով** իմով անցից ընդ պարիսպ (Բ, Թագ., ԻԲ)։ **Սեամբ** ամպոյ առաջնորդեցեր նոցա (Նէեմի, Թ)։

Միջոցի և սահմանափակման իմաստներով կարելի է մեկնաբանել գործիականը հետևյալ նախադասություններում։

Այլ առաւելուլ **բազմօք** (Բ, Կորն., Թ)։ Զօրացուցէ զնա **իրաւամբք** (Եսայի, Թ)։

Միջոցի և համապատասխանության իմաստներով է մեկնաբանվում գործիականը հետևյալ օրինակում. Հացիւ և բանջարեղէն մրգօք անցուցանէր զաւուրսն զայնոսիկ զօրինաւորեալս **կանոնիւ** (ՍՏՏՊ, 3, ԺԷ)։

Միջոցի և հիմունքի իմաստներով է մեկնաբանվում գործիականը հետևյալ նախադասության մեջ. Սակայն **աճելովն** երեւին թէ գնայունք են (Եզն., 2, ԺԴ)։

Հետևյալ օրինակում գործիականը կարելի է մեկնաբանել միջոցի և պասիվ ներգործության իմաստներով։ Զգիշերն ամենայն **քնով** յագեցաւ Եփրեմ (Ովսէ, Է)։

Միջոցի, ձևի և վիճակի իմաստներն են արտահայտված հետևյալ նախադասության մեջ. **Երագով** խօսեցայց ընդ նմա (Թիւք, ԺԲ)։

Հետևյալ օրինակներում գործիականը համատեղում է միջոցի, ձևի և համապատասխանության իմաստները. **Չափով** կշռեաց զնա (Եսայի, ԽԴ)։ Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ (Մատթ., Է)։

Միջոցի, ձևի, միասնության իմաստներով է մեկնաբանվում գործիականը հետևյալ նախադասության մեջ. էջ Տէր **սեամբ** ամպոյ (Բ. Օրէնք, ԼԱ)։

Միջոցի, ձևի, պատճառի իմաստներ ունի գործիականը հետևյալ օրինակում. **Նախանձու** բանսարկուին եմուտ մահ յաշխարհ (Եզն., 1, Ա)։

Միջոցի, ներգործող խնդրի և սահմանափակման իմաստներով է մեկնաբանվում գործիականը հետևյալ օրինակում. Զօրացիր **շնորհօքն** (Բ, Տիմոթ., Բ)։

Միջոցի իմաստը կարող է համատեղվել նաև փոխարինության իմաստին։

Օրինակներ՝ Ստանալ արծաթով զաղքատս (Ամովս., Ը)։ Գնեցին այնու զագարակն բրտի (Մատթ., ԻԷ)։

Նյութի գործիական.— Սա միջոցից քիչ է տարբերվում։ Այս դեպքում լրացումը ցույց է տալիս գործողության կատարման նյութը։ Մեծ մասամբ լրացումն արտահայտվում է թանձրացական գոյականներով։

Օրինակներ՝ Լից զեղջիւր քո իւղով (Ա, Թագ., ԺԶ)։ Լցին զնոսա հողով (Ծնն., ԻԶ)։ Հրամայէ նախ զամբարտակ զետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալ (Մխ, 1, ԺԶ)։ Աշխարհս մեր ծովացաւ արտասուօք և լցաւ բազում ողբովք (ՅԴՊՀ, 98)։ Այնու կերակրեալ լինէր (Ագ., 124)։

Մի շարք դեպքերում լրացումը կարող է մեկնաբանվել նյութի—միջոցի խառն իմաստներով։

Օրինակներ՝ Զարդարեաց զտունն ակամբք (Բ, Մնաց., Գ)։ Արտասուօք իւրովք եթաց զոտս (Ղուկ., Է)։ Զտուն իմ կինամոմով խնկեցի (Առակ., Է)։ Ծածկեսցէ հողով (Ղևտ., ԺԷ)։ Նաւթիւ ծեփեսցես զնա (Ծնն., Զ)։

Ներգործող խնդրի գործիական.— Այս իմաստով գործիականը լրացում է դառնում կրավորական բայերի համար։

Օրինակներ՝ Այսով պոռնկութեան մոլորեցան (Ովսէ, Դ)։ Քև փրկեցայց ի փորձութենէ (Սաղ., ԺԷ)։ Այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ (Յովհ., Գ)։ Որ ի ձեզ մեօք քարոզեցաւ (Բ, Կորն., Ա)։ Աւետարանեցաւ սրբովք մարգարէիւք և առաքելովք (Ագ., 316)։ Հոգին առաքեցաւ Հարբն և Որդւովն (Ն. տ., 665)։ Քանզի ոչ կամաւ՝ որպէս ասենն՝ յօժարեցաւ ի չարն, այլ բնութեամբ բռնադատեցաւ (Եզն., 1, ԺԴ)։

Սահմանափակման գործիական.— Այսպիսի լրացում ստանում են ինչպես ածականական ծագման, այնպես էլ ուրիշ բայեր։

Օրինակներ՝ Արք դառնացեալ ոգւով (Դատ., ԺԸ)։ Զօրացան զինու, զօրօք (Ա, Մակ., Զ)։ Մարմնով վախճանիք (Գաղ., Գ)։ Մտօք կատարեալք լինիջիք (Ա, Կորն., ԺԴ)։ Փայլեսցես տեսլեամբ (Եզեկ., ԻԱ)։ Զօրացաւ հաւատովք (Հռոմ., Դ)։ Ա՛յլ հնացեալ աւուրբք չարութեան (Դան., ԺԳ)։ Միշտ մոլորեալ են սրտիւ (Եբր., Դ)։ Թէպէտև մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով (Ա, Պետ., Գ)։ Կապէ զնա Արշակ՝ արքայ ոտիւք և ձեռօք (Սեբ., Ա)։ Նոքա յիմարեալ անմիտ մտօք ետուն ցնոսա զզէնս իւրեանց (ՍՏՏՊ, 3, ԺԳ)։ Անդ էր ապա

չարբենալ գինւով, այլ առաւելուլ հոգւով (Աք., 847)։ Անցին թուով ի մանկանցն (Բ, Թագ., Բ)։

Սահմանափակման իմաստը կարող է համատեղվել ձևի իմաստին։ Օրինակ՝ Հպարտացան սրտիւք իւրեանց (Ովսէ, ԺԳ)։

**Ընդհանուր խնդրի գործիական.**— Գործիականի այս իմաստը յուրահատուկ է։ Այն արդի հայերենում արտահայտվում է հայցականով կամ տրականով։ Բանն այն է, որ մի շարք բայեր գրաբարում գործիականով էին ստանում այն խնդիրը, որի իմաստը բնորոշ չէ գործիականին, այլ նշված հոլովներին։ Ուստի այդ իմաստն անվանում ենք ընդհանուր խնդրային։

Այսպիսի լրացում ստանում են սահմանափակ թվով բայեր, այն է՝ արհամարհել, դատել, կարօտել, զգուշանալ, վարժել, համարել, քաղցնուլ և այլն։

Օրինակներ՝ Անուամբ քով արհամարհեսցուք (Սաղ., ԽԳ)։ Դատեցայց զնա արեամբ և մահու, և հեղեղօք անձրևաց և վիմօք կարկտի (Եզեկ., ԼԸ)։ Մի՛ ձանձրանար կապանօք նորա (Սիրաք, Զ)։ Հացիւ կարօտիցէ (Ն. տ., Ժ)։ Հացիւ ոչ քաղցիցուք (Երեմ., ԽԲ)։ Հաւանին տեսլեամբն (Իմաս., ԺԳ)։ Այսպէս բազում աշխատութեամբ տարեալ՝ վասն համաշխարհին բարեաց ինչ օճան գտանելոյ (Աք., 830)։ Ինքեանք զգուշացեալ սահմանօք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ (Բուզ., 4, ԻԵ)։ Հանապազ վարժէր զանձն իւր դիւօք (Ն. տ., 5, ԻԲ)։ Զթիւ Նահապետացն տասամբք համարին թուով (ԹԱՊՏԱ, 1, Ա)։

### Բայի լրացումները պարագայական գործիականով

Պարագայական իմաստները որոշակիորեն տարբեր են խնդրայիններից։ Միասնության գործիականի չորս ենթատեսակից երկուսը խնդրային, երկուսը պարագայական են (ինչպես ասվել է նույն իմաստի մասին արդի հայերենի բառակապակցությունների քննության կապակցությամբ)[8]։ Այդ չի նշանակում, թե խնդրային և պարագայական իմաստների միջև խստիվ անջրպետ կա։ Շատ դեպքերում այդ երկու կարգի իմաստները համատեղվում են։ Գործիական հոլովն ունի ձևի, միջոցի, համապատասխանության, միասնության (առարկայական և խնդրային տարբերակներով), տեղի, ժամանակի, պատճառի և հիմունքի, չափի, սաստկացման պարագայական իմաստներ։

---

8 Հմմտ. մեր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», էջ 350—359։

Ձևի գործիական.— Ինչպես ասվել է արդի հայերենի բառակապակցությունների կապակցությամբ[9], ձևի պարագա տերմինը տարբերակում ենք ձևի գործիականից, որը հոլովական նեղ իմաստ է։ Այսպիսի լրացում ստանում են բազմապիսի բայեր։ Լրացումն արտահայտվում է առաջին հերթին վերացական գոյականներով։

Օրինակներ՝ Դատի զաշխարհս արդարութեամբ (Սաղ., ՂԷ)։ Աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհիս (Տիտոս, Բ)։ Առաքէի զքեզ ուրախութեամբ (Ծնն., ԼԱ)։ Առ զքաղաքն բռնութեամբ (Ա, Մակ., Զ)։ Երթային միամտութեամբ (Բ, Թագ., ԺԵ)։ Խորհուրդ խորհէր նենգութեամբ (Ա, Մակ., ԺԶ)։ Ոչ գիտութեամբ հարկանիցէ զնա (Թիւք, ԼԵ)։ Գոչէ ուրախութեամբ (Եսայի, ԾԲ)։ Գործէին զօրութեամբ զգործս (Ա, Մնաց., ԻԶ)։ Անզգամն թշնամանօք գործէ (Առակ., ԺԳ)։ Ջուր նեղութեամբ արբցէ (Բ, Մնաց., ԺԸ)։ Ատելութեամբ ընդունէին զօտարս (Իմաս., ԺԹ)։ Անսալ միմեանց սիրով (Եփես., Դ)։ Խաղասցուք ցանկութեամբ (Առակ., Է)։ Ձեռն ի բերան կռուով ձգեսցես (Ն. տ., Լ)։

Երկրորդ դեպքում ձևի իմաստն արտահայտվում է լրացում+գործիական կառույցով։

Օրինակներ՝ Աղաղակեաց ձայնիւ մեծաւ (Յայտն., Է)։ Ուղիղ ճանապարհաւ իմացարուք զխրատ (Առակ., Թ)։ Խռովեսցին անճնարին երկիւղիւ (Իմաս., Ե)։ Գործէ անօրէն ձեռօք (Ն. տ., ԺԵ)։ Եթէ ուղիղ մտօք լսէր զայն (Եզն., 4, ԺԵ)։ Ընդ հիւսիսային կողմանս իշխանութեանն Պարսից դիմեաց տարեկան շուառութեամբ (Մխ., 2, Ձէ)։ Էջ ի դժոխս անճնարին դառնութեամբ (Եղ., 6)։ Խօսէին ընդ նմա բանիւք ողոքանաց (ՂՓՊՀ, ԺԳ)։ Սկսաւ սաստիկ և առաւելապէս զայրացեալ սրտիւ խօսել ընդ նմա (Ն.տ., ԽԶ)։

Ձևի իմաստն արտահայտվում է նաև բային արմատակից կամ հոմանիշ գոյականի գործիականով։

Օրինակներ՝ Զարմացան մեծաւ զարմանալեօք (Մարկ., Ե)։ Փառօք է փառաւորեալ (Ելք, ԺԵ)։ Օրհնեցից զանուն Աստուծոյ իմոյ օրհնութեամբ (Սաղ., ԿԸ)։ Բարկացաւ սրտմտութեամբ (Թիւք, ԻԵ)։ Աղաչեաց խնդրուածովք զՏէր (Եսթեր, ԺԳ)։

Ձևի իմաստն արտահայտվում է նաև անորոշ դերբայի գործիականով։

Օրինակներ՝ Անցանէին փրփնչելով (Ա, Թագ., ԺԴ)։ Եկն դողալով (Ղուկ., Ը)։ Իւրոց գարշապարացն կոխելով զջուրսն՝ սրբեաց և սրբիչ

[9] Նույն տեղում, էջ 369։

*արար (Ագ., 414)։* Հանելով *զիս յայսց կենաց ահա յանձախես ինձ զպատրաստեալ ուրախութիւնն (Ն. տ., 55)։* Հարկանելով *ընդ խելսն վտանգեսցէ (Ն. տ., 107)։*

*Գրաբարում սովորական է անորոշ դերբայի գործածությունը լրացյալի իմաստի* սաստկացման *նպատակով։ Այս դեպքում լրացումն ու լրացյալը նույնարմատ են լինում, ինչպես՝* անելով անել, արհամարհելով արհամարհել, գարշելով գարշել, զայրանալով զայրանալ, զօրանալով զօրանալ *և այլն։*

Օրինակներ՝ Անիծանելով *անիծեցէք զբնակիչս (Դատ., Ե)։* Անօրինելով *անօրինեցէք (Բ, Օրէնք, ԼԱ)։* Ապականելով *ապականեսցի երկիր (Եսայի, ԻԴ)։* Դիպելով *դիպեցայ ի լերինն (Բ, Թագ., Ա)։* Զանգուանելով *զանգուսցէ (Թիւք, Լ)։* Ընդունելով *ընկալաւ զնա (Առակ., ԻԴ)։ Ելաց* լալով *և ասէ (Ա, Թագ., Ա)։* Լարելով *լարեսցես զաղեղն (Ամբակ., Գ)։* Կուրանալով *կուրասցի (Զաքար., ԺԱ)։ Ո՞չ* պատուիրելով *պատուիրեցաք ձեզ մի՛ ուսուցանել յանունն յայն (Գործ., Ե)։* Սատակելով *սատակեսջիք (Բ, Օրէնք, Դ)։*

*Ձևի իմաստը սերտ առնչություն ունի ոչ միայն միջոցի, այլև գործիականի մի շարք այլ իմաստների հետ։ Այդ է պատճառը, որ առկա են խառն իմաստի բազմաթիվ դեպքեր։ Այսպես, ձևի և առարկայական միասնության (ուղեկցման հետ միասին) իմաստներով է մեկնաբանվում գործիականը հետևյալ օրինակներում։*

*Շմաւոն հասանէր* պատերազմաւ *(Ա, Մակ., ԺԱ)։* Պատուիրանաւ *հրամայեցի (Ա, Եզր., Զ)։ Բացից* առակօք *զբերան իմ (Մատթ., ԺԳ)։*

*Ձևի և համապատասխանության իմաստներ են համատեղված հետևյալ օրինակներում։*

*Սկսաւ Պետրոս պատմել նոցա* կարգաւ *(Գործ., ԺԱ)։ Հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային* զուգամասնութեամբ՝ *փոքունցն առաւել քան մեծամեծացն (ԳՆՄՈ, ՂԳ)։*

*Ձևի և չափի իմաստներով է մեկնաբանվում գործիականը հետևյալ օրինակներում։*

*Եթէ հաւատաս բոլորով* սրտիւ *քով (Գործ., Ը)։ Ջուր* չափով *արբջիր (Եզեկ., Դ)։*

*Հետևյալ նախադասության մեջ ձևի իմաստը համատեղված է հիմունքի հետ.* Վիճակօք *ժառանգեսցի երկիրն (Թիւք, ԻԶ)։*

*Ձևը համատեղված է նպատակի հետ հետևյալ օրինակում.* Փորձելով *խնդրէին ի նմանէ (Մատթ., ԺԶ)։*

*Ձևի, միջոցի և փոխարինության իմաստներով է մեկնաբանվում*

գործիականը հետևյալ նախադասության մեջ. **Արեամբ** ստացար զնա (Սիրաք, Լ)։

**Վիճակի գործիական.**— Այս իմաստը սերտորեն կապված է ձևի իմաստի հետ։ Գրաբարում գործիականը սակավ էր գործածվում վիճակի իմաստով։ Եղածներից կարելի է նշել մի քանիսը

Զմիս **արեամբ** շնչոյ մի ուտիցէք (Ծնն., Թ)։ Որ երևեցաւ **մարմնով** (Ա, Տիմոթ., Գ)։ Որով **մարմնով** գայցեն (Ա, Կորն., ԺԵ)։ Ննջեսցէ **հանդերձիւն** իւրով (Բ, Օրէնք, ԻԴ)։ Ննջեցէք **խորգովք** (Յովէլ, Ա)։ Կամին **պատմուճանօք** շրջել (Ղուկ., Ի)։ Շրջեցան **լաշկամաշկօք** (Եբր., ԺԱ)։ Զայս լուեալ Թագաւորին՝ ոչ **կապանօք**, այլ արձակ **ոտիւք** և արձակ **ձեռօք** հրամայեաց առ ինքն կոչել (Եղ., 6)։ Երթ **ողջամբ** ի տուն քո (Բ, Թագ., ԺԴ)։ Փախոյց **ամօթով** զպահապանսն տագնապեալս (ՂՓՊՀ, Ծէ)։ Ի միում աւուր բիւրք բիւրուց մարդկան կոտորին այլ և այլ **տիովք**, կէսք մատաղօրեայք, և կէսք երիտասարդք (Եզն., 2, ԺԳ)։ Անբաւ է մարդոյ տեսանել զԱստուած **գոյիւ** իւրով (Ազ., 356)։

**Համապատասխանության գործիական.**— Այս իմաստը ևս մոտ է ձևին՝ փոքր-ինչ տարբերվելով նրանից։ Այսպիսի լրացում ստանում են բազմաթիվ բայեր։

**Օրինակներ՝** Նա այսու **օրինակաւ** խորհեցաւ (Եսթեր, ԺԶ)։ Գրեցի **պատճենիւդ** այդուիկ (Բ, Մակ., Թ)։ **Օրինօք** ճակատեցան (Ն. տ., Ժ)։ Ոչ ոք **թուով** ամացն չափիցի (Իմաս., Դ)։ **Թուով** բերէին զպասն և **թուով** տանէին (Ա, Մնաց., Թ)։ Պատգամս յղէր **օրինակաւ** այսուիկ (Ազ., 39)։

Որոշ դեպքերում համապատասխանության և չափի իմաստները համատեղվում են։

**Օրինակներ՝** Արկցես ի նա լի **չափովդ** մանանայ (Ելք, ԺԶ)։ Մեղր ... որդեակ, **չափով** կերիջիր (Առակ., ԻԵ)։

**Միասնության գործիական.**— Միասնության գործիականի չորս ենթատեսակներից պարագայական են առարկայական-միասնության և խնդրային միասնության գործիականները։ Սակայն նյութի ամբողջացման նպատակով խնդրային իմաստները չենք անջատի նրանցից։

**Առարկայական-միասնության գործիականով** լրացում ստանում են բազմապիսի բայեր։ Լրացումը սովորաբար արտահայտվում է իր ցույց տվող գոյականներով։

**Օրինակներ՝** Արձակեաց մեծաւ **հանդերձաւ** (Բ, Մակ., ԺԴ)։ **Ընչիւք** բազմօք երթիցեն (Յեսու, ԻԲ)։ Գայ անդր **ջահիւք** և **լապտերօք** (Յովհ., ԺԸ)։ **Հացիւ** ընդառաջ ելէք (Եսայի, ԻԱ)։ Զամանն **հացիւ** ուտի (Ն.տ.,

ԻԸ)։ Եկն ջրով և **հոգւով** (Ա, Յովհ., Ե)։ Դառնայր ի մեծ կոտորածէն մեծաւ յաղթութեամբ և բազում **աւարաւ** (Ագ., 21)։ Փախուցեալ **աղխիւ** իւրով անկանի առ Արտաշիր Թագաւորն Պարսից (Մխ, 2, ՁԱ)։ Առաքեաց առ նա բազում **գանձիւք** (Եղ., 1)։ Ձի **թամբօք** և **սանձիւ**... տացէ (ՄԿՊԱԱ, 1, ԻՁ)։

Այս իմաստի երկրորդ դրսևորումը ուղեկցման գործիականն է, որը ցույց է տալիս լրացյալ բայի գործողությանը ուղեկցող, զուգահեռ առարկայացած գործողություն։

**Օրինակներ՝ Արտասուօք** կարդացին (Գ, Մակ., Ե)։ **Օրհնելով** կարդացի առ Տէր (Սաղ., ԺԷ)։ Թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն... ցնծալից **ուրախութեամբ** (Ագ., 21)։ Դառնայ յաշխարհս մեծաւ **տրտմութեամբ** և զկծանօք (Մխ, 2, ՀԱ)։

Երբեմն գործիականը կարելի է մեկնաբանել և՛ ուղեկցման, և՛ վիճակի իմաստներով։ Օրինակ՝ **լալով** և **սգալով** ասասցեն (Յայտն., ԺԸ)։

**Խնդրային-միասնության գործիականով** լրացումն արտահայտվում է սովորաբար թանձրացական գոյականներով և նույնպես բնորոշ է բազմազան բայերի։

**Օրինակներ՝** Եա ... զերկիրն և զքաղաքս **սահմանօք** իւրովք (Թուք, ԼԲ)։ Գտանէ և անդ զումն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք **հետևակօք** և հինգ հազար **հեծելազօրու**, Բարշամ անուն (Մխ, 1, ԺԴ)։ Կարող է զքեզ ամենայն **բազմութեամբ** քո մատնել խորոց ծովուդ (Ղև., Պատմ., Ի)։ Ջսուրբն Գայիանէ ... իւրոյ մարտիրոսութեանն երկու **ընկերօքն** դնէր ի վկայարանի տաճարին (Ագ., 368)։

**Բուն միասնության գործիականով լրացումը** ենթակայի հետ հավասարապես գործող ակտիվ առարկա է ցույց տալիս և իբրև այդպիսին խնդիր է։ Սա արտահայտվում է անձ ցույց տվող գոյականներով։ Լրացյալ դառնում են տարբեր իմաստի բայեր։

**Օրինակներ՝** Աւետարանէր և այլովք **բազմօք** (Գործ., ԺԵ)։ Հասանէր Յովնաթան **զօրօքն** (Ա, Մակ., Ժ)։ Պատէր **բիւրուքն** (Բ, Մակ., ԺԱ)։

Արտաքս ըստ զօրսն երեալ շրջէին **գնդաւն** իւրեանց (Ն.տ., ԺԲ)։ Ծե**րովք** մերովք երթիցուք (Ելք, Ժ)։ Ուր **քաջամարտկօքն** անկաւ Բէլ (Մխ, 1, ԺԱ)։ Ընթացեալ իւրովք **արամբքն** ի դուռն ամրոցին՝ ունի զբերդն (Մխ, 2, ՁԴ)։ Սատակի **ազգաւ** (Ն. տ., 3, ԺԵ)։ Առաքէ ի վերայ Արշակ զԱ. անառղան ումն պահլաւիկ՝ հզօր **գնդաւ** (Ն. տ., ԼԴ)։ Կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ տակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց (Եղ., 5)։ Գնամք իւրաքանչիւր յօտարութիւն **կնաւ** և **որդւովք** (ՂՓՊՀ, ԻԷ)։

*Երբեմն դժվար է որոշել՝ գործիականը բուն միասնության թե՞ առարկայական-միասնության իմաստ ունի։ Օրինակ՝ Դառնայ ի Հայս. ընդ իւր ածելով զԿամսար* **ամենայնիւքն** *(Մխ, 2, Ձէ)։*

**Ենթակայական-միասնության գործիականով** *արտահայտվում են գործողություն կատարողները։ Սովորաբար այս լրացումը հոգնակի է լինում։*

**Օրինակներ՝** *Եօթանասուն* **ոգւով** *իջին հարքն (Բ, Օրէնք, Ժ)։ Եդեալ ծունր* **ամենեքումբք** *(Գործ., Ի)։* **Թագաւորօքն** *և* **իշխանօքն** *խառնակեցան (Ագ., 334)։*

**Տեղի գործիական.—** *Տեղի իմաստը գրաբարում քիչ դեպքերում էր գործիականով արտահայտվում։ Պատճառներից մեկը, հավանաբար, այն հանգամանքն է, որ մոտավոր տեղի իմաստն արտահայտվում է* **առ** *կամ* **զ+գործիական** *կառույցով։ Լրացումը սովորաբար տեղ ցույց տվող գոյական է լինում։*

**Օրինակներ՝** *Զգէ ի վերայ նորա* **ճանապարհաւ** *(Յովբ., ԼԶ)։ Եկն Յովհաննէս* **ճանապարհաւ** *արդարութեան (Մատթ., ԻԱ)։ Շրջէր յիջաւանի* **խորանաւ** *(Բ, Թագ., Է)։ Ո՞չ նովին շաւղով շրջեցաք (Ա, Կորն., ԺԲ)։* **Որով** *անցեալ Արամանեակ բնակէ անդ (Սեբ., Ա)։ Գայ Յիսուս* **դրօքն** *փակելովք (Յովհ., Ի)։*

**Ժամանակի գործիական.—** *Այս իմաստը ևս քիչ է հանդիպում գրաբարում։ Պատճառը թերևս այն է, որ գործողության մոտավոր ժամանակը սովորաբար դրսևորվում է* **առ** *կամ* **զ+գործիական** *կառույցով։ Լրացումն արտահայտվում է ընդհանուր ժամանակ ցույց տվող բառերով։*

**Օրինակներ՝ Ժամանակաւ** *անօսրի ծով (Յովբ., ԺԴ)։ Յայտնեաց իւրովք* **ժամանակօք** *զբանն (Տիտոս, Ա)։ Երևէր յայնժամ երբեմն* **ժամանակաւ** *ումեք արժանեացն (Ագ., 550)։* **Ժամանակաւ** *ունին բերել զպտուղսն (Ն. տ., 653)։*

**Պատճառի և հիմունքի գործիական.—** *Գրաբարում այս իմաստը լրացում էր դառնում իմաստային տարբեր խմբերի պատկանող բառերի համար։ Լրացումն արտահայտվում է վերացական գոյականներով։*

**Օրինակներ՝** *Քո* **հրամանաւ** *վերանայ արծուի (Յովբ, ԼԹ)։* **Խորհրդով** *արբ գինի (Առակ., ԼԱ)։* **Խորհրդով** *գործեա զամենայն (Ն. տ.)։ Զոր ժառանգեցին* **հրամանաւ** *Տեառն (Յեսու, ԻԲ)։* **Անուամբ** *Տեառն մերժեցի զնոսա (Սաղ., ՃԺԷ)։* **Օրինօքն** *դատեսցին (Հռոմ., Բ)։ Ո՞յր* **բանիւ** *հաստատէք զդա (Բ, Եզր, Ե)։ Որ և մեռաւ ի նմին, ո՛չ գիտեմ*

թէ ենճգութեամբ ինքեանց և թէ այլով պատճառաւ (ՍՏՏՊ, 3, Ը)։ Իրաւամբ դատիս (ԳՆՄՈ, ԿԴ)։ Կոտորեցան սուսերք սատակողին այս փայտի ցուցմամբ (Ն. տ., ՂԲ)։

Չափի գործիական.— Սա գրաբարում հազվադեպ հանդիպող իմաստ է։ Սովորաբար չափը զուգակցվում է սաստկացման և այլ իմաստներին։ Գործիականը մեծ մասամբ ունենում է որևէ լրացում։

Օրինակներ՝ խռովեսցի ծով լրիւ իւրով (Սաղ., ՂԷ)։ Հեռացուցանէր ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրասախաւ (Եղ., 7)։ Եկին մօտ եղեն ի գետն Եփրատ իբրև ձիոյ արշաւանօք երկուք (Ագ., 811)։ Տուեալ հրաման ամսօրեայ ժամանակաւ ի պահս և յաղօթս յամենալ (Ն. տ., 829)։ Բազում ամօք զհամբերութիւն յանձն իւր կրէր (Ն. տ., 299)։

Սաստկացման գործիական.— Սա շփման եզր ունի ձևի և չափի իմաստների հետ։ Այս դեպքում լրացումը և լրացյալը նույնարմատ բառեր են, ընդ որում լրացումը կարող է լինել ինչպես գոյական, այնպես էլ անորոշ դերբայ։

Օրինակներ՝ խռովութեամբ խռովեսցի երկիր (Եսայի, ԻԴ)։ Կորստեամբ կորընչիցիք յերկրէն (Բ, Օրէնք, Դ)։ Գարշելով գարշեսցես (Ն. տ., Է)։ Զօրացեալ են զօրութեամբ (Ա, Մակ., Ը)։ Արհամարհելով արհամարհիցէ զպատուիրանս (Ղևտ., Զ)։ Զայրանալով զայրասցին և յարիցեն (Եզեկ., Բ)։ Զօրանալով զօրասցիս (Ա, Թագ., ԻԶ)։ Աճելով աճէին և բազմանալով բազմանային (Եղ., 2)։

### 3. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆԱԽԴՐԱՎՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ

Բայի լրացումների համակարգում յուրահատուկ տեղ ունեն նախադրություն+հոլովաձև, նախդիր+հոլովաձև կառույցները։ Նախադրությունները և նախդիրները, որպես սպասարկու բառեր, լրացական հարաբերություն են արտահայտում, և այս առումով դրանց դերը հավասարազոր է հոլովական մասնիկներին։ Այդ տեսակետից նրանք ոչնչով չեն տարբերվում արդի հայերենի կապերից, որոնց շարահյուսական հարաբերությունների մասին խոսել ենք «Ժամանակակից հայերենի բառակապակցությունների» աշխատության մեջ (էջ 398—442)։ Լրացում ձևավորելու տեսակետից նախադրություններն ու նախդիրները քիչ են տարբերվում իրարից, թեև ավանդաբար առաջիններին վերագրվել է խնդրառական հատկանիշ, իսկ երկրորդներին սոսկ հոլով ձևավորելու հատկանիշ։ Նախադրությունները դիտվել են իբրև

խնդրառու բառեր, և այս ավանդությամբ էլ հետագայում արդի հայերենի կապերն էին դիտվում իբրև հոլովառու։ Քանի որ այս հարցի քննությունը տրված է վերը նշված աշխատության մեջ, ուստի այստեղ կրկին դրան չենք անդրադառնա։ Պետք է նկատի ունենալ, որ նախադրությունները նախդիրներից (ց-ից բացի) տարբերվում են առաջին հերթին «հոլովառությամբ»։ Բանն այն է, որ նախադրությունը դրվում է այս կամ այն հոլովի վրա։ Այսպես, աղագաւ, առանց, արտաքոյ, առաջի, դէմ, դէպ, ընդդէմ, զկնի, զհետ, զօրէն, ի ձեռն, ի մէջ, ի վերայ, ի պատճառս, հանդէպ, յաղագս, յանդիման, յետ, պատճառաւ, սակս, վասն, փոխանակ նախադրությունները «սեռականառու» են թող, իբրև, ի սակս, հուպ, որպէս, քան նախադրությունները՝ «հայցականառու», բաց, բայց, գաղտ, զատ, իբրև, յետս նախադրությունները՝ «բացառականառու», հանդերձ, չափ նախադրությունները՝ «գործիականառու»։ Մինչդեռ նախդիրները (բացի ց-ից) կարող են դրվել երկու կամ ավելի հոլովների հետ։ Այսպես, առ, զ նախդիրները գործածվում են տրական, հայցական, բացառական, գործիական հոլովների, ըստ, ընդ, ի նախդիրները՝ տրական, հայցական, բացառական հոլովների հետ։

Նախադրությունների և նախդիրների երկրորդ տարբերությունն այն է, որ առաջինները իմաստային սահմանափակություն ունեն, երկրորդները՝ ոչ։ Եթե նախադրությունները մեծ մասամբ մենիմաստ են, ապա նախդիրները հիմնականում բազմիմաստ են։

Այսպես, առընթեր, բաց, բայց, դէմ, դէմ յանդիման, դէպ, ընդառաջ, զօրէն, թարց, ի ձեռն, ի ներքոյ, ի պատճառս, յետ, յետուստ, յերեսաց, մերձ, մօտ, փոխանակ, փոխան, թող, որպէս, հետ, հետէ, շուրջ, չափ, քան նախադրությունները կոչված են մեկական իմաստ արտահայտելու։ Բաց, բայց, թարց նախադրություններով արտահայտվում է բացառման, մերձ, մօտ, դէպ, ընդառաջ, դէմ, դէմ յանդիման նախադրություններով՝ տեղի, որպէս, զօրէն նախադրություններով՝ ձևի, ի պատճառս, պատճառաւ նախադրություններով՝ պատճառի, փոխանակ, փոխան նախադրություններով՝ փոխարինության իմաստ։ Անշուշտ, կան նաև երկու, երեք իմաստ արտահայտող նախադրություններ էլ։ Այսպես, արտաքոյ, առաջի, զկնի, ի մէջ, ի վերայ հանդէպ, յաղագս, յանդիման, վասն, հանդերձ նախադրություններն ունեն երկու կամ ավելի իմաստ։ Արտաքոյ նախադրությամբ արտահայտվում են տեղի և վիճակի, առաջի նախադրությամբ՝ հանդիման, մատուցման, ուղղության, սահմանափակման, շահի, տեղի, ի

վերայ նախադրությամբ՝ հանգման, սահմանափակման, շահի, տեղի, վիճակի, նպատակի, յաղագս նախադրությամբ՝ վերաբերության, շահի, պատճառի, նպատակի. վասն նախադրությամբ՝ վերաբերության, պատճառի, նպատակի իմաստներ:

Այնուամենայնիվ, նախադրությունների մեծ մասին բնորոշ է մենիմաստությունը: Մինչդեռ նախդիրներն արտահայտում են բազմազան իմաստներ: Այսպես, ի նախդիրը հայցականի հետ կարող է արտահայտել տասնյակից ավելի իմաստներ: Հետևյալ նախադասություններում ի նախդիրն ունի ուղևորության տեղի իմաստ. Յանապատ լերինս ելանէր (Ագ., 846): Գնա դու յերկիր բարձր (Ծնն., ԻԲ):

Այս նախդիրը հանգման իմաստով է գործածված հետևյալ նախադասություններում. Ի կանայս մի մերձենայք (Ելք, ԺԹ): Հաւատացին յԱստուած և ի Մովսէս ծառայ նորա (Ելք, ԺԴ):

Այս նախդրով նպատակի իմաստ է արտահայտված հետևյալ նախադասություններում: Զոր ես տաց որդւոցն Իսրայելի ի կալուածս (Թիւք, ԺԳ): Զժողովուրդն ծառայեցոյց իւր ի ստրուկս (Ծնն., ԽԷ): Ի փրկութիւն առաքեաց զիս (Ն. տ., ԽԵ):

Միջոցի իմաստ է արտահայտված ի նախդրով հետևյալ նախադասություններում. Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր (Ծնն., Ա): Աղաղակեցի ի ձայն բարձր (Ն. տ., ԼԹ):

Այսպես են նաև մյուս նախդիրները:

Նախադրությունների և նախդիրների այս տարբերություններից ելնելով՝ դրանցով ձևավորվող լրացումները քննում ենք առանձին-առանձին: Անշուշտ քննության մեջ նկատի ենք ունեցել նաև համատեղ գործածությունները[10]:

---

10 Գրաբարի նախադրությունների և նախդիրների իմաստային քննությունը հայ քերականագիտության մեջ կատարված է հանգամանորեն: Այս առթիվ տե՛ս Վ. Չալըխեան, Քերականութիւն Հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այտընեան, Վիեննա, 1885, Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, Ստ. Մալխասեան, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891, Նոյնի, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն,, Երևան, 1936, Վ. Առաքելյան, Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց), Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ: Այստեղ դրանց քննությունը տրվում է բառակապակցության ուսմունքի դիրքերից:

## Ա. Բայի լրացումները նախադրությամբ կառույցներով

Գրաբարում գործածվում էին մոտ հիսուն նախադրություններ, որոնց մի մասը շատ գործուն էր, իսկ մյուսները՝ քիչ հանդիպող: Ինչպես հայտնի է, նախադրություն տերմինն ունի և՛ նեղ, և՛ լայն ըմբռնում: Առաջին ըմբռնումով նախադրությունը շարահյուսական-իմաստային հարաբերություն արտահայտող բառ է, որ դրվում է լրացյալից առաջ, ինչպես՝ յաղագս, վասն, յետ, բաց և այլն: Երկրորդ ըմբռնումով այն ընդգրկում է նաև նույն կարգի դեր կատարող այն բառերը, որոնք դրվում են լրացյալից հետո: Ըստ էության վերջինները ետադրություն են (չափ, աղագս, պատճառս և այլն), սակայն իբրև ընդհանուր անուն գործածում ենք նախադրություն տերմինը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ որոշ բառեր դրսևորում են երկակի հատկություն. մերթ դրվում են խնդրից առաջ, մերթ՝ հետո: Այդպես է ճանդերձ:

Օրինակներ՝ Ջմեզ ընդ Յիսուսի յատուսցէ և հանդիման կացուսցէ ձեւք ճանդերձ (Բ, Կորնթ., Դ): Ետ տանել ի Գաղղիուս ճանդերձ երկաթի կապանօք (Մխ, 2, ՁԸ):

Որոշ նախադրություններ սովորաբար, գործածվելով խնդրից առաջ, երբեմն անհետևողություն են դրսևորում՝ դրվելով խնդրից հետո: Այդպես են ի մէջ, ի ձեռն, ի վերայ, զհետ, զկնի, առաջի և այլն: Ընդ որում մի դեպքում նախադրությունը երկփեղկվում է, և նրա բաղադրիչ ի, զ նախդիրները դրվում են խնդրից առաջ:

Օրինակներ՝ Ջմիմեամբք դիզանէին ի միմեանց վերայ (Ագ., 163): Յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ (Ն. տ., 397): Յորոյ ձեռն բղխեսցէ աղբիւր մկրտութեան (Ն. տ., 753):

Այս դեպքում սովորական է բաղադրիչ նախդրի կրկնությունը:

Օրինակներ՝ Որ ի նորայն ի վերայ բազմեցաւ (Ագ., 489): Այլ մեք զգրոց սրբոց զհետ երթիցուք (Եզն., 3, Է): Զորոց զհետ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան (ՂՓՊՀ, ԺԹ): Որ կուռ զմիմեանց զկնի ի վերայ գային (Մխ, 1, Գ):

Երկրորդ դեպքում նախադրությունը, անկախ բաղադրյալ լինելուց, դրվում է խնդրից հետո:

Օրինակներ՝ Քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի (Գործ., ՓՁ): Եւ եթէ ինքն՝ որպէս ասենն՝ լատուբեանց վասն կոյս վճարեցաւ յաշխարհէ (Եզն., 3, ԺԲ): Զարին զկնի միտեցայ (ԳՆՄՈ, ԿԷ): Խոր-

հուրդ արկեալ Աստուածութեանն գլղութեանն նոցա բերել ի մէջ զծնունդն (Ագ., 622)։

Ինչպես նշվեց, նախադրությունները, որպես հոլովառու բառեր, ունեն որոշակի հոլովի հետ դրվելու օրինաչափություն։ Ընդ որում նկատելի է, որ դրանց մեծ մասը սեռականի հետ է գործածվում, իսկ հայցական, բացառական, գործիական հոլովների հետ դրվում են սահմանափակ թվով նախադրություններ։

Այնուամենայնիվ, որքան էլ նախադրությունների հոլովառությունը որոշակի օրենքներ ունի, քիչ չեն հոլովառության խախտման դեպքերը։ Այսպես, իբրև, իբր նախադրությունը գործածվում է բոլոր հոլովների հետ՝ այս տեսակետից նմանվելով նախդիրներին։

Օրինակներ՝ Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրև Տեառն (Եփես., Ե)։ Արար զքեզ Տէր Աստուած քո իբրև զաստեղս երկնից բազմութեամբ (Բ, Օրէնք, Ժ)։ Մերկացուցին զգեստ պատմուճանին իբրև ի տկարէ (ԳՆՄՈ, ԿԱ)։ Զառ և զապառ և զաւար բանակին ի մի վայր ժողովեալ պահէին իբր հրամանաւ արքունի (Եղ., 3)։

Ի սակս նախադրությունը գործածվում է և՛ հայցականի, և՛ սեռականի հետ։

Օրինակներ՝ Յայն սակս և ծնունդք ոչ գոն նոցա (Եզն., 1, ԻԴ)։ Աւելի քան զայս տացեն սակս հոգւոյ (ՄԿՊԱԱ, 1, ԻՋ)։

Որպէս նախադրությունը հայցականից բացի, դրվում է նաև սեռականի և բացառականի հետ։

Օրինակներ՝ Ես որպէս խոտ ցամաքեցայ (Սաղ., ՃԱ)։ Ոչ զմարմինն միայն սպանանէ որպես զաւազակն (Եզն., Խրատք)։ Ոչ կամէր թէ որպէս զանասունս ի հարկէ վարիցին (Ն.տ., 1, ԺԹ)։ Երկուցեալ դողային ի սրբոյն որպէս ի մարգարէէ Տեառն Աստուծոյ (ՂՓՊՀ, ԿԴ)։

Յետոյ նախադրությունը, սեռականից բացի, կարող է գործածվել նաև բացառականի հետ։

Օրինակներ՝ Կայր պատրաստ այր իւրաքանչիւր յետոյ եղբօր իւրում (Նէեմի, Դ)։ Յետոյ յԱստուծոյ պատուհասէն ... իմացաւ (Եզն., 1, Ա)։

Սրանցից զատ կան նաև նախադրությունների անհետևողական, սխալ գործածության դեպքեր։ Այսպես, արտաքոյ նախադրությունը սեռական է պահանջում։

Օրինակներ՝ Ոմանք արտաքոյ ապարանից ... բարբառեցան (Ագ., 180)։ Կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին (Յայտն., ԺԴ)։

Սակայն այն գործածվում է նաև քան+զ+հայցական կառույցի

հետ։ Օրինակ՝ որ ինչ ըստ Աստուծոյ կամացն լինի՝ բարի է, և որ ինչ արտաքոյ քան զնորա կամսն՝ այն չար է (Եզն., 1, Ա)։

Վասն նախադրության խնդիրը սեռականով է դրվում։ Հանդիպում է նաև խնդրի հայցականով գործածություն։ Օրինակ՝ Յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգականն ծագման (Մխ, 3, ԼԷ)։

Մինչև նախադրությունը պահանջում է ի+հայցական, առ+հայցական, ց+հայցական կառույցներ։ Սակայն հանդիպում է նաև սեռականի գործածություն։ Օրինակ՝ Հարին զնոսա մինչև չմնալոյ ի նոցանէ ապրեալ և փախստական (Յեսու, Ը)։

Այս նախադրության մոտ խնդրի փոխարեն կարող է դրվել նաև մակբայ։

Օրինակներ՝ Ի ձեզ իսկ բնակեսցէ մինչև յաւիտեանս (Ագ., 590)։ Տեսանէի ... սիւն մի բարձր մինչև յոյժ (Ն. տ., 736)։

Նախադրությունների անհետևողական գործածության դեպքերից մեկն էլ այն է, որ նախադրության խնդրի փոխարեն դրվում է այլ նախադրություն+խնդիր կառույց։

Օրինակներ՝ Իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի (Ղուկ., Ե)։ Յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն (Ագ., 45)։ Իջոյց զնոսա մինչև հանդէպ եկեղեցւոյն (ՅՄՊՏ, 328բ)։ Ելեալ գնացաք, յուղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ կանամբք և որդւովք մինչև արտաքոյ քաղաքին (Գործ., ԻԱ)։

Նախադրությունների իմաստները յուրահատուկ լինելով հանդերձ՝ ինչ-որ չափով ընդհանրություն ունեն ոչ միայն հոլովական իմաստների, այլև նախդիրների և իրար հետ։ Այսպես, ընդ նախադրությունը սեռականի հետ արտահայտում է փոխարինության իմաստ այնպես, ինչպես փոխանակ նախադրությունը։ Հմմտ. Նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց (Բուզ., 4, ԾԴ)։ Որ սպանաւ փոխանակ Իսահակայ (Եզն., 4, ԺԱ)։ Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել կամ բամբասանս ընդ բամբասանաց (Ա, Պետ.. Գ)։

Պատահական չէ, որ ավելադրության օրենքով հաճախ ընդ նախդիրը և փոխանակ նախադրությունը համատեղ են գործածվում։ Օրինակ՝ Մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն (Եզն., 1, ԺԴ)։

Ընդ որում նախադրությունների և նախդիրների համատեղ գործածությունը երկու տեսակ է լինում։ Մի դեպքում դրանք գործածվում են միայն զուգակցված, և կարծես համատեղումը պարտադիր է։ Այսպես են մինչև+առ, մինչև+ի, մինչև+ց, քան+զ, մօտ+ի, մօտ+առ,

մերձ+առ, մերձ+ի կառույցները, որոնք գործածվում են հայցականի հետ, շուրջ+զ կառույցը, որը գործածվում է գործիականի հետ։ Բանն այն է, որ մինչև, քան, մօտ, մերձ նախադրությունները երբեք միայնակ չեն գործածվում, այլ միայն նախդիրների հետ զուգակցված։

Օրինակներ՝ Ելանէր ծուխ քաղաքին մինչև յերկինս (Յեսու, Ը)։ Մինչև ցե՞րբ խաբիցես զիս (Դատ., ԺԶ)։ Իջուցես զասա մինչև ի յատակս (Եսայի, ԻԶ)։ Մինչև առ ձեզ հասաք աւետարանաւն (Ա, Կորնթ., Ժ)։ Երթեալ նստէր մօտ առ դին (Բուզ., 4, ԺԵ)։ Եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն (ԿՎՄ, 17)։ Օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր (Եղ., 5)։ Յորժամ մօտ հասանէ ի նա՝ լնու (Եզն., 3, Ա)։ Անիւք չորք կային մերձ առ Քերովբէսն (Եզեկ., Ժ)։ Զօրանայ քան զմեզ (Ելք, Ա)։ Շուրջ զքև բուսանիցին (Ագ., 651)։ Նստան շուրջ զնովաւ (Յովբ, Բ)։

Երբեմն հանդիպում են նաև այս նախադրությունների այլ գործածության դեպքեր, ինչպես՝ մինչև+առ+գործիական, շուրջ+ի+հայցական, մերձ+առ+գործիական, մերձ+առ+տրական, մօտ+առ+գործիական կառույցներ։

Օրինակներ՝ Երթիցեն շուրջ ի շէնսն (Մատթ., ԺԴ)։ Զհետ նորա կալաւ Ազարիա որդի Մաասու, որդի Անանիայ մօտ առ տամբն իւրով (Գ, Եզր, Գ)։ Բանակեցան նոքա մերձ առ լերինն ի ճախակողմն վերին Կիլիկիոյ (Յուդիթ, Բ)։ Որ մօտ առ ծովուն կայցեն (Եզն., 2, ԻԵ)։ Մերձ առ լերամբն ոչ թողացուցանէր այլում պարապել գործոյ (Մխ, 2, ՁԴ)։ Ոչ անցանէր մօտ առ նոքօք (ՄԿՊԱԱ. 2, Ժ)։ Զգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն... մինչև առ աշխարհաւն խաղտեաց (Ագ., 842)։

Երկրորդ դեպքում նախադրությունները կարող են գործածվել և՛ առանց նախդրի, և՛ նախդրին զուգակցված։ Այսպես են փոխանակ (փոխան), վասն, հուպ, որոնցից առաջին երկուսը զուգակցվում են ընդ, իսկ վերջինը առ և ի նախդիրների հետ։

Օրինակներ՝ Ընդ ողջակէզս և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար (Եբր., Ժ)։ Այնու արժանի արասցէ զնա փոխանակ ընդ փոքուն մեծամեծս ընդունել (Ագ., 270)։ Մանգաղաւ կամացդ հուպ առ արմաւ խուզեալ հնձեսցես (ԳՆՄՈ, ԼԵ)։ Հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ հուպ ի քաղաքն Երուանդայ ի վերայ Ախուրեան գետոյ (Մխ, 2, ԽԸ)։ Որոց զկնի ժամանակօք Մակաբայեցւոցն պատմութիւն հուպ առ գալստեամբ Քրիստոսէ ի Յովսեպոսէ ասացեալ (ՍՏՏՊ, 1, Ա)։

Համանշությամբ է պայմանավորված այն երևույթը, որ երբեմն երկու նախադրություն գործածվում են նույն խնդրի հետ։

Օրինակներ՝ Զկնի յետ բազում ժամանակաց յայտնեցաւ ճգնաւորի ումեմն Գառնիկ անուն կոչեցելոյ (Մխ, 2, ՂԱ)։ Եկն էջ եհաս մինչև մօտ ի յատակս երկրիս (Ագ., 735)։

Նախադրությունների ընդհանրությունը իրար հետ հնարավորություն է տալիս դրանք խմբավորելու իմաստային որոշակի խմբերում։ Այսպես, յաղագս սերտորեն կապված է աղագաւ, վասն, ի սակս նախադրությունների հետ և իմաստային նույն խմբին է պատկանում։ Իմաստային խմբերի առկայությունը չի ժխտում այն իրողությունը, որ նախադրությամբ արտահայտվող շարահյուսական հարաբերությունը յուրահատուկ է. յուրաքանչյուր նախադրություն կոչված է արտահայտելու այնպիսի իմաստ, որը վերջին հաշվով որոշ չափով տարբեր է նույնիսկ տվյալ խմբին պատկանող մյուս նախադրություններով արտահայտվողներից։ Այնպես որ բացարձակ համանշությունն այս դեպքում հնարավոր չէ։ Այսպես, յաղագս և վասն նախադրությունները որքան էլ ընդհանրություն ունենան, դարձյալ տարբերվում են։ Բանն այն է, որ յաղագս-ով արտահայտվում են ոչ միայն վերաբերության, պատճառի և նպատակի իմաստներ, այլև շահի իմաստ, որը բնորոշ չէ վասն-ին։ Մյուս կողմից, շահի իմաստն արտահայտվում է ոչ միայն յաղագս, այլև ի վերայ, հանդէպ, ընդդէմ, առաջի նախադրություններով, որոնցից յուրաքանչյուրը ծառայում է նաև այլ իմաստների արտահայտմանը։ Այս է պատճառը, որ նույն նախադրությունը հոմանշային հարաբերության մեջ է տարբեր նախադրությունների հետ։

Ելնելով այն բանից, որ գրաբարի նախադրությունները առանձին-առանձին լավ են ուսումնասիրված, և այստեղ սոսկ կրկնություն կլինի դրանց առանձնակի քննությունը, ինչպես նաև այն իրողությունից, որ տարբեր նախադրությունների միջև առկա են իմաստային առնչություններ, նախադրությունների քննությունը կատարել ենք ըստ իմաստային խմբերի։

Նախադրություն+հոլովաձև կառույցներով արտահայտված իմաստները ևս բաժանում ենք խնդրային և պարագայական տեսակների՝ ելնելով այն իրողությունից, որ այդ իմաստները վերջին հաշվով որոշակի հարաբերության մեջ են խնդիրների և պարագաների հետ։ Այս դեպքում ընդգծվում է արդի հայերենի կապային կառույցների և գրաբարյան նախադրությամբ կառույցների ընդհանրությունը։ Այստեղ ևս առկա են խառն իմաստներ։

Աղագաւ նախադրությունն արտահայտում է պատճառի և նպատակի, առանց, զատ՝ բացառման, ձևի, վիճակի, արտաքոյ՝ տեղի, վիճակի, հիմունքի, առաջի՝ հանգման, մատուցման, ուղղության, սահմանափակման, շահի, տեղի, առընթեր, հետ՝ միասնության, բաց, թող, բայց, թարց՝ բացառման, դէպ, դէմ, դէմ յանդիման, ընդառաջ ի ներքոյ, յայնկոյս, մերձ, մօտ, շուրջ՝ տեղի, ընդդէմ՝ հանգման, շահի, տեղի, զկնի՝ ուղղության, տեղի, ժամանակի, զհետ՝ ուղղության, տեղի, գաղտ, զօրէն, հանգոյն, իբրև, որպէս՝ ձևի, ի ձեռն՝ միջոցի, ի վերայ՝ հանգման, վերաբերության, սահմանափակման, շահի, տեղի, վիճակի, նպատակի, ի պատճառս, պատճառաւ, ի սակս՝ պատճառի, ի տեղի, փոխան, փոխանակ՝ փոխարինության, հուպ՝ հանգման, ժամանակի, հանդէպ՝ հանգման, ուղղության, շահի, տեղի, յաղագս՝ վերաբերության, շահի, պատճառի, նպատակի, յանդիման՝ ուղղության, տեղի, յետ, հետէ՝ ժամանակի, յետուստ՝ տեղի, յետոյ՝ տեղի, ժամանակի, վասն՝ վերաբերության, պատճառի, նպատակի, քան, չափ՝ չափի, հանդերձ՝ միասնության, վիճակի իմաստներ։

## Նախադրությամբ կառույցները խնդրային իմաստներով

Նախադրությամբ կառույցները կարող են արտահայտել հանգման, մատուցման, ուղղության, վերաբերության, սահմանափակման, փոխարինության, շահի, բացառման, միասնության, միջոցի խնդրային իմաստներ։

Հանգման իմաստը նախադրությամբ կառույցներով.— Այս իմաստի դրսևորմանը ծառայում են ի վերայ, ընդդէմ, հանդէպ, առաջի, հուպ նախադրությունները։ Լրացյալ դառնում են տարբեր իմաստային խմբերի բայեր։

Օրինակներ՝ Զհետ կրթեալ հասին հուպ իշխանն (ՅԴՊՀ, 126)։ Հանդէպ միմեանց բերան (Ն. տ., 201)։ Առաջի իմ մերձեցան և կացին (Սաղ., Լէ)։ Ես ածից չարիս ի վերայ ամենայն մարմնոյ (Երեմ., ԽԵ)։ Յաւել Տէր աշխատութիւն ի վերայ ցաւոց (Ն. տ.)։ Տացուք ի վերայ նոցա պատերազմ (Յուդիթ, Ե)։ Ի վերայ դորին բանից պնդեալ կաս (ՂՓՊՀ, ԿԴ)։ Ոյք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ (Ա, Տիմոթ., Դ)։ Գումարեցան ընդդէմ միմեանց (ՅՄՊՏ, 327ա)։ Ախոյանայր ընդդէմ թշնամւոյն (ՄԿՊԱԱ, 2, Ա)։

Որոշ կառույցներ կարելի է մեկնաբանել հանգման և ուղղության իմաստներով։

Օրինակներ՝ *Յարձակեցան* ի վերայ բերդին *և* աւանաց (*Եղ., 3*)։ *Յարիցէ* ի վերայ նորա (*Բ, Օրէնք, ԺԹ*)։ *Յարիցեն որդիք* ի վերայ հարց (*Մարկ., ԺԳ*)։

*Որոշ կառույցներ կարելի է մեկնաբանել հանգման և ուղղորդության իմաստներով։* Օրինակ՝ *Մատերուք* առաջի Տեառն (*Ելք, ԺԶ*)։

Հանդեպ+սեռական *կառույցը կարելի է մեկնաբանել հանգման և տեղի իմաստներով։*

Օրինակներ՝ *Զդատախազն* դատաւորին հանդէպ *կացուցի* (*ԳՆՄՈ, ԿԵ*)։ *Երկիր պագցեն* առաջի քո (*Ագ., 97*)։

**Մատուցման իմաստը նախադրությամբ կառույցներով.**— *Այս իմաստը քիչ է արտահայտվում նախադրությամբ կառույցներով։ Նկատելի է, որ այսպիսի լրացում ձևավորել կարող է* առաջի *նախադրությունը։ Օրինակ՝ Նուիրեսցես զայն նուէր* առաջի Տեառն (*Ելք, ԻԹ*)։

**Ուղղության իմաստը նախադրությամբ կառույցներով.**— *Այս իմաստի դրսևորմանը մասնակցում են* առաջի, զհետ, յանդիման, հանդէպ, զկնի *նախադրությունները։ Լրացում պահանջում են հիմնականում դադարման բայերը, ինչպես՝* հայել, նայել, միտել, պնդել *և այլն։*

Օրինակներ՝ *Ամենայն սրտիւ միտեցար* զհետ *հեթանոս* թագաւորաց (*Մխ, 3, ԺԷ*)։ *Երկնչէր հայել* առաջի Աստուծոյ (*Ելք, Գ*)։ *Սոքա* զկնի *երթան* Գառինն (*Յայտն., ԺԴ*)։ *Պնդեսցուք* զհետ թշնամեացն (*ՅՄՊՏ, 331բ*)։ *Պնդեցան* զհետ փախստէից (*ՄԿՊԱԱ, 2, ԺԱ*)։ *Զձեռս յորժամ յաղօթս համբառնաս՝* հանդէպ երեսացդ *կալ* (*Եզն., Խրատք*)։ Հանդեպ *հայի մեծի* լերինն *Տաւրոսի* (*Ագ., 809*)։ *Լոկ հայէին նեթ* ընդ միմեանց դէմ (*ՂՓՊՀ, 133*)։

**Վերաբերության իմաստը նախադրությամբ կառույցներով.**— *Այս իմաստի դրսևորմանը ծառայում են* ի վերայ, վասն, յաղագս *նախադրությունները։ Լրացյալ դառնում են հիմնականում իմացական, զգացական, ասացական բայերը։*

Օրինակներ՝ Արքայ *լայ և սգայ* ի վերայ Աբիսողոմայ (*Բ, Թագ., ԺԹ*)։ *Որք* ի մեր վերայ *զխորհուրդ մահու խորհէին* (*Եսթ., ԺԶ*)։ *Գթասցիս* ի վերայ Սիոնի (*Սաղ., ՃԱ*)։ *Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի* ի վերայ քո (*Երեմ., ԽԵ*)։ *Եւ ո՞չ զայդ իսկ ասասցի ձեզ վաղագոյն* վասն մոլորութեանդ *ձերոյ* (*Ագ., 235*)։ *Լուաւ նա զՀռոմայեցւոց, թէ ի կասկածանս անկեալ են* վասն նորա (*Մխ, 2, ԻԹ*)։ *Աստուած խորհեցաւ* վասն իմ *ի բարութիւն* (*Ծնն., Ծ*)։ *Զայս խորհեցաւ* վասն ձեր (*Բ, Թագ., ԺԷ*)։ *Մի հոգայք* վասն ոգւոց *ձերոց* (*Մատթ., Զ*)։ Յաղագս *անո-*

*րէն* Վաղէսի *ասի բան (ՅԴՊՀ, 49)*։ Յաղագս *բանտարկեալ* կապելոցն *դնէին ի միտս իւրեանց վաղվաղակի զնոսա հնազանդեցուցանել (Ն. տ., 121)*։

*Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել վերաբերության և շահի իմաստներով։*

Օրինակներ՝ *Աղաչեաց զնա առնել* ի վերայ նորա *աղօթս (Բուզ., 6, Թ)*։ *Աղօթս արարէք և* ի մեր վերայ *(Ա, Թեսաղ., Ե)*։

Սահմանափակման իմաստը նախադրությամբ կառույցներով.— *Այս իմաստի դրսևորմանը ծառայում են* առաջի, ի վերայ, ի մէջ *նախադրությունները։*

Օրինակներ՝ *Տօբիթ գոհանայր* առաջի նոցա *(Տօբիթ, Ժ)*։ *Զդիցն գեղեցկութիւն ունէր* ի մէջ մարդկան *(Աք., 205)*։

*Որոշ կառույցներ* (մինչև+ի+հայցական, մինչև+առ+գործիական, մօտ+ի+հայցական) *կարելի է մեկնաբանել և՛ սահմանափակման, և՛ տեղի իմաստներով։*

Օրինակներ՝ *Ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց* մինչ ի ծագս, *ձգտէր տարածանէր մշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն* մինչև առ աշխարհաւն *Խաղտեաց (Աք., 842)*։ *Ածին մուծին զնա* մինչև յապարանս *Թագաւորին (Ն. տ., 178)*։ *Տեսանէի* ... մօտ յապարանսն *արքունի (Ն. տ., 136)*։

*Որոշ կառույցներ կարելի է մեկնաբանել սահմանափակման և հաղորդման իմաստներով։ Օրինակ՝ Խոստովանեսցայց զանուն նորա* առաջի Հօր *իմոյ (Յայտն., Գ)*։

Փոխարինության իմաստը նախադրությամբ կառույցներով.— *Այս իմաստի դրսևորմանը ծառայում են* փոխանակ, փոխան, ի տեղի *նախադրությունները։ Լրացյալի դերում հանդես եկող բայերը իմաստային սահմանափակում չունեն։*

Օրինակներ՝ *Հատուցանէ չար* փոխանակ բարւոյ *(Առակ., ԺԷ)*։ *Մին* փոխանակ ամենեցուն *մեռաւ (Բ, Կորնթ., Ե)*։ Փոխանակ Աստուծոյ ... *պաշտէք զփայտեղէնսդ և զքարեղէնսդ (Աք., 59)*։ *Եթէ ոչ տացուք զանձինս մեր* փոխանակ պատուիրանաց *քոց (Ն. տ., 96)*։ *Զկողբ ժառանգեաց* փոխան հաւատոցն *(ՍՏՏՊ, 2, Բ)*։ *Պատերազմեսցի* փոխանակ ձեր *(Բ, Օրէնք, Գ)*։ Յորոց տեղի *մատուցին զՅոհան ումն (ԹԱՊՏԱ, 3, ԺԵ)*։ *Թագաւորեցուցանեն զՊապ ի վերայ Հայոց* ի տեղի *բուն* քագաւորութեանն *Արշակունեաց (Ն. տ., 1, ԺԱ)*։

Շահի իմաստը նախադրությամբ կառույցներով.— *Այս իմաստն արտահայտվում է* ի վերայ, հանդէպ, ընդդէմ, յաղագս, առաջի *նա-*

խադրությունների միջոցով: Լրացյալի դերում կարող են հանդես գալ բազմապիսի բայեր:

Օրինակներ՝ *Ողորմեսցիս* **ի վերայ** մեր *(Սաղ., ԾԻԲ)*: *Երկիր պագցեն* **առաջի** քո *ամենեքեան (Ագ., 96)*: *Խնդրէին* **ի վերայ** նորա *ողորմութիւն ի Թագաւորէն (Սեբ., Ժ)*: *Թագաւորեցուցանեն զՊապ* **ի վերայ** Հայոց *(ԹԱՊՏԱ, 1, ԺԱ)*: *Փակեմք* **ընդդէմ** **նոցին** *զկենացն մուտ եկեղեցականս գաւթի (ԳՆՄՈ, ԼԴ)*: *Մի՛ փակեր*, **գթած, իմ հանդէպ** *զյաջողուած հոգևոր օգտիս (Ն. տ., ՋԲ)*: *Արասցուք աղօթս մշտնջենամռունչս* ... **յաղագս** *անյաղթ և ինքնակալ և աստուածապսակեալ* **թագաւորացդ** *(ՅԴՊՀ, 273)*:

**Բացառման իմաստ նախադրությամբ կառույցներով.** —*Այս իմաստին ծառայում են* **բաց, բայց, թարց, թող** *նախադրությունները: Լրացյալ բայերի իմաստային սահմանափակում չկա:*

Օրինակներ՝ *Չիք այլ ոք* **բաց ի Տէառնէ Աստուծոյ** *մերմէ (Ելք, Ը)*: *Հրաման ետ արձակել զզօրսն յիւրաքանչիւր տեղիս*, **բաց ի զօրաց** *ազգաց հեռաւորաց (Մակ., ԺԱ)*: *Հատին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին*, **բայց ի տղայոց** *ստնդիացաց (Մխ, 3, ԻԷ)*: *Վառեալ այրեաց զամենեցուն ոգիս* **բաց ի սակաւուց** *(ՂՓՊՀ, Հ)*: *Գնացին յաշխարհն Յունաց ԺԴՌ արամբք*, **թող զկանայս** *և* **զմանկտիս** *(ԹԱՊՏԱ, 4, ԺԲ)*: **Թարց երկուց** *այսոցիկ ոչ երբէք լինի առաջարկութիւն, բայց* **թարց այլոց** *լինին առաջարկութիւնք (Դ, Անյաղթ, մեկն. ի վերլուծ. Արիստ., Ը)*: *Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին*, **բայց** *միայն այսց* **կառաց** *(Եզն., 1, Ա)*:

**Միասնության իմաստ նախադրությամբ կառույցներով.**— *Այս իմաստի ձևավորմանը մասնակցում են* **առընթեր, հանդերձ, հետ** *նախադրությունները: Լրացյալ կարող են լինել իմաստային տարբեր խմբերի պատկանող բայեր:*

Օրինակներ՝ *Գնաց Տօբիա* **կնաւն** *իւրով՝ և* **որդւովքն** *իւրովք* **հանդերձ** *(Տօբիթ, ԺԴ)*: *Հանդերձեցաւ կազմեցաւ Պարթևն* **եղբարբն** *իւրով* **հանդերձ** *(Ագ., 28)*: *Առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ* **Կեսարիաւ հետ**՝ *և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր (Բուզ., 5, ԼԲ)*: *Ի բաց ձգեաց զաջոյ զոտն* **սռնապանօքն հանդերձ** *(ՅՄՊՏ, 332ա)*: *Ժառանգեցեր զարդարութիւն* **հանդերձ** *երկնային* **մեծութեամբ** *(ՄԿՊԱԱ, 1, ԺԱ)*: *Ընդ այսոսիկ* **առընթեր սորին** *գայ արդարութիւն (ԳՆՄՈ, ԼԸ)*: *Ապրեցոյց զսուրբ զերանելին Հռիփսիմէ* **ընկերօքն հանդերձ** *ի ձերոյ պղծութենէ և յանօրէնութենէ (Ագ., 230)*:

Միջոցի իմաստը նախադրությամբ կառույցներով.— Այս իմաստի արտահայտմանը մասնակցում է ի ձեռն նախադրությունը։ Լրացյալ լինում են տարբեր իմաստային խմբերի բայեր։

Օրինակներ՝ Երկուս մանկունս փոքրկունս յորդւոցն Պարթևին պրծեալ ումն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն (Ագ., 34)։ Մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի (Մխ, 2, Ղ)։ Այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի (Եղ., 1)։ Ի ձեռն արդարոցն և նուազունքն ապրեցան (ԹԱՊՏԱ, 1, Ա)։ Պարզեսցին ի ձեռն սորին լեզուք համրացելոց (ԳՆՄՈ, ՂԲ)։

## Նախադրությամբ կառույցները պարագայական իմաստներով

Այսպիսի կառույցներով կարող են արտահայտվել տարածական, ժամանակի, ձևի, վիճակի, պատճառի, հիմունքի (նաև հակառակ հիմունքի), նպատակի, չափի պարագայական իմաստները։

Տարածական իմաստը նախադրությամբ կառույցներով.— Այս իմաստն ունի ուղևորության տեղի և դադարման տեղի տեսակներ։

Ուղևորության տեղի իմաստի դրսևորմանը մասնակցում են ընդառաջ, զկնի, զհետ, առաջի, դէպ, ի վերայ, ի մէջ, դէմ, յայնկոյս, յանդիման նախադրությունները։ Լրացյալ դառնում են շարժման բայերը, որոնք նույնիմաստ լրացում կարող են ստանալ նաև ի, առ, ընդ նախդիրներով և հայցականով։

Օրինակներ՝ Ել Տոբիթ ընդառաջ նուոյն իւրոյ խնդութեամբ (Տոբիթ, Ժ)։ Հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն (Եզն., 1, ԻԵ)։ Փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց (Մխ, 1, ԺԱ)։ Յորոց վերայ դիմեսցես դու (Բ, Օրէնք, Գ)։ Մտին Մովսէս և Ահարոն առաջի Փարաւոնի (Ելք, Ե)։ Եկն առաջի Փարաւոնի (Ծնն., ԽԱ)։ Հուր առաջի նորա գնասցէ (Ագ., 500)։ Առաքեաց և զայս գիր վկայսս ի մէջ ձեր (Ն. տ., 514)։ Գնացից ի մէջ ստուերաց մահու (ՄԿՊԱԱ, 2, ԻՁ)։ Իբրև դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն (Սեբ. Ժ)։ Ամենայն զօրքն սկսան դէմ իրերաց անցանել (ՅՄՊՏ, 281 բ)։ Անցանէր յայնկոյս գետոյն (Ղե., Պատմ., Դ)։ Եկեսցէ զկնի իմ (Եզն., Խրատք)։ Նոյն տեսիլ լուսեղէն խաչին ի վերայ դագաղացն էր Թայր յանդիման ամենայն ժողովրդեանն (Մխ, 3, ԿԷ)։

Երբեմն նախադրությամբ կառույցը կարող է մեկնաբանվել ուղևորության տեղի և չափի իմաստներով։ Օրինակ՝ Հասին հարուածք ի վերայ նորա (Բուզ., 6, Թ)։

Նույնատիպ կառույցը կարող է մեկնաբանվել ուղևորության տեղի և նպատակի իմաստներով։ Օրինակ՝ Լուաւ նա դՀռոմայեցւոց, թէ ի կասկածանս անկեալ են վասն նորա, որպէս թէ զկնի զօրու գնաց յարնելս (Մխ, 2, ԻԹ)։

Դադարման տեղի իմաստն արտահայտվում է արտաքոյ, առաջի. դէպ, հանդէպ, ի ներքոյ, ընդդէմ, ի վերայ, ի մէջ, յանդիման, յետոյ յետուստ, դէմ յանդիման, մօտ, մերձ, շուրջ նախադրությունների միջոցով։ Լրացյալ լինում են դադարման բայերը։

Օրինակներ՝ Կացուցին զնա արտաքոյ բանակին Իսրայելի (Յեսու, Ջ)։ Կայցէ արեգակն հանդէպ ձորոյն Գաբաւոնի, և լուսին դէպ դաշտին Էլոնայ (Եղն., 2, ԻԵ)։ Զոր արտաքոյ բանակին սպանանէին յողջակէզ (Ն. տ., 4, ԺԲ)։ Ծխեցեն ի ներքոյ նորա աղբ (Ագ., 74)։ Ընդդէմ արևելից և արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձև (Մխ, 3, ԾԹ)։ Ոչ թողցի այդր քար ի քարի վերայ (Մարկ., ԺԳ)։ Որ նստէր ի վերայ աթոռոյն (Յայտն., Ե)։ Բնակեցոյց յանդիման դրախտին (Ծնն., Գ)։ Կայցէ առաջի ժողովրդեանն (Յեսու, Ի)։ Տեղաց կարկուտ ի վերայ երկրին Եգիպտացւոց (Ելք, Թ)։ Ճաճանչ նշուլիցն սփնաձև յիւրմէն փողփողէր զլոյսն յետոյ ինքեան (Ղև., Պատմ., Ե)։ Ելեալ գնացին բռնութեամբ հարեալ զկոյնն և փախստական արարեալ յետուստ իւրեանց (Սեբ., ԻԴ)։ Բնակեցաւ դէմ յանդիման Բիւզանդիայ (Ն. տ., ԻՋ)։ Ի վերայ նորա կանգնէ զԱստղկեան պատկերն, և մօտ նորա զտուն գանձու պաշտպանութեան կոցն (ԹԱՊՏԱ, 1, Է)։ Բանակեալ էին մերձ բանակին Յունաց (ՍՏՏՊ, 3, ԽԳ)։ Բանակի ի դաշտին մերձ ի քաղաքն Վաղարշակերտ (Ն. տ.)։ Հեղին զարիւնս նոցա որպէս ջուր շուրջ զԵրուսաղեմաւ (Սաղ., ՀԸ)։

Ժամանակի իմաստը նախադրությամբ կառույցներով.— Այս իմաստի դրսևորմանը մասնակցում են յետ, զկնի, հուպ, յետոյ, հետէ նախադրությունները։ Լրացյալի դերում հանդես եկող բայերը իմաստային սահմանափակում չունեն։

Օրինակներ՝ Յետ քակտելոյն աշտարակին ... գործեցին ձեռագործս (Ագ., 584)։ Յետ յարութեանն եկեր զձուկն և ոչ զմիս (Եղն., 4, ԺԲ)։ Յետ եօթն աւուրն ետ հրաման (Ագ., 69)։ Ժամանեցից զկնի դրստերն իմոյ և որդեկին իմոյ Հռիփսիմեայ (Ն. տ., 207)։ Աւերեալ էր երկիրն յասպատակէ Պարսից, այն ինչ հուպ մեռանելն Երուանդայ և ընդ թագաւորելն Արտաշէսի (ԹԱՊՏԱ, 1, Է)։ Յետոյ յԱստուծոյ պատուհասէն ... իմացաւ (Եղն., 1, ԺԲ)։ Որ ի նախնեացն հետէ մոլորեալ դանդաղեցին (Ագ., 522)։

Ձևի իմաստը նախադրությամբ կառույցներով.— *Այս իմաստը դրսևորվում է* առանց, զատ, զաղտ, զօրէն (զօրէնս), իբրև, իբր, որպէս *նախադրությունների միջոցով։ Լրացյալ դառնում են բազմապիսի բայեր։*

Օրինակներ՝ *Յորոց ձեռս տայր* զաղտ *յերանելի* սպարապետէն *Վարդանայ ... զգրեալսն (ՂՓՊՀ, 2, ԼՁ)։* Առանց յապաղանաց ... *զհրամանսն կատարիցեն (Ագ., 272)։ Դիպեցին պերճութիւնք ձեր* հանգոյն մոխրոյ *(Յովբ, ԺԳ)։ Աչս ունին* հանգոյնս պոռնկաց *(Բ, Պետ., Բ)։ Զուղտու զձայն ածէր կառաչելով,* զօրէն ուղտու *այնպէս փարելով (Բուզ., 6, Ժ)։* Զօրէնս երամոյ *թռչնոց բնակեալ էին սոքա ի ծագս վիմաց (Ն. տ., ԺՁ)։* Առանց *զձեզ ինչ* աշխատ առնելոյ *խաղաղաց գնացաք յերկիրն Յունաց, և* առանց գործոյ *պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն (Եղ., 1)։ Սրտի մտօք ծառայեցէք* իբրև Աստուծոյ *և մի՛* իբրև մարդկան *(Ն.տ.)։ Ելից զնա* իբրև զպատկանդարան *դեղեալ նետիւք (Ն. տ.)։ Քեզ հնազանդեցայ միութեամբ կամացն* որպէս հօր *իւրում ազգակիցն քո (ԳՆՄՈ, ԼԳ)։ Բաժակ քո* որպէս զանապակ *արբեցոյց զիս (Ագ., 506)։ Սիրել զընկերն* իբրև զանձն *(Ն.տ., 626)։ Լցից զքեզ զօրօք* իբրև մարախով *(Երեմ., ԾԱ)։ Եկեսցէ առ նա* առանց պատճառանաց և երկիւղի *(ԹԱՊՏԱ, 2, Ջ)։ Կախեա դու քեզ երկու տախտակս քարեղէնս* իբրև զառաջինսն *(Բ, Օրէնք, Ժ)։ Զիս ընկալ ընդ նոսին* իբր *մարդասիրութեան* կարօտեալ *մեծի, շնորհօք քո* ապրեալ *(ԳՆՄՈ, ԼԳ)։ Ընկալար* իբր երկայնամիտ, *առեր* իբրև, զհեզ, *բարձեր* որպէս համբերող, *ստանձնեալ* իբր զպարտական *զփայտն վշտաց (Ն. տ., ՀԷ)։ Եթէ կարող ոք ինչ էր, նախ իւր տեղիս* զատ ի նմանէ առնէր *(Եզն., 1, ԺԷ)։*

*Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել ձևի և վիճակի իմաստներով։*

Օրինակներ՝ *Զաշխարհս Հայոց ի նա հաւատայ* առանց *պարսիկ* վերակացուի *(Մխ, 3, ԾԸ)։ Հրաման տայր ...* զատ ի միմեանց *փութալ հանել ի գեօղն Վարազկերտ (ՂՓՊՀ, 3, ԿԸ)։*

Վիճակի իմաստը նախադրությամբ կառույցներով.— *Սա արտահայտվում է* առանց, ի վերայ, արտաքոյ, հանդերձ *նախադրությունների միջոցով։ Լրացյալ դառնում են տարբեր իմաստ ունեցող բայեր։*

Օրինակներ՝ *Ոչ* առանց ամպոյ *ետես (Ագ., 550)։ Ոչ եթող երբեք Աստուած զաշխարհս* առանց վկայութեան *(Եզն., 3, ԺԵ)։ Երկիր եպագ կաթողիկոսն* ի վերայ երեսաց *իւրոց (ՄԿՊԱԱ, 2, ԺԴ)։ Ես անպարտ և*

արտաքոյ մեղադրութեան մնացից (ՅԴՊՀ, 283)։ Առանց սեան ունի զհաստատութիւն (ԹԱՊՏԱ, 4, է)։ Ինքն թագաւորական զգեստիւքն հանդերձ ագելուն անցանէր ընդ գետն (ՄԿՊԱԱ, 1, ԻԱ)։ Եւ տանել ի Գաղղիուս հանդերձ երկաթի կապանօք (Մխ, 2, ՁԸ)․

**Պատճառի իմաստը նախադրությամբ կառույցներով.—** Այս իմաստի դրսևորմանը ծառայում են աղագաւ, յաղագս, ի սակս, սակս, ի պատճառս, պատճառաւ, վասն նախադրությունները։ Լրացյալ կարող են լինել տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր։

Օրինակներ՝ Քանզի անմարմինք են հրեշտակք և դեք, յայն սակս և ծնունդք ոչ գոն նոցա (Եզն., 1, ԻԴ)։ Գովեմք զնոսա յաղագս զսահմանս հրամանացն պահելոյ (Ն. տ., ԺԱ)։ Այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել (Ն.տ., 2, Ե)։ Տրտմեցաւ արքայ վասն որդւոյն իւրոյ (Բ, Թագ., ԺԹ)։ Իսկ զինչ իցեն օրէնք. յանցուածոց վասն յաւելան (Գաղ., Գ)։ Ուր կերակրէր անդ ժամանակ և ժամանակս և կէս ժամանակի յերեսաց օձին (Յայտն., ԺԲ)։ Ելեալ երթայր հատուածի պատճառաւ ի կողմանս Հայոց (Ագ., 28)։ Սիրոյ պատճառաւ փախստեան աղագաւ գայ առ խոսրով (ՅՄՊՏ, 255բ)։ Ընդհուպ իսկ հատուածեալ ի Հոռոմս ձեռնատուր լինին ի սակս հարկաց (ՅԴՊՀ, 100)։ Ի հայրապետէն Յովսեփայ խնդրէր տալ նմա զմեծ դաստակերտս իւր ի պատճառս գնոց արծաթոյ (Ն. տ. 112)։ Սակս այսպիսի չար մախանաց միշտ ի ներգապատիր միտս ոստիկանն ընդ հայրապետին բերեալ՝ ի հրամանէ նորա ծառայք նորա ըմբռնեալ զեղբայր մեծին Յովսեփայ, յակունս Մեծամորի սպանեալ՝ ընկեցին զնա ի ծովակն (Ն. տ., 113)։

Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել և՛ պատճառի, և՛ նպատակի իմաստներով։

Օրինակներ՝ Ամենեցուն աչք ի նա հայէին յաղագս տրոհել և ճանաչել մարթելոյ նորա զհօգևոր այն մասանց ընտրութիւնս (ՅԴՊՀ, 148)։ Զուեալ գնաց առ ոստիկանն Ափշին իբրև ի պատճառս պարգևաց նմա (Ն. տ., 171)։

Ի ձեռն նախադրությամբ կառույցը կարող է միջոցի կամ պասիվ ներգործության իմաստից զատ մեկնաբանվել նաև պատճառի իմաստով։ Օրինակ՝ Աստի ես ի ձեռն կապելոյս և մեռելոյս եհաս մեզ փախստական լինել (Ագ., 780)։

**Հիմունքի իմաստը նախադրությամբ կառույցներով.—** Այս իմաստը շատ սակավ է հանդիպում նախադրությամբ։ Երբեմն իբր նախադրությունը գործիականի հետ կարող է արտահայտել հիմունքի

իմաստ։ Օրինակ՝ Զօր և զպետս և զաւր բանակին ի մի վայր ժողովեալ պահէին իբր նրամանաւ արքունի (Եղ., 3)։

Հակառակ հիմունքի (զիջման) իմաստը կարող է արտահայտվել առտափոյ+սեռական կառույցով։ Օրինակ Առտափոյ արքունի հրամանին դիւրութիւն առնէին նոցա (Եղ., 7)։

Նպատակի իմաստը նախադրությամբ կառույցներով.— Այս իմաստի դրսևորմանը ծառայում են աղագաւ, յաղագս, սակս, վասն, ի վերայ նախադրությունները։ Լրացյալի դերում կարող են հանդես գալ բազմապիսի բայեր։

Օրինակներ՝ Երկու որդիք նորա ի վերայ տէրութեանն կռուէին (Եղ., 7)։ Աւելի քան զայս տացեն սակս հոգւոյ (ՄԿՊԱԱ, 1, ԻՁ)։ Մատնեցան ի մահ վասն անուանն Աստուծոյ (Ագ., 582)։ Զայս գիտութեան աղագաւ ձեզ ծանուցանեմք (ՅՄՊՏ, 242 բ)։ Ոչ ոք ոչ էր այն՝ որ գոնէ ի վերայ գործէր ոգւով չափ սակս նորոգման մայրաքաղաք եկեղեցւոյն (ՅԴՊՀ, 358)։ Թերևս իբր զձեռնասուն իւր յայնմհետէ նա գտցի ի սակի հնազանդութեան յաղագս առ նա անցուցանելոյ զբաղում երախտեացն տեսակս (Ն. տ., 202)։ Ամենեցուն աչք ի նա հայէին յաղագս տրոհել և ճանաչել մարթելոյ նորա զհոգևորացն մասանց ընտրութիւնս (Ն. տ., 148)։

Չափի իմաստը նախադրությամբ կառույցներով.— Այս իմաստի արտահայտմանը ծառայում են քան, չափ նախադրությունները։ Ընդ որում նկատելի է, որ քան նախադրությունը քիչ դեպքերում է բայի լրացում ձևավորում, քանի որ այն ածականի և մակբայի համեմատության խնդիր է կազմում։ Պատահական չէ, որ քան+զ+հայցական կառույցով լրացում ստանում են գերազանցապես ածականական և մակբայական ծագմամբ բայերը (բարձրանալ, առաւելուլ և այլն)։ Մինչդեռ չափ նախադրությամբ կառույցի համար լրացյալ կարող են լինել տարբեր իմաստի բայեր։

Օրինակներ՝ Եւս քան զոսին բաւեա առ նոսին տիրեալ համայնից անհաւորապէս (ԳՆՄՈ, ԻԹ)։ Յորում չարչարիմ կարանօք չափ իբրև զչարագործ (Բ, Տիմոթ, Բ)։ Որ ինչ ուխտիցէ մարդ երդմամբ չափ (Ղևտ., Ե)։ Եւ բարձրացաւ քան զամենայն ժողովուրդն բիկամբք չափ ի վեր (Ա, Թագ., Ժ)։ Արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ (Եղ., 2)։ Գտանէ յանհնարին վտանգս եկեալ զհիւղն քան զառաջին անկազմութիւնն (Եղն., 1, Է)։ Նստուցի յաթոռ քո՝ բարձրացուցեալ քան զամենայն բազաւորս երկրի (Ագ., 397)։ Բարձրացուսցէ զնա քան զըն-

կերս իւր (Սիրաք, ՔԵ)։ Երկրպագուքն են առաւելեալք քան զանբան տարերսն (Եղ., 5)։ Քան զաւազ բազմացան (Սաղ., ՃԼԸ)։

## Բ. Բայի լրացումները նախդրավոր կառույցներով

Գրաբարի նախդիրները՝ առ, զ, ընդ, ըստ, ի, ց, դրվելով հոլովաձևերի վրա՝ արտահայտում են տարբեր հարաբերություններ և, նախադրությունների նման, ձևավորում լրացումը։ Դրանք ամենից շատ մասնակցում են բայի լրացումների դրսևորմանը։

Գրաբարում նախդիրները ծառայել են բազմաթիվ և բազմազան հարաբերություններ արտահայտելուն։ Ընդ որում դրանք այնպիսի հարաբերություններն են, որոնք մեծ մասամբ չեն դրսևորվում հոլովաձևերով կամ նախադրությամբ կառույցներով։ Այսպես, նախդրավոր կառույցներով արտահայտվում են հանգման, մատուցման, վերածման, հաղորդման, ուղղության, վերաբերության, փոխադարձ կապի, միասնության, համեմատության, փոխարինության, միջոցի, ներգործող խնդրի, պասիվ ներգործության խնդրային իմաստներ, որոնց մի մասը հոլովաձևերով կամ նախադրությամբ կառույցներով սովորաբար չի արտահայտվում (վերածման, հաղորդման, փոխադարձ կապի, ներգործող խնդրի, համեմատության, պասիվ ներգործության)։ Անշուշտ, նկատի չունենք այն դեպքերը, երբ այս կամ այն նախդրավոր կառույցը հոմանիշ է որևէ հոլովաձևի կամ նախադրությամբ կառույցի (որի մասին նշել ենք նախադրությամբ կառույցների քննարկման կապակցությամբ)։ Այսպես, երբեմն նույն հարաբերությունն արտահայտվում է և՛ նախդրավոր կառույցով, և՛ հոլովաձևով։

**Օրինակներ՝** *Սպիտակ* **ցլուք** *և սպիտակ* **նոխազօք**, *սպիտակ* **ձիովք** *և սպիտակ* **ջորովք**, *ոսկեղէն և արծաթեղէն* **զարդուք** ... **ոսկով** *և* **արծաթով**, **ի հանդերձս** *պայծառս և* **ի զարդս** *գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր (Ագ., 22)։ Պատրաստեցէր զնոսա* **տանջանացն** *յաւիտենից, յանմահ* **սատակումն** *յանանց դատաստանացն (Ն.տ., 84)։ Գունակ գունակ* **ծաղկօք** *զարդարէ* **ի** *գունագոյն* **երանգս** *(Ն.տ., 268)։* **Առ** *ամենայն* **ազգս** *տէրութեան իմոյ՝* **արեաց** *և* **անարեաց**, *բազմացի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ (Եղ., 1)։ Անդադար խնդրուածս և պաղատանս մատուցանէին* **առ Աստուած՝ տուողին** *ամենայն բարութեանց (ՄԿՊԱԱ, 1, ԻԳ)։ Բաժանին* **յերիս մասունս՝ բարւոյ, չարի** *և* **միջակի** *(Դաւիթ, Մեկնութիւն քերականին)։ Իշխանն Վարազ Տրդատ* **ընդ երիս** *հարկէր՝* **Խազրաց, Տաճկաց** *և* **Հոռոմոց** *(ՄԿՊԱԱ, 3, ԺԲ)։*

Նախդրավոր կառույցների քննությունը ցույց է տալիս, որ նախդիրները բազմիմաստ են (բացի ց-ից)։ Այսպես, առ, ընդ, ի նախդիրներով կարող են արտահայտվել մի քանի տասնյակ իմաստներ։ Առ+տրական կառույցով արտահայտվում են սահմանափակման, տեղի, պատճառի, առ+հայցական կառույցով՝ հանգման, հաղորդման, ուղղության, վերաբերության, սահմանափակման, շահի, մատուցման, տեղի, պատճառի, նպատակի, առ+բացառական կառույցով՝ սահմանափակման, նպատակի, պատճառի, առ+գործիական կառույցով՝ ներգործող խնդրի, համեմատության, ժամանակի, պատճառի, տեղի իմաստներ։ Ընդ+տրական կառույցով արտահայտվում են հանգման, հաղորդման, ուղղության, վերաբերության, փոխարինության, միասնության, տեղի, ընդ+հայցական կառույցով՝ հանգման, վերածման, վերաբերության, պասիվ ներգործության, ուղղության, միջոցի, համապատասխանության, ձևի, տեղի, ժամանակի, միասնության, ընդ+գործիական կառույցով՝ միջոցի, տեղի, ձևի իմաստներ։ Ի+տրական կառույցով դրսևորվում են հանգման, մատուցման, տեղի, ձևի, ժամանակի, նպատակի, ի+հայցական կառույցով՝ հանգման, մատուցման, հաղորդման, վերածման, ուղղության, վերաբերության, սահմանափակման, միջոցի, տեղի, ժամանակի, նպատակի, ձևի և այլ իմաստներ։ Բազմաթիվ իմաստներ են արտահայտվում նաև զ, ըստ նախդիրների միջոցով։ Զ նախդիրը հայցականի հետ, բացի որոշյալության իմաստից, ծառայում է նաև միջոցի արտահայտմանը։ Զ+տրական կառույցով արտահայտվում են հանգման , զ+բացառական կառույցով՝ հանգման, սահմանափակման, վերաբերության, պասիվ ներգործության, նպատակի, հիմունքի, զ+գործիական կառույցով՝ հանգման, վերաբերության, տեղի, պարառական, չափի իմաստներ։ Ըստ+տրական կառույցով արտահայտվում են համապատասխանության, տեղի, ձևի, ըստ +հայցական կառույցով՝ համապատասխանության, տեղի, ժամանակի իմաստներ։

Նախդրավոր կառույցներով արտահայտվող իմաստների թվարկումից իսկ երևում է, որ դրանք շատ դեպքերում համընկնում են, այսինքն նույն իմաստն արտահայտվում է տարբեր նախդիրներով ու նախդրավոր կառույցներով։ Անշուշտ, տարբեր նախդիրների միջև իմաստների կատարյալ համընկնում չկա. բոլոր դեպքերում տարբեր նախդիրներ իմաստային նրբերանգներ են արտահայտում։ Այսպես, եթե վերցնենք տեղի իմաստը, ապա այն տարբերություն ունի զանա-

զան կառույցներով արտահայտվելիս։ Առ+տրական կառույցի դեպքում ցույց է տալիս արտաքին մոտավոր տեղ։

Օրինակներ՝ Բնակեցաւ Մովսէս առ առնն (Ել., Բ)։ Եկ նիստ առ պատուանդանիս իմում (Յակովբ, Բ)։

Մինչդեռ ընդ+գործիական կառույցով արտահայտվում է մի բանի տակ նրբիմաստ։

Օրինակներ՝ Ծածկեաց զնա ընդ աւազով (Ել., Բ)։ Ընդ նոյն ծառովք և մեհենեօք զձեզ այրեսցէ (ՄԿՊԱԱ, 2, Խ)։

Իմաստային այդ տարբերություններն էլ պայմանավորում են տարբեր նախդիրների գործածությունը։ Սակայն, այնուամենայնիվ, նկատելի է, որ նախդիրների իմաստները շատ ընդհանուր են, երբեմն ոչ հստակորեն տարբերակված։ Այս հանգամանքն է պատճառը, որ հնարավոր է դարձնում նախդիրների գործածությունը մեկը մյուսի փոխարեն։ Այսպես, նույն իմաստով կարող են գործածվել ի և ընդ, ի և առ, ի և ց, առ և ընդ նախդիրները։

Օրինակներ՝ Մտցէ որպէս ջուր ի փոր նորա, որպէս ձէթ ընդ ոսկերս նորա (Սաղ., ԾԸ)։ Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց, ի բառնալ տէրութեանն յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել զնա Արտաշրի որդւոյ Սասանայ ... ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան (Ագ., 18)։ Միամտեալ և հաւանեալ և նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն (Ն. տ., 20)։ Առաքէր զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան յերևելի և յականաւոր ազգն Արծրունեաց ... և առ ազատորեարն Ռըշտունեաց (ՂՓՊՀ, 3, Հ)։ Զօր ի խաչին սաստելով ասէր ցեղկելի յիւր ընկերն (ՂՓԹ)։ Վասն այնորիկ ունի միաբանութիւն ներկայն առ յարանձականն, յարակայն ընդ գերակատարին (Անանուն մեկնիչ քերականի, ԺԴ)։

Սակայն սա չի նշանակում, թե այդ նախդիրները համընկնում են իմաստով բոլոր դեպքերում։ Տարբեր նախդիրներ, ընդհանրություններ ունենալով հանդերձ, որոշակիորեն տարբերվում են այլ դեպքերում, այսինքն դրանց համընկնումը մասնակի է։ Այդ է պատճառը, որ այլ իմաստների դեպքում դրանց գործածությունը մեկը մյուսի փոխարեն, սխալ լինելով, աչքի է զարնում։ Այսպես, ճիշտ չէ ի նախդրի գործածությունը զ նախդրի փոխարեն՝ որոշյալ առման իմաստով։

Օրինակներ՝ Ի յոռութեանցն նորա յազնուագոյնսն զատուցանել կամեցաւ (Եզն., 1, Ա)։ Հասեալ ասպատակէին յերկիրն Հայոց (Բուզ.,

4, ՄԸ)։ Տրդատայ բուռն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վաւաշէր (Մխ, 2, ԿԳ)։ Ոչ ի նստելն իմանայր և ոչ ի յառնելն զգայր ամենևին (ՄԿՊԱԱ, 2, ԺԳ)։

Նույն կարգի սխալ է նաև հակառակը, այսինքն՝ զ-ի գործածությունը ի-ի փոխարեն։

**Օրինակներ՝** Գուցէ գտցի ոք և ընդ ակամբ հայեսցի զանդ **երթալն** իմ (ՅԴՊՀ, 286)։ Մեծարէր զամենայն **աւուրս** հաշտութեան և խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր (Բուզ., 4, ԺԶ)։

Ճիշտ չէ նաև **ընդ** նախդրի գործածությունը զ-ի փոխարեն։ Օրինակ՝ Ոչ կամեցեալ **ընդ** ձեր կորուստն (Ագ., 521)։

Նախդրի իմաստային անհստակության պատճառով երբեմն այն կարող է գործածվել այնպիսի հոլովաձևի հետ, որը տվյալ հարաբերությունն արտահայտում է առանց նախդրի։ Այսպես է զ նախդիրը գործիականի հետ՝ վերջինիս միջոցի իմաստի դեպքում։ Օրինակ՝ ի միասին ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին զմիագոյն զմիանշան զհամահանդերձ **զարդու** (Բուզ., 4, ԺԶ)։

Որոշ նախդիրներ երբեմն չեն գործածվում, և տվյալ հոլովաձևը միայնակ է արտահայտում **նախդիր+հոլովաձև** կառույցի իմաստը։ Այսպես, երբեմն **ի** նախդիրը չի գործածվում հայցականի և տրականի մոտ։

**Օրինակներ՝** Եկն՝ եւ նա ի գաւառ անդր, և եկն **Արքամէ** (Մակ., Թ)։ **Օրինակ** առէք չարչարանաց և յերկայնմտութեան զմարգարէսն (ԿՎՄ, 8)։ Կապակոտոր լինէր, չմնայր **ճաւանութեան** մինչև զօրքն Պարսից եկեսցեն (Բուզ., 4, Ի)։

Այլ է **ի** նախդրի զեղչումը յ-ով (երբեմն և հ-ով) սկսվող բառերից առաջ կամ **ի+հայցական** կառույցի հետ հարադրված գործածության դեպքում։ Այս երևույթը պայմանավորված է հնչյունական գործոններով։

**Օրինակներ՝** Թափէ զնա **յարձակմանէ** հիւսիսականացն ազգաց (Մխ, 2, ԺԲ)։ Ոչ է այլայլեալ **յարմարութենէ** (ԳՆՄՈ, Հ)։ Ոչ դադարէ զալիսն **յուզելոյ** (ԹԱՊՏԱ, 3, Թ)։ Որ ոչ էր ի դստերէն Մաքսիմիանոսի, այլ **Հեղինեայ** պոռնկէ ծնեալ (Մխ, 2, ՁԳ)։ **Ազգէ** յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո (Սաղ., ՀԸ)։

Թեև գրաբարում յուրաքանչյուր նախդիր որևէ հոլովաձևի հետ որոշակի իմաստ է արտահայտում, և ամեն մի նախդրավոր կառույց ծառայում է որևէ իմաստի արտահայտմանը, սակայն նկատելի է, որ երբեմն նույն նախդիրը նույն իմաստն արտահայտում է տարբեր հո-

լովների հետ։ Այսպես, տեղի և ժամանակի իմաստները արտահայտվում էին ի+եզակի տրական և ի+հոգնակի հայցական կառույցներով։

Օրինակներ՝ *Ոյք նստէին* ի խաւարի և ի ստուերս *մահու* (*Սաղ., ՃԶ*)։ *Բնակեաց Իսրայէլ* յերկրին *Եգիպտացւոց* (*Ծնն., ԽԷ*)։ Յաւուրսն *յայնոսիկ ... ծագեցից* (*Ագ., 396*)։ Յայնմ աւուր *ծանիջիք* (*Ն. տ., 714*)։ *Ել և խօսեաց* ի սիրտս *ծառայից քոց* (*Գ, Թագ., ԺԹ*)։

*Այս ընդհանուր օրինաչափությունից շեղումը որոշակի էր գրաբարում։ Շատ դեպքերում տեղի և ժամանակի իմաստները կարող էին արտահայտվել նաև* ի+եզակի հայցական *կառույցով.*

Օրինակներ՝ *Բնակեաց Յովսէփ* յԵգիպտոս (*Ծնն., Ծ*)։ *Կամիս նստել* յԵրուսաղէմ (*Նէեմի, Զ*)։ *Յառաջին խորանն յամենայն* ժամ *մտանէին քահանայքն* (*Եբր., Թ*)։ *Երեք հազար* ի *մին* գիշեր *սատակեցան* (*ՅՄՊՏ, Վասն մահուանն Տիրանայ*)։

*Հանգման իմաստը նույնպես կարող է արտահայտվել և՛* ի+տրական, *և՛* ի+հայցական *կառույցներով։*

Օրինակներ՝ *Կապեալ էին* յաղքատութեան *որպէս* յերկաթս (*Սաղ., ՃԶ*)։ *Կէսք* ի կռապաշտութեան *և* ի սպանութիւնս, ի պոռնկութեան *և* ի *բազմազգի* չարիք *կաշկանդեալ զմածեալ կան* (*Բուզ., 4, Ե*)։

*Նույն իմաստը ևս կարող է արտահայտվել* ընդ+տրական *և* ընդ+հայցական *կառույցներով։*

Օրինակներ՝ *Խառնեալ* ընդ *այլ* արմատս՝ *քնածու լինի քնահատաց* (*Եզն., 1, Ա*)։ *Խառնեալ* ընդ *այլ* դեղոյ՝ *մաղձադեղ է բուժիչ ի մահուանէ* (*Ն. տ.*)։ *Հաւասարեսցի մահս մեր* ընդ մահու *արդարոցն, և հեղումն արեան մերոյ* ընդ արիւն *սուրբ մարտիրոսացն* (*Եզ., 5*)։

*Միասնության իմաստը կարող է արտահայտվել և՛* ընդ+տրական, *և՛* ընդ+հայցական *կառույցներով։*

Օրինակներ՝ *Բազմեալ էին* ընդ Յիսուսի *և* ընդ աշակերտս *նորա* (*Մատթ., Թ*)։ Ընդ պատառոյն *եմուտ սատանայ* (*Եզն., 2, ԻԲ*)։ *Թաղեցէք զիս* ընդ հարս *իմ* (*Ծնն., ԽԹ*)։

*Ուղղության իմաստը կարող է արտահայտվել* ընդ+հայցական, *հազվադեպ նաև* ընդ+տրական *կառույցներով։*

Օրինակներ՝ *Ծանր քինու հայէր հայր աղջկանն* ընդ փեսային *իւրում* (*ՂՓՊՀ, Ի*)։ *Որ հայէր* ընդ հարաւ (*Ելք, ԽԸ*)։ *Հայեցեալ աչօք քովք* ընդ ծովակողմն *և* ընդ հիւսիսի *և* ընդ հարաւ *և* ընդ արևելս, *տես աչօք քովք* (*Բ, Օրէնք, Գ*)։

Համապատասխանության իմաստը ևս կարող է արտահայտվել քստ+տրական և ըստ+հայցական կառույցներով։

Օրինակներ՝ Որ յաւուրցն առաջնոյ թոյլ ետ գնալ մարդկան ըստ կամաց իւրեանց ... Եւ գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց (Ագ., 236)։ Դուք ըստ մարմնոյ դատիք (Յովհ. Ը)։ Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք (Ն.տ., Է)։

Վերաբերության իմաստը կարող է արտահայտվել ընդ+տրական և ընդ+հայցական կառույցներով։

Օրինակներ՝ Բազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ, ընդ ճաչասրտութեանն զարմացեալ և ընդ բազում անէրկիւղութիւնն (Բուզ., 4, ԺԶ)։ Մի՛ հոգայք ընդ ոգւոյ թէ զինչ ուտիցէք, և մի՛ ընդ մարմնոյ թէ զինչ զգենուցուք (Ղուկ., ԺԲ)։ Զարմացան նոքա ընդ գեղ նորա յոյժ (Յուդիթ, Ժ)։ Ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան (Եզն., 1, Ա)։

Ասվածից երևում է, որ գրաբարի նախդիրները ինչ-որ չափով գտնվում էին համանշային հարաբերության մեջ։ Հենց այդ համանշությունն է պատճառը, որ երբեմն նույն հոլովաձևի հետ գործածվում էին երկու նախդիրներ։ Այսպես, ուղղության իմաստը երբեմն արտահայտվում էր ընդ+ի+հայցական կառույցով։

Օրինակներ՝ Որ հայի ընդ յարևելս (ՅՄՊՏ, 277ա)։ Զգեաց զճոպան և արկ ընդ յաչ թէկն (Ն. տ., 282ա)։

Նույն կառույցը գործածվում է նաև հանգման իմաստի դեպքում։

Օրինակներ՝ Ճակատեցան ի պատերազմ ընդ յիրեարս (ՅՄՊՏ, 314ա)։ Խառնեցան ընդ յիրեարս (Ն. տ., 328ա)։

Ուղևորության տեղի իմաստը ևս կարող է արտահայտվել նույնպիսի կառույցով։

Օրինակներ՝ Յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ յարևմուտս (Սեբ., Ա)։ Տարաւ անցոյց ընդ յԱստեղօնս (ՅՄՊՏ, 328բ)։

Դադարման տեղի իմաստի դրսևորման համար նույնպես կարող է գործածվել նշված կառույցը։

Օրինակներ՝ Սա ճոխաբար պսակի թագընկալութեամբ ընդ առաջին ի Հայս (ՅԴՊՀ, 20)։ Կայ ընդ յայլ հայրսն ի Հայրաբլուրն (ՅՄՊՏ, 323ա)։

Ըստ+ի+հայցական կառույցը կարող է գործածվել վերածման իմաստի դրսևորման համար։ Օրինակ՝ Արդ որպէս միտք գրեցելոցն ըստ այնքան յեղանակս բաժանեալ են (Ստ. Սիւնեցի, Մեկնութիւն քերականին, Բ)։

Համանիշ նախդիրներն ավելի շատ գործածվում էին նույն նա-

խադասության մեջ տեղի մասնավորեցում արտահայտելու դեպքում (մասնավորեցնող բացահայտչային կիրառություն)։ Այսպես կարող էին գործածվել առ և ի նախդիրները։

Օրինակներ՝ *Առեալ ի նմանէ առաքէր* առ արքայն յերկիրն *Հայոց* (*ԿՎՄ, 13*)։ *Նորա առաքեալ զմի յեղբարց իւրոց* ի Հրէաստան, *որում անուն էր Սենեքիայ,* առ Հիւրկանոս (*Մխ, 2, ԻԴ*)։ *Վերացաւ* առ Հայր *իւր* յերկինս (*Եղ., 7*)։ *Զմարմին երանելոյն Յուսկայ տարան* առ ճայրն *իւր* ի գիւղն *Թորդան* (*ՍՏՏՊ, 2, Ա*)։ *Եղաւ* առ *Արծրունեաց* իշխանն *ի* կողմ *արևելից ճակատուն* (*ՅՄՊՏ, 307ա*)։ *Իջին երեք յերեսուն իշխանացն* ի վէմն առ Դաւիթ յայրն *Ողողոմայ* (*Ա, Մնաց., ԺԱ*)։ *Ինքն* առ աւագսն *Պարսից լինէր* ի բանակի (*ՂՓՊՀ, ՀՁ*)։ *Եկն Դաւիթ* ի Նոմբա՝ առ *Աքիմելէք* քահանայ (*Ա, Թագ., 3, ԻԱ*)։ *Որ անդէն* յոստանին առ նոսա *մնալոց էին* (*ՂՓՊՀ, ԿԸ*)։

*Մասնավորեցման իմաստը արտահայտվում է նաև նույն նախդրով։*

Օրինակներ՝ *Թաղեցին զնա* ի քաղաքին *իւրում* յԱրիմաթեմ (*Ա, Թագ., ԻԸ*)։ *Գային հասանէին* յերկիրն *Հայոց յԱյրարատեան* գաւառ, ի *Վաղարշապատ* քաղաք, ի ճանգստակայս *սրբոցն* (*Ագ., 881*)։ *Ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին* ի գաւառն *իւրեանց* ի կողմանս *Աղուանից* ի սահմանս *Հայոց* ի Հաբանդ, ի գեօղն՝ *որ անուանեալ կոչի Ամարազ* (*Բուզ., 3, Զ*)։ *Զորս թողին կապեալս* ի Նիւշապուհ ի դղեկին (*ՂՓՊՀ, Ծ*)։ *Որ էր մնացեալ տղայ* ի դայեակս *իւր* ի Տայս (*Ն. տ., ԿԲ*)։ *Ելեալ բնակէին* ի *նշանաւոր պրակին* ի *խունաբերձ* տեղւոջ ի *սարևանդակ* վայրի (*ՄԿՊԱԱ, 2, ԻԹ*)։

*Մասնավորեցնող իմաստով կարող են գործածվել նաև ի և ընդ նախդիրները*։ Օրինակ՝ *Տնկեաց, ասէ, Աստուած զդրախտն* յեդեմ ընդ արևելս. *այսինքն յերկրի յարևելս* (*ԹԱՊՏԱ, 1, Ա*)։

Առ *նախդիրը կարող է գործիականի հետ դրվել մոտավորության իմաստով՝ զուգակցվելով ի նախդրին*։ Օրինակ՝ *Եկեալ բնակէին* առ ի ստորև *Կողայ* (*ՅԴՊՀ, 27*)։

*Նպատակի և պատճառի իմաստների արտահայտման համար* առ *նախդիրը շատ հաճախ զուգակցվում էր* ի *նախդրին՝ դրվելով անորոշ դերբայի, բայանվան կամ այլ գոյականի հայցականի վրա։*

Օրինակներ՝ *Թուղթս բազումս տայր* առ ի երկեցուցանել *զիս* (*Գ, Եզր., Զ*)։ *Տքնեցաւ անձն իմ* առ ի ձանձրանալ (*Սաղ., ԾԺԸ*)։ *Ճեպէին* առ ի տեսիլ *ցուցական սքանչելեացն* (*Ագ., 725*)։ *Սատանկապէս պատ-*

րաստեցան առ ի փորձութիւն գաղտնի մեքենայիցն (Եղ., 2)։ Սփռէր տարածանէր ընդ գաւառս աշխարհին առ ի հանգիստ ձմերոցին (Եղ., 3)։ Կոչէ զԲարիկ առ ի կատարել զառ ի նա խոստմունսն (ՄԿՊԱԱ, 2, Ա)։ Սփռեցաւ ժողովուրդն ... ժողովել եղէգն առ ի յարդ (Ելք, Ե)։

Այս դեպքում ի նախդիրը կարող է նաև կրկնվել։ Օրինակ՝ Կապեցէք զայդ ի խրձունս առ ի յայրել (Մատթ., ԺԳ)։

Առ+ի+հայցական կառույցը նպատակի կամ պատճառի իմաստը ավելի շատ արտահայտում է տրոհված ձևով։

Օրինակներ՝ Առի զքեզ ի վերջէ վանաց հովուացն, առ ի լինել առաջնորդ ժողովրդեան իմում Իսրայելի (Ա, Մնաց., ԺԷ)։ Ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից (Եզն., 1, Գ)։ Քարշեալ ի բաց ընկեցին զմարմինս նոցա՝ առ ի կեր լինել շանց քաղաքին և գազանաց երկրի և թռչնոց երկնից (Ագ., 201)։ Ժողովեսցեն բազմութիւն մանկտւոյ, առ ի նիւթ վարդապետութեան (Ն. տ., 839)։ Սկսանէր այնուհետև սուրբ կաթողիկոսն Հայոց Գիւտ առ ի չժուժալ սրտին՝ յայտնապէս ոխութեամբ գրգռել ընդ անօրէն ուրացելոցն (ՂՓՊՀ, ԿԴ)։

Նույնպիսի կառույցը կարող է ծառայել նաև վերաբերության իմաստի արտահայտմանը։

Օրինակներ՝ Սա նախ առ ի հաւատսն գտանի դրժող (Մխ, 2, ՁԸ)։ Առաւել ևս փութայր, զուն եդեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն (Բուզ., 3, Ջ)։ Կասկածէր երկիւղիւ առ ի յառաջիկայսն զանարժան գոռոզացելոցն բեկանել զսիրտս (ՂՓՊՀ, ԿԳ)։

Սովորաբար բացառական հոլովի հետ առ նախդիրը գործածվում է ի նախդրին զուգահեռ։

Օրինակներ՝ Մերկացաւ առ ի զգեստուէն արտաքնոյ (ՅԴՊՀ, 104)։ Զիս առաքեաց Աստուած առաջի ձեր առ ի թողլոյ ձեզ զաւակ յերկրի (Ծնն., ԽԵ)։ Նա խօսեսցի առ ի քէն ընդ ժողովրդեանն (Ելք, Ի)։ Գտի շնորհս և ողորմութիւն առ ի քէն (Թիւք, ԺԱ)։ Զպղծեալն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ (Եբր., Թ)։ Մի՛ մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ (Եղ., 3)։ Առ ի չգոյէ կաթին յայն յօժարեաց (Եզն., 1, ԺԲ)։ Ոչ ինչ զանգիտեցին առ ի յոյժ բազմութենէ (ՄԿՊԱԱ, 2, Բ)։

Սակայն առ նախդիրը կարող է բացառականի հետ գործածվել նաև առանց ի-ի։

Օրինակներ՝ Մի՛ առ ականէ ծառայել իբրև մարդահաճոյք (Եփես., Զ)։ Ձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ (Յակ., Գ)։ Եւ հաստուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշրէ. և զհետ մտա-

նելով Պարսից առ պատճառէ, որպէս թէ փախստական վարելով զնա ընդ Ասորեստան (Մխ, 2, ՀԴ)։

Գրաբարում նախդիրները սովորաբար դրվում են տվյալ հոլովաձևի վրա, ընդ որում զ, յ(ի) նախդիրները կցվում են բառաձևին, ինչպես՝ զտուն, յարքայէ և այլն, իսկ մյուսները հարադրվում են (շեշտազուրկ լինելով՝ արտասանվում են հոլովաձևի հետ իբրև արտասանական մի ամբողջություն), ինչպես՝ առ արքայ, ընդ առաւօտն, ըստ կամաց, ի կարգի և այլն։

Եթե նախդիր ստացող բառը նախադաս լրացում է ունենում, ապա նախդիրը դրվում է լրացման վրա։

Օրինակներ՝ Զայս ամենայն առաջինի զօրավարն խօսեցաւ ընդ ամենայն բազմութեանն (Եղ., 5)։ Զոր արար Տէր Աստուած քո ընդ երկուս թագաւորսն (Բ, Օրէնք, Գ)։ Ըստ ձերոց օրինացն դատեցարուք (Յովհ., ԺԸ)։ Որ ըստ իւրեանց ցանկութեանցն գնայցեն (Բ, Պետ., Գ)։ Զոր ի նախակարգ բանիս նշանակեմք (ԿվՄ, 9)։ Բազմեցան յիւրաքանչիւր չափու (Բուզ., 4, ԾԴ)։ Կին առնակին ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք (Հռովմ., Է)։

Սակայն մի քանի նախդիրներ, առանձնապես ընդ, ի, զ, երբեմն կարող են դրվել և՛ նախադաս լրացման կամ լրացումների, և՛ տվյալ հոլովաձևի վրա։ Այս երևույթն առկա է ընդ+տրական, ընդ+հայցական, ի+տրական, ի+հայցական, զ+հայցական, ի վերայ+բացառական կառույցների դեպքում։

Օրինակներ՝ Կայի ես ի խաւարչուտ ի խոր յանհնարին վիրապին (Ագ., 233)։ Քանդէին զնանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն յաւանի (Ն. տ., 786)։ Դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան (ԿվՄ, 11)։ Տուաւ ի ձեռս իմ ... ի բաց լինել ձեզ յաւնայնութեան պաշտամանց անտի, ի քարեղէն, ի փայտեղէն, յարծաթագործ, ի պղնձագործ պատկերաց այտի (Ագ., 251)։ Եւ զոմանց զբնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսեփայն յԵգիպտոս, և զԴանիէլին ի Բաբիլոն (ԿվՄ, 4)։ Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին զդեղն սատակման (Բուզ., 3, ԺԵ)։ Իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ (Ն.տ., ԺԶ)։ Ասէ ցնա. յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ճեմէին (Ն. տ., 4, ԺԴ)։

Այս դեպքում լրացման և լրացյալի միջև կարող են ընկնել նախ-

դասության այլ անդամներ, հատկապես ստորոգյալը։

**Օրինակներ՝** Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն (Մխ, 1, Գ)։ Ի լուղ ընդ լայնատարած և խորայատակն անցանէր ընդ Եփրատ (Ն. տ., 2, ՀԹ)։ Պարտ է մեզ և զիւրաքանչիւր փայլոց գիտել զկամս և զընտրողութիւն (ՂՓՊՀ, ԾԵ)։ Կալեալ զմանուկն Գրիգորիս ընդ ամեհի ձիոյ կապէին ընդ ագի (ՄԿՊԱԱ, ԺԱ)։ Ի հայրենեացն արտաքս հանեալ էիք ի ժառանգութենէ (ԹԱՊՏԱ, 3, ԺԷ)։ Այլ և ընդ այլոցն խնդամք ընդ փրկութիւն (ՂՓՊՀ, 1)։

Նախդիրները կարող են կրկնվել նաև ետադաս լրացումների մոտ։

**Օրինակներ՝** Եւ եղև ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս (Ագ., 137)։ Կայր հիացեալ և զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ (Բուզ., 4, Ի)։ Զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին (Եղ., 5)։ Տային ի ձեռս նորա և զնամակն Վասակայ զտեառն Սիւնեաց և զայլոց ազատացն Հայոց, և զեպիսկոպոսացն և զսեպհացն (ՂՓՊՀ, Լ)։

Նախդիրները կարող են կրկնվել և՛ նախադաս, և՛ ետադաս լրացումների մոտ։

**Օրինակներ՝** Ածին ժողովեցին զամենայն զգերին զքաղաքին ի մի վայր (Բուզ., 4, ԾԵ)։ Ի բաց թողէք այսուհետև զպղծութեան պաշտամունսդ, զքարեղէն և զփայտեղէն, զարծաթեղէն և զոսկեղէն պղնձաձոյլ պատկերացդ (Ագ., 234)։

Նախդրավոր կառույցներով արտահայտված բազմաթիվ իմաստները ես դասդասում ենք խնդրային և պարագայական տեսակների մեջ՝ ելնելով դրանց բնույթից և հետևելով արդի հայերենի բառակապակցությունների դասակարգման սկզբունքին։

Այստեղ ևս անհրաժեշտ ենք համարում նշել, որ խնդրային և պարագայական հասկացությունները ինչ-որ չափով պայմանական են, և այս կամ այն իմաստի հատկացումը դրանց երբեմն արհեստական է։ Տարահյուսական իմաստների հանգեցումը խնդրային և պարագայական տեսակների արվում է բառակապակցությունների նկարագրության միասնականությունը պահպանելու միտումով։

Պետք է նկատի ունենալ նաև, որ մի շարք դեպքերում հնարավոր են նույն կառույցի երկակի, եռակի և ավելի մեկնաբանություններ, ընդ որում ոչ միայն խնդրային կամ պարագայական տեսակների ներսում, այլև այդ երկուսի միջև։

## Բայի լրացումները առ նախդրավոր կառույցներով

Առ նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական, գործիական հոլովների հետ, և համապատասխան նախդրավոր կառույցներով արտահայտվում են խնդրային ու պարագայական մի շարք իմաստներ։

**Առ+տրական կառույց.—** *Սրանով արտահայտվում են հետևյալ իմաստները։*

**1. Խնդրային իմաստներ**

**Ա. Սահմանափակման.—** *Այսպիսի լրացում ստանում են հաղվադեպ բայեր, ինչպես՝* տկարանալ, ստահակել *և այլն։*

Օրինակներ՝ *Պատերազմօղ* առ պատերազմօղի *տկարացաւ (Երեմ., ԽԶ)։ Ոչ երբէք ստահակեցաք* առ ձեզ *(Բ, Թեսաղ., Գ)։*

**Բ. Հաղորդման.—** *Այսպիսի լրացում կարող են ստանալ ասացական իմաստի սակավաթիվ բայեր, ինչպես՝* բողոք ունել, բողոք մատուցանել, ամբաստանել *և այլն։*

Օրինակներ՝ *Սոցա ... բողոք կալեալ* առ արքայի *(Մխ, 2, ԿԲ)։ Բազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին* առ թագաւորին *Պապայ զՄուշեղէ զսպարապետէն (Բուզ., 5, Բ)։ Սկսաւ մատուցանել զնմանէն* առ թագաւորին *Վարազդատայ* առ *իւրում սանուն (Ն.տ., ԼԵ)։*

*Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել և՛ հաղորդման, և՛ տեղի իմաստներով։*

Օրինակներ՝ *Բարեխօսեալ* առ *մեծի* թագաւորիդ՝ *օգնեսցես մեզ (Մխ, 3, ԾԷ)։ Զբողոք բարձին, հրաւիրելով և զնա յօգնականութիւն ինքեանց, չարախօսել* առ արքային *Պարսից (Ն. տ., ԿԳ)։*

**Գ. Հանգման.—** *Այսպիսի լրացում ստանում է* բաղդատել *բայը։ Օրինակ՝ Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմն* առ Արտաշիսի *բաղդատեալ (Մխ, 2, ԺԳ)։*

Դիպել *բայի մոտ* առ+տրական *կառույցը կարող է մեկնաբանվել և՛ հանգման, և՛ տեղի իմաստներով։ Օրինակ՝ Որ* առ ական *դիպեցան (Ագ., 439)։*

**Դ. Միասնության.—** *Այս իմաստով լրացում ստանում են սակավաթիվ բայեր, ինչպես՝* ուրախանալ, զուարճանալ, միամտել, ունենալ *և այլն։* Առ *նախդիրը դրվում է հիմնականում անձ ցույց տվող բառերի հետ։*

Օրինակներ՝ *Հրամայէր ...* առ նմա *ուրախանալ ամենայն նախարարօքն ուխտակցօքն (ՂՓՊՀ, ՂԳ)։ Ուրախ լինէին զուարճացեալք* առ զօրավարին *Հայոց (Ն. տ., ՂԷ)։ Զյիշել զյանցանս ձեր ... այլ զմիամը-*

տեւն առ թագաւորին Արշակունւոյ (Մխ, 3, ԽԸ)։ Բազում բարեխօսիւքն, զոր ունիմք առ նմա, ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոց (Եղ., 7)։

Ե. Ներգործող խնդրի.— Այս լրացումը ևս սակավ է հանդիպում։ Այսպիսի լրացում ստանում է ծաձկել բայը։

Օրինակներ՝ Որ ծածկեալն էր յամենայն յաւիտեանց առ Աստուծոյ (Ագ., 353)։ Այն իսկ էր յաւիտենական խորհուրդն ծածկեալ առ Աստուծոյ (Ն. տ., 393)։

2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Առ+տրական կառույցով ցույց է տրվում գործողության մոտավոր տեղը։ Լրացյալ լինում են դադարման բայերը, ինչպես՝ նստել, բնակել, կալ, արկանել, մտանել, հասանել և այլն։ Լրացում դառնում են հիմնականում տեղ կամ անձ ցույց տվող բառերը (գոյական, դերանուն)։

Օրինակներ՝ Նստաւ առ ջրհորի միում (Ելք, Բ)։ Բնակեցաւ Մովսէս առ առնն (Ն. տ., Բ)։ Կայցես հանդէպ նորա առ եզեր գետոյն (Ն. տ., Է)։ Ինձ առ ուլու մակաղեսցի (Եսայի, ԺԱ)։ Եդեալ ծունր առ ծովեզերին՝ կացաք յաղօթս (Գործ., ԻԱ)։ Երթեալ, սնեալ և ուսեալ Արտաշէս առ կոմսի ումեմն Լիկիանէս անուն կոչեցելոյ (Ագ., 37)։ Արկանես ինձ բազմազաւակս առ Հօրն հաւատոյ Աբրահամու (Ն. տ., 56)։ Ոչ մնայր ոսկր առ ոսկեր (ՅԴՊՀ, 117)։

Երբեմն այս կառույցը դրվում է շարժման բայերի մոտ։

Օրինակներ՝ Գնաց և խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ (Մխ, 3, ԽԶ)։ Անկան իւրաքանչիւր առ բնկերի իւրում (Երեմ., ԽԶ)։

Երբեմն տեղի իմաստը կարող է համատեղվել ժամանակի և վիճակի իմաստների հետ։

Օրինակներ՝ Խօսեցայ առ գերուբեանն յամենայն բանս Տեառն (Եզեկ., ԺԱ)։ Սուրբն Մուշէ առ նմա հանապազորդեալ էր (Բուզ., 5, ԺԶ)։

Երբեմն առ+տրական կառույցի հետ գործածվում է մոտ նախադրությունը։

Օրինակներ՝ Եդաւ մոտ առ Գրիգորի և ընդ հարս իւր(Բուզ., 3, ԺԲ)։ Բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մոտ առ բանակին Հայոց արքային (Ն. տ., 5, ԼԲ)։

Առ+տրական կառույցը շարժման բայերի մոտ կարող է մեկնա-

բանվել և՛ ուղևորության տեղի, և՛ միասնության իմաստներով։ Օրինակ՝ Ցնծալից սրտիւ երթային առ նմա (ՂՓՊՀ, ՂԱ)։

Ուղևորության տեղի իմաստը հազվադեպ կարող է արտահայտվել առ+տրական կառույցով։ Օրինակ՝ Մարմնովն առ Հօրն ընդ ամէն եմուտ (Ագ., 385)։

Բ. Պատճառի.— Լրացյալ բայերը իմաստային սահմանափակում չունեն։ Առ նախդիրը դրվում է վերացական գոյականների տրականի հետ։

Օրինակներ՝ խոտորեսցի յաջակողմն իւր առ բաղցի (Եսայի, Թ)։ Առ նախանձու մատնեցին զնա (Մատթ., Իէ)։ Արկանէր զնոսա առ ցասման ի գեհեն (Եզն., 4, Ա)։ Եթէ ոչ առ առատութեան տայ, այլ առ երկիւղի վասն է (Մխ, 3, ԽՁ)։ Առ յոյժ յիմարութեան իբրև զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց (Եղ., 1)։ Դու ախտիւ դառնութեան առ զայրացմանդ թշնամանեցեր զդա (ՂՓՊՀ, Ժ)։ Առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն ... շամբշութեամբ վառեալ էր (Մխ, 1, ԺԵ)։

Գ. Նպատակի.— Այսպիսի գործածությունը հազվադեպ է, և եղածն էլ բնագրից դուրս կարելի է հավասարապես նաև պատճառի իմաստով մեկնաբանել։ Գուցէ խօսիցին Եգիպտացիքն և ասիցեն. Առ չարութեան եհան զնոսա, կոտորել զնոսա ի լերինս (Ելք, ԼԲ)։

Այս իմաստը կարող է արտահայտվել նաև առ+ի+տրական կառույցով (սովորական է առ+ի+հայցական կառույցը)։ Օրինակ՝ Յետ այսօրիկ ասացեալ միասնական Երրորդութեանն զօրութեան՝ լինել լուսաւորացդ առ ի ջրեղէն խորանանման հաստատութեան երկնին ճառագայթաձիգք, աշխարհագունդք, նշանացոյցք, ժամանակաչափք (Ագ., 260)։

Առ+հայցական կառույց.— Սրանով արտահայտվում են մի շարք խնդրային և պարագայական իմաստներ։

1. Խնդրային իմաստներ

Ա. Հանգման.— Այսպիսի լրացում ստանում են մերձենալ, մտել, յաւելուլ, դնել, հարկանել, գրել, յուսալ, հասանել, հաւասարել, խառնել, ցուցանել և այլ բայեր։ Նախդիրը կարող է դրվել տարբեր իմաստային խմբերի պատկանող բառերի հետ։

Օրինակներ՝ Առ քեզ ինչ ոչ մերձեսցին (Սաղ., Ղ)։ Աղօթս արարէք առ Տէր (Ելք, Ը)։ Ձմայր առ որդիս հարին (Ովսէէ, Ժ)։ Մերձեցարուք առ Աստուած (Յակ., Դ)։ Գթացաւ աստուածութիւնդ քո առ մարդկութիւն տկարութեանս մերոյ (Ագ., 78)։ Ցուցանես զողորմութիւն քո

առ *ամենայն* մարդիկ *(Ն. տ., 86)։ Մատեաւ Ահարոն* առ սեղանն *(Ղևտ., Թ)։ Յաւելաւ* առ հարս *իւր հայրասպանն այն (ՄԿՊԱԱ, 2, ԺԳ)։ Հասանէին* առ նա *ամենայն որդիքն Ղևեայ (Ելք, ԼԲ)։ Մօտեալք* առ միմեանս ... *ամրանան (Մխ, 2 ,Դ)։ Յեցեալ յուսացեալ* առ միմեանս ... *ոչ կատարելանայր* առ աւարտումն *հասանել խորհրդոյն (ԹԱՊՏԱ, 3, ԻԲ)։ Նոյն օրինակ և* առ Իսահակ *որդին Աբրահամու երևեալ (Ագ., 302)։ Դիցեն* առ Աստուած *զյոյս իւրեանց (Ն. տ., 899)։ Յակոբու դեմ եդեալ* առ արքայ *(Մխ, 3, Է)։ Հաւասարեսցեն* առ միմեանս *զուգութեամբ (Եղ., 7)։ Զհնազանդութիւն* առ *իշխանն* Գրիգոր *ցուցանէին (ՅԴՊՀ, 134)։*

*Որոշ բայերի մոտ այս կառույցը կարելի է մեկնաբանել հանգման և այլ իմաստներով։ Այսպես,* խոնարհել, ծունր դնել *բայերի մոտ* առ+հայցական *կառույցը կարելի է մեկնաբանել և՛ հանգման, և՛ ուղղության իմաստներով։*

Օրինակներ՝ *Կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն* առ ամենեսեան *(Եղ., 2)։ Եդեալ ծունր ամենեցուն* առ Աստուած *(Ագ., 773)։*

Մեղանչել *բայի լրացումը կարելի է մեկնաբանել և՛ հանգման, և՛ սահմանափակման իմաստով։ Օրինակ՝ Ոչ* առ մարդ *մեղանչեմք (Գ, Մակ., Է)։*

Հաշտել, ճանաչել *բայերի մոտ* առ+հայցական *կառույցը կարելի է մեկնաբանել և՛ հանգման, և՛ փոխադարձ կապի իմաստով։*

Օրինակներ՝ *Նորօք հաշտեցարուք* առ Աստուած *(Ագ., 238)։* Առ *Յակոբ* որդին *Իսահակայ ... Տէրն ծանուցեալ երևի (Ն. տ., 303)։*

*Երբեմն լրացումը կարելի է մեկնաբանել հանգման և նպատակի իմաստներով։ Օրինակ՝ Փութացաւ* առ կատարումն *գրելեացն Գուրգենի (ԹԱՊՏԱ, 3, ԺԴ)։*

**Բ. Մատուցման.—** *Այս իմաստն ունեցող նախդրավոր կառույցով լրացում ստանում են* մատակարարել, *շնորհել,* հատուցանել, տալ, մատուցանել *և սակավաթիվ այլ բայեր։ Լրացում կարող են դառնալ ինչպես անձ, այնպես էլ իր ցույց տվող գոյականները։*

Օրինակներ՝ *Ետ հրովարտակս* առ Յովնաթան *(Ա, Մակ., ԺԱ)։ Զձեզ առեալ* առ Աստուած *մատուցանիցեն (Ագ., 720)։ Զաստուածատուր շնորհսն* առ ամենեսեան *առատապէս մատակարարէր (Ն. տ., 834)։ Շնորհեն ... առաւելապէս* առ օտարսն *(ՂՓՊՀ, Է)։ Դուք հպատակութիւն ... հատուցէք* առ մեզ *լիով (Ն. տ., ՂԵ)։*

**Գ. Հաղորդման.—** *Այսպիսի լրացում ստանում են առաջին հերթին*

ասացական բայերը, ինչպես՝ աղաղակել, ասել, բարբառել, բողոքել, պատասխանի տալ, խոստովան առնել, խոստովան լինել, խոսել, կարդալ, յայտնել, պատմել և այլն։ Լրացում դառնում են հիմնականում անձ ցույց տվող բառերը։

Օրինակներ՝ *Աղաղակեաց Մովսէս* առ Տէր *(Ելք, ԺԵ)։ Բողոքեաց Մովսէս* առ Տէր *(Ն. տ., ԺԷ)։ Կարդացին նոքա* առ Աստուած *(Եսթեր, ԺԱ)։ Բարբառէր* առ նա *(Բ, Թագ., ԺԸ)։ Խօսեցաւ Սամուէլ զամենայն պատգամս Տեառն* առ ժողովուրդն *(Ա, Թագ., Ը)։ Յայտնեաց* առ աշակերտսն *(Ագ., 345)։ Որպէս ասաց Փրկիչն յԱւետարանին* առ աշակերտսն *(Ն. տ., 900)։ Ոչ ոք է ի դժոխս որ խոստովան առնի* առ քեզ *(Ն. տ., 535)։ Գոչումն արեան եղբօր քո բողոքէ* առ իս *յերկրէ (Ծնն., Դ)։ Խոստովանին* առ քեզ *(ՂՓՊՀ, ԼԲ)։ Ամբաստան լինէր զնմանէ* առ թագաւորն *Պարսից Պերոզ (Ն.տ., ԿԴ)։ Բողոք* առ *մեծն* Սահակ *բարձեալ՝ հայցէին կցորդակից ինքեանց առնել և չարախօս* առ արքայն *Պարսից (ՅԴՊՀ, 56)։* Առ որս *պատասխանի տուեալ ասէ (Ն. տ., 78)։* Առ որս *պատասխանեալ նորա՝ ասէր (Ն.տ., 111)։ Խոստովանեալն* առ քահանայն *չէ վկայ (Ն. տ., 156)։*

*Երբեմն այլ իմաստ ունեցող բայերը, փոխաբերաբար ասացական նշանակությամբ գործածվելով, կարող են ստանալ* առ+հայցական *կառույցով լրացում՝ հաղորդման իմաստով։*

Օրինակներ՝ *Բազմացի ողջոյն* առ քեզ *(Եղ., 2)։ Զայն արարեալ* առ Վրէն *Վանանդացի (ՂՓՊՀ)։ Աստուած որոտաց* առ ձեզ *(Ագ., 562)։ Գոչեցին* առ Տէր *Աստուած իւրեանց (Յուդիթ, Է)։*

Գրել, ձայն արձակել *բայերի մոտ* առ+հայցական *կառույցը կարող է մեկնաբանվել և՛ հաղորդման, և՛ ուղղության իմաստներով։*

Օրինակներ՝ *Զայս հրովարտակ մեր* առ ձեզ *գրեցաք (Ագ., 801)։ Գրէ* առ նա *ձև բանից օրինակ զայս (Մխ, 1, Ը)։ Զայն* առ նոսա *արձակէր (ՅԴՊՀ, 318)։*

Դ. Ուղղության.— *Այսպիսի լրացում ստանում են* նայել, հայել, միտել, ձգել, անկանել, խոնարհել, ակնարկել, աղօթել, ձգտել *և այլ բայեր։ Լրացում դառնում են տարբեր իմաստային խմբերի բառեր։*

Օրինակներ՝ *Աստուածորդին ձգեաց զնոսա* առ ինքն *(Ագ., 598)։ Աստուածութեանն խոնարհեալ* առ սուրբ վկայս իւր *(Ն. տ., 731)։ Մի ձգտիր* առ ստացուածս *անիրաւս (Եկղ., Ե)։ Անձկայ* առ նա *(Իմաստ., Դ)։ Եկաց յաղօթս* առ Տէր *(Դ, Թագ., Ի)։ Աղօթեսցէ* առ Աստուած *(Մխ, 2, ՁԸ)։ Անկայ* առ ոտս *նորա (Յայտն., Ա)։* Առ իս *ակնարկէ գդիպուածոցն չար պատահմունս (ԹԱՊՏԱ, Կ)։ Հայեցան ի խոնարհ* առ

նա *(Դ, Թագ., Թ)։* Ակն *Տեառն հայեցաւ* առ նա *(Սիրաք, ԺԱ)։ Հայեսցին* առ իս *(Զաքար., ԺԲ)։ Նայեա* առ իս *(Տոմբ, Գ)։ Ձայն արձակեաց* առ *մեծ* հրապարակն *(Եղ., 2)։* Առ *այս* ազգ *միտէր բանն մարգարէական յառաջգիտական (Բուզ., 3, ԺԳ)։ Զի՞րդ բառնայցեմ զձեռս իմ աղօթիւք* առ Աստուած *(Ն. տ., ԺԴ)։ Որք դարձուցին զԹիկունս* առ տէր *(Ն. տ.)։ Ուղղեսցես զսիրտ քո* առ տէր *(Ն. տ., 5, Ի)։*

Ե. Վերաբերության.— *Վերաբերության իմաստով լրացում ստանում են ասացական և իմացական բայերը, ինչպես՝* ասել, խոսել, պատուիրել, լսել, իմանալ, գուշակել *և այլն։ Այլ իմաստի որոշ բայեր ևս* (հոգալ, հոգ տանել *և այլն) կարող են ստանալ այսպիսի լրացում։* Առ *նախդրի հետ գործածվող բառերը իմաստային սահմանափակում չունեն։*

Օրինակներ՝ *Զոր պատուիրեցից քեզ* առ որդիսն *Իսրայելի (Ելք, ԻԵ)։ Խօսեաց առակ* առ տունդ *Իսրայելի (Եզեկ., ԺԷ)։* Առ մեզ *ասացեր զառակդ զայդ թէ* առ ամենեսեան *(Ղուկ., ԺԲ)։ Լուիցէ զինչ ասէ Հոգին* առ եկեղեցիս *(Յովհ., Գ)։* Առ *այսպիսի ճշմարիտ* ասացածս *անպատշաճ հարցուածս մատուցանեն (Եզն., 1, Դ)։ Եթէ* առ *անբան* աշխարհս *այսպէս հոգ տանի Աստուած (Եղ., 2)։ Զնոյն օրինակ ճշմարտութեամբ և* առ երանելին *իմասչիր (Ն. տ., 7)։ Սաստիկ ահ երկիւղի գուշակէ* առ *միւսանգամ* գործ *թշնամեացն գնդի (ՂՓՊՀ, ՀԸ)։ Ըստ մարգարէական բանին* առ նոսա *ասելոյ ... և զբանս սուրբս արհամարհէին (Բուզ., 3, ԺԳ)։*

*Երբեմն* առ+հայցական *կառույցը կարող է մեկնաբանվել և՛ վերաբերության, և՛ հաղորդման իմաստներով։*

Օրինակներ՝ *Ի ծածուկ* առ միմեանս *զնոյն վկայութիւնս գովութեանց տային (Եղ., 2)։ Բողոք արկանէր* առ արսն *Կամսարականս (ՂՓՊՀ, ԿԹ)։*

*Մի շարք բայերի մոտ, ինչպես՝* ունիմ, կատարել, խորհել, լնուլ, հարոզել *և այլն,* առ+հայցական *կառույցը մեկնաբանվում է վերաբերության և սահմանափակման իմաստներով։*

Օրինակներ՝ *Ոչ ինչ լուաւ նոցա Արշակ. մինչև* առ Շապուհ *ևս ունել նոցա բողոք (Մխ, 3, ԻԷ)։ Զամենայն ասացեալս արարից և կատարեցից* առ մնացորդս *աշխարհին (Եղ., 2)։ Բարի ծառայի* առ նա *լաւ ինչ զի՞րդ կարէր խորհել (ՂՓՊՀ, ՂԱ)։ Կատարեալ* առ նոսա *ելանէր ի գլուխ բան սաղմոսերգին (Ն.տ., ՂԳ)։* Առ մեզ *լցաւ միւս մարգարէութիւնն (ՅԴՊՀ, 259)։* Առ *ամենայն մարդիկ քարոզեալ երևեցաւ չար ամպրոպացն արկածք (Ն.տ., 265)։*

Առ+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել և՛ վերաբերության, և՛ տեղի իմաստներով։ Օրինակ՝ Այս եթէ առ այլս այլազգաբար պատմի՝ մի՛ ինչ սքանչանար (Մխ, 1, ԻԱ)։

Երբեմն էլ նույն կառույցը հնարավոր է մեկնաբանել վերաբերության և պատճառի իմաստներով։

Օրինակներ՝ Առ այս ետ պատասխանի սուրբն Յովսէփ (Եղ., 7)։ Եւ այլոցն առ յոյսն խոստացաւ յամն վեցերորդ միանգամայն արձակել կենօք և պատուով (Ն. տ.)։

Ուրախանալ բայի մոտ առ+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել վերաբերության, միասնության, տեղի իմաստներով։ Օրինակ՝ Աւուրս քանի մի ուրախանամք առ միմեանս (ՂՓՊՀ, ՂԳ)։

Առ+ի+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել վերաբերության և նպատակի իմաստներով։ Օրինակ՝ Յորս բազում նմանութիւնս և օրինակս յանցաւորաց աստի, առաւել վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալսն յերիւրեալ (Ագ., 886)։

Ջ. Սահմանափակման.— Այսպիսի լրացում ստանում են անամօթել, անիրաւել, առնել, յանցանել, կատարել, գործել և այլ բայեր։ Առ նախդիրը դրվում է գերազանցապես անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Անամօթեցար առ ամենեսեան (Երեմ., Գ)։ Զոր անիրաւեցաւ առ իս (Եզեկ., ԺԷ)։ Ոչ երբէք պահակեցաք առ ձեզ (Բ, Թեսաղ., Գ)։ Տարակուսին և առ առաջինն և առ երկրորդն (Դ, Անյաղթ, Մեկնութիւն և վերլուծ. Արիստ.)։ Պատմեաց առաջի կայսերն զամենայն արարեալսն Աստուծոյ առ նա զբարերարութիւնսն (Ագ., 876)։ Նախ սա առ ի հաւատսն գտանի դրժող, և երկրորդ առ բարեգործն իւր ապստամբ (Մխ, 2, ՁԸ)։ Զոր արար առ Պապ (Ն. տ., 3, ԼԷ)։ Զո՞ր յանցս յանցուցեալ կամ առ ազգս կամ առ լեզուս կամ առ անձն իւրաքանչիւր (Եղ., 3)։ Առ Աստուածն իւր սուտ գտաւ (Ն. տ., 6)։ Ստութեամբ վարէր զկեանս իւր՝ ոչ միայն առ ընկերս, այլև առ թագաւորն ինքնին գլխովին (Ն. տ.)։ Կատարեացէ զիրոյն պատուիրան, ոչ միայն յաղքատս, այլև յընկերս և 'յեղբարս, և առ ամենեսեան (ՂՓՊՀ, ԺԷ)։ Կատարէր առ նա բան սաղմոսերգին (Ն. տ., ԽՋ)։ Ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ պարսիկս (Բուզ., 5, ԼԸ)։ Յայտնեաց զցասումն զոր ունէր առ Արշակ (Մխ, 3, ԻԵ)։ Առ ամենայն թշնամիսն ճշմարտութեանն յաղթող երեւեալ (Ագ., 878)։ Թողեալ ի բաց զյանցանսն զոր առ նա գործեցին (ՅԴՊՀ, 97)։

Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել սահմանափակման և շահի իմաստներով։

Օրինակներ՝ Զոր արժան է ծառայից առ տեարս առնել (ՂՓՊՀ, ՂԵ)։ Զոր և դուք առ մեզ անարժան ծառայիցս արարէք (Ն. տ., ՂԶ)։ Բազում վնաս և չարիս առ իւր իսկ նմանի մարդիկ գործեալ իցէ (Ն. տ., ՀԶ)։

Է. Ճանի.— Այս իմաստով քիչ է գործածված նշված կառույցը։ Եղած օրինակներից կարելի է նշել հետևյալները։

Առ ամենեսին բանան զդրունս գթոյ մարդասիրին Քրիստոսի (Ագ., 9)։ Բացեալ է դուռն շնորհի ողորմութեան նորա առ ամենեսեան (ՂՓՊՀ, ԺԷ)։ Գործել չար առ ամենայն մարդ (Բուզ., 4, ԺԴ)։ Գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ (Գաղ., Զ)։

Ը. Ներգործող խնդրի.— Սա նույնպես քիչ հանդիպող իմաստ է։

Յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից (Եղ., 7)։

Թ. Փոխադարձ կապի.— Այսպիսի լրացում ստանում են հաստատել, պահել, հաղորդել և սակավաթիվ այլ բայեր։ Առ նախդիրը դըրվում է անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Մտերմութիւն պահելով առ եղբայրութիւն ազգականութեանն տան Կարենի Պահլաւին՝ ընդդիմացան պատերազմաւ Արտաշրի որդւոյ Սասանայ (Մխ, 2, ՀԱ)։ Ճապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց (Ն. տ., 3, ԺԲ)։ Ամուսնութեանց տուրևառիւք հաղորդեալք առ միմեանս ... որոշին ի սիրոյ նոցա (ՂՓՊՀ, ԺԲ)։ Զիւրեանց զմիտս ... առ միմեանս հաստատէին (Ն. տ., ԻԵ)։ Պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն (Բուզ., 4, ԺԶ)։

Ժ. Երկրորդական ուղիղ խնդրի.— Գրաբարում ներգործական մի շարք բայեր ստանում էին երկու ուղիղ խնդիր, ընդ որում երկրորդական խնդիրը կարող էր արտահայտվել նաև առ+հայցական կառույցով։ Այդ բայերից են համարել և ունիմ:

Օրինակներ՝ Որ զանձինս առ իմաստունս ունիցին (Եսայի, Ե)։ Զհայրենի պատիւն առ ոչինչ համարէին (Բ, Մակ., Դ)։ Զոր առ աստուածսն ունին, անարգեն շատ (Եզն., 1, Գ)։

ԺԱ. Համապատասխանության.— Այս իմաստի՝ նախդրավոր կառույցով լրացում ստանում են սակավաթիվ բայեր (պատշաճել, արկանել և այլն)։

Օրինակներ՝ Ոչ ինչ իրք խաղաղութեան առ նոսա պատշաճիւր (ԹԱՊՏԱ, 4, Գ)։ Առ ձեռաց կորովութիւնն զնիզակն ընդ բերան արկանէր զօրավարին Մանուէլի (Բուզ., 5, ԼԷ)։

**ԺԲ. Վերածման.**— *Այսպիսի լրացում ստանում են* **փոխել, փոխարկել** *բայերը։*

*Քո է փոխարկել յանկնկալս կենաց յուսահատութեան Զատակիչ անէծս* **առ** *կեցուցանող* **օրհնութիւնս** *(ԳՆՄՈ, 186)։ Զանդունդս* **առ երկինս** *փոխես (Ն.տ., 72)։*

**2. Պարագայական իմաստներ**

**Ա. Տեղի.**— *Այս իմաստն ունի երկու դրսևորում՝ ուղղության տեղի և դադարման տեղի։*

*Առաջին դեպքում* **առ+հայցական** *կառույցը ցույց է տալիս շարժման բայերի արտահայտած գործողության նպատակակետ տեղը։ Այս դեպքում* **առ** *նախդիրը դրվում է ինչպես տեղ, այնպես էլ անձ ցույց տվող բառերի հետ։*

**Օրինակներ՝** *Ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն* **առ դրունս** *Արտաշատ քաղաքի (Ագ., 33)։ Գնաց* **առ կայսր** *(Մխ, 3, Ժ)։ Մտից* **առ նա** *(Ա, Յովհ., Գ)։ Եկի ես* **առ քեզ** *(Ագ., 29)։ Զձեզ* **առ Աստուած** *վերացուսցէ (Ն. տ., 769)։*

*Երբեմն լրացյալ բայը փոխաբերաբար է շարժման իմաստով գործածվում։*

**Օրինակներ՝** *Պատգամաւորութիւն այնուհետև երեքին աշխարհքն* **առ միմեանս** *առնէին (ՂՓՊՀ, ԻԵ)։ Փոխի* **առ Քրիստոս** *(ՅԴՊՀ, 61)։ Բան պատգամաց* **առ արքայ** *սատտկանայր (Ն. տ., 204)։*

*Երբեմն* **առ+հայցական** *կառույցը կարող է մեկնաբանվել և՛ ուղղության տեղի, և՛ հաղորդման իմաստներով։ Օրինակ՝ Երթեալ ... առնէին բանսարկութիւնս* **առ** *Շապուհ* **արքայն** *Պարսից (ՂՓՊՀ, Թ)։*

*Լրացումը կարող է մեկնաբանվել ուղղության տեղի և ուղղության իմաստներով։ Օրինակ՝ Նամականի արարեալ* **առ կայսր** *(ՂՓՊՀ, ԼԳ)։*

*Դադարման տեղի իմաստով* **առ+հայցական** *կառույցը գործածվում է բազմաթիվ բայերի մոտ, ինչպես՝* **առնել, բանակել, բնակել, կուտել, դիպել, թաղել** *և այլն։ Այս դեպքում ևս* **առ** *նախդիրը դրվում է և՛ տեղ, և՛ անձ ցույց տվող բառերի հետ։*

**Օրինակներ՝** *Թաղեցին յԱնի* **առ հարս** *իւր (Մխ, 3, Ժ)։ Ընթրիս արարից* **առ նա** *(Ա, Յովհ., Գ)։ Բանակէր* **առ եզր** *ծովուն Պոնտոսի (Ղև., Պատմ., Ի)։ Բանակեցան* **առ ափն** *գետոյն (Ագ., 48)։ Զկտաւսն փութով կուտէին* **առ դուրս** *հնձանին (Ն. տ., 761)։ Նստէր* **առ դուրս** *խորանի իւրոյ (Ծնն., ԺԸ)։ Աճապարէր կուտէր զօրսն* **առ ինքն** *իբրև*

երեսուն հազար (Բուզ., 3, Ը)։ Դիպեցան միմեանց առ ափն ծովու Բզնունեաց (Ն. տ.,)։ Եկեալ բնակէր առ մեզ (ՅԴՊՀ, 349)։

Երբեմն առ+հայցական կառույցը մեկնաբանվում է և՛ տեղի և՛ միասնության իմաստներով։ Օրինակ՝ Կատարէր զտօնն զատկի առ ընտանիս իւրեանց (ՂՓՊՀ, ԼԷ)։

**Բ. Ժամանակի.—** Այս իմաստը առ+հայցական կառույցում անբաժան է չափի իմաստից (ժամանակային չափ)։

Նախդիրն այս դեպքում համարժեք է մինչև նախադրությանը։ Այսպիսի լրացում ստացող բայերը սահմանափակում չունեն։

Օրինակներ՝ Իւրաքանչիւրոց պատիւն և պատուհասն առ հանդերձեալ օրն պահի (ՅԴՊՀ, 165)։ Առ այն օր պահել հրամայեաց (Ագ., 50)։ Զմոգուցն բազմութիւն պահել առ օրն հրամայեցին զգուշութեամբ (ՂՓՊՀ, ԼԲ)։ Առ այս նուագ՝ կամէի թէ ներէիք ինձ (Ն. տ., ՂԶ)։ Վասն այնորիկ առ ժամանակս վայելեն ի դարմանոյ ցորենոյն (Բուզ., 4, ԺԳ)։

**Գ. Պատճառի.—** Այսպիսի լրացում ստանում են բազմաթիվ բայեր՝ առանց իմաստի սահմանափակման։ Առ նախդիրը կարող է դրվել ինչպես գոյականների, այնպես էլ անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Առ ցաւս իւր ճչիցէ (Եսայի, ԻԶ)։ Պատմեցի ձեզ ոչ միայն առ ճեղել սրտիս (ՂՓՊՀ, ԺԷ)։ Հայելով յառն յաջողականութիւն և յիմաստն՝ տրտմէին առ սէրն (Ն. տ., ԿԴ)։ Պատուեցաւ և փարխեցին առ դժնէիս ամբարշտութիւն, Գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ուխտազանցութիւն (ԳՆՄՈ, Զ)։ Մեք առ սէր քոյոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ (Եղ., 2)։ Միթէ յայնժամ առ չիմանա՞լ ինչ պնդեցաք (Ն.տ., 7)։ Առ ատել արձակեսցես (Մաղաք., Բ)։

Երբեմն առ+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել և՛ պատճառի, և՛ նպատակի իմաստներով։

Օրինակներ՝ Ո՞վ ի ձէնջ առ հոգալ կարիցէ յաւելուլ ի հասակ կանգուն մի (Ղուկ., ԺԲ)։ Զի ուխտաւորք յատակացն դիւրագոյնս կարգիցին, առ ոչ ինչ վնաս առնել քաղաքին (Մխ, 2, ԻԵ)։ Նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանսն վասն մեծի յուսոյն (Եղ., 2)։

**Դ. Նպատակի.—** Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ գալ, պատրաստել, փութալ, վառել և այլն։ Առ նախդիրը կարող է դրվել ինչպես գոյականի, այնպես էլ անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Որք կապեալ էին ի կռապաշտութեան անլուծանելի-

հանգուցիւք, վառեալք և չեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ (Եղ., 1)։ Իսկ Փոկաս եկեալ զօրօք բազմօք ի Բասեան առ ընդ իւրեաւ զՀայաստանեայսս նուաճել (ՅԴՊՀ, 73)։ Հաստահիմն առ խոստացեալ աւետիսն քաջալերել (Ագ., 886)։ Եւ տայր հրաման՝ յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել զօրացն Պարսից (Բուզ., 4, ԻԲ)։ Առ եղծանել հատանել փութայր զկապ միաբանութեան սիրոյ նոցա (ՅԴՊՀ, 159)։

Նպատակի իմաստը կարող է արտահայտվել նաև առ+ի+հայցական (նաև անորոշ դերբայ) կառույցով։

Օրինակներ՝ Բովանդակի առ ի տես այլոցն (Ագ., 8)։ Անդ և զօրք առ ի մխիթարութիւն առաքելոցն գումարեալ (Ն. տ., 692)։ Առաւել ևս փութայր, գուն եդեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալերութիւն (Բուզ., 3, Զ)։ Խնոյր զլսելիքն առ ի չլսել (ՅԴՊՀ, 44)։ Շինէ և աղքատանոցս առ ի մխիթարութիւն վշտացեալ մարմնոց մարդկան (Ն. տ., 46)։

Առ+բացառական կառույց.— Այս կառույցով արտահայտում են խնդրային և պարագայական սակավաթիվ իմաստներ։

1. Խնդրային իմաստներ

Ա. Ներգործող խնդրի.— Այսպիսի լրացում ստանում են կրավորական բայերը։ Առ նախդիրը գործածվում է հիմնականում անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Տեսիլ խաչանման լուսաւոր շողաւոր ձև երևէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առ յընկերէ պատմեալ (ԿՎՄ, 40)։ Այս այնչափ միայն առ ի յինէն քեզ տեսցի (ՅԴՊՀ, 7)։ Որ յառաջագոյն յիշատակեցաւ առ ի մէնջ (Ն. տ., 94)։ Առ ի նմանէ ըմբռնի (Ն. տ., 127)։ Բաւական բերցի քեզ առ ի Շապհոյ պատմեալքն (Ն. տ., 132)։ Անհնար է արքայի դաւաճանիլ առ ի նմանէ (Ն. տ., 185)։ Որ առ ի յինէն պատմեցան (Ն. տ., 254)։ Առատաձեռն ռոճկօք առ ի նմանէն պատուաւորեցայ (Ն. տ., 265)։ Մի՛ մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ (Եզ., 3)։

Բ. Սահմանափակման.— Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ խօսել, գտանել, սրբել և այլն։

Օրինակներ՝ Նա խօսեցի առ ի քէն ընդ ժողովրդեանն (Ելք, Դ)։ Գտի շնորհս և ողորմութիւն առ ի քէն (Թիւք, ԺԱ)։ Զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ (Եբր., Թ)։ Զոր և պատուաւորս առ ի յին-

ինէ թուեցուցանէր տեսողացն (ՅԴՊՀ, 224)։

Առանձին հեղինակներ (Հ. Դրասխանակերտցին ամենից շատ) առ+բացառական կառույցը շատ հաճախ գործածում են բացառականի փոխարեն։ Այս դեպքում առ+բացառական կառույցը կարող է արտահայտել բացառականի խնդրային բոլոր իմաստները։

Անջատման՝ Ել ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի առ ի Մովսիսէ (Ելք, ԼԵ)։ Յուղարկէ առ ի յիւրմէ զԱշոտ (ՅԴՊՀ, 310)։ Խուսափման՝ Զօրքն Մօրկայ ապստամբեալ առ ի նմանէ և սպանեալ զնա ... կացուցանեն փոխանակ նորա զՓոկաս (Ն.տ., 73)։ Յետսկոյս առ ի նմանէն մղեալ զանցեալ և թիկունս դարձուցեալ էին (Ն. տ., 321)։ Պահանջման՝ Պատանդս առ ի նմանէ խնդրէ (Ն. տ., 146)։ Խնդրեն առ ի նմանէ ձեռնարկ հաւատ նամակի (Ն. տ., 77)։ Պակասության՝ Մերկացաւ առ ի զգեստուէն արտաքնոյ (Ն. տ., 164)։ Հաղորդման՝ Հարցեալ առ ի նմանէ (Ն. տ., 86)։ Անձի — ելակետային՝ Առ ի նմանէ գտանէր ... պատիւ պերճութեան (Ն. տ., 169)։ Արտաքս դիս առ ի նմանէ կորզեաց (Ն. տ., 217)։ Ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ ի առ ի Հօրէն լուսոյ (Յակ., Ա)։ Ելման՝ Որ բղխեալն էր առ ի յիւրմէն զհոտ մահու (Ն. տ., 175)։ Ելման — սկզբնակետի՝ Այս են աւետիք զոր լուաք առ ի նմանէ (Յակ., Ա)։

2. Պարագայական իմաստներ

Ա. Պատճառի.— Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ առնել, արկանել, ուտել, երեւել, յօժարել և այլն։ Առ նախդիրը դրվում է ինչպես գոյականի, այնպես էլ անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Առ ի չգոյէ կաթին յայն յօժարեաց (Եզն., 1, Ա)։ Զմեծարեալ դին, առ փութի չծածկելոյ, թերևս և շանց ևս կուր արկանեն (Ն. տ., Դ)։ Եկեր ... առ չծուժալոյ ի կերակրոյ ծառոյն (Ն. տ., ԺԲ)։ Առ յոյժ յանդուգն յարձակմանէն բազումք այն էին՝ զոր գետասոյզ առնէին (ՄԿՊԱԱ, 2, Բ)։ Եւ հատուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշրէ. և զհետ մտանելով զօրացն Պարսից առ պատճառէ, որպէս թէ փախստական վարելով զնա ընդ Ասորեստան (Մխ, 2, ՀԴ)։ Առ յոյժ թանձր անկեալ դիականցն իբրև զքարակոյտս դերբկաց երեւէին (Եղ., 5)։

Երբեմն առ+բացառական կառույցը կարող է մեկնաբանվել և՛ պատճառի, և՛ նպատակի իմաստներով։

Օրինակներ՝ Օգնական լինէին ձեռաց շարաց, առ ի չդառնալոյ

իւրաքանչիւր ումեք ի ճանապարհէ իւրմէ չարէ (Երեմ., ԻԳ)։ Զրուանն առ ի չջրելոյ զուխտն՝ ասէ ցԱրհմնն (Եղն., 2, Ա)։

Բ. Նպատակի.— Այս իմաստով լրացում պահանջում են տարբեր իմաստի բայեր, ինչպես՝ առաքել, առնել, դնել, տալ, սատակել, գտանել, ածել և այլն։ Առ նախդիրը գործածվում է անորոշ դերբայի հետ։ Լրացումը կարող է բայից տրոհվել կամ գործածվել առանց տրոհման։

Օրինակներ՝ Զիս առաքեաց Աստուած առաջի ձեր առ ի թողլոյ ձեզ զաւակ յերկրի (Ծնն., ԽԵ)։ Համարձակեցան առնել չար առաջի Տեառն առ ի բարկացուցանելոյ զնա (Դ, Թագ., ԺԷ)։ Զիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ (Յակ., Գ)։ Որոց և յառաջնումն իսկ աննախանձ ետ զկենդանութիւնն, առ ի յայտնելոյ զիւրոյ զբարերարութեանն հանդէս (Եզն., 1, Ա)։ Թէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել՝ առ ի խնդրելոյ զվրէժ անարգանաց հասարակաց արարչին (Ն. տ.)։ Անտի ես հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն (Ն. տ.)։ Առ յայտնելոյ զկամսն և զխորհուրդս՝ ած յայտ զարարածս (Ն. տ., 3, ԺԷ)։ Զօժտութիւնս ես ընծայից առանձին հայցէր տալ նմա ... ձեռներէցն զնա առնել առ ի տիրելոյ նմա զբոլոր Հայաստանեայս (ՅԴՊՀ, 329)։ Առ ի հաւատարիմ առնելոյ աշխարհի քաղցեաւ (Ագ., 492)։

Առ+գործիական կառույց.— Սրանով արտահայտվում են մի քանի իմաստներ։

1. Խնդրային իմաստներ

Ա. Ներգործող խնդրի.— Այս իմաստով լրացումը շատ քիչ է հանդիպում։ Օրինակ՝ Ջիցես յանցուցեալ և պղծեալ առ արամբ քով (Թիւք, Ե)։

Բ. Համեմատության.— Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ պարծել, փափագել, երևել, համարել, պերճանալ, թուել և այլն։ Առ նախդիրը գործածվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Մի պարծիր առ ոստովքն (Հռովմ., ԺԱ)։ Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք, և ապա անձին իւրում միայն պարծանս տացէ, և մի՛ առ ընկերաւն (Գաղ., Զ)։ Առ այսոքիւք և փափագիցեմ ես արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ (Մխ, 1, Գ)։ Հրաման տայ ... քաղաքացեաց մի՛ կարի առ գեղջկօքն պերճանալ (Ն. տ., 2, Ը)։ Ոչ առ այլովքն վատթարօքն վեհ երևի (Եղ., 2)։ Ոչ երևին ձեր արքունիքդ առ նոքօք (Ն. տ., 7)։ Զի և ոչ զմեծ վաստակն նորա համարեցայ ինչ

առ սիրով և առ աճիւ դիցն (Ագ., 36)։ Առ համարձակապէսն յանդգնութեամբն ... իբրև զոչինչ թուփն ի մեզ կողմն թշնամանքդ մեր անձանց (ՂՓԹՀ, ԾԵ)։

2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Առ+գործիական կառույցը բայերի մոտ ցույց է տալիս՝

ա. Գործողության նպատակակետ տեղը (ուղղության տեղ)։ Այսպիսի լրացում ստանում են շարժման բայերը, ինչպես՝ երթալ, գնալ, հասանել և այլն։ Առ նախդիրը դրվում է և՛ տեղ, և՛ անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Ես Հայր մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորաւն հասից ... զայն ի բաց փոխեցից (Բուզ., 4, ԺԴ)։ Երթեալ առ ննձանօքն (Ագ., 192)։ Հասանէ առ սահմանօքն Խաղտեաց (Մխ, 2, Դ)։ Հանեն առ եզերբ սահմանացն Ատրպատականի ընդ մէջ Կորդուաց (Ն. տ., 2, ԼԴ)։ Ինքն ծագեալ անդ գնայ առ հարաւով (Եղն., 2, ԻԵ)։ Առ ստորոտով լերինն ելանէն (Մխ, 1, ԺԲ)։ Երթայր առ նովաւ Յակոբոս (Մարկ., Ժ)։

Այս իմաստը երբեմն զուգակցվում է ուղղության իմաստին։ Օրինակ՝ Դառնայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց (Մխ, 2, Ջ)։

բ. Դադարման տեղը։ Այս դեպքում լրացումը ցույց է տալիս այն տեղը, որտեղ, որի մոտ կատարվում է գործողությունը։ Լրացյալ կարող են լինել ինչպես շարժման, այնպես էլ դադարման բայերը։

Օրինակներ՝ Անցանէր առ ծովեզերբն (Ագ., 448)։ Անմտաց անցեալ առ նոքօք վնասեցան (Առակ., ԻԲ)։ Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն (Բուզ., 6, Թ)։ Տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձև բլուր մի (Մխ, 1, ԺԶ)։ Դադարէ առ գետովն (Ն. տ., Ջ)։ Անտառ առ Ազատ գետովն անկէ (Ն. տ., 3, Ը)։ Բնակեցաւ Աբրահամ առ Ջրհորովն երդման (Ծնն., ԻԲ)։ Շրջէին առ գետովն (Ելք, Բ)։ Բանակեցան առ ջրովն (Ելք, ԺԵ)։ Նստէր առ ծովեզերբն (Մատթ., ԺԲ)։ Անկաւ առ ճանապարհաւ (Ն. տ.)։ Պատի առ հիւսիսեաւ (Եղն., 2, ԻԵ)։ Առ մեօք գործեցան (Ագ., 7)։ Շրջեցայ առ բնակչօք Քոբար գետոյն (Եզեկ., Գ)։

Երբեմն տեղի իմաստը զուգակցվում է սահմանափակման իմաստին։ Այս դեպքում առ+գործիական կառույցի հետ կարող է գործածվել նաև մինչև նախադրությունը։

Օրինակներ՝ Քերէր ... մինչև առ ոտմբն (Ագ., 842)։ Զգտէր տա-

րածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց (Ն. տ.)։ Փախըստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյն (Եղ., 3)։ Քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց (Մխ, 2, ՁՁ)։

Երբեմն մոտավոր տեղի իմաստն արտահայտվում է մերձ+առ+գործիական կառույցով։ Օրինակ՝ Մերձ առ լերամբքն ոչ թողացուցանէր այլում պարապել գործոյ (Մխ, 2, ՁԴ)։

Երբեմն տեղի իմաստը միահյուսվում է միջոցի իմաստին։ Օրինակ՝ Առ դեսպակովն երթայր (ՄԿՊԱԱ, 1, ԻԱ)։

**Բ. Ժամանակի.—** Բայի լրացումը առ+գործիական կառույցով ցույց է տալիս գործողության մոտավոր ժամանակը։ Լրացյալ կարող են դառնալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ անել, աղբերանալ, երևել, թագաւորել, վատթարել և այլն։ Առ նախդիրը կարող է դրվել և՛ անձ, և՛ ժամանակ ցույց տվող, և՛ գործողության անուն գոյականների վրա։

Օրինակներ՝ Որպէս առ Ադամամբքն ասէր (Եզն., 2, ԺԳ)։ Ի սորա աւուրս երևեցաւ խաչն լուսեղէն առ երանելեաւն Կիւրղիւ (Մխ, 2, ԺԲ)։ Որոյ և շտեմարանքն խսկ աղբերացան սքանչելապէս իբր առ Եղիայիւ և Եղիսէիւ (Ն. տ., 3, ԼԱ)։ Առ որով ժամանակաւ Արծիւղ անուն թագաւորեալ Վրաց (ԿՎՄ, 29)։ Առ առաքելովքն վատթարեալ էր սատանայ (Եզն., 1, ԻԲ)։ Որպէս առ ջրհեղեղաւն ասէ (Ն. տ., 2, ԺԳ)։

**Գ. Պատճառի.—** Այս իմաստով առ+գործիական կառույցը քիչ է գործածվում։

Օրինակներ՝ Առ մահուն երկիւղի ամենեքեան զհրամանսն հաղորդութեանն կատարէին (Սեբ., ԼԵ)։ Առ այսոքիւք և փափագիցեմք ևս արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ (Մխ, 1, Դ)։

### Բայի լրացումները զ նախդրավոր կառույցներով

Բայը լրացումներ է ստանում զ+տրական, զ+հայցական, զ+բացառական և զ+գործիական կառույցներով, որոնցից երկրորդը ծառայում է որոշյալության իմաստի դրսևորմանը (բացառությամբ միջոցի իմաստի. օրինակ՝ Զմահ աղուեսու սպանից զքեզ (Բուզ., 4, ԾԴ)։

**Զ+տրական կառույց.—** Սրանով արտահայտում է հանգման իմաստ՝ դրվելով հարկանել, հարուլ, զարկանէլ բայերի մոտ։

Օրինակներ՝ Մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո (Սաղ., Ղ)։ Ամե-

նեչին զգլուխ զգետնի հարկանէին (Եղ., 3)։ Ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գործեաց, ասէ (Բուզ., 4, ԺԵ)։ Որ ունին սիրտ հարեալ զագահութեան (Բ, Պետ., Բ)։ Իւրովի զարկեալ զգլուխ իւր զՓարի՝ առաքեցաւ բժիշկ (Մխ, 2, ԺԹ)․

Այս կառույցը երբեմն կարող է միջոցի երանգ արտահայտել։ Օրինակ՝ Հարկ առնեն այսոքիկ ըստ Պօղոսի պարծել զտակարութեանն (ՅԴՊՀ, 279)։

Զ+բացառական կառույց.— Սրանով արտահայտվում են խնդրային, պարագայական սակավաթիվ իմաստներ։

**1. Խնդրային իմաստներ**

Ա. Հանգման.— Այսպիսի լրացում ստանում են կախել, բուռն հարկանել, ունել, կապել, առնուլ և սակավաթիվ այլ բայեր, որոնք, մեծ մասամբ ներգործական լինելով, կարող են ունենալ նաև ուղիղ խնդիր (հայցականով)։ Զ նախդիրը կարող է դրվել մեծ մասամբ թանձրացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Զմատակարարն կախեաց զփայտէ (Ծնն., Խ)։ Խոյ մի կախեալ կայր զծառոյն սաբեկայ զեղջերաց (Ն. տ., ԻԲ)։ Կալան հրեշտակքն զձեռանէ նորա և զձեռանէ կնոջ նորա (Ն. տ., ԺԹ)։ Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր (Ն.տ., ԽԹ)։ Կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագւոյ ձիոյն (Բուզ., 3, Զ)։ Խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա (Ն. տ., 4, ԾԴ)։ Բուռն հարեալ զխուչափողիցն խեղդէր զառիւծն (Սեբ., Ը)։

Հարկանել բայը սովորաբար հանգման իմաստով լրացումը զ+տրական կառույցով է ստանում։ Երբեմն պատահում է նաև զ+բացառական կառույց։ Օրինակ՝ Արք անօրէնք՝ հուր հարին զՓաղաւէ (Առակ., ԻԹ)։

Երբեմն լրացումը կարող է համատեղել հանգման և սահմանափակման իմաստները։

Օրինակներ՝ Քարշեցին զոտանէ ի մէջ քաղաքին (Սեբ., ԼԲ)։ Քարշէին զվարսից նորա (ՄԿՊԱԱ, 1, ԻԹ)։

Բ. Վերաբերության.— Գրաբարի քերականները զ+բացառական կառույցն այս իմաստով անվանում էին պատմական բացառական։ Այսպիսի լրացում ստանում են ասացական և իմացական բայերը, ինչպես՝ ասել, ամբաստանել, գիտել, գուշակել, խորհել, խօսել, չարախօսել, բարեխօսել, զարմանալ, ծանուցանել, համբաւել, յիշել, վկայել, հարցանել, ճառել, լսել և այլն։

Զ նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ Առաքիր զինէին թէ եղբայր իմ է (Ծնն., Ի)։ Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն (Ն. տ., Ծ)։ Մի՛ սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ (Ելք, Ի)։ Լուան զանուանէ քումմէ (Թիւք, ԺԴ)։ Խօսեցաւ զանասնոց և զթռչնոց և զձկանց (Գ, Թագ., Դ)։ Զինէն ոչ հարցանէին (Եսայի, ԿԵ)։ Զարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ (Եբր., ԺԲ)։ Յորժամ զանէրևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէք (Եղն., 1, Ա)։ Նոյնպէս կարծի և զսատանայէ (Ն. տ., ԺԲ)։ Գիտէր զսատանայէ՝ եթէ թիւրելոց է (Ն. տ., ԺԴ)։ Վկայեն զյարութենէ մեռելոց (Ն. տ.)։ Որպէս զվիշապացն և զնհանգացն համբաւեն (Ն. տ., ԻԵ)։ Բազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն (Բուզ., 5, Բ)։ Համբաւէ զնմանէ այսպէս (Մխ, 1, ԺԵ)։ Զհարսանեացն առասպելեալ երգեն (Ն. տ., 2, Ծ)։ Զաստուածեղէն փառացն գուշակէր (Ագ., 387)։ Զարանցն աստուածասիրաց ... ծանուցանէր (Ն. տ., 724)։ Յիշեցուցանէ նմա զհարազատէն Մեհուժանայ՝ միամիտ և հպատակ լինիլ արքայի (ԹԱՊՏԱ, 1, ԺԱ)։ Փողով մեծութեան ազդման առանց լռութեան և կամ դադարման զիմոցս պարտեացս խոստովանեսցի (ԳՆՄՈ, ՁԸ)։

Լրացյալ կարող են լինել նաև ասացական, իմացական կամ այլ բայերին արմատակից բաղադրիչով կազմված հարադրությունները, ինչպես՝ ամբաստան լինել, ամբաստանութիւն ունել, անփոյթ առնել, ինքնապատում լինել, հռչակ երթալ, մատնութիւն առնել, յայտ առնել, չարախօս լինել, պատգամ ունել, փոյթ առնել և այլն։

Օրինակներ՝ Ամբաստան լինէր զնմանէ առ թագաւորն Պարսից Պերոզ (ՂՓՊՀ, ԿԴ)։ Երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս (Ղուկ., Դ)։ Զայս ասէին փորձելով զնա, զի ունիցին ամբաստանութիւն զնմանէ (Յովհ., Ը)։ Դարձաւ անդրէն առ թագաւորն չարախօս լինիլ զնմանէ (Ա, Մակ., Է)։ Ինքնապատում լինելով զյանցանացն՝ փրկութիւն գտանիցէ (Ագ., 282)։ Մատնութիւն զեղբարցն առնէր (Մխ, 2, ԾԷ)։ Պատգամ ունին առ քեզ զՀայոց (ՂՓՊԸ, ԿԸ). Իրազգած եղեալ... զմեծէ սպարապետէն Հայոց (Ն. տ., Լ)։ Նա և ասելն անկերպարան՝ զկերպարանացն յայտ առնէ (Եղն., 1, Է)։ Դիր վկայութիւն Երուսաղեմի զանօրէնութեանց նորա (Եզեկ., ԺԶ)։ Ես անփոյթ արարի զնոցանէ (Եբր., Ը)։ Մահ այնոցիկ սպառնացեալ, որ չարախօս կային զՔրիստոնէից (Մխ, 2, ԼԳ)։ Զիմաստութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ որովայնի արդարև

լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր (Ն. տ., ԻԲ)։ Թախանձէին զնա փոյթ զայնպիսեացն առնել պիտոյից (Ն. տ., 3, ԾԲ)։

Զ+բացառական կառույցը վերաբերության իմաստ կարող է արտահայտել այնպիսի բայերի մոտ, որոնք ասացական կամ իմացական չեն, սակայն փոխաբերաբար այդ նշանակությունն ունեն, ինչպես՝ ազդել, ակնարկել, խաբել, հնչել, ճշմարտել, յօղել, նկատել, հաւանել, մարգարէանալ, պահանջել, ուսուցանել, քննել և այլն։

Օրինակներ՝ Մեք զդիցն իսկ պահանջեսցուք ի նոցանէ (Եզն., 1, ԻԵ)։ ԶԱղեքսանդրէ խաբէին դևք՝ թէ կենդանի կայցէ (Ն. տ.)։ Զորմէ չհաւանեալ, տալ ոչ առնոյր յանձն (Բուզ., 3, Ի)։ Սիրով լսէր պատգամին և հաւանէր զասացելոցն (Ն. տ., ԺԸ)։ Դոյնպէս ազդեն ինքնակալին Թէոդոսին Պապ և Տերենտիանոս զՇապհոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի վերայ մեր (Մխ, 3, ԼԷ)։ Զորմէ և տեսանողքն բարձրաձայն հնչէին (Ագ., 326)։ Օրէնքն մովսիսագիրք ամենայն իրօքն զհանդերձելոցն նշանակեալք փայլէին (Ն. տ., 346)։ Զհանդերձելոցն ակնարկէ յասելն (Ն. տ., 655)։ Կարեմք ճշմարտել... հոգեխառն բանիւք զաստուածախառն մարմնոյն (Ն. տ., 372)։ Զորմէ... մարգարէանայ հայրն (Մխ, 1, Դ)։ Զնախանձուէն ևս ճշտիւք քննիցեն (Եզն., 1, ԺԱ)։ Ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ (Եզն., 4, ԺԶ)։ Զամենայնէ մտօքն նկատել մարթեն (Եզն., 3, ԺԳ)։ Զորմէ Դաւիթ իսկ նշանակեաց (Ագ., 451)։ Քարոզեսցէ զխորոցն (ԳՆՄՈ, ՁԸ)։ Զնմանէ առասպելեաց (Մխ, 1, Զ)։

Երբեմն զ+բացառական կառույցը գործածվում է նույն նախադասության մեջ եղած այլ բայի խնդրառության ազդեցությամբ։ Այսպես, հետևյալ նախադասության մեջ սկիզբն առնել բայի մոտ զ+բացառականը բացառականի փոխարեն է գործածվել պատմել բայի խնդրառության ազդեցությամբ. Սկիզբն արարեալ զտանէ, պատմէ զգրոյ (Մովսէս քերթող, Մեկնութիւն քերականին, Զ)։

Այսպես է նաև հետևյալ նախադասությունը. Պատմեսցէ զմեղացն, մերկացուսցէ զանտեսիցն (ԳՆՄՈ, ՁԸ)։

Երբեմն զ+բացառական կառույցը կարող է մեկնաբանվել վերաբերության և սահմանափակման խառն իմաստներով։

Օրինակներ՝ Զինքենէ գրէ ուխտանենգն Վասակ (ՂՓՊՀ, ԼԶ)։ Գուշակէր նմին զանձնէ իւրմէ (Ն. տ., 2Բ)։ Այնպէս կարգէ զաշխարհէ և զարարածոց, որպէս օրէնքն ասեն (Եզն., 4, Ա)։ Խորհի խորհուրդ զանձնէ՝ պղծել զանձն իւր յարիւնս նոցա (Եզեկ., Իբ)։

Գ. Ուղղության.— Զ+բացառական կառույցը սակավաթիվ բայե-



14—498

րի մոտ արտահայտում է ուղղության իմաստ, ինչպես՝ կարոտել, ակն ունել:

Օրինակներ՝ *Կարի կարօտեալ Թագաւորն աշխարհաւն հանդերձ* զնմանէն *(Ագ., 859)։ Ակն ունիմք յարութեան մարմնոց մեռելոց և* զկենացն *յաւիտենականաց (Ն. տ., 900)։ Զերկնաթռիչ* զճանապարհէն *յաւիտենից բարութեանցն ընտրեալ հետևիր (ՂՓՊՀ, Դ)։*

Դ. Այլ անուղղակի խնդրային իմաստներ.— Պասսիվ ներգործության՝ *Գոհանայր* զայնմանէ *(Ագ., 872)։ Գոհացայց* զքէն *(Սաղ., Թ)։ Տրտնջեաց ամենայն ժողովուրդ որդւոցն Իսրայելի* զՄովսիսէ և զԱհարոնէ *(Ելք, ԺԶ)։* Զորմէ *կարի զարմանային (Բուզ., 3, Ի)։ Բողոքեացէ* զքէն *առ Տէր (Բ, Օրէնք, ԺԵ)։* Շահի՝ *Եւթանասուն ամ է կարգեալ* զկենաց *քոց (Եղն., Խրատք)։*

**2. Պարագայական իմաստներ**

Ա. Նպատակի.— *Այսպիսի լրացում ստանում են շարժման բայերը, ինչպես՝* առաքել, արձակել, գալ, յղել, *նաև փոխաբերաբար շարժման իմաստով գործածվող* դեսպան առնել *տիպի բայերը։ Զ նախդիրը կարող է դրվել և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների վրա։*

Օրինակներ՝ *Որ եկեալ էին* զնմանէ՝ *տանել յարքունիս (Ագ., 173)։ Տաճիկ ուղտուք արձակէ ի Հայս արս* զհողոյ *և* զջրոյ *(Բուզ., 4, ԾԴ)։ Եկին բերին զայն ինչ,* զորմէ *յղեացն (Ն. տ.)։ Վաղվաղակի դեսպան արարեալ* զթագաւորէն Հայոց զԱրտաշեսէ՝ *առ ինքն ճեպով գալ հրամայէր (ՂՓՊՀ, ԺԴ)։ Առաքեցին զերիտասարդս իւրեանց* զջրոյ *(Երեմ., ԺԴ)։*

*Երբեմն այլ իմաստի բայը ևս կարող է ստանալ այսպիսի լրացում։* Օրինակ՝ *Զընտանի իւրեանց առատութեան* մտաց *ջանացան օգուտ աշխարհի գործել (ՅԴՊՀ, 3)։*

Բ. Հիմունքի.— *Այսպիսի լրացում ստանում է* գուշակել *բայը։ Նա և գուշակէ մաշկանն* զյաւիտենականէդ, *անցականն* զանանցէդ, *հնականն* զնորոգչէդ *իւրմէ (Ագ., 92)։*

Զ+գործիական կառույց.— *Զ նախդիրը գործիականի մոտ ծառայում է* մոտ, մոտավորություն, շուրջ *նշանակության դրսևորմանը։* Զ+գործիական *կառույցով արտահայտվում են խնդրային և պարագայական սակավաթիվ իմաստներ։*

**1. Խնդրային իմաստներ**

Ա. Հանգման.— *Այսպիսի լրացում ստանում են զգացական բազմաթիվ բայեր, ինչպես՝* արհամարհել, անգոսնել, ծիծաղել, կատակել,

ծաղր առնել, նշկահել, մկթալ, քամահել, նաև այլ իմաստի բայեր, ինչպես՝ զանց առնել, պատճառել, ապախտ առնել և այլն։ Սրանց զգալի մասը այլ դեպքերում ուղիղ խնդիր է ստանում։ Զ նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Արհամարհէին զինն (Սաղ., ԻԱ)։ Ծիծաղեսցի զնովաւ (Սաղ., ԼԶ)։ Ծիծաղեցայց զկորստեամբ ձերով (Առակ., Ա)։ Որ կատակէ զաղքատով՝ բարկացուցանէ զԱրարիչ նորա (Ն. տ., ԺԷ)։ Այլն առնէին զնովաւ (Ղուկ., ԻԲ)։ Այնու տկարութիւն ածեն զԱստուծով (Եզն., 1, Ե)։ Ապախտ արարին զբանիւք հրամանաց իմոց (Յուդիթ, Բ)։ Զսուրբ և զնուիրեալ տեղօքն քամահեալ, կոխան առնէին (Բուզ., 3, ԺԹ)։ ԶԱստուծոյ զտաճարաւն այլն առնէին (Ն. տ.)։ Թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, և մկթայր զնորա զաս-ցելովքն (Ն. տ., 4, ԺԴ)։ Զեր զանց զնովաւ արարեալ՝ կամեցայք ի սահմանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել (Մխ, 3, ԾԷ)։ Մեծաձայն ծաղու անգոսնեցին զբանիւքն (ՂՓՊՀ, ԾԵ)։ Ծաղր առնէր զկտի բարբառովն (ՄԿՊԱԱ, 1, ԻԹ)։ Սա նշկահեալ զկայսերբ՝ յղէ առ Շապուհ արքայից արքայ նուաճել ընդ նմա (ԹԱՊՏԱ, 1, ԺԱ)։ Զմիմեամբք պատճառեալ թշուառացան (Ագ., 283)։

Զ+գործիական կառույցը հանգման իմաստով կարող է գործածվել նաև ածել, արկանել, ձեռն արկանել բայերի մոտ։

Օրինակներ՝ Այնու տկարութիւն ածեն զԱստուծով (Եզն., 1, Է)։ Որ տկարութիւն արկանէ զԱստուծով (Ն. տ., 3, ԺԲ)։ Զձեռս զօձիւք արկեալ՝ զպատմուճանսն պատառէին (Ագ., 243)։ Առեալ զջուրն էարկ զգլխով նորա (Բուզ., 6, Ը)։ Արկ զեւթանասուն արամբք զձեռովք (Թիւք, ԺԱ)։ Ոչ ոք արկանէ ձեռն զմանով (Ղուկ., Թ)։

Բ. Ուղղության.— Թեև զ+գործիականն այս դեպքում այն առարկան է ցույց տալիս, դեպի ուր ուղղվում է գործողությունը (ոչ շարժման նպատակակետ տեղը), սակայն այս կառույցի արտահայտած իմաստի մեջ զգալի է տարածականությունը, և ուղղությունը ընդհանուր բնույթ ունի։ Այսպիսի լրացում ստանում են հայել, նայել, շարժել, դառնալ, վազել և այլ բայեր։ Զ նախդիրը դրվում է և՛ անձ, և՛ տեղ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Նայեցեալ զնոքօք (Ագ., 281)։ Դարձուցեալ զանդունդսն աւազակապս զցամաքաւ (Ն. տ, 256)։ Հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ (Մարկ., Գ)։ Ոչ կարաց շարժել ձեռամբ զհսկայն զլանջօք առ երիվարին (Մխ, 2, ԶԵ)։ Մերժեալ զՍշական ասպարաւն, ոչ եւոուն ժամանել ճապաղել ի նետաձգութիւն (Ն. տ., 3, Թ)։ Վա-

զնաց զԵփրատաւ (Ն. տ., Խ)։ Ինքն դառնայ զԳարդմանայ ձորովն (Ն. տ., Կ)։

Այս դեպքում զ+գործիական կառույցի հետ կարող է գործածվել նաև շուրջ նախադրությունը։

Օրինակներ՝ Հայեցայ ես շուրջ զմեօք (Բ, Մակ., Թ)։ Հայեցաւ շուրջ զամենեքումբք (Մարկ., ԺԱ)։

Երբեմն ուղղության ընդհանուր իմաստը կարող է մասնավորվել կոնկրետ ուղղություն ցույց տվող որևէ նախդրավոր կառույցով։ Օրինակ՝ Հայեցաւ շուրջ զիւրև յաշակերտսն (Մարկ., Գ)։

Գ. Այլ անուղղակի խնդրային իմաստներ.— Սրանք քիչ հանդիպող իմաստներ են։ Եղածներից են՝ վերաբերության՝ Զօրով անփոյթ արարեալ արքայի (Մխ, 3, ԾԲ)։ Լան զինն և ասեն (Թիւք, ԺԱ), միջոցի՝ Հրէայքն անդրէն զգործով զարարով զաղեամբք պաղատեցան (Բ, Մակ., ԺԲ), Ջնուաճեալսն ընդ ինքեամբ զաղխատրոյզն բանիւք համոզեալ (ՅԴՊՀ, 319)։ Յարտասուս հարեալ յանձն առ վայր մի զպատճառանօք վիրաւորիլն վասն երեցունց աշխարհացն (ՂՓՊՀ, ԻԷ)։

**2. Պարագայական իմաստներ**

Ա. Տեղի.— Այս իմաստը երեք դրսևորում ունի՝ ուղևորության տեղի (շարժման նպատակակետ տեղի), դադարման տեղի, պարառական։

ա. Ուղևորության տեղի (շարժման նպատակակետ տեղի) իմաստը զ+գործիական կառույցով արտահայտվում է ուղևորություն, շարժում ցույց տվող բայերի մոտ։ Այս բայերը այլ դեպքում նույնիմաստ լրացում ստանում են ի, առ, ընդ նախդիրների և հայցականի միջոցով։ Այս դեպքում շարժման նպատակակետը ընդհանուր է (պայմանավորված զ նախդրի՝ մոտավորության նշանակությամբ)։ Զ նախդիրը դրվում է տեղ ցույց տվող կողմն բառի հոգնակի ձևի հետ։

Օրինակներ՝ խաղայ զկողմամբք Ասորեստանի (Մխ, 1, ԺԴ)։ Զճիւսիսեաւ երթիցէ (Ն.տ., 2, Ջ)։ Խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու (Ն.տ., ԽԷ)։ Զուէ զկողմամբք Գուգարաց (ՅԴՊՀ, 244)։ Զուէր գնայր զկողմամբք Հերայ (Ն.տ., 141)։ Վայ նոցա զի վազեցին զինև (ԳՆՄՈ, ԿԲ)։

բ. Դադարման տեղի իմաստը զ+գործիական կառույցով արտահայտվում է ուղևորություն ցույց չտվող բայերի մոտ։ Այս դեպքում լրացումը ցույց է տալիս այն տեղը, որի վրայով, մոտով տեղի է ունենում գործողությունը։ Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաս-

տային խմբերի բայեր, ինչպես՝ անցանել, բնակել, բանակել, գտանել, դարմանել, հանգչել, նաւել, շրջել և այլն։ Զ նախդիրը դրվում է և՛ տեղ, և՛ անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Անցին վաղվաղակի զճանապարհաւն զոր պատուիրեցեր նոցա (Ելք, ԼԱ)։ Շրջեցարուք զՍիովնիւ (Սաղ., ԽԷ)։ Որ բնակեալ էք զծովեզերբ (Եսայի, Թ)։ Նաւիցեմք զալեօք ժամանակագրական ծովուս (Ագ., 15)։ Սփռեցան տարածեցան զսահմանօքն (Բուզ., 3, Է)։ Զտեղեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զոմանս (Մխ, 3, ԼԷ)։ Զտեղեաւն զեռալ սկսան (Եղ., 5)։ Բանակեալ էին զնովաւ (Եղ., 6)։ Հանգեան զաւուրս ինչ զտեղեօքն (Մխ, յաւելուած, Բ)։ Սկսան շրջիլ զքաղաքօք (ՅԴՊՀ, 185)։ Ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զօրսն դարմանել (Եղ., 3)։

գ. Պարառական.— Այս դեպքում զ+գործիական կառույցով արտահայտվում է այն առարկան կամ տեղը, որի շուրջը, վրան տեղի է ունենում գործողությունը։ Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ անկանել, գալ, ելևէջս առնել, զեղուլ, ձգել, նստել, շողալ, պահ դնել, պատել, սփռել, սրսկել, տեղալ, ցանել, ցայտել, փայլատակել և այլն։ Զ նախդիրը առաջին հերթին դրվում է անձ և մարմնի մաս ցույց տվող գոյականների, ինչպես և այլ բառերի հետ։

Օրինակներ՝ Պատեցան զԴաւթիւ և զարամբք նորա (Ա, Թագ., ԻԲ)։ Ցայտեցաւ յարենէ նորա զորմովքն և զձիովքն (Դ, Թագ., Թ)։ Ածի զմիջով իմով (Երեմ., ԺԳ)։ Անկաւ զպարանոցաւն նորա (Ղուկ., ԺԵ)։ Առեալ զարիւն ցլուցն և նոխազացն... զկտակարանօքն իսկ և զամենայն ժողովրդեամբքն սրսկեաց (Եբր., Թ)։ Ոչ արկից զձեւք այլ ծանրութիւն (Յայտն., Բ)։ Զբքօք շողայցեն (Եզն., 1, Ա)։ Գայր շուրջ՝ պահ դնէր զնոքօք (Ա, Մակ., Ե)։ Նստէին զնովաւ որդիք ժողովրդեան մերոյ (Ն. տ., Զ)։ Ի զրահաւոր պատենազէն պղնձապատ վահանացն նշոյլք զլերամբքն փայլատակէին (Ն. տ.)։ Սարսափիւն գայ զոսկերօքն (Եզն., 2, ԺԹ)։ Օձիկ արկեալ զուսովք իւր (Բուզ., 6, Ը)։ Լորամարգի տեղացեալ զբանակօքն (Ագ., 313)։ Զամենայնիւ սփռեալ (Ն.տ., 366)։ Ելեւէջս առնեն զնոքիմբք և ձգեն զոստայնս իւրեանց զգլխովք նոցա (Ն. տ., 522)։ Փարէին զոտիւք և զձեռօք (Եղ., 7)։ Ցանեսցէ զտամբքն և զկահիւն և զամանովքն և զանձամբքն (Թիւք, ԺԹ)։ Կոծ մոլութեան զդիակամբքն ջայլէին (Բուզ., 4, ԺԵ)։

Երբեմն պարառական իմաստի արտահայտման համար զ+գոր-

ծիական կառույցի հետ գործածվում է շուրջ նախադրությունը կամ շուրջանակի մակբայը։

Օրինակներ՝ Շուրջ գայր զքաղաքաւն (Ագ., 206)։ Պատեալ կային շուրջ զինև (Ն. տ., 239)։ Գնայր ջուրն շուրջ զսեղանովն (Գ, Թագ., ԺԸ)։ Շուրջ զինքեամբք պատեցին զերկունս մեղաց մահու (ՅԴՊՀ, 255)։ Տարապարտ արինք կղերց եկեղեցւոյ իբրև զջուր հեղան շուրջ զԵրուսաղեմաւ (Ն. տ., 275)։ Պատեա զնովաւ զամենայն մարդիկս շուրջանակի (Յեսու, Զ)։ Ած զորմովք տանն պատուարս շուրջանակի (Գ, Թագ., Զ)։

Բ. Ժամանակի.— Զ+գործիական կառույցով կարող է արտահայտվել մոտավոր ժամանակ։ Նախդիրը դրվում է ժամանակ, ժամ, օր և նման բառերի հետ։ Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր։

Օրինակներ՝ Զմիջաւուրբն ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինև լոյս (Գործ., ԻԶ)։ Զինն ժամաւն գոչեաց Յիսուս (Մատթ., ԻԷ)։ Եկին արք զմետասաներորդ ժամուն (Մատթ., Ի)։ Զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից (Մխ, 2, ԺԴ)։ Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ (Ն.տ., Ղ)։ Զայնու ժամանակաւ յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց (Բուզ., 3, Դ)։

Գ. Այլ իմաստներ.— Զ+գործիական կառույցով կարող է արտահայտվել նաև չափի իմաստ։ Այսպիսի գործածության օրինակները քիչ են։ Դիւրին է ստուերին դառնալ զտասն աստիճանօք ... այլ դարձցի ստուերն զտասն աստիճանօք յետս ... դարձաւ ստուերն զտասնեքումբք աստիճանօք անդրէն յետս (Դ, Թագ., 4, Ի)։

Անցանել բայի մոտ զ+գործիական կառույցն ունի խնդրա-պարագայական նշանակություն, որը ուրիշ դեպքերում արտահայտվում է այլ նախդրավոր կառույցներով կամ հոլովներով։ Այս գործածությունները դարձվածքային արժեք ունեն, մանավանդ եթե զ նախդիրը գործածվում է վերացական գոյականի հետ, ինչպես՝ հրաման, օրէնք, բան և այլն։

Օրինակներ՝ Անցանեն զուխտիւ (Առակ., ԻԱ)։ Անցին զօրինօքն Տեառն (Եսայի, ԻԴ)։ Մարդն զԱստուծոյ պատուիրանաւն անց (Եզն., 1, ԺԷ)։ Այլ ոչ երբէք անցցէ զբանիւք նորա (Բուզ., 4, ԺԳ)։ Որք անցեալ վտարին այսր զԿուր գետով (Մխ, 2, ԿԵ)։

Սրանցից անցանել զաւուրբք լիովին դարձվածք է, որ նշանակում է ծերանալ։

## Բայի լրացումները *ընդ* նախդրավոր կառույցներով

Ընդ նախդիրը գործածվում է սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ՝ արտահայտելով բազմաթիվ իմաստներ։

**Ընդ+սեռական կառույց.**— Սրանով արտահայտվում է հիմնականում փոխարինության խնդրային իմաստ։ Սակայն ընդ+սեռական կառույցով կարող են արտահայտվել նաև խնդրային այլ իմաստներ։

**Փոխարինության իմաստ.**— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝ մատուցանել, տալ, հատուցանել, գնել, դնել, փոխանակել, վաճել, ընդունել, առնել, խոստանալ և այլն։ Ընդ նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ *Մի փոխանակեր զբարեկամ* ընդ կարաստոյ *(Սիրաք, Է)։* Ընդ յանցանաց *իւրոց մատուցէ Տեառն իւրոյ խոյ անարատ (Ղևտ., Զ)։ Օր* ընդ աւուրս *եդի քեզ (Եզեկ., Դ)։ Համարս տալոց իցեն* ընդ ձեր *(Եբր., ԺԳ)։ Նա ինձ չար* ընդ բարւոյ *հատոյց (Բուզ., 4, ԾԴ)։ Զպատուական մարգարիտն փոխանակիցէ* ընդ *անարգ* թռուչայի *(Եղ., 7)։* Ընդ կրակի *փառս գնեն և տէրութիւն (ՂՓՊՀ, ՀԵ)։ Զանձինս իւրեանց փոխանակեցին* ընդ *Աստուծոյ* ճշմարտութեանն *(Ազ., 13)։ Տայցեն զպտուղ* ընդ միոյ *հարիւր (Ն.տ., 654)։ Ուստի՞ տացէ քաջն Արտաշէս ... բիւրս ի բիւրուց* ընդ *քաջազգւոյ կոյս* օրիորդիս *Ալանաց (Մխ, 2, Ծ)։ Պայազատէ զտէրութիւնն Վասակ որդի նորա* ընդ նորա *(ՅԴՊՀ, 118)։ Զիւրեանց ստացուածս վատնեալք* ընդ *աւուրն* պարենի՝ *ի վերջին տնանկութեան հասանէին (Ն. տ., 261)։*

*Այս կառույցի հետ կարող է գործածվել նաև* փոխանակ *նախադրությունը՝ առանց իմաստային նրբերանգ տալու։*

Օրինակներ՝ *Արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ ևս* փոխանակ ընդ մահուն *Գնելոյ (Բուզ., 4, ԺԵ)։ Զար* փոխանակ ընդ բարւոյ *ընդունէին (Ազ., 630)։* Փոխանակ ընդ այնր *յարքունուստ լնումք (Մխ, 3, ԽԸ)։* Փոխանակ ընդ կնոջ *միոյ՝ բազում կանայս արասցեն (Եղ., Զ)։* Փոխանակ ընդ երկրաւորիս *զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութիւն (Եղ., 7)։*

**Խնդրային այլ իմաստներ.**— Հանգման՝ *Տէր տայ պատերազմ* ընդ ձեր *(Ելք., ԺԴ)։* Վերաբերության՝ *Եթէ հոգաս* ընդ մեր, *ամենատէր ես (ԳՆՄՈ, ՀԶ)։ Ամենայն տանուտէր* ընդ տան *իւրոյ և* ընդ ընտանեաց *հոգայ (Ազ., 130)։ Աւէն* ընդ ամենեցուն *(Ն. տ., 632)։*

Ընդ+տրական կառույց.— *Սրանով արտահայտվում են խնդրային և պարագայական մի շարք իմաստներ։*

### 1. Խնդրային իմաստներ

Ա. Հանգման.— *Այսպիսի լրացում ստանում են* խառնել, գումարել, կռուել, գրգռել, ճակատել, մարտնչել, յարել, նախանձել, ոգորել, հարկանել *և այլ բայեր։* Ընդ *նախդիրը դրվում է տարբեր գոյականների հետ։*

Օրինակներ՝ *Նախանձէին* ընդ Մուրթքէի *(Եսթեր, Բ)։ Յարերուք* ընդ Քրիստոսի *(Կողոս., Գ)։ Համբառնայր հարկանել* ընդ վիմին *հաստատնոյ (Ագ., 142)։ Թագաւորն ոգորէր* ընդ սրբոյն Հռիփսիմեայ *(Ն. տ., 189)։ Խառնեաց զԱստուածութիւնն* ընդ մարդկութեանն *(Ն. տ., 385)։ Ամենայն իշխանքն գումարեալք* ընդ նմա *... գնացին (Ն. տ., 418)։ Սկսանէր ... գրգռել* ընդ *անօրէն* ուրացելոցն *(ՂՓՊՀ, ԿԴ)։ Ուղղէր ճակատս* ընդ թագաւորին *Արշակայ (Բուզ., 4, ԽԱ)։ Ճակատեցան* ընդ թագաւորութեանն *Հայոց Արշակայ (Ն. տ., 4, ԽԵ)։ Մարտեան* ընդ բերդին *ընդ այնմիկ պարսիկք (Ն. տ., 5, Ա)։ Կոյս մի* ընդ *միւսոյ* կուսին *մուրցացի ընդհարեալ ... գրգռէին զաղմուկ (ՅԴՊՀ, 326)։ Համեմատել զձեզ վայրկենի պատի՞ւն կամիս* ընդ *աստուածային* պատուոյն *(ՄԿՊԱԱ, 1, ԻԹ)։* Ընդ որում *ես համբուրեցից (Մարկ., ԺԴ)։ Նախանձ բերելով* ընդ *ծերունւոյն* Արգամայ՝ *հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ (Մխ, 2, ՄԱ)։ Անյագութեամբ քինով* ընդ մեռելոյն *կագին (ՂՓԹ)։* Ընդ *բեկեալ խեցեղէն* անօթոյս *մի ուժգնութեամբ մարտիցես (ԳՆՄՈ, ԿԶ)։ Գոռացեալ* ընդ *Պարսից* տէրութեանն *(Ագ., 132)։*

Ընդ+տրական *կառույցով կարող են արտահայտվել հանգման և այլ խնդրային համատեղ իմաստներ։*

Հանգման և փոխադարձ կապի՝ *Ընտելութիւն* ընդ մարդոյն *ունէին (Եզն., 1, ԺԶ)։ Զայնակցելով* ընդ մարգարէին՝ *ասեմ զնոյն (ՂՓՊՀ, Ճ)։ Թշնամացեալ էր տուն Թագաւորին* ընդ նմա *(Բուզ., 3, Ե)։ Հաճեսցի* ընդ ձեզ *(Ն. տ., 3, ԺԴ)։ Հաճեալ և քաղցրացեալ է* ընդ քեզ *(Ն. տ., 4, ԺԵ)։ Ոչ միաբանին* ընդ մեզ *(ՅԴՊՀ, 100)։ Տրդատայ խնամեցեալ* ընդ ումեմն *քաջի Բասղացն եկեալ հատուածի (Մխ, 2, ԾԸ)։ Բարեկամացեալ ...* ընդ Տրդատայ *մեր Թագաւորի (Ն. տ., ՁԳ)։ Միաբանեաց* ընդ աստուածութեանն *(Եղ., 2)։ Միաբանեա* ընդ մեզ *(ՂՓՊՀ, ԺԳ)։ Ի մեծ նախանձու և ոխութեամբ գնայր* ընդ Ողոմպիանոյն *(Բուզ., 4, ԺԵ)։*

Հանգման և միասնության՝ *Տացէ* ընդ նմա *պատերազմ Փարաւոն*

(Եզեկ., ԺԷ)։ Ընդ բարեկամին *խրոմ ընդ Մովսեսի խօսէր* (Եղն., 1, ԻԳ)։

Հանգման և ճամապատասխանության՝ *Հաւասարեսցի մահս մեր ընդ մահու մարդկան* (Եղ., 7)։

Հանգման, փոխադարձ կապի և միասնության՝ *Դաշինս կռէր ընդ նմա* (Ագ., 877)։ *Ընդէ՞ր ոչ ընդ իս կամ ընդ քում* ճայրապետին *ոչ հաշտեցար* (ՅԴՊՀ, 86)։

Բ. Ուղղության.— *Այսպիսի լրացում երբեմն ստանում են* ճայել, ակն ունել *և նման իմաստի ուրիշ բայեր, որոնք սովորաբար այլ կառույցներով են այս իմաստով լրացում ստանում*։

Օրինակներ՝ *Հայի* ընդ դաշտին *Մատրավանից* (ՅՄՊՏ, 333 ա)։ *Ծանր քինու հայէր հայր աղջկանն* ընդ փեսային *խրոմ* (ՂՓՊՀ, Ի)։ Ընդ մեզ *ակն կալցին* (Բուզ., 4, Ե)։

Գ. Վերաբերության.— *Այս իմաստը արտահայտվում է* զարմանալ, ճոգալ *և սակավաթիվ այլ բայերի մոտ*։

Օրինակներ՝ *Հոգայք* ընդ *այնչափ ոգւոյ* փրկութեան (ՂՓՊՀ, ԻԱ)։ Ընդ *քո* իմաստութեանդ *զարմացաք* (ՅՄՊՏ, 309ա)։ *Այսքանեօք հնարաւորութեամբ* ընդ փրկութեան *խմում հոգացար* (ԳՆՄՈ, ԿՁ)։

Դ. Փոխարինության.— *Այս իմաստով նույնպես լրացում ստանում են սովորաբար այլ կառույցներով նույնիմաստ լրացում ունեցող բայերը, ինչպես՝* թագաւորել, պայազատել, փոխանակել *և այլն*։

Օրինակներ՝ *Ոչ ունիմք իշխանութիւն փոխանակել զնա* ընդ *այլում* տեառն (Եղ., 7)։ *Աստ ապա վախճանեալ կայսրն՝ Հերակլ՝ Կոստանդին որդի նորա* ընդ նմա *թագաւորէ* (ՅԴՊՀ, 82)։ *Եղբայր նորուն Աշոտ* ընդ նմա պայազատէր *զիշխանութիւնն զայն* (Ն. տ., 142)։ *Ճշմարտութիւնդ Աստուծոյ... ոչ կամիմք փոխանակել* ընդ *ձերում* ստութեանդ (Ն. տ., 253)։ *Ոչ յերկրի այլ տէր փոխանակեմք* ընդ քեզ (Եղ., 2)։

Ե. Միասնության.— *Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բայերը, ինչպես՝* առաքել, բնակել, առնել, առնուլ, ելանել, անեցուցանել, երթալ, տանել, մտանել, շրջել *և այլն*։ Ընդ *նախդիրը կարող է դրվել և՛ անձ, և՛ իր ցույց տվող բառերի հետ*։

Օրինակներ՝ *Բնակէ երիտասարդ* ընդ կուսի (*Եսայի*, ԿԲ)։ *Շնայր* ընդ քարի և ընդ փայտի (Երեմ., Գ)։ Ընդ մարդկան *շրջեցաւ* (*Բարուք*, Գ)։ *Զիա՞րդ չէականքն և չմշտնջենաւորքն* ընդ էականին *և* ընդ մշտնջենաւորին *երկրպագութիւն առնուցուն* (Եղն., 1, Գ)։ Ընդ պատառոյն *ևմուտ սատանայ* (Ն. տ., ԻԲ)։ *Արասցէ* ընդ փորձութեանն *և զելս* (Ն.

տ., 2, ԻԲ)։ Բանջար ընդ մսոյ եփեալ իցէ (Ն. տ., 4, ԺԳ)։ Ընդ ինքեան շրջեցուցէ (Ագ., 858)։ Զերկիրս ամենայն ընդ քեզ տարար (Մխ, 2, ԿԱ)։ Ելցէ նա արտաքս ընդ Յուդայի (ՂՓՊՀ, ԼԲ)։ Առաքէր ընդ նմա (Ն. տ., ԼԴ)։ Մի՛ կորնչիք ընդ դմա (Ն.տ., ԼԶ)։ Որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ (Բուզ., 3. Զ)։ Ի մետաղս բանտից ըմբռնեալ էր ընդ սրբոց Ղևոնդեանցն (ՅԴՊՀ, 59)։ Ոչ սակաւ ինչ ընդ մարմնոյ խնամոց աճեցուցանել ջանայր և զհոգւոյն ևս իմաստութիւն (Ն.տ., 142)։ Զոր ընդ քեզ թաղեցեր ի գերեզմանին (Ագ., 651)։ Բազում երամակս փղաց յղէր ընդ նմա (Եղ., 4)։ Ուղեկցեալ ճանապարհորդէր ընդ ամբարակապետին ընդ Վեհդենշապհոյ (ՂՓՊՀ, ԾԴ)։

Ընդ+տրական կառույցով կարող են արտահայտվել նաև խառն իմաստներ։

Միասնության և փոխադարձ կապի՝ Սոքօք հաշտեսջիք ընդ Աստուծոյ (Ագ., 718)։ Զթունաւոր գազանս ... ընդ իս անարժանի ընդ իւրում ծառայիս քաղցրացուցանէր (Ն. տ., 248)։

Միասնության և տեղի՝ Կայ յաւիտեան ընդ հոր իւրում (Ագ., 381)։ Որ անօգուտ ընդ մարդկան է բնակեալ (Ն. տ., 522)։

Միասնության և հաղորդման՝ Խոստովանեսցիս ընդ մեզ (Բուզ., 4, Ե)։

Զ. Համապատասխանության.— Այսպիսի լրացում ստանում են սակավաթիվ բայեր։

Օրինակներ՝ Ընդ քո կամացդ առնեմ զամենայն (ՅՄՊՀ, 318ա)։ Զնա ևս ընդ այլոց կապելոցն հաւասարեալ եդին ի բանտի (ՅԴՊՀ, 128)։

Է. Սահմանափակման.— Ընդ+տրական կառույցով արտահայտվող այս իմաստը խառն է շահի իմաստին։ Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ կամել, գործել, գութ ունել, ջանալ և այլն։ Ընդ նախդիրը դրվում է անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Ընդ ամենեցուն կեանս կամի (Եղ., Զ)։ Գութ ունի ընդ սմա (Ն.տ.)։ Երկայնմտութեամբ ջանան ընդ ազգի մարդկան (Ն.տ., 7)։ Գործիցէ ընդ մեզ (ՂՓՊՀ, ԼԳ)։

Այս իմաստը կարող է համատեղվել նաև ներգործող խնդրի իմաստին։ Օրինակ՝ Ընդ տեառն Յովհաննու գայրացար (ՂՓԹ)։

2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Տեղի իմաստն ունի ուղևորության տեղի և դադարման տեղի տեսակները։ Ուղևորության տեղի իմաստով ընդ+տրական կառույցով լրացումը դրվում է շարժման բայերի մոտ, ինչպես՝ արձակել,

մտանել, որոնք սովորաբար այլ կառույցով են այս իմաստի լրացում ստանում։

Օրինակներ՝ Արձակեցին ընդ ծովեզր դաշտին հիւսիսական ծովուն մեծի (Բուզ., 3, Զ)։ Ընդ մօրն մտանէր, և արեգակն որդի լինէր, և ընդ քեռն անկանէր, և լուսին ծնանէր (Եղն., 2, Ը)։

Դադարման տեղի իմաստը ևս սովորաբար այլ կառույցներով է արտահայտվում։ Սակայն պատահում են նաև ընդ+տրական կառույցով դրսևորվելու դեպքեր։

Օրինակներ՝ Զօգայ կացի ընդ քարաժեռ վիմին (ՅԴՊՀ, 287)։ Թագաւորն ... կայր ի տեսիլ կերպարանաց խոզի ընդ ժողովրդեանն (Ագ., 773)։ Որք ընդ այրին մարտնչէին (Մխ, 3, ԽԵ)։

Երբեմն լրացումը կարող է մեկնաբանվել և՛ տեղի, և՛ հաղորդման իմաստներով։ Օրինակ՝ Խնդրուածս առնէր ընդ ամենայն աշխարհին (Բուզ., 5, Ե)։

Ուղեկորության և դադարման տեղի իմաստները կարող են համատեղվել։ Օրինակ՝ Ընդ կողմանն հիւսիսոյ ծովուն ... սակաւ արամբք երթային (ՂՓՊՀ, ԶԱ)։

**Բ. Ժամանակի.—** Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստի բայեր, ինչպես՝ հարկանել, սպանանել, տառապել, մաշել և այլն։

Օրինակներ՝ Մանկունք տղայք ընդ մանկութեանն և ընդ տղայութեանն խաղալիկ խանգարեալք ... դեգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն (Բուզ., 3, ԺԳ)։ Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնէլ... հարկանէր զմի ի լեգեոնաց անտի սպանանէր (Ն. տ., 5, ԼԲ)։ Ընդ յերկարեալ իմ պանդխտութեան անդ ... յաւէտ իմն տրտմեալ տառապէի (ՅԴՊՀ, 265)։

Երբեմն ընդ+տրական կառույցը կարող է մեկնաբանվել և՛ ժամանակի, և՛ տեղի իմաստներով։ Օրինակ՝ Ընդ յարուցեալ ի վերայ իմ պատերազմիս ոչ երկիցէ սիրտ իմ (Ագ., 79)։

**Ընդ+հայցական կառույց.—** Սրանով արտահայտվում են բազմաթիվ իմաստներ, որոնք շատ դեպքերում դրսևորվում են հստակորեն։ Սակայն քիչ չեն իմաստների միահյուսման դեպքերը։

### 1. Խնդրային իմաստներ

**Ա. Հանգման.—** Այսպիսի լրացում ստանում են բազմաթիվ բայեր, որոնք պատկանում են իմաստային տարբեր խմբերի, ինչպես՝ անկանել, ամուսնանալ, բախել, գումարել, դիպեցուցանել, թագաւորել,

խառնակել, խառնել, խնամենալ, կապել, կարել, հաղորդել, հարկանել, մարտնչել, միանալ, նախանձել և այլն: Ընդ նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և վերացական գոյականների հետ:

Օրինակներ՝ Մի՛ նախանձիցի սիրտ քո ընդ մեղաւորս (Առակ., ԻԳ), խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի (Եզն., I, ԺԵ): Ոչ ինքն դրդեաց զնոսա անկանել ընդ միմեանս (Ն. տ., ԺԹ): Չէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ (Ն. տ., I, ԻԵ): Դիպեցուցանէ աղեղամբն ընդ մէջ թիկանցն (Մխ, 2, ՁԴ): Չկապել ընդ գարշապարս մեղաց (Ագ., 16): Մի՛ խառնակեսցուք ընդ անարգութիւն պղծութեան (Ն. տ., 147): Բևեռեա զքեզ ընդ երկիւղն Աստուծոյ (Եզն., խրատք): Հարկանելով ընդ խելսն վտանգեսցէ զնա (Ագ., 107): Որ խնամեցեալ էր ընդ նախահարս Վասպուրականի (Մխ, 2, ԿԲ): Ընդ անձինս իւրեանց մարտ եդեալ կռուին (Եղ., 1): Քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան (Ն. տ., 6): Միացուցանեն զանձինս ընդ յոյսն բաղձալի երկնաւոր կոչմանն (ՂՓՊՀ, ԺԷ): Թագաւորեցին նորա երկու որդիքն, հակառակելով ընդ միմեանս (Ն. տ., Կ): Այլք ընդ դասակս այծեաց ձախակողմեան հաղորդեալք՝ գնային (Ն. տ., Հ): Գումարէր զօրն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի (Բուզ., 3, Ը): Ընդ միմեանս գունդն երկոքեան բախէին (Ն. տ., 4, ԽԷ): Նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր ընդ գետինն (Ն. տ., 5, ԻԳ): Որոց սպառնացաւ Քրիստոս ընդ անհաւատսն դասել (Եզն., խրատք): Ընդ իս բարեկամացան ուխտիւ և երդմամբ (ՂՓՊՀ, ԽԵ): Ոխացաւ ընդ Ողոմպին (Բուզ., 4, ԺԵ): Խստացար ընդ իս (Ն. տ., 4, ԾԴ):

Երբեմն հանգման և միասնության իմաստները կարող են համատեղվել ընդ+հայցական կառույցի մեջ:

Օրինակներ՝ Շնային ընդ կանայս քաղաքայնոց իւրեանց (Երեմ., ԻԹ): Տային ընդ միմեանս մարտ պատերազմի (Բուզ., 3, Դ): Կռուեցան ընդ միմեանս (Ն. տ., 9): Վիճէր հանապազ ընդ բազումս (Ն. տ., 5, ԻԸ): Համակ ընդ ձեզ նենգաւ է գնացեալ (Ն. տ., ԼԵ): Խօսեցաւ Աստուած ընդ հարսն (Ագ., 343): Կարգէ ընդ առաջին նախարարութիւնսն (Մխ, 2, Ը): Հաղորդէր ընդ նոսա (ՅԴՊՀ, 87): Ջոր ընդ միմեանս շփիցեն (Եզն., 3, Ժ):

Կարող են համատեղվել հանգման և ուղղության իմաստները:

Օրինակներ՝ Ես կարող լինէի զԱրեաց տեառն և զաւագացն զմիտսն ուղղել ընդ իս (ՂՓՊՀ, ՀԵ): Ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ (Եղ., 1): Ուղղեսցի ընդ չորս անկիւնս (Ագ., 490):

Կարող են համատեղվել հանգման և համապատասխան իմաստները:

Օրինակներ՝ Հաւասարեսցի մահս մեր ընդ մահու արդարոցն, և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ մարտիրոսացն (Եղ., 5)։ Որ երկայնէր զխօսս իւր համեմատեալ ընդ ճառս իմաստնոց և ընդ առակս նոցա (ՄԿՊԱԱ, 2, ԺԴ)։

Հանգման իմաստը կարող է համատեղվել սահմանափակման իմաստին։

Օրինակներ՝ Արժան էր ձեզ ունել գութ ընդ նոսա (Բուզ., 3, ԺԴ)։ Խանդացեալ ընդ նոսա որդւոյն Սաթենկայ՝ սրով վճարեցան ի կենաց աստի (ՅԴՊՀ, 36)։

Հանգման և տեղի իմաստներով կարելի է մեկնաբանել ընդ+հայցական որոշ կառույցներ։

Օրինակներ՝ Թաշկինակաւն զոր ընդ գլուխն էր ածեալ՝ հանեալ պատէր զթաթ առիւծուն (Բուզ., 5, ԻՉ)։ Էած գօտի ընդ մէջ իւր (Ն. տ., 152)։

Այսպիսին պետք է համարել նաև ընդ+հայցական կառույցը միջև նշանակությամբ։

Դատ արարէք ընդ իս և ընդ այգի իմ (Եսայի, Ե)։ Դատաստան արդար առնիցէ ընդ այր և ընդ ընկեր իւր (Եզեկ., ԺԸ)։ Բանս արկցէ ընդ Թագաւորին Պարսից ընդ Շապուհ և ընդ Արշակ (Բուզ., 4, Ի)։ Ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին (Ն. տ., 5, ԺԳ)։

Բ. Ուղղության.— Այսպիսի իմաստով լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝ հայել, նայել, յարձակել, պշնուլ, փչել, գրել և այլն։ Ընդ նախդիրը դրվում է և՛ առարկա, և՛ տեղ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Հայէին ընդ Մովսէս (Ելք, ԼԳ)։ Գրեաց Թագաւորն յիշխանութեան իւրում ընդ ծով և ընդ ցամաք (Եսթեր, Ժ)։ Նայեցա՞ր մտօք քովք ընդ ծառայ իմ ընդ Յոբ (Յովբ, Ա)։ Ընդ Աստուծոյ յարձակեցան (Մխ, 2, ՁԷ)։ Ընդ երկիր պշնուին (Եղ., 3)։ Փչէր ընդ ծաղկեալ ալեօք մօրուսն (ՅԴՊՀ, 101)։ Նայեցարուք իմաստուն մտօք ընդ անձինս ձեր (Ագ., 521)։

Ուղղության և տեղի իմաստները կարող են համատեղվել։

Օրինակներ՝ Ձերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս թքանելոյ (Եսայի, Ձ)։ Ընդ նոյն շաւիղս գնան (Եզն., 2, ԻԵ)։ Միւս ևս այլ հրովարտակ հրամայեաց գրել ընդ աշխարհս և ընդ գաւառս իշխանութեան իւրոյ (Ագ., 133)։ Դիմեալք ընդ տիեզերս՝ աւարեցին զազգն ամենայն (Ն. տ., 686)։ Առաջնորդէր բազմութեան զօրացն ընդ լեառնակողմն (ՅԴՊՀ, 175)։

կարող են համատեղվել հանգման և համապատասխանության իմաստները։

Ուղղության և միասնության իմաստները կարող են համատեղվել։ Օրինակ՝ Ոչ աճապարեաց ընդ փախստեայսն (Մխ, 2, ՀԹ)։

Գ. Միասնության.— Այս իմաստով լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ աշխատել, առնուլ, արածել, գաղբել, գրել, դատել, դնել, երագել, ըմպել, ընդունել, թուել, խաբել, հանապազորդել, մտանել, յղել, նզովել, սնանել, սպանանել, տանջել, ուտել, ուրանալ և այլն։ Ընդ նախդիրը դրվում է հիմնականում անձ կամ կենդանի ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս և ընդ փարիսացիս ուտէր և ըմպէր (Եզն., 4, ԺԲ)։ Մինչև թագաւորիս մերում լինել խող, և ընդ վայրագասուն գազանս արածել (Ագ., 798)։ Հանապազորդեալ էր ընդ գազանս անապատի (Բուզ., 5, ԻԷ)։ Որով ընդ մարտիրոսն անուանք նոցա գրեցան ի դպրութիւն կենաց (ՅԴՊՀ, 110)։ Պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունսն սնանիցին (Եզն., 2, ԺԱ)։ Դու ընդ ճշմարիտ մշակս վարձս առցես (Ագ., 755)։ Առին ընդ իւրեանս պատարագս (Ն. տ., 802)։ Գաղթին և նոքա ընդ ցեղս այլոց նախարարացն (Մխ, 2, ՀԸ)։ Ոչ կարաց երագել ընդ փախստեայսն (Ն. տ., ԼԷ)։ Ընդ այլ նախարարս թուեսցի (Ն. տ., 3, ԿԵ)։ Մի՛ դու ընդ իս բազմապատիկ տանջիր (Եղ., 2)։ Աւելի քան զեւթ հարիւր վարդապետս յղէր ընդ նոսա (Ն. տ.)։ Ապստամբեցոյց ընդ իւր զբազումս (Ն. տ., 4)։ Ընդ ընկերս մտանեն յուխտ սրբութեան (Ն. տ., 6)։ Ես մասն ընկալայց ընդ երանելիսն (Ն. տ., 7)։ Դատիմք զնա ընդ այլ չարագործսն (Ն. տ.)։ Ընդ ամենեսին և զժողովն Քաղկեդոնի նզովէր (ՅԴՊՀ, 62)։ Դաւաճանեալ խաբեցան ընդ նոսա ըստ օրինի տօմարին Լևոնի (Ն. տ., 78)։ Աշխատեցարն ընդ իս (Ագ., 100)։

Սակայն հնարավոր է նաև, որ ընդ նախդիրը դրվի իր ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Մահուան դեղովն զնա ընդ օրէնսն սպանանէր (Բուզ., 4, ԺԵ)։ Զկապանսն երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եդեալ էր (Եղ., 7)։

Վերջին օրինակում ընդ+հայցականը կարելի է մեկնաբանել նաև տեղի իմաստով։

Միասնության իմաստը կարող է համատեղվել հաղորդմանը։ Օրինակ՝ Խօսեցաւ Յովսէփ ընդ իշխանսն Փարաւոնի (Ծնն., Ծ)։

Համատեղվել կարող են միասնության և ուղիղ խնդրի իմաստները։ Օրինակներ՝ Այսպիսին ընդ մահապարտս համարեալ լիցի (Ագ.,

135)։ Ընկալցին զնա ընդ աստուածս (Մխ, 2, ԼԳ)։

կարող են համատեղվել միասնության և տեղի իմաստները։

Օրինակներ՝ Ընդ գազանս անապատի եդեր զբնակութիւն նորա (Ագ., 179)։ Որ երթեալ հասանէր ի մեծ ժողովն Նիկիայ ընդ եպիսկոպոսսն (Ն.տ., 884)։ Վնասակարացն ընդ անվնասակարսն չմարթի բնակել (Եզն., 2, Ձ)։ Զես կեցեալ ընդ իս (ՂՓՊՀ, ՂԱ)։ Զոր ... դու ընդ իս տեսանես (Ն. տ., ՁԸ)։ Տարեալ հանգուցանեն զնա ընդ հարս իւր (ՅԴՊՀ, 44)։

Ընդ+անորոշ դերբայ կառույցը կարող է մեկնաբանվել միասնության և ժամանակի իմաստներով։ Օրինակ՝ Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն (Բուզ., 6, Ժ)։

Նույնպիսի կառույցը կարող է մեկնաբանվել միասնության, ժամանակի և միջոցի իմաստներով։ Օրինակ՝ Ընդ նորոգել այնր աթոռոյ, ասեն, նորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց (Բուզ., 4, Գ)։

**Դ. Վերածման.**— Այս իմաստով լրացում ստանում է վերածման գործողություն ցույց տվող բաժանել բայը։ Ընդ նախդիրը դրվում է գոյականաբար գործածված թվականի կամ գոյականի հետ։

Օրինակներ՝ Ընդ երիս բաժանեսցես քեզ զսահմանս երկրին քո (Բ, Օրէնք, ԺԹ)։ Միջով չափ ընդ երկուս բաժանէին (ՅԴՊՀ, 248)։ Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ընդ չորս (Մխ, 2, ԾԳ)։ Ընդ երիս կողմանս զգունդն քակեալ բաժանէին (Եղ., 3)։

Երբեմն ընդ+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել վերածման և տեղի իմաստներով։ Օրինակ՝ Եօթանասուն և երկու նահապետք լեզուաց կացեալ՝ բաժանեցան ընդ երկիր, հաստատեալք յիւրաքանչիւր սահմանս (Ագ., 579)։

**Ե. Վերաբերության.**— Այսպիսի լրացում ստանում են զգացական բայերը, ինչպես՝ բարկանալ, զարմանալ, խնդալ, զայրանալ, ուրախանալ և այլն, նաև ուրիշ բայեր՝ հոգալ, հոգ տանել և այլն։

Օրինակներ՝ Զարմացին ընդ նա թշնամիքն ձեր (Ղևո., ԻԶ)։ Զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա (Մատթ., Է)։ Ոչ խնդայ ընդ կորուստ կենդանեաց (Իմաս., Ա)։ Այլ շոգմոգ բանիւք զայրացուցանել զքեզ, տէր, ընդ իս փութային (ՂՓԹ)։ Ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան (Եզն., 1, ԺԹ)։ Ես առաւել պարտիմք ընդ փրկութիւն և ընդ գիտ ամենեցուն հոգալ (ՂՓՊՀ, ԻԲ)։

Երբեմն ընդ+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել վերաբերության և պասիվ ներգործության իմաստներով։

Օրինակներ Բարկացաւ ընդ բանսն (Ագ., 118)։ Զայրացան ընդ

բանն նորա (Բուզ., 3, Ձ)։ Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն (Մխ, 1, Գ)։ Ընդ հրաման մտածութեանդ քո ուրախացայ (Ն. տ., 2, ԼԳ)։

Կարող են համատեղվել վերաբերության, պասիվ ներգործության և պատճառի իմաստները։

Օրինակներ՝ Յոյժ զուարճացաւ Խոսրով ընդ լուր գալստեան ազգականացն (Մխ, 2, ՀԳ)։ Ընդ որ ուրախացեալ Տրդատայ, գրէ հրովարտակ (Ն. տ., ՁԴ)։

Որոշ կառույցներ կարելի է մեկնաբանել վերաբերության և սահմանափակման իմաստներով։

Օրինակներ՝ Մի՛ ոք ընդ այս երկբայացեալ տարակուսեսցի (Մխ, 1, ԺԴ)։ Ոչ ինչ զշարեցաւ ընդ կարգս Զաւինայ (Բուզ., 5, Գ)։

Զ. **Միջոցի**.— Այս իմաստով ընդ+հայցական կառույցը դրվում է տարբեր իմաստի բայերի մոտ, ինչպես լսել, լուսավորել, մեծարել, զբօսնուլ, սպանանել և այլն։

Օրինակներ՝ Դու ընդ քո՛ ձեռն զայնպիսի օգտակար ծառայն սպաներ (ՂՓՊՀ, ԽԶ)։ Կրկնակի ընդ ձեռն Ուռնայրի գերագոյն լուսաւորեցան (ՄԿՊԱԱ, 1, Թ)։ Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա (Եզն., 1 ԺԵ)։ Ընդ աներևոյթ զօրութիւնս ինչ կեցցէ (Ն. տ., ԻԴ)։ Միտք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս զբօսեալ էին (Բուզ., 3, Գ)։ Կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրիստոսի (Ն. տ., ԺԴ)։

Որոշ կառույցներ կարելի է մեկնաբանել միջոցի և ներգործող խնդրի իմաստներով։

Օրինակներ՝ Ընդ աշխարհական ճահճայս մի՛ հաղորդիք (ՄԿՊԱԱ, 2, ԽԶ)։ Ընդ ճշմարտութիւն մեր քրիստոնէիցս նեղիս (Ղև., Պատմ., ԺԴ)։ Յափշտակիմք ընդ ամպս (Ագ., 605)։

Շատ դեպքերում համատեղվում են միջոցի և տեղի իմաստները։

Օրինակներ՝ Ընդ ռնգունս նորա ծուխ ելանէ հնոցի հրոյ կայծականց (Յովբ, ԽԱ)։ Ահաւասիկ գալոց է ընդ ամպս (Յայտն., Ա)։ Հանէր զեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր (Բուզ., 5, ԻԶ)։ Ելանէր ... ընդ Արեւդուռն քաղաքին (Ագ., 192)։ Նախ զլեզուն ընդ ծործորակսն հանել (Ն. տ., 205)։ Քստմունք գնան ընդ անդամսն (Եզն., 2, ԺԹ)։ Թափանցանց ընդ թիկունս յայնկոյս յերկիր հարստէր (ՅԴՊՀ, 15)։ Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան ագահի յարքայութիւն աստուծոյ (Բուզ., Դ)։ Շողն ընդ երդ մտանիցէ (Եզն., 3, ԺԴ)։ Երանելի խուժիկն ընդ այլ ճանապարհ որոշէր ի նոցանէն (ՂՓՊՀ, ԾԷ)։

Միջոցի և ձևի իմաստները կարող են համատեղվել նույն կառույցի մեջ։

Օրինակներ Ընդ անհնարին պատերազմ մարտնչին ի մէջ բարձրացելոց ջրեղէն լերանց և ի մէջ խոնարհելոց ծովային ձորոցն (Ագ., 3)։ Բազմութիւն մարդկանն իջեալ ի գետին ընդ մոխիր թաւալեալ՝ աղէին առ հասարակ իբրև ընդ մի բերան (Ն. տ., 243)։

է. Պասսիվ ներգործության.— Այսպիսի լրացում ստանում են զգացական բայերը, ինչպես՝ տրտմել, նեղել, ուրախանալ, ամաչել, սրտմտել և այլն։

Տրտմեալ ընդ մահ աղջկանն, տխրացեալ սգայր (Ագ., 202)։ Ընդ որ նեղեալ Երուանդայ ... փոխէ զարքունիսն յարեւմուտս կոյս (Մխ, 2, ԼԹ)։ Ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս (Ն.տ., 3, ԿԸ)։ Ջիարդ ընդ յայտնութիւնդ ոչ ամաչէք (Ղև., Պատմ., ԺԴ)։ Սրտմտեալ ընդ սուտ ... խօսս արքային Վրաց (ՂՓՊՀ, ՀԴ)։ Ընդ իշխանութիւնս ամպարշտաց հեծեն արդարք (Առակ., ԻԹ)։

Երբեմն պասսիվ ներգործության և պատճառի իմաստները կարող են համատեղվել։

Օրինակներ՝ Յոյժ ցասուցեալ էր ընդ անունն Քրիստոսի (Եղ., 1)։ Յոյժ զարմացան ընդ իրսն (Ն. տ., 7)։

Ը. Սահմանափակման.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝ առնել, ունիմ, դատել և այլն։ Ընդ նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Ընդ փայտ դալար զայս արարին (Մխ, 2, ՂԲ)։ Առնէր ընդ նոսա զայն ինչ (Եղ., 1)։ Գութ և սէր ունիմ ընդ աշխարհն ձեր (Եղ., 7)։ Զոր արար Տէր Աստուած քո ընդ երկուս թագաւորսն (Բ, Օրէնք, Գ)։ Դատեսցի դատաստան ընդ ոսոխս իւր (Երեմ., Ծ)։

Երբեմն ընդ+հայցական կառույցը կարող է մեկնաբանվել սահմանափակման և տեղի իմաստներով։ Օրինակ՝ Զոր գործեալ էր ընդ աշխարհն Հայոց (Եղ., 6)։

Թ. Փոխարինության.— Այսպիսի լրացում ստանում են փոխանակել, առնուլ, տալ և այլ բայեր, որոնք նույնիմաստ լրացում ստանում են հիմնականում ընդ+սեռական կառույցով։

Օրինակներ՝ Ոչ զանանց կեանսն մեր կարեմք փոխանակել ընդ ապականացու պատրանս աշխարհին (Եղ., 7)։ Պարգևէ ... զվարձս վաստակոց նորա ընդ հանոյս անուան իւրոյ (ՂՓՊՀ, ԾԷ)։

Ժ. Այլ խնդիրներ.— Ընդ+հայցական կառույցով երբեմն արտա-

հայտվում է ուղիղ խնդիր, ընդ որում մի դեպքում գործ ունենք առաջին ուղիղ խնդրի հետ։

Օրինակներ՝ Ես ոչ ընդ ձեր մահ կամէի, և ոչ ընդ իշխանին վատ խրատտուին անկանել (Եղն., 1, ԺԹ)։ Ընդ անօրէնս համարեցաւ (Մարկ., ԺԵ)։ Ոչ կամեցեալ ընդ ձեր կորուստ (Ագ., 521)։

Երկրորդ դեպքում ընդ+հայցական կառույցով արտահայտվում է երկրորդական ուղիղ խնդիր Օրինակ՝ Չէ իսկ պարտ ... զգործ Աստուծոյ ընդ սատանայի լլկանս համարել (ՄԿՊԱԱ, 2, ԻԹ)։

Այս կառույցով հազվադեպ արտահայտվում է պահանջման իմաստ, որի դրսևորման միջոցը բացառական հոլովն է։ Օրինակ՝ խնդրէին Հայք ընդ Շապուհ՝ այլ թագաւոր իւրեանց (ՂՓՊՀ, Թ)։

Հազվադեպ ընդ+հայցական կառույցով արտահայտվում է ներգործող խնդրի իմաստ։ Օրինակ՝ Նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին (Ագ., 20)։

## 2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Սա երկու դրսևորում ունի՝ ուղղորդության տեղի և դադարման տեղի։ Առաջին դեպքում ընդ+հայցական կառույցը շարժման բայերի մոտ ցույց է տալիս շարժման նպատակակետ տեղը (որը կարող է արտահայտվել նաև այլ միջոցներով)։

Օրինակներ՝ Զուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն (Բուզ., 4, Ի)։ Ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունչ տանէիր (Ն. տ., ԾԴ)։ Դեսպանս արձակէր ընդ կողմանս կողմանս (Ագ., 157)։ Յորժամ ընդ արևելս ընթանան՝ չէ ինչ արգել՝ թէ ընդ արևմուտս ոչ արշաւիցեն, և յորժամ ընդ հիւսիսի վարգին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրասցեն (Եղն., 1, Գ)։ Իջանէր արիւնն ընդ ծայրս ոտից մատանց նորա (Ագ., 102)։ Պատուիրակս հանեալ ընդ աշխարհս ամենայն (Ն. տ., 140)։ Փութացեալ ընդ ֆաղաֆամէջսն՝ ելանէր ընդ արևելս կոյս (Ն. տ., 192)։ Ընթացան ընդ տիեզերս ամենայն (Ն. տ., 692)։ Ոչ կորացեալ մտանէր ընդ գետին (ՂՓՊՀ, ՂԲ)։

Տեղի իմաստն արտահայտվում է նաև դադարման բայերի լրացման միջոցով։

Օրինակներ՝ Զսեղանն դիցես ի կողմանէ խորանին ընդ հիւսիսի (Ելք, ԻԶ)։ Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր (Բ, Թագ., ԺԸ)։ Ցանեաց ընդ երեսս դաշտին տունկ մանրատունկ (Եզեկ., ԺԷ)։ Մոլորեցուցէ զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի (Յայտ., Ի)։ Սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն (Բուզ., 4, ԺԴ)։ Ընդ ամենայն

քաղաքս ոչ թողին ամենևին շինած (Ն. տ., ԾԵ)։ Սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել (Ն.տ., 6, Թ)։ Ընդ բազում տեղիս կտրեալ զքարինսն (Մխ, 1, ԼԹ)։ Ասպատակեցից ես ընդ աշխարհս, որք շուրջ զքև (ՄԿՊԱԱ, 2, ԺԴ)։ Բան հրամանացն ընդ աշխարհ տարածեալ իցէ (Եզն., 2, ԺԳ)։ Ազդ լինիցի նոցա, որպէս ... եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ (Ն. տ., ԺԸ)։ Հրամայեաց քարոզել Աւետարանին ընդ ամենայն տիեզերս (Ագ., 95)։ Ընդ մոխիր թաւալեալ (Ն. տ., 243)։ Սերմանեսցեն ընդ ամենայն տիեզերս (Ն. տ., 625)։

Ընդ+հայցական կառույցը որոշ բայերի մոտ ունի բացառականով արտահայտված տեղի իմաստ։

Օրինակներ՝ Ընդ եղեգան փող ծուխ ելանէր (Մխ, 1, ԼԱ)։ Ընդ քիթսն և ընդ բերանն առհասարակ գոլոշի ջերմախառն ելանէր (Եզ., 2)։ Ձուկն բազում ելանէր ընդ ակն աղբերն (Բուզ., 5, ԻԷ)։ Գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր (ՅԴՊՀ, 73)։ Դարձեալ ել ի Հայս ընդ գաւառն Վանանդայ (Ն. տ., 178)։ Արտասուք ընդ ծնօտս նոցա թորէին (Ն. տ., 263)։ Ընդ ցածուն վայրս լերինն բարձանց անկանէր յայսկոյս (Ն. տ., 196)։

Որոշ բայերի մոտ ընդ+հայցական կառույցն ունի գործիականով արտահայտված տեղի իմաստ։

Օրինակներ՝ Փառքն Աստուծոյ Իսրայելի գային ընդ ճանապարհն արևելից (Եզեկ., ԽԴ)։ Ոմանք ընդ ցամաքն աճապարեալ (Ագ., 33)։ Ընդ ցամաք և ընդ ծով փութացեալ աճապարէին (Ն. տ., 874)։ Եռացին որդունք ընդ աչս նորա և ի վայր սորեցին ընդ ռնգունս նորա (Եղ., 6)։ Հրաման տայր ... ընդ փողոցս ելանել ի շինէն (ՂՓՊՀ, ԿԸ)։

Այս դեպքում տեղի իմաստը կարող է համատեղվել հանգման իմաստի հետ։ Օրինակ՝ Կախեցայ ընդ պատուար պարսպին Դամասկեայ (ՅԴՊՀ, 279)։

Որոշ բայերի մոտ, պայմանավորված դրանց բառային իմաստով, ընդ+հայցական կառույցը կարելի է մեկնաբանել և՛ ուղևորության, և՛ դադարման տեղի իմաստներով։

Օրինակներ՝ Այլքն սփռեցան ընդ ամենայն տիեզերս (Ագ., 689)։ Ցրուեսցէ Տէր զձեզ ընդ ամենայն ազգս (Բ, Օրէնք, Դ)։ Աստուածպաշտութիւն տարածեցաւ ընդ ամենայն երկիրս Հայոց (Ագ., 16)։ Հանէր հրաման ընդ աշխարհս (Բուզ., 5, ԼԱ)։ Ձայն նորա իբրև զօձի որ շշիցէ, զի ընդ աւազ գնայցեն (Երեմ., ԽՁ)։

Ընդ+հայցական կառույցը անցանել բայի մոտ ունի տեղի պարագայական և խնդրային իմաստ (խնդրապարագայական իմաստ)։

Օրինակներ՝ Ընդ փոքր ձորակ մի անցանել կամէին (Ագ., 811)։ Որպիսի անցք անցցեն ընդ Եսթեր (Եսթեր, Բ)։ Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր (Սաղ., ԿԵ)։ Անցին ընդ ծովն (Ագ., 545)։ Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն (Մխ, 2, Ծ)։ Զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց (Եղ., 2)։

Բ. Ժամանակի.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ բազմանալ, բաժանել, դատել, ծածկել, կորուսանել, հրամայել, մտանել, ունել, վերանալ, տեսանել և այլն։ Ընդ նախդիրը կարող է դրվել ինչպես ժամանակ ցույց տվող բառերի, այնպես էլ անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Ընդ երեկս մտանէր առ Թագաւորն (Եսթեր, Բ)։ Ընդ այն ժամանակս անօրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութեամբ դատէր ընդդէմ ճշմարտութեանն մշակացն (Բուզ., 4, Ը)։ Ճչէր ընդ կոծելն (Ն. տ., Հ. ԺԵ)։ Վասն որոյ ընդ այգանալ աշալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ (Մխ, 2, ԽԲ)։ Ընդ ծագել արեգականն զգունդս յերիս մասունս բաժանեալ ի բանակն արկանէին (Եղ., 3)։ Ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս (Ագ., 45)։ Ընդ առաւօտանալն ծածկեցաւ տեսիլն (Ն. տ., 755)։ Սկսան բազմանալ ընդ ասելն (Ն. տ., 288)։ Ընդ օրհնելն վերացաւ յերկինս (Ն. տ., 496)։ Տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ (Եզն., 2, ԻԴ)։ Զայդ ևս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես (Եղ., 3)։

Երբեմն ընդ+հայցական կառույցը համատեղում է ժամանակի և չափի (ժամանակային չափի) իմաստներ։

Օրինակներ՝ Փառս և պատիւ ընկալցիք յԱստուծոյ ընդ երկայն աւուրս (ՅԴՊՀ, 157)։ Ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն (Բուզ., 4, ԾԴ)։ Յետ սակաւ աւուրց ընդ տիւ և ընդ գիշեր ի Տարօն հասուցանէին (ԿՎՄ, 38)։

Գ. Ձևի.— Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ ասել, խօսել, համարել, հարկանել, գինել և այլն։

Ձևի իմաստը այս կառույցի մեջ առաջացել է տեղի հիման վրա՝ դարձվածք դառնալու հետևանքով։ Եղած օրինակներն էլ հենց դարձվածքային են։

Օրինակներ՝ *Ընդ միտս խորհանց ընդ Աստուծոյ խօսէին* (ՅԴՊՀ, 251)։ *Որով հաւատացեալդ իսկ էք և սիրում, և սրագինեալ ևս* ընդ *ու ի հատուցումն վրիժուց ամբարշտաց* (Ն. տ., 273)։ Ընդ *մի* օրինակ *զամենեսան ի միում խորխորատ կորստեանն համարէր* (Բուզ., 4, Դ)։ *Նոքա* ընդ *մի* բերան *ասէին* (Բուզ., 4, Ի)։ *Ոչ* ընդ վայր *հարկանէ զսուրբս իւր* (Սաղ., ԼԶ)։

*Երբեմն էլ ձևի իմաստը կարող է տեղի իմաստի հետ կապ չունենալ։ Օրինակ՝ Իշխանն Վարազ Տրդատ* ընդ երիս *հարկէր* (ՄԿՊԱԱ, 3, ԺԲ)։

Ընդ+հայցական *կառույցը կարող է արտահայտել նաև վիճակի իմաստ։ Օրինակ՝ Զուարթացեալ իմն տեսաք զձեզ* ընդ խօսս *աշխարհակորուսիդ այդորիկ* (ՂՓՊՀ, ԽԴ)։

Ընդ+բացառական *կառույց.— Ընդ նախդիրը բացառականի հետ գործածվելիս իմաստային նրբերանգ չի հաղորդում այդ հոլովաձևին և սոսկ փոխարինում է* ի *նախդրին։ Ընդհակառակն,* ի *նախդրով կազմված բացառականն առավել շատ իմաստներ է արտահայտում։ Այս կառույցով արտահայտվում է հիմնականում տեղ՝ նշելով ուղղվածությունը։ Լրացումներ կարող են ստանալ և՛ շարժման, և՛ դադարի բայերը։ Ընդ նախդիրը հիմնականում դրվում է տեղ ցույց տվող բառերի հետ։*

Օրինակներ՝ *Առ հօրն* ընդ աջմէն *եմուտ* (Ագ., 385)։ *Կարգէ զԱրամանեակն երկու եղբարբք* ընդ աջմէ (Մխ, 1, ԺԱ)։ *Որք ի լոյս կենաց անվախճանից վերափոխեցան* ընդ աջմէ *փառացն Աստուծոյ* (ՅԴՊՀ, 36)։ *Քերովբէքն կային* ընդ աջմէ *տաճարին* (Եզեկ., Ժ)։ *Զոմն* ընդ աջմէ *և զոմն* ընդ ձախմէ *խաչեցին* (Ղուկ., ԻԳ)։ *Նստոյց* ընդ աջմէ *իւրմէ յերկնաւորս* (Եփես., Ա)։ *Իջուցին ընդ զառիվայր լերինն* ընդ գեղջն կողմանէ (ՅՄՊՏ, 265ա)։

Ընդ+բացառական *կառույցով կարող են արտահայտվել նաև բացառականի մի քանի իմաստներ։ Դրանք են՝* անձի-ելակետային՝ Ընդ *ամենայն* մարմնաւորաց *առեալ զնպատակն յաղթութեան* (Ագ., 594), ելման՝ *Զգովութիւն արդարութեանն ինքն բարձրացոյց* ընդ *ամենայն* մարմնոց *մարդկան* (Ն. տ., 595), անջատման՝ *Ոչ* ընդ պատուհասից *կորզան զիշխանացեալն Գագիկ հանէր* (ՅԴՊՀ, 173), պասսիվ ներգործության՝ Ընդ բանիցն *հողմ ուժգին բղխեաց ի խաչանիշ փայտէն* (Ագ., 813)։

Ընդ+գործիական կառույց.— Տակ *նշանակությամբ ծառայում է մի շարք խնդրային և պարագայական իմաստների դրսևորմանը։*

### 1. Խնդրային իմաստներ

Ա. Միջոցի.— *Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստ ունեցող բայեր, ինչպես* բառնալ, ծածկել, տառապեցուցանել *և այլն։ Ընդ նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։*

Օրինակներ՝ *Մի տառապեցուսցես զնա ընդ* աշխատութեամբ *(Ղևտ., ԻԵ)։ Ոչ կարեմ ... զձեր մեղսդ ընդ* անձամբ *առնուլ (Բուզ., 4, Գ)։ Իբրև ընդ* գրուանաւ *զխաւարային խորհուրդս ծածկեալ՝ խնդրէին ժամ դիպող (ՅԴՊՀ, 206)։ Թաքուցեալ ղօղեցին ընդ կեղծաւորութեանն* առագաստի *(Մխ, 3, Լ)։*

*Երբեմն* ընդ+գործիական *կառույցը մեկնաբանվում է և՛ միջոցի, և՛ տեղի իմաստներով։*

Օրինակներ՝ *Փակեցէք ընդ* պարսպօք *(Մխ, 3, ԻԸ)։ Թաքուցան* ընդ պատուարաւ *պարսպի իւրեանց (ՅԴՊՀ, 341)։*

Բ. Մատուցման.— *Այսպիսի լրացում ստանում են սահմանափակ թվով բայեր, ինչպես՝* տալ, նուիրել, հարկել *և այլն։*

Օրինակներ՝ *Զամենայն ազգս երկրի՝ ընդ անզեղջական* վարդապետութեամբն *նուիրեաց (Ագ., 712)։ Ետ զնոսա ընդ* ձեռամբ *նորա (Եզն., 3, ԺԶ)։* Ընդ *Հոռոմայեցւոց* տէրութեամբն *հարկին (Մխ, 3, ԺԳ)։*

Գ. Հանգման.— *Այսպիսի լրացում նույնպես քիչ բայեր են ստանում (*հնազանդել, կապել *և այլն)։*

Օրինակներ՝ *Հնազանդեսցին ընդ ամենահեշտ* լծով *քով (Ագ., 59)։ Հնազանդեն զամենայն թշնամութիւնս ընդ* ոտիւք *(Եզն., 4, Ժ)։* Ընդ պատահարօք *կապեն զամենայն (Բուզ., 4, Ե)։*

Դ. Ներգործող խնդրի.— *Այսպիսի լրացում ստանում են կրավորական բայերը քիչ դեպքերում։*

Օրինակներ՝ Ընդ *այլով յոլով անգամ նուաճեալ* թագաւորութեամբ *(Մխ, 1, Գ)։ Ոչ համբերէին* ընդ *Պարսիկ* առաջնորդաւ *վարիլ (Ն. տ., 3, ԽԲ)։ Կալեալ կապեցան* ընդ ձեռամբ *նորա (ՅԴՊՀ, 126)։ Ըմբռնեսցի* ընդ պաշարմամբ *խմով (Եզեկ., ԺԷ)։ Ի տղայութենէ սնեալ և ուսեալ ի կեսարացւոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ* վարդապետօք *(Բուզ., 4, Գ)։*

Ե. Փոխարինության.— *Այսպիսի լրացում կարող են ստանալ առքի, վաճառքի և այլ բայեր։ Օրինակ՝ Որ չէրն վաճառեալ* ընդ մեղօք *(Ագ., 480)։*

## 2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Ընդ+գործիական կառույցով արտահայտվում են և ուղղորության, և դադարման տեղի իմաստներ։ Ուղղորության տեղի իմաստով լրացում ստանում են շարժման բայերը։ Ընդ նախդիրը դըրվում է տեղ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Ոչ մտցուք այր իւրաքանչիւր ընդ յարկաւ իւրով (Դատ., Ի)։ Յանկարծօրէն ընդ ջրով մտեալ սուրբն Շաղիտայն ծածկեցաւ (Բուզ., 4, ԻՁ)։ Ջուր արկանէր ընդ բերանաւն (Ն. տ., 5, ԻԸ)։ Որք միանգամ ոչ մուծցեն զպարանոցս իւեանց ընդ լծով արքային Բաբելացւոց (Երեմ., ԻԷ)։

Տեղի իմաստով լրացում ստանում են նաև դադարման բայերը։

Օրինակներ՝ Նստցին ընդ յարկաւ նորա (Ովսէ, ԺԴ)։ Շրջէր ընդ կողմամբք Վանանդայ (ՅԴՊՀ, 95)։ Երթեալ մտեալ դադարէր ընդ ամրոցաւ պարսպին (Ն. տ., 146)։ Յորում բնակէին Գաբաւոնացիք՝ ընդ յարկաւ շինուածի տանցն մտեալ զետեղեալ (Ն. տ., 190)։ Ընդ ձեռամբ Հագարացւոցն բազումք էին զինուորեալք (Ն. տ., 235)։ Զգեցուցեր զրահ ընդ պարանոցաւ նորա (Յովբ., ԼԹ)։ Առնուցուն զանկողինս որ ընդ կողիւք քովք կայցեն (Սաղ., ԻԲ)։ Պատի ընդ ճիւսիսիւ (Ժող., Ա)։ Զթաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արևու ցուցանեն (Եզն., 1, Դ)։ Ընդ ոռով կայր սեղանն ոսկի (ՂՓՊՀ, ԺԷ)։ Սալարեալք ընդ սեղանովն թագչին (Ն. տ., Ճ)։ Թաղեցաւ ի ներքոյ Բեթելայ ընդ կաղնեաւն (Ծնն., ԼԵ)։

Երբեմն ընդ+գործիական կառույցը կարող է մեկնաբանվել և տեղի, և ձևի իմաստներով։

Օրինակներ՝ Կեցջիք ընդ ճովանեաւ դիցն (Ագ., 36)։ Ընդ առաքելական սահմանօքն ապրեալ յանվախճան ի հանդերձեալ դատաստանաց անտի (Ն. տ., 49)։ Ընդ օրինօքն, ասէ, փակեալ պահէաք (Ն. տ., 349)։ Ի ներքոյ ընդ ծիրանեօքն, քուրձ զգեցեալ էր (Բուզ., 3, Ժ)։ էին անկասկածք բնակեալ ի խաղաղութեան մեծի ընդ ճովանեաւ արքային Արշակայ (Ն. տ., 4, Ա)։

Երբեմն ընդ+գործիական կառույցը կարող է մեկնաբանվել և տեղի, և ներգործող խնդրի իմաստներով։ Օրինակ՝ Հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ (Մխ, 1, Ը)։

Բ. Ձևի.— Այս իմաստով ընդ+գործիական կառույցը գործածվում է տարբեր իմաստի բայերի մոտ։ Ձևի իմաստը հիմնականում ծագել է տեղի իմաստի հիման վրա՝ դարձվածքային կառույցներում։

Օրինակներ՝ Ընդ ակամբ հայէր ի նա (Մխ, 3, ԼԸ)։ Յոյժ ընդ անիւանկեալ է բնութիւն մարմնոյ (Եղ., Ձ)։ Նմա ծառայեսցեն ընդ միով լծով (Ագ., 532)։ Ընդ հոգևոր խնամով և երկիւղիւ սնուցանել (Ն. տ., 845)։

Գ. Վիճակի.— Այս իմաստով լրացումը փոքր-ինչ տարբեր է նախորդից։ Վիճակի պարագան ևս հանդես է գալիս դարձվածքային կառույցներում։

Օրինակներ՝ Գրաւեցան լինել ընդ մահապարտութեամբ (Բուզ., 5, ԻԸ)։ Որք ընդ լծով հարկի այլոց ոմանց էին կացեալք (ՅԴՊՀ, 11)։ Բնութիւն մարդոյ ... ընդ ցաւովք և ընդ մահուամբ կարծէր (Եզն., 1, ԺԷ)։ Ի դրունս պալատանն անկեալ կային ընդ քնով (ՄԿՊԱԱ, 2, ԼԴ)։ Թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ (Մխ, 1, Գ)։ Պարտ է այնպէս էր՝ ասէ. ընդ բռամբ արքայի ի սպաս զոհիցն պաշտել զայն (Բ, Մակ., Գ)։

Երբեմն էլ լրացումը համասարապես արտահայտում է վիճակի և ձևի իմաստներ։ Օրինակ՝ Ընդ խնամով կեցցէ (Սաղ., ԻԸ)։

## Բայի լրացումները ըստ նախդրավոր կառույցներով

Բայը լրացումներ է ստանում ըստ+տրական, ըստ+հայցական, ըստ+բացառական կառույցներով։ Առաջին երկուսը գործածվում են հաճախ, իսկ երրորդը՝ սակավ։

Ըստ+տրական կառույց.— Սրանով արտահայտվում են խնդրային և պարագայական մի շարք իմաստներ։

### 1. Խնդրային իմաստներ

Ա. Համապատասխանության.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր։ Ըստ նախդիրը դրվում է հիմնականում իր ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Կացոյց սահմանս ազգաց ըստ թուոց հրեշտակացն Աստուծոյ (Եզն., 1, ԻՁ)։ Ըստ մարմնոյն ևեթ խորհի և գործէ (Ն. տ., 4, ԺԵ)։ Ըստ իւրում կարողութեանն յարուցէ միսանդամ (Ն. տ., 1, ԺԸ)։ Որ ըստ լուսնոյ յայտնին (Ն. տ., 2, ԻԱ)։ Զանարժանն ըստ պիտոյիցն ոչ յանդիմանես (Ն. տ., Խրատք)։ Զդեղ դարմանոյն ըստ ցաւոց հիւանդին պատրաստեալ (Ագ., 285)։ Հաստատեալ զաթոռ նորա ըստ աւուրցն երկնից (Ն. տ., 397)։ Հատանէր զդիրս հանգստոցաց սրբոցն

իւրաքանչիւր ըստ չափու արկեղացն (Ն. տ., 766)։ Փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց (Եղ., 3)։ Դնէր և ըստ մարմնոյ առաջի նոցա սեղան կերակրոյ (Ն. տ., 7)։ Ի գործ հայիք՝ տալ ըստ վաստակոց զհատուցումն (ՂՓՊՀ, ՀԵ)։ Սոքա վաղագոյն ըստ զուշակութեանն աճապարեցին հասին յիւրեանց սահմանն (Բուզ., 5, Ե)։

Ըստ+տրական կառույցը կարող է մեկնաբանվել համապատասխանության և հիմունքի իմաստներով։

Օրինակներ Մարդիկ ըստ կերպարանացն անուանս դնեն (Եզն., 1, ԻԴ)։ Որք ըստ Աստուծոյ կամացն դատէին զնոսա (Ագ., 316)։ Ըստ հայրենի օրինին պատանդս առեալ դառնայ (Մխ, 2, ՁԵ)։ Զայս ամենայն ... արար և կատարեաց ըստ հրամանի թագաւորին (Եղ., 4)։

Ըստ+տրական կառույցը երբեմն կարող է մեկնաբանվել համապատասխանության, հիմունքի և ձևի իմաստներով։

Օրինակներ՝ Զոր բաժանեալ ըստ մարդաքուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն (Մխ, 2, ԿԲ)։ Ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գտաւ ի քեզ չարութիւն (Բուզ., 4, ԺԵ)։

Ձևի և համապատասխանության իմաստները շատ են համատեղվում այսպիսի կառույցում։

Օրինակներ՝ Ոչ ըստ կամացն Աստուծոյ վարի (Եզն., Խրատք)։ Ըստ կամաց նորա գնասջիք (Ագ., 227)։ Ըստ իւրաքանչիւր կարգի զայն պատմեսցուք (Ն. տ., 286)։ Ըստ հրամանացն ընթանամք (Ն. տ., 439)։ Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով (Եղ., 2)։ Խօսէր ընդ նոսա սիրով ըստ առաջին սովորութեանն (Ն. տ., 4)։ Զամենեսեան սնոյց և հաստատեաց ըստ վերին քաղաքավարութեանն (ՂՓՊՀ, ԺԵ)։

Երբեմն նույն կառույցը կարելի է մեկնաբանել համապատասխանության, ձևի և միջոցի իմաստներով։ Օրինակ՝ Գրեթէ ըստ երկնայնոցն զուարթնոց զարդու՝ ամենեցուն զինքն բոլորապէս ցուցանէր (ՅԴՊՀ, 58)։

Կարող են համատեղվել համապատասխանության, ձևի և պատճառի իմաստները։ Օրինակ՝ Ըստ հողմոյն քաջութեան ի հնգետասան օր հասանէր ի հրամայեալ տեղին (Բուզ., 4, Զ)։

Համատեղվում են համապատասխանության և պատճառի իմաստները։

Օրինակներ՝ Դոքա ըստ իւրեանց յետնութեան կորուսին յաշխարհէս Հայոց զքաջութիւն (ՂՓՊՀ, ՀԵ)։ Ըստ երախտահատոյցն լինելոյ խնդրէ Մօրիկ ի Խօսրովայ զՄիջագետս (ՅԴՊՀ, 67)։

Համատեղելի են համապատասխանության և սահմանափակման իմաստները։ Օրինակ՝ Ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասիմք (Մխ, 1, Գ)։

Հնարավոր է նույնիսկ համապատասխանության և փոխարինության իմաստների համատեղում։ Օրինակ՝ Ջանին յանձն փոխել ղճըշմարիտ վարդապետութիւնն սրբոյն Գրիգորի՝ ըստ տոմարին Լևոնի (Սեբ., ԼԳ)։

**Բ. Սահմանափակման.**— Այսպիսի լրացում ստանում են քիչ բայեր։ Օրինակ՝ Ոչ ինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտութեան (Եղ., 7)։

**2. Պարագայական իմաստներ**

**Ա. Ձևի.**— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բայեր, ինչպես՝ աշակերտել, գալ, թողուլ, կոտորել, խօսել, մտանել, ցուցանել և այլն։ Ըստ նախդիրը դրվում է մեծ մասամբ վերացական գոյականների հետ։ Օրինակներ՝ Ըստ այնմ օրինակի աշակերտեսցեն զամենեսեան (Ագ., 623)։ Ըստ նմանութեան հայելւոյ ... ամենեցուն ցուցանէր (Ն. տ., 677)։ Սլացեալ գայր՝ ըստ նմանութեան արագաթև արծուոյ (Ն. տ., 735)։ Ըստ կամաց թողու զնա արքայն Վաղարշակ (Մխ, 2, Ը)։ Ըստ պատահման մտանէ ստնտու մանկանն (Ն.տ., 2, Ջ)։ Խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին (Եղ., 2)։ Զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի (Բուզ., 5, Լէ)։

Ըստ+տրական կառույցը երբեմն կարող է մեկնաբանվել ձևի և միջոցի իմաստներով։

Օրինակներ՝ Ի թագաւորացն Հայոց ստացաւ իւր գեւղս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն (Բուզ., 6, Ժ)։ Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեօք լցեալ զկամս կատարէր (Ն. տ., 4, ԺԵ)։

**Բ. Հիմունքի.**— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստի բայեր, ինչպես՝ առաքել, բնակել, գիտել, լինել, յաշտ առնել, մեռանել, տանջել և այլն։ Ըստ նախդիրը դրվում է մեծ մասամբ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Եւ ընդէ՞ր ըստ նոցա բանիցն չարիքն ոչ լինէին աստուածք (Եզն., 1, է)։ Մեք ըստ գրոց սրբոց զհրեշտակս արբանեակս գիտեմք յօգնականութիւն մարդկան (Ն. տ., ԻՋ)։ Որում հայրն և որդին յաշտ առնէին ըստ առասպելին (Ն. տ., 2, Թ)։ Քրիստոս մեռաւ ըստ գրոց և թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի (Ն. տ., 4, ԺԵ)։ Տանջեցին

*գնա տասն այր*՝ ըստ հրամանի *թագաւորին* (*Ագ.*, 74)։ *Առաքեցաք* ըստ խնդրոյ *ձերոյ զայս պայման ուխտի* (*Մխ*, 3, *խԸ*)։ Ըստ *նախասաց* բանին *ի Դվին քաղաքի բնակէր* (*ՅԴՊՀ*, 73)։

*Երբեմն* ըստ+տրական *կառույցը կարող է մեկնաբանվել հիմունքի և միջոցի իմաստներով։ Օրինակ՝ Զօր Բագայառիճն կոչեն* ըստ *պարթևարէն* լեզուին (*Ագ.*, 790).

Գ. Տեղի.— *Այս իմաստով լրացումներ քիչ բայերի հետ են գործածվում։*

Օրինակներ՝ *Այսպէս պատուեալ* ըստ ճանապարհացն՝ *մինչև գային հասանէին ի քաղաքն Կեսարացւոց* (*Ագ.*, 804)։ Ըստ պատուհանացն ... *ի շողսն խաղացէ բազմութիւն մանրամաղ փոշւոյն* (*Ն. տ.*, 734)։ Ըստ *հարաւային* մասանցն *պարայածեալք՝ յՕդեսացւոցն հասանէաք քաղաք* (*Մխ*,3 , *ԿԲ*)։

*Երբեմն էլ* ըստ+տրական *կառույցը կարող է մեկնաբանվել տեղի և համապատասխանության իմաստներով։ Օրինակ՝ Դպրոցս կարգէ* ըստ գաւառաց գաւառաց (*ՅԴՊՀ*, 54)։

Ըստ+հայցական կառույց.— *Սրանով արտահայտվում են մի քանի իմաստներ։*

Ա. Համապատասխանության.— *Այսպիսի լրացում ստանում են բազմապիսի բայեր, որոնք նույնիմաստ լրացում կարող են ստանալ նաև* ըստ+տրական *կառույցով։ Ըստ նախդիրը դրվում է և՛ վերացական, և՛ թանձրացական գոյականների հետ։*

Օրինակներ՝ *Մի՛* ըստ աչս *դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք* (*Յովհ.*, *Է*)։ *Տայր Յովսէփ ռոճիկս հօրն և եղբարց իւրոց, և ամենայն տան հօր իւրոյ ցորեան* ըստ բերան (*Ծնն.*, *խէ*)։ *Հատուցանես իւրաքանչիւր* ըստ գործս *իւր* (*Եղ.*, 7)։ *Որոց ջուրն* ըստ անել *լուսնին՝ աճէ, և* ըստ լնուլն *լնու, և* ըստ պակասելն *պակասէ* (*Եզն.*, 3, *Ը*)։

*Երբեմն* ըստ+հայցական *կառույցը կարող է մեկնաբանվել համապատասխանության և ձևի իմաստներով։ Օրինակ՝ Երևեցաւ* ըստ կատարել *տեսանելեացն նոցա, և* ըստ հանդուրժել *լսելեաց նոցա խօսեցաւ ընդ նոսա* (*Ագ.*, 356)։

Բ. Տեղի.— *Այսպիսի լրացում ստանում են* անցանել, ելանել, հանել *և սակավաթիվ այլ բայեր։* Ըստ+հայցական *կառույցով արտահայտվում է տեղի բացառականի իմաստ։*

Օրինակներ՝ *Արիք և անցէք* ըստ ջուրդ (*Բ*, *Թագ.*, *ԺԷ*)։ *Կամէր թագաւորն* ըստ քաղաքն *ելանել* (*Ագ.*, 212)։ *Ոչ կարացին հանել* ըստ ձորակն (*Ն. տ.*, 811)։ *Նոքա մի ելցեն* ըստ բնակութիւնս *իւրեանց* (*Մխ*, 3,

ի)։ *Զամենայն ազգս հաւաքեա և անցո* ըստ Պաճ դուռն *ի ներքս (Եղ., 1)։*

Ըստ *նախդիրը բացառականի իմաստով կարող է գործածվել նաև վերացական գոյականների հետ։*

Օրինակներ՝ *Անարգեաց զնզովսն իմ և անց* ըստ ուխտն *իմ (Եզեկ., ԺԷ)։ Չիշխէ անցանել* ըստ հրաման *(Եզն., 1, Գ)։ Վիրք և Աղուանք* ըստ *մեր և ձեր* կամս *չիշխեն ելանել (ՂՓՊՀ, ԻԳ)։*

Գ. ժամանակի.— *Սա այլ դեպքերում արտահայտվում է բացառականով (արդի հայերենում նաև* բացառական+հետո *կապով)։* Ըստ *նախդիրը դրվում է ժամանակ ցույց տվող բառերի հետ։ Օրինակ՝ Այլ սակայն* ըստ *այն մի* գիշերն *այլ ոչ եմուտ առ կինն իւր (Բուզ., 3, Ե)։*

Ըստ+բացառական կառույց.— *Սա քիչ դեպքերում է գործածվում։ Ընդ որում մի դեպքում այն իմաստով չի տարբերվում* ի *նախդրից։ Օրինակ՝ Յաւելու ևս հանել և զնախճաւան, և* ըստ հիւսիսոյ *Երասխայ զամենայն գիւղս (Մխ, 2, ԾԱ)։*

*Երկրորդ դեպքում* ըստ *նախդիրը հաջորդականություն է ցույց տալիս՝ որևէ բառի հարադրմամբ և ծառայում է ձևի իմաստի դրսևորմանը։*

Օրինակներ՝ *Արկանէր զնոսա մի* ըստ միոջէ *ի գեհեն (Եզն., 4, Ջ)։ Զայս ամենայն մի* ըստ միոջէ *ոճով պատմեսցուք (Ագ., 14)։ Աւետարանեցէք օր* ըստ օրէ *զփրկութիւն նորա (Ն. ա., 638)։*

Ըստ+գործիական կառույց.— *Սա ևս հազվադեպ է գործածվում։ Եղած միակ օրինակն է՝ Դուք սովոր էք անցանել* ըստ հրամանաւ *թագաւորին ձերոյ (Եղ., 7)։ Այստեղ գործիականը դրված է հայցականի փոխարեն։*

## Բայի լրացումները ի նախդրավոր կառույցներով

Ի *նախդիրը գրաբարում երկու դեր ուներ. մի դեպքում կազմում էր բացառական հոլով, իսկ երկրորդ դեպքում գործածվում տրական և հայցական հոլովների հետ՝ ծառայելով բազմաթիվ իմաստների դրսևորմանը։ Այդ նախդրի առաջին կարգի կիրառությունը այստեղ չենք քննում, քանի որ դա ընդգրկված է «Բայի լրացումները բացառականով» հատվածում։*

Ի+տրական կառույց.— *Սրանով համեմատաբար քիչ իմաստներ են արտահայտվում։ Դրանք բաժանվում են երկու խմբի՝ խնդրային և պարագայական։ Այստեղ ևս առկա է իմաստների ներհյուսում, և հա-*

ճախ նույն կառույցը կարելի է մեկնաբանել երկու կամ ավելի իմաստներով:

### 1. Խնդրային իմաստներ

Ա. Հանգման.— Այս իմաստը արտահայտվում է այն բայերի մոտ, որոնք նույնիմաստ լրացում կարող են ստանալ նաև այլ կառույցներով, ինչպես՝ հարկանել, կապել, հասանել և այլն: Ի նախդիրը կարող է դրվել և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ:

Օրինակներ՝ Մեծապէս սիրով հարեալ էր ի նմա (Բուզ., 4, ժե): Յիւրեանց բնութեանն հասանեն գարնայնոյն (Ագ., 649): Յիւրաքանչիւր բնութեան կան կապեալք (Ն. տ., 651): Որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիւք (Եղ., 1):

Որոշ կառույցներ կարելի է մեկնաբանել հանգման և տեղի իմաստներով:

Օրինակներ՝ Միացաւ ի մարմնի բնութեամբ (Ագ., 369): Յորում պատահեցաք և մեք իսկ (Եղ., 1): Ձեռք մեր փապարեալ են ի կացնի (Ն. տ., 176): Ոչ կացաք յուխտի Տեառն (ՅԴՊՀ, 265):

Բ. Սահմանափակման.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ նմանել, դարովել, պարապեցուցանել, զգաստանալ, օգնել, գերազանցել և այլն: Ի նախդիրը դրվում է տարբեր գոյականների հետ:

Յամենայնի դարովեալ լինի տէրութիւնս մեր (Ագ., 153): Որք ամենևին կատարեալք իցեն յարուեստագիտութեան (Մխ, 1, ժԶ): Խադ յամենայնի նմանեալ մեծին Ներսիսի (Ն. տ., 3, ԼԱ): Տեսանէր զնոսա ջերմագոյնս յաստուածպաշտութեան (Եղ., 2): Ամենայնիւ յամենայնի շինութեան զինքն պարապեցուցեալ հայրենի տէրութեան իւրոյ (ՅԴՊՀ, 142): Սոքա զգաստացեալք լինէին ի պատասխանատուութեան աւետարանի փառացն Քրիստոսի (ՅԴՊՀ, 250): Օգնեսցէ նոցա ի պատերազմի նեղչացն (Ն. տ., 344): Գերազանցեալ է յամենայնի սրբոցն նմանութիւն (Ն. տ., 346): Ի սմին մեծի հաւանութեան ամենայն բազմութիւնն միաբանեաց (Եղ., 2): Միաբանէր ընդ նոսա ի հացին օրհնութեան (Ն.տ., 7):

Քանի որ սահմանափակման իմաստը սերտորեն կապված է տեղի իմաստին, ուստի տարօրինակ չէ, որ երբեմն ի+տրական կառույցը մեկնաբանվում է սահմանափակման և տեղի իմաստներով:

Օրինակներ՝ Երևելի և փառաւոր ի քաղաքութեան իմում արարից

(Ագ., 26)։ Ետուր համբերութիւն ժուժկալութեան ի պատերազմիս (ՅԴՊՀ, 348)։

Ի+տրական կառույցով հաղվադեպ կարող են արտահայտվել նաև՝ վերածման՝ Փոխարկեալ միմեանց փոխարինին, սոցա խաղաղութիւն ի նոցա խռովութեանն, և նոցա խաղաղութիւն ի սոցա խռովութեանն (Մխ, 291), մատուցման՝ Ոչ հրամայէ զնա թաղել և զմարմին նորա յերկրի տալ (ՅԴՊՀ, 240), համապատասխանության՝ Բազմեցան յիւրաքանչիւր չափու (Բուզ., 4, ԾԴ) իմաստները։

Ի+տրական կառույցը կարող է ծառայել նաև խնդրապարագայական իմաստի արտահայտմանը։ Այսպես, ի+տրականը լնուլ, հեծանել և այլ բայերի մոտ գործածվում է ի+հայցական կառույցի փոխարեն։

Օրինակներ՝ Հրապուրեաց զմարդպետն իջանել ի կառաց անտի, և հեծանել ի նժուգի (Բուզ., 4, ԺԴ)։ Էր հեծեալ յերիվարին իւրում (Ն.տ., ԺԵ)։ Նստուցանէր հարուստ խորութեամբ յաւձանի միում (ՅԴՊՀ, 27)։ Լնոյր ի մարմնի իւրում զհանդէս մարտիրոսական պատասխանատրութեանն (Ն. տ., 130)։

## 2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Ի+տրական կառույցով արտահայտվում է գործողության պարունակության տեղը (համապատասխանելով աշխարհաբարի ներգոյականով դրսևորվող նույն իմաստին)։ Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բազմաթիվ բայեր, ինչպես՝ բնակել, գտանել, բազմանալ, գնալ, դնել, առաջնորդել, խօսել, թաղել, պատմել, տոչորել և այլն։ Ի նախդիրը դրվում է մեծ մասամբ տեղ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Բնակեաց Իսրայէլ յերկրին Եգիպտացւոց (Ծնն., ԽԷ)։ Ոչ ինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել (Ագ., 813)։ Բազմացան յանապատին (Ն. տ., 315)։ Թաղեցին զնա ի տապակին (Ն. տ., 112)։ Գնացիր ի դրախտի աստ (Ն. տ., 282)։ Տոչորէ ի գեհենի (Ն. տ., 511)։ Յիշի և աստանօր ի պատմութեանս (Մխ, 1, Ժ)։ Հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն (Ն. տ., ԺԵ)։ Ի տան Թագաւորին Հրջիցի (Ն.տ., 2, Է)։ Պատմին ի Գողթան (Ն.տ., ԽԹ)։ Այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի (Եղ., 1)։ Աստուած խօսեցաւ ի մորենւոջն ի Սինէ (Ն. տ., 2)։ Տեսանէր ... վեց պսակ ի ձեռին հրեշտակապետին (Ն. տ., 7)։

Մի շարք բայերի մոտ այս կառույցը կարող է մեկնաբանվել տեղի և ժամանակի իմաստներով։

Օրինակներ՝ Կամիմ ... ի սկզբան մերոյ գործառնութեանս, զվասն նոցա կշռամբութեան յարմարել գրանս (Մխ, 1, Գ)։ Ոչ ի կոտորման նոցա դիպեցաւ (Մխ, 3, ԼԱ)։ Որ և մեռաւ իսկ ի պատերազմի (ՅԴՊՀ, 19)։

Երբեմն Ի+տրական կառույցը կարող է արտահայտել և՛ ուղղություն, և՛ դադարման տեղի իմաստներ։ Օրինակ՝ Եկն նա ի Վան ի Տոսբ գաւառի (ՅԴՊՀ, 176)։

Տեղի իմաստը կարող է խառը լինել վիճակի իմաստին։

Օրինակներ՝ Սկսաւ խօսել ի կախաղանին (Ագ., 75)։ Ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց (Ն.տ., 114)։ Լաւ է մեռանել ի սրբութեան քում (Ն. 194)։ Նստէին ի խաւարի (Ն. տ., 297)։ Յանհոգ դատարկութեան գործէին զմեղսն (Ն. տ., 531)։ Դեգերէին յիմաստասիրութեան (Եղ., 1)։ Որք խողխողեցան յօտարութեանս (Ն. տ., 7)։

Տեղի իմաստը կարող է համատեղվել ձևի հետ։ Օրինակ՝ Մնեալ յարդարութեան (Ագ., 188)։

Տեղի իմաստը կարող է համատեղվել նույնիսկ միջոցի իմաստի հետ։ Օրինակ՝ Յատրուշանի կրակին ... այրէր (ՅԴՊՀ, 59)։

Ի+տրական կառույցը որոշ բայերի մոտ հնարավոր է մեկնաբանել տեղի, ժամանակի և վիճակի իմաստներով։

Օրինակներ՝ Ի հալածման նոցին սպան (Ագ., 542)։ Ի հանդիսի փորձութեան քաջութիւնքն երևեցին (Ն. տ., 635)։

Կարող են համատեղվել տեղի, վիճակի, պատճառի իմաստները։ Օրինակ՝ Զոր յանգիտութեանն արհամարհեցէք (Ագ., 823)։

Բ. Ժամանակի.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի պատկանող բազմաթիվ բայեր, ինչպես՝ առնուլ, ասել, գալ, հասանել, ելանել, կոտել, հրամայել, մեկնել, քարշել և այլն։

Ի նախդիրը դրվում է ժամանակ ցույց տվող և գործողության անուն գոյականների հետ։

Օրինակներ՝ Ի գալուստ ամին միւսոյ զօր բազում կուտէր յոյժ (Ագ., 23)։ Ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս (Ն. տ., 45)։ Ի դարձին երթեալ առին զջուրն (Ն. տ., 544)։ Ի վախճանի պատգամաւորութեանն առնու զբազմութիւն զօրաց իւրոց (Մխ, 1, ԺԵ)։ Անդէն իսկ ի հացին քարշեն զալիսն Արգամայ (Ն. տ., 2, ԾԱ)։ Ի կենդանութեանն իւրում մեկնեաց յԻսահակայ (Ն.տ., ԿԸ)։ Որպէս և ասաց ոմն ի հնումն (Եղ., 2)։ Ի մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին Թագաւորին (Ն. տ.)։ Խորհուրդ արարեալ ի գիշերի ... կոչեցին և զսպարապետն (Ն. տ., 3)։ Յամսեանն չորրորդի

եկին հասին յաշխարհն Հայոց (Ն. տ.)։ Յայսմ նուագի ինքն իսկ ամիրապետն ելեալ ի Սին անապատէ ... անցանէր ընդ ծով (ՅՓՊՀ, 84)։ Ի նախնումն գիտնաբար խօսէր Ղազար (ՂՓԲ)։

Երբեմն ի+տրական կառույցը կարելի է մեկնաբանել և՛ ժամանակի, և՛ վիճակի իմաստներով։

Օրինակներ՝ Ի բարկութեանն զողորմութիւնս յիշէր (Ագ., 321)։ Ի մկրտութեանն ճանաչի (Ն. տ., 417)։ Ամպն ունի զթեթևութիւն արագութեան ի յարութեանն (Ն. տ., 746)։ Զոր ոչ երբէք յարքնութեան ետես աչօք (Մխ, 1, ԻԶ)։ Ոչ արքայօրէն մեծարէին զնա յորս կամ ի խաղու (Ն. տ., 3, ԾԵ)։ Ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրին Յունաց (Եղ., 3)։ Յայնմ մեծի տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան (Ն. տ., 5)։ Մի՛ յարքնութեան կուրութեամբ ընդ խաւար գնար (Ն.տ., 7)։ Վախճանի ի բարւոք ծերութեան (ՅԴՊՀ, 67)։

Ի+տրական կառույցը կարող է մեկնաբանվել նաև ժամանակի և ձևի իմաստներով։ Օրինակ՝ Զայսր գալոցն զորպիսութիւն ի կարգին պատմեսցուք (Մխ, 2, ԻԸ)։

Հնարավոր է նաև ժամանակի և չափի իմաստների համատեղում։ Օրինակ՝ Ճռաքաղ եղեան ի վայրկեան ժամանակի (ՅԴՊՀ, 263)։

**Գ. Ձևի.**— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստ ունեցող բազմաթիվ բայեր, ինչպես՝ բուսանել, կազմել, պաշտել, տալ և այլն։ Ի նախդիրը սովորաբար դրվում է վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Զարծաթ իւր ի վաշխս ոչ տացէ (Եզեկ., ԺԸ)։ Ի ճնազանդութեան պաշտէր առաջի նորա (Ագ., 38)։ Յիւրաքանչիւր նմանութեան բնութեանն բուսանին (Ն. տ., 649)։ Կանգուն կացեալ մեծին Սահակայ ... կազմեալ ի քեմասացութեան ձևի ... սկսաւ ճառել (Մխ, 3, ԿԵ)։

**Դ. Վիճակի.**— Սա մոտ է ձևի իմաստին։ Տարբերությունն այն է, որ այս դեպքում ի + տրական կառույցը ցույց է տալիս գործողություն կատարողի կամ առարկայի վիճակը գործողության ընթացքում։ Այսպիսի լրացում սովորաբար ունենում են բողոք, տեսանել, գտանել, պահել, կալ, հանդիպել, պնդել, մնալ և այլ բայեր։ Ի նախդիրը դրվում է հիմնականում վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Ոչ թողեր զմեզ ... ի մոխրապաշտութեան (Ագ., 89)։ Մի՛ կորիցուք յունայնութեան հեթանոսութեան (Ն. տ.)։ Զոմն ի միամտութեան գտեալ (Ն. տ., 289)։ Արժանացին ... տեսանել ... զգնացեալսն ի նեղութեան (Ն. տ., 659)։ Յաստուածպաշտութեան ճշմարտութեանն կացեալ էին (Ն. տ., 869)։ Ի ստրկաց կարգի պահել (Մխ, 2,

Մ)։ Որք յանիշխանութեան մնացեալք՝ յարեան ազգ յազգի վերայ նախարարութիւնք կատարել զմիմեանս (Ն. տ., 3, Բ)։ Մարմնովք իսկ կային ամենեքան ձեզ ի ծառայութեան (Եղ., 7)։ Մի՛ տեսցեն զկեանս իւրեանց ի մեծի անարգութեան (Ն. տ.)։ Մի՛ ի դմին յամառութեան պնդեսցի ընդդէմ հրամանաց թագաւորին (Ն. տ.)։ Յաղթատութեան կնոջն հանդիպեալ սանդեայ որդւովն իւրով մուրացիկ շրջէր (ՅԴՊՀ, 107)։

Ի+տրական կառույցը որոշ դեպքերում կարող է մեկնաբանվել և՛ վիճակի, և՛ ձևի իմաստներով։

Օրինակներ՝ Ի հանդարտութեան վարեաց զթագաւորութիւնն ամս քսան և մի (Մխ, 2, ԿԲ)։ Ի մարդամօտի և եթ կամի կեալ (Ագ., 603)։ Զհարկ քնոյ յոտանաւոր տմնութեան ի թօթափել ական վճարէր (Ն. տ., 859)։

**Ե. Պարագայական այլ իմաստներ.**— Գրաբարում ի+տրական կառույցով հազվադեպ արտահայտվում էին նաև նպատակի՝ Ետ նմա ի կնութեան զքոյր իւր (Մխ, 2, ՁԸ), պատճառի՝ Ըստ սմին յայսմ պատճառի համարձակութիւն և Երուսաղէմացւոցն առեալ (ՅԴՊՀ, 47) իմաստներ, որոնցից առաջինը սովորաբար ի+հայցական կառույցով է դրսևորվում։ Ուղևորության տեղի և նպատակի իմաստների համատեղում կա հետևյալ օրինակում. Ի գերութեան վարել առ հասարակ զինչս և զստացուածս (Գ, Մակ., Ե)։

Ի+տրական կառույցով կազմվում են մի շարք դարձվածքային բառակապակցություններ, ինչպես՝ ի դիմի հարկանել, յաւարի առնուլ, յոտին կացուցանել, ի մտի դնել, յանձին բառնալ, պահել յակաստանի, կալ յակաստանի և այլն։

Օրինակներ՝ Զնորոգումն յարութեան յանձին բարձեալ բերէ (Ագ., 92)։ Եթէ այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ ո՞րչափ ևս առաւել չկայր երբէք յակաստանի (Եզն., 1, ԺԵ)։ Զոմանս բռնաւորականաւ կարգաւ ջանայր պահել յակաստանի (ՅԴՊՀ, 41)։ Յոտին զբոլոր թշնամիս... կացուցանէր (Ն. տ., 136)։ Ի դիմի նոցա հարկանի (Ն. տ., 230)։ Եւ ի մտի դնէ (Ն. տ., 205)։ Յաւարի առնոյր զամենայն կապուտ կողոպուտ նոցա (Ն. տ., 289)։

**Ի + հայցական կառույց.**— Գրաբարում ի նախդիրը հայցական հոլովի հետ շատ է գործածվում և ծառայում է բազմաթիվ իմաստների արտահայտմանը։ Կարելի է ասել, որ մյուս բոլոր նախդիրները միասին վերցրած այնքան իմաստների դրսևորման չեն մասնակցում, որքան ի նախդիրը հայցականի հետ։ Նկատելի է, որ մի շարք դեպքերում

ի նախդրի արտահայտած իմաստը որոշակի է։ Սակայն չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ շատ հաճախ ի+հայցական կառույցը ծառայում է մի շարք խառն իմաստների արտահայտմանը։ Այնուամենայնիվ, շարադրանքի միասնականությունը պահպանելով, ի+հայցական կառույցով արտահայտվող իմաստները ևս բաժանում ենք խնդրային և պարագայական տեսակների՝ ըստ անհրաժեշտության նշելով իմաստների համատեղման դեպքերը։

## 1. Խնդրային իմաստներ

Ա. Հանգման.—Ի+հայցական կառույցը այս իմաստով լրացում դառնում է տարբեր իմաստային խմբերի պատկանող բայերի համար, ինչպես՝ ապաստանել, ապաւինել, բախել, բուռն հարկանել, գթալ, երևել, զարկանել, խառնել, կապել, կցել, հաղորդել, հասանել, հաւատալ, հետևել, ձեռնարկել, ձեռնամուխ լինել, մերձենալ, միանալ, յարել, միաբանել, յաւելուլ և այլն։ Ի նախդիրը դրվում է ինչպես գոյականների, այնպես էլ անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Հաւատացին յԱստուած և ի Մովսէս ծառայ նորա (Ելք, ԺԴ)։ Ի կանայս մի՛ մերձենայք (Ն. տ., ԺԹ)։ Մի՛ յաւելուցուք ինչ ի բանն (Բ, Օրէնք, Դ)։ Մի՛ գթասցիս ի նա (Ն. տ., ԺԳ)։ Հասին ծայրք քո յամպս (Եզեկ., ԼԱ)։ Ապաւինեալք ի սրբոց մարտիրոսացն նշխարս՝ փրկին մարդիկ յայնպիսի տանջանաց (Եզն., 1, ԻԱ)։ Ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք (Ն. տ., ԻԵ)։ Ասեմք ... զծխոյ թէ յերկին կցի (Ն. տ., 4, Է)։ Մեծամեծս փքայր՝ ի բազմութիւն զօրացն ապաստան եղեալ (Ագ., 19)։ Երևեցուսցէ զերեսս իւր ի մեզ (Ն. տ., 186)։ Խառնեսցուք ի գունդ միածնի Որդւոյդ քոյ սիրելւոյ (Ն. տ., 195)։ Յարեսցի ի կին իւր (Ն.տ., 275)։ Ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ (Մխ, 1, ԺԱ)։ Յերկիր հարստի սլաքն (Ն. տ.)։ Ձեռնամուխ լինի ի բարեգործութիւնս (Ն. տ., 2, ԻԵ)։ Ձեռնարկեցին ի թարգմանել և ի գրել (Ն. տ., 3, Կ)։ Բուռն հարկանէր յագին, և ի կեղակն ազդեր միոյ ոտին նորա (Սեբ., Ժ)։ Բախեալ տիգաւ ի թիկունս նորա (ՅՄՊՏ, 314բ)։ Ի վահան զաշխարհս մեր հաւատայր (ՅԴՊՀ, 61)։ Շունչ զօրութեան մեծիդ միասցի ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս (ԳՆՄՈ, Գ)։ Գթացար յարարածս քո (Ագ., 834)։ Խառնի ի մօրն մեծ (Մխ, 2, Ջ)։ Հնչեցուցանեն ի լսելիս մարդկան (Ն. տ., ՂԲ)։ Լծեալ են ի գործ հարկաւորութեան (Եղ., 2)։ Հետևեալ ի խոստովանութիւն անշարժ յուսոյն՝ վախճանի (ՅԴՊՀ, 35)։ Եկն յարեցաւ նա ի տուն կաթողիկոսարանին (Ն.տ., 107)։ Միաբանեալ էր ի չար խորհուրդս նոցա (Ն.տ., 206)։ Յեցու-

ցէ զձեռն իւր ի յուրմ (ԳՆՄՈ, ՀԹ)։ Հաղորդէր զամենեսեան ի խորհուրդն զոհութեան (Ագ., 834)։

Հանգման իմաստը կարող է համատեղվել բազմաթիվ իմաստների հետ։

Հանգման և մատուցման՝ Յայդպիսի տանջանս մատնեցար (Ագ., 111)։ Ի ձեռն ձեռնասուն կրտսերացն իւրոց հաւատայ զամրոցն ի չուելն իւրում (ՅԴՊՀ, 316)։

Հանգման և ուղղության՝ Քան թէ ձգիցեմք զձեռս մեր յաստուածս օտարս (Ագ., 194)։ Յարձակեցաւ ի Միջերկրեայս և ի Պաղեստինէ (Մխ, 3, ԺԲ)։ Գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին (Եղ., 5)։ Զգէր զպատճառսն մերթ յանմիաբանութիւն գնդին իւրոյ և մերթ ի մոգուցն ծուլութիւն (ՂՓՊՀ, ԽԸ)։

Հանգման և վերածման՝ Զայլ եղբարս նորա հանդերձ քերբն յերիս ցեղս որոշէ (ՅԴՊՀ, 33)։

Հանգման, վերածման, նպատակի՝ Ի լինելն և ի գոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ (Եզն., 1, Ա)։

Հանգման և միջոցի՝ Աշակերտեցէք զիս ի ձեր յամառութիւնդ (Եղ., 7։) Սովորեցան ի նմայս յաշխարհիս Հայկազանց (Մխ, 1, Ի)։ Ի նրանգս բարւոյ կրթութեան զինքն վարժէր (ՅԴՊՀ, 132)։

Հանգման, միջոցի, տեղի՝ Ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմ յոգիս և ի մարմինս (Եղ., 7)։

Հանգման և սահմանափակման՝ Էիք դուք մոլորեալք յարարածս տկարս (Ագ., 547)։ Փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց (Մխ, 1, ԺԱ)։ Հաստատէր ի հաւատս զաշակերտեալսն (Ն. տ., 2, ՂԱ)։ Յորդորեցան ի նոյն միաբանութիւն (Եղ., 3)։ Ի հաւասարասիրութիւն առ ամենեսեան զինքն կշռադատեալ (ՅԴՊՀ, 22)։ Ի սոյն միտս և ի սոյն խորհուրդս համոզեալ հաստատեցի զթագաւորն Վրաց (Ն. տ., 269)։ Առ յիւրմէն իսկ յայլ ոմանս ներգործեցաւ (Ն. տ., 336)։

Հանգման և համապատասխանության՝ Զմարդն յայն յօժարեցոյց (Եզն., 1, ԺԲ)։

Հանգման, վերաբերության, ժամանակի՝ Ծիծաղին ի կորուստ ամբարշտաց (Ագ., 533)։

Հանգման և տեղի՝ Որ շնչեացն ի նա զշունչն ազդեցուցիչ (Իմաս., ԺԵ) Եւթն աստղ միայն է գնայուն, և այլն ամենայն բևեռեալ են յերկինս (Եզն., 3, Ա)։ Ոչ գծեաց ի fwr տաճարին մուրճ ինչ գործոյ (ԳՆՄՈ, ՂԲ)։ Թագ կապեաց ի գլուխ նորա (Ագ., 46)։ Ագուցին զայն

ի գլուխ *նորա, և կապեցին զբերան պարկին* ի փողս *նորա (Ն. տ., 107)*։ *Ուր Կակաս յարևմտեանն յանգի* ի ծով *(Մխ, 1, Ը)*։

Համգման և ժամանակի՝ *Համեալ իցեն* ի ժամանակս *ծննդեան (Աք., 626)*։ *Ոչ տէր լուիցէ* յաղաղակել *ձերում առ նա (Մխ, 2, ԴԲ)*։

Համգման և ձևի՝ *Արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ կոփածո քարամբք գեղեցկագիր շինուածիւ՝ կրով ձուլեալ* ի մի *(ՅԴՊՀ, 71)*։

Համգման և նպատակի՝ *Նստաւ* ի սուգ *առ տրտմութեանն (Եզն., 4, Ա)*։ *Քեզ* ի գանձ *յաւելցուք (Աք., 17)*։ *Հնազանդեսցին* ի ծառայութիւն *(Ն. տ., 39)*։ *Վիճակեալք են* ի բնակութիւն *ի ներքոյ արեգականս (Եղ., 2)*։ *Ստիպէր չարաչար* յուրացութիւն *(Ն. տ., 3)*։

Բ. Մատուցման.— Ի+հայցական *կառույցը այս իմաստով գործածվում է* տալու, մատուցելու, հանձնելու *իմաստ ունեցող բայերի մոտ, ինչպես՝* տալ, բաժանել, բաշխել, աւանդել, մատուցանել, մատնել *և այլն*։ Ի *նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ*։

Օրինակներ՝ *Տաց զօրէնս իմ* ի միտս *նոցա (Երեմ., ԼԱ)*։ *Զգունդն առաջին տայր* ի ձեռն *իշխանին Արծրունեաց (Եղ., 5)*։ *Մատնեցի զնոսա* ի ձեռս *հոմանեաց (Աք., 340)*։ *Սկսաւ բաշխել մոգս* ի տունս *նախարարացն (Ն. տ., 3)*։ Ի Քրիստոս *զհոգին աւանդէր (ՅԴՊՀ, 95)*։ *Զանուանսն նոցա* ի դիւանն *մատուցանէին (Ն. տ., 98)*։ *Բաշխէր գանձս ոսկւոյ և արծաթոյ* ի տնանկս *և* յաղքատս *(Ն. տ., 142)*։ *Տուր զորդիս նոցա* ի սով *(Երեմ., ԺԸ)*։

*Մատուցման իմաստը կարող է համատեղվել մի քանի այլ իմաստների հետ*։

Մատուցման և վերածման՝ Ի գունդս գունդս *զգազանսն բաժանէր (Եղ., 5)*։

Մատուցման և չափի՝ *Զգեօղն ամենայն դաստակերտօքն հանդերձ և սահմանօքն* յանուն *եկեղեցւոյն նուիրէին (Աք., 784)*։

Մատուցման և ուղղության տեղի՝ *Տուեալ զամենայն գանձս իւր* յեգիպտոս՝ *գնեաց ցորեան բազում յոյժ (Մխ, 2, ԼԵ)*։

Մատուցման և նպատակի՝ *Ետու զքեզ* ի նախատինս *ազգաց, և* յայպն *ամենայն աշխարհաց (Եզեկ., ԻԲ)*։ *Տուաւ* ի չարչարանս *(Եղ., 1)*։ *Զչորսն զինուորսն ... մատուցեն* ի փորձութիւն *տանջանացն (Ն. տ., 2)*։ *Նոքա զանձինս ի մահ մատնեցին (Ն. տ.)*։ *Զբոլոր արարածս տուեալ է* ի ծառայութիւն *(Ն. տ., 36)*։

Գ. Ուղղության.— *Այսպիսի լրացում ստանում են հիմնականում ուղղություն ցույց տվող բազմաթիվ բայեր, ինչպես՝* հայել, նայել,

ձգել, ձգտել, կարօտել, փափագել, միտել, դարձուցանել, փչել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Հայեցայ ի տառապանս ժողովրդեան իմոյ (Ա, Թագ., Թ)։ Յայնժամ միտի ի չարիս (Եզն., 1, Է)։ Թքանէր ի վէրն (Բուզ., 5, ԻՁ)։ Ոչ ի տուրսն, այլ ի տուողն յաւէտ կարօտիմ (ԳՆՄՈ, ԺԲ)։ Ի քում աշխարհն փափագէր (Ագ., 32)։ Յերկիր անկանի (Ն. տ., 516)։ Ձըգտեալ ... յաշխարհս հեռաքնակս (Ն. տ., 17)։ Նայիս սիրով յարարածս քո (Ն. տ., 93)։ Դարձոյց զարարածս յաստուածութիւն (Ն. տ., 95)։ Զգիցեմք զձեռս մեր յաստուածս (Ն. տ., 194)։ Փչեաց յերեսս նորա շունչ կենդանի (Ծնն., Բ)։ Ի ճաշատեղս նոցա հայեցան (Եղ., 7)։ Անհատ աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ ի բարձունս խօսէր (Ն. տ.)։ Կանգնեալ էր յերկրէ ի յերկինս (Ն.տ.)։ Ես ակնակառոյց իմն ի գալուստ թագաւորին Գագկայ լինէի (ՅԴՊՀ, 212)։

Երբեմն նույն նախադասության մեջ եղած այլ բայի խնդրառության ազդեցությամբ ուղղության իմաստով լրացում են ստանում նաև ուրիշ դեպքերում այդպիսի լրացում չունեցող բայեր։ Օրինակ՝ Արդ տես ի քոյդ մեծութիւն, բարձրեալ, նայեցեալ ի յիմս փոքրկութիւն (ԳՆՄՈ, ՀԵ) նախադասության մեջ տեսանել բայը ի+հայցական է ստացել նայել-ի ազդեցությամբ։

Ուղղության իմաստը կարող է համատեղ հանդես գալ այլ իմաստների հետ։

Ուղղության և վերածման՝ Ածէ և զնոսա ի գիտութիւն ճշմարտութեան (Մխ, 3, Կ)։ Ոչ շեղեցան ի շղուաբարոյ շօգմօգութիւնս նոցա (ՅԴՊՀ, 250)։

Ուղղության և սահմանափակման՝ Քաւ լիցի ձեռն ամբառնալ յօծեալն Աստուծոյ (ՅԴՊՀ, 151)։ Ոչ գոյ նմա կար հակամէտ լինիլ ի վատթարն (Ն. տ., 330)։

Ուղղության և ուղևորության տեղի՝ խոնարհեցաւ յանարգութիւն (Ագ., 186)։ Յիւրաքանչիւր պաշտամունս ի տարրականս արարածոց որոշեալ խոտորեցան յանդունդս մոլորութեան (Ն.տ., 298)։ Ի կոչ քո դիմեալ գայ առ քեզ (Մխ, 2, ՀԲ)։ Յարձակեցաւ յանապատ առագաստ (Ն. տ., 3, ԿԸ)։ Դիմեսցեն յօրէնս մոգուց (Եղ., 2)։ Խոտորեցաւ ի նոցա օրէնսն (Ն.տ., 7)։

Ուղղության և դադարման տեղի՝ Զայն արարեալ յաշխարհս հեռաւորս (Եղ., 2)։ Թափեսցէ ի թագաւորն զթոյնս (ՅԴՊՀ, 178)։

Ուղղության, ուղևորության տեղի, դադարման տեղի՝ Ընկէց ի մէջք

որիորդին Ալանաց (Մխ, 2, Ծ)։ Բողոք ի դուռն կարդային (Եղ., 6)։

Ուղղության և նպատակի՝ Ելանիցես ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց (Բ, օրէնք, Ի)։ Ջան եղև թագաւորացն մերոց՝ զնոսա ի պաշտօն կռոցն խոնարհեցուցանել (Մխ, 1, ԻԲ)։

Դ. Հաղորդման.— Ի+հայցական կառույցը այսպիսի իմաստով լրացում դառնում է ասացական բայերի համար, ինչպես՝ պատմել, բարբառել, հարցանել, գոչել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ անձ, և՛ առարկա ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Պատմիցէք յականջս որդւոց ձերոց (Ելք, Ժ)։ Բարբառեցաւ ի լսելիս իմ (Եղ., 7)։ Հարցանել սկսան յարքունիսն (Ն. տ., 6)։ Եթէ իմանալ ոք կամեսցի զայլն, ի պատմագիրս հարցցէ (ՅՄՊՏ, 284բ)։ Գոչեաց յամենեսին (Ագ., 669)։ Պատմեաց զայս ամենայն յականջս թագաւորին (Եղ., 3)։ Ի կաթուղիկէն ասէ (ՄԿՊԱԱ, 2, ԻԹ)։

Հաղորդման իմաստը կարող է համատեղվել միջոցի իմաստի հետ։ Օրինակ՝ Խոստովանէին ի սուրբ աւետարանն (Եղ., 3)։

Ե. Վերածման.— Ի+հայցական կառույցը այս իմաստով դառնում է փոխակերպման գործողություն ցույց տվող բայերի լրացում, ինչպես՝ բաժանել, դառնալ, դարձուցանել, կազմել, կոտորել, կտրել, շրջել, որոշել, վերափոխել, փոխարկել, փոխել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Դարձոյց զամենայն ջուրս գետոյն յարիւն (Ելք, Է)։ Կտրեցէք զմանուկն ... յերկուս (Գ, Թագ., Գ)։ Աժ զնոսա Սողոմոն ի հարկատուս մինչև ցայսօր (Բ, Մնաց., Ը)։ Մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի (Եզն., 1, ԻԵ)։ Յայլ կերպարանս չկարէ փոխել (Ն. տ.)։ Զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր (ԿՎՄ, 14)։ Երանելւոյն Սահակայ զեկեղեցական գրոց զումարութիւնն՝ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ (Ն. տ., 31)։ Հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել (Մխ, 1, ԺՉ)։ Փոխեաց զամենայն ի լեզու ասորի (Ն. տ., 2, ԿՁ)։ Զմղձկութիւն ծխոյն ի սպիտակութիւն շուշանի շրջեցեր (ՄԿՊԱԱ, 1, ԺԱ)։ Կոտորէին զխոփս իւրեանց ի սուսերս և զգերանդիս իւրեանց ի փեղարդունս (Ն. տ., 2, Ժ)։ Յերկուս կտրէ զՇաւասպն (ԹԱՊՏԱ, 2, Ա)։ Զդառնութիւն լեղւոյ ի մանանայի ֆաղցրութիւն կազմես (ԳՆՄՈ, ԻԹ)։ Դարձցին ձմերունք հողմոյն խստութեան ի յօդ հանդարտութեան ... և կարծիք երկիւղին ի մեծ վստահութիւն, և պատուհաս պատժոցն յիրաւութեան պատահումն ... բերք բեռանցս մեղաց փոխարկեսցի ի թռչակ շնորհաց (Ն. տ., ԼԲ)։ Որք ի լոյս կենաց անվախճանից վերափո-

խեցան (ՅԴՊՀ, 36)։ Յերկուս ճեղքեալ բաժանեալ էր Հայք (Ն. տ., 55)։ Վարագոյր տաճարին ցելաւ յերկուս (Մատթ., ԻԷ)։

Վերածման իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Վերածման և երկրորդական ուղիղ խնդրի՝ Օծ անդ Սամուէլ զՍաւուղ ի թագաւոր (Ա, Թագ., ԺԱ)։ Դարձոյց զգեստս ի ցամաք, և զգնացս ջուրց յերկիր ծարաւուտ (Սաղ., ՃԶ)։ Արար զանապատն ի ճահիճս ջուրց, և զերկիրն ծարաւուտ ի գնացս ջուրց (Ն. տ.)։

Վերածման և փոխարինության՝ Յընտանի սպիտակութիւն սրտի զկամս իւր փոխաբերէր (ՅԴՊՀ, 329)։

Վերածման և ուղղության տեղի՝ Ի կամս բռնաւորին եկեալ լիցին (ՅԴՊՀ, 122)։

Վերածման և նպատակի՝ Առից զձեզ ինձ ի ժողովուրդ (Ելք, Զ)։

Զ. Շահի.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ առնուլ, անուանել, բխել, գրաւել, թողուլ, ունել, հատանել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ անձ, և՛ իր ցույց տվող գոյականների հետ։

Օրինակներ՝ Զաշխարհն յինքն գրաւեաց (Ագ., 36)։ Ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու և Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս (Մխ, 2, ԼԸ)։ Զորս կալաք յարքունիս (Ն. տ., 3, ԾԱ)։ Զոր հատէք յարքունիս (Ն. տ., ԽԸ)։ Ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ զեղբօր յեղբայր (Ն.տ., ԽԳ)։ Առան գանձք իւրեանց յարքունիս (Եղ., 7)։ Գրաւելով զնա ի Հայս՝ տիեզերասահման քաղաք զնա յարդարեալ կոչէ (Ն. տ., 29)։ Ի պատիւ Կեսարու անուանէ զնա Կեսարիա, (ՅԴՊՀ, 30)։ Զնա գրէ ի դիւան արքունի (Ն. տ., 68)։ Մահ բխէ յամենեսին (Ն. տ., 276)։

Շահի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Շահի և տեղի՝ Նովաւ որսացան զբազումս ի նոյն միաբանութիւն (Եղ., 3)։

Շահի և նպատակի՝ Զմեզ ժողովեաց ի փառս և ի գովեստ Աստուծոյ (Մխ,2, ՂԱ)։

Է. Միջոցի.— Ի+հայցական կառույցը միջոցի իմաստով լրացում է դառնում տարբեր իմաստային խմբերի պատկանող բազմաթիվ բայերի համար, ինչպես՝ բժշկել, երդնուլ, զարդարել, զօրացուցանել, թռչել, լնուլ, խրախուսել, հաշել, մաշել, հաստատել, մխիթարել, չարչարել, պատել, պարծենալ, սրբել, վառել, վարժել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ թանձրացական և՛ վերացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Պարծեսցուք յօրհնութիւնս քո (Ա, Մնաց., ԺԶ)։ Ի

խոյր պսակի զարդարիցեն զԹագաւորս (Ագ., 8)։ Զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական (Ն. տ., 45)։ Երդուիր ինձ յորէնս քո (Բուզ., 4, ԺԶ)։ Ոչ խրախուսես յԱստուած, այլ ի քաջութիւն և ի փղաց զօրութիւն (Սեբ., Գ)։ Զօրացո զմեզ ի կամս քո (Ն. տ., 88)։ Սրբեսցէ զնա ի բոց բորբոքեալ (Ն. տ., 585)։ Թռիցեն ի թևս Հոգւոյն սրբոյ (Ն. տ., 605)։ Ի գիր հաստատեա (Ն. տ., 894)։ Երդնու նմա յարեգակն և ի լուսին (Մխ, 2, ԺԹ)։ Զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ (Մխ, 3, ԼԷ)։ Զօրանային ի սէրն Քրիստոսի (Եղ., 2)։ Պատեցաւ ի խանձարուրս և եդաւ ի մսուր (Ն. տ.)։ Ի հուր և ի հոգի էիք մկրտեալք (Ն. տ., 3)։ Ի հրահանգս կրթութեան վարժեցին զնոսա (Ն. տ., 7)։ Ինքն ի ցաւս չարչարանաց իւրոց բժշկեաց զամենայն ազգս մարդկան (Ն. տ.)։ Ոչ յաւետիսն մխիթարեցաւ (Ն. տ., 4)։ Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին (Ն. տ., 2)։ Զինքն զինէր յերգս հոգևորս (ՅԴՊՀ, 101)։ Լցան գուբք գինւոյ ի կուժս այգեստանեայց (Ն. տ., 199)։ Զոմանս ... ի սլաքս նետից և ի տէգս նիզակաց հաշեալ մաշեալ սատակէին (Ն. տ., 296)։

Միջոցի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Միջոցի և սահմանափակման՝ Զամենայն կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս և ի տերևս (Մխ, 1, ԺԶ)։ Ոչ զհետ Շապհոյ մտեցաւ ամենայն սրտիւ, այլ անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս և յերգս վարձակաց (Ն. տ., 3, ԺԹ)։ Մի՛ լռութեամբ նորա չարքն զօրասցին ի չարութիւնս իւրեանց (ՅԴՊՀ, 148)։ Ի մշտնջենամռունչ սաղմոսս համակէր և անձանձրոյթ յաղօթս նահատակէր (Ն. տ., 170)։

Միջոցի, սահմանափակման, ձևի՝ Զայրացաւ յոգի իւր (ՅԴՊՀ, 148)։

Միջոցի և փոխարինության՝ Ստացայ ես զնոսա ի գինս արծաթոյ (ՅԴՊՀ, 352)։

Միջոցի և ներգործող խնդրի՝ Յաստուած խրախուսեալ՝ դիմէր ի վերայ հեթանոսական թագաւորացն (Ագ., 868)։ Ի Քրիստոս մկրտեցան (Ն. տ., 681)։ Պատրեցաւ ի ձեր տխմար գիտութիւնդ (Եղ., 7)։

Միջոցի, ներգործող խնդրի, պատճառի՝ Ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լկտիք (Եղ., 7)։ Առ յոյժ ցանկականի մոլեգնութեանն, ի բանսն որ զնմանէ՝ որպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր (Մխ, 1, ԺԵ)։

Միջոցի և համապատասխանության՝ Ի նմանութիւն պատկերի կերպարանաց իմոց արարի ես (Ագ., 77)։ Ի պայման պատշաճ ժամու կի-

տին եգելոյ հրաւիրէր գալ ի վերայ (ՅԴՊՀ, 175)։

Միջոցի և տեղի՝ Ի բանդս և ի կապանս ... նեղէր զնա (Ագ., 38)։ Գամ ես յամպս (Ն. տ., 309)։ Ի մարդկեղէն մարմինս պատեցաւ (Ն. տ., 364)։ Ի բազուկս իւր ժողովեսցէ ... ի գիրկս իւր ընկալցի (Ն. տ., 427)։ Հաւաքեալ ի սայլսն ներքոյ եղեգանն՝ բերեալ թաղեցին ի նոյն հորս (Մխ, 3, ԼԲ)։ Ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ (Եղ., 5)։ Ընմբռնեալ էին ի կապանս յուրացեալն Վասակայ (Ն. տ., 6)։ Որք ի կապանսն ապրեալ էին (Ն. տ.)։ Կապէր զնա ի շղթայս (ՅԴՊՀ, 112)։ Ի ծուխ բարկութեան հեթանոսաց թմրեալ պատժապարտ գտան (Ն. տ., 166)։ Այրեցին ի հուր զսրբութիւն Տեառն (Ն. տ., 275)։

Միջոցի, տեղի, ձևի՝ Ի նկարապաճոյճ ի տախտակսն յօրինէին (Աց., 139)։ Յոգիս մեր լուիցուք ի ծածուկ զօրհնութիւնս սրբոցն (Եղ., 7)։ Յնծան ի պատրաստեալ յուրախութիւնս (Ն.տ.)։ Ընդգձեալ ի ծունկրս երկրպագանէր նմա (ՅԴՊՀ, 35)։

Միջոցի և վիճակի՝ Արտասահմանեաց ի մեռաղս (Մխ, 2, Ղ)։ Ի կամս ազատութեան մերոյ գործեցաք զանարժանս (Եղ., 5)։ Ի կապանս կալեալ տարցեն զիս (ՅԴՊՀ, 339)։ Ի ծարաւ իւրեանց կթուցեալ սատակէին (Ն. տ., 175)։

Միջոցի և ժամանակի՝ Յամաքեցոյց իսկ ի սիգալն (Աց., 123)։ Ի վկայելն իւրեանց վկայեցին (Ն. տ., 237)։ Նաև ի բազում շողալ սուսերացն և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային (Եղ., 5)։ Ի խակտել զաղանդն Արիոսի՝ նզովեալ մերժեն զնա (ՅԴՊՀ, 40)։

Միջոցի, ժամանակի, վիճակի՝ Երևութացաւ նմա ի քուն ապագայիցն յայտնութիւն (Մխ, 3, ԿԶ)։

Միջոցի և ձևի՝ Ի լուռ ականջաց լսէի զքէն (Յովբ., ԽԲ)։ Անկանիցիք ի սուր (Եզեկ., ԺԱ)։ Շրջին ի սպիտակս (Յայտն., Գ)։ Ելաց ի լալիւն մեծ (Ծնն., ԽԶ)։ Խօսեցաւ ի բարբառ Հռոմայեցւոց (Աց., 189)։ Զարդարէ ի գունագոյն երանգս (Ն. տ., 268)։ Արասցուք մարդ ի նմանութիւն պատկերի (Ն. տ., 275)։ Երևէր ի տեսիլ հրոյ բորբոքելոյ (Ն. տ., 309)։ Ի բազում նշանս և ի բազում արուեստս խօսեցաւ (Ն. տ., 356)։ Յօրինակ նորա օծանէին (Ն. տ., 432)։ Քննեաց զնոսա ... ի ձևս մարդկան (Ն. տ., 635)։ Խոստանայր ... ապաշխարել ի քուրձ և ի մոխիր (Մխ, 3, ԻԹ)։ Երկաթ բոլորեալ ի ձև պսակի ... դնէ ի գլուխ նորա (ՅԴՊՀ, 51)։ Ի ճարուածս անհնարին չարչարանաց տանջեալ լինէին (Ն. տ., 263)։

Միջոցի, ձևի, ժամանակի՝ *Ջհարկ քնոյ* ... ի թօթափել *ական վճարէր* (Ագ., 859)։ Ի լսելն *այսպէս ընկալաք յանձինս մեր սուգ դառնութեան* (ՅԴՊՀ, 266)։

Միջոցի և նպատակի՝ Ի *դառն* արտօսր *զարթուցանէր* (ՅԴՊՀ, 351)։

Ը. Սահմանափակման.— Ի+հայցական *կառույցը այս իմաստով լրացում դառնում է տարբեր իմաստային խմբերի բազմաթիվ բայերի և առաջին հերթին ածականական ծագմամբ բայերի համար, ինչպես՝* ագահել, ամպարշտել, աջողել, գտանել, գոլ, երկմտել, կաղալ, համարել, նմանել, վարժել, ճանոյանալ, ցուցանել, տկարանալ *և այլն*։ Ի *նախդիրը դրվում է և՛ թանձրացական, և՛ վերացական գոյականների հետ*։

Օրինակներ՝ *Մի ագահիցեն աչք ձեր* ի կահ *ձեր* (Ծնն., խե)։ Ի Տէր *Աստուած քո ամպարշտեցար* (Երեմ., Գ)։ *Ագահեաց* յարծաթն (Ա, Մակ., ԺԳ)։ *Եգիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից* ի *մեծամեծ* չարիսն (Եղ., 4)։ *Տկարանայր* ի հաւատն (ՂՓՊՀ, ԿԵ)։ *Կաղան* ի հաւատն (ՂՓԹ)։ *Ոչ գոյր համեմատ յերկրի* ի ծնունդս *կանանց* (Ագ., 203)։ Յաչս *ձեր մեռեալ համարեալ էի* (Ն. տ., 251)։ *Խաղ յամենայնի նմանեալ մեծին Ներսիսի և առաւել ևս* ի տեսչութիւն *աղքատաց* (Մխ, 3, ԼԱ)։ *Անարգս և վատթարս* յաչս *ամենեցուն զնոսա ցուցանէին* (Եղ., 2)։ *Ոչ ինչ երկմտեցին* ի խորհուրդս *իւրեանց* (Ն. տ., 5)։ *Հաճոյանայր Սմբատ* յաչս *նորա* (ՅԴՊՀ, 69)։ *Վարժեալ իսկ էր* ի *փիլիսոփայական* արուեստս (Ն. տ., 110)։ *Աջողեաց* ի բարութիւնս (Ն. տ., 135)։

*Սահմանափակման իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ*։

Սահմանափակման և տեղի՝ *Վարանէր* յանձն *իւր* (Ագ., 24)։ Յանձն *իւր տարաբերէր* (Եղ., 1)։ Յ*երկուս և* յ*երիս* կողմս *Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ* (Ն. տ., 5)։

Սահմանափակման և ժամանակի՝ *Ոչ արքայօրէն մեծարէին զնա* յորս *կամ ի խաղու* (Մխ, 3, ԾԵ)։

Սահմանափակման և նպատակի՝ *Ոչ ներէ ինձ ծախել զժամանակս* ի ներբողումն *սորա* (ՅԴՊՀ, 22)։

Թ. Ուղիղ խնդիր.— Ի+հայցական *կառույցը կարող է դառնալ նաև ուղիղ խնդիր (թեև այդ իմաստը արտահայտվում է սովորաբար աննախդիր կամ* զ+հայցական *կառույցով)։ Ընդ որում այս կառույցով դրսևորվում են երկու տեսակ ուղիղ խնդիրներ՝ բուն և երկրորդական*։

*Բուն ուղիղ խնդիրը այս կառույցով հազվադեպ է հանդիպում*։

Օրինակներ՝ *Կոկորդ իմ ոչ խոկացէ* յիմաստութիւն (Յովբ., Է)։ *Որ*

յայլ ինչ կերակուր մտաբերիցէ (Եզն., 1, ԺԲ)։ Ի սուրբ մահն իւրեանց կամին (Եղ., 7)։

Ավելի շատ այս կառույցը գործածվում է որպես երկրորդական ուղիղ խնդիր՝ կրկնակի հայցական պահանջող բայերի մոտ, ինչպես՝ համարել, առակել և այլն։ Ի նախդիրը դրվում է թանձրացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Մի՛ ևս համարիցիք զնոսա ի մարդիկ (Եսայի, ԼԳ)։ Այլք ի սատանայ առակեցին զվիշապն (Եզն., 1, ԻԵ)։

Ուղիղ խնդրի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Ուղիղ խնդրի և նպատակի՝ Խօսեցաւ զմէնջ ի մահ (Եսթեր, Դ)։

Ուղիղ խնդրի և ձևի՝ Յառակս իսկ ընկալաւ զնա (Եբր., ԺԱ)։

Ուղիղ խնդրի և վերաբերության՝ Գաղտ ի հաշտութիւն խօսեցեալ ընդ Տիգրանայ՝ տալ զքեռորդին նորա զպատանին Միհրդատ (Մխ, 2, ԺԶ)։ Նոքօք հրամանաւ արքունի ի պատգամաւորութիւն խօսէր (Եղ., 5)։

Ի+հայցական կառույցը կարող է արտահայտել նաև մասնական ուղիղ խնդրի իմաստ։ Օրինակ՝ Արբոյցն զերկիր ի հրապոյրս պղտորս (Ագ., 559)։

## 2. Պարագայական իմաստներ

Ա. Տեղի.— Այս իմաստը դրսևորվում է երկու տարատեսակով՝ ուղևորության տեղի և դադարման տեղի։

Ուղևորության տեղի իմաստով ի+հայցական կառույցը չրացում է դառնում շարժման բայերի համար, ինչպես՝ առաքել, արձակել, երթալ, ելանել, արշաւել, յուղարկել, նահանջել և այլն։ Ի նախդիրը դըրվում է և՛ տեղ, և՛ անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ Իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր (Մխ, 2, ԽԶ)։ Արշաւանս դնեն յիւրաքանչիւր գաւառս (Ագ., 1)։ Արձակեաց յիւրական աշխարհն Հայոց (Ն. տ., 46)։ Երթամք մեք ի բնակիչս լերինն Կաւկասու ի կողմանս հիւսիսոյ (Ն. տ., 780)։ Փոխէ զթագաւորութիւնն ի Մարս (Մխ, 1, ԻԱ)։ Առաքէ ի հայս (Ն. տ., 2, ԻԴ)։ Արժանն տանէր զնա ի տեղի հատուցմանն (Ն. տ., 3, ԺԷ)։ Ի վերջոյ կոյս զնոսա նահանջէր (ՅԴՊՀ, 29)։ Յուղարկիւր յիւրական աշխարհս (Ն. տ., 8)։ Սոբեցին յայրս ... ելին ի քարանձաւս (Ն. տ., 226)։ Հրովարտակք թղթութեան առաքեցան յաշխարհն Հայոց (Եղ., 7)։

Ուղևորության տեղի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Ուղևորության տեղի և նպատակի՝ Ազգի ազգի գործուածք իւրացն

յայսպիսի քննութիւնս ածեն զմեզ (Եղն., 1, Ը)։ Փութասցուք ի ծառայութիւն ձեր (Մխ, 3, ԽԸ)։ Ի թիկունս հասանէին (Ագ., 19)։ Հրաւիրեսցին յարքայութեան սեղանդ (Ն. տ., 97)։ Ոչ գայցեն յայսպիսի պարգևաբաշխութիւն (Ն. տ., 677)։ Ոչ ի ժամադրութիւնն եկն Շապուհ (Մխ, 2, ԶԴ)։

Ուղևորության տեղի և դադարման տեղի՝ Հրաման ետ մեծ կայսրն, օգոստականն Կոստանդիանոս՝ ժողովել ամենայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիացւոց (Ագ., 884)։ Տեղասցէ ի մարդիկ զշնորհս գիտութեան (Ն. տ., 559)։ Ժողովեցան յԱյրարատեան գաւառն (Եղ., 2)։ Զնոսա շկօթակ արասցեն յանդարձ օտարութիւն (Ն. տ.)։

Դադարման տեղի իմաստով ի+հայցական կառույցը լրացում է դառնում այնպիսի բայերի մոտ, որոնց ցույց տված գործողությունը ուղևորության հետ չի կապվում, ինչպես՝ արգելուլ, արձանացուցանել, բանակել, բնակել, բուսանել, գտանել, դնել, զօրանալ, թաքչել, կեալ, ճարկանել, ղօղել, մկրտել, յօրինել, նստել, նշանակել, շինել, ուտել, սփռել, վկայել, վառել, տալ, տեսանել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ տեղ, և՛ անձ ցույց տվող գոյականների հետ։

Օրինակներ՝ Բնակեաց Յովսէփ յԵգիպտոս (Ծնն., Ծ)։ Ուտիցես հաց հանապազ ի սեղան իմում (Դ, Թագ., Թ)։ Նստան իշխանք ժողովրդոցն յԵրուսաղէմ (Նէեմի, ԺԱ)։ Դիր նշան ի ճակատ արանցն (Եզեկ., Թ)։ Ի մարմինդ քո բուսցի փուշ և տատասկ (Բուզ., 6, Թ)։ Արգելեալ ինքն ի սենեակ՝ ողբոց միայն և արտասուաց լսէին ձայնս (ՂՓՊՀ, ԺԳ)։ Բանակէին ի գիւղ մի (Ն. տ., ՀԱ)։ Տուր, Տէր, անձանց մերոց մասն ժառանգութեան ի վերինդ քո Երուսաղէմ (ՅՄՊՏ, 294ա)։ Նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն (Ագ., 30)։ Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա (Ագ., 33)։ Յոչնչէ զամենայն յէութիւն յօրինեցեր (Ն. տ., 169)։ Հարեալ չորս ցիցս ի գետինն (Ն. տ., 198)։ Ի բազում ազգս ... սփռէր (Ն. տ., 297)։ Պաւղոս յԱնտիոք Պիսիդացւոց վկայէ (Ն. տ., 473)։ Զոհէին յայս բագինս (Ն. տ., 809)։ Զժամանակս և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս և ի պատմութիւնս (Մխ, 1, Գ)։ Ի յոլով տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ (Ն. տ., ԺԲ)։ Մնացին նշանակեալ ի վերջինսն (Ն. տ., ԻԱ)։ Սրբոյն Գրիգորի ի Մանեայ այրն կեցեալ (Ն. տ., 2, ՂԱ)։ Ի հօրէ նորին շինեալ էր ի Տարօն (Ն. տ., 3, Բ)։ Ընդէ՞ր բնակեցար յԱյրարատ (Ն. տ., ԻԲ)։ Հուր ի դրունս և յամենայն կողմանս վառեալք ... լինէին (Ն. տ., ԻԸ)։ Որք սուզեալք ղօղեալք էին յանյայտ տեղիս (Ն. տ., ԾԱ)։ Մկրտեցաւ ... ի Յորդանան գետ (Եղ., 2)։ Թաքուցեալ էր ի

fաղաքն Փայտակարան (ն. տ., 4)։ Ի դուռն ցուցցէ զբանս նախարարացն (ն. տ., 6)։ Քանդեալ էր և սոցա զատրուշանն յԱրտաշատ (ն. տ.)։ Նշան հրաշալի ի դէմս Առաքելոյն արքայն տեսանէր (ՅԴՊՀ, 35)։ Ի տեղին բագնին շինէ եկեղեցի (ն. տ., 59)։ Կարիք մեղացն զօրանային յանդամս ամենեցուն (ն. տ., 246)։ Թաքեան յանտառս (ն. տ., 226)։

Տեղի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Տեղի և ճաղորդման՝ Մի՛ երբէք ասասցեն ի հեթանոսս, թէ ո՞ւր է Աստուած նոցա (Եղ., 7)։

Տեղի և ժամանակի՝ Դարան գործեալ յոռս սպանին զՄաժան (Մխ, 2, ԾԵ)։ Ոչ ճանաչեն զիս Ի կեանս իւրեանց (Եղ., 7)։ Յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա (ն. տ.)։

Տեղի և ձևի՝ Ի վերին Երեսս Թաքուցանէր զկամս մտաց իւրոց (Եղ., 1)։

Տեղի և վիճակի՝ Յանդիմանէր զորս գտանէր ի չար գործս հակառակ հոգւոյն (ՅԴՊՀ, 41)։

Տեղի և փոխարինության՝ Այլ ի տեղի նորա կացուցանէին (ՅԴՊՀ, 89)։ Այլ եպիսկոպոս ի տեղի չարափառին Ներսիսի ձեռնադրեալ հաստատէր (ն. տ., 100)։

Բ. Ժամանակի.— Այս իմաստով լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպես՝ աղաչել, ասել, երևել, զարճուրել, լուսաւորել, մատուցանել, յայտնել, կեալ, ծագել և այլն։ Ի նախդիրը դրվում է ժամանակ ցույց տվող բառերի և անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Զարհուրեցաւ Աքիմելէք ի պատաճել նորա (Ա, Թագ., ԻԱ)։ Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հելլենական դպրութեամբն (ԿՎՄ, 9)։ Յաղաչելն իւրեանց այսպէս ասէին (Ագ., 143)։ Յառաջին աղօթս իւրեանց աղաչէին (ն. տ., 159)։ Յաւուրսն յայնոսիկ ... ծագեցից (ն. տ., 396)։ Լուսաւորեսցէ զձեզ յըմպելն ձերում զնա (ն. տ., 511)։ Խորհուրդ սուրբ նահատակութեանն ի տիս տղայութեանն երևէր նմա (Եղ., 5)։ Ոչ մատուցաւ եւղ ի զուարթութիւն խրախութեան (ն.տ., 7)։ Յայտնեցան ի նորին աւուրս (ՅԴՊՀ, 7)։ Ի կրկնակի թագաւորելն ոչինչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ վախճանի (ն. տ., 55)։ Յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահանայքն (Եբր., Թ)։

Ժամանակի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Ժամանակի և չափի՝ Զայս խորհէր հաստուցանել յամս ձիգս (Մխ, 1, ԺԳ)։ Յամս սակաւ ... տիրեցին ամենայն երկրի (ՅԴՊՀ, 85)։ Պա-

Հէին զամրոցն ի բազում աւուրս (Ն. տ., 231)։ Տարածեցաւ մահ ի սակաւ աւուրս (Ն. տ., 265)։

Ժամանակի և վիճակի՝ Հրաման տայ ի բարկութեանն արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրան և զմարդասիրելն (Մխ, 2, Ը)։

Գ. Նպատակի.— Ի+հայցական կառույցը այս իմաստով լրացում է դառնում շարժման և ուրիշ բազմաթիվ բայերի համար, ինչպես՝ ածել, առաքել, առնել, բազմել, գալ, ելանել, ընտրել, խաղացուցանել, ծախել, ծառայեցուցանել, կարկառել, կոչել, ժողովել, հասանել, հեղուլ, հաւաքել, հեծանել, մտանել, նուիրել, պատառել, սնանել, տալ և այլն։ Ի նախդիրը դրվում է գործողության անունների, անորոշ դերբայի, ինչպես և գործողության հետ կապ չունեցող գոյականների հետ։

Օրինակներ՝ Ի փրկութիւն առաքեաց զիս (Ծնն., ԽԵ)։ Զժողովուրդն ծառայեցոյց իւր ի ստրուկս (Ն. տ., ԽԷ)։ Զոր ես տաց որդւոցն Իսրայելի ի կալուածս (Թիւք, ԺԴ)։ Զամենայն զանասուն և զկապուտ քաղաքացն ածաք մեզ յաւար (Բ, Օրէնք, Գ)։ Ընտրեցի զտեղիդ զայդ ինձ ի տուն զոհից (Բ, Մնաց., Է)։ Սնոյց զնա իւր յորդեգիրս (Առակ., Է)։ Եկն յառնել զարարածս (Եզն., 1, Դ)։Կէսքն յանասնոցն ի պէտս արարան (Ն.տ., ԺԵ)։ Դեւք յինչսն ժողովին, և հրեշտակք ի բաշխելն (Եզն., Խրատք)։ Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց յընթերցուածս գրոց ծախէին (ԿՎՄ, 32)։ Եմուտ բազմեցաւ յուտել և ըմպել (Բուզ., 4. ԺԴ)։ Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ (Ն. տ., 5, Բ)։ Բովանդակ զիւր բոլոր աշխարհն ապստամբեցոյց յուրացութիւն (Եղ., 4)։ Կարկառեալ զամենազօր աջդ յօգնականութիւն (Ն.տ., 7)։ Գայցես ի նորոգել զերկիր (ՅՄՊՏ, 296ա)։ Դու կոչեցեր ի զենումն Որդւոյ քոյ (Ագ., 84)։ Զոր դու առաքեցեր ի մահ (Ն.տ., 87)։ Որ ժողովեալն էին ի տեսանել (Ն. տ., 164)։ Հեղեր զարիւն քո ի բժշկութիւն ցաւոց մերոց (Ն. տ., 169)։ Պատառեաց փայտ յողջակէզ (Ծնն., ԻԲ)։ Խաղացուցանէր ի գերութիւն (Ագ., 35)։ Ոչ ելէք ի խնդիր տեառն Արարչին (Ն. տ., 66)։ Հասեալ է քեզ յօգնականութիւն (Ն. տ., 187)։ Ի նիւթ հրոյ պատրաստիցեն (Ն. տ., 654)։Եթէ դու յորս հեծցիս (Մխ, 2, ԿԱ)։ Ոչ ոք ի միաբանութիւն հաւաքեաց զգունդս Հայոց (Ն. տ., 3, ԾԵ)։ Ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս ձախակողմանն (Եղ., 1)։ Նուիրէին ի սպաս տէրունական սեղանոյն (Ն. տ., 3)։

Նպատակի իմաստը կարող է համատեղվել այլ իմաստների հետ։

Նպատակի և ձևի՝ Զայդպիսիդ խորհեցաւ յոչինչ պէտս (ՅԴՊՀ, 153)։
Ի կռիւ ընդ արքային կաքաւէր (Ն. տ., 169)։

Նպատակի և չափի՝ Նոցա անդադար գոհաբանութիւն ի սպառել

ոգւոցն կացեալ դադարէր (ՅԴՊՀ, 98)։ Ի յաղթութիւն գՀայոց գունդն զօրացոյց (Մխ, 3, Թ)։

Նպատակի և պատճառի՝ Աղերսէ ի սէր զԱրտաշէս արքայ Պարսից (Մխ, 2, ԺԹ)։

Դ. Ձևի.— Այս իմաստը ի+հայցական կառույցի այլ իմաստների (միջոցի, տեղի և այլն) հիման վրա է առաջանում։ Որոշ դեպքերում էլ լրացում-լրացյալ բառակապակցությունը դարձվածքային բնույթ ունի։ Լրացյալ կարող են լինել բազմաթիվ բայեր, ինչպես՝ անցանել, բղխել, գնալ, զարդարել, ասել, խօսել, այպանել, կեղծաւորել, նիւանդանալ, տարածել և այլն։ Ի նախդիրը դրվում է և՛ վերացական, և՛ թանձրացական գոյականների հետ։

Օրինակներ՝ Ի վայելչութիւն զարդու և ի խոյր պսակի զարդարեցին զթագաւորս (Ագ., 8)։ Տարածեաց զբազուկս իւր ի նմանութիւն խաչին (Ն. տ., 168)։ Ի լիւղ անցանէր ընդ գետն Եփրատ (Ն. տ., 202)։ Շինեաց զայն ի պատկեր կնոջ (Ն. տ., 275)։ Երբեմն ի բաղցրութիւն հացի ... բղխէր նոցա (Ն. տ., 546)։ Ասէին ի սիրտս իւրեանց (Եղ., 2)։ Ի վերին երեսս կեղծաւորէր (Ն. տ.,)։ Ի միտս իւրեանց սկսան այպանել զնա (Ն. տ., 6)։ Խօսէր ընդ նոսա յաղերս ընտանութեամբ (Ն. տ.)։ Ելեալ գնացին ի կամս անձանց զինչպիտութեան իւրեանց (ՅԴՊՀ, 360)։

Ե. Վիճակի.— Այսպիսի լրացում կարող են ստանալ երթալ, կալ, թողուլ, գտանել, տեսանել, պահել, լինել, մեռանել և սակավաթիվ այլ բայեր։ Ի նախդիրը դրվում է գոյականների, երբեմն և անորոշ դերբայի հետ։

Օրինակներ՝ Ընդ ժամանակս ընդ այնոսիկ իշխանն Յունաց ի ճալածել կայր զեկեղեցի Աստուծոյ (Ագ., 38)։ Ոչ թողեր զազգս մարդկան ի կամս անձանց զինչպիտութեան իւրեանց (Ն. տ., 95)։ Պահեսցէ զնոսա ի հաւատս իւրեանց (Ն. տ., 120)։ Մեռեալ էիք ի մեղս ձեր (Ն. տ., 251)։ Զձեզ ջերմեռանդն ի հաւատսն տեսանիցեմք (Ն. տ., 290)։ Պատմեաց ... զլինել ի կերպարանս անասնոյ (Ն. տ., 876)։ Տեսանէ ոչ ի քուն երազ (Մխ, 3, ԾԳ)։ Տեսանէին զեղբարս իւրեանց ի մեծամեծ վիշտս տառապանաց (Եղ., 2)։ Զգինդսն յականջսն ... երթայր յարքունիս (Ն. տ., 6)։ Գտաւ ամենայն գլուխ ի ցաւս և ամենայն սիրտ ի տրտմութիւն (ՅԴՊՀ, 232)։ Յնդիմ յարտասուս (Ն.տ., 239)։

Զ. Չափի.— Ի+հայցական կառույցը այս իմաստով լրացում դառնում է քիչ դեպքերում։ Եղած օրինակներն էլ առաջացել են տեղի իմաստի հիման վրա։

Օրինակներ՝ *Մեծացոյց զնա* ի բարձրութիւն *(Բ, Մնաց., Ա)։ Ելից զերուսաղէմ ծայր* ի ծայր *(Դ, Թագ., ԻԱ)։*

Ի+հայցական կառույցը խնդրապարագայական իմաստով.— *Գրաբարում մի քանի բայեր՝* հեծանել, ելանել, նստել *և այլն, ստանում էին* ի+հայցական *կառույցով մի լրացում, որը խնդրի և պարագայի արժեք ուներ (այդպիսի իմաստով հայցականը գործածվում է նաև արդի հայերենում)։*

Օրինակներ՝ *Հեծաւ արի արքայն Արտաշէս* ի սեաւն *գեղեցիկ (Մխ, 2, Ծ)։ Նստուցին* ի ձի *մատակ (Եղ., 6)։ Ելցեն* յերիվարս *(ՑԴՊՀ, 258)։ Հեծեալ էին* ի ձիս *(Սաղ., ՀԵ)։*

Ի+հայցական կառույցը դարձվածքային բնույթի բառակապակցություններում.— *Գրաբարում այս կառույցը որոշ բայերի հետ դարձվածք էր կազմում։ Այդ բայերից են՝* արկանել, կալ, ածել, մատնել (յոտն կալ, յաւար ածել, ի սուր արկանել, ի կորուստ մատնել *և այլն)։*

Օրինակներ՝ Կային *ամենայն ժողովուրդն* յոտն *(Ելք., ԼԳ)։ Զամենայն զանասուն և զկապուտ քաղաքացն* ածաք *մեզ* յաւար *(Բ, Օրէնք, Գ)։ Եկն* էարկ *զքաղաքն* ի *սուր* սայր *սուսերի՝ և* ի տէգս *նիզակաց (Բ, Մակ., Ե)։* Մատնեցին *զանձինս* ի կորուստ *մարմնոց (Եղն., 3, ԺՉ)։*

### Բայի լրացումները *ց* նախդրավոր կառույցով

*Գրաբարում* ց *նախդիրը գործածվում էր միայն հայցական հոլովի հետ և ծառայում սակավաթիվ իմաստների դրսևորմանը։*

*Նկատելի է, որ* ց *նախդիրը որոշ իմաստների դրսևորմանը ծառայում է միայնակ, իսկ ժամանակի և չափի իմաստներն արտահայտում է հիմնականում* մինչև *նախադրության զուգորդմամբ։*

1. Խնդրային իմաստներ

Ա. Մատուցման.— Ց+հայցական *կառույցը այս իմաստով երբեմն գործածվում է մատուցելու գործողություն ցույց տվող բայերի հետ, ինչպես՝* տալ, մատուցանել: Ց *նախդիրը դրվում է և՛ անձ, և՛ իր ցույց տվող բառերի հետ։*

Օրինակներ՝ *Կշռեցաք և տուաք* ցնոսա՝ *զարծաթ և զոսկի (Բ, Եզր., Ը)։ Զբարսմունսն ...* ցորդին *իւր* ցՈրմիզդ *ետ (Եղն., 2, Ե)։ Մատուցին զկանթեղունսն* ցմեծ ժամս *(Ագ., 198)։*

Բ. Հանգման.— *Այս կառույցը խիստ սակավադեպ դրվում է* հասատալ *բայի մոտ։ Օրինակ՝ եթէ հաւատաս* ցիս *զմասինդ քո իշխանութիւն (Մխ, 3, ԽԲ)։*

Գ. Հաղորդման.— Ց+հայցական *կառույցը այս իմաստով լրա-*

ցում դառնում է ասացական ասել, հարցանել, խոսել, պատմել բայերի համար։ Ց նախդիրը դրվում է սովորաբար անձ ցույց տվող բառերի հետ։

Օրինակներ՝ *Ասէր* ցեւթն հրեշտակսն *(Յայտն., ԺԶ)։ Ասէր* ցաշակերտսն *(Եզ., 4, ԺԲ)։ Սկսաւ հարցանել* ցնա *(Ագ., 70)։ Հարցջիր դու* ցհարս քո, *և պատմեսցեն քեզ, և* ցծերս *քո (Ն.տ., 293)։ Ասէին* ցմիմեանս *(Ն. տ., 807)։* Ցկինն *պատրանօք մատուցեալ հարցանէր (Եզն., 1, ԺԹ)։ Որ խօսէր* ցիս *(Յայտն., Ա)։*

## 2. Պարագայական իմաստներ

*Ց նախդիրը հայցականի հետ* մինչև *նշանակությամբ գործածվելով ձևավորում է ժամանակի և չափի իմաստներով պարագա լրացումներ։ Ընդ որում ժամանակի իմաստը անբաժան է չափի իմաստից։ Սակայն չափը կարող է լինել ոչ միայն ժամանակային, այլև տարածական։ Երկու դեպքում էլ* ց+հայցական *կառույցին մեծ մասամբ զուգադրվում է* մինչև *նախադրությունը։*

Ա. Ժամանակի և ժամանակային չափի.— *Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր իմաստային խմբերի բայեր։ Ց նախդիրը դրվում է ժամանակ ցույց տվող գոյականների կամ մակբայի հետ։*

Օրինակներ՝ *Մի ըստ միոջէ կարգ թագաւորացն Յուդայ ձգեցաւ* մինչև ցՄակաբէացիսն *(Եզն., 2, ԺԴ)։ Աւանդապահքն տային* մինչև ցՅովհաննէս *(Ագ., 433)։ Կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի* ցԱբրահամ *և* ցՆինոս *և* ցԱրամ *(Մխ, 1, 2)։ Ետ տեղի աղխի նորա և ռոճիկ ի կերակուր, փոխելով տեղի ի տեղւոջէ* ցբովանդակ ամս *(Ն. տ., 2, ԶԱ)։ Իշով շրջէր* ցօր *մահուան իւրոյ (Ն. տ., 3, ԼԱ)։ Այժմ անցից ի թիւ մերոց արանց …* մինչև ցտէրութիւնն *Պարթևաց (Ն. տ., 1, ԻԲ)։ Աշխարհն … Արտաշ կոչի մինչև* ցայսօր *ժամանակի (Ն. տ., 2, ԽԶ)։ Պահեն զաշխարհս* մինչև ցգալն *Տիրանայ (Ն. տ., 3, Ժ)։* Ցայն վայր *կացեալ մնացեալ էր հայրենի օրինօքն (ՅԴՊՀ, 35)։ Որ կայ և մնայ պահեալ* մինչև ցյաւիտեանս *ժամանակաց (Ն. տ., 48)։* Մինչև ցմեզ *հաստատեալ են իրաւունք արարչին (Ն. տ., 165)։*

*Երբեմն* ց+հայցական *կառույցը կարելի է մեկնաբանել ժամանակային չափի և հանգման իմաստներով։ Օրինակ՝ Որ ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ Գնունւոյ հասեալ էր* ցնա *(Մխ, 3, ԻԳ)։*

Բ. Տարածական և այլ կարգի չափի.— Ց+հայցական *կառույցը այսպիսի լրացում դառնում է տարբեր իմաստային խմբերի բայերի մոտ։ Ց նախդիրը դրվում է տեղ կամ անձ ցույց տվող բառերի հետ։*

Օրինակներ՝ *Դրունս պղնձին կանգնէր ի միջոցի պարսպին, և ելանելիս երկաթիս ի ներքուստ ի վեր* մինչև ցդուռնն *(Մխ, 2, ԼԹ)։ Վարէր*

զնա ի գիշերի մինչև ցդուռն քաղաքին (Ն. տ., ԽՁ)։ Կոտորեաց զամենայն ցեղ ... ջնջելով ցամենայն արու, յերիտասարդաց մինչև ցատընդիայս (Ն. տ., ՀԳ)։ Հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին (Ն. տ., 3, ԻԷ)։ Որ տիրեալ ունէր և Միջագետս Ասորւոց մինչև ցՊաղեստին (ՅԴՊՀ, 173)։ Գայ մինչև ցՏաշրատափ (Ն. տ.,195)։

## II. ԲԱՑԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱԿԲԱՅՈՎ

Գրաբարում ևս մակբայները առաջին հերթին դառնում են բայի լրացում։ Անշուշտ, գրաբարի մակբայներն ավելի հստակորեն էին տարբերվում ածականներից՝ վերջինների ձևական առանձնահատկություններով պայմանավորված։ Հայտնի է, որ ածականը մի շարք դեպքերում համաձայնվում էր լրացյալ գոյականի հետ[11]։ Սակայն, այնուամենայնիվ, մի շարք դեպքերում դրանց սահմանները հատվում են։ Այսպես, որակական ածականները ս ստանալով՝ հանդես են գալիս իբրև մակբայ, և այդ դեպքում նմանվում են ածականի հոգնակի հայցականի ձևին։ Հետևյալ նախադասություններում առկա են յատակս, բազումս, ողջս, բովանդակս, իմաստունս, խօսունս մակբայները։

Իմաստութիւն շրթանց իմոց յատակս իմացի (Յովբ., ԼԳ)։ Այր չաբաշար՝ բազումս տուժեսցի (Առակ., ԺԹ)։ Զամենեսին զնոսա ողջս բովանդակս փոխանակ միոյ գլխոյս իմոյ արձակեցից (Բ, Մակ., ԺԲ)։ Անիրաւ Զհողս այսպէս իմաստունս և խօսունս արարեր (Բուզ., Ե5, Դ)։ Երկարագոյնս գործեաց զոր գործեաց (Յովբ, ԼՁ)։ Երթայր ընդ նոսա երկարագոյնս (ՂՓՊՀ, 77)։ Զամենայն զոր արար գեղեցիկս արար (Եզն., 1, Ա)։ Բեբանք նոցա զամբարտաւանս բարբառին (Յուդ.)։ Ուղիղս արարէք զշաւիղս նորա (Մարկ., Ա)։ Ասացից քեզ կարճառօտս (Եղ., 7)։

Նույնաձև բառերը ածական են հետևյալ նախադասություններում։

Տուք ի ձէնջ արս իմաստունս (Բ, Օրէնք, Ա)։ Առի ի ձէնջ զցեղապետսն, արս իմաստունս և ճանճարեղս և խորհրդականս (Ն. տ.)։ Խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զամբարտաւանս (Սաղ., ՁԸ)։ Ետուր նոցա զդատաստանս ուղիղս (Նէեմի, Թ)։ Զշրթունս անիրաւս մերժեա (Առակ., Դ)։ Արարածս գեղեցիկս արար Որմիզդ (Եզն., 2, Ը)։

Որակական ածականի առավելական բաղդատական աստիճանի ձևը ևս նմանվում է մակբայի։ Նկատի ունենք հզօրագոյնս, պերճագոյնս, երկարագոյնս, լաւագոյնս, թեթևագոյնս և նման բառեր։

---

[11] Տե՛ս «Գոյականի լրացումը ածականով» հատվածը, էջ 39—43։

Այսպես, հետևյալ օրինակներում դրանք գործածված են որպես ածական։

Ժառանգեսջիք զազգս մեծամեծս և **հզօրագոյնս** քան **զձեզ** (Բ, Օրէնք, ԺԱ)։ Զեղբարս քո զորդիս հօր քո, **զլաւագոյնսն** քան զքեզ, սպաներ (Ն. տ., ԻԱ)։ Զո՞րս յայտնեցից ... ընդունաւղն ... թէ **զթեթևագոյնսն**՝ որ են ծանունք (ԳՆՄՈ, 66)։

Նույն կազմությունն ունեցող բառերը իբրև մակբայ են գործածված հետևյալ նախադասություններում։

Նաև արջք օրհասականք ընդ վախճանել շնչոցն **հզօրագոյնս** կռուին (Եղ., 1)։ Որոց ոչն տայր **պերճագոյնս** (Մխ, 2, ԽԵ)։ Երթայր ընդ նոսա **երկարագոյնս** (ՂՓՊՀ, ԽԲ)։ Հզօրք **հզօրագոյնս** պահանջեսցին (Իմաս., Զ)։ **Լաւագոյնս** արարէք զիրս ձեր (Երեմ., ԼԵ)։ **Ի թեթևագոյնսն** անդր զթոյնսն թափէր (ՅԴՊՀ, 246)։

Մի շարք ածանցներ՝ **—բար**, **—օրէն**, համապատասխանապես կազմում են ածական և մակբայ, և այդ բառերի խոսքի մասային պատկանելությունը որոշվում է բնագրո՛վ։ Այսպես, հետևյալ նախադասություններում այդպիսի կազմություն ունեցող բառերը ածական են։

Իսկ նորա **եղբայրաբար** սիրով և բարեկամութեամբ ընկալեալ՝ զբոլոր զինքն առաջի առնէր նմա (ՄԿՊԱՍ., 1, ԺԱ)։ Վարեսցի ուղղութեամբ, **հայրաբար** խնամովք առ նախարարսն (Մխ, 3, ԼԸ)։ **Ի համօրէն** աշխարհէ աստի հերքեսցես (ԳՆՄՈ, ԺԹ)։

Իսկ հետևյալ օրինակներում գործ ունենք դրանց մակբայ կիրառության հետ։

**Գազանաբար** ոգորեալ, **առնաբար** մարտնչէր (Ագ., 181)։ Զօրացն ամենեցուն պարգևէր **առատապէս** (Մխ, 2, ԽԴ)։ Յերկուս ճեղքէ զամբոխ թշնամեացն, **սկայաբար** շահատակելով (Ն. տ., ՁԵ)։ Սիրեցից զնոսա **համօրէն** (Ովսէէ, ԺԴ)։ **Գողաբար** սողեցաւ (Եղ., 4)։ **Աներկիւղաբար** սկսաւ խօսել առաջի թագաւորին (ՂՓՊՀ, ԽԵ)։ Ի ձայն բարձր գոչէր **առիւծաբար** (Ն. տ., ՁԳ)։

Սրանցից զատ բազմաթիվ բառեր դրսևորում են ածականի և մակբայի հատկանիշներ։ Դրանցից են՝ **ակամայ**, **արդարև**, **ձրի**, **դոյզն**, **կրկին**, **խիստ**, **չարաչար**, **անշուշտ**, **շատ**, **սակաւ**, **բնաւ**, **ծածուկ** և այլն։

Հետևյալ նախադասություններում այդ բառերը հանդես են եկել որպես ածական։

Հաստատուն կացէք **յանշուշտ** զօրագլուխն մեր (Եղ., 5)։ Յղէ զոմն պատուական քարտուղար իւր **անշուշտ** հրովարտակաւ (ՅԴՊՀ, 203)։ Վաղվաղակի հատուցանէր նմա ըստ ձեռին բաւականի զմնասս հար-

կին կրկին յաւելուածով (Ն. տ., 329)։ Կեցեալ ամս շատ՝ մեռաւ (Մխ, 1, ԺԴ)։ Եղանէր ի հոգևոր առագաստէ անտի պայազատել զբնաւ Հայաստանեայսս (ՅԴՊՀ, 147)։ Սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն (Եղ., 2)։ Պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ (Յայտն., Ի)։ Վասն դոյզն յանցմանն անկանէր ընդ մահուամբ (Եզն., 1, ԺԸ)։ Գիտեմ ... զխիստ պարանոց քո (Բ, Օրէնք, ԼԱ)։ Ամենատեղաց դեղ, ձրի բժշկութիւն, կրկնակիր առողջութիւն (ԳՆՄՈ, Գ)։ Հարցանէին ... զարդարև զկաթողիկոսն Հայոց (ՂՓՊՀ, ԽԴ)։ Ակամայ կամօք մուծանէին Յոհան ի սենեակն (ՅԴՊՀ, 78)։

Նույն բառերը իբրև մակբայ են գործածված հետևյալ նախադասություններում։

Արդարև զայս տեսանեմք (ՂՓՊՀ, ՀԴ)։ Ակամայ առ ականէ քարտուղարի զօր գումարէ (ՅԴՊՀ, 203)։ Սակաւ վաստակիմ և բիւրս վաստնեմ, դոյզն գանձեմ և անթիւս սպառեմ (ԳՆՄՈ, ՀԱ)։ Եթէ կրկին գոյացուցանես, Աստուած ես (Ն. տ., ՀՁ)։ Խիստ վաստակեցաւ (ՅՄՊՏ, 328)։ Ստիպէր չարաչար յուրացութիւն (Եղ., 3)։ Մեծամեծքն նախարարացն աւագանին շատ եդին ի մտի արքային, զի մի՛ կատարեսցէ զչարութիւն կամացն իւրոց (Բուզ., 3, ԺԴ)։ Գունդ մի որ ընդ իւրով ձեռամբ էր, ծածուկ վառէր (Գ, Մակ., Ա)։ Անշուշտ նուաճեալ այնուհետև զքաղաքացիսն ընդ լծով ծառայութեան իւրոյ ... զամենեսեան յանձանձէ ածէ համագունդ (ՅԴՊՀ, 161)։ Բնաւ լսէք նմա (Յովհ., Ժ, 20)։ Մի՛ այդպէս խիստ և խժաբար կատարեր զկամս (Բ, Մակ., ԺԵ)։

Բայի լրացման դերում հանդես եկող մակբայները շփման եզրեր ունեն նաև գոյականի հետ։ Բանն այն է, որ բաղադրյալ մակբայները արտաքուստ նման են գոյականի որոշ հոլովաձևերին կամ նախդրավոր կառույցներին։ Այսպես, յաւիտենից, առաւօտուց, գիշերի մակբայները նման են գոյականի սեռական—տրական հոլովաձևերին, ի վաղընջուց, կարճ ի կարճոյ, փոքր ի շատէ՝ բացառականին, ամենևիմբ, ազգաւիմբ, կամաւ, կարճառօտիւ, կարճառօտիւք, ճշգրտիւ, մեղմով՝ գործիականին, զճանապարհայն, յիրաւի, ի վաղիւ, փոյթ ընդ փոյթ, ի սպառ՝ նախդրավոր կառույցներին։ Սակայն այդ նմանությունը չի հանգեցնում այս երկու խոսքի մասերի շփոթի։ Բանն այն է, որ բերված մակբայները ծագումով լինելով գոյական (կամ գոյականաբար գործածված ածական), արդեն կորցրել են ելակետային խոսքի մասի հատկանիշները։ Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ այդ բառերի այլ հոլովաձևեր չեն գործածվում (աննշան բացառություններով)։

Մակբայի բոլոր տեսակները կարող են դառնալ բայի լրացում։

*նկատելի է, որ, իրենց հիմնական իմաստից զատ, մակբայները կարող են արտահայտել նաև լրացուցիչ երանգներ, որոնք և ցույց ենք տալիս* մակբայ+բայ *բառակապակցությունների նկարագրության ընթացքում։*

Տեղի մակբայը բայի լրացում.— *Տեղի մակբայներից են՝* աստ, աստէն, արտաքս, արտաքոյ, առաջոյ, առաջի, դէմ յանդիման, յանդիման, զկնի, զհետ, զճանապարհայն, ի բաց, հեռագոյն, հեռի, ի հեռուստ, մօտ, յայնկոյս, յարքունուստ, ի ներքուստ, ներքոյ, ներքագոյն, շուրջանակի, վերագոյն *և այլն։ Սրանք կարող են դառնալ բայի լրացում առաջին հերթին տեղի իմաստով։ Լրացյալ բայերի իմաստային սահմանափակում չկա։*

Օրինակներ՝ *Զի՞ նստիմք* աստ *(Դ, Թագ., է)։* Աստէն *նստիցիմք (Ն. տ.)։ Ոյք տեսանէին զիս* արտաքս, *փախչէին յինէն (Սաղ., Լ)։* Առաջի *անկեալ սերմնն զայլսն իբրև զաւելորդս* ի բաց *թքանէ (Եզն., 2, Զ)։ Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բաբելոնի, որպէս* վերագոյն *ասացաք (Մխ, 1, ԺԲ)։ Եթէ* մօտ *երթամք ... կիզու զմեզ (Եղ., 7)։ Մեծաւ շքեղութեամբ յուղարկէ* զճանապարհայն *(ՅԴՊՀ, 39)։ Զօր* զհետ *առաքէ ըմբռնել զնա (Ն. տ., 126)։ Չուեցին ...* յառաջ *զօրուն իւրեանց (Թուք, Ժ)։ Գնացին և աշակերտքն* յայնկոյս *(Մատթ., ԺԶ)։ Եւ հրաման* յարքունուստ *(Մխ, 3, ·Լ)։* Ի հեռուստ *տեսին զնոսա (Եբր., ԺԱ)։ Հրաման տայր Թագաւորն Յազկերտ* անդէն *զառաջեաւ կողոպտել ի նմանէ թշնամանօք զամենայն պատիւն (ՂՓՊՀ, ԽԶ)։*

*Մի շարք տեղի մակբայներ զուգահեռաբար կարող են արտահայտել նաև ձևի իմաստ։ Դրանցից են՝* արտաքոյ, բերան ի բերան, դէմ յանդիման, յանդիման, հուպ ընդ հուպ, ի հեռուստ, ներքոյ, շուրջանակի *և այլն։*

Օրինակներ՝ *խնդրեաց զմեզ և հանգոյց զմեզ* շուրջանակի *(Բ, Մնաց., ԺԴ)։ Աչք ձեր տեսցեն զերկիրն* ի հեռուստ *(Եսայի., ԼԳ)։ Յորում կայր բուրվառն ոսկի և արկղն կտակարանաց պատեալ* ներքոյ *և* արտաքոյ *ոսկւով (Եբր., Թ)։ Եւ են որ անդէն իսկ մօտալուտ առաջոյ՝ ի նոյն ի նմին ժամանակի* դէմ յանդիման *ցուցանէ (Ագ., 264)։ Սրտի սիրով մերով համարիմք, թէ* յանդիման *տեսաք զձեզ (ՄԿՊԱԱ, 2, ԽԳ)։ Եկից* հուպ ընդ հուպ *(Կորնթ., Դ)։* Բերան ի բերան *և* ձեռն ի ձեռն *ընդ բարեկամին իւրում ընդ Մովսեսի խօսէր (Եզն., 1, ԻԳ)։*

Ժամանակի մակբայը բայի լրացում.— *Ժամանակի մակբայներից են՝* այնուհետև, անագան, առժամայն, գիշերայն, գիշերաց, զօրհանապազ, կանուխ, հանապազ, միանգամայն, յառաջ, յառաջագոյն, յետոյ,

նույնժամայն, վաղ, վաղու, վաղվաղ և այլն։ Սրանք բայի լրացում են դառնում առաջին հերթին ժամանակի իմաստով։ Լրացյալ բայերի իմաստային սահմանափակում չկա։

Օրինակներ՝ Ես զարթեայց առաւօտուց (Սաղ., ԾԷ)։ Գիշերաց կանխէ հոգի իմ առ քեզ (Եսայի, ԻԶ)։ Սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխ և զանագան (Յակ., Ե)։ Հանապազ բղխեն (Եզն., 1, Ա)։ Զինչ և գործեաց յառաջ (Ն. տ., 4, ԺԴ)։ Թէպէտ և վաղու լուեալ զբոթն՝ ոչ ինչ ժամանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի իւրացն պատրաստութեան (Ագ. 18)։ Արս հաւատարիմս պատուականս յղեցին վասն վաղվաղ գալոյ (Բուզ., 4, Լ)։ Զոր յետոյ Սեւերիոս արքայ Հոռմայեցւոց նորոգեաց (Մխ, 2, ՁԸ)։ Վաղ և կամ անագան կորուսանեն զնա (ՂՓՊՀ, ՀԶ)։ Յառաջագոյն պատմեաց մեզ (Սեբ., ԻԵ)։ Մի՛ այնուհետև ողբասցէ (Ն.տ.)։ Նոյնժամայն հրամայէր փոխել ի նմանէն զտխրական զգեստն (ՄԿՊԱԱ, 2, ԻԲ)։ Ընդ որոյ և զսուրբ լուսաւորիչն մեր Գրիգոր զկնի շարադրեցից (ՅԴՊՀ, Յառաջաբան)։ Միանգամայն ի սպառ սրբեցայց օրհնեալ հրամանաւ էիդ (ԳՆՄՈ, ԼԲ)։ Գիշերայն ընթացեալ եկելոց կանանցն ի գերեզմանէն (Ագ., 485)։ Որով առժամայն լուսաւորեալ (Ն. տ., 864)։ Զայս ամենայն և ևս յաւէտ քան զսոյնս տեսանէր արքայն Պարսից Յուսփ (ԹԱՊՏԱ, 4, Գ)։ Ի վաղիւն ժողովեալ զկապուտ բանակին, դարձեալ ընդ կրունկն՝ գնացին յաշխարհն իւրեանց (Ղև., Պատմ., Բ)։

Ժամանակի որոշ մակբայներ միաժամանակ կարող են արտահայտել չափի իմաստ. ինչպես՝ հանապազ, հանապազօր, զօրհանապազ, յաւիտեան, յաւիտեանս, յաւիտենից, ի վաղնջուց և այլն։

Օրինակներ՝ Զօրհանապազ ողորմի և տայ փոխ (Սաղ., ԼԶ)։ Հանապազօր խօսէր ի դիւանին (Գործ., ԺԹ)։ Երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից (Յայտն., Դ)։ Պատմէր անձանձրոյթ հանապազ (ՂՓՊՀ, ԾԷ)։ Մեք Աստուծով պարծեսցուք զօրհանապազ, և անուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան (Ն.տ., ՁԳ)։ Հաւատասցեն քեզ յաւիտեան (Ելք, ԺԹ)։ Ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա (ՅՄՊՏ, 275 բ)։

Ժամանակի որոշ մակբայներ էլ կարող են ձևի իմաստ արտահայտել, ինչպես՝ առաջինն, միահաղոյն, ստէպ ստէպ, վաղվաղակի, օրըստօրէ և այլն։

Օրինակներ՝ Առն աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ (Բուզ., 4, ԺԴ)։ Ստէպ ստէպ հրաւիրակն կոչէր սիրալիր կամօք երթալ ի պալատն առ կայսր (ՅԴՊՀ, 286)։ Զապստամբսն

միաճաղոյն *բարձին սրով* (*ԹԱՊՏԱ*, 2, *Դ*)։ Զառաջինն յաղթահարեցին *զՍմբատ* (*ՅՄՊՏ*, 314*ա*)։ *Որպէս և կարգեալ էր* օրըստօրէ (*Գ*, *Եզր*., *ԺԲ*)։

Չափի մակբայը բայի լրացում.— *Չափի մակբայներից են՝* ամենևին, առաւել, առաւել ևս, առաւել ևս առաւել, առաւել քան զառաւել, բազում, բնաւ, երկարագոյնս, երկիցս, երիցս, չորիցս, կարի, համակ, մեծամեծս, յերկար, յերկարագոյն, յաճախ, յոյժ, շատ, սաստիկ *և այլն։ Նկատելի է, որ սրանց մի մասը ածականից է առաջանում* (յերկար, բազում, մեծամեծս *և այլն*), *մյուսները՝ թվականից* (երկիցս, երիցս, չորիցս *և այլն*)։ *Լրացյալ դառնում են տարբեր իմաստային խմբի բայեր։*

Օրինակներ՝ *խօսեցար յաղագս տան ծառայի քո* յերկարագոյն (*Ա*, Մնաց., *ԺԷ*)։ *Այր չարաբար՝* բազում *տուժեսցի* (*Առակ*., *ԺԸ*)։ *Որք* մեծամեծս *կոտորեն՝ թէ մեք անդստին իսկ յաւազանէն ուխտաւորիմք* (*Եզն*., 4, *ԺԴ*)։ Փոքր ի շատէ *գիտեմք, և* փոքր ի շատէ *մարգարէանամք* (*Կորնթ*., *Դ*)։ *Այնպէս* յերկար *որոտացեալ, մինչև թմբրեալ լինէին մարդիկն յահէ անտի* (*Ագ*., 175)։ *Նա* համակ *անարգեաց զիս* (*Բուզ*., 4, *ԾԴ*)։ *Կարի* շատ *յառաջ մատուցեալ ծերացայց* (*Եղ*., 5)։ *Եթէ* շատ *մատուցանեմք նմա զկերակուրսն,* յոյժ *քաղցնու. և եթէ* բնաւ *չտամք,* ամենևին *անցանէ* (*Ն. տ*., 7)։ Առաւել քան զառաւել *աճեցուցանէր ... զմիաբանութիւն իշխանացն* (*ՂՓՊՀ*, *ԺԳ*)։ *Երթայր ընդ նոսա* երկարագոյնս (*Ն. տ*., *ԽԲ*)։ Երկիցս և երիցս *մարտեցան* (*ՄԿՊԱԱ*, 1, *ԺԱ*)։ *Որ* առաւել քան զառաւել *յաճախեաց զյոգնայեղց զարմացումն ի մեր միտս* (*Ն. տ*., 2, *Լ*)։ Կարի *ախորժելով ունկն դնէր* (*ԹԱՊՏԱ*, 1, *ԺԱ*)։ *Նա* սաստիկ *հոգայր վասն նորա* (*Ն. տ*., 2, *Ի*)։ *Այս են գիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ* յաճախ *ծնանին երկնաւոր պտուղս անճառս և զարմանալիս* (*ԳՆՄՈ*, *ԾԸ*)։ *Սիրեցին զՏէրն* առաւել՝ *քան զկար* (*Ագ*., 305)։ *Որ համբերեսցեն* ի սպառ (*Մարկ*.. *ԺԳ*)։

*Երբեմն* երկիցս, երիցս, չորիցս, բազմիցս *չափի մակբայների հետ գործածվում է* անգամ *բառը։ Օրինակ՝* Երկիցս *և* երիցս անգամ *զնոյն առնէր* (*Եղ*., 2)։

Ձևի մակբայը բայի լրացում.— *Գրաբարում ձևի մակբայները քանակով շատ են։ Դրանց մի մասն ունի յուրահատուկ կազմություն՝ ածանցավոր, իսկական, հարադրավոր բարդություններ և այլն։ Հայտնի է, որ ածականից, գոյականից համապատասխան ածանցներով* (—պէս, –օրէն, –բար, –գին, –ւոյն, –ս, –ակի *և այլն*) *կազմվում էին ձևի մակբայներ, ինչպես՝* մարդկօրէն, շուրջանակի, փութանակի, գազանաբար, առիւծաբար, առնաբար, աստուածաբար, սկայաբար, հեզաբար, զըղ–

ջականաբար, ցաւակցաբար, բռնաբար, արմատաքի, փութապէս, համարձակապէս, հզօրեղապէս, զօրապէս, կենդանւոյն, իւրովի, գլխովի, ինքնին, կարճառօտս, ստահակս, ողջս, անարատս, ուժգին *և այլն: Ձևի մակբայները լինում են բարդություններ, ընդ որում՝* ա *հոդակապով, ինչպես՝* ձիախաղաց, յայտնաբարբառ, վիշապաձայն, *անհոդակապ, ինչպես՝* նոյնօրինակ, հետիոտս, *հարադրություն, ինչպես՝* անդամ անդամ, գէշ գէշ, ողջ ամբողջ, խիտ առ խիտ, հուպ ընդ հուպ, ստէպ ստէպ, պատառ պատառ, փոյթ ընդ փոյթ, միայն ընդ միայն *և այլն: Դրանց մի մասն էլ նաև ածանցավոր կազմություններ են, ինչպես՝* ակամայ, առաւել, յառաջ *և այլն: Սրանց մեջ կան նաև* ի *նախդրով ածականից կազմված ձևեր, ինչպես՝* ի ծածուկն, ի նանիր, ի կոր, ի գաղտնի *և այլն: Սակավաթիվ ձևի մակբայներ ծագել են հոլովաձևերից, ինչպես՝* բնաւ, կամաւ, կարճառօտիւ(ք), ճշգրտիւ, ի բնուստ, յամենուստ, ի վարձու, յանմարդի *և այլն: Թվով շատ քիչ են կազմությամբ պարզ մակբայները* (արտաքս, գաղտ, քաջ, երագ, արագ, յետոյ, տարապարտ(ուց) *և այլն:*

*Ձևի մակբայով լրացում ստացող բայերի իմաստային սահմանափակում չկա:*

*Այս մակբայներն առաջին հերթին բայի լրացում են դառնում բուն ձևի իմաստով:*

Օրինակներ՝ *Կոխեցին զնա* առաքուր *(Դ, Թագ., Թ): Ճշմարիտք* արմատաքի *երբէք խլեցան (Յովբ, Դ): Պատմեցից ձեզ* լու ի լու *(Ն. տ., ԺԳ): Գազանք* երագս *ընթանային (Եզեկ., Ա): Իշխանն ի մէջ նոցա կորակոր գնացէ,* գաղտագողի *շրջեսցի (Ն. տ., ԺԲ): Կործանեցից զքեզ* արագ արագ *(Ն. տ., ԻԹ):* Մարդկօրէն *ընծայեցուցանէր (Եզն., 1, Ա): Գնացին երկոքեան* ի միասին *(Տօբիթ, Ե): Եւ այլ ես կանայք մեծամեծք տեղեացն գային* գունդագունդ *գովել զնա (Յուդիթ, ԺԷ):* Ի նանիր *խօսեցաւ ի վերայ սրբութեան քոյ (Ա, Մակ., Է):* Հուպ ընդ հուպ *ժողովեսցէ ի սուրբ տեղին (Բ, Մակ., Բ): Ըստ նոցին նմանութեան* արժանաւորապէս *տանջեցան (Իմաստ., ԺԶ):* Արմատաքի *խլէին և զտաղտն* գլխովին *և զբազուկ* բնջովին *(Բուզ., 4, Ը): Զհանդէս գնդին* ինքնին *տեսանէր (Եղ., Զ):* Կանանցաբար *նստուցին ի ձի մատակ (Ն. տ., 6):* Հեզաբար *կարդաց յանուանէ զեպիսկոպոսն (Ն.տ., 7):* Արագագոյն *ի ձեռն մտերմաց պատմէ եղբօրն զնենգութիւն (Մխ, 1, ԻԹ): Զչարեալ Անտոնիոս՝* իւրովի *հասանէ ամենայն զօրօք Հռոմայեցւոց (Ն. տ., 2, ԻԱ):* Խիտ առ խիտ *թանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իւրոյ (Եղ., 1): Որ* ձրին *եգիտ զաստուածատուր շնորհսն (Ն. տ., 7): Սկսաւ և նա* առանձինն *ասել (Ն. տ.): Ժողովուրդք սուրբ հօտին Քրիս-*

*տոսի* ի կոր *կործանեցան (ՂՓՊՀ, ԻԳ)։ Գնացին ի գեղջէն* լռելեայն *(Ն. տ., ԾԵ)։ Սատակէր* հզօրեղապէս *(Ն.տ., ՀԱ)։* Բռնաբարայն *գրաւեաց զիշխանութիւնն (Սեբ., Ա)։ Հրամայեցաւ ինձ* փութանակի *կոչել զքեզ (Ն. տ., Գ)։* Անգամ անգամ *յօշեցին զնա (Ն.տ., ԻԵ)։* Ակամայ *բարեկամանայ (Ն.տ., ԻՁ)։ Այլ զօրքն սկսան* ձիախաղաց *անդր հասանել (ՅՄՊՏ, 265 ա)։ Դարձեալ սկսայց զճառ պաղատանացս* խոստովանօրէն զղջականաբար *զգաղտնածածուկն* յայտնաբարբառ *(ԳՆՄՈ, ԻԷ)։*

*Ձևի մակբայների մի մասը զուգահեռաբար արտահայտում է վիճակի իմաստ, ինչպես՝* անարատս, անարգս, ամօքալից, բովանդակս, ողջս, կենդանւոյն *և այլն։*

Օրինակներ՝ *Իջանիցեն* կենդանւոյն *ի դժոխս (Թիւք, ԺՁ)։ Ձթագաւորն Գայեայ ձերբակալ արարին* կենդանւոյն *(Յեսու, Ը)։* Ամօքալից *կորիցեն (Սաղ., ՁԲ)։ Եւ ասէր* յանմարդի *զԾրուսաղէմ հրէից հասուցանել (Բ, Մակ., Թ)։ Ձամենեսին զնոսա* ողջս բովանդակս *փոխանակ միոյ գլխոյս իմոյ արձակեցից (Ն. տ., ԺԲ)։ Երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից* ողջս և անարատս *(Բուզ., 5, Բ)։ Հրաման տայր՝* միայն ընդ միայն *կոչել առ ինքն զսուրբ կաթողիկոսն Հայոց զՍահակ (ՂՓՊՀ, ԺԴ)։*

*Որոշ ձևի մակբայներ զուգահեռաբար արտահայտում են նպատակի իմաստ, ինչպես՝* զուր, տարապարտուց, ընդունայն, յիրաւի:

Օրինակներ՝ *Գուցէ* ընդունայն *ինչ ընթացեալ իցեմ կամ ընթանայցեմ (Գաղ., Բ)։* Ի զուր, տարապարտուց *կորուսանէք զմեզ (Ա, Մակ., Բ)։* Զուր *ուրեմն վաստակէք* տարապարտուց *(Եսայի, ԽԹ)։* Յիրաւի *կորեան (ՂՓՊՀ, ՂԲ)։*

*Երբեմն ձևի մակբայը համատեղում է չափի իմաստը։*

Օրինակներ՝ Գերազանց *քան զբանականս յանշնչութեանն հրաշագործէ (ԳՆՄՈ, ՀԵ)։ Գրեմ* կարճ ի կարճոյ, ... *և զաւելորդսն թողում (Մխ, 2, Ա)։ Զօրացն ամենեցուն պարգևէր* առատապէս *(Ն. տ., ԽԴ)։*

–*Պէս ածանցով կազմված որոշ մակբայներ* (զօրապէս, մարմնապէս *և այլն) բայի հետ կապակցվելիս արտահայտում են սահմանափակման նրբիմաստ։*

Օրինակներ՝ *Արիանամ* զօրապէս *և վատթարագոյնս ընկրկիմ (ԳՆՄՈ, ՀԱ)։* Մարմնապէս *իսկ զանթիւ բազմութեան խոստումնն զաւակի ընդունէր (Ագ., 301)։*

Ընդհանրական մակբայը բայի լրացում.— *Սրանք սակավաթիվ են* (անդրէն, ամենևիմբ, կրկին, միանգամայն, վերստին *և այլն)։*

Օրինակներ՝ *Ասէ՝ թէ ոք ոչ ծնցի* վերստին *(Եզն., 4, ԺԵ)։ Դարձաւ*

անդրէն ի քաղաքն իւր Տիզբոն (Եղ., 1)։ Եկն եհաս ի վերայ քո միանգամայն բազմութիւն ազգաց հեթանոսաց (ՄԿՊԱԱ, 1, ԺԱ)։ Եթէ կրկին գոյացուցանես, Աստուած ես (ԳՆՄՈ, ՀՁ)։ Ձերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենևիմբ զիւր անունն հաստատէ (Մխ, 2, ՀԷ)։ Զորս խաղացուցեալ այսր՝ զբնաւս ծառայեցուցանեն անօրէնութեանց պաշտամանդ ազգաց յազգս (ՂՓՊՀ, ԻԷ)։

## III. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԱԾԱԿԱՆՈՎ

Գրաբարում որակական ածականը կարող էր դառնալ բայի լրացում։ Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ նկատի չունենք այն դեպքը, երբ այդպիսի ածականներից -ս-ով մակբայներ են կազմվում (այս երևույթը նշվեց նախորդ՝ «Բայի լրացումները մակբայով» հատվածում)։ Որակական ածականները բայի հետ կապակցվում են՝ արտահայտելով ձևի, վիճակի, չափի իմաստներ։ Այս դեպքում ևս երբեմն լրացումը կարող է համատեղել երկու իմաստ։

**Ածականը բայի լրացում ձևի իմաստով.—** Այսպիսի իմաստ արտահայտում են բազմաթիվ որակական ածականներ, ինչպես՝ **անեցուն, այլազգ, աներկիւղ, անյիշատակ, աննախանձ, անվեհեր, առաքինի, արդար, բազմադիմի, գեղեցիկ, զարմանալի, զգաստ, թիւր, խրթին, հասարակ, հաստատուն, հարթ, ճշմարիտ, մթին, նորոգ, ուղիղ, պայծառագոյն, պսակաձև, քաղցր** և այլն։ Լրացյալ կարող են լինել բայերը՝ առանց սահմանափակման։

**Օրինակներ՝** Ո՛չ է արժան մեզ և ձեզ **հասարակ** շինել զտուն Տեառն Աստուծոյ մերոյ (Եզր., Դ)։ Ես **ուղիղ** դատեցայց (Սաղ., ՀԴ)։ Արտևանունք քո **արդար** ակնարկեսցեն (Առակ., Դ)։ Ի մէջ բազմութեան երևեցայց **առատ**, և ի մէջ պատերազմի **առաքինի** (Իմաս., Ը)։ **Բազմադիմի** ջանայր շիջուցանել զհաւատ քրիստոնէութեան (Մխ, 2, ԺԳ)։ **Այլազգագոյն** ինչ խորհիք (ՂՓՊՀ, ԻՁ)։ **Հաստատուն** գիտեմ, զի տայ ինձ Աստուած ... զնշխարս (ՄԿՊԱԱ, 2, ԻԱ)։ **Զգաստ** արասցես զխելագարեալս ամենաթշուառ (ԳՆՄՈ, ԺԸ)։ **Անեցուն** արարի գնացիւք անսաստութեան զգունդն Բելիարայ (Ն. տ.. ԻԱ)։ Մարդասիրապէս **քաղցր** անձրևեցեր (Ն.տ., ՂԲ)։ **Ճշմարիտ** ասացեր և **արդար** (ՂՓՊՀ, ԿՁ)։ **Անվեհեր** մատուցանէ (Ագ., 160)։ **Աննախանձ** տան (Ն. տ., 267)։ **Անյիշատակ** ջնջէ (Ն. տ., 568)։ Այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց իւրոց **առաքելաբան առաքելագործ** վարեալ, զհետ, երթեալ հրամանացն ընկալելոց մինչև ի վախճան կատարածին զայս առնէր (Ն. տ., 891)։ **Գեղեցիկ** վկայեցեր բամբասեալ զքոյին հպարտութիւնդ (Ղև., Պատմ.,

ԺԴ)։ Զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ՝ քակեալ զայն, ես ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց (ՅԴՊՀ, 80)։ Դժնդակագոյն ես հարկանել հրամայէր (ՄԿՊԱԱ, 1, ԻԲ)։ Հան ի յանդորր զոտս սասանեալ թիւր ընթացողին (ԳՆՄՈ, Խ)։ Հարթ հասարակ ամենեքին տեսանէին զպատկութիւն լուսոյն (Ն. տ., 2, ԼԳ)։ Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ (Եղ., 1)։

**Ածականը բայի լրացում վիճակի իմաստով.**— Մի շարք բայերի մոտ, ինչպես՝ պահել, տեսանել, ծնանել, թողուլ, մեռանել, հանել, անկանել, շրջել և այլն, ածականը վիճակի իմաստ է արտահայտում։ Վիճակի իմաստով կարող են գործածվել անարատ, անթաղ, անհրամանատար, անուշահոտ, անտուն, թափուր, լուսաւոր, խաւարին, ժանդահոտ, հաշտ, հիւանդ, մերկ, մուրացիկ, նորոգ, ողջ, ջերմն, սպիտակ և այլ ածականներ։

Օրինակներ՝ Պահեաց զնա անարատ Աստուծոյ (Իմաս., Ժ)։ Ծնեալ Որմզդի ի ժամու խրոմ լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց առաջի Զրուանայ (Եզն., 2, Ա)։ Յորժամ խաւարին և ժանդահոտ ետես զնա (Ն. տ., Գ)։ Զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր (Ագ., 19)։ Ե՞րբ տեսաք զքեզ ... մերկ կամ հիւանդ (Մատթ., ԻԵ)։ Առաւել զուարճացեալ բերկրիմ, տեսանելով զԱստուած հաշտ ընդ ձեզ (ՂՓՊՀ, ՀԱ)։ Եկն Վարդ ողջ, զերծեալ ի կապանացն զօրութեամբ Աստուծոյ (Ն. տ., ՀԲ)։ Կայր տեղին անհրամանատար (Սեբ., ԻԸ)։ Գտցես զսա նորոգ և անապականութեամբ լցեալ (ՅՄՊՏ, 296ա)։ Նշխարք սրբոցն անկեալ կային անթաղ զաւուրս երիս (Ն. տ., 297ա)։ Առ տագնապին մուրացիկ շրջէին (ՅԴՊՀ, 262)։ Գամ սակաւ մի սպիտակ և սրանամ դառնամ բնաւին սևացեալ (ԳՆՄՈ, ՀԱ)։ Լի չոգայ, և ունայն դարձոյց զիս (Հռութ, Ա)։

Մի շարք ածականներ բայի լրացման դերում կարող են մեկնաբանվել և՛ ձևի, և՛ վիճակի իմաստներով։ Դրանցից են՝ զուրկ, հարուստ, վատանուն, փախստական, փախստեայ և այլն։

Օրինակներ՝ Բոլոր ընտանեօքն գնաց փախստական ի Յոյնս (Մխ, 3, ԼԱ)։ Ի չելս արևուն հարուստ երևիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ (ԳՆՄՈ, ՀԱ)։ Զգիշերն զայն փակեալ զինքն զուրկ ի քնոյ անցուցանէր (ՄԿՊԱԱ, 2, ԻԱ)։ Ուրացութեամբ մեռցի վատանուն (ՂՓՊՀ, ՀՁ)։ Ինքեանք փախստեայ ի Հայս անկանէին (ՄԿՊԱԱ, 1, ԺԴ)։ Ոչ գնայցէք կանգուն (Միքիա, Բ)։

**Ածականը բայի լրացում չափի իմաստով.**— Այսպիսի լրացում դառ-

նում են մի շարք ածականներ, ինչպես՝ բազում, մեծ, յոլով և այլն։ Լրաց-յալ բայերի իմաստային սահմանափակում չկա։

Օրինակներ՝ Յոլով նորա արքանեկեալ էր զպէտս անդւոյդ (ՂՓԹ)։ Մեծաւ պատուիրելով յանձնէ նոցա (ՂՓՊՀ, Զ)։ Բազում կոփեալ մի-մեանց և ոչինչ եղև (ՅՄՊՏ, 282ա)։ Հարուստ մի անցեալ գնացեալ և կախեալ ընդ պատուար պարսպի քաղաքին՝ փախչէր (ՅԴՊՀ, 226)։

Մի շարք ածականներ համատեղում են ձևի և չափի իմաստները։ Դրանցից են՝ գերագոյն, լի, մեծագոյն, բաց և այլն։ Լրացյալ դառնում են տարբեր իմաստի բայեր։

Օրինակներ՝ Իբրև ընդ գինիս մտին, բաց արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին (Բուզ., 3, Ի)։ Ձայն բարձեալ մեծագոյն ողբալով ասէր (ՂՓՊՀ, ԺԳ)։ Զամենայն զոր ասացերդ՝ լի ասացեր (Ն. տ., ԿԶ)։ Ընդ ձեռն Ուռնայրի գերագոյն լուսաւորեցան (ՄԿՊԱԱ, 1, Թ)։

## IV. ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ

Դերբայները կարող են դառնալ բայի լրացում երկու ձևով։ Մի դեպքում գործ ունենք դերբայների գոյականական գործածության հետ, երբ անորոշ, ներկա (ենթակայական) և անցյալ դերբայները հոլովվե-լով դառնում են բայի լրացում՝ կատարելով գոյականին բնորոշ պաշ-տոններ (այսպիսի գործածությունը քննված է «Բայի լրացումները գո-յականով» հատվածում)։ Երկրորդ դեպքում բայի լրացում դառնում են անորոշ և անցյալ դերբայները անփոփոխ ձևով (անորոշ դերբայի ան-փոփոխ ձևի քննությունը ևս կատարված է նշված բաժնում)։ Անցյալ դերբայը բայի լրացում կարող է դառնալ և՛ անփոփոխ, և՛ ստանալով մակբայական -ս, երբեմն և -ք մասնիկներ։ Այս դերբայը բայի մոտ արտահայտում է պարագայական իմաստներ։

Ա. Վիճակի.— Նկատելի է, որ անցյալ դերբայը վիճակի իմաստով ավելի շատ գործածվում է տեսանել, թողուլ, պատահել, առնել, ելա-նել, իջանել, գտանել և սակավաթիվ այլ բայերի մոտ։

Օրինակներ՝ Ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի (Մատթ., ԻԵ)։ Եկեալ գտանեն զամբարիշտն Մեհրուժան պնտացեալ կալեալ զեր-կիրս Հայոց (Մխ, 3, ԼԶ)։ Զուր տառապանաց արբին ի գետնատարած խշտիս ընդ երկիր կեցեալ (ՅԴՊՀ, 254)։ Եւ էր այնուհետև տեսանել յաշխարհիս Հայոց զլաւութիւն ճեռացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն ճեռացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թաքուցեալ (ՂՓՊՀ, ԿԳ)։ Ելանէր Վահան արղարացեալ յատենէն, և որդի Ասորւոյն Վրի-

ելանէր ամաչեցեալ և արհամարհեալ (Ն. տ., ԿԵ)։ Եկն Վարդ ողջ, զեր-ծեալ ի կապանացն զօրութեամբն Աստուծոյ (Ն. տ., ՀԲ)։ Գտցես զնա նորոգ և անապականութեամբ լցեալ (ՅՄՊՏ, 296ա)։ Քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն (Եղ., 5)։ Թողցեն զքեզ մերկ խայտառակեալ (Եզեկ., ԺԶ)։ Եգիտ նա զՓիլիպպոս տիրեալ քաղաքին (Ա, Մակ., Զ)։ Նստէր խաղաղացեալ ի գահոյս իւր արին Ջուանշիր (ՄԿՊԱԱ, 2, ԻԶ)։

Վիճակի իմաստը կարող է արտահայտվել նաև անցյալ դերբայի հոգնակի ձևերով։ Այս դեպքում վիճակի պարագան կարող է վերաբե-րել ենթակային կամ խնդրին։ Եթե լրացումը ցույց է տալիս գործող-ների վիճակը, ապա անցյալ դերբայը հոգնակի ուղղականով է դրվում։

Օրինակներ՝ Նոքա խռովեալք յածէին ընդ տեղիսն (ՂՓՊՀ, ԾԷ)։ Գտաք մեք անկեալք ընդ անողորմ դատաստանօք ըստ մեղացն յանցա-ւորութեան (Եղ., 5)։ Եւ այլքն ամենայն ողջանդամ ապրեալք երթային զհետ փախստականին (Ն. տ., 6)։ Ոմանք մերկանդամք և ոմանք զի-նեալք հարկանէին ի զօրացն Պարսից (ՂՓՊՀ, ԽԱ)։ Որք զճղխայն խնդրէին ապշեալք (Ն. տ., ՀԸ)։ Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն զուար-թացեալք, յուրախութիւն դառնային (Բուզ., 4, ԺԳ)։

Իսկ եթե լրացումը ցույց է տալիս գործողության առարկաների վի-ճակը, ապա դրվում է հոգնակի հայցականով։

Օրինակներ՝ Ջսուրբ քահանայսն Աստուծոյ տանէին կապեալս, նստուցեալս ի վերայ ջորւոց (ՂՓՊՀ, ԽԲ)։ Զուարթացեալս իմն տեսաք զձեզ ընդ խօսս աշխարհակորուսիդ այդորիկ (Ն. տ., ԽԵ)։ Տեսին զնոսա կոտորեալս (ՅՄՊՏ, 296ա)։ Նաև տեսանեմք իսկ զկախարդսն միշտ ծնկեալս ի դիւացն (Եզն., 1, ԻԲ)։ Տեսանեմք զմեծատունս աղքատա-ցեալս, և զաղքատս մեծացեալս (Ն. տ., 2, ԺԵ)։

Այսպիսի վիճակի պարագան ներգործական բայերի մոտ կարող է ունենալ նաև ուղիղ խնդրի արժեք։ Օրինակ՝ իսկ աստ զի կատարեալս առնիցէ Քրիստոս զիւր աշակերտեալսն, ասէ (Եզն., 4, ԺԲ)։

Անցյալ դերբայը հոգնակի ուղղականով և հայցականով է դրվում նաև պարագայական այլ իմաստների դեպքում։

Անցյալ դերբայը կարող է համատեղել վիճակի և այլ իմաստներ։

Վիճակի և ձևի՝ ձեռս ի վեր համբարձեալք խնդրեցին ի Տէառնէ ապրեցուցանել զնոսա (ՅԴՊՀ, 351)։ Շրջան առեալ կոտորէր մինչև ի նոյն տեղի (Եղ., 5)։ Որոց հեստմտեալ այնուհետև խափանեցին զգը-նացս իմ և հասեալ խոցոտեցին զիս ի մահ (ՂՓԹ)։ Որք սպրդեալ մու-ծանեն հերձուածս կորստեան (Բ, Պետ., Բ)։ Ընդ որս դուք բանս երկա-

րեալ խօսիք (ՂՓՊՀ, ԽԴ)։ Զսուրբն Սահակ ցուցեալ ասէր (Ն. տ.)։ Կըր-կին առաւելապէս երևեսցուք արդարացեալք մարդկան և հրեշտակաց Հօրն ամենեցուն (Եղ., 5)։

Վիճակի իմաստը հաճախ արտահայտվում է տրոհված անցյալ դերբայով։

Օրինակներ՝ Գնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ի պատերազմ (Բուզ 5, Լէ)։ Զաչս սրտից իւրեանց խցեալ՝ դիմեցին ի վերայ նոցա (ՅԴՊՀ, 347)։ Սուր ի յազդեր կալեալ՝ անհնարին սաստկմամբ զմիմեանս կոտորէին (Ն. տ., 89)։ Ոչ կարեն մխիթարել զմեզ որդիքն մեր՝ տարակուսեալք և փերեալք և ճալածեալք (Ն. տ., 291)։ Կռճտեալ ի վերայ զատամունս՝ մատնէր զնա անօրէն դահճաց (Ն. տ., 230)։ Հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան (Մխ, 1, ԺԱ)։

Վիճակի և ժամանակի՝ Անկեալ յերկիր հոլովէր այսր և անդր (ՂՓՊՀ, ՄԹ)։ Զերծեալք ի լոյս՝ խնդային (Ն. տ., Ժ)։ Որք և ամրացեալք իսկ ի խոխոմս ձորոց ... բազում արշաւասոյր հէնս ի վերայ թշնամեացն հասուցանէին (ՅԴՊՀ, 246)։ Խռովեալ խռովութեամբ մեծաւ՝ ել գնաց անտի (Ն. տ., 146)։

Վիճակի և պատճառի՝ Որք ոչ կարացեալ տևել, ժուժալ, տանել և համբերել պատերազմին, լքեալք և լուծեալք դարձան յետս յանօրէն օրէնս Իսմայելեան բռնադատին (ՅԴՊՀ, 125)։ Գլխաւոր նախարարք մեր յապաճովացեալք և ճանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս (Ն. տ., 199)։

Բ. Ձևի.— Լրացումը այս դեպքում կարող է լինել և՛ չտրոհված, և՛ տրոհված։

Օրինակներ՝ Ծոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ (Մխ, 1, ԺԱ)։ Ուր գետն Երասխ ճատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիգս և նեղս (Ն. տ., ԺԴ)։ Ուշ եղեալ ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին (Եղն., 1, Գ)։ Ի խոնարհ միտեալ իջանեն (Ն. տ., 2, ԻՁ)։ Զոմանս ի նոցանէ հեռացուցին և քարշեցին յազնուական պատուոյն անարգեալ (Եղ., Ձ)։ Զայլս բազումս արկեալք զփղովք սպանանէին (ՂՓՊՀ, ԼԹ)։ Թագաւորն անդրէն երկրորդեալ ասաց (Ն. տ., ԻՁ)։ Զայլ ձի աշտանակեալ փախչէր (ՅԴՊՀ, 357)։ Խրատ ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ (Եղ., 2)։ Որք բողոք բարձեալ յանդիմանէին զանարժան գործս նոցա (ՂՓՊՀ, Թ)։ Գնային ինքեանք անվնասք, յերկուցեալք բնաւ յումեքէ (Ն. տ., ՁՁ)։ Ընդ կեանս զմահ խառնեալ՝ ի բանտ արգելոյր (ՅԴՊՀ, 237)։

*Անցյալ դերբայով արտահայտված լրացումը կարող է ձևի իմաստը համատեղել այլ իմաստների հետ։*

**Ձևի և միջոցի՝** *Մարկիոն մոլորեալ մուծանէ օտարութիւն ընդդէմ աստուծոյն օրինաց,* **եդեալ** *ընդ նմա և զհիւղն էութեամբ (Եզն., 4, Ա)։ Զաղաղակ* **բարձեալ՝** *քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց (Եղ., 5)։ Զկամս իւր* **կատարեալ՝** *վրդովէր խաղաղութիւնն (ՅԴՊՀ, 58)։* **Կատարեալք** *սրով՝ պսակեցան ի Քրիստոսէ (Ն.տ., 123)։ Ի մխիթարութիւն զնա* **համոզեալ** *մեծի կաթողիկոսին՝ դադար վշտացն տայր (Ն. տ., 144)։ Անդ ընդ սայլի* **ցից հանեալ՝** *սատակեցին (Մխ, 3, ԼԵ)։* **Բուռն հարեալ** *արգել զկառսն (Ն. տ., 2, ՀԹ)։ Եւ այսպէս* **համբաւեալ** *զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և* **հաւանեցուցեալ** *զամենեսեան՝ դադարեցուցանէ զխազմն (Ն. տ., 1, ԺԵ)։*

**Ձևի և ժամանակի՝ Ձերծեալ** *յունողացն՝ անկաւ ի վերայ նորա (Մխ, 2, ԼԵ)։ Բազումք ի նոցանէ* **հատուածեալք** *եկին յաշխարհս մեր (Ն. տ., Թ)։ Ըստ կամի* **աղտեղեալ զկրակն՝** *զձեզ առ անմիտս ունէին (ՂՓՊՀ, ՂԵ)։* **Առեալ** *զկրակարանն՝ վարեցին ի ջուրսն զկրակսն (Ն. տ., ԼԲ)։*

**Ձևի և պատճառի՝ Գրգռեալք** *ընդ բանսն Խուրսայ ... յարձակեցան ի վերայ Պարսկացն (ՂՓՊՀ, ՁԱ)։ Մեք ի ձեր քաջութիւն արութեանդ* **խիզախեալ** *... ընդդէմ դարձաք նոցա հրամանացն (Եղ., 3)։* **Խոյս տուեալ** *յանօրինէն մերժեցան յեզր աշխարհին (Ն. տ.)։ Յաստուծոյ խնամսն* **ապաւինեալք՝** *յարձակեցան ի վերայ թշնամեացն (ՂՓՊՀ, ԼԵ)։ Ի միասին միախորհուրդք զմիտս* **կառավարեալք՝** *տիրէին ի վերայ սեպհական իշխանութեանն իւրեանց (ՅԴՊՀ, 297)։*

**Ձևի, պատճառի և վիճակի՝** *իբրև լուաւ զայս Թագաւորն,* **ի խոր խոցեալ՝** *վեր ի վերոյ ծիծաղեցաւ և ասէ (Եղ., 1)։*

**Ձևի, պատճառի և ժամանակի՝** *Եւ այսպէս ի բազում աւուրս* **արարեալ՝** *վատնէին ... զզօրսն Պարսից (ՂՓՊՀ, ԽԹ)։*

**Ձևի, միջոցի և ժամանակի՝** *Զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոմ* **հարթեալ՝** *բազում գիրս ի նմա գրեաց (Մխ, 1, ԺՁ)։*

**Ձևի, վիճակի և ժամանակի՝** *Զմնացեալսն* **գերի առեալ** *տանէին (Եղ., 7)։* **Ամբարձեալ** *զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա (ՂՓՊՀ, ԺԸ)։ Զայլ ևս հաստահեղոյս վկայարանս՝* **դղրդեալ քանդեալ աւերեալ** *ի վայր հոսէր (ՅԴՊՀ, 162)։*

**Գ. Ժամանակի.—** *Լրացմամբ արտահայտված գործողությունը նախորդում է լրացյալով դրսևորվող գործողությանը։ Այս դեպքում ևս լրացումը կարող է լինել և՛ չտրոհված, և՛ տրոհված։*

**Օրինակներ՝** **Թողեալ** զթագաւորութիւնն փախստական անկանէր ի Կրետէ (Մխ, 1, ԺԷ)։ Ինքն **ծագեալ** անդ գնաց առ Հարաւով (Եզն., 2, ԻԵ)։ Զառաջեաւ **դատեալ** բազում հարուածովք, նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին (Եղ., 2)։ Ինքն **երթեալ** պատմէր թագաւորին (Ն. տ., 7)։ **Գրեալ** զօրէնս մոգութեանն՝ տայր բերել ի Հայս (ՂՓՊՀ, ԻԱ)։ **Ելեալ** ի բերդէն փախստեայ գնացին ի կողմանս Ատրպատականի Ն. տ., ԿԷ)։ Եւ այսպէս **երդուեալf**... յիւրաքանչիւր վանս գնացին հանգչել (Ն. տ., ԿԶ)։ Եւ **հանեալ** զոսկէօղ շիկափոկ պարանն, և **անցեալ** որպէս զարծուի սրաթև ընդ գետն, և **ձգեալ** զոսկէօղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց (Մխ, 2, Ծ)։

Ժամանակի և պատճառի իմաստները կարող են համատեղվել։

**Օրինակներ՝** Զայս **իմացեալ** աղեղնաւորին Հայկայ՝ յառաջ վարէ զինքն (Մխ, 1, ԺԱ)։ **Հարցեալ** և **ուսեալ**, թէ զինչ է որ աղաղակեացն՝ հրամայեաց ներել զտանջանսն (Մխ, 2, ԺԳ)։ Բնակիչք Բիւրականու՝ **ծանուցեալf** զանբժշկելի միտս հեթանոսացն ... գնացին ի շտեմարանս (ՅԴՊՀ, 341)։

**Դ. Պատճառի.—** Այս իմաստով լրացումը ևս կարող է հանդես գալ մերթ չտրոհված, մերթ՝ տրոհված։

**Օրինակներ՝** Յոյժ **զարհուրեալ** առաքէ զմարդպետն կոչեցեալ Հայր (Մխ, 3, ԺԵ)։ Կործանի՝ առ ի լաւութեանցն ցանկութեան մերոյ ի պարտութիւն **մատնեալ** (Եզն., 1, ԺԴ)։ **Զմոռացեալ** զբարս գազանութեանն՝ ի վերայ յարձակի (Ն. տ., ԺԶ)։ **Զարմացեալ** ընդ թերի խորհուրդսն՝ ասէին ցմիմեանս (Եղ., 4)։ **Գուցէ** **գնեալ** խնդայցէ (ՂՓՊՀ, ՀԶ)։ **Զայրացեալ** սրտմտութեամբ հրաման տայր (Ն. տ., ԿԴ)։ Մակաբէ **խարդաւանեալ** ի դաւճաց չարագունից՝ ոչ զօրէ փրկել զմեզ (ՅԴՊՀ, 278)։ Իմ ... ըստ առաջնոյ նուագին **խորհրդածեալ**՝ խոյս ի չարէն ետու (Ն. տ., 340)։ Ոչ **կամեցեալ** յայտնել առժամայն զչարութիւնն՝ գրէ պատասխանի նամակին (Ն. տ., 204)։ Հրէական իմացմանց **հետևեալ**՝ հայհոյեաց զամենասուրբ կոյսն (Մխ, 3, ԿԱ)։ Ի բազում թախանձելոյ նոցա **հարկաւորեալ**՝ պատմեաց զտեսիլն (Ն. տ., ԿԶ)։

**Ե. Պարագայական այլ իմաստներ.—** Անցյալ դերբայով կարող են արտահայտվել նաև պարագայական այլ իմաստներ. **ընդհանրական**՝ **Թողեալ** զարարիչն՝ արարածոցս զերկրպագութիւն մատուցանէր (Եղ., 2), Ի վերայ տարմաբար **յարձակեալ**՝ սպանանէին զոստիկանն Աբուսէթ (ՅԴՊՀ, 118), Ակնկալութեան ոչ **հանդիպեալ**՝ այլ ևս չարաչար ըստ մեղաց իմոց կապեցայ (Ն. տ., 212), **հետևանքի**՝ Զօգաւ գնաց առ

կայսրն Կոստանդոս ... ըղձակերտութեամբ առ ի նմանէ հայցեալ թագաւորեցուցանել զՀայաստանեայցս զԽոսրով (ՅԴՊՀ, 43), Ձերբակալ զնա առնէին, խաղացուցեալ տարեալ կապանօք վարեալ առ ամիրապետն (Ն. տ., 314), Գնաց փախստեայ ի գաւառն յԵկեղեաց, անդ կալեալ իւր կայան բնակութեան (Ն. տ., 42)։ Ընկենոյր ի գիշերի ի վիհ մեծ խորափիտի՝ զվայրս մտին ի վերայ կափուցեալ (Ն. տ., 109)։

**Դիտողություններ անցյալ դերբայի պարագայական գործածության վերաբերյալ.—**

1. Գրաբարում սովորաբար անցյալ դերբայի և նրա լրացյալի ենթական նույնն է լինում։ Այդպես է վերը նշված բոլոր օրինակներում։ Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ խախտվում է այդ օրինաչափությունը։ Սա առաջացնում է անկապակցություն։

**Օրինակներ՝** Որոյ ոչ ժամանեալ դառնալ՝ հասանէ վախճան Արտաշիսի (Մխ, 2, Կ)։ Հասեալ ի Սիւնեաց աշխարհն՝ ժամանէ նմա համբաւ մահուանն Տիրանայ (Ն. տ., ԿԳ)։ Թագուցեալ զմեզ անդ առ իւր աւուրս բազումս՝ բժշկեալ ողջացաք զօրութեամբն Աստուծոյ (ՂՓՊՀ, ՀԷ)։

2. Գրաբարում սովորական է դերբայի գործածությունը ավելադրությամբ։ Այս դեպքում դերբայը և լրացյալը կամ հոմանիշ են լինում, կամ դրանց արտահայտած գործողությունները մերձակից են։

**Օրինակներ՝** Աճեցեալ բազմացին ազգ Հայոց (Եղ., 3)։ Ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնուին (Ն. տ.)։ Ընդ անձինս իւրեանց մարտ եդեալ կռուին (Ն. տ., 1)։ Եւ անդէն չու արարեալ խաղայր գնայր հասանէր յաշխարհն Պարսից (Ն. տ., 6)։ Եկեալ բառնայցեն զոսկերս դոցա, և բաշխեալ սփռեսցեն ընդ աշխարհս ամենայն (Ն. տ., 7)։ Կրակարանն լի հրով առաջի նոցա բորբոքեալ այրէր (Ն. տ.)։ Որ անուանեալ կոչի Անի (ՂՓՊՀ, ԿԷ)։



498—18

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրաբարում մակբայը ձևաբանորեն քիչ էր տարբերվում ածականից (այս երևույթը մասամբ առկա է նաև արդի հայերենում)։ Շատ բառեր հավասարապես գործածվում էին երկու խոսքի մասային արժեքով, ինչպես՝ բնաւ, զուր, կրկին, ձրի, մարդկօրէն և այլն (սրանց թիվը հարյուրների է հասնում)։ Այսպես, կրկին, բնաւ, բարւոք, դոյզն, ձրի, մարդկօրէն, ընդունայն բառերը հետևյալ նախադասություններում գործածված են իբրև մակբայ։

Սակաւ վաստակիմ և բիւրս վատնեմ, դոյզն գանձեմ և անթիւս սպառեմ (ԳՆՄՈ, ՀԱ)։ Եթէ կրկին գոյացուցանես, Աստուած ես (Ն. տ., ՀՁ)։ Արդ դու բարւոք արասցես (Ա, Մակ., ԺԱ)։ Ընդէր բնաւ պանդխտիցիս ի նաւս (Դատ., Ե)։ Մարդկօրէն ասեմ վասն տկարութեան մարմնոյ ձերոյ (Հռոմ., Ձ)։ Ոչ ծառայեսցես ինձ ձրի (Ծնն., ԻԹ)։ Ընդունայն կորեան խորհուրդք նորա (ՄԿՊԱԱ, 2, ԺԳ)։

Նույն բառերը ածական կիրառություն ունեն հետևյալ նախադասություններում։

Դոյզն գունդ առաքէ զկնի Շապհոյ (Մխ, 3, ԻԵ)։ Ամենեցուն ետ կրկին պատմուճանս (Ծնն., ԽԵ)։ Ընդէ՞ր բնաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոց խղճէ մտաց (Ա, Կորն., Ժ)։ Իսկ նորա եղբայրաբար սիրով և բարեկամութեամբ ընկալեալ՝ զբոլոր զինքն առաջի առնէր (ՄԿՊԱԱ, 1, ԺԱ)։ Բարձէք ի ձէնջ զընդունայն մխիթարութիւն (Եսայի, ԻԸ)։ Ընդունայն գեղ կնոջ ոչ գոյ ի քեզ (Առակ., ԼԱ)։ Յօժարութիւնդ ձեր բարիոք է վասն ձերոյ փրկութեան (Ագ., 762)։ Վախճանէր ի նմին կարգի ի բարւոք ծերութեան (ՂՓՊՀ, ԾԸ)։ Ճշմարիտ է բանս, յայտ անտի է՝ զի մարդկօրէն բարուք զքեշն կարկատէ (Եզն., 2, Գ)։ Եղանէր ի հոգևոր առագաստէ անտի պայազատել զբնաւ Հայաստանեայս (ՅԴՊՀ, 147)։

Սակայն, այնուհանդերձ, գրաբարում կան բազմաթիվ բառեր,

որոնք ունեն միայն մակբայական կիրառություն, ինչպես՝ յառաջ, ներքս, արտաքս, յետոյ, երբեմն, այժմ, գեղեցկապէս, կարի, յոյժ և այլն։

Ինչպես զուտ մակբայները, այնպես էլ երկդիմի խոսքի մասերը մակբայական կիրառությամբ կարող են ստանալ լրացումներ՝ արտահայտված տարբեր խոսքի մասերով։

Մակբայի լրացումները միատեսակ չեն։ Դրանց մի մասը ծառայում է մակբայի արտահայտած հատկանիշի աստիճանը կազմելուն։ Այսպիսի դեր ունեն կարի, յոյժ, շատ, հուսկ, առաւել, այնչափ, այդպէս, քաջ, փոքր ինչ և այլն։ Ինչպես երևում է թվարկումից, սրանց մեծ մասը մակբայ են (կարի, յոյժ, շատ, հուսկ, առաւել), մյուսները դերանուն (այնչափ, այդպէս) և ածական (քաջ, փոքր ինչ): Այս բառերը կարող են դրվել համարյա բոլոր տեսակի մակբայների վրա, կազմելով գերադրական, երբեմն էլ բաղդատական աստիճան։

Օրինակներ՝ Այլ այնպէս կամեցաւ զի ոչ կարի վաղ առնիցէ, և ոչ յոյժ անագան (Եզն., 3, ԺԶ)։ Կարի խիստ զայրացեալ են մեզ (ՂՓՊՀ, ԽԸ)։ Մտրակեալ զերիվարն իւր զկնի Գեղեհոնի այնչափ փութապէս, մինչ զի չետ քայլ և ոչ քայլ առաջի իւր (ՅՄՊՏ, 282 ա)։ Որ ապա յետոյ սակաւ մի անկաւ ի ձեռս Գագկայ Արծրունւոյ (Ղև., Պատմ., Լ)։ Փոքր ինչ յառաջ իրագեկ լեալ Թագաւորն ... և հազիւ ի խարդաւանական որսորդութեանցն ճողոպրեալ՝ չուէ գնայ յՈւտի գաւառ (ՅԴՊՀ, 304)։ Յունաց հուսկ երբեմն յետոյ գտաւ գիր ի Կադմեայ յումեմնէ Փինիկեցւոյ (ԹԱՊՏԱ, 1, Ա)։ Արժանի հաւատարմութեան առն զժամանակագրութիւնս շրջագայեն յոյժ գեղեցկապէս (ՍՏՏՊ, 1, Ա)։ Հրաման տայր՝ նախ զնոսա ... յաներևոյթ տեղի ինչ տանել, շատ ի կարաւանէն հեռի (ՂՓՊՀ, ԽԸ)։ Զլեզու հայերէն խօսից քաջ տեղեկաբար գիտէր (Ն. տ., ԾԴ)։ Եկդ Վահանայ այդպէս երագ՝ շատ ընդդէմ է բանիցն Վրուայ (Ն. տ., ԿԵ)։ Նա առաւել յորդորագոյն հնչէր և արտօսր ի վեր բերեալ հեղոյր (ԹԱՊՏԱ, 3, Դ)։ Յերկուս տեղիս կարի իմն յոյժ հաճեալ նուաճէ ակնակառոյց լինելով (Ն. տ., 4, Զ)։ Դառնացոյց զիս բաւականն յոյժ (Հռութ., Ա)։ Զարմացաւ, թէ այնչափ վաղ մեռաւ (Մարկ., ԺԵ)։ Իբրև կարի շատ ստիպեաց (Բ, Մակ., Է)։ Հուսկ յետոյ, քան զամենեսին իբրև անարգի միոջ՝ երևեցաւ և ինձ (Ա, Կորն., ԺԵ)։ Յանկարծակի ծագեաց լոյս սաստիկ առաւել քան զճառագայթս արեգական ի նշխարացն (ՅՄՊՏ, 268ա)։ Զոր կարի յոյժ սիրէր առաւելապէս (ՂՓՊՀ, Կ)։ Զորս կարի առաւելապէս երկեցուցանէր աճումն յառաջադիմութեան Մամիկոնէին Վահանայ (Ն. տ., ԿԳ)։

Չափի և աստիճանի, ժամանակի, տեղի մակբայները կարող են ստանալ քան նախադրությամբ և հայցականով խնդիր, որը ցույց է տալիս համեմատության եզր ծառայող առարկան։

Օրինակներ՝ Նա քան զամենեսեան առաւել գիտէ՝ թէ մեղանչէ (Իմաս., ԺԵ)։ Ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կրտրեալ զքարինսն (Մխ, 2, ԼԹ)։ Արտաքս քան զդուռն ծորայ ելանեն (Ն. տ., ԿԵ)։ Բորբոքեցէք առաւել քան զհնոցն Բաբելովնի (Ն. տ., ՂԲ)։ Մի՛ առաւելն քան զայս պատերազմող լսելեաց անցցէ (ՅԴՊՀ, 116)։ Մի՛ այլում ումեք փոյթ առնիջիք յառաջ քան զնա ըմբռնել (ԹԱՊՏԱ, 3, Ա)։ Այլ զօրաւոր և մտահարուստ ումն հռետոր մեծ նախ քան զմեզ վերագրեաց և աւանդեաց ի գանձս արքունի (Ն. տ., 4, Գ)։ Վերագոյն քան զնա լրացոյց զկարգս եկեղեցւոյ սրբոյ (Ն. տ., 4, ԺԱ)։ Ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս (Յովհ., Ի)։

Նույն մակբայները կարող են ստանալ նաև գոյականի գործիական հոլովով դրված լրացում, որը ցույց է տալիս համեմատության չափը։ Ընդ որում գործիականը սովորաբար ունենում է չափ արտահայտող լրացում։

Օրինակներ՝ Քեբրոն եօթն ամաւ յառաջագոյն շինեալ (Թիւք, ԺԳ)։ Այս Արամ, սակաւուք ամօք յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց և Նինուէի, նեղեալ յազգացն որ շուրջ զիւրեաւ՝ ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց (Մխ, 1, ԺԳ)։ Արայ սակաւ ամօք յառաջ քաջ զվախճանելն Նինոսի խնամակալեաց իւրոց հայրենեացն (Ն. տ., ԺԵ)։ Զօրն յունաց հեռագոյն ի նոցանէ օթիւ միով (Սեբ., Գ)։ Որ բազում ամօք յառաջ շինեալ էր (ՅԴՊՀ, 29)։ Երթային այն օր ի գեօղ մի, որում անուն էր Ռևան, հեռի ի Նիւշապհոյ որպէս հրասախօք վեցիւք (ՂՓՊՀ, ԾԵ)։

Երկդիմի (ածական և մակբայ) կիրառություն ունեցող մի շարք բառեր (մեկուսի, հեռի, հեռագոյն և այլն) կարող են ստանալ նաև բացառականով լրացում։

Օրինակներ՝ Առ տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն (Բուզ., 6, Ը)։ Հրաման տայր՝ նախ զնոսա ... յաներևոյթ տեղի ինչ տանել, շատ ի կարաւանէն հեռի (ՂՓՊՀ, ԽԸ)։ Զօրն յունաց հեռագոյն ի նոցանէ օթիւ միով (Սեբ., Գ)։ Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի (ԳՆՄՈ, ԽԸ)։

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ագ.— «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց»։
Բուզ.— «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց»։
ԳՆՄՈ— Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան»։
Եզն.— Եզնկայ Կողբացւոյ «Եղծ աղանդոց»։
Եղ.— Եղիշէ, «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»։
ԹԱՊՏԱ— Թովմայի վարդապետի Արծրունւոյ, «Պատմութիւն տանն Արծրունեաց»։
ԿՎՄ— Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1941։
Ղև., Պատմ— «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», ՍՊԲ, 1887։
ՂՓԹ— «Թուղթ Ղազարայ Փարպեցւոյ»։
ՂՓՊՀ— «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց»։
Մխ— «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց»։
ՄԿՊԱԱ— «Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի»։
ՅԴՊՀ— «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912։
ՅՄՊՏ— Յովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ», Երևան, 1941։
Սեբ.— «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն»։
ՍՏՍՊ— «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան «Պատմութիւն Տիեզերական», Պետերբուրգ, 1885։

Ս. Գրքի համառոտագրությունները գործածված են հայագիտության մեջ ընդունված կարգով։ Այսպես, Առակ.— Առակք Սողոմոնի, Ա.. Թագ.— Առաջին թագաւորութեանց, Ա, Պետ..— Թուղթ Պետրոսի առաքելոյ, Ա., Բ, Կորնթ.— Թուղթ Պաւղոսի առաքելոյ առ Կորնթացիս Բ, Յայտն.— Յայտնութիւն Յովհաննու և այլն։

---

* Համառոտագրությունների մեջ հրատարակության վայրը և թվականը նշվում է այն երկերի համար, որոնց էջերն են տրված փակագծում, իսկ հրատարակությունը և թվականը չնշված երկերից քաղված օրինակների համար փակագծերի մեջ տրվում են այդ երկերի մասերի և հատվածների համարները։ Այսպես, Մխ, 3, է— նշանակում է Մ. Խորենացու «Հայոց Պատմութիւն» 3-րդ գրքի է գլուխը։ Ագաթանգեղոսի երկից քաղված օրինակների համար նշվում են պարբերության հատվածները, որոնց թիվը 900 է։

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

Աբեղյան Մ., *Գրաբարի քերականություն*, Երևան, 1936։
Աբրահամյան Ա., *Գրաբարի ձեռնարկ*, Երևան, 1952 և հետագա հրատարակ.։
Ադոնց Ն., *Արուեստ Դիոնիսեայ քերականի և մեկնութիւնք նորին*, Պետերբուրգ, 1915։
Առաքելյան Վ., *Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց)*, Երևան, 1945։
Ավետիսյան Հ., *Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում*, Երևան, 1972։
Աւգերեան Հ., *Քերականութիւն անգղիական և հայերէն*, Վենետիկ, 1817։
Աւետիքեան Գ., *Քերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815։
Բագրատունի Ա., *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, 1852։
Բաղդասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց*, Կ. Պոլիս, 1736։
Գալանոս Կ., *Քերականական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ*, Հռոմ, 1645։
Կոստանդնուպոլսեցի Յ. (Հոլով), *Ջռութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական*, Հռոմ, 1675։
Մալխասեանց Ստ., *Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները*, Թիֆլիս, 1891։
Մալխասեանց Ստ., *Գրաբարի համաձայնութիւնը*, Թիֆլիս, 1892։
Մինասյան Մ., *Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը գրաբարում (դիսերտացիա)*, Երևան, 1960։
Շռոդեր, *Արամեան լեզուին գանձ*. Ամստերդամ, 1711։
Չալըխեան Վ., *Քերականութիւն Հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ Վ. Այտընեան*, Վիեննա, 1885։
Չամչեան Մ., *Քերականութիւն հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1859։
Ջահուկյան Գ., *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Երևան, 1954։
Ջահուկյան Գ., *Գրաբարի քերականության պատմություն*, Երևան, 1974։
Ջուղայեցի Ս., *Գիրք որ կոչի քերականութիւն, գրաբառի լեզուի հայկազեան սեռի*, Վենետիկ, 1730։
Սեբաստացի Մ., *Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի*, Վենետիկ, 1730։
Տէր-Յարութիւնեան Մ., *Քերականութիւն գրաբարի*, Կ. Պոլիս, 1808։

---

* *Այստեղ տալիս ենք միայն գրաբարի ուսումնասիրությանը վերաբերող աշխատությունները։ Ինչպես ժամանակակից հայերենին նվիրված, այնպես էլ ընդհանուր տեսական ուսումնասիրությունների ցանկը տե՛ս մեր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» աշխատությունում։*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք
ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլուխ առաջին

ԳՈՅԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. Գոյականի լրացումները գոյականով
2. Գոյականի լրացումը ածականով
3. Գոյականի լրացումը թվականով
4. Գոյականի լրացումները դերանուններով
5. Գոյականի լրացումները դերբայներով
6. Գոյականի լրացումը մակբայով

Գլուխ երկրորդ

ԱԾԱԿԱՆԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլուխ երրորդ

ԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
I. Բայի լրացումները գոյականով
1. Բայի խնդրառությունը
2. Բայի լրացումները գոյականի թեք հոլովներով
Ա. Բայի լրացումները տրական հոլովով
Բ. Բայի լրացումները հայցական հոլովով
Գ. Բայի լրացումները բացառական հոլովով
Դ. Բայի լրացումները գործիական հոլովով
3. Բայի լրացումները նախադրությամբ և նախդրավոր կառույցներով
Ա. Բայի լրացումները նախդրությամբ կառույցներով
Բ. Բայի լրացումները նախդրավոր կառույցներով
II. Բայի լրացումները մակբայով
III. Բայի լրացումները ածականով
IV. Բայի լրացումները դերբայներով

Գլուխ չորրորդ

ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Համառոտագրություններ
Օգտագործված գրականություն

Հրատ. խմբագիրներ Ս. Հ. Ջաֆարյան, Ջ. Խ. Օրմանյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Մ. Վ. Հակոբյան

ИБ № 383

Հանձնված է շարվածքի 19. 05. 1980 թ.։ Ստորագրված է տպագրության 11. 12. 198
ՎՖ 04895։ Չափը $60\times84^{1}/_{16}$, թուղթ, № 1։ Տառատեսակ գրքի սովորական տպա
թյուն բարձր։ Տպագր. 17,5 մամուլ։ Պայմ. 16,3։ Հրատ. 15,05 մամուլ։ Տպաքանակ 1
Պատվեր 498, Հրատ. № 5177։ Գինը 2 ռ. 50 կ.։

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян,

# ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 23 | 18 վ. | աւազ, ծովու | աւազ ծովու |
| 50 | 8 վ. | մասամբ՝ | մասամբ |
| 66 | 11 վ. | խառնամբիփ | խառնամբխի |
| 74 | 3 վ. | վասն | վանս |
| 98 | 12 ն. | Թիւք ԼԲ | Թիւք, ԼԲ |
| 109 | 4 վ. | ձևերով | ձևերով, |
| 119 | 10 վ. | Նեմմի | Նէեմի |
| 145 | 17 ն. | Ալման-սկզբնակետի | Ելման-սկզբնակետի |
| 177 | 4 ն. | եր Թայր | երԹայր |
| 179 | 15 ն. | իբրև, գնեգ | իբրև գնեգ |
| 220 | 1 ն. | համապատասխան | համապատասխանության |